Երդումն զոր երդուաւ Աբրահամու Հօր մերոյ՝ տալ մեզ առանց երկիւղի զփրկութիւն ի թշնամեաց մերոց։

Պաշտել զնա սրբութեամբ և արդարութեամբ առաջի նորա զամենայն աւուրս կենաց մերոց։

Եւ դու մանուկ՝ մարգարէ բարձրելոյն կոչեսջիր. գնասցես առաջի Տեառն՝ պատրաստել զճանապարհս նորա։

Տալ գիտութիւն փրկութեան ժողովրդեան իւրոյ, ի թողութիւն ամենայն մեղաց մերոց։

Վասն գթոյ ողորմութեան Տեառն Աստուծոյ մերոյ, որով երևեցաւ մեզ արեգակն ի բարձանց՝ լուսաւորս առնել զկաւսար մեր։

Ծագել լոյս ի վերայ այսոցիկ՝ որ նստիմք ի խաւարի և ի ստուերս մահու, ուղղել զոտս մեր ի ճանապարհս խաղաղութեան։

Ազօթք Սիմէոնի Ծերունւոյն

Արդ արձակեա զծառայս քո տէր ըստ բանի քում ի խաղաղութիւն. զի տեսին աչք իմ զփրկութիւն քո, զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց։

Լոյս յայտնեցեալ հեթանոսաց, և փառք ժողովրդեան քում Իսրայէլի։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ.

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Digitized by Google

Մեծացուսցէ ԲՋ

Ըզկուսումբի՛ ընդ քո՞ Աստուածածնի՛ն ա՛նաչ քա՛տ, զո՛ր ո՞չ բո՛ցա՛կի՞ զեա՞ց հուր Աստուածո՛ւթեանդն, մեծա՛ցո՛ւցանե՛ւքդ։ Ո՛ր յարդանդի՞ քում անապա՛կանաբա՞ր բնա՛կեցաւ Քրիստո՛ս Ա՛ստուա՞ծ, և՞ վը՛րկիչ ա՛նձանց մերո՞ց, մեծա՛ցո՛ւցա՛՛։

Փառք Հօր եւ. Այժմ եւ միշտ։

Ա՛նհասանելի՛ Տէրո՛ւնա՛կա՞ն յայտնութի՛ւն աչխա՞րհի՞ ծագեցա՛ւ. անմատո՛յց լո՞ւսո՞յն երկը՛ըպագեսցո՛ւք։

ՓԱՐՈՋ

Սուրբ զԱստուածածինն՝ և զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր ի յերկինս. զի կամեցեալ ողորմեացի և զթացեալ կեցուսցէ զարարածս իւր։ Ամենակալ տէր Աստուած մեր. կեցո և ողորմեա։

ԱՂՕԹՔ

Ընկալ տէր զաղաչանս մեր՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին անարատ ծնողի Միածնի որդւոյ քոյ. և աղաչանօք ամենայն սրբոց քոց. և ապրեսցուս չնորհիւ։ Լուր մեզ տէր, և ողորմեա. նեբրեա քաւեա և թող զմեղս մեր։ Արժանաւորեա զոհութեամբ վիառաւորել զքեզ ընդ Որդւոյ և ընդ Սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Digitized by Google

Եւ ասէ վասն

Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քոյ. ըստ բազում գթութեան քոյ քաւեա զանօրէնութիւնս իմ։

Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ. և ի մեղաց իմոց սուրբ արա զիս։

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Քեզ միայն մեղայ Տէր, և չար առաջի քո արարի։

Որպէս արդար եղիցիս ի բանս քո, և յաղթող ի դատել զոս։

Անօրէնութեամբ յղացաւ, և ի մեղս ծնաւ զիս մայր իմ։

Դու տէր զճշմարտութիւն սիրեցեր, զանյայտս և զծածկեալս իմաստութեամբ քով յայտնեցեր ինձ։

Ցօղեա յիս մշտակաւ և սուրբ եղէց, լուա և քան զձիւն սպիտակ եղէց։

Լսելի արա ինձ Տէր զցնծութիւն և զուրախութիւն, և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք։

Դարձո զերեսս քո ի մեղաց իմոց. և զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա յինէն։

Սիրտ սուրբ հաստատեա յիս Աստուած, և հոգի ուղիղ նորոգեա ի փորի իմում։

Մի ընկենուր զիս Տէր յերեսաց քոց, և զհոգի քո սուրբ մի հաներ յինէն։

Տուր ինձ ցնծութիւն փրկութեան քոյ, և հոգւով գերազանութեան քոյ հաստատեա զիս։

Digitized by Google

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո, և ամբարիշտք առ քեզ դարձցին։

Փրկեա զիս յարենէ Աստուած. Աստուած փրկութեան իմոյ. ցնծասցէ լեզու իմ յարդարութեան քումմ։

Տէր եթէ զչրթունս իմ բանասց, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։

Թէ կամեցեալ էիր պատարագս մատուցանէաք. բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեացար։

Պատարագ Աստուծոյ հոգի խոնարհ, զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ։

Բարի արա տէր կամօք քովք Սիովնի, և շինեացին պարիսպք Երուսաղէմի։

Ցայնժամ հաճեացիս ընդ պատարագս արդարութեան. յորժամ ուխտից պատարագս հանցեն ի սեղան քո զուարակս։

Փառք Հօր և Որդւոյ. Այժմ և միշտ և։

Ողբեաց ԴԶ

Ո՛ր ի չորեքկե՛րպեա՞ն կենդա՛նեաց փառա՛բա նի՛ս ի բա՛րձունս. ա՛յսօր մարդասիրա՛պէ՞ս վըճա՛՞րկէ՞չ, ի Բեթանիա՛ երթա՞լ յա՛նձն առեր. աղբի՛ւր կենա՞ց մե՛ր և յո՞յս ողո՛ւմեա՞ մե՞զ։ Ո՛ր յարեա՛ առաւ Մարիա՛մանց գթացեա՞լ արտասուեցե՛ր և ա՛սա՛ցեր ցնոսա. ո՞ւր եդ՞՛դիք, և՞՛ս յարուցից զդ՛րեկ՛րելո՞ն ի՛մ զՂազար. աղբի՛ւր կենա՞ց մե՛ր։

Digitized by Google

Փառք Հօր եւ Որդ. Այժմ եւ:

Ա՛ստուածա՛յի՛ն արարչա՛գործ ձայնիւը՛դ քո՛ զմա՛րմին ի՛ թաղումանէ՛ կոչեցե՛ր զՂա՛զարո՛ս. ցո՛ւցա՛ր կե՛նդանեաց և մե՛ռե՛լո՛ց Աստո՛ւած. աղե՛ր կենա՛ց մե՛ր և յո՛յս ողո՛ւմեա՛ մե՛զ:

ԳԱՐՈՂ

Երկրպագեմք քեզ Տէր Աստուա՛ծ մեր՝ անցեալքս ընդ երկարութիւն դիւրիս. և կանխեալքս ի տեղւոջ խոստովանութեան. մատուցանեմք զառաւօտս աղօթս մեր: Զքեզ տէր օրհնեմք և փառաւորեմք, և զքէն տէր գոհանամք. որ արժանի արարեր զդիւրիս խաղաղութեամբ անցուցանել և հասանիլ ի ժամ առաւօտուս: Արժանաւորեա զմեզ տէր անճառ խոստմանց քոց. զոր խոստացար սիրելեաց քոց հչմարիտդ Աստուած, Ցիսուս Քրիստոս Տէր մեր. կեցո և ողորմեա:

Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քում. առասցուք ամենեքեան միաբանութեամբ:

Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա:

ՄԱՂԹԱՆՔ

Ողորմած՝ գթած՝ հչմարիտ՝ սուրբ մեծի տէրութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Digitized by Google

Ալէլուիա ալէլուիա։

Օրհնեցէք զտէր յերկնից. օրհնեցէք զնա ի բարձանց։

Օրհնեցէք զնա ամենայն հրեշտակք նորա. օրհնեցէք զնա ամենայն զօրութիւնք նորա։

Օրհնեցէք զնա արեգակն և լուսին. օրհնեցէք զնա ամենայն աստեղք և լոյսք։

Օրհնեցէք զնա երկինք երկնից. և ջուրք որ ի վերոյ քան զերկինս, օրհնեցէք զանուն տեառն։

Զի նա ասաց՝ և եղեն, հրամայեաց՝ և հաստատեցան։

Կացոյց զնոսա յաւիտեանս յաւիտենից. սահման եդ, և ոչ անցանեն։

Օրհնեցէք զտէր յերկրէ՝ վիշապք և ամենայն խորք։

Հուր և կարկուտ, ձիւն և սառն, հողմ և մրրիկ, որք առնէք զբան նորա։

Լերինք և ամենայն բարձունք, ծառք պտղաբերք և ամենայն մայրք։

Գազանք՝ և ամենայն անասունք. սողունք, և ամենայն թռչունք թեւաւորք։

Թագաւորք երկրի և զօրք իւրեանց. իշխանք և ամենայն դատաւորք երկրի։

Ելիտասարդք և կուսանք, ծերք և տղայք՝ օրհնեցէք զանուն տեառն։

Բարձրացաւ անուն նորա միայն. խոստովանութիւն նմա յերկինս և յերկրի։

Բարձր առնէ տէր զեղջիւր ժողովրդեան իւրոյ.

Digitized by Google

օրհնութիւն նմա յամենայն սրբոց նորա. յորդւոցն Իսրայէլի ժողովոյն՝ որ մերձ է առ Տէր։

Օրհնեցէք զտէր յօրհնութիւն ի նոր, օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց։

Ուրախասցի Իսրայէլ յարարիչ իւր. որդիքն սիովնի ցնծասցեն ի թագաւորն իւրեանց։

Օրհնեսցեն զանուն նորա օրհնութեամբ, սաղմոսիւք և օրհնութեամբ սաղմոս երգեսցեն նմա։

Հաճի տէր ընդ ժողովուրդ իւր սուրբ, և բարձր առնէ զհեզս ի փրկութեան։

Պարծեսցին սուրբքն փառօք, և ցնծասցեն ի հանգիստ իւրեանց, և բարձր ալասցեն զԱստուած բերանօք իւրեանց։

Սուր երկայրի ետ ի ձեռս նոցա, առնուլ զհատուցումն ի հեթանոսաց, և յանդիմանութիւն ամենայն ժողովրդոց։

Ի կապել զթագաւորս նոցա կապանօք, զպատուաբս նոցա ձեռնակապօք երկաթեօք։

Առնել նոցա դատաստանս ըստ գրոց. և փառք այս են ամենայն սրբոց նորա։

Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան նորա, օրհնեցէք զնա ի հաստատութեան ի զօրութեան նորա։

Օրհնեցէք զնա ի զօրութեան նորա, օրհնեցէք ըստ նա ի բազում մեծութեան նորա։

Օրհնեցէք զնա ի ձայն օրհնութեան, օրհնեցէք զնա սաղմոսիւք և օրհնութեամբ։

Օրհնեցէք զնա ցնծութեամբ, գովեցէք զնա ուրա-

Digitized by Google

խուբեամբ։

Օրհնեցէք զնա ի բանս քաղցր, գովեցէք զնա ի բարբառ լսելի։

Օրհնեցէք զնա ի ձայն դոհութեան. ամենայն հոգիք օրհնեցէք զտէր։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ.

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Տէր յերկնից ԴՋ

Ա՛ղբիւր անմահութե՛ան բղխե՛լ ի Բեթա՛նիա, կենա՛րարիչ ըզՂա՛զարոս ի՛ թա՛ղմանէ՛։ Կանխե՛լ Մարիամանցն ա՛րտասուալի՛ց հառա՛չմա՛մբ գոին կենդանացեալ զչորեքօ՛րեայ զմե՛ռեա՛լն։

Փառք Հօր եւ Որդի, Այժմ եւ։

Ճա՛ռատուածային ձայնէ գո՛չմանըն սարսե՛ցի՛ն գողալով դը՛ժոխք. և երի՛գասլի՛նդ մեռեա՛լն ը՛նդեցաւ գա՛նահո՛ւթի՛ւն։

Զկնի Տէր երկնեցին՝ ասէ օրհնութիւն առաւօտու ասացեալ յանմարմնոց. այլ և ի Կոստանդնուպոլսէ սրբոյ Ժողովոյն ՃՆ Հայրապետացն։

Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ. և յերկիր խաղաղութիւն ի մարդիկ հաճութիւն։ Եւ օրհնութիւն Քեզ ի բարձունս, օրհնեալ ես Տէր Աստուած մեր. օրհնեմք զքեզ և գովեմք զքեզ։ Խոստովանիմք տէր ըզ-

Digitized by Google

քեզ և երկիրպագանիմք քեզ. փառաւորիմք զքեզ. գոհանամք Տէր զքէն վասն մեծի փառացդ քոց. Տէր թագաւոր Սուրբդ երկնային. Աստուած և Հայր ամենակալ. Տէր և Որդի Հօր Միածին Յիսուս Քրիստոս և սուրբ Որդի. Տէր Աստուած գառն Աստուծոյ և Որդի Հօր. որ առեր զմեղս ի կուսէն. Ողորմեացար, բարձեր զմեզ աչխարհի. և արդ ընկալ զաղաչանս մեր. Սուրբդ որ նըստիս ընդ աչմէ Հօր՝ ողորմեաց մեզ. Զի դու միայն սուրբ՝ դու միայն բարձրեալ ես՝ դու միայն Տէր մեր Յիսուս Քրիստոս. Տէր և Հոգիդ սուրբ՝ որ ի փառս Աստուած ընդ Հօր. ամէ՛ն.

Ե՛ւ յամենայն ժամ օրհնիմք զքեզ. Տէր և գովեմք զանուն սուրբ քո՝ յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից. Արժանի արա Տէր զօրս զայս խաղաղութեամբ, և առանց մեղաց պահեա զմեզ. Օրհնեալ ես Տէր Աստուած հարցըն մերոց. գովեալ և փառաւորեալ է անուն սուրբ քո յաւիտեանս. ամէն. Օրհնեալ Տէր՝ ուսո ինձ զարդարութիւնս քո. (երկիցս կրկնէ). Տէր ապաւէն եղեր մեր յազգէ յազգ. Ես աղաչեմ Տէր ողորմեա ինձ և բժշկեա զանձն իմ. ես մեղայ քեզ. Յոյց մեզ Տէր զողորմութիւնս քո. և զփրկութիւնս քո տուր մեզ. Տէր ողորմութիւն քո յաւիտեան. զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ. Տէր իմ զքեզ ապաւէն ինձ արարի. ուսո ինձ առնել զկամս քո՝ զի դու ես Աստուած իմ. Ի քէն է Տէր՝ ապրիլս կենդանութեան. և լուսով երեսաց քոց տեսանիմք զլոյս. Տա՛ դեա զողորմութիւնս քո՝ որք ճանաչին զքեզ Տէ՛ր.

Digitized by Google

ՄԱՂԹԱՆՔ

Փառք պատիւ և երկրպագութիւն ի բարձունս Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԵՐԳ

Տէր հաներ ի դըժոխոց զանձն իմ. վերկեցեր զիս յայնցանէ, որք իջանեն ի՞ գո՞ւբ։

Բարձր առնեմ զքեզ Տէր զի ընկալար զիս. և ոչ ուրախ արարեր զթշնամին ի՛մ յի՛ս։

ԿԱՐՈՋ

Փառաւորեսցուք զամենաքաղն Աստուած զՀայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զոհանալով զնմանէ՝ որ պահեաց զմեզ խաղաղութեամբ ի գիշերիս յայսմիկ։ Եւ առաջնորդեաց մեզ ի խաւարէ ի լոյս. ի մահուանէ ի կեանս. յապականութենէ յանապականութիւն. յանդիտութենէ ի գիտութիւն ճշմարտութեան իւրոյ։ Աղաչեսցուք և խնդրեսցուք ի նմանէ, զի զերկարութիւն տունջեանս խաղաղութեամբ և ամենայն մտադիւր զուարթութեամբ արասցէ անցուցանել ի մէնջ։ Եւ պարսպեալ պահեսցէ զժողովուրդս իւր Աստուածային զօրութեամբն. որ ի վերայ ամենայնի բարերարութեամբն իւրով իշխանութիւն ունի։ Ամենակալ Տէր Աստուած մեր. կեցո և ողորմեաւ։

Կեցո Տէ՛ր և ո՛ղո՛րմեա՛։

Զառաւօտս լուսոյ և զառաջակայ օրս խաղաղու-

Digitized by Google

թեամբ անցուցանել հաւատով ի Տեառնէ խնդրեսցուք։
Շնո՛րհեա՞ Տէր։

Զհրեշտակ խաղաղութեան պահապան անձանց"
Զքաւութիւն և զթողութիւն յանցանաց մերոց"
Զաջբոյ խաչին մեծ և կարող զօրութիւնն յօգնու"
Եւ ևս միաբան"։ Զանձինս մեր"։ Ողորմեաց"։

ԱՂՕԹՔ

Գոհանամք զքէն Տէր Աստուած մեր, որ երևելի լուսով քով զուարճացուցեր զամենայն արարածս քո. իսկ իմանալի լուսով պատուիրանաց քոց՝ զամենեսեան լուսաւորեցեր զհաւատացեալս ի քեզ։ Զօրացո և զմեզ Տէր՝ ի պահպանութիւն պատուիրանաց քոց՝ ի տունջևանս յայսմիկ և յամենայն ժամանակի։ Որպէս զի լուսաւորեալ մտօք՝ միշտ զհաճոյս քո արասցուք. և հանդերձեալ բարեացդ հասցուք ընդ ամենայն սուրբս քո։ Շնորհօք և մարդասիրութեամբ Տեառնդ մերոյ և փրկչիդ Յիսուսի Քրիստոսի. որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յա"։

Խաղաղութիւն ամենեցուն
Աստուծոյ երկրպագեսցուք

Խաղաղութիւն մեր և կեանք՝ որ ի Հօրէ առաքեցար՝ Միածին Որդի Աստուծոյ, Տէր մեր և Փրկիչ Յիսուս Քրիստոս։ Տուր մեզ զխաղաղութիւն քո՝ զոր չէ նորհեցեր սրբոց քոց առաքելոց. վչմամբ քո ի նոսա զկենդանացուցիչ և զամենազօր Հոգիդ քո սուրբ։ Որպէս զի և մեք խաղաղացեալք յամենայն աչխարհական

Digitized by Google

ոահեցմանց՝ լիցուք տաճար և բնակարան Աստուածային չնորհացդ. և գոհանալով փառաւորեսցուք ըզքեզ ընդ Հօր և Սուրբ Հոգւոյդ Քրիստոս Աստուած մեր. այժմ և միշտ և յաւիտեանս՝՝։

Սո՛ւրբ Աստուա՛ծ. սո՛ւրբ և հզո՛ր. սո՛ւրբ և անմա՛հ. որ խաչեցար վասն մեր. ողորմեա մե՛զ։ (Երիցս կրկնեա)

Թովմայի առաքելոյ ասացեալ։

Փառաւորեալ և օրհնեալ միշտ սուրբ կոյս Աստուածածին Մարիամ մա՛յր Քրիստոսի. մատո զաղաչանս մեր՝ Որդւոյ քոյ և Աստուծոյ մերոյ։

ՄԱՂԹԱՆՔ

Փրկել դմեզ ի փորձութենէ և յամենայն վրտանգից մերոց։

ԿՈՐՈՂ

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։

Վասն լսելի լինելոյ տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին։ Եւ լիցանելոյ ի վերայ մեր ողորմութեան և զբաւութեան տեառն Աստուծոյ։ Ամենակալ տէր Աստուած մեր. կեցո և ողորմեա ։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Digitized by Google

Սաղմոս

Օրհնեցէք մանկունք զտէր. և օրհնեցէք զանուն տեառն։

Եղիցի անուն տեառն օրհնեալ, յայսմ հետէ մինչև յաւիտեան։

Ծարաւեցից մինչև ի մուտս արևու՝ օրհնեալ է անուն տեառն։

Բարձր է ի վերայ ամենայն ազգաց տէր. և յերկինս են փառք նորա։

Ո՞վ է որպէս տէր Աստուած մեր ի բարձունս բնակեալ. և զխոնարհս տեսանէ յերկինս և յերկրի։

Ցարուցանէ զաղքատս յերկրէ. և բարձր առնէ զտառապեալս յաղբեաց։

Նստուցանէ զնոսա իշխանաւ՝ ընդ իշխանս ժողովրդեան իւրոյ։

Բնակեցուցանէ զամուն ի տան ուրախամիտ, որպէս մայր որդւովք բերկրեալ։

Փառք Հօր և Որդւոյ և Այժմ և միշտ և։

Մանկունք Դկ. ՍՏ։

Ցիսո՛ւս միածի՛նն անմա՛հութեանց պարգե՛ւատուն երեւե՞ցա՛ւ մե՛՞ր, խափա՛նեա՛ց զգօրո՛ւթի՞ւն մահո՛ւ։ Բղխմա՛՛մբ արտասուա՛ց Մարիամու և Մա՛րթայի անկեա՞լ ա՛՛ւ ոտսըն տեա՛՛՞ռն,

Digitized by Google

խընդրէ՞ի՛ն զնորո՛գու՛մն եղբօ՛րն։ Բանի՞՛ւ բանըն Աստո՛ւած կենա՛գործեաց ըզՂա՛զարոս ի՞ ք՛ա՛ղմանէ՞՛՞, և ե՛կեա՛ղ արտաքս ա՛նա՞պակա՛՞ն։

ԳԱՐՈՋ

Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի, և հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ զտէր աղաչեացուք։ Աստսցուք ամենեքեան միաբանութեամբ։

Տէր ողորմեա՛. Տէր ողորմեա՛. Տէր ողորմեա՛։

ԱՂՕԹՔ

Սուրբ ես տէր Աստուած մեր հզօր և փառաւորեալ. որ նստիս ի կառս քերովբէականս և լոյս ծածկես յարարածս քո։ Լուսաւորեա զմեզ տէր ի ժամ առաւօտուս. որպէս զի ի ծագել լուսոյ տունչեանս ծագեսցի առ մեզ գութ մարդասիրութեան քոյ։ Հեռացո ի մէնջ տէր զխաբէութիւն սատանայի. և ըզբանութիւն նորա խորտակեա աղօթիւք և բարեխօսութեամբ ամենայն սրբոց։ Արա և զերկիրս պտղաբերս ի սնունդս ծառայից քոց։ Ցորոց հանապազ փառաւորեալ գոլի ամենասուրբ Երրորդութիւնդ։ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Սաղմոս. ԻԹ։

Տէր հաներ ի դժոխոց զանձն իմ. փրկեցեր զիս յայնցանէ, որք իջանեն ի գուբ։

Ընթերցուածս Յառաւօտս։

Իմաստութեան. Գլ. 10. հմր. 9։

Իմաստութիւն զողջինս իւր փրկեաց ի ցաւոց

Նա վախուցելոյ ի բարկութենէ եղբօր՝ առաջնորդեաց արդարոյն ի չափս. եցոյց նմա զարքայութիւն Աստուծոյ. և ետ զգիտութիւն սրբոց. յաջողեաց նմա չափս ի վաստակոց իւրոց. և բազմացոյց զպտուղ նորա։ Յագահութեան բռնաւորաց նորա՝ պաշտպանեաց նմա. և մեծացոյց։ Եւ պահեաց զնա ի թշնամեաց. և ի դարանակալաց նորա զդուշացաւ. և ի զօրաւոր պատերազմի արար զնա յաղթող. զի գիտասցէ թէ քան զամենայն ինչ զօրաւոր է Աստուածպաշտութիւն։ Նա զարդարն վաճառեալ՝ ոչ եթող ի ձեռանէ. այլ ի մեղաց փրկեաց զնա. ընդ նմա էջ ի գուբ։ Եւ ի կապանս ոչ եթող զնա ի ձեռանէ. մինչև եբեր նմա զպատարագն Քաղաւորութեան. և զիշխանութիւն ի վերայ բռնաւորաց նորա. սուտ եցոյց զրամբասօղս նորա. և ետ նմա զփառսն յաւիտենականս։ Նա զժողովուրդն սուրբ. և զպատակն անարատ վերակեաց յազգէ նեղչաց։ Եւ եմուտ յոգի ծառայի տեառնէն. և ընդդէմ դարձաւ Քաղաւորաց ահաւորաց՝ արուեստիւք և նշանօք։ Հատոյց սրբոցն զվարձս վաստակոց նոցա. առաջնորդեաց նոցա ընդ ճանապարհ աքանչելի. և եղև նոցա հովանի ի տուէ. և բոց աստեղաց ի գիշերի։ Անցոյց զնոսա ընդ ծով կարմիր. և տարաւ զնոսա ընդ չուրս բազումս։ Զթշնամիս նոցա ընկղմեաց. և ի խորոց անդնդոց էած զնոսա ի վեր։ Վասն այնորիկ արդարք կողոպտեցին զամբարիշտս. և օրհնեցին տէր զանուն քո սուրբ։

Digitized by Google

Պօղոսի Առաքելոյն ի Թեսաղոնիկեցւոց Առաջին Թղթոյն Ե Ընթերցուածս։

գլ՝ 4. հմր 12։

Ոչ կամիմ ևղբարք՝ եթէ տգէտք իցէք վասն նըն-
ջեցելոց. զի մի տրտմիցիք որպէս և այլքն՝ որոց ոչ
գոյ յոյս։ Եթէ հաւատամք՝ եթէ Յիսուս մեռաւ և յա-
րուաւ. նոյնպէս և Աստուած զննջեցեալսն ի ձեռն Յի-
սուսի ածցէ ընդ նմա։ Բայց զայս ասեմք տեառն
բանիւ, եթէ մեք՝ որք կենդանիքս եմք մնացեալք՝
ի գալստեանն տեառն ոչ ժամանեմք նըննջեցելոցն։
Զի ինքն տէր հրամանաւ՝ ի ձայն հրեշտակապե-
տի, և ի փող Աստուծոյ իջանէ յերկնից. և մեռեալք
ի Քրիստոս՝ յարիցեն յառաջագոյն։ Ապա և մեք՝ որք
կենդանւոյն մնացեալ իցեմք՝ նոքօք հանդերձ յափըշ-
տակիցուք ամպովք ընդ առաջ տեառն յօդս. և այն-
պէս յաւիտեան ժամ ընդ տեառն լինիցիմք։ Այսուհե-
տև միխիթարեցէք զմիմեանս բանիւքս այսոքիւք։

Ալէլուիա ալէլուիա

Էհան զիս ի գերոյ տառապանաց. ի կաւոյ և ի տղմոյ։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ
Յօհաննու։

գլ՝ 11։

Վասն վախճանի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ էր ոմն հիւանդ Ղազարոս ի Բեթանիայ, ի

Digitized by Google

գեղջէ Մարեմայ, և Մարթայի քեռ նորա։ Այս այն Մարիամ էր՝ որ էօծ զոէրն իւղով՝ և չնչեաց զոտս նորա հերով իւրով. որոյ եղբայրն Ղազարոս հիւանդ էր։ Առաքեցին առ նա քորքն նորա՝ և ասեն. տէր, ահաւասիկ՝ զոր դուն սիրէիր՝ հիւանդացեալ է։ Իբրև լուաւ Յիսուս, ասէ. այն հիւանդութիւն չէ ի մահ. այլ վասն փառացն Աստուծոյ՝ զի փառաւորի Որդի Աստուծոյ այնուհետեւ։ Եւ սիրէր Յիսուս զՄարիամ, և զՄարթա զքոյր նորա՝ և զՂազար։ Իբրև լուաւ, թէ հիւանդացեալ է՝ զտեղի կալաւ անդէն ուր էրն, աւուրս երկուս։ Ապա յետ այնորիկ ասէ ցնոսա. եկայք երթիցուք միւսանգամ ի Հրէաստան։ Ասեն ցնա աշակերտքն. ռաբբի՝ այժմ ևս խնդրէին զքեզ Հրէայքն քարկոծ առնել. և դարձեալ երթաս անդրէն։ Պատասխանի ետ Յիսուս. ոչ երկոտասան ժամ է աւուր. եթէ ոք գնայ ի տունջեան, ոչ գայթակղի. զի զլոյս աշխարհիս այսորիկ տեսանէ։ Ապա թէ ոք գնայ ի գիշերի՝ գայթակղի, զի լոյս ոչ գոյ ընդ նմա։ Զայս իբրև ասաց, յետ այսորիկ ասէ. Ղազարոս բարեկամ մեր ննջեաց. այլ երթամ, զի զարթուցից զնա։ Ասեն ցնա աշակերտքն նորա. տէր եթէ ննջեաց՝ ապա ապրի։ Այլ Յիսուս վասն մահու նորա ասէր. նոցա այսպէս թուեցաւ՝ թէ վասն ննջելոյ քնոյն ասէ։ Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս յայտնապէս. Ղազարոս մեռաւ։ Եւ ես ուրախ եմ վասն ձեր. զի դուք հաւատասջիք ինձ, զի ես չէի անդ. բայց արդ եկայք երթիցուք առ նա։ Ասէ Թովմաս, անուանեալն երկ-

Digitized by Google

ւորեակ՝ ցաչակերտակիցսն, ծն, եկայք ե՞մք՝ զի ընդ նմա մեռցուք։ Եկն Յիսուս՝ և եգիտ զնա չորեքօրեայ ի գերեզմանի։ Եւ էր Բեթանիա մերձ յԵրուսաղէմ, իբրև տասնարիսաք հնգետասան։ Բազումք ի Հրէից անտի, եկեալ էին առ Մարթա և Մարիամ, զի մխիթարեսցեն զնոսա վասն եղբօրն։ Մարթա իբրև լուաւ, եթէ Յիսուս գայ, ընդ առաջ գնաց նորա. բայց Մարիամ նստէր անդէն ի տան։ Ասէ Մարթա ցՅիսուս. Տէր, եթէ աստ լեալ էիր, եղբայրն իմ չէր մեռեալ։ Այլ և արդ գիտեմ, եթէ զոր ինչ խնդրեսցես յԱստուծոյ՝ տացէ քեզ Աստուած։ Ասէ ցնա Յիսուս. յարիցէ եղբայրն քո։ Ասէ ցնա Մարթա. գիտեմ, զի յարիցէ ի յարութեան՝ յաւուրն յետնում։ Ասէ ցնա Յիսուս. ես իսկ եմ յարութիւն և կեանք, որ հաւատայ յիս, թէպէտ և մեռանի՝ կեցցէ։ Եւ ամենայն, որ կենդանի է՝ և հաւատայ յիս, մի՛ մեռցի ի յաւիտեան. հաւատա՞ս այսմիկ։ Ասէ ցնա. այո՛ Տէր. ես հաւատացի, եթէ դու ես Քրիստոս Որդի Աստուծոյ, որ յաշխարհ գալոց էիր։ Եւ զայս իբրև ասաց՝ գնաց, և կոչեաց զՄարիամ զքոյր իւր լռելեայն՝ և ասէ. վարդապետն եկեալ է, և կոչէ զքեզ։ Նա իբրև լուաւ՝ յարեաւ վաղվաղակի, և եկն առ նա։ Զի ևս էր եկեալ Յիսուս ի գեօղն. այլ էր անդէն ի տեղւոջն՝ ուր ընդ առաջ եղև նմա Մարթա։ Իսկ Հրէայքն, որք էին ընդ նմա ի տան անդ՝ և մխիթարէին զնա, իբրև տեսին զՄարիամ թէ յարեաւ վաղվաղակի, և գնաց, զբնացին և նոքա զհետ նորա. համարէին թէ ի գերեզ-

Digitized by Google

մանն երթայ՝ զի լացցէ անդ։ Իսկ Մարիամ իբրև եկն, ուր էրն Յիսուս, և տեսս զնա՝ անկաւ առ ոտս նորա և ասէ. Տէր, եթէ աստ էիր դիպեալ՝ ոչ էր մեռեալ եղ բայրն իմ։ Յիսուս իբրև տեսս զնա զի լայր, և որք ընդ նմա էին Հրէայքն՝ լային, խռովեցաւ յոգի իւր իբրև զայրացեալ։ Եւ ասէ, ո՞ւր եդիք զնա. ասեն ցնա՝ Տէր, եկ, և տես։ Եւ արտասուեաց Յիսուս։ Ասէին Հրէայքն. տեսէք, որչափ սիրէր զնա։ Կէսքն ի նոցանէ ասէին. ոչ կարէր սա, որ եբաց զաչս կուրին, առնել՝ զի և սա մի՛ մեռցի։ Յիսուս դարձեալ զայրացեալ ընդ միտս իւր, գայ ի գերեզմանն. և էր այր մի, և վէմ մի եդեալ ի վերայ նորա։ Եւ ասէ Յիսուս՝ ի բաց արարէք զվէմդ. ասէ ցնա Մարթա, քոյր մեռելոյն. Տէր, արդ հոտեալ իցէ, քանզի չորեքօրեայ է։ Ասէ ցնա Յիսուս. ոչ ասացի քեզ՝ եթէ հաւատասցես, տեսցես զփառս Աստուծոյ։ Եւ իբրև ի վեր առին զվէմն. Յիսուս ամբարձ զաչս իւր ի վեր, և ասէ. Հայր, գոհանամ զքէն, զի լուար ինձ։ Եւ ես գիտէի՝ զի յամենայն ժամ լսես ինձ, այլ վասն ժողովրդեանս, որք չուրջ կան՝ առնեմ, զի հաւատասցեն թէ դու առաքեցեր զիս։ Զայս իբրև ասաց՝ ի ձայն մեծ աղաղակեաց՝ և ասէ. Ղազարէ, արի, ևկ արտաքս։ Եւ ել մեռեալն ոտիւք կապեալովք. և ձեռօքն երիզապնդօք. և երեսօքն վարշամակապատօք. և ասէ ցնոսա Յիսուս. լուծէ՛ք զդա, և թողո՛ք երթալ։ Բազումք ի հրէիցն՝ որք եկեալ էին առ Մարիամանս, իբրև տեսին՝ զոր արարն՝ հաւատացին ի նա։ Եւ ոմանք ի նոցանէ գը-

Digitized by Google

նային առ վարիսեցիսն, և պատմեցին նոցա՝ զոր առաբարն Յիսուս՝ Թողուեցան քահանայապետքն և վարիսեցիք յառեան, և ասեն. զինչ արասցուք՝ զի այրն այն բազում նշանս առնէ: Եթէ թողումք զնա՝ այնպէս, ամենեքին հաւատան ի նա. և գայցեն Հռոմք՝ և բառնայցեն զազգս մեր՝ և զտեղի: Մի ոմն ի նոցանէ անուն Կայիափայ, որ քահանայապետ էր տարւոյն այնորիկ, ասէ ցնոսա. դուք ոչինչ գիտէք: Եւ ոչ բնաւ խորհիլ իսկ, Եթէ լաւ է մեզ՝ զի այր մի մեռանիցի ի վերայ ժողովրդեանս, և մի ամենայն ազգըս կորիցէ: Զայս ոչ յանձնէ ինչ ասաց. այլ զի քահանայապետ էր տարւոյն այնորիկ, մարգարէացաւ՝ Եթէ մեռանելոց էր Յիսուս ի վերայ ազգին: Եւ ոչ ի վերայ ազգին միայն, այլ զի և զորդիսն Աստուծոյ զցրուեալսն՝ ժողովեսցէ ի մի: Ապա յայնմ օրէ խորհուրդ արարին, զի սպանցեն զնա: Եւ Յիսուս այնուհետեւ ոչ ևԹէ համարձակ չրջէր ի մէջ Հրէից. այլ գնաց անտի յերկիր մի, որ մերձ էր յանապատ. ի քաղաք մի, որում անուն էր Եփրայիմ, և անդ լինէր աշակերտօքն հանդերձ:

ՄԱՂԹԱՆԻԱ

Հոգւոյն հանգուցելոյ. (Տես ի Թիւն. 36:)

Երդ. վասն եօԹնեըորդի աւուր արարչուԹեան. և. վասն եօԹնեըորդի գարուն. և ի խորհուրդ Հանգստեան:

Տէրն յետ ստեղծմանն արարածոց հանգեաւ յեօԹն

օքն ի զգթծոց. այն ոլ հանդի՞ստ աչխատելո՞ց և կամքն գործ է եղելոց. ուստի և մե՞զ յոյս հաստատո՞ւն ետ հանդստեամբըն չարաթիուն. թէ աստ գործե՞լ զգործս Աստո՞ւծոյ անդ է հանդչել ընդ Աստուծո՞յ։

Բարեւնաբա՞ր վարդապետի՞մք յօրինակէ տեառն խրատիմք. որ ի յերկրո՞րդ արարչութիա՞նն յետ կատարման տնօրէնութիանն. յեօթներո՞րդ օր հանգըստեա՞ն ի՞ջեալ մարմնով ի գերեզման. զկապեալ հոգիսը՞ն վերածեա՞ց զանանց հանգիստն պատրաստեա՞ց։

Ցօղդ որ ի քո՞յդ կողէ ցօղեա՞լ բըժշկեսցէ դհանգուցեալսն. իջցէ ի հո՞ղ մահու նոցի՞ն և բուսուսցէ յօրն վերջին. կենդանարա՞ր ձայնիւըդ քո՞ կոչեա ըզնասա ի կենդանս քո. և դասեցո ընդ արդարո՞ցն երթեալ քեզ փառս ընդ զուա՛րթնո՞ցն։

Խուծեալ զբնութի՞ւնս կենաց ունո՞ղ դարձոյց յանցանքն՝ ի մահու հող. իսկ անմահի՞դ մեռելութի՞ւն չնորհեաց դարձեա՛լ զանմահութիւն. զորս են ընդ քե՞զ թաղեալ մահուա՞մբ աւազա՛նին մըկը՛րտութեամբ, յարո ընդ քե՞զ քոյին փառո՞ք արեգական նըման լո՞ւսո՛վ։

Փայլի՞ն արդարքն յարքայութեա՞նն և ճըգնաւորքըն ի հանգստեանն. մալտիւրո՞սքըն պըսակի՛ն և կուսանաց լապտերք վառին. դասեցո՛ տէր ընդ նոսին ոչք զքեզ Աստուա՛ծ խոստովանեալն. արդպատութեա՛մբ մի՛ դասեցցի՞ն այլ գթութեամբ քո քաւեսցի՛ն։

Քո անպատո՞ւմ խոնարհութեա՞մբդ որ թաղեցար

Digitized by Google

մեռելութեամբ. և յարուցե՛ր յորդւոց մարդկան ոչք հաւա՛տով ի քեզ անկան. յարո և զմե՛զ արդարութեա՞մբ և զննչեցեալսն ողորմութեամբ. զի կենդանեա՛ցըս բերանո՛վ տացին քեզ փառս ընդ Հո՛ր և Հո՛գւո՛ւդ։

ՓԱՐՈՋ

Խնդրեսցուք հաւատով միաբանութեամբ ի տեառնէ՝ զի զողորմութեան գնարհս իւր արասցէ ի վերայ մեր. Տէրն ամենակալ կեցուսցէ և ողորմեսցի։

Կեցո՛ տէ՛ր։

Տէր ողորմեա՛. Տէր ողո՛րմեա. Տէ՛ր ողո՞րմեա՛։

ԱՂՕԹՔ

Քեզմ ամենազօր և հրաշալի տէրութեանդ Քրիստոս Աստուած մեր՝ երկիրպագանեմք զօրք հրեշտակաց, զի դու միայն ունիս զանմահութիւն բնակեալդ ի լոյս անմատոյց։ Եւ մեք հողեղէն արարածքս խոնարհեալ երկիւղիւ երկիրպագանեմք. զսուրբ, զհրաշալի և գյաղթող զտէրութիւնդ քո օրհնեմք և փառաւորեմք։ Եւ ընդ երկնային զօրսն մատուցանեմք զօրհնութիւն և զփառս՝ ընդ Հօր և ընդ Սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն։
Հայր մեր որ յերկինս ես՝՝։

Digitized by Google

Կարգաւորութիւն հասարակաց աղօթից երբորդ ժամուն։ Որ կատարի ի դէմս լուսան Հոգւոյն Սրբոյ, և ի դէմս նահատակացն Ճաշկեան. և ազատութեանն Քրիստոսի։

Օրհնեալ Հոգիդ Սուրբ Աստուած ճշմարիտ. ամէն։

Սաղմոս Ե։

Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քումդ. ըստ բազում պթութեան քում ջնջեսցես զանօրէնութիւնս իմ։

Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ. և ի մեղաց իմոց սուրբ արա զիս։

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Քեզ միայն մեղայ տէր, և չար առաջի քո արարի։

Որպէս արդար եղիցիս ի բանս քո, և յաղթող ի դատել զոս։

Անօրէնութեամբ յղացաւ, և ի մեղս ծընաւ զիս մայր իմ։

Դու տէր զճշմարտութիւն սիրեցեր, զանյայտս և զծածկեալս իմաստութեամբ քով յայտնեցեր ինձ։

Ցօղեա յիս մշտակաւ և սուրբ եղէց, լուա և քան ըզձիւն սպիտակ եղէց։

Digitized by Google

Լսելի արա ինձ տէր զցնծութիւն և զուրախութիւն, և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք։

Դարձո զերեսս քո ի մեղաց իմոց. և զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա յինէն։

Սիրտ սուրբ հաստատեա յիս Աստուած, և հոգի ուղիղ նորոգեա ի փորի իմում։

Մի՛ ընկենուր զիս տէր յերեսաց քոց, և զհոգի քո սուրբ մի՛ հաներ յինէն։

Ծուր ինձ զնծութիւն փրկութեան քոյ, և հոգւով պետութեան քոյ հաստատեա զիս։

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո, և ամբարիշտք առ քեզ դարձցին։

Փրկեա զիս յարենէ Աստուած. Աստուած փրկութեան իմոյ. ցնծասցէ լեզու իմ յարդարութեան քում։

Տէր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։

Թէ կամեցեալ էիր պատարագս մատուցանէաք. բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար։

Պատարագ Աստուծոյ հոգի խոնարհ, զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ։

Բարի արա տէր կամօք քովք սիովնի, և չինեսցին պարիսպքն Երուսաղէմի։

Ցայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան. յորժամ ուխտիցպատարագս հանցեն ի սեղան քո զուարակս։

Փառք Հօր և Որդւոյ ։ Այժմ և միշտ և յաւի ։

Digitized by Google

Երգ երրորդէ ժամու աւուրն՝ զկնի ողորմեայնն։

Օրհնեմք ըզքե՛զ հայր անսկի՛զբն էից էա՛կ ի յանդոյից. բարձեր ձեռաք նիւթ ի հոլոյ և ստեղծեր զմարդ ի պատկե՛ր քո. գլուխըն ուո՞ւց խոնարհեցաւ զի ըզպատուիրան քո՝ մոռացա՛ւ. դարձեալ ասեմք ը՞ստ անառա՛կին թէ հայր մեղայ քեզ ի յերկի՛նս։

Երկնաւորա՛ցն անքննելի եղեր մարդկան տեսա՛նելի. զգեցար ալատկեր հողեղինի պատկերըդ հօր ա՛նփոխելի. ելե՛ր յերրո՞րդ ժամ ի խաչին վասն ադամա՛յ նախաստեղծին, ը՞նդ աւազակին քում խաչակցին արժանացո ըզմեզ դրախտի՛ն։

Թագաւո՛ր թագաւո՛րաց առաւտաբուղխ հոգի չընորհաց. ժողովելոց ի վերնատան առաքելոցն երկոտասան. ի հրոյ լեզուս երեւեցար հոգիս նոցա վերանատար. լուր յանուն քո ժողովելոցս էջ և առ մեզ յերրորդ ժամո՛ւս։

ՄԱՂԹԱՆՔ

Ցամենայն ժամու աղաչանք իմ այս են, ի մեղաց իմոց սուրբ արա զիս տէր. և չօտարէն պահեա զծառայս քո մարդասէր տէր։

ՓԱՐՈՂ

Եւ և այ խաղաղութեան զՏէր աղաչեսցուք, ընկալ կէսցո և ողորմեա։

Օրհնութիւն և փառք Հօր։ Այժմ և միշտ և։

Digitized by Google

ՓԱՐՈՋ

Խնդրեսցուք հաւատով ի տեառնէ վասն ճանապարհորդաց հարց և եղբարց մերոց, որք ընդ ծով և ընդ ցամաք գնասցեն. որպէս զի առաջնորդեսցէ նոցա, խաղաղութեամբ պահեսցէ, և տարեալ հասուսցէ յիւրաքանչիւր տեղիս տէր Աստուած մեր։ Վասն զի նա ինքն է առաջնորդ կենաց, և յոյս փրկութեան. որ յայտնէ ծառայից իւրոց խաղաղութեամբ հասանիլ ի նաւահանգիստն կենաց և փրկութեան։ Ամենակալ տէր Աստուած մեր. կեցո և ողորմեա։

ԱՂՕԹՔ

Առաջնորդեա մեզ տէր Աստուած մեր, և ուսո մեզ գնալ ի ճանապարհս քո արդարութեամբ, պահեա ի խաղաղութեան զկեանս մեր, և զգնացս ի հաճոյս քո. ժամանեցո զհոգևոր և զմարմնաւոր ընչացս ծառայից քոց անարատ ճանապարհաւդ յաւիտենական ի կեանսդ։ Շնորհօք միածնի քոյ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի. որ եղեւ մեզ առաջնորդ կենաց և յոյս փրկութեան։ Ընդ որում օրհնեալ ես Հայր ամենակալ հանդերձ կենդանարար և ազատիչ Սուրբ Հոգւովդ, այժմ և միշտ և յաւիտեանս''։

Ի սարկաւագ վարդապետէն ասացեալ։

Յիշեա տէր զպաշտօնեայս քո։ Զծնողսն մեր։ Զվարդապետս։ Զեղբարս։ Զընկերս։ Զկերակրիչս։ Զուխտաւորս։ Զճանապարհորդս։ Զհանգուցիչս։

Digitized by Google

Զվաստակաւորս։ Զխոստովանողս։ Զապաչխարողս։ Զզերիս։ Զհիւանդս։ Զնեղեալս։ Զիշխանս։ Զչարաչարս։ Զբարերարս։ Զթշնամիս։ Զատելիս։ Եւ ողք պատուիրեցին մեզ հաւատով։

Ցիշեա տէր և ողորմեա։

Բարերար և բազումողորմ Աստուած՝ քո անմոռաց դիտութեամբդ և անբաւ մարդասիրութեամբդ՝ յիշեա զամենայն հաւատացեալս ի քեզ, և ողորմեա ամենեցուն։ Օգնեա, և փրկեա յիւրաքանչիւր վտանգից և ի փորձութեանց։ Արժանաւորեա զոհութեամբ փառաւորել զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգիդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Սաղմոս. էբ։

Տէր հովուեսցէ զիս, և ինձ ինչ ոչ պակասեսցի։

Ի վայրի դալարւոջ անդ բնակեեցոյց զիս, և առ ջուրս հանգստեան սնոյց զիս։

Դարձոյց զանձն իմ առ իս և առաջնորդեաց ինձ ի ճանապարհս արդարութեան վասն անուան իւրոյ։

Թէպէտ և գնացից ես ի մէջ ստուերաց մահու, ոչ երկեայց ի չարէ՝ զի դու տէր ընդ իս ես։

Ցուպ քո և գաւազան. նոքա՛ մխիթարեսցեն զիս։

Պատրաստ արարեր առաջի իմ զսեղան՝ ակն յանդիման նեղչաց իմոց։

Օծեր իւղով զգլուխ իմ, բաժակ քո որպէս անապակ արբեցոյց զիս։

Digitized by Google

Ողորմութիւն քո տէր զհետ իմ հկեսցէ զամենայն աւուրս կենաց իմոց, բնակիլ ինձ ի տան տեառն ընդ երկայն աւուրս։

Յոյժ ինձ ճանապարհ՝ յոր և գնացիցց, զի առ քեզ տէր համարձակ զանձն իմ։

Փրկեա զիս ի թշնամեաց իմոց տէր, զի զքեզ ապաւէն ինձ արարի։

Ուսո ինձ առնել զկամս քո, զի դու ես Աստուած իմ։

Հոգի քո բարի՝ առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ։

Վասն անուան քո տէր կեցուսցես զիս արդարութեամբ քով, հանցես ի նեղութենէ զանձն իմ։

Ողորմութեամբ քով սատակեա զթշնամիս իմ. և կորո զամենայն նեղիչս անձին իմոյ զի ես ծառայ քո եմ։

Փառք Հօր և Որդւոյ՝ Այժմ և միշտ և յաւիտ։

ԳՈՒՐՈՂ

Եւ ես խաղաղութեան զտէր աղաչեսցուք։

Գոհաբանելով աղաչեսցուք զբարերար Հոգին Աստուած, և խնդրեսցուք զողորմութիւն ի նմանէ. զի անցուսցէ ի մէնջ զցասումն պատուհասի յանցանաց մերոց բարերարութեամբն իւրով։ Ամենակալ տէր Աստուած մեր. կ՚ցո և ողորմեա։

Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա։

Digitized by Google

ԱՂՕԹՔ

Ով աղաղուլթեամբ քով Հոգիդ Սուրբ Աստուած՝ ճըշմարիտ, որ ի վեր է քան զամենայն միտս և ըզխորհուրդս, մըխիթարեա զանձինս ծառայից քոց՝ ընդունելով զաղաչանս մեր. անցո ի մէնջ զցասումն պատուհասի յանցանաց մերոց բարերարութեամբ քով։ Ներեա և լուր մեզ, քաւեա և թող զմեղս մեր. արժանաւորեա գոհութեամբ վառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ Որդւոյն Միածնի. այժմ և միշտ և յաւիտ՚՚։

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն։
Հայր մեր որ յերկինս ես՚՚։

Digitized by Google



Կարդասդուքիւն Հատարակաց աղօթից վերջոյդ ժամուն՝ Որ կոտոքէ ի դէմն Հօր Աստուծոյ, այլև ի դէմս Հարչարանաց և խաչելութեան Որդւոյն Աստուծոյ։

Օրհնեալ Հայր Սուրբ Աստուած ճշմարիտ. ամէն։

Սաղմոս ծ։

Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում. ըստ բազում գթութեան քում քաւեա զանօրէնութիւնս իմ։

Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ. և ի մեղաց իմոց. (Տես ի թիւն. 76։)

Փառք Հօր և Որդւոյ։ Այժմ և միշտ և յաւի։

ՄԱՂԹԱՆՔ

Ցամենայն ժամու աղաչանք իմ այս են, ի մեղաց իմոց սուրբ արա զիս տէր. և յոտարէն պահեա զծառայս քո մարդասէր տէր։

ԿԱՐՕՂ

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկալ Աստուած։

Օրհնութիւն և վասն Հօր։ Այժմ և միշտ և յա։

Digitized by Google

ՓԱՐԱԶ

Վասն հիւանդաց և ամենայն վշտացելոց՝ աղաչեսցուք զփրկիչն մեր Քրիստոս. զի ողորմեսցի ըստ մեծի ողորմութեան իւրում. և բժշկեսցէ զախտս և ըզհիւանդութիւնս հոգւոց և մարմնոց ծառայից իւրոց. և կատարեալ առողջութեամբ հաստատցէ զամենեսեան ի մշտնջենաւոր և յանախատ կեանս։ Որ առաքեցաւ ի Հօրէ ի բժշկութիւն ազգի մարդկան՝ Միածին Որդին Աստուծոյ. Տէր մեր և փրկիչ Յիսուս Քրիստոս կեցո և ողորմեաս։

ԱՂՕԹՔ

Փարատեա զցաւս և բժշկեա զհիւանդութիւնս ի ժողովրդենէ քումմէ տէր Աստուած մեր. և չնորհեա ամենեցուն զկատարեալ առողջութիւն նչանաւ ամենայարդի խաչիւ քով. որով բարձեր զտկարութիւն ազգի մարդկան, և դատապարտեցեր զթշնամին կենաց և փրկութեան մերոյ։ Դու ես կեանք մեր և փրկութիւն՝ բարերար և բազմողորմ Աստուած. որ միայն կարող ես թողուլ զմեղս՝ և մերժել զախտս և զհիւանդութիւնս ի մէնջ. որում յայտնի են սէրք կարեաց մերոց. պարգեւիչդ բարեաց՝ պարգեւեա զառաւտ ողորմութիւն քո ի վերայ արարածոց քոց՝ ըստ իւրաքանչիւր պիտոյից. յորոց հանապազ փառաւորեալ զովի ամենասուրբ Երրորդութիւնդ, այժմ և միշտ և.

Յիշեա տէր զպաշտօնեայս . (Տես ի Պրև 79։)

Digitized by Google

Սաղմոս. խ

Երանի որ խորհի զաղքատն և զտնանկին, յաւուր չարի փրկէ զնա տէր։

Տէր փրկէ զնա և կեցուցանէ, երանելի առնէ զնա ի վերայ երկրի, և ոչ մատնէ զնա ի ձեռս թշնամեաց իւրոց։

Տէր օգնական է նմա ի մահիճս ցաւոց իւրոց. զամենայն անկողինս նորա դարձուցանէ ի հիւանդութենէ նորա։

Ես ասացի տէր ողորմեա ինձ. բժշկեա զանձն իմ, ես մեղայ քեզ։

Որ բնակեալն է յօդնութիւն բարձրելոյն, ընդ հովանեաւ Աստուծոյ յերկինս հանգիցէ։

Հառաջէ տեառն՝ ընդունօղ իմ ես, ասասէն իմ Աստուած, և ես յուսասմ ի նմա։

Նա փրկեսցէ զես յորոգայթէ ոլսոլնն, և ի բանից ի խռովութենէ։

Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ. ի հովանի թևոց նորա յուսասցիս։

Որպէս զէն շուրջ եղիցի զքեզ՝ ճշմարտութիւն նորա։

Ոչ երկիցես դու յերկիւղէ գիշերի, և ոչ ի նետէ՝ որ թռչի ի տուէ։

Ցքրէ որ չրջի ի խաւարի, ի գայթակղութենէ դիւին ի հասարակ աւուր։

Անկցին ի կողմանէ քումմէ հազարք, և բիւրք ընդ

ալմէ քումմէ. և առ քեզ ինչ ոչ մերձեսցին։

Բայց միայն աչօք քովք հայեսցիս դու, և գհատուցումն մեղաւորաց առեսցես. զի դու տէր յոյս իմ ես։

Զբարձրեալն արարեր քեզ ապաւէն. զի ոչ հասցեն առ քեզ չարք, և տանջանք մի՛ մերձեսցին ի յարկս քո։

Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո, ի պահել զքեզ յամենայն ճանապարհս քո։

Ի բազուկս իւրեանց ընկալցին զքեզ. զի մի՛ երբէք հարցես զքարի՞ն քո։

Ի վերայ իժից և քարբից դնասցես դու, և առ ոտըն կոխեսցես զառիւծն և զվիշապն։

Քանզի յիս յուսացաւ, և փրկեցից զնա. հովանի եղէց նմա, զի ծանեաւ զանուն իմ։

Կարդասցէ առ իս՝ և ես լուայց նմա. և առ նմա եղէց ի նեղութեան։

Փրկեցից և փառաւոր արարից զնա. երկայն աւուրբք լցուցից, և ցուցից նմա զփրկութիւն իմ։

Փառք Հօր և Որդւոյ։ Այժմ և միշտ և յաւի։

ՓԱՐՈՋ

Եւ ես խաղաղութեան զանէր տալչեսցուք։

Խնդրեսցուք հաւատով ի Հօրէ վասն քաւութեան մեղաց և թողութեան յանցանաց. փրկելոյ զմեզ ի վչտաց և ի նեղութեանց, իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան և գթութեան տեառն Աստուծոյ ամենակալին. կեցո և ողորմեաւ։

Digitized by Google

ԱՂՕԹՔ

Հայր գթութեանց և Աստուած ամենայն մխիթարութեանց. որ մխիթարես զմեզ յամենայն նեղութեան մերում. լուր և այժմ ձայնի պաղատանաց ծառայից քոց՝ ընդունելով զաղաչանս մեր. անցո ի մէնջ զցասումն պատուհասի յանցանաց մերոց բարերարութեամբ քով։ Ներեա և լուր մեզ. քաւեա և թող զմեղս մեր. արժանաւորեա զոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ և ընդ Սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն։
Հայր մեր որ յերկինս ես՝՝։

Digitized by Google



Կարգաւորութիւն հասարակաց աղօթից լինելոցդ ի ժամուն՝ Որ հատարկ է ղէմս Որդւոյն Աստուծոյ, այլև մահուանն՝ և բանական հոգւոյն աւանդմանն։

Օրհնեալ Որդիդ Սուրբ Աստուած ճչմարիտ. ամէն։

Սաղմոս ծ։

Պողոմեա ինձ Աստուած, ըստ մեծի ողորմութեան քումդ. ըստ բազում գթութեան քումդ, քաւեա զանօրէնութիւնս իմ։

Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ. և ի մեղաց իմոց։ (Տես ի թիւն. 76։)

Փառք Հօր և Որդւոյ։ Այժմ և միշտ և յաւի։

ՄԱՂԹԱՆՔ

Ցամենայն ժամու աղաչանք իմ այս են, ի մեղաց իմոց սուրբ արա զիս տէր. և յօտարէն պահեա զծառայս քո մարդասէր տէր։

ԿԱՐՈՂ

Եւ և՛ս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք, ընկալ կէաց և ողորմեաւ։

Օրհնութիւն և փառք Հօր։ Այժմ և միշտ և յա։

Digitized by Google

ՔԱՐՈԶ

Աղաչեսցուք զկենսատու վրկիչն մեր Քրիստոս՝ որ կամաւոր խաչելութեամբն իւրով զաբարածս վըրկեաց. և հեղմամբ արեան իւրոյ՝ զթողութիւն չընորհեաց յուսացելոց իւրոց։ Ամենակալ տէր Աստուած մեր, կեցո և ողորմեա։

ԱՂՕԹՔ

Անկեալ առաջի քոյ բարերար և բազումողորմ Աստուած՝ աղաչեմք ամենայն սրտիւք մերովք և խնդրեմք զքթութիւն ի քէն. որպէս խոստացար ծառայից քոց և ասացեր՝ զամենայն զոր ինչ խնդրիցէք հաւատով յանուն Որդւոյ ի Հօրէ, տացի ձեզ։ Շընորհեա և այժմ հաւատացելոցս ի քեզ՝ և կատարեա ի բարի զխնդրուածս մեր. զի ի քեզ եմք ապաւինեալ։ Եւ քո առաջի ողորմութեամբդ մխիթարեա զմեզ ի կեանս յայսոսիկ. և առաջնորդեալ հասո յանճառ երկնից արքայութիւնդ, ի փառաբանութիւն և ի պատիւ ամենասուրբ Երրորդութեանդ. այժմ և միշտ և ։

Ցիչեա տէր զպաշտօնեայս. (Տես ի Թիւն 79։)

Սաղմոս ՃԺԳ։

Սիրեցի՝ զի լուիցէ տէր զձայն աղօթից իմոց. զի խոնարհեցոյց զունկն իւր առ իս, և ես յաւուրս իմ կարդացի առ նա։

Digitized by Google

Շրջեցան զինև երկունք մահու. և վիշտք դժոխոց գտին զիս։

Չնեղութիւն և զանձկութիւն գտի, և զանուն տեառնըն կարդացի։

Ո՛ տէր՝ փրկեա զանձն իմ. ողորմած Աստուած մեր ողորմի՝ և պահէ զտղայս տէր։

Ես խոնարհ եղէ՝ և տէր կեցոյց զիս. դարձ անձն իմ ի հանգիստ քո. զի տէր օգնեաց քեզ։

Փրկեաց զանձն իմ ի մահուանէ, զաչս իմ յարտասուաց. և զոտս իմ ի գայթակղութենէ, հաճոյ եղէց առաջի տեառն յերկրին կենդանեաց։

Հաւատացի զոր և խօսեցայ. և ես խոնարհ եղէ յոյժ։

Ես ասացի ի զարմանալ իմում, թէ ամենայն մարդ սուտ է։

Զինչ տացէ տրիտուր տեառն ընդ ամենայնի՝ զոր և ետ ինձ։

Զբաժակ փրկութեան ընկալայց, և զանուն տեառնըն կարդացից։

Զաղօթս իմ տեառն տացի՝ առաջի ամենայն ժողովրդեան նորա։

Պատուական է առաջի տեառն մահ սրբոց իւրոց. ո տէր ես ծառայ քո եմ, ծառայ և որդի աղախնոյ քո։

Հատեր զկապանս իմ. քեզ մատուցից պատարագ օրհնութեան, և զանուն տեառն կարդացից։

Զաղօթս իմ տեառն տաց առաջի ամենայն ժողովրդեան նորա. ի դաւիթս տան տեառն, և ի մէջ քո Երուսաղէմ։

Օրհնեցէք զտէր ամենայն ազինք. գովեցէք զնա ամենայն ժողովուրդք։

Զօրացաւ ողորմութիւն նորա ի վերայ մեր. և ճշմարտութիւն տեառն մնաց յաւիտեան։

Փառք Հօր և Որդւոյ։ Այժմ և միշտ և յաւի։

Նաբաւեան տէրունեաց և մարտիրոսաց

Ա Զ

Ո՞ր ստեղծմամբ ըստ պատկերի քո տէ՛ր պատուեցե՞ր ըզմեզ. ընկալ և այժմ զննջեցեալսն ի քեզ ուղի՛ղ հաւատով. ըստ մեծի՛ քում ողորմութեա՛ն։ Ո՞ր չնորհո՛ք սուրբ Հոգւո՛ն լուսաւո՛րեր. յիշատակի իւրեանց զհոգիս նոցա ընկա՛լ մարդասէր։ ըստ մեծի՛ն”։ Ոյք հաղորդեցան մարմնո՛յ և արեա՛ն քո՝ տէր. հանգո զհոգիս նոցա ընդ սուրբսդ քո Ղրիատո՛ս Աստո՛ւած. քանզի դի՛ն ք սուրբ արեան քո ե՛ն։ Մի՞ արհնեալդ ի կա՛՞նա՛յս. մայր և մի՞շտ կո՛յս և իմանալի՛ լոյս. ծընո՛ղ արարչին մերոյ անդա՛դա՛ր բարեբա՛՞նեսցո՛ւք։

Digitized by Google

Ա Կ

Աչալո՞չ Աստուած և ըստեղծիչ աղղի մարդկա՞ն. մի՛ անտես առներ զննչեցեալսն մեր. այլ հանգո՛ զհոգիս նոցա ընդ սուրբս քո՛։ Որդի՛դ Քրիստոս ասէ՝ յարութիւն տիեզերա՛ց. մի՛ անտես առներ՝՝։ Հոգի՛դ ճշմարիտ մխիթարիչ սգաւորա՛ց. մի՛ անտես առներ՝՝։ Հոգւոյն ըղքեւ հովանացեալ միա՛յն սրբուհի. ծընար զքա՛նն Աստուած զանճառելո՛յ Հօր ծընունդ. և յայտնեցա՛ւ միութիւն երրորդութեա՛ն։

Բ Զ

Որ կոչեցեր առ քեզ տէր ըզսիեզերս ամենայն. ընկալ զմեր զննչեցեալսն ի՛ գոգ նահապետին Աբրահամու. ողորմա՛ծ տէ՛ր վրկի՛չ և բարերա՛ր։ Որ թողութեանց ես տուող Աստուա՛ծ. թող զմեզս մեր նըննչեցելոցն. կա՛րող յամենայնի և հզօր. ողոր՝՝։ Որ լուսաւոր ես տիեզերաց Քրիստոս Աստուած. լուսաւորեա՛ և զմեր ըզննչեցեալսըն լո՛ւսով երա՛նա. էէտ զուարթնոցն՝. ողոր՝՝։ Ցոխյս մեր և ապաւէ՛ն մա՛յր տեա՛ռն և կո՛յս սուրբ. որ հուր Աստուածութեանն ոչ բոցակիզեա՛ց զքո սուրբ զորովայն. բարեխօսեա՛ առ տէր վասը՛ն մերոյ վրկութեա՛ն՝՝։

Digitized by Google

Բ Կ

Որ Որդիդ ես և բանդ Աստ՛ւա՛ծ. հաւասարակից ընդ Հօր յէո՛ւթեան. առ քե՛զ կարղամք մարդասէր. հանգո՛ղ զհո՛գիս եննջեցելո՛ց մեր ընդ սուրբս քո՛։ Որ իջեր յերկնից վասը՛ն մե՛ր. ՚զառաջինն առեր պյանցանսն ադամայ. մերով բնութեամբ բարձեր ի վերայ խաչին անարատ ձե՛ռօք. հանգո՛՛։ Որ լուծեր պիչխանութիւն մա՛հո՛ւ. կամաւորական մահուամբ քո Քրիստո՛ս. բանաւորաց զաղաչանս առաջի քո հեղեալ մա՛ղթեմք. հանգո՛՛։ Ցիրուհի անարատ մայր տեա՛ռն և կոյս Մարիամ. քրովբէական աթո՛ռ զքե՛զ տեսաք ի յերկրի. բարեխօսեա առ տէր վասը՛ն մերոյ փրկութեա՛ն։

Գ Զ

Հա՛յր բարեգութ որ գրթացար ի յազգս որդւոց մարդկան. առաքեցեր զՄխածինդ ի՛ փրկութիւն. յիչեա՛՛ զհո՛գիս եննջեցելոց մերո՛ց. և հանգո՛ ընդ սուրբս քո՛։ Որդի՛ Մխածի՛ն որ յարեարդ ի մեռելոց. ի միւսանգա՛մ գալըստեանըն քո՛ յարութիւն մեզ խոստացար. յիչեա՛՛։ Հոգի՛ ճշմարիտ մխիթարիչ սգաւորաց. աղաչանո՛ք սուրբ Աստուածածնին և ամենա՛յն քոց սրբոց. յիչեա՛՛։ Ի բարեխո-

Digitized by Google

սո՞ւթի՛ն փուքացիր մեզ սուրբ Աստուածածին. առ ի փրկել զժողովուրդս ի մեղա՞ց և յապականութենէ՛։

Գ. Կ

Յանակզբնական ծոցոյ Հօր խոնարհեա՛լ բանդ մարմնացար ի կուսէ՛ն վասն փրկութեան մերո՛յ. աղաչեմք զքեզ. զննջեցեալսն մեր ի քե՛զ ուղիղ հաւատով. յիչեա՛ տէ՛ր յորժամ գա՛ս թագաւորութեամբդ քո՛։ Անոխակալ քաղցրութե՛ամբ Որդի Աստուծոյ. հաճեցար բառնալ զմեղս աչխարհի՛ քո խաչելութե՛ամբն. աղա՛՛։ Կամաւորական մահուամբ քո լուծե՛ր զերկունս մահու. և արժանի արարեր թողութեան յանցանա՛ց քոյիչ քո արեա՞մբ. աղա՛՛։ Որ փոխանակ մեղաւորաց զմեռանի՛լ յանձն առեր. իջանելով ի դժոխս փրկեցեր ի մեղասէ՛ր բանտէն զգերեա՞լն. աղա՛՛։ Բարեբանեմք զանչափ քո՛ ըզմարդասիրութիւնդ. որ երեքօրեայ յարուցեալ ըզկենդանութիւն պարգե՛ւեցեր աչխարհի՛. աղա՛՛։ Մաքուր և անբի՛ծ կոյս յետ ծընննդեան. որ մարմնով ծընար զարձակո՛ղն ի կասկից մահու. բարեխո՛ս լեր վասն անձանց մերոց. փրկել ի սպա՛ռնալեաց դեհենո՛յն։

Digitized by Google

Դ Ջ

Յորժամ հարկանի փո՛ղ դա՛յլը՝ատեա՛ն քո՛ տէր. յա՞ յնժամ զա՛րհո՛ւրեալ դո՛ղա՞ն արարա՛ծք ի յահ՛ քո՞ւմմէ՛. աղաչե՛մք ը՛զքե՛զ վը՛րկիչ. հանգո՛ և զմեր զննջեցեա՛լսն ը՛նդ սո՛ւրբըը՛ա քո. որ միա՛յնըդ ե՛ս բա՛ղո՞ւմո՛ղ ը՛մ՝ս: Ցահաբեկ լուսո՛յ ծա՛գմա՛ն քո՞ տէր. ցընծա՛ն դա՛ք ա՛ռա՛քեհեա՞ցն ի վերա՛յ լուսեղէ՛ն ա՞մպո՛յն. աղա՛՛: Անոխակա՞լ բաղմագո՛ւթ ողոմա՛ծ տէր. մի՛ ա՛նտե՛ս ա՞ռնեը զմեղուցեալքս յա՛հ՞գի՛ն ա՞ւուրն. որ միա՛յնդ՛՛: Ո՞ր իջե՞ր ի յերկնի՛ց և մարմնա՛ցար ի սուրբ կուսէ՞ն. անճառե՛լի քոյին ծննդեամբդ. և զի՞ս մի անտես առնեը. այլ պահեա՛ պատուական և սո՛ւրբ խաչիւ քո՛:

Դ Կ

Ո՞ր թագաւո՛ր ես յաւիտենից Քրիստո՛ս Աստուածդ. ընկալ զծառայս քո՞ ի բարի. և՛ չնո՞ր՛հեա ի յաջակողմեա՛ն քում դասի՛լ: Ո՞ր ունի՛ս իշխանութիւն մահո՛ւ և կենաց. հանգո զհոգիս քո՞ց ծառայից. և՛ չնո՞ր՛հեա՛՛: Յորժամ կարգի՛ աթո՛ռ տէրութեանդ քո. և հաստատի աստեան դա՞տաստանին. յայնժամ խնայեա՛ ի ծառա՞յս քո. և՛ չնո՞ր՛հեա՛՛:

Digitized by Google

Ամէնօրհնեալ Աստուածամա՛յր Մարիամ. քերովբէական աթոռ արարչին մերո՛յ տնօրէնուհե՞ն. զո՛ր երանե՞ն ամենայն ազի՞նք հանապա՛զ։

ՄԱՂԹԱՆՔ

Հոգւոյն հանգուցեալոց. (Տես ի Թիւն. 36։)

Օրհնեալ Տէր՞մեր Յիսուս Քրիստոս. ամէն։ Հայր մեր որ յերկինս ես՝՝։

ՄԱՂԹԱՆՔ

Զսաղմոսերգութիւնս և զաղաչանս ընկալեալ մարդասէրն Աստուած, ի հաճոյս բարերար կամաց իւրոց. մեր մեղացն և բազում յանցանացն թողութիւն շնորհեսցէ. ի չարեաց փրկեսցէ. ի մեղաց պահեսցէ. և նմա փառք յաւիտեանս. ամէն։

Եւ ապէն աչառնի պապարքն

ԺամամուտԺամամուտ

Զաղաւրու ննջումն՝ որպէս կանխագէտ յաւաջ ասէիր. որ և ի Բեթանիա յաւաջէիր՝ զի յարուսցես զաիրելին քո։ Արդ՝ և մեք գոչելով ասեմք. օրհնեալ որ գաս ի չարչարանս կամաւ Հօր՝ ի փրկութիւն անձանց մերոց։

Digitized by Google

Յորժամ եկեալ կենարարդ ի դերեզմանն Ղազարոս. յորժամ եկեալ կենարարդ ի դերեզմանն Ղազարոս. առետուր ձայնիւդ աղաղակիբր սաելով Ղազարէ՝ արի ել արտաքս: Իսկ մեռեալն ի դերեզմանէն յարեաւ. և նոյն ինքնդ զանմահութեան պարգեւդ ետուր սիրելւոյդ, և Աստուածային ձայնիւդ ի դերեզմանէն կոչեցեր: Վաանոլոյ՝ և մանկունք սրբոյ հոտովք օրհնէին զանմահ թագաւորութիւնդ: Ընդ նոսին և մեք ասեմք, ովհաննայ՝ օրհնեալ է գալստեան քո. օրհնութիւն ի բարձունս, օրհնեալ որ գալոյդ ես անուամբ տեառն:

Փոխ

Տէր թագաւորեաց՝ զվայելչութիւն զգեցաւ, ըզգեցաւ տէր զօրութիւն ընդ մէջ իւր էած:

Ճաշու շաբաթան. ԴՋ:

Ո՞ր ի յե՛րկնից իջե՛ր բա՞նդ Ա՛ստըւա՞ծ. մարդ եղեա՛լ ի սը՞րբոյ կո՛ւսէ՞ն, յարութի՛ւն եւի՛ր առնել բարե՛ւիամին քո՞ւմ Ղազարոս. փառը՛ք գալըստեա՛նըդ քում Քրի՛ստո՞՞ս թագաւո՞ր անմա՞հ: Ով՛րմէ դողա՛ն պա՞նք հրեչտակա՞ց. մա՛րդասիրա՛պէս արտա՞սուե՞ցեր ողբակցելո՛վ, ընդ Մարթայի՛ և ընդ Մա՛րիամու. փառը՛ք": Ա՛զբիւր կենաց և ա՛նմահո՛ւթեան. Ա՛ստուածայի՛ն ձայնիւ դողա՛ցուցե՞ր ը՛զմահ, և նորոգեցե՛ր զկորուածո՛րեայ զմեռեալն: փառը՛ք":

Bayerische Staatsbibliothek München
Digitized by Google

Ճաշու Ընթերցուած

Սաղմոս. ԻԹ։

Տէր հաներ ի դժոխոց զանձն իմ. փրկեցեր զիս յայնցանէ, ոլք իջանեն ի գուբ։

Ընթերցուած Գործոց.
Գլ՝ 14։ Հմր 27։

Երկիւղ սաստիկ պատեաց զամենայն ոք. և առնէին հրաշս յոտից առաքելոց։ Ի բաղում գոլս՝ վասն քրիստոսի. ի նուագիլ ժողովրդոց՝ բեկումն հզօրաց։ Այլ երկայնամիտ՝ բազմապատիկ է խորհրդով. քանզի կարճամիտն յոյժ անմիտ է։ Այլ հեզ և երկայնամիտ՝ բժիշկ է սրտի. ցեց ոսկերաց սիրտ հոգած։ Որ զըրպարտէ զոմանսկն, բալկացուցանէ գարաւիչն նորա. և որ պատուէ զնա՝ ողորմի աղքատին։ Զարեզք խրոմք մերժի ամբարիշտն. և որ յուսայ յանձին սրբութիւն՝ ալտար է։ Ի սիրտ բարի հանգչի իմաստութիւն. և ի սիրտ անմտաց ոչ ճանաչի։ Աղաւարտութիւն զազգս բարձրացուցանէ. նուազիցուցանեն զազգըս մեղք։ Ընդունելի է թագաւորի սպասաւոր իմաստուն. և իւրով չոտափուխթութեամբ ի բաց բառնայ զանարգութիւն. բարկութիւն կորուսանէ զիմաստունս։

Պօղոսի Առաքելոյն է Թեսաղոնիկեցւոց Առաջին Թղթոյն է Ընթերցուածս։

Գլ՝ 4. Հմր 12։

Ոչ կամիմ ևդրարք՝ եթէ տղէտք լինէք վասն նըն-

Digitized by Google

ջեցեալոց. զի մի՛ տրտմիցիք որպէս և այլքն՝ որոց ո՛չ գոյ յոյս։ Եթէ հաւատամք՝ եթէ Յիսուս մեռաւ և յարեաւ. նոյնպէս և Աստուած զննջեցեալսն ի Յիսուսի ածցէ ընդ նմա։ Բայց զայս ասեմք տեառն բանիւ, եթէ մեք՝ որք կենդանիքս եմք մնացեալք՝ ի գալստեանն տեառն ո՛չ ժամանեմք նըննջեցեալոցն։ Զի ինքն տէր հրամանաւ՝ ի ձայն հրեշտակապետի. և ի փող Աստուծոյ իջանէ յերկնից. և մեռեալք ի Քրիստոս՝ յարիցեն յառաջագոյն։ Ապա և մեք՝ որք կենդանիսդ՛ն մնացեալ իցեմք նոքօք հանդերձ յափըշտակիցուք ամպովք ընդ առաջ տեառն յօդս. և այնպէս յամենայն ժամ ընդ տեառն լինիցիմք։ Այսուհետև մխիթարեցէ՛ք զմիմեանս բանիւքս այսոքիւք։

Ալէլուիա ալէլուիա

Ի՛ման դիս ի գրոյ տառապանաց. ի կաւոյ և ի տղմոյ։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Ցօհաննու։

գլ՝ 11. հմր 55։

Ի ժամանակի՛ն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ էր մերձ զատիկն Հրէից. և բազումք ելին յերուսաղէմ ի գաւառէ անտի յառաջագոյն քան զզատիկն, զի սրբեսցեն զանձինս իւրեանց։ Խնգրէին զՅիսուս, և ասէին ընդ միմեանս՝ մինչ կային ի տաճարին. զի՞արդ թուի ձեզ՝ եթէ ո՛չ գայցէ ի տօն այսր. պատուէր տուեալ էր քահանայապետիցն և

փարիսեցւոց, զի թէ ոք զնոտասցէ թէ ուր է՝ դուշակեսցեն զնմանէ զի կալցեն զնա։ Իսկ Յիսուս վեց աւուրբք յառաջ քան զզատիկն եկն ի Բեթանիայ. ուր էր Ղազար մեռեալն, զոր յարոյցն ի մեռելոց։ Եւ արարին անդ նմա ընթրիս. և ի սպասու կայր Մարթա. և Ղազար մի էր ի բազմելոց ընդ նմա։ Իսկ Մարեմայ առեալ լիտր մի իւղոյ նարդեան ազնուի մեծագնոյ, չօճ զոտսն Յիսուսի. և հերով իւրով մաքրէր զոտս նորա. և տունն լի եղև ի հոտոյ իւղոյն։ Ասէ մի ոմն յաշակերտաց անտի Յուդա Իսկարիովտացի, որ մատնելոցն էր զնա։ Ընդէ՞ր ոչ իւղդ այդ վաճառեցաւ երեք հարիւր դենարի, և տուաւ աղքատաց։ Զայս ասաց՝ ոչ զի աղքատաց ինչ փոյթ էր նմա. այլ զի գող էր՝ և զարկղն ինքն ունէր. և որ ինչ անկանիւրն, նա կրէր։ Ասէ Յիսուս. թո՛ղ տուք դմա, զի յօրն պատանաց իմոց պահեսցէ զայդ։ Զաղքատս յամենայն ժամ ընդ ձեզ ունիք. զիս ոչ հանապազ ընդ ձեզ ունիք։ Իբրև զիտաց ժողովուրդ բազում ի Հրէից թէ անդ է, եկին, ոչ միայն վասն Յիսուսի, այլ զի և զՂազար տեսցեն. զոր յարոյցն ի մեռելոց։ Խորհուրդ արարին քահանայապետքն՝ զի և զՂազար սպանցեն։ Փանգի բազումք ի Հրէից երթային և հաւատային ի Յիսուս։

Սրբ ասոյս։ Վասն չէշտակի։



Կաջզաւօրութիւն հասարակաց աղօթից եկեղեցի ժամուն։ Որ կատարի ի դէմս Որդւոյն Աստուծոյ. որ կջ ի խաչին և պատեալ պաստառակալաւ՝ եղաւ ի գերեզմանի։

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն։
Հայր մեր որ յերկինս ես՝։

Ես առ Աստուած կարդացի, և նա լուաւ ինձ յերեկոյս՝ ի վաղորդայն՝ և ի հասարակ աւուր։

Սպասէի Աստուծոյ իմոյ, և ան ունէի կենարարին. որ փրկէ զծառայս իւր և կեցուցանէ։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։ Եւ ես խաղաղութեան զտէր աղաչեցուք. ընկալ կեցո և ողորմեա։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն։

Սաղմոս ՀԵ։

Խոնարհեցո ականջդ քո և լուր ինձ. զի աղքատ և տնանկ եմ ես։

Digitized by Google

Պահեա զանձն իմ սուրբ տէր. և փրկեա զծառայս քո Աստուած իմ որ ի քեզ յուսացեալ է:

Ողորմեա ինձ տէր զի առ քեզ աղաղակեցի զօրհնալով, ուրախ արա զանձն ծառայի քո; զի առ քեզ տէր համբարձի զանձն իմ:

Զի դու տէր քաղցր և ուղիղ ես բազումողորմ առ ամենեսեան որք կարդան առ քեզ:

Ունկնդիր տէր աղօթից իմոց, և նայեա ի ձայն խնդրուածոց իմոց:

Ցաւուր նեղութեան իմոյ կարդացի առ քեզ, և լուար ինձ:

Ոչ ոք է նման քեզ յԱստուածս տէր, և ոչ ոք է որպէս զգործս քո:

Ամենայն ազգք զոր արարեր՝ եկեսցեն և երկիրպագցեն առաջի քո, և փառաւորեսցեն զանուն քո յաւիտեան:

Մեծ ես դու տէր և առնես սքանչելիս, և դու միայն ես Աստուած:

Առաջնորդեա ինձ ի ճանապարհի քում, և գընացից ի ճշմարտութեան քում, և ուրախ եղիցի սիրտ իմ՝ երկնչիլ յանուանէ քումմէ:

Խոստովան եղէց առ քեզ տէր Աստուած իմ բոլորով սրտիւ իմով. փառաւորեցից զանուն քո յաւիտեան:

Մեծ եղև ի վերայ իմ ողորմութիւն քո տէր, և փրկեցեր զանձն իմ ի դժոխոց ներքնոց:

Digitized by Google

Աստուած՝ անօրէնք յարեան ի վերայ իմ, և ժողովք հզօրաց խնդրեցին զանձն իմ, և ոչ համարեցան զքեզ Աստուած առաջի իւրեանց։

Այլ դու տէր Աստուած իմ՝ գթած ես և ողորմած, երկայնամիտ բազումողորմ և ճշմարիտ, նայեա առ իս և ողորմեա ինձ.

Տուր զօրութիւն ծառայի քո, կեցո զորդի աղախնոյ քոյ, և արա առիս նշան բարութեան։

Տեսցենատելիք իմ և ամաչեսցեն, զի դու տէր օգնեցեր ինձ և մխիթարեցեր զիս։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՄԱՂԹԱՆՔ

Փառք քեզ Աստուած՝ փառք քեզ. յաղագս սմանայնի տէր փառք քեզ։

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք, ընկալ կեցո և ողորմեա։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն։

Սաղմոս ՃԼԹ։

Ապրեցո զիս տէր ի մարդոյ չարէ, յառնէ անիրաւէ փրկեա զիս։

Խորհեցան զանօրէնութիւն ի սիրտս իւրեանց, զօր

Digitized by Google

ամինայն պատրաստեցան ի պատերազմ։

Սրեցին զլեզուս իւրեանց որպէս զօձի, և թոյնք իժից ի ներքոյ շրթանց նոցա։

Պահեա զիս տէր ի ձեռաց մեղաւորի, և ի մարդոյ չարէ փրկեա զիս։

Խորհեցան խափանել ղընացս իմ, թագուցին ամբարտաւանք որոգայթ ինձ։

Լարս ձգեցին որոգայթ ոտից իմոց, չուրջ զչափաղաջ իմովք եդին ինձ զգայթակղութիւն։

Ասացի տէր Աստուած իմ ես դու, ունկն դիր տէր ձայնի աղօթից իմոց։

Տէր տէր զօրութիւն փրկութեան իմոյ, հովանի գլխոյ իմոյ յաւուր պատերազմի։

Մի մատներ զիս տէր ի յանկութիւն մեղաւորաց, ոյք խորհեցան վասն իմ մի ընդ վայր հալիաներ զիս։

Զի մի երբէք բարձրասցին, և խորհուրդք նոցա մի կատարեսցին. վախճան կատարածի նոցա վաստակ շրթանց իւրեանց ծածկեսցէ զնոսա։

Արկցես ի վերայ նոցա գկայծակունս հրոյ, և կործանեսցես զնոսա, ի տառապանաց մի ելցուսցին կեալ։

Մարդոյ լեզուանոյ մի յաջողեսցի ի վերայ երկրի. պայր մեղաւոր չարիք իւր որսասցեն ի կորուստ։

Ծանեայ զի առնես տէր դատաստան աղքատի, և իրաւունս տնանկի։

Digitized by Google

Արդարք գոհասցին զանուանէ քումմէ, և բնակեսցին ուղիղք առաջի երեսաց քոց։

Տէր կարդացի առ քեզ և լուր ինձ, ականջ ի ձայն աղօթից իմոց ի կարդալ իմում առ քեզ։

Ուղիղ եղիցին աղօթք իմ, որպէս խունկ առաջի քո տէր. համբարձումն ձեռաց իմոց, պատարագ երեկոյի։

Դիր տէր պահապան բերանոյ իմոյ. և դուռն ամուր շրթանց իմոց, զի՞մի խոտորեսցի սիրտ իմ բան նիւ չարութեան։

Ի պատճառել զպատճառս մեղաց ընդ մարդս՝ ոյք գործեն զանօրէնութիւն. և ոչ եղէց կցորդ ընտրելոց նոցա։

Խրատեսցէ զիս արդարն ողորմութեամբ և յանդիման արասցէ. իւղ մեղաւորի մի օծցէ զգլուխ իմ, այլ աղօթք իմ ի կամս նորա։

Արգելան մերձ առ վիմին դատաւորք նոցա. լուիցեն բանից իմոց և քաղցրասցին։

Որպէս թանձրութիւն հողոյ՝ զի ափուեալ է ի վերայ երկրի. ցրուեսցին ոսկերք նոցա մերձ ի դժոխս։

Առ քեզ աչք տէր են աչք իմ, ի քեզ յուսացայ՝ մի՛ հաներ զհոգի իմ։

Պահեա զիս յորոգայթէ որ թաղուցաւ ինձ, ի գայթակղութենէ գործողին զանօրէնութիւն։

Անկցին ի ցանցս նորա մեղաւորք, միայն եմ ես մինչև անցից։

Digitized by Google

Ձայնիւ իմով ես առ տէր կարդացի, ձայնիւ իմով
զտէր աղաչեցի։

Սփռեցից առաջի տեառն զաղօթս իմ, և զնեղու-
թիւնս իմ առաջի նորա պատմեցից։

Ի նուաղիլ յիս հոգւոյ իմոյ, դու տէր ծանեար
զչաւիղս իմ, ի ճանապարհ յոր և գնայի, թագուցին
ինձ որոգայթ։

Հայէի յաջմէ և տեսանէի, և ոչ ոք ճանաչէր զիս.
կորեաւ յիմէն փախուստ իմ. և ոչ գոյաւ խնդրող ան-
ձին իմոյ։

Աղաղակեցի առ քեզ տէր և ասացի, դու ես յոյս
և բաժին իմ յերկրին կենդանեաց։

Նայեա տէր յաղօթս իմ զի ես խոնարհ եղէ յոյժ.
ապրեցո զիս ի հալածչաց իմոց, զի հզօրք եղեն քան
զիս։

Տէր հան ի բանտէ զանձն իմ, գոհանալ զանուա-
նէ քումմէ։

Ընդ քեզ սպասեն արդարք՝ մինչև հատուսցես։
Փառք Հօր և Որդւոյ՝ և Այժմ և միշտ և յաւի՛ն։

ԵՐԳ

Ա՛լէ՛լո՛ւիա՛. Ալէ՛լո՛ւիա՛։

Լո՛յս զո՛ւա՛րթ սո՛ւրբ վա՛ռա՛՛՛ց ա՛՛նմա՛հի,
Հօ՛ր ե՛՛րկնա՛՛ւո՛րի սո՛ւրբո՛յ կե՛նա՛րա՛րի՛ Ցի-
սո՛ւս Քրի՛ստո՛ս։

Նկեա՛լքս ի մը՛տանե՛լ ա՛՛րե՛գա՛կա՛՛նն, տե՛սա՛՛ք

ը զլո՛յս ե՞լե՛կո՞յ՞ս ։ Ծ՞րննե՛մք ը՛զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգիդ Ա՞ստո՞ւծո՛յ ։ Նե ամենեքեան ասեմք ա՛՛մէ՛՛ն ։ Արժանաւորեա զմե՞զ յամենայն ժա՞մ ; օրհնել ձայնիւ երգով զա՛՛նո՞՛՛ւն վա՛ուա՞՛ց ամե՛՛նա՞ստ՞ուրբ Երրո՛՛րդո՞՛՛ւթեա՛՛նդ ։ Ո՞՛՛ր տա՛՛՛յ զկե՛՛՛նդա՞նո՛՛ւթի՞՛՛ւն վասն որոյ և աչխարհս զքեզ փառաւո՞՛՛ր է՛՛ ։

ԳՈՂՈՋ

Հասեալքս ի ժամ երեկոյիս ամենեքեան համբաւնալով զձեռս մեր փառաւորեմք զքեզ տէր Աստուած մեր . որ չնորհեցեր մեզ զտիւս խաղաղութեամբ անցուցանել և հասանիլ ի ժամ երեկոյիս ։ Արժանաւորեա զմեզ տէր՝ սուրբ սրտիւ , հրեշտակային երգով՝ զոհաբանութիւն մատուցանել տեառն Աստուծոյ ամենակալիդ . կեցո և ողորմեա ։

Ողորմեաց մեզ տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քում . ասասցուք ամենեքեան միաբանութեամբ ։

Տէր ողորմեա . Տէր ողորմեա . Տէր ողորմեա ։

ՄԱՂԹԱՆՔ

Հասեալքս ի ժամ երեկոյիս ամենեքեան՝ անդադար փառաւորեմք զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգիդ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

Digitized by Google

Մխակդիք

Օրհնեալ որ գաս յանուն տեառն, օրհնեալ որ գալոց ես։

Տէր Աստուած մեր երևեցաւ մեզ. արարէք տօնս ուրախութեան կանխաւ, մինչև յանկիւնս սեղանոյ։

Ուղիղ եղիցին աղօթք իմ։
Որպէս խունկ առաջի քո տէր։
Համբարձումն ձեռաց իմոց։
Պատարագ երեկոյի։

ՓԱՐՈՁ

Ասացուք ամենեքեան միաբանութեամբ. տէր ողորմեա։

Ելլ ողո՛րմեա՛։

Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի և հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ. զտէր աղաչեսցուք"։

Վասն ամենայն սուրբ և ուղղափառ եպիսկոպոսաց. զտէր աղաչես"։

Վասն Հայրապետին մերոյ տիեառն (այս անուն) կենաց՝ և վերկութեան հոգւոյ նորին. զտէր աղա"։

Վասն վարդապետաց՝ քահանայից՝ սարկաւագաց՝ դպրաց. և ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ. զտէր աղա"։

Վասն լուսաւորչի թագաւորաց և Աստուածասէր

իչխանաց՝ զօրավարաց և զօրաց նոցին . զտէր աղա ՚՚ :

Վասն զի տէրն ամենակալ հնազանդեցուցեալ առաջի նոցա զամենայն պատերազմունս թշնամեաց . զտէր աղա ՚՚ :

Ցաղագս հարց և եղբարցն մերոց՝ որք ի գերութեան են և ի չար ծառայութեան . զտէր աղա ՚՚ :

Ցաղագս ճանապարհորդաց և նաւորդաց՝ խաղաղութեամբ հասանիլ ի նաւահանգիստն բարութեան . զտէր աղա ՚՚ :

Ցաղագս հիւանդաց և ամենայն վշտացելոց՝ փութապէս առողջութեան . զտէր աղա ՚՚ :

Ցաղագս բարեխառնութեան օդոց՝ անձրեւաց քաղցրութեան , և պտղոց առատութեան . զտէր աղա ՚՚ :

Ցաղագս ուխտաւորաց և պտղաբերիչ ի սուրբ եկեղեցի Աստուծոյ . զտէր աղա ՚՚ :

Եւ յաղագս այնոցիկ , որք մատնեալք են ի ձեռս անօրինաց վասն անուանն Քրիստոսի . զտէր աղա ՚՚ :

Ազատեա՛ տէ՛ր և ո՛ղորմեա՛ :

Ցաղագս հոգւոցն հանգուցելոց , ՚՚որք ճշմարիտ և ուղիղ հաւատով ի Քրիստոս ննջեցին . զտէր աղա ՚՚ :

Ցիշեա՛ տէ՛ր և ո՛ղորմեա՛ :

Ցաղագս փրկելոյ զմեզ տեառն Աստուծոյ՝ յերեւելի և յաներեւոյթ թշնամւոյն . զտէր աղա ՚՚ :

Տէ՛ր ողո՛րմեա՛ :

Digitized by Google

ՄԱՂԹԱՆՔ

Բարեխօս ունիմք սուրբ զՄարիամ զԱստուածածինն զփառաւորեալ և օրհնեալ միշտ սուրբ կոյսն. սուրբ զՅովհաննէս Մկրտիչն. սուրբ զԱստեփաննոս նախավկայն. սուրբ զԱռաքեալսն և զՄարգարէսն. զարի և զյաղթող սուրբ զվկայսն։ Եւ զմեծ խոստովանողն Քրիստոսի զհայրապետն մեր զսուրբն Գրիգոր՝ Լուսաւորիչն Հայաստանեայց աշխարհի։

Յիշեսջիք և զամենայն սուրբս, և նոքօք զտէր աղաչեսցուք։

Ցիշեա՜ տէ՛ր և ո՛ղորմեա՜։

Չերեկս մերձեալ՝ և զառաջիկայ գիշերս խաղաղութեամբ անցուցանել հաւատով. ի տեառնէ խնդրեսցուք

Շնո՛րհեա՛ տէ՛ր։

Զհրեշտակ խաղաղութեան պահապան ան՚՚։
Զքաւութիւն և զթողութիւն յանցանաց՚՚։
Զարբոյ խաչին մեծ և կարող զօրութինն՚՚։
Եւ ևս միաբան՚՚։ Զանձինս՚՚։ Ողորմեաց՚՚։

ԱՂՕԹՔ

Լուր ձայնիդ մերոց տէր Աստուած մեր. ընկալ զաղաչանս մեր, զհամբարձումն ձեռաց մերոց՝ և ըզբանս աղօթիցդ, սրբելով զերեկոյի պատարագս մեր ի հոտ անուշից՝ ի հաճոյս քեզ պատրաստել։ Ցաւել

ի մեզ տէր ամենակալ՝ գհաւատս, զյոյս, զսէր, և զամենայն գործս առաքինութեան. որպէս զի ըստ կամաց քոց բարեսիրաց՝ միշտ կրօնաւորեալք բարեպաշտութեամբ ի տուէ և ի գիշերի. և արժանաւորք եղիցուք յաղագս անձանց մերոց փրկութեան, և վասն հոգևոր կենացդ աղաչել զքեզ տէր. և գտանել ի քէն զչնորհս և զողորմութիւն. և գոհանալով փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգիդ. այժըմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն
Աստուծոյ երկրպագեսցուք

Քեզ երկիրպագանելով տէր Աստուած մեր՝ գոհանամք զքէն յաղագս խաղաղութեամբ անցուցանելոյ ի մէնջ զերկարութիւն տունջեանս։ Տուր մեզ տէր աղաչեմք զքեզ՝ զերեկս և զառաջակայ գիշերս առանց մեղաց, և առանց գայթակղութեան անցուցանել. հաստատուն կալ և մնալ ի հաւատ՝ ի յոյս՝ ի սէր՝ և ի պատուիրանապահութեան քոյ։ Խնդրելով զխաղաղութիւն ամենայն աշխարհի, և եկեղեցւոյ քում սրբոյ զհաստատութիւն, և անձանց մերոց զզփրկութիւն։ Որպէս զի՝ ընդունելով ի քէն զհայցուածս մեր՝ և զմեծ վայելչական փառաբանութիւն միշտ ի բարձունս առաքեսցուք ամենազօր տէրութեանդ Քրիստոս Աստուած մեր. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Digitized by Google

Եւ ասա ասէ Սուրբ Աստուած։

Սուրբ Աստուած. սուրբ և հզօր. սուրբ և անմահ. որ եկիր և գալոց ես. ողորմեա մեզ։

Երկիր էրկեա։ Եւ գինի գՓառաւորչին գայէ ի ընծան. 65։

ՄԱՂԹԱՆԻ

Փրկել զմեզ ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց։

ՔԱՐՈԶ

Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեսցուք։

Վասն լսելի լինելոյ տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին։ Եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան և գթութեան տեառն Աստուծոյ։ Ամենակալ տէր Աստուած մեր. կեցո և ողորմեա։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտ՚ ։

Խաղաղութիւն ամենեցուն։

Հաճեալ եմ ես ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն։

Օգնութիւն ինձ ի տեառնէ եկեսցէ, որ արար զերկինս և զերկիր։

Մի՛ տալ ի սասանութիւն զոտն քո. և մի՛ ննջես-

Digitized by Google

ցէ պահապան քո։

Տէր պահեսցէ զքեզ, և տէր ընկալցի ա՛յոյ ձեռամբըն իւրով։

Արեգակն ի տուէ քեզ մի՛ մեղիցէ, և մի՛ լուսին ի գիշերի։

Տէր պահեսցէ զքեզ յամենայն չարէ. պահեսցէ տէր զանձն քո։

Տէր պահեսցէ զմուտ և զել քո՝ յայսմհետէ մինչև յաւիտեան։

Փառք Հօր և Որդւոյ՝՝։ Այժմ և միշտ և յաւի՛՝։

Եւ զգեցցէն մկաբան գահանայքն՝ և եղանեն յատեան խաչիւ և Աւետարանաւ, լնկօք և ժամդնոք և ամենայն զարդուք։ Եւ ասեն համբարձի, յորոյ ի սկսանելն՝ քաջշեն զվարագոյն, և բանան զկորանն։

Համբարձի Ա.Զ։

Ո՞ր վե՛րօրհնիս յա՛թո՛ռըս քերո՞վբէ՛ի՛ց, ի վերա՛յ նըստիլ յաւանա՛կի՞ հաճե՛ցար. բարե՛բանեա՛լ որ եկի՛ր ի կե՛ցո՛ւցանե՛լ։ Ուստի և մի՛՛ք դիւագի՛ա՛կա՛ն օրհնո՛ւթիա՞նցն ը՛նձայն մատուցանե՛մք քեզ Թագաւո՛ր վառաց ը՛նդ տղա՛՛յն օրհնա՛բանելով. բար՝՝։ Ո՛վաանննա՛՛յ ի բա՛րձունս ա՛լէ՛լո՛՛ւիա. բարեբանեա՛լ եկեալ ա՛նուա՛՛մբ տեառն ա՛լէլուիա. և՛ օրհնութի՛՛ւն որ գալո՛ցդ ես անուա՛՛մբ տեառն ա՛լէ՞լուիա՛՛։

Digitized by Google

Այսօ՛ր զանըսկի՛զըն բա՞նն որ յաթո՛ռ փառաց ընդ Հօր՝ յեր՛կըի երե՛ւեալ տեսաք. քրո՛վբէական՛ն ձայնիւն օ՛րհնե՞սցուք. օրհնեա՛լ եկեալ ա՛նուա մբ տեա՞ռն: Փառք Հօր եւ'': Այսօր յաւանա՛կ քեր՛վբէ՞, և տղա՛յքն Եբրա՛յեցւոց բա՛րեբանեն. օրհնուե՛լ՛ն որդո՛յ Դաւթի օրհ'': Այժմ եւ միշտ'': Այսօր զուա՛րճացան տիե՛զերքք գալստեա՛մբ Աստուածո՛րդւոյն յԵ՛րուսաղէմ. և գոչէ՛ի՛ն հընչմա՛մբ երգով. օրհ'':

Զինի փարպ. Խնդրեսցուք. Կեցո՛ Տէր՝ ձայնիւ.

ԱՂՕԹՔ

Թագաւոր խաղաղութեան օգնական և փրկիչ անձանց մերոց Քրիստոս Աստուած մեր. պարապեալ պահեա զժողովուրդս քո ընդ հովանեաւ սուրբ և պատուական խաչի քոյ ի խաղաղութեան: Փրկեա յերեւելի և յաներեւոյթ թշնամոյն. արժանաւորեա զոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ Սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւի'':

Եւ ապչաչին:

Ցետ այսորիկ. Գիշերային ժամերգութիւնն ցվերջ կանոնագլխոյն, տես ի սկիզբն գրոցս. և ապա գաւուրս պատշաճեան կատարեա ըստ հետեւեալ կարգացն:

Digitized by Google



Կանոն գալատեանն Քրիստոսի Աստուածոյ մերոյ յաւանաւս յԵրուսաղէմ։

ԾԱՂԿԱԶԱՐԴ

ԿԻՒՐԱԿԷ



Ի վնջելն հոկոմա է, եւ պէսպէս զարքունեանն ի վերայ Բաղհայէն։

ՀԱՆԳՍՏԵԱՆ ՇԱՐԱԿԱՆ

Ա Կ

Զևոզք քո՞ արարին և՛ ըստեղծին զիս ի հոգւոյ. ի յօրհնել զքե՞զ Աստըւա՛ծ յաւիտեա՞ն։ Իսկ պատրանո՞ք բանսարկուին խա՛վանեցայ յա՛նճառ լուսո՛յն, և դաւթայ անկրէն ի հո՞ղ յո՛ւրջ ստեղծա՛յ։ Մըխիթարի՞չ Սուրբ Հոգի լո՛ւսաւորեա զմի՛ր ընծի՛ցեաւ՛լան, և հանգո՞ւցհոգիս նոյա՛ր՛նդ սո՞ւրբըս քո՞։

Չա՛յր անօխակալ և՛ բարեգո՛ւթ։ Աղաչեմ զո՛վ հայցո՞մք ի քէ՞ն վասըն մի՛ր ընծի՛ցելոցն ալժա՛նաւորե՞լ հանգըստեան օթեվանի՞ սըրբո՛ցն՝՝։ Ա՛ն-

Digitized by Google

ճառ ծընո՜ւնդ Հօր Որդի՜, որ մահկանա՛ցուացա կեանքդ ես, դո՞ւգիա նըւիրեցե՛ր մեր ընկա՜լ և արժա՛նաւորեա՜ հանդըս՚՚. Եւ նորոգո՜ղ Սուրբ Հոգի՜, յո՛ւժամ նորոգես զա՛պականեալսն, յա՜յնժամ չնորհեա և մեր նընջե՛ցելոցն արժա՛նաւորե՜լ հանդըստեան՚՚։

Յո՛ւժամ յե՛ւրկնի՜ց զո՞ւչէ վողն ազդեցուԹի՜ւն առնելո՜ւ տի՜ե՛ւզ՞բաց ի դատաստա՜ննն ա՜հա՞ւոր, յայնմ աւո՛ւր ահեղին յիշեա՜ տէ՞ր և զմեզ ըզնը՜նջե՜ցեալսն, և հանդո ընդ սու՜րբը՞ս քո՜։ Յո՛ւժամ ճառագա՛յԹք ԱստուածածնԹեանդ վայլի՜ն ի յաւե՛ւԹից, և դըպրուԹիւնըք հրա՛չի՞ցըն բա՜նի՞ն, յայնմ աւո՜ւր ա՜հե՞ղին յի՛ւշեա՜ տէ՞ր՚՚։

Ո՜վ զերա՛հրաչ ծագի՜կ բո՛ւրեալ յի՜զե՛ւմայ, հո՛ւտ անմա՛հուԹեա՜ն ծննդո՛ւցս Ե՜ւա՞յի, յորմէ՛ սըփռեցա՜ւ մա՛հ ընդ տի՜ե՛ւզերս. օրհնո՛ւԹեամբ ը՛զքե՞զ մեծացո՜ւցա՛նե՜մք՚՚։ Դո՜ւ լո՛ւծիչ երկա՜նց, բա՛րձող ա՜նի՛ծից, ծագումն արե՛ւո՛ւ լուսո՛յն ճը՛շմա՞րտի. որո՛վ հեզքեա՜ւ խաւա՛րն ա՜ւա՜ջին, օրհ՚՚։ Ըզքե՜զ ունիմըք բարեխո՜ս կոյս անհա՜նգնա՜ցեալ, մա՛յր անա՛րա՜տ էմմանո՜ւէ՞լի, տաճար բանի՜ն Հօ՛րն երկնա՜ւո՜րի. օրհ՚՚։

Սեղան քո տէ՛ր զօրուԹեա՜նց հաւատո՛վ կա՛նգ-

Digitized by Google

նեցաւ ի խոտանի՞ քումմ. եկա՛յք ժողովո՛ւրդք ե՛րկիր-պագեացո՛ւք : Վէ՞մ պատուական ի՛ խոշտանի քումմ հի՛մնեցաւ ա՛յսօր. եկա՛յք ժողովո՛ւրդք ե՛րկիր պա՞գեացո՛ւք :

Փառք Հօ՛ր եւ Որդո՛յ եւ Հոգո՛յն սրբոյ.

Ի՛ սմա՛ մատուցա՛ւ ճըչմարի՛տ պատարա՛գ, և գենո՛ւմն անապական. եկա՛յք ժողովո՛ւրդք ե՛րկիր-պա՞գեացո՛ւք :

Այժմ եւ մի՛շտ եւ յաւիտեանս յաւիտե՛նից ամէն :

Ջարհուրեա՛լ դողան ա՛րարածք ի ձայնէ սրո՛վբէ-ադո՛չ վո՛ղոյն. յո՛րժամ հարկանէ՛ հրե՛շտա՛կա՞-պե՞տն և կոչէ ի դատաստա՛ն զաղգս որդո՛ց մա՛րդ-կան. յայնմ աւո՛ւր ահեղին յիշեա՛ տէ՛ր և ըմմեր ըզնը՛ն ջե՛ցեալսն, և հանգո ընդ սո՛ւրբըը՞ս քո.

Սաղմոս Աւետարանին

Ա. Կ

Ալէ՞լուիա Ալէ՞լուիա :

Բարձր առնեմ զքեզ տէր՝ զի ընկալար զիս. և ոչ ուրախս արարեր զթշնամիսն իմ յիս :

Տէր Աստուած իմ՝ կարդացի առ քեզ և բժշկեցեր զիս. տէր հաներ ի դժոխոց զանձն իմ, և փրկեցեր զիս յայնցանէ՝ որք իջանե՛ն ի գու՛բ.

Digitized by Google

Սաղմոս ասացէք տեառն սուրբք նորա, և խոստովան եղերուք յիչատակի սրբութեան նորա։

Սրտմտութիւն է ի բարկութեան նորա, և կեանք են ի կամս նորա։

Ընդ երեկոյս հանգիսցեն լալիք, առաւօտու եղիցի ուրախութիւն։

Ես ասացի ի բարեկենդանութեան իմում, թէ ոչ սասանեցայց յաւիտեան։

Տէր ի կամս քո եառուր զերդ իմոյ զօրութիւն, դարձուդեր զերեսս քո յինէն՝ և ես եղէ խռովեալ։

Առ քեզ տէր կարդացի, և առ Աստուած իմ աղաչեցի. զիա՞նչ օգուտ է քեզ յարենէ իմմէ, թէ իջանեմ ես յապականութիւն։

Մի թէ հաղ խոստովան առնիցի առ քեզ. կամ պատմեսցէ զճշմարտութիւնս քո։

Լուաւ ինձ տէր, և ողորմեցաւ. և տէր եղեւ ինձ օգնական։

Դարձոյց զսուգ իմ յուրախութիւն, էգերծ յինէն ըզքուրձ, և ինձ զգեցոյց զուրախութիւն.

Որպէս սաղմոս ասացեն քեզ վասք իմ. և այլ մի ևս զղջացայց, տէր Աստուած իմ յաւիտեան խոստովան ե՞ղէց քե՞զ։

Ալէլուիա Օ՞ՐՀՆԵԼ

Խաղաղութիւն ամենեցուն

Եւ ընդ հոգւոյդ քում. երկիւղածութեամբ լուարուք։

Digitized by Google

Սրբոյ Աւետարանիս Ցիսուսի Քրիստոսի որ ըստ Ղուկասու

գլ. 21 հմր 5.

Փառք քեզ Տէր Աստուած մեր. Գնօսխուամ. ասէ Աստուած։ Ա՛ռ Տէրն մեր Ցիսուս Քրիստոս։

Եւ յասել սմանց զտաճարէն, թէ գեղեցիկ վիմօք և աչտարակօք զարդեալ է. ասէ. Զայդ ամենայն զոր տեսանէք, ելիցեն աւուրք յորս ոչ թողցի այդր քար ի քարի վերայ, որ ոչ քակտեսցի։ Հարցին ցնա և ասեն. վարդապետ՝ ելրբ լինիցի այդ, և զինչ նշան իցէ՝ յորժամ այդ լինելոց իցէ։ Եւ նա ասէ, զգոյչ կացէք, մի խաբիցիք. զի բազումք գայցեն յանուն իմ և ասիցեն՝ թէ ես եմ. և մերձեցաւ ժամանակ, մի երթայցէք զկնի նոցա։ Եւ յորժամ լսիցէք պատերազմունս և խռովութիւնս՝ մի զարհուրիցիք. զի պարտ նախ այնմ լինել. այլ ոչ առժամայն կատարած Ցայնժամ ասէ ցնոսա. յարիցէ ազգ յազգի վերայ, և թագաւորութիւն ի թագաւորութեան վերայ։ Եւ շարժմունք մեծամեծք. և ի տեղիս տեղիս սով և աշածուխիւնք, եղիցին արհաւիրք և նշանք մեծամեծք յերկնից։ Բայց յառաջ քան զայս ամենայն, ձեռնասցեն զձեռս իւրեանց ի ձեզ՝ և հալածեսցեն. մատնեսցեն ի ժողովուրդս և ի բանտս, և տանիցին առաջի դատաւորաց և թագաւորաց վասն անուան իմոյ. և լինիցի ձեզ այն ի վկայութիւն։ Արդ՝ դիք ի սիրտս ձեր՝ մի յառաջագոյն կրթել տա-

Digitized by Google

լոյ պատասխանի : Զի ես տաց ձեզ բերան և իմաստութիւն , որում ոչ կարիցեն կալ հակառակ՝ կամ տալ պատասխանի ամենայն հակառակորդքն ձեր : Մատնեսջիք և ի ծնողաց և յեղբարց և յազգականաց և ի բարեկամաց , և սպանանիցեն ի ձէնջ . և եղիջիք ատելք յամենեցունց վասն անուան իմոյ . և մազ մի ի գլխոյ ձերմէ ոչ կորիցէ . և համբերութեամբ ձերով ստասջիք զոգիս ձեր : Այլ յորժամ տեսանիցէք զՅերջ պատեալ զօրօք զԵրուսաղէմ , յայնժամ գիտասջիք թէ մերձ է աւեր նորա : Ցայնժամ որ ի հրէաստանի իցեն՝ փախիցեն ի լերինս , և որ ի միջի նորա իցեն՝ խուսեսցեն , և որ ի գաւառսն իցեն՝ մի մտցեն ի նա . զի աւուրք վրէժխնդրութեան են սոքիկ՝ առ ի կատարելոյ ամենայն գրելոց : Բայց վայ իցէ յղեաց և ստնդուաց յաւուրսն յայնոսիկ . զի եղիցի տագնապ մեծ ի վերայ երկրի , և բարկութիւն ժողովրդեանն այնմիկ : Եւ անկցին ի սուր սուսերի , և գերեսցին յամենայն հեթանոս . և Երուսաղէմ եղիցի կոխան յազգաց՝ մինչև կատարեսցին ժամանակք հեթանոսաց , Եւ եղիցին նշանք յարեգակն և ի լուսին և յաստեղս . յերկրի տագնապ հեթանոսաց՝ յահեղ բարբառոյ իւրեն ծովու և խռովութեան , յեւանելոյ ոգւոց մարդկան յերկիւղէ և ի կարծեաց եկելոց ի վերայ տիեզերաց . զի զօրութիւնք երկնից չարժեսցին : Եւ յայնժամ տեսցեն զորդի մարդոյ եկեալ՝ ամպովք զօրութեամբ և փառաւք բազմաք : Եւ յորժամ սկսանիցի

այս լինել, ամբարձջիք և բարձրացուսջիք զղլուխս ձեր. զի մերձ է փրկութիւն ձեր: Եւ ասաց առակ մի նոցա. տեսէք զթզենիդ և զամենայն ծառս. յորժամ ցուցանիցեն զպտուղս իւրեանց, տեսանէք՝ և ի նոցանէ ճանաչէք եթէ մերձ է ամառն: Նոյնպէս և դուք՝ յորժամ տեսանիցէք զայս ամենայն եղեալ՝ գիտասջիք թէ մերձ է արքայութիւնն Աստուծոյ: Ամէն ասեմ ձեզ. թէ ոչ անցցէ ազգս այս, մինչև այս ամենայն լինիցի: Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ ոչ անցանիցեն: Զգոյշ լերուք անձանց, դուցէ ծանրասնայցեն սիրտք ձեր չուայտութեամբ և արբեցութեամբ և հոգովք աշխարհականօք, և յանկարծակի հասանիցէ ի վերայ ձեր օրն այն. զի իբրև դորդայթ հասանիցէ ի վերայ ամենեցուն, որ բնակեալ են ընդ ամենայն երեսս երկրի: Արթուն կացէք այսուհետև, յամենայն ժամ աղօթս արարէք. զի արժանի լինիջիք զերծանել յայնմ յամենայնի որ լինելոց է, և կալ առաջի Որդւոյ մարդոյ: Եւ ի տուէ ի տաճարին ուսուցանէր, և զդիշերս ելեալ ագանէր ի լերինն՝ որ կոչէր Ձիթենեաց: Եւ ամենայն ժողովուրդն կանխէր ընդ առաւօտս առ նա ի տաճարն լսել ի նմանէ:

Երգ փեսան Ննջումի սասյեալ վասն սա ի Քրիստոս Աղջկունց

Ակ. Կկ

Ձա՞նապա՞րհ մոլո՛ր/լոց և ճա՛ռա՛գայթ խաւա-

Digitized by Google

բեւո՛ց . հրաւիրեցիր զո՛րդի՛ս լուսո՛յ ի յերկնային հարսա՛նիս քո՛ . ընդ զուարճալից անդ ժո՛ղո՛վո՛ց . արժանացո՛ զղ սա դասո՛ւց . ի լաւատեղօք մոյծ յա՛ռագա՛ստ ընդ ի՛մաստուն սուրբ կո՛ւսանացն ։

Մի՛րով բնուի՛եա՛ մը զոր ը՛զգե՛ցա՛ր ի վայտ խաչին բե՛ւեռեցար . լուծանելով զմեզ ի՛ մեղաց ի նախահօրըն կալանա՛ց . լո՛յծ և ըզսա ի յանցա՛նաց վասըն քո՛ սուրբ չարչարանա՛ց . ի լաւ ” ։

Ցե՞տ կամաւո՛ր մահու խա՛չի ե՛դար ի նո՛ր գերեզմա՛նի . երիքօրեայ յարուցմա՛մբ յերկիւղ նոր ը՛սեռ՛ղծեր զմե՛զ կենդանի . պի՛ղեալս ընդ քե՛զ ի հող մա՛հո՛ւ վերա՛կո՛չեա ձայնիւ վոզո՛յ . ի լաւ ” ։

Նը՞ահեալ կանա՛նցն խղա՛ճե՛լից և ողբա՛լի՛ն արտասուալից . իբր ըզմեռեալ անյո՛ւսալից ը՛զ կենդանի՛ յաւի՛տենից . վա՛սը՛ն նոցի՛ն սուրբ արտա՛սուա՛ց մաքրեա՛ ըզսա՝ ի՛ յանցանա՛ց . ի լաւ ” ։

Շա՞ւրժեալ հիմա՛նցըն ղը՛ժո՛խո՛ց ի տեսա՛նե՛լ ըզքեզ ներքնոց . հաներ զհոգիսն ո՛ր ի բանտին կա՛պեա՛լ զիչխանըն մահածին . ը՛նդ հանդուցեալ հոգիս սը՛րբո՛ց հանգո զհո՛գիս նըն՛ջեցելո՛ց . ի լաւ ” ։

Ո՞ւրախութի՛եա՛ մը զօրք ե՛րկնա՛կան յե՛րկնի՛ց յերկի՛ր իջանէ՛ին . յորժամ յարեա՛ր ի մեռելոց լո՛յս ծա-

Digitized by Google

գե՛ցար արարածո՝ց . սո՛ւրբ յարութեամբ քո կենարա՛ր յարո՛ր ը՝զսա՛ ի կեանս անմահ . ևի լսատեըօք մոյծ յա՛ռագա՝սա ընդ ի՛մաստուն սուրբ կո՛ւսանացն ։

Զը°հանդուրժեա՛լ պահա՝պա՛նացն ի յե՝րկիւղէ՛ երկնաւորա՝ց՝ն . որք աւետիս տա՝յի՛ն կանանց թէ՝ մա՛հ լուծաւ մա՝հկանացուաց . սա՛ որ մահո՛ւ քո տընկա՝կից լիցի կե՛նա՝ցդ հաղորդակի՛ց . ևի լսազ ” ։

Պա՞ րակցեա՛լ անմա՝րմնակա՛նքն առ կենսա՝տո՛ւ սուրբ դերեզմանն . տան զաւետիս ա՝զգի՛ մարդկան վա՝սը՛ն կենա՝ց՝ն յա՛ւերժական . դա՛ սաւորեա՛ պարո՝ւց նո՛ցին ըզնընջե՝ցեա՛լս յօրըն վերջին . ևի լսազ ” ։

Զա՞հաւորեա՛լ նըշան խա՝չի՛ն յարեւե՝լի՛ց փայլեալ ծագին , հաւատացեալքն ի քեզ բերկրին և ո՝ւրա՛ցողքըն կոծեսցին . զե՛րկրպագո՛ւս սրբոյ խաչի՛ն պայծառաւցո լո՝ւսով նորին . ևի լսազ ” ։

ԵՐԳ

Ցարգա՞ւո՛ր վեռա՛ց Քրի՛ստոՓ՚ս . որ ժամա՛նեա՞լ գա՛ս ի՞՛ յերկինք՝ ց . ի վե՞րա՛յ թևո՛ց հոզմոՓ՚ց քո՛ հա՝յրե՛նի՞ կե՛րեա՞՛րանո՞՛ք . և ա՞ռնե՛՛ս հրաշափո՛՛ր՛ձուԼեաՓ՚մբ ըղքըննո՛ւԼքի՞ն ո՛րդւո՞՛ց մարդկա՞ն . ո՞ղորմա՛՛ծ տէ՞ր ո՛՛ղորմեաՓ՚ հոգւոցը՛՛ն մե՛՛ր նը՛՛նջե՛՛ց՛՛ի՞ լոց ։

Digitized by Google

ՄԱՂԹԱՆՔ

Հոգւոյն հանգուցելոց։ Եւ ևս խօսելոյ։
Քրիստոս Որդի։ (Տես ի Թիւն. 36։)

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս ամէն։
Հայր մեր որ յերկինս ես ”։

ՄԱՂԹԱՆՔ

Տէր Յիսուս Քրիստոս. Հրաշափառ Գալստեանդ չնորհիւ ”։

Հեռաւոր Շարական. Դշ։

Թա՛գաւոր գոլո՛վ քո՞ յաչխարհ մը՛տեր ի քաղա՛քն Ա՛րուսաղէ՞մ. նըստեա՛լ ի վերայ հողեղէ՛ն նոր յա՛ւանա՛կի՞՛ն, կոչե՛լ գնե՞թա՛նո՞սս յերկըրպա՛գո՛ւթի՞՛ւն։ Ա՛ր ըքն ոստո՛վք ձի՞թենեաք, և՛ տղա՛յքն ոստո՛վք ա՛րմաւենեա՞ծք. և՛ երամ երամ դասո՛ւքն աղա՛ղակէ՛յի՞՛ն. ովսաննա օ՛րհնեա՞լ է՛կեա՞լի յանո՛ւնըն տե՞ռն։ Յր՛նծացաւ ա՞ւրբ Սիովն. բե՛րկրեցան սուրբ է՛կեղեցի՞ք. և խընդութե՞մբ բազմաւ ելի՛ն ընդ ա՛ռա՞՛ջ, օրհնէ՛լի՞ն զգա՛լո՞ստ քո փըրկի՛չ յաչխա՞րհ։ Յորժամ եկը՞ն Յիսուս յՆրուսաղէ՛մ ի քաղա՞ք, ընդ առա՛ջ ելին ծերքն ոստո՛վք ձիթե՛նեա՞՛ք, և զԱստուա՞ծո՛րդի՞ն

Digitized by Google

փառաւո՛րեի՞ն ։ Ի լե՛ռնէն ձի՞թենեաց տա՛րածանէին մանկո՛ւնքն զհա՛նդերձս իւրեա՛ծնց . և՛ ոստս ի ծառո՛յ բերեալ մատո՛ւցանէ՛ի՞ն Աստուա՞ծորդո՛ւն սուրբ թագա՛ւորի՞ն ։ Ո՛ստովք և տե՛րեւեալ ձի՞թենեօք Ե՛բրայեցւոց մանկո՛ւնքն օրհնէի՞ծն . ուրախ լե՛ր երուսա՛ղէմ քա՛ղա՛քդ , և ցընծա՞ Սի՛ո՛ն մայր եկեղեցի՛ ։ Զգալուստ քո Քրիստո՛ս այսօր յե՛րուսաղէմ նո՛ր եկեղեցի՛ սուրբ , յաղթակա՛ն երգով բա՛րեբանեմք . օրհնեալ եկեալ ա՛նուա՞մբ տեա՛ռն ։ Որ վա՛սըն մերո՛յ փըրկուածեա՛ն յաւանակի՛ նըստի՛լ յանձն ա՛ռեր , ընդ մանկո՛ւնսըն բա՛րեբանե՛մք . օրհ ՚՚ ։ Թագաւոր ե՞րկնաւոր զե՛կեղեցի քո անչա՞րժ պա՛հեա , և զերկրպագո՛ւս անուա՛նըդ քում պա՛հեա՞՛ ի խա՛ղաղութեա՛ն ։ Ի՛ յարութեա՛ն յաւո՛ւր գալո՛ստեան Փըրկչին տարածանէի՛ն մանկո՛ւն քն ըզհա՞նդերձս , և անդադա՛ր ձայնիւ օրհնէի՛ն օրհնեա՛լ եկեալ ա՛նուա՞մբ տեա՛ռն ։ Ո՛ստս ի ծառո՛յ բերեալ մատո՛ւցանէին Աստուա՛ծորդո՛ւն առ ճա՛նապարհաւն , և անդա՛ ՚՚ ։ Ի ծեղո՛յ բըղխեա՛լ օրհնութիւն և՛ ի տղայո՛ց վառա՛բանութիւն , և անդա ՚՚ ։

ՓԱՌՈՋ

Եւ ես խաղաղութեան ղՏէր աղաչե այսօր ընկալ ՚՚ ։

Digitized by Google

Օրհնուքիւն և փառք Հօր ։ Այժմ և միշտ և յաւի ” ։

Օրհնուքիւն. Ա Զ

Յապէհան ասա ։

Օրհնեացուք զՏէր զի վա՛ռօ՛ք է փառաւորեա՛լ ։

Որ վե՛րօրհնիս յա՛ղթո՛ղըս քերո՞ վրէ՛ն՛ց , ի վերա՛յ նըստիլ յաւանա՛կի՞ հաճե՛ցար . բարե՛բանեա՛լ որ եկի՞ր ի կե՛ցո՞ւցանե՛լ ։ Ուստի և մե՛ք զյաղթա՛կա՞ն օրհնո՛ւքեա՞ նցն ը՛զձայն մատուցանե՛մք քեզ Թագաւո՛ր վառաց ը՛նդ տղա՛յան օրհնա՛բանելով . բարե՛ ” ։ Ո՛վաննա՛յ ի բա՛րձունս ա՛լէ՞ լո՛ւիա . բարեբանեա՛լ եկեալ ա՛նուա՞մբ տեառն ա՛լէլուիա . և՛ օրհնուքի՞ւն որ գալո՛ցդ ես անուա՞մբ տեառն ա՛լէ՞լուիա՞ ։ Այսօ՛ր զանըսկի՛զբըն բա՞ննո՞ր յաղթո՛ղ վառաց ընդ Հօր ՝ յա՛րկիւր երե՛ւեալ տեսաք . քրո՛վբէակա՛ն ձայնիւն օ՛րհնե՞սցուք . օրհնեա՛լ եկեալ ա՛նուա՞մբ տեառ՞ն ։

Այսօր գոլո՛վ ի Բե՛թանիա քո՛ ամենազօ՛ր հրամա՞նաւըդ ձա՛յնեցե՛ր Ղա՛զարու , և դողացա՛ւ մահ. դը՛ժո՞խ ք պա՛տեցաւ , ապակա՛նուքիւն լո՛ւծաւ . կենդանարա՛ր Քրիստոս կե՛ցո՞ ըզմե՛զ ։ Այսօր գոլո՛վ ի Բե՛թանիա զքո՛ զաչխարհակեցո՛յց սուրբ ըզյա՛րո՛ւքիւնդ յա՛ռաջագո՛ւն ծանուցեր անա՛պա-

Digitized by Google

կանաբա՛ր կոչմամբ զչորեքօրեա՛յն ի թաղմանէ կենդա ՚՚ : Այսօր գոլո՛վ ի Բե՛թանիա Ե՛բրայեցո՛ց մանկունքն աքանչացեա՛լ ասէ՛ին. զՄա՛րիամո՞՛ւ զե՛ղբա՛յրն ի թաղմանէ յա՛րո՛ւցեալ ո՛րդո՛ւյն Մարիամու. կենդա ՚՚ :

Կենդանութեանց բա՛ղխող Քրի՛ստոս ի Բեթանիա՛ եկաւորեա՛լ ա՞յսօր, բարե՛կամի՛ն Ղազա՛րո՛ւ պա՛րգեւէ զկե՛նդա՞նութի՛ւն : Տընօ՛րինաբա՛ր արտասուելո՛վ ընդ Մարթայի՛ և ընդ Մա՛րիամո՛ւ ողբա՛կցէր. և որպէս մա՛րդ հա՛րցանէ՞ր ո՛ւր եդիք ը՛զՂա՞զարո՛ս : Ե՛ւ որպէս զԱստուա՛ծ բարբա՛ռով յարուցանէ՛ ի մեռելոց զչորեքօրեայն. և զուդընթա՛ց ձա՛յնի՛ն մեռեա՛լն ե՛կն արտա՛քս ա՛նա՞պակա՛ն :

Որ ի լերի՞ն այլակերպեալ ցո՛ւցեր զԱստուա՛ծայի՞ն քո՛ զօրութիւնդ. զքե՛զ վառա՛ւո՛ր ե՞՛մք իմանա՛լի՛ լո՛յս : Որ ըզհառաջայի՛ վա՛ռաց քոց ցո՛ւցեր ա՛րեգակնակե՛րպ վա՞ յլմա՛՛մբ զա՛րարածս լուսաւորեցեր. զքե՛զ վառա՛ւո՛ր ե՞՛մք խմանալի ՚՚ : Որ ահագին տե՛սլեամբ զա՛րհուրեցուցեր զքո՛՛ զաշա՛՛կերտան, ի ի՛՛մբութի՛՛ւն հրա՛՛յնէն ի սե՛՛ր Աստուածայի՛՛ն վառա՛՛ց քոց. զքե՛՛զ վառա ՚՚ :

Digitized by Google

Զփառաւորեա՛լըն յամենայն արարա՛ծոց, և ի ծագա՛ց մինչ ի ծա՛գս երկրի զերկրըրպա՛գեալն. ըզմարմնացեա՛լ բանն ի կո՛ւսէն, ձայնի՛ւ երգո՛վ օրհնեսցո՛ւք: Որ դիմեա՛լ գայ յեդովմա՛յ բարձրացեա՛լ փո՛ղո՛վ. յարուցեա՛լ ի պատերա՛զմ ընկերմեա՛ց զանե՛րեւո՛յթն ամա՛ղէկ. զի՛ չկալ բանն ի դըժոխս ձայնի՛ւ եր՛՛: Ծագո՛ւմն ի Հօրէ՛ փառա՛կից Սուրբ Հո՛գւոյն, կենդանութի՛ւն ազգի մարդկա՛ն, որ յարեա՛ւն այսօր ի մեռելոց. ըզհամբարձեա՛լ բանն ի յե՛րկինս ձայնի՛ւ եր՛՛:

Հոգ. Ո՛ր ի քրովբէական կա՛ռըդ հա՛նգչիս, այսօր իջե՛ր յերկնից ի գա՛ս առաքե՛լոցն Սուրբ Հո՛գի. օ՛ր ննեա՛լ ե՛ս թագաւո՛ր անմա՛հ: Ո՛ր գընա՛ս ի վերայ թե՛ւոց հո՛ղմոց. ա՛յսօր ի հրեղէ՛ն լեզո՛ւս բաժանեա՛լ հանգեա՛ր յա՛ռաքեալսը՛ն Սուրբ Հո՛գի. օրհ՛՛: Որ խնամե՛ս տեսչութեա՛մբ զքո գա՛րա՛րածըս, ա՛յսօր եկիր ի հա՛ստատել զեկե՛ղեցի քո Սուրբ Հո՛գի. օ՛ր հ՛՛:

Զայն արկեալ կե՛նարարին Ա՛ստուածայի՛ն բարբա՛ռովն, ասէ եկա՛յք օ՛ր ննեալըք Հօր խմոյ ժառա՛նգեցէ՛ք պա՛տրաստեալ ձեզ զկեանսն ի հանդե՛րձեալ երկրի՛ն: Ընդ առաջ ելանե՛լ քեզ հաւատո՛վ ի յո՛ղըս

Digitized by Google

վե՛րինս, Աստուա՛ծազգեա՛ց լո՛ւսով պայծա՛ռացեալ ի դա՛սս անմարմնոցն. ի լսե՛լ ը՛ղձայն երա-նա՛ւէ՞տ կո՛չմա՛նն։ Ընդ աչմէ քումմէ՛ կացո ընդ իմաստո՛ւն սուրբ կո՛ւսանանն, ի լուսեղէ՛ն ա՛ւա-զաստին պայծա՛ռացեալ ի դա՛սս անմարմնոցն, ի ժողո՛վս անդրանկա՛ց գրելոց ի՛ յե՛՞րկի՛նս։

Ա՛մբնացեա՛լդ ի կուսէ՞ն նախա՛յաւիտեա՞ն քանդ, այսօ՛ր ի տաճա՛րն ե՛կի՛ր կատարել զօ՛-րէնս, վասը՛ն վերկո՛ւթեա՛ն հե՛յթա՞նոսա՛ց։ Ո՛ր յանարուեստ աթոռ նը՛ստիս բա՛րեբանեա՛լդ ի հը-րե՛շտակաց. այսօ՛ր ի Սիմէո՛նի՛ բառնա՛լով ի գի՛ր-կըս. որ ընծա՛յեացես ըզ մեզ ի կեա՛՞նըդ յա՛ւիտե՞-նի՛՞ց։ Որ արձա՛կիչդ ես կապե՛լոց պարգեւա՛տու ամե՛նեցուն, այսօր հա՛յցմա՛մբ ծե՛րունւո՞յն ար-ձակեա՛ և զիս ըղբազմամե՛ղս ի կապա՛նաց մահո՛ւ՝ ի կա՛՞նըդ յա՛ւիտե՞նի՛՞ց։

Ի խորանի՛ քում սըրբութեան զո՛ր ընտրեցե՛ր դա-լըստեամբը՛դ քո Քրիստո՛ս, ի սա՛մ միաձայնեա՛լ ա-զա՛չեմք ըզքեզ լո՛ւր ձայնի՛ ազաչանա՛ց մերոց ընդ-կա՛լ և կե՛ցո՞ ըզմե՛՞զ։ Աստուածայի՛՞ն լուսով քո՛ պայծա՛ռ քան զարեգա՛կըն լուսա՛տրեցեր զքո՛ սուրբ զեկեզե՛ցի. ի սա՛՞” ։ Ա՛յսօր և հրեշտակք ո՛՛ւրա-խանան ը՛նդ պայծառութի՛՛ւն քո սուրբ եկեզե՛ցւոյ.

Digitized by Google

ի սմա՛ մխաձայնեա՛լ աղա՛չեմք ըզքեզ լո՛ւր ձայնի՛ աղաչանա՛յ մերոց ընկա՛լ և կե՛ցո՛ զմեզ։

Փառք Հո՛ր եւ Որդո՛յ եւ Հոգւոյն Սրբոյ.

Այսօր յաւանա՛կ քերո՛վբէ՛, և տղա՛քն Սբրա՛յեցւոց բա՛րեբանեն. օրհնութի՛ւն որդւոյ Դաւթի օրհնեա՛լ եկեալ ա՛նուա՛մբ տեա՛ռն։

Այժմ եւ մի՛շտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Այսօր զուարճա՛ցան տիւ՛վերը ք գալատեա՛մբ Աստուածո՛րդւոյն յի՛րուսաղէմ. և գոչէի՛ն հընչմա՛մբ երգով. օրհնեա՛լ եկեալ ա՛նուա՛մբ տեա՛ռն։

ՄԱՂԹԱՆԳ

Փառք հրաչափառ գալստեան։ (Տես ի Թիւն. 42։)

ՔԱՐՈՋ

Վասն ուղղելոյ ղմեզ ընդ հանապարհս խաղաղութեան՝ զՏէր աղաչեսցուք։

Տէ՛ր ողո՛րմեա՛։

Վասն ցրելոյ ի մէնջ զամենայն խորհուրդս չարին՝ զՏէր աղա՛՛։

Վասն պարգեւելոյ մեզ առողջ խորհուրդս և առաքինի վարս՝ զՏէր աղա՛՛։

Վասն պահելոյ զմեզ ընդ հովանեաւ ամենազօր ձեռին՝ զՏէր աղա՛՛։

Digitized by Google

Վասն խորտակելոյ զհակառակորդն վաղվաղակի ը դ ոտիւք մերովք՝ զՏէր աղա՛՛։

Վասն հոգւոցն։ Եւ ևս միաբան։ Զանձինս մեր։

Ողորմեաց մեզ։

ԱՂՕԹՔ

Տէր երկնի և երկրի՝ արարիչ ամենայն արարածոց երեւելեաց և աներեւութից։ Առ քեզ կարդամք յամենայն ժամ. զի ընդ ամենայն տեղիս է տէրութիւն քո, և ալքայութիւն քո ամենեցուն տիրէ։ Շնորհեա մեզ երկիւղիւ ի պաշտօն քո կանխել հանապազ, սիրել զքեզ ի բոլոր սրտէ և ի բովանդակ մտաց, և յամենայն զօրութենէ մերմէ պահել զպատուիրանս քո։ Համբառնալ առ քեզ զձեռս մեր ի սրբութիւն առանց բարկութեան և երկմտութեան. և գտանել ի քէն զչնորհս և զողորմութիւն, և զառաքինասէր գործոցն յայդոյութիւն։ Վասն զի դու ես Տէր կենաց և Աստուած ողորմութեանց, և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն

Աստուծոյ երկրպագ եսցուք

Փութամ ամենազօր և յաղթող Տէրութեանդ կրկնի ամենայն ծունր յերկրպագութիւն. և փառաւորի յամենեցունց թագաւորութիւն քո։ Նայեա յերկրպագութիւնս մեր, և ուսո մեզ առնել զարդարութիւն ճշմարտութեան։ Վասն զի դու ես Աստուած խա-

Digitized by Google

դաղութեան, որ բարձեր զիշնամութիւն ի միջոյ, և արարեր զխաղաղութիւն յերկինս և յերկրի. հեռաւորաց և մերձաւորաց աւետարանեցեր զնոր պարգեւս քոյին բարեացդ: Որում և զմեզ մեծի չնորհացդ արժանաւորս արասցես, դասելով ընդ ճշմարիտ երկրպագուս քո, Աստուած մեր և Տէր մեր և Փրկիչ Յիսուս Քրիստոս: Որ ես օրհնեալ ընդ Հօր և ընդ Սուրբ Հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ալէ՛լուիա. ալէ՛լուիա. ալէ՛լուիա:

Տէ՛ր Աստուած մեր ելեւեցաւ մեզ. արարէք տօնըն ուրախութեան կանխաւ, մինչեւ յանկիւնս սե՛ղանոյ: Աստուա՛ծ իմ ես դու, և խոստովան եղէց քեզ. Աստուած իմ ես դու՝ և բարձր արարի՛ց ըզքե՛զ:

Ալէ: Լերի՛նք ցնծասցեն առաջի Տեառն, զի գայ և հասեալ է Տէր ի դատե՛լ զերկիր: Դատե՛ զաշխարհս արդարութեամբ, և ըզժողովուրդս իւր ո՛ղղութեա՛մբ:

Փա՛ռք և երբ". Ա՛յժմ և միշտ և:

Ալէլուիա. ալէ՛լուիա. ալէլո՛ւիա՛:

ՄԱՂԹԱՆՔ

Յերգս օրհնութեան և ի ձայն սաղմոսաց անդադար փառաւորեմք զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգիդ, այժմ և միշտ և":



: Կարգաւորութիւն Հպատակաց ազօթից առաւօտու ժամուն : Որ կատարի ի դէմս Որդւոյն Աստուծոյ . որ երեւեցաւ իւզաքէրէյն :

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս . ամէն : Հայր մեր որ յերկինս ես " :

Լցաք առաւօտու ողորմութեամբ քով . ցնծացաք ուրախ եղաք զամենայն աւուրս կենաց մերոց : Ուրախ եղաք վասկանակ : (Տես ի Գիւն . 46 :)

ՀՍՐՅ ԴԿ

Ո՞ր ի քրովբէակա՞ն աթոռ ը՛նդ Հո՞ր նըստէ՛իր բա՞նդ Ա՛ստըւած . ա՛յսո՞ր խո՞նարհութեա՛մբ նըստար մա՛րմնո՞վ նոր յա՛ւանակի . ը՛զքե՞զ բա՞րեբանե՛մք Ա՞ստըւած՞ հա՞յըցն մեր՞ց : Ո՞ր ի սրովբէ՞ցըն սը՛բասաց ձա՛յնի՞ւ անդա՛դար օ՞րհնաբանիս . ա՛յսո՞ր ի՞ դաստ՛ւց Եբրա՛յեցւոց որդի Պա՛ւքի՞ փառա՛բանեցար . ը՛զքե՞զ " : Ո՞ր ի հրակերպի ցն երդա՛բանեալ հը՛նչմա՞մբ ի բա՛րձունս օ՞րհնաբանիս . ա՛յսո՞ր ի՞ ծերո՛ց և ի՛ տղայոց գովե՛-

ցա՛ր ովսա՛ննա երգով. ը՛ղքե՛ղ բա՛ րեբանե՛մք։

Գ. Ըզոէր օրհնեցէ՛ք բարձր ա՛բարէ՛ք ը՛զնա՛ յա՛-
ւիտեա՛ն։ Ա՛յո՞ ը ըզգալո՛ւստ փըրկչին մե՛ծոյ
ցընծութեամբ՛ տօնէ նո՛ր երուսա՛՛՛ղէ՛՛մ. ժո՛ղո-
վո՛ւրդք որք ի՛ հեթանոսա՛ց բարձր՚՚։

Փառք Հօ՛ր եւ Որդւոյ եւ Հոգւո՛յն Սրբոյ։

Ա՛յո՞ ը ընդ մանկա՛նց Եբրայե՛ցւոց զհին աւո՛ւր-
ցըն եկեա՛լ նոր ալքա՛յ ի Սի՛՛ո՛՛վն. մա՛նկո՛ւնք
սո՛ւրբ եկեղեցւո՛յ բարձր՚՚։

Այժմ եւ մի՛շտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէ՛ն։

Ա՛յո՞ ը ընդ ծերո՛ցն օրհնաբա՛նից ուրախութեա՛մբ
բարեբանեցէ՛ք զանմա՛հ թագաւորն ե՛՛կեա՛՛լ.
քա՛հանա՛յք հո՛գեւոր երգո՛վ բարձր՚՚։

ԳԱՐՈՁ

Եկեալքս ամենեքեան ի սուրբ (Տես ի Թիւն. 52։)

Մեծացուսցէ Աջ

Ո՛ւրախ լեր յո՛յժ Դո՛ւստրը Սի՛ո՛վնի. պա՛յ-
ծառացի՛ր երուսաղէ՛մ, զարդարեա՛ ըզդր՛ունըս քո՛
քա՛ղա՛քդ Ա՛ստուծոյ։ Քանզի Քրիստոս ո՛ր է՛ննի
ի՛ յաթո՛՛ռ փա՛՛ռաց, ա՛յսօր մըտանէ՛ լի՛ քա՛՛զ նը՛՛ս-
տեա՛լ ի վերայ յա՛՛ւանա՛կի՞ նորո՛՛յ։

Digitized by Google

Փառք Հօր եւ. Այժմ եւ միշտ:

Ծերք և՛ տղա՛յք ո՛ատո՛վք ձիթհե՛նեօ՛ք միաբա-
նո՛ւթեա՛մբ ե՛րգէին. օրհնութի՛ւն որդւոյ Դաւթի,
օ՛րհնեալ եկեալ ա՛նուա՛մբ Տեա՛ռն:

ՓԱՐՈՂ

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:
Տէ՛ր ողո՛րմեա՛:

Վասն սուրբ տեղւոյս չինութեան, և բարեկար-
գութեան. զՏէր աղա՛՛:

Վասն ժողովրդեանս՝ որք մտանեն ընդ դրունս
սրբոյ եկեղեցւոյ. զՏէր աղա՛՛:

Վասն ընդունելոյ զպաղատանս սոցա ըստ մեծի
ողորմութեան իւրում. զՏէր աղա՛՛:

Եւ ևս միա: Զանձինս մեր: Ողորմեաց մեզ:

ԱՂՕԹՔ

Դու ևս Թագաւոր յաւիտեանս յաւիտենից
Քրիստոս Աստուած մեր: Եւ քեզ ընդ Հօր և Հո-
գւոյդ սրբոյ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ.
այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Երգ խաչաքերից Աւետարանին:

Եղիցի ա՛նունն Տեա՛ռն օ՛րհնեալ. ի յա՛՛յսմ հե-
տէ, մի՛նչեւ ի յաւի՛տեա՛՛ՐՆ:

Digitized by Google

Օրհնեցէ՛ք մա՛նկունք զՏէր. և օ՞րհնե՞ցէք զա-
նո՞ւն Տեառն: Սղիցի՞ անուն Տեառն օրհնեալ յայ-
սմ՛ հե՛տէ՞ մի՛նչեւ ի յա՞ւի՞տեան. Յարեւելի՞ց մինչ
ի մուտն արեւու օրհնեա՞լ է՝ ա՞նո՛ւն Տեառն. ի
յա՞ յսմմ հետէ մի՞ն՞՝՝:

Փառ՛ք և երկրպագո՞ւթի՞ւն Հօ ր ևՈրդւո՞յ և
Սո՛ւրբոյ Հո՛գւոյն. և այժմ և միշտ և յաւիտեանս յա՛-
ւի՞տեան՛ց ա՞մէ՞ն. ի յա՞՞՛յսմ՛հ՞ետէ՞ մի՞ն-
չեւ ի յաւի՞տեա՛՞ն՞՞՞:

Ա՛րի՛՞ Տէ՞ր օ՛գնեա՛՛ մե՛՞զ, և՝ վը՞րկեա՛՛ զմեծ-
ֆ՞ր՛՛ զ. վա՛՛ան ա՞նը՞ւա՞ն քո՞՞ր՛՛:

Ա՛՛րի՞ և՞ մի՞ մե՞ր՛ժե՞՞՞ր ըզ մե՞՞զ ի՛՛ ապա՛՛՛՞
՞ռ. վա՛՛ան ա՞նը՞՝՝:

Թա՛՛զաւորեսցէ՞ Տէ՞ր յաւի՛՛տե՞՞՛ն՝ Աստուա՛՛ծ քո
Սիո՞ն յազգէ՞ յա՛՛զգ: Օրհնեա՞ անձն ի՛՛մ ը՞զ
Տէ՞ր օրհնեցի՞՛ց ը՞զ Տէր ի կե՛՞նդանութեա՛՛՛ն լսմ՞՛՛:

Օ՞՛ՐԹ

Խաղաղութիւն ամենեցուն

Եւ ընդ հոգւոյդ քում. Երկիւղածութիւնդ լուարուք:

Սրբոյ Աւետարանիս Ցիսուսի Քրիստոսի որ ըստ
Ղուկասու:

Փառք քեզ Տէր Աստուած մեր: Ղուկասու՛ս ասէ Աստուած:
Վասն Թագաւորին Տեառն մերոյ Ցիսուսի Քրիստոսի:

Եւ ահա այր մի անուն Յովսէփ, որ էր նախա-

Digitized by Google

բար՝ այր բարեգործ և արդար. սա չէր միաբանեալ ընդ խորհուրդս և ընդ գործս նոցա. յԱրեմաթեայ քաղաքէ Հրէից, որ և ինքն իսկ ակնուն էր արքայութեան Աստուծոյ: Սա մատուցեալ առ Պիղատոս՝ խնդրեաց զՄարմինն Ցխոսի. և իջուցեալ զնա՝ պատեաց Պաստառակալաւ, և եդ ի կռաճոյ գերեզմանին, ուր չէր բնաւ զոք եդեալ: Եւ օրն էր ուրբաթ, և շաբաթ լուսանայր: Եւ երթային զհետ նորա կանայք՝ որք եկեալ էին ընդ նմա ի Գալիլէէ. տեսին զգերեզմանն, և որպէս եդաւ մարմին Նորա: Դարձան և պատրաստեցին խունկս և իւղս. և ի շաբաթուն հանդարտեցին ըստ պատուիրանին:

ԵՐԳ

Ձամենա՛յն աւուրս կենցաղ իմոց, ես ոչ դադարեցայց օրհնել զքեզ Քրիստոս Փրկի՛չդ ա՛շխարհի՛ս:

Երկիր երկնեա. և պէտքն քոյին ասա:

Ի գիշերի՛ հա՛մբա՛ր ձէնք ը՛զ ձեռը՛ս ձե՛ր ի՛ սը՛բրո ւթիւն. և՛ օրհնեցէ՛ք ը՛զ Տէ՛ր:

Ասա օրհնեցե՛ք ա՛մենայն ծա՛ռայք Տեառն զՏէր ի՛ սը՛բրո՛ ւթիւն. և՛ օրհնեցէք ը՛զՏէ՛ր:

ԵՐԳ

Դադաք լուսեղէ՛ն զո՛ւարթնոցն սպասէին մեծի՛

դալըստեանն Տեառն ։

Եւ երգէին երգ նո՛ր օրհնեալ է քո սուրբ գա՛լո՛ստդ ։

Փաղոզ՝ զինի խաղաբերից Աւետարանին . և երգոցն ։

Զուարճացեալքս մեծաւ ուրախութեամբ աւետեաց յարութեան Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի ։ Որ եղև պատուղ և անդրանիկ ամենայն ննջեցելոց . խորտակեաց զդրունս դժոխոց . և ելոյծ զբռնութիւն մահու . և ետ յոյս հաստատութեան վերըստին նորոգման կենդանութեան ամենայն մարդկան ։ Խնդրեսցուք հաւատով ի Փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ . զի զմեզ արժանի արասցէ յարութեան իւրոյ . կերպարանակից առնել զմարմին խոնարհութեան մերոյ ըստ նմանութեան մարմնոյ փառաց իւրոց ։ Վասն զի զայս խոստացաւ . զմեծ և զանճառելի չնորհս պարգեւել սիրելեաց իւրոց ճշմարիտն Աստուած. Յիսուս Քրիստոս Տէր մեր . կեցո և ողորմեա ։

ԱՂՕԹՔ

Ամենակեցոյց ճշմարիտ՝ Սուրբ մեծի գալստեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ , վայելէ փառք իշխանութիւն և պատիւ . այժմ և միշտ և յաւիտեանս յաւի՛՛ ։

Ողորմեա ՔՆ

Ո՛ւրա՞խ լե՛ր Նկե՛ղեցի՛ Սուրբ ի՛ գա՛լո՛ստեա՛ն

սո՜ւրբ Միա՛ծնին. ուրա՞խ լեր և՛ ցընծա՜ հա՛ն-
գերձ ա՜մենա՛յն սըրբո՜վք։ Խը՛նդա՜ յո՛յժ դո՛ւս-
տը՜ր վերի՜ն Սիո՞ւնի. ա՛հա թա՜գա՛ւո՜ր քո գայ
նը՛ստեալ ի՛ յաւա՞նակի՛ նորոյ. ա՛րդար և՛ փը՛րկիչ
փը՛րկէ և՜ կեցո՛ւցանէ՜։

Փառք Հօր եւ Որդւոյ։ Այժմ եւ միշտ եւ յա։

Զը՛ւա՜ր բնացիր և՜ բերկրեա՜ ժողո՞վո՛ւրդ Ա՛ստու-
ծոյ. մա՛տո՛ զոստը՛ս ծաղկեա՛լըս հաւա՞տով և՛ ա-
սա. օ՛րհնեա՜լ ո՛ր եկիրը՛դ թագա՛ւո՜ր տիե՛զե՛րա՜ց։

ԿԱՐՈՋ

Երկրպագեմք քեզ Տէր։ (Տես ի Քիւն. 58։)

Տէր յերկինից Բկ։

Զ՞ք՞ո՜ւստո՞ւ թագա՛ւո՜րն ո՛՞ր է՞ն ի յա՛ք՞ո՞ւ
փա՞ռաց. տե՛ա՜ք ի յե՛րկրի երևեա՛լ լի՛ նո՜ր
յաւա՛նա՞կի՜։ Ընդ ա՛ւա՜ղ է՛լե՜լ Ա՜ք՞ա՞յի՞ն
դասք Ե՛ր՞ա՞յե՛ցւոց. ծերքն ո՛ստո՜վք ձիթե՛ւնեօք
և տղա՛յքն արմա՛ւե՞նեօ՜ք։

Փառք Հօր եւ Որդւոյ։ Այժմ եւ միշտ եւ յա։

Միա՛բա՜նա՛կա՜՞ն ձա՛՞յնի՛ւ գոչէ՛՞ի՞ն ե՛՞րգ նոր.
բարե՛բանելո՞վ զանը՛մա՜՞հ Թա՛գա՞ւորն։

Փառք ի բարձունս (Տես ի Քիւն. 61։)

Digitized by Google

Ա՛դաւօթս Երգ.

Այսօր մթանէ՞ թագաւորըն մեր Քրիստոս ի յնրուսաղէմ նոր քաղաք Դաւ՛իթի՛։

Ընդ առաջ ելի՞ն ծերքն ոստովք ձիթենեաք. և զԱստուածորդին վառաւորէ՛ի՞ն։

ՔԱՐՈԶ

Ասացուա՛ք (Տես ի Յիւն. 108 :)

ՂԱԶԱՐ

Գոհանամք զքէն (Տես ի Քիւն. 64 :)

Եւ վկնէ ասէ Սուրբ Աստուած։

Սուրբ Աստուած. սուրբ և հզօր. սուրբ և անմահ. որ եկիր և գալոց ես. ողորմեա մեզ։

Երկիւղ էրկնեա։ Եւ պէնէ պՓաաաաոքեալն։

Զմաղթանք և զԲարոզ։ (Տես ի Քիւն. 65 ;)

Եւ զգեցցեն մեաքան Քահանայքն՝ և ելցեն ի Թաւիզ Խաչիւ և Աւետարանաւ, խնկօք և մոմեղինօք և ամենայն զարդուք. ասէրով Շապատեան. ԱՁ

Որ վե՛րօրհնիս յա՛ռաջս քերո՞վբէ՛ի՛ց, ի վերա՛յ ներստիկ յաւանա՛կի՛ հաճե՛ցար. բարե՛բանեա՛լ որ եկի՛ր ի կե՛ցո՞ւցանե՛լ։ Ուստի և մե՛ք զյաղթա՛կա՛ն օրհնո՛ւթեաս՞նցն ը՛զձայն մատուցանե՛մք քեզ թագաւո՛ր վառաց ը՛նդ տղա՛յսն օրհնա՛բանեալ. բարե՛՛։ Ո՛վսաննա՛յ ի բա՛լմունս ա՛լՀո՛ւ-

Digitized by Google

իա. բարեբանեա՛լ եկեալ ա՛նուա՛մբ Տեառն ա՛լէ-
լուիա. ե՛ւ օրհնութի՛ւն որ գալո՛ցդ ես անուա՛մբ
Տեառն ա՛լէ՛լո՛ւիա՛։

Սաղմոս. Ղէ։

Լերինք ցնծասցեն առաջի Տեառն զի գայ. զի հա-
սեալ է Տէր ի դատել զերկիր։

Ընթերցուածս յերգոց Երգոյն Սողոմոնի։
Գլ՝ 2. հմր 8։

Ձայն եղբօրորդւոյ իմոյ. ահաւասիկ սա եկն վա-
զելով ի վերայ լերանց՝ խայտալով ի վերայ բլրոց։
Նման է եղբօրորդին իմ այծեմման. կամ որթուց ե-
ղանց ի վերայ լերանց Բեթէլայ։ Ա՛րի ե՛կ՝ մերձա-
ւոր իմ, գեղեցիկ իմ, աղաւնի իմ. վասն զի ահա
ձմեռն էանց. անձրևք անցին, և գնացեալ մեկնե-
ցան։ Ծաղիկք երևեցան յերկրի. և ժամանակ յա-
տանելոյ եհաս։ Ձայն տատրակի լսելի եղև յերկրի
մերում. թզենի ընձիւղեաց զբողբոջ իւր. այդիք մեր
ծաղկեցան՝ և հոտն զհոտս իւրեանց։ Ա՛րի, ե՛կ՝
մերձաւոր իմ, գեղեցիկ իմ, աղաւնի իմ. ե՛կ ընդ
հովանեաւ վիմին, մերձ առ նախապարիսպն։ Ցո՛յց
զդէմս քո. և լսելի արա ինձ զբարբառ քո. վասն
զի դէմք քո գեղեցիկ են, և բարբառ քո քաղցր. կա-
լարո՛ւք մեզ աղուեսունս վոքունս՝ զապականիչս այ-
գեաց, և այդիք մեր ծաղկեացին։ Եղբօրորդին իմ

ինձ, և ես նմա. որ հովուէն ի մէջ չուչանաց: Իջ-ցէ եղբօրորդին իմ ի պարտէզ իւր. և կերիցէ զպը-տուղ ծառոց իւրոց: Ետուն զնա դատելք՝ և երա-նեցին նմա. Թագուհիք և հարճք գովեցին զնա: Ո՞վ է սա՝ որ երևեալս է իբրև զառաւօտ, գեղեցիկ որ-պէս լուսին, ընտիր իբրև զարեգական. իբրև զհիա-ցումն կարգեալ. ի պարտէզս ընկուզաց իջի հայիլ ի յարմտիս ուղխից. տեսանել թէ ծաղկեաւ իցէ որ-թըն, ծաղկեալ իցէ նշենին, և փթթեալ իցէ նռնեն-նին. անդ տացս զտիկնս իմ քեզ:

Ընթերցուածս Հաւատոյ Մարգարէիցն:
Գլ՝ 62. հմր 11:

Ասացէք դստեր Սիովնի. ահաւասիկ Փրկիչ քո հասեալ գայ՝ և ունի զվարձս իւր ընդ իւր. և գործ իւր առաջի երեսաց իւրոց: Եւ կոչեսցէ զնա ժողո-վուրդ սուրբ՝ փրկեալ ի Տեառնէ. և դու կոչեսցիս խնդրեալ քաղաք՝ և ոչ լքեալ:

Պօղոսի Առաքելոյն յԵբրայեցւոց Թղթոյն ի
Ընթերցուածս:
Գլ՝ 1. հմր 3:

Օրհնեալ է Աստուած, և Հայր Տեառն մերոյ Յի-սուսի Քրիստոսի: Որ օրհնեաց զմեզ ամենայն հոգե-ւոր օրհնութեամբ յերկնաւորս ի Քրիստոս: Որպէս ընտրեաց զմեզ նոսա յառաջ քան զիմնիլն աշխար-հի, լինիլ մեզ սուրբս և անարատս առաջի նորա սի-րով: Յառաջագոյն սահմանեաց զմեզ յորդեգրու-

Digitized by Google

թիւն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի ի նոյն ըստ հաճութեան կամաց իւրոց։ Ի գովեստ փառաց չնորհաց իւրոց. որով զուարճացոյց մեզ սիրելեաւն։ Որով ունիմք ազրկութիւն ի ձեռն արեան նորա, ըզթողութիւն մեղաց՝ ըստ մեծութեան չնորհաց իւրոց։ Որ առաւելաւ ի մեզ ամենայն իմաստութեամբ և գիտութեամբ։ Եցոյց մեզ զխորհուրդս կամաց իւրոց՝ ըստ հաճութեան իւրում, զոր յառաջագոյն եդ նովաւ։ Ի տնտեսութեան լրման ժամանակաց. բովանդակել զամենայն Քրիստոսիւ. որ ինչ յերկինս՝ և որ ինչ յերկրի, ի նոյն։

Ալէ՛լուիա ալէ՛լուիա

Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն օրհնեալ որ գա՛լոց ես։

Ալէ՛լուիա օ՛րթէ

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մարկոսի։

Գլ՝ 10. հմր 46։

Ընդ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Եւ գան յերիքով. և ընդ ելանելն նորա յերիքովէ աշակերտօքն և բազում ժողովրդով, որդի Տիմէի Բարտիմէոս կոյր՝ նստէր մուրացիկ յանցս ճանապարհի։ Իբրև լուաւ թէ Յիսուս Նազովրեցի է՝ սկսաւ աղաղակել և ասել. ո՛րդի Դաւթի Յիսուս, ողորմեա՛ց ինձ։ Եւ սաստէին նմա բազումք՝ զի լռեսցէ. և նա

Digitized by Google

առաւել ևս աղաղակէը. որդի Դաւթի, ողորմեայ
ինձ: Ձտեղի էառ Յիսուս, և հրամայեաց կոչել ըզ-
նա. կոչեն զկոյրն՝ և ասեն ցնա. քաջալերեայց՝ արի,
կոչէ զքեզ: Եւ նորա ընկեցեալ զձորձս իւր, յա-
րուաւ և եկն առ Յիսուս: Պատասխանի եհ նմա
Յիսուս, և ասէ զինչ կամիս՝ թէ արարից քեզ. ասէ
ցնա կոյրն. Րաբունի, զի բացայց: Եւ Յիսուս ա-
սէ ցնա. երթ՝ հաւատք քո կեցուցին զքեզ. և վաղ-
վաղակի բացաւ. և երթայր զհետ նորա ի ճանապար-
հին: Եւ յորժամ մերձ եղեն յԵրուսաղէմ, ի Բեթ-
փագէ և ի Բեթանիայ մօտ ի լեառն Ձիթենեաց, ա-
ռաքէ երկուս յաշակերտաց անտի: Եւ ասէ ցնոսա.
երթայք դուք ի գեօղդ՝ որ ընդդէմ ձեր կայ. և
նոյն ժամայն իբրև մտանէք ի նա, գտանիցէք յա-
ւանակ մի կապեալ. յորոյ վերայ ոչ ոք ի մարդկա-
նէ նստաւ. լուծէք զնա՝ և ածէք: Եւ եթէ ոք ա-
սասցէ ցձեզ՝ եթէ զիւ՞ լուծանէք զյաւանակդ, ասասջիք եթէ Տեառն իւրում պիտոյ է. և վաղվաղակի ա-
ռաքեսցէ զնա այսր: Ձոգան, և գտին զյաւանակն
կապեալ առ դուրս արտաքոյ ի փողոցի անդ. և լու-
ծին զնա. Եւ ոմանք յորոց անդն կային՝ ասեն ցը-
նոսա. զի՞ գործէք, զի՞ լուծանէք զյաւանակդ: Եւ
նոքա ասեն ցնոսա՝ որպէս ասացն Յիսուս, և թոյլ
ետուն նոցա: Ածին զյաւանակն առ Յիսուս և ար-
կանեն ի վերայ նորա հանդերձս. և նստաւ ի վերայ
նորա: Եւ բազումք զհանդերձս իւրեանց տարածա-

Digitized by Google

նէին ի վերայ հանապազարհին. և այլք ոտս ի ծառոց հատանէին՝ և արկանէին զհանապազարհան։ Եւ որք առաջի և զկնի երթային, աղաղակէին, և ասէին. ովսաննա բարձրելոյն։ Օրհնեալ որ գայդ յանուն Տեառն. օրհնեալ թագաւորութիւնդ Հօր մերում Դաւթի. խաղաղութիւն յերկինս՝ և փառք ի բարձունս։ Եւ եմուտ Յիսուս յԵրուսաղէմ ի տաճարըն. և հայեցաւ չուրջ զամենեքումբք. և զի էր յերեկոյացեալ ժամն. ել ի Բեթանիա երկոտասանիւքն հանդերձ։

Քարոզ յորժամ է Թափօր ելանէն։

Եւ ևս խաղազութեա՛ն զսէ՞ր աղաչե՞ացո՞՛ւք։ Տէ՛ր ո՞ղորմեա՛։

Վասն ի վերո՛ւստ խաղաղութեան և փրկո՛ւթեան անձանց մերոց. զսէ՞ր աղաչե՞ացո՞՛ւք։ Տէ՛ր ո՞ղորմեա՛։

Ողորմեա՛ց մեզ Տէր Աստուած մե՞ր, ըստ մեծի ողորմութեան քում. աղաչեցո՛ւք ամենեքեան միաբանո՞ւթեա՛մբ։

Տէր ողորմեա՛. ասե՛ր ողորմեա. տե՞ր ո՛ղո՞րմեա՛։

Օրհնութիւն և փա՛ռք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբո՛յ. Այժմ և միշտ և յաւիտեանս յաւի՛տենից։

Ա՛մէ՛ն։ Ալէլո՛ւիա՛. ալէլո՛ւիա. ալէ՛լուիա՛։

Օրհնեսցի՛ և սահականեսցի և նախանձամեալ սա-

Digitized by Google

հեացի. արեւելեան կողմն աշխարհիս. և Հայրապետութիւն Հայոց. ա՛յս նշանա՛ւ սուրբ Խաչիս և սուրբ Աւետարանաւս, և աւուրս չնորհիւ. անուամբ Հօ՛յ և Որդւոյ և Հոգւոյն Սրբո՛յ. Այժմ և միշտ՝՝։

Եւ դարձուցանեն զերեսս յարեւմուտս։

Ա՛մէ՛ն։ Ալէլո՛ւիա՛. ալէլո՛ւիա. ալէ՛լուիա՛։

Օրհնեցի՛ և պահպանեցի և նախախնամեալ պահեցի. արեւմտեան կողմն աշխարհիս. և թագաւորութիւն քրիստոնէից. ա՛յս նշանա՛ւ սուրբ Խաչիս՝՝։

Եւ շրջելով դառնան ի հարաւ։

Ա՛մէ՛ն։ Ալէլո՛ւիա՛. ալէլո՛ւիա. ալէ՛լուիա՛։

Օրհնեցի՛ և պահպանեցի և նախախնամեալ պահեցի. հարաւային կողմն աշխարհիս. երկիրս անդաստանս և պտղաբերութիւն տարւոյս. ա՛յս նշանաւ՝՝։

Եւ դառնան դէպ ի հիւսիս։

Ա՛մէ՛ն։ Ալէլո՛ւիա՛. ալէ՛լուիա. ալէ՛լուիա՛։

Օրհնեցի՛ և պահպանեցի և նախախնամեալ պահեցի. հիւսիսային կողմն աշխարհիս. վանքս անապատս քաղաքս և գիւղս. և բնակեալ ժողովուրդս ի սմա. ա՛յս նշանա՛ւ սուրբ Խաչիս՝՝։

Ա՛մէ՛ն։

Եւ դառնան ի բեմն. և ասեն դարձեալ։

Օրհնութիւն և փա՛ռք Հօր և Որդւոյ և Հոգւոյն՝՝։

Digitized by Google

Քարոզ Թաւիւթի և խաչի։

Սուրբ խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի սուաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց՝ և կեցուսցէ չնորհիւ ողորմութեան իւրոյ։ Ամենակալ Տէր Աստուած մեր. կեցո և ողորմեա։

ԱՂՕԹՔ

·Պահպանեա զմեզ Քրիստոս Աստուած մեր՝ ընդ հովանեաւ սուրբ և պատուական խաչիդ քով ի խաղաղութեան. փրկեա յերևելի և յաներեւոյթ թշնամւոյն։ Արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ Սրբոյդ Հոգւոյդ. Այժմ և միշտ և։ Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. Ամէն։

Հայր մեր որ յերկինս ես, սուրբ լիցի անուն քո։

Եւ երթայեն ի գերեզմանն, ժամաւաւտ։

Յորժամ եկեալ կենարարդ ի գերեզմանն Ղազարոս. յորժամ եկեալ կենարարդ ի գերեզմանն Ղազարոս. աւետաւոր ձայնիւդ աղաղակէիր ասելով՝ Ղազարէ՝ արի եկ արտաքս։ Իսկ մեուելն ի գերեզմանէն յարեաւ. և նոյն ինքնդ զանմահութեան պարգեւդ ետուր սիրելւոյդ, և Աստուածային ձայնիդ ի գերեզմանէն կոչեցեր։ Վասն որոյ՝ և մանկունք Սրբայեցւոց ոստովք օրհնէին զանմահ թագաւորութիւն քո։ Ընդ նոսին և մեք ասեմք, ովսաննա՝ օրհնեալ է գալուստ քո. օրհնութիւն ի բարձունս, օրհ-

Digitized by Google

նեալ որ գալոցդ ես անուամբ Տեառն։

Շարական. Դկ

Յ[ի]սո՞ւս մի՛ածի՛ն ա՛նմա՛հութեանց պարգե՛ւատո՛ւն երևե՛ցաւ ըմե՞՛՞ղ. խա՛փա՛նեա՞ց զզօրո՛ւթիւն մահո՛ւ։ Իըղխմա՛՛մբ արտասուա՛ց Մարի՛ամու և Մա՛րթայի անկեա՞լ ա՛ւ ոտսըն տեա՞՛՞ռն, խընդրէ՛՛ի՛ն զնորո՛գո՞ւմն եղբօ՞րն։ Բանի՞՛ւ բանըն Աւետա՛՛ծ կենա՛գործեաց զՂա՛զարոս ի թա՛ղմա՞նէ՞՛՞, և ե՛կեալ ա՞րտաքս ա՛նա՞պակա՞ն։

Ի քե՞զ եմք ա՛պաւինեալ Քրի՛ստոսի մա՞յր Աստո՞ւծոյ մերո՛՛յ։ Ո՛՛ր քան զերկի՛՛նըս բարձրագո՛՛յն Մարի՛ամ, պա՞րծանք ե՛կեղեցւոյ. Քրի՛՛ս՛՛։ Ո՛՛ր քան զարեգակը՛՛ն պայծառագո՛՛յն Մարի՛ամ, մի՛՛ դադարի՛՛ր բարե՛խօսե՛՛լ վասըն մեր, Քրի՛՛ստոսի՛՛։

Ով՛չի քո Քրիստոս ե՛րկրպագե՛՛ն արարածք ամենայն որ ի՛ փըրկուե՛՛ի՞ւն մե՛՛զ կանգնեցաւ. սա՞՛ եղիցի մեզ պահապա՛՛ն յա՞՛ղթող, ապրեցուցանե՛՛լ ըզմեզ ի պատրա՛՛նա՛՛ց թը՞՛՞շնամո՛՛ւ։

Փառք Հօ՛՛ր եւ Որդւոյ եւ Հ՛զո՛՛յն Սրբոյ։

Ի՛՛ սմա բա՛՛րձրացար բարձո՛՛ղ անիծից որ փառաւորեա՛՛լդ ե՞՛՞ս ընդ հո՞՛՞ր. ժողովե՞՛՞լ ըզհետացեա՛՛լսըն կենսաբե՛՛ր վա՞՛՞յիւն. ասլե՛՛՛։

Digitized by Google

Ձյժմ եւ մի՛շտ եւ յաւիտենից յաւիտենից. ամէն

Սովաւ լուսաւորչեցա՛ն արարա՛ծք ամենայն. սմա՛ սպասէին արդեւեա՛լքն ի մեղսասէ՛ր բա՞նտին. որ ազատեա՛ց ըզմեզ ի պատրա՛նա՛ց թը՞չնամո՛ւն։

Ալէ՛լուիա ալէ՛լուիա

Եղիցին ականջք քո ի լսել զձայն աղօթից իմոց։ Ի խորոց կսկծացի առ քեզ Տէր, Տէր լո՛ւր ձայնի իմում։

Ալէ՛լուիա Ո՛ր թե՛ւ

Սրբոյ Աւետարանին Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու.

Վասն վաւաչ՞տեառն մերոյ Յիսուսի՛ Քրիստոսի։ Եւ էր ոմն հիւանդ Ղազարոս. (Տես ի Թիւն. 69։)

Զկնի՝ Հոգւոյն հանգուցեալոց։ (Տես ի Թիւն. 36։)

Եւ ապա սկսանիցին Շարականն Քկ։

Ա՛յսօր ընդ հրակերպեա՛ն դաստա՛ւգն օրհնա՛բա՛նէ ի՞ն ծերքն ո՛ատո՞ղ՞ի՛վք, և տղա՛յքն արմա՞ւհնաւո՛ք. ա՞վա՞նը՛նա՞ օ՛րհնեա լ ե՞ կեա՞լ ի յա՛նո՛ւն տեա՞ռն։ Զօր սեբովքե՛՛քըն ծածկապա՛ր ընդունե՛լ ո՞չ բա՛ւէ՞ի՞ն, ի վե՛րա՞՛՞յ յաւա՛նալի նորո՛յ նըստեա՛լ բարեբանեցա՛ւ ի տղա՞յո՞ց. ո՛վաա՞ն՞՞։ Ա՛յսօր ընդ ծերո՛յ և ընդ տղա՛յոց օրհ-

Digitized by Google

նա՛քա՞նո՞ւթեա՛նցըն վե՛ր երգե՞ա՛՞ՙմք, նորոյ արքայի՛դ եկեալ յերո՞ւսա՛ղէ՞մ. ո՞վսա՞նը՛նա՞ՙ օ՛րհնեա՞ՙլ ևՙկա՞ՙլ ի յա՛նո՛ւն տեա՞ռն։ Օ՛րհնեա՞լ եկեա՞լ ա՛նուա՞մբ տեա՞ռն. օ՛րհնեա՞լ ո՞ր գա՛լո՞ց եա՞ս.

ԵՐԳ

Ցո՞րաստեղծեա՞լ բանն յանէի՛ց ի սկզբանէ՞ դերկի՛նս երկնից, և՞ զերկնայի՞ն զօրս անմարմնո՛ց իմանալեացըն զո՛ւարթնոց. և՞ զգալի՞ տարերց քառից հակառակաց միաբանից. ՚ո՞րով յաւէ՞տ վառաբանի ներորդութիւննն անճառելի՞։

Ե՞րեքսրբեա՞ն մի տէրութիւն միով բնութեամբ Աստուածութիւն ՚ո՞յան որ անե՞ղ ալարչական առաց լինել լոյս եղական. զո՞ր և ծագեա՞ց յօրն առաջին միաչաբաթ կիւրակէին. ո՞րով յաւէտ վառա՞՞։

ՓԱՌՈՂ

Խնդրեսցո՞ւք։

ԱՂՕԹՔ

Փոա՞ս ամենազօր և՞հրաշալի Գալստեանդ

(Տես ի Թիւն. 75։)

Digitized by Google

ՃԱՇՈՒ ԺԱՄԱՄՈՒԱ։

Յնծա երուսաղէմ և զարդարեա զառաջաստ քո Սիօն. քանզի՝ ահա թագաւոր քո Քրիստոս նստեալ ի յաւանակի նորոյ՝ հեզութիւն ցուցանելով դայ մտանէ յառաջաստ քո։ Եւ մեք աղաղակեմք, ովսաննա օրհնեալ եկեալ ի յանուն տեառն. որ ունի զմեծ զողորմութիւնն.

ՍԱՂՄՈՍ։

Տէր թագաւորեաց՝ զվայելչութիւն զգեցաւ, զգեցաւ տէր զօրութիւն ընդ մէջ իւր էած։

ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ. ԴԿ։

Ա՞նըսկի՛ զրըն բա՛նըն հօր որ ի վերա՛յ քերո՛վբէի՛ցըն հանգչի, ա՛յսօր ի՛ վերայ յաւա՛նակի նորոյ նըստեալ. օ՛րհնեա՛լ ալքայ ե՛կեալ անյաղթե՛լի՛ թագաւոր։ Ցառա՛յ քան զյաւիտեա՛նս որդին որ ի վերա՛յ քառա՛կերպի՛ցըն բազմի, ա՛յսօր ի ծերոց և ի՛ տղայոց փառա՛տրեցաւ. օ՛րհ՚՚։ Եկա՛ք նոր ժողո՛վուրդք ընդ անմարմնո՛ցըն դա՞սս բազմութեան, ըզսա՛ հընչմա՛մբ երգով քաղցըր ձայնիւ փառա՛տրեցո՛ք. օ՛րհնեա՛լ ալքայ ե՛կեալ անյաղթե՛լի՛ թա՚՚։

ՍԱՂՄՈՍ ՂԷ։

Լերինք ցնծասցեն առաջի տեառն զի գայ. զի հասեալ է տէր ի դատել վերկիր։

Digitized by Google

Ընթերցուածս յերգոց Երգոյն Սողոմոնի ։
Գլ՝ 1։

Համբուրեացէ զիս ի համբուրից բերանոյ իւրոյ. վասն զի բարի են ստինք քո քան զգինի, եւ հոտ իւղոց քոց քան զամենայն խունկս ։ Իւղ թափեալ է անուն քո. վասն այնորիկ օրիորդք սիրեցին զքեզ, եւ ձգեցին զքեզ ։ Ձհետ քո ի հոտ իւղոց քոց ընթացցուք՝. տարաւ զիս արքայ ի սենեակ իւր. ցնծացցուք և ուրախ լիցուք ի քեզ ։ սիրեսցուք զստինս քո քան զգինի. ուղղութիւն սիրեաց զքեզ ։ Սեաւ եմ ես և գեղեցիկ դստերք Երուսաղէմի. իբրև զվրանն Կեդարու. և իբրև զվարանն Սաղոմոնի ։ Ո՞ւր հովուեսցես. ուր հանգուցանես ի միջօրէի. քանզի գեղեցկացան ծնօտք քո իբրև զտատրակի. պարանոց քո իբրեւ զմանեակ ։ Նմանութիւն ոսկւոյ ստասցուք ըզքեզ՝ հանդերձ կիսաւածովք արծաթոյ ։ Մինչև արքայ ի գիրկս իւր ընկալցի զքեզ. իւղ թափեալ է անուն քո ։ Նեղբօր որդին իմ կարմիր է և ալիտակ. իբրեւ քննծոր ի փայտս անտառի. այնպէս է եղբօր որդին իմ ի մէջ ուսեերաց. ընդ հովանեաւ նորա փափաքեցի՝ և նստայ. և պտուղ նորա քաղցր է ի կոկորդի իմում ։

Ընթերցուածս ի Զաքարիայ Մարգարէէ
Գլ՝ 9. հմր 9։

Ուրախ լեր յոյժ դուստր Սիովն. քարոզեա դուստրը Երուսաղէմի. ահա թագաւոր քո գայ առ քեզ.

Digitized by Google

արդար՝ և փրկիչ. նոյն հեզ՝ և հեծեալ ի վերայ էշոյ՝ և յաւանակի նորոյ: Սատակեսցէ զկառս յԵփրեմէ՝ և զերիվար յԵրուսաղէմէ. և խորտակեսցի աղեղն պատերազմողի. և բազմութիւն՝ և խաղաղութիւն յազգաց. և տիրեսցէ ջուրց ի ծովէ մինչև ի ծով. և ի գետոց մինչև ի ծագս երկրի: Եւ դու արեամբ ուխտի քոյ արձակեցեր զկապեալս քո յանջրդի գբոյ: Եւ նստջիք յամուրս կապեալք ժողովրդեան. և վոխանակ մխոյ աւուր պանդխտութեան քոյ՝ կրկին հատուցից քեզ: Զի լարեցի զքեզ ինձ յուդայ իբրև զաղեղն. լցի և զԵփրեմ. և զարթուցից զորդիս քո Սիոն ի վերայ որդւոցն յունաց. և չօշափեցից զքեզ իբրև զսուսեր պողովատիկ պատերազմողի: Եւ տէր եղիցի վերակացու նոցա. և ելցէ իբրև զփայլակն նետ նորա. և տէր տէր ամենակալ վոզ հարցէ. և գնասցէ չարժամբ սպառնալեաց իւրոց: Տէր ամենակալ պաշտպանեսցէ նոցա:

Պօղոսի Առաքելոյն ի փիլիպպեցւոց Թղթոյն ի Ընթերցուածս:
Գլ՝ 4. Համ 4:

Ուրախ լերուք ի տէր յամենայն ժամ. դարձեալ ասեմ, ուրախ լերուք: Հեզութիւն ձեր յայտնի լիցի ամենայն մարդկան. տէր մերձ է: Մի՛ ինչ հոգայք. այլ ամենայն աղօթիւք և խնդրուածօք, գոհութեամբ խնդրուածք ձեր յայտնի լիցին առ Աստուած: Եւ խաղաղութիւնն Աստուծոյ՝ որ ի վեր է քան զա-

Digitized by Google

մեծայն միտս, պահեսցէ զսիրտս ձեր, և զմիտս ի Քրիստոս Յիսուս։

Ալէլուիա ալէլուիա

Տէր Աստուած մեր երևեցաւ մեզ. արարէք տօնս ուրախութեան կանխաւ մինչև յանկլունս սեղանոյ։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի։

Գլ՝ 20. հմր 29.

Ընդ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Եւ յելանել նոցա յՆրիքովէ՝ գնացին զհետ նորա ժողովուրդք բազումք։ Եւ ահա կոյրք երկու նստէին առ ճանապարհաւն. իբրև լուան թէ Յիսուս անցանէ՝ աղաղակեցին և ասեն, ողորմեաց մեզ Յիսուս որդի Դաւթի։ Եւ ամբոխն սաստեաց նոցա՝ զի լռեսցեն. և նոքա ևս առաւել աղաղակէին և ասէին, տէր՝ ողորմեաց մեզ որդի Դաւթի։ Ձառեղի էառ Յիսուս՝ կոչեաց զնոսա և ասէ՝ զինչ կամիք՝ զի արարից ձեզ։ Ասեն ցնա. տէր՝ զի բացցին աչք մեր։ Եւ գթացեալ Յիսուս մերձեցաւ յաչս նոցա՝ և վաղվաղակի տեսին. և գնացին զհետ նորա։ Իբրև մօտ եղեն յՆրուսաղէմ. և եկին ի Բեթփագէ մերձ ի լեառն Ձիթենեաց. յայնժամ Յիսուս արձակեաց երկուս յաշակերտացն իւրոց։ Եւ ասէ ցնոսա. երթայք ի գեօղն՝ որ առաջի ձեր է. և անդէն գտանիք զէշ կապեալ՝ և յատանակ ընդ նմին. լուծէք և ածէք ինձ։ Եւ եթէ

Digitized by Google

ոք ասիցէ ինչ ձեզ, ասասջիք, եթէ տեառն իւրեանց պիտոյ են. և վաղվաղակի առաքեսցէ զնոսա: Բայց այս ամենայն եղև՝ զի լցցի բան մարգարէին՝ որ ասէ: Ասացէ՛ք դստեր Սիովնի. ահա թագաւոր քո գայ քեզ հեզ. հեծեալ յէշ և յաւանակի իշոյ: Գնացին աշակերտքն. և արարին որպէս հրամայեաց նոցա Ցիսուս: Եւ ածին զէշն և զյաւանակն. և արկին ըզնոքօք ձորձս՝ և նստաւ ի վերայ նոցա: Եւ բազում ժողովուրդք տարածեցին զհանդերձս իւրեանց ի ճանապարհին. և այլք հատանէին ոստս ի ծառոց՝ և տարածանէին ի ճանապարհին: Եւ ժողովուրդքն՝ որք առաջի և զկնի երթային, աղաղակէին և ասէին: Օրհնութիւն որդւոյ Դաւթի. օրհնեալ որ գայ յանուն տեառն. օրհնութիւն ի բարձունս: Եւ ի մտանելն նորայ յԵրուսաղէմ՝ դղրդեցաւ քաղաքն ամենայն. և ասէ՝ ո՞վ իցէ սա: Եւ ժողովուրդքն ասեն՝ սա է մարգարէն Ցիսուս՝ որ ի Նազարեթէ Գալիլեացւոց. Եւ եմուտ Ցիսուս ի տաճարն՝ և հան արտաքս զամենեսին, որք վաճառէինն և գնէին ի տաճարի անդ. և զսեղանս հատավաճառացն կործաննեաց. և զաթոռս աղաւնեվաճառացն: Եւ ասէ ցնոսա. գրեալ է՝ տուն իմ տուն աղօթից կոչեսցի. և դուք ալարիք զդա այրըս աւազակաց: Եւ մատեան առ նա կոյրք և կաղք ի տաճարին. և բժշկեաց զնոսա: Իբրև տեսին քահանայապետքն և դպիրք զսքանչելիսն՝ զորս արար. և զմանկտին որք աղաղակէին ի տաճարին. և ասէին, ովսաննա՝ օրհնութիւն որդւոյ Դաւթի, բար-

Digitized by Google

կացան: Եւ ասէն ցնա. լմնա, վիչ ասէն դոքա. ասէ ցնոսա Յիսուս՝ սկո. չիցէ ընթերցեալ ձեր՝ կէ ի բիբլոյ տղայոց և ատեղևայց կատալեսյեր զօրհնութիվն: Եւ թողեալ զնոսա՝ եկ արտաքոյ քաղաքին ի Թեխանիայ, և անդ ուգաւ:

Սրբազաւորեցաւ Հրեշտակայինն է:

ՑԵՐԵԿՈՅԻՆ

Ի չքնո ժամուն՝ ժողովէսցին ի տուսն ելիչեսցուն։
Սաղմոս՝ ՂԱ։

ԿՅ. Լերինք ցնծասցեն առաջի տեառն, զի գայ զի հասանել է տէր ի դատել զերկիր։

ՓԽ. Սրհնեցէք զտէր յօրհնութիւն նոր, զի պանչելիս արար։

Ընթերցուած Յառաքաց։
Գլ՝ 8. հմր 23։

Տէր ստացաւ զիս ի սկիզբն ճանապարհաց իւրոց ի գործս իւր, յառաջ քան զյաւիտեանս հաստատեաց զիս։ Ի սկզբանէ յառաջ քան զերկիր առնել, եւ նախ քան զանդունդս գործել, և յառաջ քան զբղխել աղբերաց ջուրց, եւ նախ քան զլերինս հաստատել, և յառաջ քան զամենայն բլուրս՝ ծնաւ զիս։ Էէր արար զչէնս՝ և զանչէնս և զեզերս զրնակեալս ի ներքոյ երկնից։ Ցորժամ զատուստէր զերկինս՝ ընդ նըմա էի. և մինչ զատուցանէր զաթոռ իւր ի վերայ հողմոց, եւ յորժամ զօրաւոր առնէր զամպս վերինս, յորժամ անսխալ դնէր զաղբիւրս ի ներքոյ երկնից։ Ի դնել ծովու զգուշութեան նորա. զի ջուրք մի անցցեն ընդ ափն նորա. ի ժամանակի՝ յորժամ հաստատուն դնէր զհիմունս երկրի։ Ես էի առ նմա պատչաճեալ. ես էի՝ որով ուրախ լինէր տէր հանապազ. և ցնծայի առաջի նորա յամենայն ժամ։ Ցորժամ զը-

Digitized by Google

ւարճացեալ էր զտիեզերս բովանդակել. և ուրախ լինէր յորդիս մարդկան։

Ընթերցուածս Յերեմիայ Մարգարէիւ։
Բարուք. Գլ՝ 4. Համ 36։

Հայեաց ընդ արեւելս Երուսաղէմ. և տես զկեալ ուրախութիւն քեզ յԱստուծոյ։ Ահաւադիկ դան որդիքն քո՝ զորս յուղարկեցեր. դան ժողովեալք յարեւելից մինչև ի մուտս արեւու բանիւ սրբոյն. խնդացեալք փառաւքն Աստուծոյ։ Մերկեա՛ Երուսաղէմ զսգահանդերձ սգոյ և լկանաց քոց. և զգեցիր զվայելչութիւն փառացն Աստուծոյ՝ ի յաւիտեան։ Եւ արկ զոր քո զկրկնոցն արդարութեան յԱստուծոյ. դիր խոյր ի գլուխ քո՝ զփառաց յաւիտենականին։ Զի ցուցցէ Աստուած ի ներքոյ երկնից զամենայն լուսաւորութիւն քո։ Եւ կոչեսցի քեզ անուն յԱստուծոյ ի յաւիտեան. խաղաղութիւն արդարութեան՝ և փառք Աստուածպաշտութեան։

Պետրոսի Առաքելոյն ի հաւատոյ Առաջին Թղթոյն ի Ընթերցուածս։
Գլ՝ 1. Համ 3։

Օրհնեալ է Աստուած՝ և Հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որ ըստ բազում ողորմութեան իւրում ծնաւ զմեզ վերստին ի յոյսն կենդանի. ի ձեռն յարութեանն Յիսուսի Քրիստոսի ի մեռելոց։ Ցանեղծ և յանարատ՝ յանթառամ ժառանգութիւնն՝ որ պահեալ է յերկինս ձեզ։ Որք զօրութեամբն Աստու-

Digitized by Google

ծոյ պահեալք էիք հաւատովք ի պատրաստեալ փրկութիւնն, յայտնիլ ի յետին ժամանակս։ Որով ուրախ լինիջիք՝ որք այժմ սակաւիկ ինչ ըստ պատշաճի իրացդըդ տրտմեալ էք ի պէսպէս փորձութիւնս։ Զի հանդէս ձերոց հաւատոցն առաւել քան զոսկի կորստական պատուական է. որ հրով փորձեալ՝ գտաւ ի գովութիւն և ի փառս. և ի պատիւ յայտնութեանն Ցիսուսի Քրիստոսի։ Զոր ոչն տեսէք՝ և սիրեցէք. ընդ որ այժմ ոչ հայեցեալք՝ բայց հաւատացէք. և ուրախ էք անճառ և փառաւորեալ խնդութեամբն։ Ընկալեալ զկատարումն հաւատոցն ձերոց զոգւոցն փրկութիւն։

Ալէլուիա ալէլուիա

Տէր ի տաճար սուրբ իւրում. տէր յերկինս յաթոռ իւրում։

Սրբոյ Աւետարանիս Ցիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Ղուկասու,

Գլ՝ 19. հմր 29։

Տէրն մեր Ցիսուս Քրիստոս։

Եւ եղև իբրև մերձեցաւ ի Բեթփագէ և ի Բեթանիա մօտ ի լեառնն, որ կոչի Ձիթենեաց. առաքեաց երկուս յաշակերտաց իւրոց։ Եւ ասէ. երթայք ի գեօղդ՝ որ հանդէպ մեր կայ. յոր իբրև մտանէք, գըտանէք յաւանակ կապեալ. յորում ոք ի մարդկանէ երբէք ոչ նստաւ. լուծէք զնա, և ածէք։ Եւ եթէ

Digitized by Google

ոք հարցանիցէ զձեզ՝ թէ ընդէր լուծանէք. այսպէս ասասջիք ցնա. թէ տեառն իւրում պիտոյ է: Իբրեւ չոգան, որք առաքեցանն, գտին որպէս ասացն ցնոսա. կայր յաւանակն: Եւ մինչդեռ լուծանէին զյաւանակն. ասեն տեարքն նորա ցնոսա. զի լուծանէք զյաւանակդ: Եւ նոքա ասեն, տեառն իւրում պիտոյ է: Եւ ածին զնա առ Յիսուս. և արկին զգեստս իւրեանց վասն յաւանակին, և հեծուցին զՅիսուս: Եւ մինչդեռ երթայր, զհանդերձս իւրեանց տարածանէին ընդ ճանապարհսն: Եւ իբրև այն ինչ մերձ եղև ի դառն ի վայր լերինն Ձիթենեաց՝ սկսաւ ամենայն բազմութիւն աշակերտացն ուրախութեամբ օրհնել զԱստուած ի ձայն մեծ վասն ամենայն եղելոց զօրութեանցն, զորս տեսին: Եւ ասէին, օրհնեալ որ գայ թագաւորդ յանուն տեառն. խաղաղութիւն յերկինս. և փառք ի բարձունս: Եւ ոմանք ի Փարիսեցւոցն յամբոխէ անտի, ասեն ցնա. վարդապետ, սաստեա աշակերտացդ քոց: Պատասխանի ետ, և ասէ. ասեմ ձեզ. զի եթէ դոքա լռեսցեն, քարինքդ աղաղակեսցեն: Եւ իբրև մերձեցաւ՝ տեսեալ զքաղաքն՝ ելաց ի վերայ նորա, և ասէ: Եթէ գիտէիր դու գոնէ յաւուրս յայսմիկ զխաղաղութիւն քո. բայց այժմ ծածկեցաւ յերեսաց քոց: Զի եկեսցեն աւուրք ի վերայ քո. և պատեսցեն զքեզ թշնամիք քո պատնէշ. և պաշարեսցեն զքեզ. և նեղեսցեն զքեզ յամենայն կողմանց: Եւ յատակեսցեն զքեզ. և զորդիս քո ի քեզ.

Digitized by Google

և ոչ թողուցուն զքար ի քարի վերայ՝ յամենայնի ի քեզ՝ վասնզի ոչ ծանեար զժամանակ այցելութեան քոյ։ Եւ մտեալ ի տաճարն՝ սկսաւ հանել զդուրսնեվաճառսն, և զգնօղս. և զսեղանս հատուածառացն ցրուեաց։ Եւ ասէ ցնոսա. գրեալ է, և եղիցի տուն իմ տուն աղօթից. և դուք արարիք զդա այրս աւազակաց։ Եւ ուսուցանէր զնոսա հանապազ ի տաճարին. իսկ քահանայապետքն և դպիրք՝ և գլխաւորք ժողովրդեանն խնդրէին զնա կորուսանել։ Եւ ոչ գրտանէին թէ զինչ արասցեն. զի ժողովուրդն ամենայն կախեալ կային ՚ի նմանէ ի լսել։

Եւ երգեն խաչիւ և Աւետարանաւ և ամենայն զարդուք ի Թափօր. և՚ի Հանդիսանիցին Շարական Ա։

Որ վեր օրհնիս։ (Տես ի Թիւն. 140։)

Ձկնէ Օ՚ՐԹէ։

Սրբոյ Աւետարանիս Ցիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի։
Գլ՝ 21։

Վասն գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Իբրև մօտ եղեն յԵրուսաղէմ. և եկին ի բեթփագէ մերձ ի լեառն Ձիթենեաց. յայնժամ Յիսուս արձակեաց երկուս յաշակերտացն իւրոց։ Եւ ասէ ցնոսա. երթայք ի գեօղդ՝ որ առաջի ձեր է. և անդէն գտանէք զէշ կապեալ՝ և յաւանակ ընդ նմին. լուծէք

Digitized by Google

և ածէք ինձ: Եւ եթէ ոք ասիցէ ինչ ձեզ, ասասջիք, եթէ տեառն իւրեանց պիտոյ են. և վաղվաղակի առաքեսցէ զնոսա: Բայց այս ամենայն եղև՝ զի լցցի բան Մարգարէին՝ որ ասէ: Ասացէք դստեր Սիովն. ահա թագաւոր քո գայ քեզ հեզ. հեծեալ յէշ և յաւանակի իշոյ: Գնացին աշակերտքն. և ալարին որպէս հրամայեաց նոցա Յիսուս: Եւ ածին զէշն և զյաւանակն, և արկին զնոքօք ձորձս՝ և նստաւ ի վերա նոցա: Եւ բազում ժողովուրդք տարածեցին զհանդերձս իւրեանց ի ճանապարհին. և այլք հատանէին ոստս ի ծառոց՝ և տարածանէին ի ճանապարհին: Եւ ժողովուրդքն՝ որք առաջի և զկնի երթային, աղաղակէին և ասէին: Օրհնութիւն որդւոյ Դաւթի. օրհնեալ որ գայ յանուն տեառն. օրհնութիւն ի բարձունս:

Շարական Դ:

Թագաւոր գոլով. (երեք տուն միայն). Տես ի Յիւն. 124:

Ձկնէ Օ՛րէն:

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մարկոսի:

Գլ՝ 11:

Վասն գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Եւ յորժամ մերձ եղեն յԵրուսաղէմ, ի Բեթփագէ և ի Բեթանիայ մօտ ի լեառն Ձիթենեաց, առաքէ

Երկուս յաչակիրտաց անտի. Եւ ասէ ցնոսա. երթայք դուք ի գիւղ՝ որ ընդ դէմ ձեր կայ. և նոյն ժամայն իբրև մտանիցէք ի նա, գտանիցէք յաւանակ մի կապեալ. յորոյ վերայ ոչ ոք ի մարդկանէ նստաւ. լուծէք զնա՝ և ածէք: Եւ եթէ ոք ասասցէ ցձեզ՝ եթէ զիա՞ լուծանէք զյաւանակդ, ասասջիք, եթէ տեառն իւրում պիտոյ է. և վաղվաղակի առաքեսցէ զնա այսր: Զոգաեն, և գտին զյաւանակն կապեալ առ դուրս արտաքոյ ի փողոցի անդ, և լուծին զնա: Եւ ոմանք յորոց անդն կային՝ ասեն ցնոսա. զիա՞ գործէք, զիա՞ լուծանէք զյաւանակդ: Եւ նոքա ասեն ցնոսա՝ որպէս ասացն Ցիսուս. և թոյլ եհաւն նոցա: Ածին զյաւանակն առ Ցիսուս. և արկանեն ի վերայ նորա հանդերձս. և նստաւ ի վերայ նորա: Եւ բազումք զհանդերձս իւրեանց տարածանէին ի վերայ ճանապարհին. և այլք ոստս ի ծառոց հատանէին՝ և արկանէին ըզճանապարհաւն: Եւ որք առաջի և կիսի երթային. աղաղակէին, և ասէին. ովսաննա բարձրելոյն: Օրհնեալ որ գայդ յանուն տեառն. օրհնեալ թագաւորութիւնդ եկեալ Հօր մերոյ Դաւիթ. խաղաղութիւն յերկինս՝ և փառք ի բարձունս:

Շաբաթան Դ:

Ցորժամ եկն. (երեք տուն միայն). Տես ի Յիւն. 124:

Ձկնէ Օ՞րլէ:

Digitized by Google

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Ղուկասու։

Գլ՝ 18. հմր 31։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ առեալ զերկոտասանսն առանձինն՝ ասէ ցնոսա. ահաւասիկ ելանեմք յԵրուսաղէմ. և կատարեցին ամենայն դրեալքն Մարգարէիւք վասն որդւոյ մարդոյ։ Զի մատնեսցի հեթանոսաց. և կատակեսցի՝ և հարկանիցի՝ և թքանիցի։ Եւ իբրև հարկանիցեն, և սպանանիցեն զնա. և յերիր աւուր յարիցէ։ Եւ նոքա ոչ իմացան յայնցանէ. այլ էր բանն ծածկեալ ի նոցանէ. և ոչ գիտէին զասացեալսն։ Եւ եղեւ ի մօտիլն նորա յՅերիքով՝ կոյր ոմն նստէր առ ճանապարհաւն մուրացիկ։ Իբրև լուաւ զանցանել ժողովրդեանն, հարցանէր թէ զինչ իցէ այն։ Եւ պատմեցին նմա, թէ Յիսուս Նազովրեցի անցանէ։ Աղաղակեաց և ասէ. Յիսուս որդի Դաւթի, ողորմեա ինձ։ Եւ որք առաջի երթային, սաստէին նմա զի լռեսցէ. և նա ևս առաւել աղաղակէր. որդի Դաւթի՝ ողորմեա ինձ։ Ձտեղի էառ Յիսուս. և հրամայեաց ածել զնա առ իւր. և իբրև մերձ եղև առ նա, եհարց զնա և ասէ։ Զինչ կամիս դու՝ զի արարից քեզ. և նա ասէ. տէր, զի բացցին աչք իմ, և տեսից։ Եւ Յիսուս ասէ ցնա. հայեաց, հաւատք քո կեցուցին զքեզ։ Եւ առժամայն եառես. երթայր զհետ նորա՝ և փառաւորէր զԱստուած. և ամենայն

ժողովրդեանն տեսեալ՝ տայր գօրհնութիւն Աստուծոյ։ Եւ մեռեալ չրջէր ընդ սրիքով. և ահա այր մի անուն կոչեցեալ Զաքէոս. և նա էր մաքսապետ. և ինքն մեծատուն։ Եւ խնդրէր տեսանել՝ թէ ո՛վ իցէ Յիսուս. և ո՛չ կարէր ի բազմութենէն, զի կարճ էր հասակաւ։ Եւ ընթացեալ յառաջ՝ ել ի ժանտաթըզենին, զի տեսանիցէ զնա. քանզի ընդ այն իսկ անցանելոց էր։ Իբրև եկն ի տեղին, հայեցաւ ի վեր Յիսուս՝ և ասէ ցնա. Զաքէ՝ փութա՛, էջ այսր. զի այսօր ի տան քումդ արժան է ինձ ադանիլ։ Փութացաւ, և էջ. և ընկալաւ զնա ուրախութեամբ։ Իբրև տեսին ամենեքեան. տրտնջէին և ասէին, թէ առ առն մեղաւորի եմուտ լուծանել։ Նէկն՝ հակաց Զաքէոս՝ և ասէ ցտէր, տէ՛ր, ահա կէս ընչից իմոց տաց աղքատաց. և եթէ զոք զրկեցի, հատուցից չորեքկին։ Եւ ասէ ցնա Յիսուս, այսօր եղև փրկութիւն տանս այսմիկ. քանզի և սա որդի Աբրահամու էր։ Զի եկն որդի մարդոյ խնդրել և կեցուցանել զկորուսեալսն։ Եւ մինչդեռ նոքա զայն լսէին, յաւել առաւել մի և ասէ. վասն մերձենալոյն Նորա յԵրուսաղէմ, և համարելոց նոցա եթէ առժամայն յայտնելոց է արքայու թիւնն Աստուծոյ։ Ասէ, այր ոմն ազնուական գընաց յաշխարհ հեռի՝ առնուլ իւր թագաւորութիւն և դառնալ։ Եւ կոչեալ զծառայս իւր, ետ նոցա տասն մնաս. և ասէ ցնոսա՝ յարգեցէ՛ք զայդ՝ մինչև եկից։ Եւ քաղաքացի՛ն նորա ատէին զնա, առաքեցին

Digitized by Google

հրեշտակս զկնի նորա և ասեն. թէ ոչ կամիմք թո-
ղուցուլ դմա ի վերայ մեր: Եւ եղև դառնալ նմա
առեալ զթագաւորութիւնն. և կոչեալ զծառայսն, ո-
րոց տուեալ էր զարծաթն. զի գիտասցէ թէ ո՞ զինչ
չահեցաւ: Նկն առաջինն և ասէ. տէր, մնասն քո
տասն մնաս արար: Եւ ասէ ցնա. աղնիւ ծառայ և
բարի. զի ի փոքուդ հաւատարիմ եղեր. լիջիր իշխա-
նութիւն ունիլ ի վերայ տասն քաղաքաց: Նկն երկ-
րորդն և ասէ. մնասն քո արար հինգ մնաս: Ասէ
և ցնա. և դու լիջիր ի վերայ հինգ քաղաքաց: Նկն
միւսն և ասէ. տէր, ահա մնասն քո՝ զոր ունէի ծը-
բարեալ ի վարչամակի. երկնչէի ի քէն: Զի այր ըս-
տամբակ ես. բառնաս. զոր ոչ եդեր. և հնձես, զոր
ոչ սերմանեցեր: Եւ ասէ ցնա. ի բերանոյ քումմէ
դատեցից զքեզ ծառայ անհաւատ. գիտէիր թէ ես
այր մի ստամբակ եմ. բառնամ, զոր ոչ եդի. և հըն-
ձեմ, ուր ոչ սերմանեցի: Եւ ընդէր ոչ եատուր զար-
ծաթդ իմ ի սեղանաւորս. և եկեալ ես տոկոսեօք պա-
հանջէի: Եւ ասէ ցպատասւորսն. առէք ի դմանէ
զմնասն. և տարայք, տուք այնմ, որ ունի զտասն
մնաս: Եւ ասեն ցնա. տէր, ունի տասն մնաս: Ա-
սեմ ձեզ. եթէ ամենայնի, որ ունիցի, տացի. և
յայնմանէ որ ոչն ունիցի, և զոր ունիցի՝ բարձցի ի
նմանէ: Բայց զթշնամիսն իմ զայնոսիկ. որք ոչն
կամէին զիս թագաւորել ի վերայ նոցա, ածէք այսր,
և սպանէք առաջի իմ: Եւ իբրև զայս ասաց՝ գնաց
յառաջ ելանել յԵրուսաղէմ:

Digitized by Google

Շաբաթան Դ։

Զքալուստ քո. (երեք տուն միայն). Տես ի Թիւն, 125։

Ձկնէ 0՛ըԹէ։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու։

Գլ՝ 12. հմր 12։

Վասն գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Ի վաղիւ անդր ժողովուրդ բազում, որ եկեալ էր ի տոնն, իբրև լուան ԹԷ գայ Յիսուս յԵրուսաղէմ։ Առին ոստս արմաւենեաց՝ և ելին ընդ առաջ նորա. աղաղակէին և ասէին. ովսաննա. օրհնեալ որ գայդ յանուն տեառն. Թագաւորդ Իսրայէլի։ Եւ գտեալ Յիսուսի էշ մի, նստաւ ի վերայ նորա. որպէս և գրեալ է. Մի՛ երկնչիր դուստր Սիովնի. ահաւադիկ Թագաւոր քո գայ նստեալ ի վերայ յաւանակի իշոյ։ Եւ զայն ինչ ոչ գիտացին աշակերտքն նորա զառաջինն. այլ յորժամ փառաւորեցաւ Յիսուս՝ յայնժամ յիշեցին եԹէ այն էր՝ որ գրեալն էր վասն նորա. և զայն արարին նմա։ Եւ ժողովուրդն վկայէր՝ որ էր ընդ նմա, ԹԷ զՂազար կոչեաց և եԹէ ի գերեզմանէն. և յարոյց զնա ի մեռելոց։ Եւ վասն այնորիկ ընդ առաջ եղև նմա ժողովուրդն. զի լուան եԹէ զայն նշանս արարեալ էր նորա։ Իսկ փարիսեցիքն ասէին ընդ միմեանս. տեսանէք՝ զի ոչինչ օգտիք. ահաւասիկ աշխարհ ամենայն զկնի նորա գնաց։ Էին

անդ ոմանք՝ և հեթանոսք յելելոց անդր, զի երկիր-պագանիցեն ի տօնին։ Ընդքա մատեան առ Փիլիպպոս՝ որ ի Բեթսայիդայ Գալիլեացւոցն էր, աղաչէին զնա և ասէին. տէր, կամիմք զՅիսուս տեսանել։ Գայ Փիլիպպոս և ասէ ցԱնդրէաս՝։ Անդրէաս և Փիլիպպոս ասեն ցՅիսուս։ Եւ Յիսուս պատասխանի ետ նոցա և ասէ. եհաս ժամ, զի փառաւորեսցի Որդի Մարդոյ։

[1] Շաբաթան Դ։

ի յարութեան. (երեք տուն միայն)։ Տես ի Յհն, 125։

Զկնէ Սաղմոս՝ Դ։

կՅ. Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց. և ետուր ուրախութիւն սրտից մերոց։

փԽ. ի կարդալ իմում լուար ինձ Ատուած ըստ արդարութեան. ի նեղութենէ ինձ անդորր արարեր. ողորմեա ինձ և լուր աղօթից իմոյ։

Զկնէ Աքէ՞լոբա Օ՞րթէ։

Արբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի՝։

Գլ՝ 24. հմր 27։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Զի որպէս փայլակն՝ որ ելանէ յարեւելից՝ և երևի մինչև յարևմուտս, այնպէս եղիցի գալուստն Որդւոյ Մարդոյ։ Զի ուր գէշն էցէ, անդր ժողովեսցին ար-

Digitized by Google

ծըւիք։ Վաղվաղակի յետ նեղութեան աւուրցն այնոցիկ՝ արեգակն խաւարեսցի. և լուսին ոչ տացէ զլոյս իւր. և աստեղք անկցին յերկնից. և զօրութիւնք երկնից չարժեսցին։ Եւ ապա երևեսցի նշան Որդւոյ Մարդոյ յերկինս. և յայնժամ կոծեսցին ամենայն ազգք երկրի. և տեսցեն զՈրդի Մարդոյ եկեալ ի վերայ ամպոց երկնից զօրութեամբ և փառօք բազմօք։ Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մեծաւ. և ժողովեսցեն զընտրեալս նորա ի չորից հողմոց՝ ի ծագաց երկնից մինչև ի ծագս նոցա։ Ի թզենւոյ անտի ուսարուք զառակն. զի յորժամ նորա ոստքն կակղասցին, և տերևն ցցուիցի, գիտէք թէ մերձ է ամառն։ Նոյնպէս և դուք յորժամ տեսանիցէք զայս ամենայն՝ գիտասջիք թէ մերձ է ի դուրս։ Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ անցցէ ազգս այս՝ մինչև այս ամենայն եղիցի։ Երկինք և երկիր անցցեն. և բանք իմ մի՛ անցցեն։

Ա՛պա ասէ ցոքոզ. Եւ ևս խաղաղութեան։ Վասն ի վերուստ։ Եւ պետութեան ընդ ամենայնի,

(Տես ի Թիւն. 145։)

Digitized by Google

Եւ ասպա եկեսցեն ի գաւիլն՝ փութեալ ունելով ըզպռատն Եկեղեցւոյն ։

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ընկալ կե՛ս ։ Օրհնութիւն և փառք Հօր ։ Այժմ և միշտ և յա ։

Սաղմոս Զե ։

Ոնարհեցո տէր զունկն քո և լուր ինձ. զի աղքատ և տնանկ եմ ես ։

Պահեա զանձն իմ սուրբ տէր. և փրկեա զծառայս քո Աստուած իմ որ ի քեզ յուսացեալ ։

Ողորմեա ինձ տէր զի առ քեզ աղաղակեցի զօրհնեալազ, ուրախ արա զանձն ծառայի քո, զի առ քեզ տէր համբարձի զանձն իմ ։

Զի դու տէր քաղցր և ուղիղ ես բազումողորմ առ ամենեսեան որք կարդան առ քեզ ։

Ունկնդիր տէր աղօթից իմոց, և նայեա ի ձայն խնդրուածոց իմոց ։

Ցաւուր նեղութեան իմոյ կարդացի առ քեզ, և լուար ինձ ։

Շարական ՔԿ ։

Ո՛ւրա՞ խ լե՛ր Նկե՛ղեցի՞ Սուրբ ի՛ գա՞լ՛ստեա՞ն առ՞ւրբ Միա՞ծնին. ուրա՞խ լեր և՛ ցընծա՞ հա՛նդերձ ա՞մենա՞յն սրբո՞վք ։

Եբէյ՞ էլէ՞ենե ։ Ա՞պա

Digitized by Google

Ոչ ոք է նման քեզ յԱստուածս տէր, և ոչ ոք է որպէս զգործս քո։

Զամենայն ազգս զոր արարեր՝ եկեսցեն և երկիրպագցեն առաջի քո, և փառաւորեսցեն զանուն քո յաւիտեան։

Մեծ ես դու տէր և առնես սքանչելիս, և դու միայն ես Աստուած։

Առաջնորդեա ինձ ի ճանապարհի քում, և գնացից ի ճշմարտութեան քում, և ուրախ եղիցի սիրտ իմ երկընչիլ յանուանէ քումմէ։

Խոստովան եղէց աւ քեզ տէր Աստուած իմ բոլոր սրտիւ իմով. փառաւորեցից զանուն քո յաւիտեան։

Մեծ եղև ի վերայ իմ ողորմութիւն քո տէր, և փրկեցեր զանձն իմ ի դժոխոց ներքնոց։

Շաբաթան Ը.

Խը՛նդա՛ յո՛յժ դո՛ւստը՛ր վերի՛ն Սիո՛ւնի. ա՛հա թա՛գաւո՛ր քո գայ նը՛ստեալ ի՛ յաւա՛նակի՛ նորոյ. ա՛րդար և՝ փը՛րկի՛չ փը՛րկէ և՛ կեցո՛ւցանէ՛։

Երկրորդ հրեշտակ։ Ասաց

Աստուած՝ անօրէնք յարեան ի վերայ իմ, և ժողովք հզօրաց խնդրեցին զանձն իմ, և ոչ համարեցան զքեզ Աստուած առաջի իւրեանց։

Այլ դու տէր Աստուած իմ՝ գթած ես և ողորմած,

Digitized by Google

երկայնամիտ բազումողորմ և ճշմարիտ, նայեա առ իս և ողորմեա ինձ։

Տուր զօրութիւն ծառայի քո, կեցո զորդի աղախնոյ քո, և արա առիս նշան բարութեան։

Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն, զի դու տէր օգնեցեր ինձ և մխիթարեցեր զիս։

Շաբաթ Ե։

Զը՛ւա՛ղճացիը և՞ քերկրեա՞ ժողո՞վո՛ւրդ Ա՛ստուածոյ. մա՛տո՛ զոստը՛ս ծաղկեա՛լըս հաւա՞տով և՝ ասա՝ օ՛րհնեա՞լ ո՛ր եկիըը՛դ Թագաւո՞ր տի՛ՀՀ զերա՞ց։

Եր[illegible] Ե՝ ոպ

Փառք Հօր և Որդւոյ։ Այժմ և միշտ և յաւի։

Փառք քեզ Աստուած՝ փառք քեզ. յաղագս ամենայնի տէր փառք քեզ։

Եւ ևս խաղաղութեան։ Օրհնութիւն և փառք Հօր։

Սաղմոս ՃԼԹ։

Ապեցո զիս տէր ի մարդոյ չարէ, յառնէ անիրաւէ փրկեա զիս։

Խորհեցան զանօրէնութիւն ի սիրտս իւրեանց, զօր ամենայն պատրաստեցան ի պատերազմ։

Սրեցին զլեզուս իւրեանց որպէս զօձի, և թոյնք իժից ի նեղքոյ չրթանց նոցա։

Պահեա զիս տէր ի ձեռաց մեղաւորի, և ի մարդոյ

չարէ փրկեա զնա։

Խորհեցան խափանել զգնացս իմ, թազուցին ամբարտաւանք ոլոգայթ ինձ։

Լարս ձգեցին որոգայթ առիք իմոց, չուրջ զչաւղաք իմովք եդին ինձ զգայթակղութիւն։

Ասացի տէր Աստուած իմ ես դու, ունկն դիր տէր ձայնի աղօթից իմոց։

Տէր տէր զօրութիւն փրկութեան իմոյ, հովանի զընթացոյ իմոյ յաւուր պատերազմի։

Մի՛ մատներ զիս տէր ի ցանկութիւն մեղաւորաց, ոչք խորհեցան վասն իմ՝ մի՛ ընդ վայր հարկաներ զիս։

Զի մի՛ երբէք բարձրասցին, և խորհուրդք նոցա մի՛ կատարեսցին. վախճան կատարածի նոցա վաստակ չրթանց իւրեանց ծածկեսցէ զնոսա։

Արկցես ի վերայ նոցա զկայծակունս հրոյ, և կործանեսցես զնոսա ի տառապանաց մի՛ կարասցեն կեալ։

Մարդոյ լեզուանուոյ մի՛ յաջողեսցի ի վերայ երկրի. զայր մեղաւոր չարիք իւր որսասցեն ի կորուստ։

Ծանեայ զի առնես տէր զդատաստան աղքատի, և իրաւունս տնանկի։

Արդարք դոհասցին զանուանէ քումմէ, և բնակեսցին ուղիղք առաջի երեսաց քոց։

Նաբաւան ԲԿ։

Զ քրի՞ստո՛ս թագա՛ւո՛ր ո՛՞ր է՞ն ի յա՛թո՛ռ վա՛ռաց. տե՛սա՞ք ի յե՛րկրի նըստեա՛լ

Digitized by Google

ի նո՛ր յաւա՛նա՞կի՛։

Եբէյս ՀրՀՆԵա։ Ասպ

Տէր կարգացի առ քեզ և լուր ինձ, նայեա ի ձայն աղօթից իմոց ի կարդալ իմում առ քեզ։

Ուղիղ եղիցին աղօթք իմ, որպէս խունկ առաջի քո տէր. համբարձումն ձեռաց իմոց, պատարագ երեկոյի։

Դիր տէր պահապան բերանոյ իմոյ. և դուռն ամուր շրթանց իմոց, զի մի՛ խոտորեսցի սիրտ իմ բանիս չարութեան։

Ի պատճառել զպատճառս մեղաց ընդ մարդս՝ ոյք գործեն զանօրէնութիւն. և ոչ եղէց կցորդ ընտրելոց նոցա։

Խրատեսցէ զիս արդարն ողորմութեամբ՝ և յանդիման արասցէ. իւղ մեղաւորի մի՛ օծցէ զգլուխ իմ, այլ աղօթք իմ ի կամս նորա։

Արգելան մերձ առ վիմին դատաւորք նոցա. լուիցեն բանից իմոց և քաղցրացին։

Որպէս թանձրութիւն հողոյ՝ զի սփռեալ է վերայ երկրի. ցրուեսցին ոսկերք նոցա մերձ ի դժոխս։

Առ քեզ տէր տէր են աչք իմ, ի քեզ յուսացայ՝ մի՛ հաներ զհոգի յինէն։

Պահեա զիս յորոգայթէ որ թաղուցաւ ինձ, ի գայթակղութենէ գործողին զանօրէնութիւն։

Անկցին ի ցանցս նորա մեղաւորք, մինչդեռ ես մինչև անցից։

Digitized by Google

Շարական ԹԿ։

Ընդ ա՛ւա՞ղ ե՛լեա՞լ ա՞ղբա՞յի՞ն դասք Ս՛բրա՞յե՞ցւոց. ծերքն ոտո՞վք ձիթե՛նեօք և տղայքն արմա՛ւե՞նեօ՞ք։

Եբէյս ֆրէնե։ Ասպ

Զայնիւ իմով ես առ տէր կարդացի, ձայնիւ իմով դտէր աղաչեցի։

Սփռեցից առաջի տեառն զաղօթս իմ, և զնեղութիւնս իմ առաջի նորա պատմեցից։

Ի նուաղիլ ինէն հոգւոյ իմոյ, դու տէր ծանեար զչաւիղս իմ, ի ճանապարհ յոր և գնայի, թագուցաւ ինձ որոգայթ։

Հայեի յաջմէ և տեսանէի, և ոչ ոք ճանաչէր զիս. կորեաւ ինէն փախուստ իմ. և ոչ գտաւ խնդրող անձին իմոյ.

Աղաղակեցի առ քեզ տէր և ասացի, դու ես յոյս և բաժին իմ յերկրին կենդանեաց։

Նայեա տէր յաղօթս իմ զի ես խոնարհ եղէ յոյժ. ապրեցո զիս ի հալածչաց իմոց, զի հզօրք եղեն քան զիս։

Ած հան ի բանտէ զանձն իմ, դոհանամ զանուանէ քումմէ։

Եւ քեզ սպասեն արդարք՝ մինչև հատուսցես։

Digitized by Google

Շաբաթան Բկ։

Միա՛բա՞նա՞կա՞ն ձա՛՞նի՞ւ գոչէ՛ի՞ն ե՞րգ նոր. բարե՛բանելո՞վ զանը՛մա՞՛հ Թա՛գա՞ւորն։

Երկոյս հրճնեա։

Փառք Հօր և Որդւոյ։ Այժմ և միշտ և յաւի։
ՄԱՂԹԱՆՔ

Օրհնեալ տէր՝ որ բնակեալդ ես ի բարձունս, և օրհնեալ են փառք մեծութեան քոյ. որ հաստատեցեր զլուսաւորս ի բարձունս. ի յերկնից լոյս ծագեցեր ընդ ամենայն տիեզերս։ Աղբերք զարեգակն լուսաստուն տունջեան, զլուսինն և զաստեղս՝ լուսատու գիշերոյ, և զլոյս ճրագի. դու ես լոյս գովելի. սուրբ և առաջին լոյսն. ի քէն վախնու խաւարն. և զլոյս քո կենդանի՝ տէր ծագեա ի սիրտս մեր։ Եւ մեք մաբան ասասցուք, օրհնեալ է անուն սուրբ փառաց քոց. և քեզ երգեմք զօրհնութիւն և զփառս Հօր և Որդւոյ և Հոգւոյդ։ Այժմ և միշտ՚՚

Գարոզ և Մաղթանք Հասեալքի և այլն. ցշաբաթանն Համբարձմայ տես ի 107 էն ց 113 թիւան։

Համբարձի Բկ։

Ա յսօր ընդ հրակերպեան. (Տես ի Թիւն. 149։)

Digitized by Google

ՓԱՐՈՋ

Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի, և հաստատութեան սրբոյ Եկեղեցւոյ զտէր աղաչեսցուք։ Ա՛նասցուք ամենեքեան միաբանութեամբ։

Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա։

ԱՂՕԹՔ

Հայր գթած՝ բարեխնամող՝ արարիչ ամենայն ա-րարածոց. ընկալ զսաղատանս ծառայից քոց ի ժամ երեկոյիս. որ առատ ես առ ամենեսեան՝ պարգևօք բարերարութեան քո։ Ողորմեա տէր ամենայն աշխարհի, և Եկեղեցւոյ քում սրբոյ. հիւանդաց՝ վչտացելոց՝ ճանապարհորդաց՝ նաւորդաց՝ խոստովանողաց՝ ապաշխարողաց՝ և հոգւոցն հանգուցելոց։ Զի դու տէր ամենակալ՝ գիտես զպէտս մեր՝ և զկարիս առաւել քան զոր խնդրեմք և իմանամք. և քեզ ընդ որդւոյ և ամենասրբոյ հոգւոյդ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւի՛՛։

Զվեր Հայր դթածն՝ զգեցեալ վինն ի պատուաւորը Քահանայից, և եկեսցէ ի դուռն Սկևզեցւոյն։

Եւ ասեն բարձր ձայնիւ Սաղմոս ձԹ։

ԿՁ. Օրհնեալ եկեալ անուամբ տեառն, և օրհնեցաք զքեզ ի տանէ տեառն։

ՓԽ. Խոստովան եղերուք տեառն, զի բարի է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Առասցէ տունն Իսրայէլի՝ զի յաւիտեան է ողոր-

Digitized by Google

մուԹիւն նորա ։

Ասացէք տունն Ահարօնի՝ զի յաւիտեան է ողորմուԹիւն նորա ։

Ասացեն երկիւղածք տեառն՝ զի յաւիտեան է ողորմուԹիւն նորա ։

Ի նեղուԹեան իմում ես առ տէր կարդացի, և լուաւ ինձ յանդորը ։

Տէր է իմ օգնական, և ես ոչ երկեայց. զի՞ արասցէ ինձ մարդ ։

Տէր է իմ օգնական, և ես տեսից ի թշնամիս իմ ։

Բարի է յուսալ ի տէր՝ քան յուսալ ի մարդիկ. բարի է յուսալ ի տէր քան յուսալ յիշխանս ։

Ամենայն ազինք չրջեցան զինև, և անուամբ տեառն յաղԹեցի նոցա ։

Շրջելով չրջեցան զինև, պաչարեցին զիս ի միասին. և անուամբ տեառն վանեցի զնոսա ։

Շուրջ եղեն զինև որպէս մեղուք վառեցան, բորբոքեցան որպէս փուշք ի հուր. և անուամբ տեառն մերժեցի զնոսա ։

Ի մերժելն դրդուեցայ, և եղէ մերձ ի դլորել. և տէր ընկալաւ զիս ։

ԶօրուԹիւն իմ և օգնուԹիւն իմ տէր, և եղև ինձ ի փրկուԹիւն ։

Ձայն ցնծուԹեան փրկուԹեան՝ ի յարկս արդարոց։

Աչ տեառն արար զօրուԹիւն, աչ տեառն բարձր արար զիս. և աչ տեառն արար զօրուԹիւն ։

Digitized by Google

Ոչ մեռայց, այլ կեցից՝ և պատմեցից գործս տեառն։

Խրատելով խրատեաց զիս տէր. և ի մահ ոչ մատնեաց։

Բացէք ինձ դրունս արդարութեան, զի մտից ընդ այն՝ և խոստովան եղէց տեառն։

Եւ ասէն միաբան Շարականն ԲԶ։

Շնո՛րհեա մեզ տէր սրբենութիւն ընդ ի՛մա՛ս առնուն կուսանացն. և զհոգւո՛յ մերոց լապտե՛րս պա՛յծա՛ռացո՛։ Ե՛րկընչիմք ի քէ՛ն տէ՛ր զարհուրեա՛ք ի պա՛տասխանւոյն, զա՛մէնն ասելով եթէ՛ ո՞չ գի՛տե՛մ ըզձ՛եզ։ Ցո՛րժամ գա՛ս փառօք Հօր դատե՛լ ըզտիեզերս ամենայն. չնո՛րհեա մեզ տէր կա՛լ ի յա՛ջմէ քումմէ՛։ Բա՛ցցի մեզ դուռն ողո՛րմութեա՞ն երկնա՛ւո՞ր փեսային, և մոցո՛ւք ի յառա՛գաստ ընդ ի՛մաստո՛ւն կո՞ւսա՛նան։ Փա՛մանեացուք ընդ առա՛ջ փեսա՛յի՞ն, և մրցո՛ւք ի յա՞ռա՛գաստ նորա. զի՛ մի՛ մնասցուք ա՛րտաքս որպէ՛ս գյիմա՛ր կո՞ւսա՛նան։ Պա՛յծառասցի՞ն լապտե՛րքք հո՛գւոց մերո՛ց, և՛ բազմեցուսցե՛ս ըզմեզ ընդ հրա՛շիրեա՛լսն ի կո՛չումն արքա՛յութեա՛ն ե՞րկնի՛ց։

Digitized by Google

Եւ յաւարտելն՝ սկսանէին ասել զդէցեալ փահանային առ
ղեողոմ՝ ձայնիւ։ (քանզի վկատաբածէ գալստեանն՝ և ըզ-
դատաստանի աւուրն ուշել զխոչդ։)

Բա՞ց մեզ Տէր, բա՞ց մե՞զ Տէ՛ր, բա՞ց մե՞զ Տէ՛ր
զդո՛ւռն ա՛զո՛րմութեան, որ ո՛ղբալով կաթդա՞՛ք
ա՛ռ քե՛զ։

Եւ մի ոմն ի փահանայիցն պատասխանեալ ի նեքըու-ստ
ասիցէ։

Ո՞վ է՛ն սոքա՛, զի բա՛ցի՛ց. զի այս դուռն
Տեա՛ռն է՛. և արդա՛՛ր մտանե՛՛ն ընդ սա՛։

Եւ փահանայն արտաքուստ ասիցէ։

Ո՞չ թէ միայն արդա՛՛ր մտա՛նե՛՛ն. այլ և մեղա-
ւո՛՛ր խոստովանութեամբ և ապաչխարութեամբ ար-
դա՛՛ր բացեալք մտանե՛՛ն ը՛՛նդ սա՛։

Ի նեքըուստ ասիցէ։

Ջի սա՛ է՛ դո՛ւռն երկնից և հովի՛՛տ տրտմո՛՛ւ-
թեա՛՛ն, զոր ուխտեաց Աստուած Յակո՛՛վայ, ար-
դարոց հա՛՛նգի՛՛ստ, մեղաւորաց քաւա՛՛րա՛՛ն, Ֆրիս-
տոսի ա՛՛ղբայրարա՛՛ն, հրեշտակաց բնակա՛՛րա՛՛ն, Սըր-
բոց ժողովա՛՛րա՛՛ն, տեղի ապաւինի, և տուն Ա՛՛ս-
տո՛՛ւծո՛՛յ։

Եւ փահանայն արտաքուստ ասիցէ։

Արժա՛՛ն և ճչմարիտ են այդոքիկ զորս ասեաղ վասն

Սբբոյ Եկեղե՛ցւո՛յս. քանդի՞ սա՛ է մեզ մայր անապա՞տ, և ի սմանէ՛ ծնանիմք որդիք լուսոյ և ճշմարտութե՛ան. և սա է մեզ յոյս կենա՞ց. և սուաւ գոհանեմք գիրկուքիւն հո՛գւոց. և զի սա՛ է մեզ ճանապարհ արդարո՛ւթեան. և սուաւ ելանեմք առ Քրիստոս Հայրն մեր ե՛րկնա՛ւո՛ր։

Եւ ասացեն Շարական ՔԿ։

Իմա՛սո՞ւն կո՞ւսանքըն պա՛տրաստեա՛լ ի՞ւղ լա՛պտե՞րաց, ելին ընդ ա՛ռա՞ջ երկնաւո՛ր փե՛սա՞ յին վառեա՛լ լա՛պտե՞րք։ Իսկ յիմա՛րց կո՞ւսեցն ունա՛յնացեա՛ք ի՛ յի՞ւղոյ, ա՛նպատրաստ գո՛տա՞ն գալըստեա՛ն փե՛սա՞ յին չիջեա՛լ լա՛պտե՞րք։ Վասն ո՛րո՞յ և՞ մեք պատրա՛տեսցո՛ւք ի՛ւղ հո՛գե՞ւոր, զի մըտցո՛ւք ի յառա՛գաստ՞ան անմա՛հ փե՛սա՞ յին վառեա՛լ լա՛պտե՞ր։

Յո՞յ ի՛մ ես դո՛ւ տէ՛ր քաւի՛չ յանցա՛նաց ի՛մոց. մի՞ ա՛նտե՛ս առնե՛ր զբո՛ղմունն արտա՛ուաց իմո՞ց. ողո՛րմեա ինձ Աստո՞ւա՛ծ։ Ա՛ւ քե՛զ ապաւի՛նեցա՛յ որպէ՛ս զանա՛ռակ որդին. հա՛յր մե՞ղայ յե՛րկինս և առաջի՛ք քո՛. ողո՛րմեա ինձ Աստո՞ւա՛ծ։ Փըրկեա՛ զի՛ս Աստո՛ւա՛ծ ի բա՛զում մե՛ղաց իմոց. արա՛ ա՛րժա՞նի՛ քոյի՛ն սուրբ ա՛րքա՛յութե՛ան ողո՛ր՞։

Digitized by Google

Ա՛ե՛ղք իմ բա՛զում են յո՛յժ ծանր են քան զա՛ւազ ծովո՛ւս. քանզի քո՛ղ մի՛յնոյ մեղա՛յ, ողո՛րմեա ինձ Աստո՛ւա՛ծ: Բա՛ց տէր ըզ դո՛ւռն ողո՛րմութեան որ ողբա՛լով կարդա՛մ առ քեզ. քանզի՛՛:

Հե՛ղ յիս զգըլխո՛ւթիւնըդ քո բազո՛ւմողորմ և մարդա՛սէր. քանզի՛՛:

Եւ յաւարտին՝ ակամբիցէ Քահանայն աղաչաբուստ:

Բա՛ց մե՛զ Տէ՛ր. բա՛ց մե՛զ Տէ՛ր, բա՛ց մե՛զ Տէ՛ր ղդո՛ւռն ո՛ղո՛րմութեան, որ ո՛ղբալով կարդա՛մք ա՛ռ քե՛զ,

Ի ձեռնաբուստ ասէ:

Ահա՛ տեսանեմք զՏէրն մեր Քրիստո՛ս, որ բա՛ժակալ կայ ի վերայ Սրբոյ Սեղա՛նո՛յն. և կոչէ առ ինքն զկամարա՛րս իւ՛ր. թէ ու՛ր եմն եմ, անդ և պաշտօնեայն իմ ե՛ղի՛ցի՛:

Քահանայն աղաչաբուստ ասէ:

Գին ե՛ք անապական արեան Որդւոյն Աստո՛ւծո՛յ. ցնծութեամբ օրհնեսցուք զՓրկիչն մե՛ր Քրիստո՛ս. և ապասցուք ամենեքեան, փա՛ռք առակալի դալստեա՛ն քո՛ւմ Տէ՛ր:

Եւ ասէն միաբան Շարական ՃՁ:

Թագաւո՛ր փառաց քե՛զ սպասե՛ցո՛ւք պատ-

Digitized by Google

բա՛ստեա՞ք արթնութեամբ. ը՞նդառաջե՛լ ո՞ր գա՞ս
ի դա՛տել զերկի՛ր: Անաղո՛տ վառեալ լապտե՛րըք
հաւատոյ ը՛նդ դա՛սս իմա՛ստո՛ւն կուսանացըն, մը-
տանել ի յառա՛գաստ ընդ ե՛րկնաւո՛ր Փե՛սայի՛ն:
Փութասցո՛ւք կանխեալ յա՛ռա՛ջ քան ըզձա՛յն Աստ-
ուածայի՛ն բարբառոյն. զի՛ մի՛ մնասցուք ա՛րտա՛-
քըս ը՛ստ չիջմա՞ն հի՛նգ կուսանա՛ցն:

Ձկնէ Քահանայն արտաքուստ ասէ:

Բա՛ց մե՛զ Տէ՛ր. բա՛ց մե՛զ Տէ՛ր. բա՛ց մե՛զ
Տէ՛ր ղդո՛ւն ո՛ղո՛րմութեան, որ ա՛ղբալով կար-
դա՛մք ա՛ւ քե՛զ:

Ի Նեըքուստ ասէ:

Փողն ահաւորին Աստուածոյ՝ ահագի՛ն ձայնիւ գոչէ
ասե՛լով, ահա Փեսա՛յ գայ, արի՛ք ընդ առա՛յջ նորա՛:

Եւ Քահանայն արտաքուստ ահիւ և դողութեամբ ասացէ:

Ահա՛ես և մանկո՛ւնք իւ՛մ զոր ետ ինձ Աստուա՛ծ.
կա՛մք ամենեքեա՛ն, և ա՛կն ունիմք տեսոյն Քրիս-
տոսի՛. և լսե՛լոյ զերանաւէտ բարբա՛ռ նո՛րա՛:

Ի Նեըքուստ ասէ:

Զա՛յն արարչին Աստուածոյ գոչէ ասելո՛վ, եկայք
օրհնեալք Հօր իմո՛ւ. ժառանգեա՛ցէք զպատրաստեալ
ձեզ զարքայութի՛ւնն ի սկզբանէ ա՛շխա՛րհի՛:

Digitized by Google

Եւ ասա Քահանայն արտաքուստ ասէ ։

Բացէք ինձ դրունս արդարութեան, զի մտից ընդ այն և խոստովան եղէց Տեառն ։

Եւ բացցեն զդուռն. և. Ժողովուրդքն ամենեքեան մացեն յնկեղեցին հոգեւոր ուրախութեամբ ։ Եւ սկսանիցէն Շարականն՝ Դկ ։

Զողորմութեա՛ն քո զդուռնըն բա՛ց մե՛զ տէր. և արժանի ա՛րա՛ զմեզ լուսեղէն յարկա՛ց քո՛ց ընդ սո՛ւրբսն քո՛ ։ Ի պատրաստեա՛լ քո յօթեւա՛ննս սրբո՛ց քոց ընկա՛լ և ը՛զմեզ Փրկիչ յորդէգրութիւն ի դըպրութեա՛ն կենա՛ց ։ Ի նըստիլ քո յաւեն դատա՛ւոր ահեղ խնայեա՛ յա՛շխա՛ծըս քո՛ց, բարե՛խօսութեամբ և աղօթի՛ւք սուրբ ճը՛գնա՛ւորա՛ցն ։

Ջկնէ Ծ՛ղթ՛

Սրբոյ Աւետարանիս Ցիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Ցովհաննու ։

Գլ՝ 12. հմր 44 ։

Տէրն մեր Ցիսուս Քրիստոս ։

Եւ Ցիսուս աղաղակէր, և ասէր. որ հաւատայ յիս՝ ոչ հաւատայ յիս, այլ յայն՝ որ առաքեացն զիս ։ Եւ որ տեսանէ զիս, զայն տեսանէ՝ որ առաքեացն զիս ։ Ես լոյս՝ յաշխարհ եկի. զի ամենայն. որ հաւատայ յիս, ի խաւարի մի՛ մնասցէ ։ Եւ եթէ ոք լուիցէ բանից իմոց, և ոչ պահեսցէ, ես ոչ դատեմ զնա. քանի-

Digitized by Google

զի ոչ եկի, թէ դատեցից զաշխարհ. այլ զի փրկեցից զաշխարհ: Որ անարգէ զիս, և ոչ ընդունի զբանս իմ. դոյ՝ որ դատէ զնա. բանն, զոր ես խօսեցայ, նա դատէ զնա յաւուրն յետնում: Զի ես յանձնէ իմմէ ոչ խօսեցայ. այլ որ առաքեացն զիս Հայր, նա ետ ինձ պատուէր՝ զինչ ասացից՝ և զինչ խօսեցայց: Եւ գիտեմ, թէ պատուէրն այն կեանք են յաւիտենականք. արդ զոր ես խօսիմ, որպէս ասաց ինձ Հայրն՝ այնպէս խօսիմ:

Զինչ *տրտղ.* Խնդրեսցուք: Կեցո Տէր՝ *յոյնիւ:* Աղաչէ. Թագաւոր խաղաղութեան:

Տես ի Թիւն: 114

Ե՞ ոչխալին ի խաղաղո՞ւնի՞:

Digitized by Google

Ա Ի Ա Գ

ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհնութիւն Բզ։

Ա՛նե՞ղն ի Հօրէ՛ ծընեալ Որդի՞ յանէի՛ց զո՞յա՛ցոյց զեղեալքս զերկնա՛յին և զե՞րկրաւո՛րս էութիւն. ա՛րարո՞ծք ա՞մե՛նայն տուք փա՞ռս ա՛րարչին յաւի՛աւեանի՞ց։ Պա՛տկե՞ր անեղակո՛յթ փառացը՛ն Հո՞ր, ի պատկե՛ր բարե՞րա՛րութեան իւրոյ տրա՛ր ըզմա՛րդկայի՛ն բընութիւնս. ա՛րա՞ ։ Լո՞յան ի Հօրէ՛ լուսոյ ծա՛գեա՞լ լուսափա՛յլ զա՞րդա՛րեաց զաղամ, ի դրախտի՛ն եդեալ անմա՞հ տընկո՛ցն երկրագործ. ա՛րա՞ ։

Ե՛կա՞յք որդիք մարդկան ա՛յսօ՞ր ողբասցո՛ւք ը՞զհօ՛րն ըզվրտանգ. որ մերկա՛ցաւ մեղո՞ք ըզփա՛ռս արարչին, և՛ զգեցա՛ւ զթը՞զե՛նւոյն ծածկո՛յթ փոխանա՞կ անճա՛ռ լուսո՛յն ։

Թագաւո՛ր փառաց քե՞զ սպասե՛ացո՛ւք սպատ-

Digitized by Google

թա՛տեա՛լք արթնութեամբ. ը՞նդառաջե՞լ ո՞ր գա՞ս ի դա՛տել գերկի՞ր: Անաղօ՛տ վառեալ լապտե՛րըք հաւատոյ ը՛նդ դա՛ս իմա՛տուո՛ն կուսանացըն, մըտանել ի յառա՛գաստ ընդ ե՛րկնաւո՛ր փե՛սայի՛ն: Փութա՛ցո՛ւք կանխեալ յա՛ւա՛ղ քան ըզձա՛յն Աստուածայի՛ն բարբառոյն. զի՛ մի՛ մնասցու՛ք ա՛րտա՛քըս ը՛ստ չիմա՛ն հր՛նդ կուսանա՛ցն:

Ո՛ր նըստիս ի քրովբէս Աստըւա՛ծ բա՛նդ. ա՛յսօ՛ր վասըն մե՛ր խոնարհութեամբ նը՛ստա՛ր ի՝ լեբինը՛ն Ջիթենեաց. օ՛րհնեմք ըզքե՛զ անդա՛դար երգո՛վ: Ո՛ր համադոյդ ես խո՛րհրըդոցըդ հա՛յրե՛նի, ա՛չակերտա՛ց քոց ծանո՛ւցե՛ր ը՝զխորհուրդ քո՛ դալըստեանն. օ՛րհ՛՛: Ո՛ր ամենայնց ես սրա՛բիչ և ըստեղծի՛չ կենդա՛նո՛ւթեան. ա՛յսօ՛ր ըզծածկեա՛լ խորհո՛ւրդ երրորդութեանըդ յա՛յտնեցեր եկեղե՛ցւոյ սըրբո՛յ քո. օ՛րհ՛՛:

Շնո՛րհեա մեզ տէ՛ր արթնութիւն ընդ ի՛մա՛տո՛ւն կուսանացն. և զհոգւո՛ց մերոց լապտե՛րըս պա՛յծա՛ռացո՛: Ե՛րկընչիմք ի քե՛՛ն տէ՛ր զարհուրեա՛լք ի պա՛տասխանւոյն, զա՛մէնն ասելով եթէ՛ ո՞չ գի՛տե՛մ ըզձե՛զ: Ցո՛րժամ դա՛ս վառաք Հօր դատե՛լ ըզտիեզերս ամենայն. չնո՛րհեա մեզ տէր կա՛լ ի յա՛յնմէ քումմէ՛: Բա՛ցցի մեզ դուռն ողո՛րմու-

Digitized by Google

թեա՞ն երկնա՛ւո՛ր վեհապին, և մըտցո՛ւք ի յառաջասա ընդ ի՛մաստո՛ւն կո՛ւսանն։ Ծա՛մանեցուք ընդ առա՛ջ վեհապի՛ն, և մըտցո՛ւք ի յա՛ռա՛ջասա նորա. զի՛ մի՛ մնասցուք ա՛րտաքս որպէ՛ս զկի՛մք կո՛ւսանն։ Պա՛յծառասցի՛ն լապտե՛րըք հո՛գւոց մերո՛ց, և՛ բազմեցուսցե՛ս ըզմեզ ընդ հրա՛ւիրեա՛լսըն ի կո՛չումն արքա՛յութեա՛ն ե՛րկնի՛ց։

Ո՞ր ի վե՛րդ ե՞ս քան զամե՛նայն ըզմի՛տս և ըզխո՛րհուրդս. փառա՛ց Թա՛գաւո՛ր խընա՛յեա ի մե՛զ։ Ո՞ր միա՛յն ուն՛ի՞ս զանմա՛հութիւն եւ զանե՛ղութի՛ւն. փառա՛ց՝՝։ Ո՞ր նը՛ստիս ի քրովբե՛ս երըո՛ւդութի՛ւն անբաժա՛նելի՛. փառա՛ց՝՝։ Ո՞ր երկը՛րպագեա՛լդ ե՞ս ի հրեչտա՛կաց եւ ի՛ մա՛րդկանէ՛. փառա՛ց՝՝։ Հոդ. Ո՛յն և նըման Հօր և Ո՛րդւոյ, Հոգվո՛ւդ անե՛ղ և համագոյ, բը՛ղխումըն Հօ՛ր անքը՛ննա՛բար, առաջ յՈրդւոյ ա՛ճառաբար. ի վե՛րնատունն այսօր ի՛ջեր, զՀոգիդ չնորհա՛ց քոց ալբուցեր. ա՛ւրբո և մե՛զ ո՛ղո՛ւ բմոլթեամբ ի բա՛ժակէդ ի՛մա՛ստութեա՛ն։ Է՛ից ստեղծող ամարա՛ծոց որ չբրջէի՛ր ի վերայ ջրոց, նո՛յն և ի ջո՛ւրսն աւա՛զա՛նին ի չնո՛րհել մեզ քո՛ւմ էակցին, զը՛գուես սի՛րով ապաւնակերպ, զմարդիկ ծնանե՛ս Աստուածակերպ. ա՛ւրբո՝՝։ Բա՛բուն վերնոյն իմանա՛լեաց, և ը՛ստորին այսը ըզդ·ալեաց, ո՛ր

մարգարէ՛ս տաս ի՞ հո՛վուաց, և ա՛ռաքեալս ի՛ ձըկնորսաց. ա՛նտառոր ըզմպաքսա՛ւորս, քարո՛զ բանիւ քո՛ւմ զհալածողս. ա՛մբրո՛ն”։

Հրե՛ւ չտակային ձայնիւն օրհնե՛ սցուք զամենասո՛ւրբ զերրորդութի՛ւնըն, փա՛ռաւորելով ըզհայր. որ վերակոչեա՛ց զամենե՛սեան ի մա՛հուանէ՝ յա՛նմահութի՛ւն։ Ե՛րգեցէք տեառն ե՛րգ նոր եկեղեցի՛ք սըրբեցեալո՛ց, Քրիստոսի երկը՛րպագելով. որ վերակոչեա՛ց զամե՛”։ Սը՛րբասաց ձայնիւն օրհնեսցո՛ւք, հո՛գեւորակա՛ն հընչմամբ գովե՛սցուք, սուրբ զհոգի՛ն փառաւորելով. որ վերահանգո՛յց զամե՛”։

Ըզքե՛զ կոյս և մա՛յր և բնակա՛րան Աստուա՛ծային ներմարդո՛ւթեանն, գոհա՛բանեմք և վերո՛ւնեմք զեղեալ վը՛րկող կենդա՛նուԹեան ազգի մարդկա՛ն. վասն որո՛յ ըզքեզ Աստուա՛ծածին և կո՛յս բա՛րեբանեմք ըզմա՛յր և զաղախին փըրկչի՛ն մե՛րոյ։ Ծընո՛ւնդըն Հօր և հին ա՛ւուրց անժա՛մանակն յաւիտենի՛ց, ժամանակա՛ւ յորովայնի՛ քում բնա՛կեցաւ և ի՛ Հօրէ ո՛չ մեկնեցաւ. վասն որո՛յ”։ Ծննա՛ւն ի քէն ի խաչ ե՛լեալ, ե՛ւ ի յաթոռ փառա՛ց ընդ Հո՛ր. անալգեա՛լ ի մարդկանէ, փառա՛տրուԹեա՛մբ էուԹեա՛մբ երկը՛րպագեալ. վասն որո՛յ”։ Ըզքե՞զ ոչ միա՛յն որդիք մարդկա՛ն, այլեւ վե՛րի՛ն զօրուԹիւնք.

Digitized by Google

դա՛ք անմարմնոց հոգեղինա՞ց հրեղինա՞ց գո՛ւարթնոց և հրե՛չտակաց, զո՞հաբանե՛ն և վերօրհնե՛ն և փա՛ռաւորեն ըզմայր և զաղա՛խին վերբկչի՞ն մե՞ր։

Բա՛նալի արքայութեան տըւա՞ւ հոգածի՞ն մա՞րդոյն, ո՛ւստի յառաջի՛ն ճաչակմանէն ա՛րտաքս անկեա՛լ ի յաւէ՛ժ կե՛նդա՞նո՞ւթեա՞՛ն՞ն. որ ձե՞ւա՛ցո՞՛յց մեզ սո՛վա՛ւ մըտանել ընդ դո՛ւռն անեղական դրա՞խի՞ն տեա՞ռն։ Գա՛ւազանաձե՞ւ երեւեալ եզիպտա՛կա՞ն ա՞զգին, յո՛ւցանելով ըզզօրութիւն սըրբո՛յ խաչին, յա՛վըշտակելո՛վ ըզգաւազա՛նըն դի՞ւթա՞՛կա՞՛՞ն. որ ձե՞ւա՛՛՞՞։ Դրո՛չմ ըզգայութեան օրինա՛կեա՛լ ի վերայ սեմո՛ց դրա՛նց նո՞ցա, ա՛ներկի՛ւղ պահե՛լով ըզժողովուրդն յանդըմա՛նկածա՛յխ սա՛տա՛կմա՛՞նէ՞՛՞ն. որ ձե՞ւա՛՛՞՞։

Փառք Հօ՞ր եւ Որդո՛ւ եւ Հոգւոյն Սրբոյ.

Գո՛վեցէ՞՛ք զՈրդին Աստուծոյ ա՛յսո՞ր ցնծութեա՛մբ ո՞ըդի՛՞ք աղամայ, որ եկն ի խը՛նդի՞ր եղծեա՛լ պատկերին. և գըտեա՛լ նո՞ըո՛գեաց ի փա՛ռս ա՛ռաջին պատմո՛ւճանի՛՞ն։

Այժմ եւ մի՛շտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Նո՞ը նորոգո՛ղ բնութեա՛ն մերոյ Յի՛սուս, որ ի խորհո՛ւրդ հը՞նո՛ւթեան մարդոյն զանալը՛տուզն այսո՛ը չորա՛ցո՞ւցե՛ը զթըրկենին. և՛ ըզմի՛զ ի՞ հնա՛ցեալ մեղա՛ց նո՛րոգեա՞ ի կեա՛նս անմա՛՞հ։

Digitized by Google

ՄԱՂԹԱՆՔ

Փառք հրաշափառ Գալստեան ՚՚ : (Տես ի Ծիւն . 42 :)

ՔԱՐՈՉ

Վասն գտանելոյ մեզ զչնորհս և զողորմութիւն ի բարեբար տեառնէ մերմէ՝ զՏէր աղաչեսցուք :

Տէ՛ր ողո՛րմեա՛ :

Վասն փրկելոյ զմեզ ի զրպարտութենէ մարդկան և յորոգայթից սատանայի՝ զՏէր աղաչեսցուք :

Վասն ամենայն անձանց քրիստոնէից և տանց հաւատացելոց՝ զՏէ՛ր աղաչեսցուք :

Վասն որք ի լերինս յայրս և ի փապարս բնակեալ են սուրբ հարքն մեր՝ զՏէր աղա :

Վասն որք ողմոսիւք և օրհնութեամբ կատարեն զամենայն ժամանակս կենաց իւրեանց՝ զՏէր աղա :

Վասն հոգւոցն : Եւ ևս միաբան : Զանձինս մեր : Ողորմեաց մեզ :

ԱՂՕԹՔ

Գոհանամք զքէն Տէր Աստուած մեր, որ զարթուցեր զմեզ ի հանգստենէ քնոյ չնորհիւ ողորմութեան քո : Զարթո զմիտս մեր արդարութեամբ առ քեզ Տէր Աստուած մեր, զի տեսցեն աչք մեր զփըրկութիւն քո : Նկեսցէ և բնակեսցէ առ մեզ Աստուածութիւն քո . և ողորմութիւն քո հովանի և պահապան լիցի ի վերայ պաշտօնէից քոց : Եւ զմեզ գծառայքս քո արժանի տար ի տուէ և ի գիշերի և յամենայն ժամու մտչա խորհիլ ի սէր պատուիրանաց քոց : Եւ

Digitized by Google

գոհանալով վառաւորել զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգի, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

Խաղաղութիւն ամենեցուն
Աստուծոյ երկրպագեսցուք

Կենդանարար զօրութիւն և աղբիւր անմահութեան, դու ես Քրիստոս Աստուած Փրկիչ մեր։ Որ չնորհեցեր մեզ ի մէջ գիշերի յառնել և խոստովան լինել առ քեզ վասն իրաւանց և արդարութեան քո։ Եւ այժմ աղաչեմք զքեզ Տէր Աստուած մեր, արա զմեզ արթուն և պատրաստ ի ժամ առաւօտու ընդ սուրբս քո։ Եւ ընդ նոսին գոհանալով վառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ Հոգւոյդ Սրբոյ, այժմ և միշտ և՚՚։

Ալէ՛լուիա. ալէ՛լուիա. ալէ՛լուիա։

Զի նա՞ ասաց, և եղեն. հրամայեաց և հաստատեցան։ Կարգեա՞ց զնոսա յաւիտեան. սահման եդ ոլք ոչ ա՞նցանե՞ն։

Ալէ։ Ի սկզբանէ՞ տէր զհիմունս երկրի հաստատեցեր. և գործք ձեռաց քոց ե՞րկինք են։ Նոքա՞ կորնչին, և դու կաս և մնաս յա՞ւիտեան։

Փա՞ռք և երր՚՚. Ա՞յժմ միշտ և՚՚։

Ալէլուիա. ալէ՛լուիա. ալէլո՛ւիա՞։

ՄԱՂԹԱՆՔ

Գոհութեամբ և ճշմարիտ խոստովանութեամբ անդադար վառաւորեմք զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգի, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Digitized by Google

կարգաւորութիւն հաստատեալ ամենեցուն աւետաւոր ժամուն : Որ կատարել է զհմն Որդւոյն Աստուծոյ . որ երեւեցաւ իւրոցընչեցին :

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս . ամէն :
Հայր մեր որ յերկինս ես " :

Լցաք աւետաւոր ողորմութեամբ քով . ցնծացաք և ուրախ եղաք զամենայն աւուրս կենաց մերոց :
Ուրախ եղաք փոխանակ : (Տես ի Թիւն . 46 :)

ՀԱՐՑ ԲԶ

Որ արարի՛չդ ես յաւի՞տեանից , և ստեղծե՞ր զարարած ամե՛նայն յո՞չընչէ . ըզքե՛զ օրհնե՞մք Աստուած հա՞րցըն մերո՞ց : Որ թագաւո՛րդ ես թա՛գաւո՞րաց . և չո՛րսհե՞ս բանա՛ւո՞ր կենդանի՞մարդ ի հո՛ղոյ . ըզքե՛զ " : Որ ապաւէ՛նդ ես մոլո՞րեա՞լոց . և՛ խնամե՞ս պատա՛ցեա՞լքս իքե՞զքո՛ տեսչութեամբդ . ըզք՛եզ օրհնե՞մք Աստուած հա՞ր : Գ . Ըզտէր օ՛րհնեցէ՞ք ե՞՛ւ բա՞րձր ա՞րա՛րէ՞ք ը՞զնա՛յ յա՛ւիտեա՞ն :

Փառք Հօ՛ր եւ Որդւոյ եւ Հոգւո՞յն Սրբոյ :

Օ՛րհնեցէ՞ք . Զթա՛գաւորն և՛զԱ՞ստո՛ւա՞ծն որ ներմա՛ միայնո՛յ վայելէ օ՛րհնութի՞ւն . ե՞՛ւ " :

Digitized by Google

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Ո՛րհնեսցէ՞. Զի՛ ծանո՞ւց մի՞զ աքա՛ղեալի խո՛րհո՛ւրդ Սո՛ւրբ Ե՞րրորդո՛ւթեան և զմի՛ Աստուածո՛ւթեանըն Քրիստո՞ս. ե՞՛ւ":

ՔԱՐՈՉ

Եկեալքս ամենեքեան ի սուրբ (Տես ի Թիւն. 52:)

Մեծացուցիչ ՃԶ

Զքեզ Հա՛յր յառաջ քան զյա՛ւիտեանս բարեբա՛նեն զա՛ք անմա՛րմնո՞ց հրե՛շտակաց, ձայնիւ երգո՛վ գոչեն և՛ ա՛ղաղակեն, Աստուա՛ծ աստո՛ւածոց և տէր տե՛րանց փըրկի՛չ գո՞ լո՛վ: Ա՛ռաքեցեր զբզքո՞ միածինըդ մարմնա՛նալ ի սո՛ւրբ կուսէն, և սնա՛յա՛տ ծընա՛նիլ յորո՛վայնէ՛ անապա՛կան, բա՛ռնալով ը՛զ մե՞ր նեղութի՛ւնս. Աստուա՛ծ":

Փառք Հօր եւ". Այժմ եւ միշտ":

Շնո՛րհք բարի՛ յԵրուսա՛ղէմ երե՛ւեցաւ հեթանո՛սաց. զի արարի՛չն յաւիտենի՛ց տըղայ ե՛ղեալ յորդէգրո՛ւթիւն կենա՛ց կոչէ. Ա՛ստուա՛ծ":

Քարոզ՝ Սուրբ զԱստուա": Աղօթք՝ Ընկալ Տէր: (Տես ի Թիւն. 55:)

Ողջմէա ՃԶ

Ա՛ւ ա՛մենեսեա՛ն դըժբաժ Քրի՛ստո՛ս թագաւո՛ր

Digitized by Google

խաղա՞ղո՞ւթեան. ը՛դքե՞զ ազա՛չեմք միա՞յն մարդասէ՞ր։ Ո՛րում այսօ՞ր վաճա՛ռեալ ցանկա՛յր հոգեւոյ և մա՞ ըմնով. մայր որդեսո՛վք խըռնքը խը՛նդրեր ըզրա՛ծրագոյն զփա՛ռս յերկրի՞ն կե՛նդանեա՞ց։

Փառք Հօր եւ՝. Այժմ եւ միշտ՝։

Տը՛ւողդ ըզկեա՛նս անմահ ա՛ռ քեզ ազազա՛կեմք և միա՛բան հայցեմք, չնո՛ւհեա և մեզ տէ՛ր կա՞լ ի յաչմէ՛ քումմէ՞։

ՔՀՐՈՋ

Եւկրպագեմք՝ (Տես ի Ծիւն. 58։)

Տէր յերկնից ՔՋ

Ը՛դքեզ օրհնեմք որ բա՞ չխոզդ ես բարո՛ւթեա՞նց, և հայցե՛մք որպէս ի՛ մա՞ըդասիրէ. ը՛նդ մո՛ր քո ընտրե՛լոցն զիմա՛նալի՞ ա՞ չխա՛րհն։ Զի՛ դու ես տէր յորմէ հա՛յցէ՞ր մա՛յրըն հաւատա՛ւ հանդերձ որդեսո՛վք սը՞ըրեցեալք ը՞նդ աչմէ քո զփառս և՛ յահեկէ. ընդ ո՛րս և մե՛ք ա՛ղաչեմք զի դա՛սեսցի՞ս ընդ սո՛ւրբըս քո՞։

Փառք Հօր եւ՝. Այժմ եւ միշտ՝։

Ա՛յլ դու բարձրեալ Փը՛րկիչ որ վասն մե՛ր խոնարհեցա՞ր, արժանի՛ ալա ը՛զմեզ ըմպել ըզրաժա՞կ պատուի՛րանի կե՛նաց քոց տէր. որով կացցո՛ւք յաչմէ՛ քումմէ ի հա՛ղորդեա՞լ քո՛ւմ պայծառա՞նն։

Digitized by Google

Փառք ի բարձունս (Տես ի Թիւն. 61։)

ԵՐԳ

Ի սկզբանէ տէր զերկիր հաստատեցեր. և գործք ձեռաց քոց երկի՞նք են։

Նոքա կորընչին և դու կաս և մնաս յաւի՞տեան՞։

Փառաւորեցուք և Աղօթք Գոհանամք ցՄանկունեաւք Նարեկացին (Տես ի 63 էն ց66 էջն։)

Մանկունք ԲՁ

Ա՞՛ծ՛լէ՛լո՛ւիա. ա՛լէ՛լո՛ւիա. ա՛ծ՛Ձ՛լէ՛լո՛ւիա՞։ Այսօր ը՛նդ զո՛րս ե՛րկնի՛ց հա՛մաձա՛յնեալ միաբանա՛կա՞ն ձա՞յնիւ ե՛րգե՞ք ա՛սե՛՛լով. ա՛՛՛։

Փառք Հօր եւ՛՛. Այժմ եւ միշտ՛՛։

Երկրա՛ւո՛րքս ը՛նդ ե՛րկնա՛յինսն, հո՛վեղէ՛նքս ընդ հրե՛ղէ՛՛՛նան. միաբանա՛կա՞ն ձա՞յնիւ ե՛ր՛՛։

Քարոզ՝ վասն խաղաղութեան։ Աղօթք՝ Սուրբ ես տէր. (Տես ի Թիւն. 67։)

Ապա սաղմոս ՃԳ. ողբաձայն ասա։

ԿՅ. Ի՞ոստովանութիւն և մեծ վայելչութիւն զգեցար. արկար զոյս որպէս զօձոց. ձգեցեր զերկինս որպէս խորան, և արկար ի վերոյ ջուրց զվերնայարկսն նորա։

ՓԽ. Ո՞ւրհնեա՛ անձն իմ զտէր. տէր Աստուած իմ

Digitized by Google

մեծ եղեր յոյժ։

Խաւսովանութիւն և մեծ վայելչութիւն զգեցար. արկաւ զլոյս որպէս զօձոց. ձգեցեր զերկինս որպէս խորան. և արկար ի վերայ ջուրց զվերնայարկս նորա։

Ո դընէ յամպս զգնացս իւր. և չրջի նա ի վերայ թեւոց հողմոց։

Ո արար զհրեշտակս իւր յոգիս. և զպաշտօնեայս իւր ի հուր կիզելոյ։

Հաստատեաց զերկիր ի վերայ հաստատութեան իւրոյ, զի մի սասանեսցի յաւիտեան։

Խորք որպէս զգեստ վերարկու է նորա ի վերայ լերանց կացցեն ջուրք։

Ի սաստէ քումմէ փախիցեն, և ի ձայնէ որոտալոյ քումմէ սարսեսցեն։

Ելանեն լեռնանան և իջանեն գաշտանան, ի տեղի յոր հաստատեցեր զնոսա։

Սահման եգեր և ոչ անցանեն. և ոչ ևս դառնան ի ծածկել զերկիր։

Առաքեցեր զաղբերս ընդ ծաղծաղս. ի մէջ լերանց գնասցեն ջուրք։

Արբուցանել զամենայն գազանս վայրի. յագեսցին ցիւք ի ծարաւս իւրեանց։

Անդ թռչունք երկնից բոյնս դիցեն. և ի միջոյ վիմաց տացեն ձայնս իւրեանց։

Արբուցանել զլերինս ի չտեմարանաց իւրոց. ի պտղոյ դործոց լցցի երկիր։

Digitized by Google

Բուսուցեր զիստ ի լերինս, զղալարի ի ծառայութիւն մարդկան։

Հաներ զհաց յերկրէ. գինի ուրախ առնէ, իւղ զուարթ, և հաց հաստատէ զսիրտ մարդոյ։

Ցաղեսցին ծառքն անտառի. և մայրքն Լիբանանու՝ զորս դու տնկեցեր։

Անդ թռչունք երկնից ձագս հանցեն. և բոյն արագիլ ապաւէն է նոցա։

Լերինք բարձունք են եղջերուաց, և վէմք ապաւէն նապաստակաց։

Արարեր զլուսին վասն ժամանակի. արեգակն ծաննաւ զժամ մտանելոյ իւրոյ։

Արարեր զխաւար՝ և եղև գիշեր. ի նմա գնան ամենայն գազանք անտառի։

Կորիւնք առիւծուց մռնչեն և յափշտակեն, և խնդրեն յԱստուծոյ զկերակուրս իւրեանց։

Ի ծագել արեւու ժողովին. և ի մորիս իւրեանց գաղաբեն։

Ելանէ մարդ ի գործս իւր. և ի վաստակս ձեռաց իւրոց մինչև յերեկոյ։

Որպէս զի մեծ են գործք քո տէր. և զամենայն ինչ իմաստութեամբ արարեր. և լցաւ երկիր ստեղծուածովք քովք։

Այս ծով մեծ և անդորր. ի սմա են սողունք՝ որոց ոչ գոյ թիւ. գազանք մեծամեծք և մանունք. ի սմա և նաւք գնան. վիշապն՝ զոր ստեղծեր խաղալ նովաւ

Digitized by Google

Ամենևքեան քեզ սպասեն, և դու տաս նոցա կերակուր ի ժամու։

Տաս դու նոցա և կերակրին. բանաս զձեռն քո. և լցուցանես զամենեսեան քաղցրութեան կամօք քո։

Դարձուցանես զերեսս քո ի նոցանէ՝ և խռովին. հանես զոգի քո ի նոցանէ. պակասին և ի հող դառնան։

Առաքես զոգի քո և ստեղծանին. և նորոգես զերեսս երկրի։

Եղիցին փառք տեառն յաւիտեան. տէր ուրախ եղիցի յստեղծածս իւր։

Ո հայի յերկիր՝ և տայ դողալ սմա. մերձի ի լերինս և ծխեսցին։

Սրհնեցից զտէր ի կեանս իմ. սաղմոս ասացից Աստուծոյ իմոյ մինչև եմ ես։

Քաղցր եղիցի նմա օրհնութիւն իմ, և ես ուրախ եղէց ի տէր։

Պակասեսցին մեղաւորք յերկրէ, ամբարիշտ մի՛ ևս գոյի ի սմա, օրհնեա անձն իմ զտէր։

Ալէլուիա՛ 0՛ըՓ։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի։

Գլ՝ 21. հմր 18։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ այգուցն իբրև դարձաւ անդրէն ի քաղաքն՝ քաղցեաւ։ Եւ տեսեալ զթզենի մի ի վերայ ճանապարհին՝ եկն ի նա՝ և ոչ եգիտ ի նմա, բայց միայն

տերև. և ասէ ցնա, մի՛ այսուհետև ի քէն պտուղ եղիցի ի յաւիտեան. և առժամայն չորացաւ թզենին։ Իրրև տեսին աշակերտքն՝ զարմացան և ասեն. թէ զիարդ վաղվաղակի ցամաքեցաւ թզենին։ Պատասխանի եւ Յիսուս՝ և ասէ ցնոսա. ամէն ասեմ ձեզ. եթէ ունիցիք հաւատս՝ և ոչ երկմտիցիք՝ ոչ միայն թզենւոյդ առնիցէք. այլ թէպէտ և լերինդ ասիցէք՝ բարձիր, և անկիր ի ծով՝ եղիցի։ Եւ զամենայն ինչ՝ զոր և խնդրիցէք յաղօթս հաւատովք՝ առնուցուք։ Եւ իրրև եկին ի տաճարն, մատեան առ նա՝ մինչդեռ ուսուցանէր, քահանայապետքն և ծերք ժողովրդեանն՝ և ասեն. որո՞վ իշխանութեամբ գործես զայդ. և ո՞վ եւ քեզ զիշխանութիւնդ զայդ։ Պատասխանի եւ Յիսուս և ասէ ցնոսա. հարցից և ես ձեզ բան մի. զոր եթէ ասիցէք ինձ, և ես ձեզ ասացից որով իշխանութեամբ առնեմ զայս։ Մկրտութիւնն Յովհաննու ուստի՞ էր. յերկնից, թէ ի մարդկանէ. և նոքա խորհէին ընդ միմս՝ և ասէին։ Եթէ ասեմք յերկնից՝ ասէ ցմեզ. իսկ ընդէր ոչ հաւատացիք նմա. և եթէ ասեմք ի մարդկանէ՝ երկնչիմք ի ժողովրդենէն. զի ամենեքին զՅովհաննէս իբրև զմարգարէ ունէին։ Պատասխանի եւ ասեն Յիսուսի և ասեն. ոչ գիտեմք. ասէ ցնոսա և նա. և ոչ ես ասեմ ձեզ՝ որով իշխանութեամբ առնեմ զայս։ Բայց զիա՞րդ թուի ձեզ՝ առն միոջ էին երկու որդիք. և մատուցեալ առաջինն ասէ՝ երթ այսօր գործեա յայգ-

ւոջ: Նա պատասխանի ետ և ասէ. երթամ տէր՝ և ոչ չոգաւ: Մատեաւ և առ միւսն և ասէ նոյնպէս. պատասխանի ետ և ասէ՝ ոչ կամիմ. բայց յետոյ զղջացաւ՝ և չոգաւ յայդին: Արդ՝ ո յերկոցունց արար զկամս հօրն. ասեն՝ յետինն. ասէ ցնոսա Յիսուս. ամէն ասեմ ձեզ. զի մաքսաւորք և պոռնիկք յառաջեցեն քան զձեզ յարքայութիւն երկնից: Զի եկն Յովհաննէս ճանապարհաւ արդարութեան՝ և ոչ հաւատացիք նմա. և մաքսաւորք և պոռնիկք հաւատացին նմա. և դուք տեսիք՝ և ոչ զղջացայք յետոյ հաւատալ նմա: Այլ առակ լուարուք. այր մի էր տանուտէր՝ որ տնկեաց այգի. և ցանդով պատեաց զնա՝ և փորեաց ի նմա հնձան. և չինեաց աշտարակ. և ետ զգնա ցմշակս, և գնաց ի տար աշխարհ: Իբրև մերձեցաւ ժամանակ պտղոյ՝ առաքեաց զծառայս իւր առ մշակսն՝ առնուլ զպտուղս նորա: Եւ կալեալ մշակացն զծառայս նորա, զոմն տանջեցին. զոմն սպանին. զոմն քարկոծեցին: Դարձեալ առաքեաց այլ ծառայս քառնապատիկ քան զառաջինսն. և արարին նոցա նոյնպէս: Ետես առաքեաց առ նոսա զորդի իւր և ասէ: Թերևս ամաչեսցեն յորդւոյ աստի իմմէ: Իսկ մշակքն իբրև տեսին զորդին, ասեն ընդ միմս՝ սա է ժառանգն. եկայք սպանցուք զսա. և կալցուք ըզժառանգութիւնն նորա: Եւ առեալ հանին զնա արտաքոյ քան զայդին՝ և սպանին: Արդ՝ յորժամ եկեսցէ տէր պղտզին՝ զինչ արասցէ մշակացն այնոցիկ:

Digitized by Google

Ասեն ցնա. զչարսն չարաւ կորուսցէ. և զայդին տացէ այլոց ուշակայ. ոլք տացեն նմա զպտուղս ի ժամու իւրեանց: Ասէ ցնոսա Յիսուս. չիցէ երբէք լնթերցեալ ձեր ի գիրս. զվէմն՝ զոր անարգեցին շինօղք, նա եղև գլուխ անկեան. ի տեառնէ եղև այս, և է զարհուրելի յաչս մեր: Վասն այսորիկ ասեմ ձեզ՝ զի բարձցի ի ձէնջ արքայութիւն Աստուծոյ. և տացի ազգի, որ առնիցէ զպտուղս նորա: Եւ որ անկցի ի վերայ վիմիս այսորիկ, փչրեսցի. և յոյր վերայ անկցի, հոսեսցէ զնա: Իբրև լուան քահանայապետքն՝ և դպիրք՝ և փարիսեցիք զառակս զայս, գիտացին թէ վասն նոցա ասաց: Եւ խնդրէին զնա ունել. բայց երկնան ի ժողովրդոցն, քանզի իբրև ըզՄարգարէ ունէին զնա: Պարձեալ պատասխանել ետ Յիսուս՝ և ասէ ցնոսա առակօք: Նմանեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի. որ արար հարսանիս որդւոյ իւրում: Եւ առաքեաց զծառայս իւր կոչել զհրաւիրեալսն ի հարսանիս. և ոչ կամեցան գալ: Պարձեալ առաքեաց այլ ծառայս՝ և ասէ. ասացէք հրաւիրելոցն. ահաւասիկ զճաշ իմ պատրաստեցի. զուարակք իմ և պարարակք զեհեալք են. և ամենայն ինչ պատրաստ է. եկայք ի հարսանիս: Եւ նոքա յուշացեալ գնացին. ոմն յագարակ իւր. և ոմն ի վաճառ իւր: Եւ այլք կալան զծառայս նորա թշնամանեցին, և սպանին: Իսկ թագաւորն իբրև լուաւ՝ բարկացաւ. և առաքեաց զզօրս իւր. և սատակեաց զսպանօղսն զայնոսիկ, և զքաղաքս նոցա այ-

բնաց։ Յայնժամ ասէ ցծառայս իւր. հարսանիքս պատրաստ են. և հրաւիրեալքն չէին արժանի։ Ելք՝ երթայք յանցս ճանապարհաց. և զորս միանդամ գտանիցէք՝ կոչեցէք ի հարսանիս։ Եւ ելեալ ծառայքն ի ճանապարհս. ժողովեցին զամենեսեան. զորս և գտին զչարս և զբարիս. և լցան հարսանիքն բազմականաք։ Եւ մտեալ թագաւորն հայել զբազմականսքն. ետես անդ զայր մի՝ որոյ ոչ էր զգեցեալ հանդերձ հարսանեաց։ Եւ ասէ ցնա. ընկեր՝ զիարդ մտեր այսր. զի ոչ ունէիր հանդերձ հարսանեաց. և նա պապանձեցաւ։ Յայնժամ ասէ ցսպասաւորսն. կապեցէք զդորա զոտս և զձեռս՝ և հանէք զդա ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ և կրճել ատամանց։ Զի բազումք են կոչեցեալք՝ և սակաւք են ընտրեալք։

Երդ Տճառն Ներսէսի վասն երկրորդի աւուրն արարչութեանն և վասն երկնային զօրացն։

Արարչակա՞ն բանին հրամա՞ն ի յերկրորդումն աւուր սկզբան. զի՞ւրն ի ջուրցըն բաժանեա՞ց հաստատութեամբ պալո՛ւնակեաց. որով զաչա՞ք հոգեղինա՛ց անջըրպետեաց ի հլեղինա՞ց. ընդ նոսի՞ն որդիք լուսո՞յ տուք օրհնութի՛ւն երբեա՛կ լուսո՞յն։

Բազմաչեա՞յ հոյլք քրովբէից երեքսրբեանըդ սրովբէից. աթոռք անեղ Աստուածութեանըն հաստա՛ղոյ երրորդութեանն. բարեխօս լիարուք առ տէր վասն մանկանց եկեղեցւոյ. ընդ նոսի՞ն որդիք լուսո՞յ տուք օրհնութի՛ւն երբեա՛կ լուսո՞յն։

Digitized by Google

Գերագո՛յն իշխանութիւնք և անփոփո՛խ միչտ տէրութիւնք անյաղթելի՛ սուրբ զօրութի՛ւնք ի յարքայիկն փառաւորութիւն. աղաչեցէ՛ք զտէրն ո՞զորմա՛ծ անտես չառնել զգործըս ձեռացն. ընդ նո՛ա՛:

Դասք անմարմնո՛ցըն պե՛տութեա՞նց հրեշտակապետք քա՛րձրութեանց. հոգիք հրեղէ՛նք և սպասաւո՛րք հրեշտակաց զինուորութիւնք. մաղթեցէ՛ք ըզտէրն տերանց վասըն մարդկան երկրաւորաց. ընդ նո՛ա՛:

Եւ երկնաւորա՛ց դասուց վերնոց օ՛րհնաբանից քոց զուարթնո՞ց. քաղցրասցի՛ առ քեզ գթած որ վասն մեր ձայն մաղթանաց. զօրս և տացե՛ս մեզ պահապա՞ն յայսմ հնաւ մինչ ի վախճան. ընդ նո՛ա՛:

Զօրութե՛նց և տէրութե՛նց իշխանութե՛անց և պետութե՛անց. և ամենա՛յն անուանելո՞ց որք ի յերկինս պաղատանօք. ընկալ Քրիստո՛ս ուրախութե՛ամբ զմեզ յօր մահու և յարութե՛ան. ընդ նոսի՛ն օրհնել հոգւով զքեզ ընդ հօր վառատրե՛լո՛վ:

Քարող. Խնդրեսցուք. Կեցո: Աղօթք՝ Փառ ամենաղօր և հրաչալի դալստեանդ: (Տես ի Քհն, 75:)

Զմաղմանքն և դալստեանն այս մինչև ի յութբաթ օրն: (Իսկ յայս երից աւուրս արևագալից կանոն ոչ գոյ, և ոչ Տէր ամենակալի, և ոչ Պատարագ մատուցանելոյ, և ոչ մեծ քաւոլից և ալօթից): Ճաշուն՝ վերջիք Ալտմայսըն ասացեալս. վինի՝ Հանգստեան Շարականն, և Հոգւոց: Նահ. Սուրբ Աստուած՝ որ եհիր և գալոց:

Կարգաւորութիւն հասարակաց աղօթից եբեւկոյի ժամուն : Որ կատարի ի դէմ Որդւոյն Աստուծոյ . որ էջ ի խաչէն և պատեալ պատառակալաւ՝ եդաւ ի գերեզմանի :

Օրհնեալ Տէր մեր Ցիսուս Քրիստոս . ամէն .
Հայր մեր որ յերկինս ես" :

Ես առ Աստուած կարդացի , և նա լուաւ ինձ յերեկոյն՝ ի վաղորդեայն՝ և ի հասարակ աւուր :

Սպասէի Աստուծոյ իմոյ , և ակն ունէի կենարարին . որ փրկէ զծառայս իւր և կեցուցանէ :

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ :

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Եւ ես խաղաղութեան զէր աղաչեսցուք ընկալ կեցո և ողորմեա :

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Խաղաղութիւն ամենեցուն :

Սաղմոս ՀԵ :

Խոնարհեցի տէր և ապրեցայ՝ (Տես ի Թիւն . 101 :)

ՄԱՂԹԱՆՔ

Օրհնեալ տէր՝ որ բնակեալդ ես՝ (Տես ի Թիւն . 176 :)

Քարոզ և Մաղթանք Հասեալքի՝ (Տես ի Թիւն . 107 :)

Digitized by Google

Մեսեդի ։

Բերան արդարոյ պատմէ զիմաստութիւն. և լեզու նորա խօսեսցի զիրաւունս ։

Մի՛ նախանձիր ընդ չարս. և մի՛ ընդ այնոսիկ՝ որք գործեն զանօրէնութիւն ։

Ընթերցուածս ի ծննդոց ։
Գլ՝ 1 ։

Ի սկզբանէ արար Աստուած զերկինն և զերկիր ։ Եւ երկիր էր աներևոյթ և անպատրաստ. և խաւար ի վերայ անդնդոց. և Հոգի Աստուծոյ չրջէր ի վերայ ջրոց ։ Եւ ասաց Աստուած. եղիցի լոյս. և եղև լոյս։ Եւ տեսս Աստուած զլոյսն զի բարի է. և մեկնեաց Աստուած ի մէջ լուսոյն և ի մէջ խաւարին ։ Եւ կոչեաց Աստուած զլոյսն տիւ. և զխաւարն կոչեաց գիշեր. և եղև երեկոյ՝ և եղև վաղորդեան, օր մի ։ Եւ ասաց Աստուած. եղիցի հաստատութիւն ի մէջ ջրոցդ. և եղիցի մեկնիլ ի մէջ ջուրցդ, և ջուրց. և եղեւ այնպէս ։ Եւ արար Աստուած զհաստատութիւնըն. և անջրպետեաց Աստուած ի մէջ ջրոյն, որ էր ի ներքոյ հաստատութեանն. և ի մէջ ջրոյն, որ ի վերոյ հաստատութեանն ։ Եւ կոչեաց Աստուած զհաստատութիւնն երկինն. և տեսս Աստուած զի բարի է. և եղև երեկոյ՝ և եղև վաղորդեան, օր երկրորդ ։ Եւ ասաց Աստուած. ժողովեսցին ջուրքդ որք ի ներքոյ երկնից ի ժողով մի. և երևեսցի ցամա-

Digitized by Google

քըն. և եղև այնպէս, և ժողովեցան ջուրքն, որք ի
ներքոյ երկնից ի ժողովս իւրեանց. և երևեցաւ ցա-
մաքն: Եւ կոչեաց Աստուած զցամաքն երկիր. և
զժողովս ջուրցն կոչեաց ծով. և հառս Աստուած զի
բարի է: Եւ ասաց Աստուած. բղխեսցէ երկիրը բզ-
բանջար խոտոյ. սերմանել սերմն ըստ ազգի և ըստ
նմանութեան. և ծառ պտղաբեր՝ առնել պտուղ ըստ
ազգի իւրում. որոյ սերմն իւր ի նմին ըստ ազգի ի
նմանութիւն ի վերայ երկրի. և եղև այնպէս: Եւ
հան երկիրը զբանջար խոտոյ. սերմանել սերմն ըստ
ազգի և ըստ նմանութեան. որ է ի վերայ երկրի. և
փայտ պտղաբեր՝ առնել պտուղ. որոյ սերմն իւր ի
նմին ըստ ազգի ի վերայ երկրի. և հառս Աստուած
զի բարի է: Եւ եղև երեկոյ՝ և եղև վաղորդեան,
օր երրորդ: Եւ ասաց Աստուած. եղիցին լուսա-
ւորք ի հաստատութեան երկնից ի լուսաւորութիւն ի
ի վերայ երկրի. և մեկնել ի մէջ տունջեան և ի մէջ
գիշերոյ. և եղիցին ի նշանս, և ի ժամանակս. և յա-
ւուրս. և ի տարիս: Եւ եղիցին ի լուսաւորութիւն ի
հաստատութեան երկնից ծագել յերկիր. և եղև այն-
պէս: Եւ արար Աստուած զերկուս լուսաւորսն մե-
ծամեծս. զլուսաւորն մեծ՝ յիշխանութիւն տունջեան.
և զլուսաւորն փոքր՝ յիշխանութիւն գիշերոյ. և զաս-
տեղս: Եւ եդ զնոսա Աստուած ի հաստատութեան
երկնից. լուսաւոր լինիլ յերկիր: Եւ իշխել տուբն-
ջեան և գիշերոյ. և մեկնել ի մէջ լուսոյն և ի մէջ
խաւարին. և հառս Աստուած զի բարի է: Եւ հ-

Digitized by Google

ղեւ երեկոյ՝ և եղև վաղորդեայն, օր չորրորդ։ Եւ ասաց Աստուած. հանցեն ջուրք զեւունս չնչոց կեն-
դանեաց. և թռչունս թեւաւորս ի վերայ երկրի ըստ հաստատութեան երկնից. և եղև այնպէս։ Եւ ա-
րար Աստուած կէտս մեծամեծս. և զամենայն չունչ զեւնոց կենդանեաց, զոր հանին ջուրք ըստ ազգի իւր-
եանց. և զամենայն թռչուն թեւաւոր ըստ ազգի. և ե-
տես Աստուած զի բարի են։ Եւ օրհնեաց զնոսա Աստուած. և ասէ. աճեցէք. և բազմացարուք. և լցէք
զջուրսդ ովք ի ծովս. և թռչունքդ բազմասցին ի վե-
րայ երկրի։ Եւ եղև երեկոյ՝ և եղև վաղորդեայն, օր հինգերորդ։ Եւ ասաց Աստուած. հանցէ երկիր
չունչ կենդանի ըստ ազգի չորքոտանի. և սողունս, և գազանս երկրի ըստ ազգի. և եղև այնպէս։ Եւ
արար Աստուած զգազանս երկրի ըստ ազգի. և զա-
նասունս ըստ ազգի. և զամենայն սողունս երկրի ըստ ազգի իւրեանց. և տես Աստուած զի բարի են։
Եւ ասաց Աստուած. արասցուք մարդ ըստ պատկե-
րի մերում և ըստ նմանութեան, և իշխեսցէ ձկանց ծովու. և թռչնոց երկնից. և անասնոց. և ամենայն
երկրի. և ամենայն սողոց՝ որք սողին ի վերայ երկ-
րի։ Եւ արար Աստուած զմարդն ի պատկեր իւր. ըստ պատկերի Աստուծոյ արար զնա. արու և էգ ա-
րար զնոսա։ Եւ օրհնեաց զնոսա Աստուած՝ և ասէ. աճեցէք՝ և բազմացարուք՝ և լցէք զերկիր. և տիրե-
ցէք զնմա. և իշխեցէք ձկանց ծովու. և թռչնոց երկ-
նից. և ամենայն անասնոց. և ամենայն երկրի. և

Digitized by Google

ամենայն մարդոց՝ որք մարդին ի վերայ երկրի։ Եւ ա-
սաց Աստուած. ահա տուի ձեզ զամենայն խոտ
սերմանելի սերմանել սերմն, որ է ի վերայ ամենայն
երկրի. և զամենայն փայտ որ ունիցի ինքեան պըտ-
ուղ սերման սերմանելոյ, ձեզ լիցի ի կերակուր։
Եւ ամենայն գազանաց երկրի. և ամենայն թռչնոց
երկնից. և ամենայն սողոց՝ որք սողին ի վերայ երկ-
րի՝ որ ունիցի յոգի կենդանի. և ամենայն խոտ դա-
լար ի կերակուր. և եղև այնպէս։ Եւ եհան Աստ-
ուած զամենայն զոր արար, և ահա բարի են յոյժ.
և եղև երեկոյ և եղև վաղորդեայն, օր վեցերորդ։
Եւ կատարեցան երկինք և երկիր և ամենայն զարդ
նոցա։ Եւ կատարեաց Աստուած յաւուրն վեցերոր-
դի զգործս իւր՝ զոր արար. և հանգեաւ յաւուրն
եօթներորդի յամենայն գործոց իւրոց՝ զոր արար։
Եւ օրհնեաց Աստուած զօրն եօթներորդ, և սրբեաց
զնա. զի ի նմա հանգեաւ յամենայն գործոց իւրոց՝
զոր սկսաւ առնել Աստուած։ Այս է գիր սերածոց
երկնի և երկրի, յաւուր յորում արար Աստուած զեր-
կին և զերկիր։ Եւ զամենայն բանջար վայրի՝ մինչ-
չեւ լեալ էր ի վերայ երկրի. և զամենայն խոտ վայ-
րի՝ մինչչև բուսեալ էր, զի չև ևս էր տեղացեալ Տեա-
ռնն Աստուածն ի վերայ երկրի. և մարդ չէր՝ որ գոր-
ծէր զերկիր։ Բայց աղբիւր ելանէր յերկրէ՝ և ոռո-
գանէր զամենայն երեսս երկրի։ Եւ ստեղծ Տէր
Աստուած զմարդն հող յերկրէ. և փչեաց յերեսս նո-
րա շունչ կենդանի. և եղև մարդն յոգի կենդանի։

Եւ առնէաց Աստուած դրախտն յԵդեմ ընդ արեւելս, և եդ անդ զմարդն զոր ստեղծ։ Եւ բուսոյց ևս Տէր Աստուած յերկրէ զամենայն ծառ գեղեցիկ ի տեսանել՝ և քաղցր ի կերակուր. և զծառն կենացդ ի մէջ դրախտին, և զծառն գիտելոյ զգիտութիւն բարւոյ և չարի։ Եւ գետ ելանէր յԵդեմայ ոռոգանել զդրախտն. և անտի բաժանի ի չորս առաջս։ Անուն միոյն Փիսովն. նա է որ պատէ զամենայն երկիրն Եւիլատաայ. անդ ուր ոսկին է, եւ ոսկի երկրին այնորիկ ազնիւ. և անդ է սուտակն և ակն դահանակ։ Եւ անուն գետոյն երկրորդի Գեհովն. նա պատէ զամենայն երկիրն Սիէօպացւոց։ Եւ գետն երրորդ՝ Տիգրիս. նա է որ երթայ յանդիման Ասորեստանի. և գետն չորրորդ Եւփրատէս։ Եւ էառ Տէր Աստուած զմարդն, զոր արար. և եդ զնա ի դրախտին փափկութեան. գործել զնա և պահել։ Եւ պատուիրեաց Տէր Աստուած Ադամայ՝ և ասէ. յամենայն ծառոց որք են ի դրախտիդ՝ ուտելով կերիցես։ Բայց ի ծառոյն գիտութեան բարւոյ և չարի մի՛ ուտիցէք. զի յորում աւուր ուտիցէք ի նմանէ՝ մահու մեռանիցիք։ Եւ ասաց Տէր Աստուած, ոչ է բարւոք մարդոյդ միայն լինիլ. արասցո՛ւք դմա օգնական ըստ դմա։ Եւ ստեղծ ևս Տէր Աստուած զամենայն գազանս վայրի. և զամենայն թռչունս երկնից. և էած զնոսա առ Ադամ, և տեսանել զինչ կոչեսցէ զնոսա. և ամենայն չնչոյ կենդանւոյ, զինչ և անուանեաց Ադամ, այն անուն է նորա։ Եւ կոչեաց Ադամ անուանս ամե-

Digitized by Google

նայն անասնոց. և ամենայն թռչնոց երկնից. և ա-
մենայն գազանաց վայրի. բայց Ադամայ ոչ դտաւ օգ-
նական նման նմա: Եւ էարկ տէր Աստուած թըմ-
բութիւն ի վերայ Ադամայ, և ննջեաց. և էառ մի ի
կողից նորա և ելից ընդ այնր մարմին: Եւ չինեաց
տէր Աստուած զկողն զոր էառ յԱդամայ ի կին. և
էած զնա առ Ադամ: Եւ ասէ Ադամ. այս այժմիկ
ոսկր յոսկերաց իմոց. և մարմին ի մարմնոյ իմմէ. սա
կոչեացի կին. զի յառնէ իւրմէ առաւ: Վասն այնո-
րիկ թողցէ այր զհայր իւր և զմայր իւր. և երթիցէ
զհետ կնոջ իւրոյ: Եւ եղիցին երկուքն ի մարմին մի.
և էին երկոքեանն մերկ՝ Ադամ և կինն իւր. և ոչ ա-
մաչէին: Եւ օձն էր իմաստնագոյն քան զամենայն
գազանս որ ի վերայ երկրի, զոր արար տէր Աստ-
ուած. և ասէ օձն ցկինն. զի՞ է զի ասաց Աստուած,
թէ յամենայն ծառոց որք իցեն ի ներքս ի դրախտի
այդր՝ մի՛ ուտիցէք: Եւ ասէ կինն ցօձն. ի պտղոյ
ծառոց դրախտիդ կերիցուք: Բայց ի պտղոյ ծառոյն,
որ է ի մէջ դրախտին, ասաց Աստուած, մի՛ ուտի-
ցէք ի նմանէ. և մի՛ հուպ լինիցիք՝ զի մի՛ մեռանի-
ցիք: Եւ ասէ օձն ցկինն. ոչ երթէ մահու մեռանի-
ցիք: Զի գիտէր Աստուած, թէ յորում աւուր ուտի-
ցէք ի նմանէ, բանայցին աչք ձեր. և լինիցիք իբրև
զԱստուածս. ճանաչել զբարի և զչար: Եւ եառնս
կինն, զի բարի էր ծառն ի կերակուր. և հաճոյ ա-
չաց հայելոյ. և գեղեցիկ ի տեսանել. և էառ ի պտղոյ
նորա և եկեր. և ետ առն իւրում ընդ իւր, և

Digitized by Google

կերբին : Եւ բացան աչք երկոցունցն . և գիտացին զի մերկք էին . և կարկեցին տերեւս թզենւոց . և արարին իւրեանց ծիածանեաք : Եւ լուան զձայն տեառն Աստուծոյ ի պրպտիլ անդ ընդ երեկս . և թաքուցան Ադամ և կին իւր յերեսաց տեառն Աստուծոյ՝ ի մէջ ծառոց դրախտին : Եւ կոչեաց տէր զԱստուած զԱդամ . և ասէ ցնա . ո՞ւր ես : Եւ ասէ . լուայ զձայն քո ի դրախտի աստ՝ և երկեայ . զանգիտ եղէ՛ և թաքեայ : Եւ ասէ ցնա . ո՞ պատմեաց քեզ թէ մերկ ես . բայց թէ ի ծառոյն՝ յորմէ պատուիրեցի քեզ անտի և ևթ չուտել , կերեր ապտելոք ի նմանէ : Եւ ասէ Ադամ . կինս զոր ետուր ընդիս՝ տա ետ ինձ ի ծառոյ անտի և կերի : Եւ ասէ տէր Աստուած ցկինն . ընդէ գործեցեր գայդ . և ասէ կինն . օձն խաբեաց զիս , և կերի : Եւ ասէ տէր Աստուած ցօձն . վասնանակ զի արարեր դա պայն , անիծեալ լիցիր դու յամենայն անասունս և յամենայն գազանս երկրի . ի վերայ բանիցաց և որովայնի քոյ գնասցես . և հող կերիցես զամենայն աւուրս կենաց քոց : Եւ եղիցի թշնամանիմ ի մէջ քո և ի մէջ կնոջդ . և ի մէջ զաւակի քո և ի մէջ զաւակի նորա . նա ապստեցէ քեզ գլխոյ . և դու ապստեցցես նորա զարշապարս : Եւ կնկինն ասէ . բազմացուցանելով բազմացուցից զերծումունքիւնս քո և զհնծումունքիւնս . տրտմութեամբ ծնցիս որդիս . և առ այր քո դարձ քո . և նա տիրեսցէ քեզ : Եւ ցԱդամ ասէ . վասնանակ զի լուար ձայնի կնոջդ քոյ . և կերեր ի ծառոյ անտի , յորմէ պատ-

Digitized by Google

ուխտեցի քեզ մինչեւ անտի չառնել. և կերիր ի նմանէ, անիծեալ լիցի երկիր ի գործս քո. տրտմութեամբ կերիցես զնա զամենայն աւուրս կենաց քոց։ Փուշ և տատասկ բուսուսցէ քեզ. և կերիցես զբոնջոյր վայրի։ Քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո. մինչեւ դարձցիս յերկիր, ուստի առար. զի հող էիր և ի հող դարձցիս։ Եւ կոչեաց Ադամ զանուն կնոջ իւրոյ կիւանս. զի նա է մայր ամենայն կենդանեաց։ Եւ արար Աստուած Ադամայ և կնոջ նորա հանդերձս մաշկեղէնս, և զգեցոյց զնոսա։ Եւ ասէ տէր Աստուած. ահա Ադամ եղև իբրև մի ի մեզ՝ դիտել զբարի և զչար. և արդ՝ գուցէ ձգիցէ զձեռն, և առնուցու ի ծառոյն կենաց. ուտիցէ, և կեցցէ յաւիտեան։ Եւ եհան արձակեաց զնա տէր Աստուած ի դրախտէ անտի փափկութեան՝ գործել զերկիր՝ ուստի առաւ։ Եւ եհան զԱդամ, և բնակեցոյց յանդիման դրախտին փափկութեան. և հրամայեաց Քրովբէից, և բոցեղէն սրոյ չուրջանակաւ պահել զճանապարհն ծառոյն կենաց։

Ընթերցուածս Ճառակաց։
Գլ՝ 1։

Ճանապէհ պիտաստութիւն և պիտաստ. իմանալ ըզբանին հանճարոյ։ Ընդունիլ զդարձուածս բանից, ի սիրտ առնուլ զապաշխարութիւն նչանարիւս. և ուղղել զիբառունս։ Զի ասացէ անմեղաց պիտոյապետութիւն, մանկանց առաւելս զմիտս և զհանճար։ Որոց իբրև

լուիցէ իմաստունն, իմաստնագոյն լիցի. իսկ որ հանճարեղն է, զառաչնորդութիւն ստացցի: Ի միտ առ-ցէ զառակս՝ և զբանս խորհուրդս, զճառս իմաստնոց՝ և զառակս նոցա: Սկիզբն իմաստութեան երկիւղ տեառնըն. հանճար բարի ամենեցուն՝ որք առնեն զնա: պաշտօն բարի առ Աստուած սկիզբն գթածութեան. զիմաստութիւն և զիրատ ամպարիշտք անգոյանեն: Լաւ ծրդեակ խրատու հօր քոյ՝ և մի՛ մերժեր զօրէնս մօր քոյ: Զի պատկ չնորհաց ընկալցիս ի գլուխ քո. և մանեակ ոսկի ի պարանոցի քում:

Ընթերցուածս ցեւսայեայ Մարգարէ է:
Գլ՝ 40:

Ա խիթարեցէք՝ մխիթարեցէք զժողովուրդ իմ, ասէ Աստուած: Քահանայքդ խօսեցարուք ի սիրտ Երուսաղէմի. և մխիթարեցէք զդա. զի լի եղև տառապանօք. թողեալ լիցին գմա մեղք իւր. զի ընկալաւ ի ձեռանէ տեառն կրկին զհատուցումն մեղացն իւրոց: Ձայն բարբառոյ յանապատի. պատրաստ արարէք ըզճանապարհն տեառն. և ուղիղ արարէք զշաւիղս Աստուծոյ մերոյ: Ամենայն ձորք լցցին. և ամենայն լերինք և բլուրք խոնարհեսցին. և եղիցին ամենայն դժուարինքն ի դիւրինս. և տառապարքն ի դաշտս: Եւ երևեսցին փառքն տեառն. և տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ՝ զի տէր խօսեցաւ: Ձայն՝ որ ասէ՝ գոչեա. և ասեմ, զինչ գոչեցից. գոչիչ՝ ամենայն մարմին խոտ է. և ամենայն փառք մարդոյ

իբրև զծաղիկ խոտոյ։ Յամաքեցաւ խոտն. և թօթափեցաւ ծաղիկն նորա. զի ոդի տեառն չնչեաց ի նա. արդարև՝ խոտ է ժողովուրդս այս։ Յամաքեցաւ խոտն. և թօթափեցաւ ծաղիկն. և բան տեառն մնայ յաւիտեան։

Ասէ Ուղիղ եղեցեն ասա։

ԿԱՐՈՋ

Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեսցուք։

Աղաչեսցուք զամենակալն Աստուած՝ զհայր տեառնըն մերոյ Յիսուսի Քրիստոսի զթագաւորն խաղաղութեան յաղագս խաղաղութեան. և վասն միայնոյ տուրբ կարծուղիկէ և առաքելական Եկեղեցւոյ. զի զբազում ամս խաղազութեամբ տացէ մեզ տէր Աստուած մեր, և զթագաւորս խաղաղարարս առաքեսցէ առ մեզ, վասն մեծի տուրբ և ահաւոր անուան իւրոյ. զպետս գաւառաց, զզօրավարս, զզօրագլուխս, զժողովուրդս, զմուտս, և զելս մեր խաղաղութեամբ պահեսցէ. և զամենայն պատերազմունս թշնամւոյն խորտակեսցէ ի մէնջ. տէրն ամենակալ կեցուսցէ և ողորմեսցի։

Չերեկս մերձեալ՝ և զառաջիկայ գիշերս խաղաղութեամբ անցուցանել հաւատով. [ի տեառնէ խնդրեսցուք։

Չհրեշտակ խաղաղութեան պահապան ան"։
Չքաւութիւն և զթողութիւն յանցանաց"։
Չարբոյ խաչին մեծ և կարող զօրութիւնն"։
Եւ ևս միաբան"։ Չանձինս"։ Ողորմեաց"։

Digitized by Google

Աղօթք՝ Լօւթ Հայնից և այլն. ցՇաբաթականն Համաքա-
Հի. (Տես ի 110 էն ց113 Թիւրան։)

Համաքահի՝ ԹՁ

Ո՛ր յանէից գոյացո՛ւցեր զքո զարարա՛ծս ի սկզբ-
բանէ՛. ի պատկե՛ր Աստուածո՛ւթեանդ քո ստեղ-
ծեր մա՛րդ ի հողոյ. ժառանգել նը՛մա՞ զանապա՛տում
ըզկեա՛նան։ Ի՛սկ պատրանո՞ք բանաւա՛րկուի՞ն ի
դրախտէ՛ն արտաքս անկեա՛լ. ի յաւէ՛ժ կենդանո՛ւ-
թեանըն մա՞հաւիք պղո՛տով մեռեալ, մե՛րկացաւ
քզփա՞ռս անը՛ատուեր լուսո՛յն։ Ա՛յլ դու վրկի՛ չ
բարե՛բար ոք մարմնացա՛ր ի սուրբ կուսէ՛ն, և հեղ-
մա՛մբ արեա՛նդդ քո բարձե՛ր պանցանաս նա՞խաստեղ-
ծին, վրկեցով ը՛զմի՞զ յանի՛ծից նորա։ Փառք
Հօր եւ”։ Ո՛ր ըստ պատեհա՛ց նախա՛հօրըն յանձն
առի՛ն յօժարութեամբ ընկենլ զբաժա՛կն չարչա՛րա-
նաց ընդ քե՛զ որդիքդ՛ն Ջերեմեայ. չնո՛րհեա մե՛զ
տէ՞ր ըզբաժակ քո՛ վրկութեա՛ն։ Այժմ եւ միշտ”։
Ի՛ միւսանգամ քո գալո՛ստեանըն յորժամ գա՛ս դա-
տել զերկի՛ր, ընդ նոսին դասա՛ւորեա ըզմե՛զ ի
փառս ա՛ջակողմեանն. որով հանցո՛ւք քեզ գօրհնո՛ւ-
թի՞ւն յա՛ղբատաւ յաւի՛տեանի՞ն։

Քարոզ՝ վասն խաղաղութեան։ Աղօթք՝ Հայր գը-
թած. (Տես ի Թիւն. 177։)

Digitized by Google

Ապա սկսանիցեն ձայնիլ առաղագի Սաղմոս կդ ։

կց. Լուր մեզ Աստուած Փրկիչ մեր, յոյս ամենայն ծագաց երկրի և որ ի ծով հեռի ։

փե. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիօն, և քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ ։

Լուր աղօթից իմոց, զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ ։

Բանք անօրինաց զօրացան ի վերայ մեր, և զամբարշտութիւնս մեր դու քաւեսցես ։

Երանի զոր ընտրեցեր և ընկալար, և բնակեսցին ի գաւիթս քո ։

Լցցուք մեք ի բարութենէ տանն քո, սուրբ է տաճար քո սքանչելի արդարութեամբ ։

Լուր մեզ Աստուած Փրկիչ մեր, յոյս ամենայն ծագաց երկրի և որ ի ծով հեռի ։

Ո պատրաստէ զլերինս զօրութեամբ իւրով, և ըզգեցեալ է զօրութիւն ։

Ո խաղեցուցանէ զխռովութիւն ծովու, և զձայն ալեաց նորա ցածուցանէ ։

Խռովեցին հեթանոսք, և երկեցեն բնակիչք երկրի ի նշանաց քոց ։

Ծագս առաւօտու և ընդ երեկոյս զուարճասցին. հայեցար յերկիր ածրեցուցեր զնա, և բազում արտորեր զմեծութիւն նորա ։

Գետն Աստուծոյ լի եղև ջուրբ. պատրաստ արարեր զկերակուր նորա ; զի այսպէս է պատրաստութիւնն ։

Digitized by Google

Զակէօս նորա արբեցուցեր, և բազում արարեր զարմըտիս նորա։

Ի ցօղել նորա զուարթ եղիցի բոյս նորա. օրհնեսցի պսակ տարւոյ քաղցրութեան քո։

Դաշտք քո լցցին պարարտութեամբ, պարարտասցին գեղեցկութիւնք անապատի։

Բլուրք զցնծութիւն զգեցցին, և զգեցցին խոյք մաքեաց։

Հովիտք բազում արասցեն զցորեան, աղաղակեսցեն և օրհնեսցեն։

Ալէլուիա Օ՛րթ՛։

Սրբոյ Աւետարանիս Ցիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի։

Գլ՝ 20. հմր 17

Տէրն մեր Ցիսուս Քրիստոս։

Իբրև ելանէր Ցիսուս յԵրուսաղէմ. էառ զերկոտասանան առանձինն. և ի ճանապարհին ասէ ցնոսա։ Ահաւասիկ ելանեմք յԵրուսաղէմ. և Որդի Մարդոյ մատնեսցի քահանայապետիցն՝ և դպրաց. և դատապարտեսցեն զնա ի մահ։ Եւ մատնեսցեն զնա հեթանոսաց՝ այպանել՝ և հարկանել՝ և ի խաչ հանել. և յերիր աւուր յարիցէ։ Յայնժամ մատեաւ առ նա մայր որդւոցն Զեբեդեայ ոլորովքն իւրովք հանդերձ. երկրպագանէր՝ և խնդրէր ինչ ի նմանէ։ Եւ նա ասէ ցնա. զինչ կամիս. ասէ ցնա. ասա, զի նստցին աղքա

Digitized by Google

երկու որդիքս իմ. մի ընդ աջմէ քումմէ՝ և մի ընդ ահեկէ յարքայութեան քումմ: Պատասխանի եւ ՅԻսուս և ասէ. ոչ գիտէք զինչ խնդրէք. կարէ՞ք ըմպել զբաժակն, զոր ես ըմպելոց եմ. կամ զմկրտութիւնն զոր ես մկրտելոց եմ մկրտիլ. ասեն ցնա՝ կարող եմք. Ասէ ցնոսա ՅԻսուս. զբաժակն իմ ըմպիցէք. և զմկրտութիւնն զոր ես մկրտելոց եմ, մկրտիցիք՝ բայց նստուցանել ընդ աջմէ և ընդ ահեկէ իմմէ՝ ոչ է իմ տալ. այլ որոց տուեալ է ի Հօրէ իմմէ: Եւ լուեալ տասանցն՝ բարկացան ի վերայ երկուցն եղբարց: ՅԻսուս կոչեաց զնոսա առ ինքն և ասէ. գիտէք, զի իշխանք ազգաց տիրեն նոցա. և մեծամեծքն իշխեն նոցա: Ո՛չ այնպէս իցէ և ի ձերում միջի. այլ որ կամիցի ի ձէնջ մեծ լինիլ՝ եղիցի ձեր պաշտօնեայ: Եւ որ կամիցի ի ձէնջ առաջին լինիլ՝ եղիցի ձեր ծառայ: Որպէս Որդի Մարդոյ ոչ եկն պաշտօն առնուլ՝ այլ պաշտել. և տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց:

Ձինչ ֆոլոչ. Խնդրեացուք: Կեցո Տէր՝ յոյնիւ:
Աղօթք. Թագաւոր խաղաղութեան:

Տես ի Թիւն. 114:

Եւ այլայլին ի խաչելութիւն:

Digitized by Google

ԱՒԱԳ

ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օգնութիւն Բկ։

Իսմ՛ատո՞ւն կո՛ւռանքըն ապ՛տրաստուեա՞լ է՛ղ լա՛պտե՞ըց, եկին ընդ ա՛ուա՞ջ երկնաւո՛ր փե՛սա՞յին վառեա՞լ լա՛պտե՞րօք։ Իսկ յիմա՛ըց կո՛ւսեցն ունա՛յնացեա՞լք է՛ի յի՞ւղոյ, ա՛նպատրաստ գը՛տա՞ն գալըստեա՛ն փե՛սա՞յին չիջեա՞լ լա՛պ՚՝ Վասն ո՛րո՞յ և մե՛ք պատրա՛ստեացո՛ւք է՛ղ հո՛գե՞ւոր, դի մըտցո՛ւք ի յաւա՛գա՞ստ անմա՛հ փե՛սա՞յին վառեա՞լ լա՛պ՚։

Ցորժամ յի՛րկնի՛ց վա՞ռօ՞ք գա՛ս Քրիստոս նըստիս յաթո՛ռ դա՛տո՛ղա՞կան և բաժանե՛ս զազգս ա՛մե՛նա՛ն՝ յն, յաջա՛կողմեանըն քո՛ւմ դա՞սեա ըզմե՛՛զ ը՛նդ օ՛ղեա՛ց՝ն։

Ձաւագա՛յթ վառա՛ց Հօ՛ր որդի միածին, որ ըզլոյսդ անվա՛յտափո՛ւ մարմնով ապ՛րագրեալ, ա յաօր

ի թափօ՛ր վառօք վա՛յելեցե՛ր։ Որ ա՛նտես սրովբէ՛յից անհա՛ւ ի վե՛ր քան զքաւան, ծառայի՛ կերպիւ պա՛տածածկեա՛լ ըզկոյտ անըստուերը, ա՛յօր ի թա՛" ։ Որ հրեղինա՛ցն անմերձենալի՛ հո՛ւր Աստուածութեա՛նըդ, ի հողե՛ղէնս խոնարհեա՛լ լոյսդ աղիւիական. ա՛յսօր ի թափօ՛ր վա՛" ։

Ո՛ւրա՛ խ լե՛ր Էակ՛ ղեռի՛ սուրբ ի՛ գա՛լ՛ատեա՛ն Սո՛ւրբ Մխա՛ծնին. ուրա՛ խ վեր և՛ ցընծա՛ հա՛նգերձ ա՛մենա՛յն սրբո՛ւք։ Ի՛նդ՛նդա՛ յո՛յժ դո՛ւստը՛ր վերի՛ն Սիո՛ւնի. ա՛հա թա՛գա՛ւո՛ր քո գայ նը՛ստեալ ի՛ յաւա՛նակի՛ նորոյ. ա՛րդար և՛ փը՛րկի՛չ վրկէ և՛ կեցո՛ւցանէ՛։ Ձը՛ւա՛րճացիր և՛ բերկրեա՛ ժողո՛վո՛ւրդ Ա՛ստուծոյ. մա՛տո՛ զոստը՛ս ծաղկեա՛լըս հաւա՛տով և՛ աստ. օ՛րհնեա՛լ ո՛ր եկիրը՛դ թագա՛ւո՛ր տիե՛զերա՛ց։

Պատա՛ւո՛ր ա՛րդա՛րո՛ւթեան հաստատո՛ւցեր ի մե՛զ ը՛զմի՛տը՛ա մեր. դատել զհոգի՛ և ըզմա՛րմի՛ն, արդարա՛ւսէ՛ս դա՛տմամբ ըստ օ՛րինա՛ց քո՛ց Քրի՛ստո՛ս։ Իսկ անի՛րա՛ւ դա՛տաւո՛րին որ ի՛ քաղա՛ք բնո՛ւթեա՛ն մե՛րոյ, ոչ ունելո՛վ զերկիւղ քո՛ ստ՛ւրբ, և ա՛նպատկառ ի՛ մա՛րդկա՛նէ ոչ ա՛ռնելո՛վ դա՛տ զը՛րկե՛լոյն։ Այլ ա՛նմա՛հ տո՛ւրբ փե՛սա՛յիդ ա՛յրի հոգի՛ ի՛մ պա՛դա՛տի. ուսո՛ զիրա-

Digitized by Google

ւո՛ւնս քո իմո՛ւմ դատաւո՛րի՞ս. առնե՛լ ինձ դատա՛ստա՛ն ա՛րդար ը՛նդ ոտիսի՞ մա՛ռնո՛յ իմո՛ց։ Մարի՛մ կո՞յս ա՞նարատ զանապա՛կան Փեսա՛յդ ա՛զա՞ չէա, զի հաչտեացի՛ ը՞նդ այրի՛ եղեալ հո՛գի՞ս, և՛ միաւորեացի դա՛ բնեա՛լ սի՛րով ընդ հե՛ռացեա՛լս իւ՛ նմա՞նէ։

Ամե՛նա՛յն ե՛րկիր տո՛ւք փա՞ռս ա՛՞յնմ, որ ե՛կն և փրկեաց ըզմե՛զ։ Ամե՛նա՛յն հո՛գիք ձայնի՛ւ ցնծո՛ւթեա՛՞մբ բարե՞բանե՞ցէք ըզտէ՛ր։ Զի եցո՛յց մե՛զ տէր զփրկո՛ւթիւն և ըզ կեա՛՞նս, յազգէ՛ տանն Ի՛սրայէլի՛։

Հոգ. Իջե՛ր տէ՛ր ողո՞րմութեա՛մբ քո յաչխա՛րհ, և ըզմեռեա՛լ բընո՛ւթի՞ւնս ի կեա՛՞նս վերափո՛խեցե՛ր։ Ելե՛ր տէ՛ր առ Հա՛յր փառո՛ք ի՛ յերկինս, և մըխիթարի՛չ առաքե՛լո՞ցն առա՛՞ քեցեր Սո՛ւրբ ըզՀոգի՛ւդ։ Բացե՛ր տէ՛ր այսօ՞ր ըզդանձդ ե՛րկնայինն, և բաչխեցե՛ր առաստա՛ղէ՞ս պարգև՛՞ս աղքատ բընութեա՛՞նս։

Գալո՛ց է միածինըն փողո՛վ և փա՞ռօք Հօ՛ր, և ըզհոգե՛ղէն բնութի՛՞ւնս հրեղէն նո՛րոգէ՞։ Լուսաւո՛ր են ճանապա՛րհք ա՞րդարո՛ց, և՛ ի քնութո՛ւր բանակըս հրե՛չտակա՛՞ց ամպո՛վք ընթանա՛՞ն։

Digitized by Google

ի վերի՛նն Երուսաղէ՛մ թըւին ամպովք ընդ ա՛ւազ տեա՞ռը՛ն յօ՛դս. և այնպէս յամենա՛յն ժա՞մ ընդ տեա՛ւըն լինի՞ն։

Ըզքեզ Ա՛ստուա՛ծա՛ծին որ վերօ՛րհնիս ի զօ՛րաց հրե՞շտա՞կա՞ց. ա՛զգ մարդկա՛ն կենդա՞նեա՛ց մեծա՛ցուցանե՛ք։ Ըզքե՛զ բնա՛կ հրե՛ղէն Աստուա՛ծո՛ւթեանն յիմանա՛լի զօրա՛ցն ե՞րա՞նեա՛լ, ա՛զգ”։ Ըզքե՛զ մա՞յր էմմանուէ՛լի, Մարգարէին յառա՛ջ գո՛չա՞կեա՛լ, ա՛զգ”։

Ի՞ վերա՛յ վիմի՛ հաւատո՛յ չի՞նե՛ցեր ըզքո՛ սուրբ զե՛կե՛ղե՛ցի. ըզսա՛ պա՞հեա՛ ի խաղա՞զուրթեա՛ն։ Ո՞ր չնորհեցե՛ր ողո՛ւմուխիւն ի բնա՞կարանըս հրե՛շտակա՛ց և՛ մարդկան քաւա՞րան. տո՛ւր սըմա զա՛նչա՛րժ քո՞ զխա՛զաղուխի՛ւն։ Ի՞ տաճարի՛ վիառա՛ց սը՞ըւո՛ւթեա՞ն քո՛ քեզ ե՛ըգեն մանկունք. տո՛ւր տոցա զառա՛տ քո՞ զո՛ղորմուխի՛ւն։

Փառք Հօ՛ր եւ Որդո՛ւ եւ Հոգւոյն Սրբոյ.

Ցորժամ զտա՛ղա՛նդ պա՛տուիրա՞նին պա՛հանջեա՛ցե՛ս ի՛ ծա՛ռա՛յիցն, ընդ կը՛ըկնաչահ քանկա՛ւրա՞ցըն արժա՛նացո ը՛զմե՛զ Քրի՞ստոս ուրա՛խութեա՛ն քո՛ յե՞րկի՛նս։

Այժմ եւ մի՛շտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ցորժամ կո՛չե՛ս ը՛զհրա՛ւի՞րեալն ի՛ սկըզբանէ՛

ա՛չխատ՝ ըհի ժառանգե՛լ ըզպատրա՛ստեա՛՛ն, չնորհեա մե՛զ ը՛նդ նո՛ր աչն զալըա՛յութի՛՛ւն քո՛՝ Քրի՛ստո՛՛ս։

ՄԱՂԹԱՆՔ

Փառք հրաշալիւտ Գալստեան՝՝։ (Տես ի Թիւն. 42։)

ԳԱՐՈՋ

Վասն ի վերուստ խաղաղութեան՝ և փրկութեան անձանց մերոց, զՏէր աղաչեացուք։

Տէ՛ր ողո՛րմեա՛՛։

Վասն յոխի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի ազաչանաց մերոց, զՏէր աղա։

Վասն քաւիչ և ներող լինելոյ Աստուծոյ ի վերայ մեղաց մերոց, զՏէր աղա։

Վասն թողլոյ մեզ զամենայն յանցանս մեր, զկամայ և զակամայ, զՏէր աղա։

Վասն զի մի ընդ խոտանան զտանիցիմք յաւուրն պատասխանատուութեան, զՏէր աղա։

Վասն հոգւոցն։ Եւ ևս միաբան։ Զանձինս մեր։ Միմեանց մեզ։

ԱՂՕԹՔ

Տէր տունչեան՝ և գոյացուցիչ գիշերոյ. որ արարեր զիս ի զբօսանս բարեգործութեան՝ ի փրկութիւն անձանց մերոց, և զգիշեր ի հանգիստ քնոյ՝ տըկարացեալ բնութեան մերոյ։ Իսկ այժմ զարթուցեալ

քացեր զբևրանս մեր յօրհնաբանութիւն՝ ահաւոր և փառաւորեալ անուանդ քում սրբոյ։ Ընկալ և այժմ զաղաչանս մեր, և յայղեաց մեզ ուղիղ հաւատով և առաքինասէր վարուք ի նոյն պաշտօն քո կանխել միշտ. և նովին կանոնիւս անդադար փառաւորիլ ըղՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգիդ. այժմ և միշտ և յա։

Խոստովանութիւն ամենեցուն
Աստուծոյ երկրպագեցուք

Ջքեզ, որ յամենայնի գթած և մարդասէր Տէրդ ես, աղաչեմք հանապազ, զի զօրացուցցես զմեզ օր ըստ օրէ կալ ի կարգի կրօնաւորութեան մերում։ Թեթեւացո Տէր՝ զքաղցր լուծ քո՝ զոր եդեր ի վերայ մեր. զի կարասցուք կալ ի պատուիրանի քում, և ըղհամոյան առնել առաջի քո յամենայն ժամ, ի տուէ և ի գիշերի։ Հլուչտակային երդակցութեամբ զքեզ օրհնել՝ զքեզ գովել, և քեզ գոհութիւն և փառս մատուցանել ամենազօր Տէրութեանդ. այժմ և միշտ և յա։

Ալէլուիա. ալէլուիա. ալէ՛լուիա։

Կացցէ՛ դիւոյ ընդ աջմէ քումմէ. ի հանդերձս ոսկեհուռս զարդարեալ և պա՛ճուճեալ։ Լո՛ւր դուստրը և տես. խոնարհեցո զունկն քո. մոռա զժողովուրդ քո և զտուն հօր քոյ. զի ցանկացաւ թագաւոր գե՛ղոյ քո՛յ։

Ալէ։ Տարցի՛ն թագաւորի կուսա՛ք գնետ նորա. և զընկերս նորա տարցի՛ն նմա։ Ածցի՛ն ցնծութեամբ

և ուրախութեամբ. և տարցին ի տաճար Թագաւորի. և փոխանակ հարց քոց եղիցին ո՞րդիք քո՞։

Փա՞ռք և երր՝՝. Ա՛յժմ և միշտ և՝՝։

Ա՛լէլուիա. ալէ՛լուիա. ալէլո՛ւիա՞։

ՄԱՂԹԱՆՔ

Սաղմոսիք և օրհնութեամբ և երգօք հոգևորօք անդադար փառաւորեմք զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգին. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտե՝՝։

Կարգաւորութիւն հաստատուաց աղօթից առաւօտու ժամուն։ Որ կատարի ի գէմն Որբուոյն Աստուծոյ. որ ե-բեւեցաւ իւղաբերեցն։

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն։ Հայր մեր որ յերկինս ես՝՝։

Լցեալ առաւօտու ողորմութեամբ քով. ցնծացաք և ուրախ եղաք զամենայն աւուրս կենաց մերոց։ Ուրախ եղաք փոխանակ։ (Տես ի Սիմ. 46։)

ՀԱՐՑ ՁԲ։

Ո՛ր պանչելիդ ես ի բա՛րձունըս տէ՛ր, և ահա՛ւ ո՛ր ի մէջ երկրի ա՛նուն քո տուրբ. օ՛րհնեալ ես Ա՛ստըւած հա՛րցըն մերո՛ց։ Ո՛ր գհաւատացեալսն ի քեզ պա՛հես՛լ, և ըղչա՛րսըն՝ն պատժեա՛լ գո՛ւծակ-

ցօ՛ք չրուիք սո՛ւգմամբ յանդուգնս. օ՛րհնեալ ես Ա՛ստուած հա՛յցըն մեր՝ց: Ո՛ր հաստա՛տեցեր ազգի մա՛րդկա՛ն հրա՛վ փորձիկ ի՛ ներկրորդա՛ծքն, պահեա անարա՛տ ը՛զքո փըրկեալքս. օ՛րհնեալ ես Ա՛ստո՛ւած": Գ. Ըզտէր օ՛րհնեցէ՛ք ե՞՛ւ բա՛րձր ա՛րա՛րէ՛ք ը՛զնա՛ յա՛ւիտեա՛ն: Ը՛րհնեցէ՛ք. Քահանա՛յըն յաւի՛տենի՛ց Քրի՛ստո՛ս, որ ե՛կն և փըրկեաց զամենա՛յն ա՛րարո՛ծս. ե՞՛ւ":

Փառք Հօ՛ր եւ Որդւոյ եւ Հոգւո՛յն Սրբոյ:

Օ՛րհնեցէ՛ք. Ո՛ր արա՛ր զա՛լըստեամբն ի՛ւրո՛յ զփըրկո՛ւթիւն որդւո՛ց մարդկա՛ն. ե՞՛ւ":

Այժմ եւ մի՛շտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Ե՛ացէ՛. Նո՛ր ա՛րա՛րա՛ծք պատուեա՛՛ք ի հրեշտա՛՛կա՛՛ց, զերծեա՛՛ք ի խաւարէ՛՛ ապա՛՛ւոյն. ե՞՛ւ":

ԳԱՐՈՂ

Ե՛լեալքս ամենեքեան ի տունըդ (Տես ի Քրւն. 52:)

Մեծացուցիչ ԲՁ

Ը՛ղ կուսութի՛ւնըդ քո՛՛ Աստուածա՛՛ծի՛՛ն ա՛՛նապա՛՛կ, զո՛՛ր ո՛՛չ բո՛՛ցո՛՛ւ կէ՛՛ զեա՛՛ց հուր Աստուածո՛՛ւթեանըն, մեծա՛՛ցո՛՛ւցանե՛՛ք: Ո՛՛ր յարգանդի՛՛ քումմանապա՛՛կ կանաչա՛՛ւ բնա՛՛կեցաւ Քրիստո՛՛ս Ա՛՛ստուա՛՛ծ, և՛՛ փը՛՛րկիչ ա՛՛նձանց մերո՛՛ց, մեծա՛՛ցո՛՛ւցանե՛՛ք:

Digitized by Google

Փառք Հօր եւ”. Այժմ եւ միշտ” :

Ա՛նհասանելի՛ տէրո՛ւնա՝կա՞ն յայտնութի՛ւն այ-
խարհի՛ ծագեցա՛ւ. անմատո՛յց լո՞ւսո՛ւն երկը՛ղպա-
դեացո՛ւք :

Քարոզ՝ Սուրբ զԱստուա” : Աղօթք՝ Ընկալ Տէր :
(Տես ի Թիւն. 55 :)

Ոգեմատ ԲՁ

Թի՞ւնս ի՞մ. Թադաւո՛ր փառաց քե՞զ սպասե՛ացո՛ւք
պատրա՛ստեա՞ք արթնութեամբ. ը՞նդառաջի՞ դ ո՞ր
գա՞ս ի դա՛տել գերկի՞ր : Անդադա՛ր վառեալ լապտե՛-
րըք հաւատոյ ը՛նդ դա՛սս իմա՛ստո՛ւն կուսանացըն,
մըտանել ի յառա՛ջաստ ընդ ե՛րկնաւո՛ր Փե՛սայի՛ն :

Փառք Հօր եւ”. Այժմ եւ միշտ” :

Փութացո՛ւք կանխեալ յա՛ռա՞ջ քան ըզձա՛յն
Աստուածայի՞ն բարբառոյն. զի՛ մի՛ մնասցուք ա՛ր-
տա՛ք ը՛ստ չիմա՞ն հի՛նգ կուսանա՛ց :

ՓԱՐՈՋ

Երկրպագեմք՝ (Տես ի Թիւն. 58 :)

Տէր յերկինից ԲՁ

Ո՛ր նըստիս ի քրովբէս Ա՛ստուա՞ծ բա՛նդ. ա՛յ-
սօ՞ր վասըն մե՛ր խոնարհութեամբ նը՛ստա՞ր ի՞ լերի-
նը՛ն Զիթենեաց. օ՛րհնեմք ըզքե՞զ անդադա՛ր եր-

Digitized by Google

գո՞վ: Ո՛ր համագոյդ ես խո՛ր̓հըրդոցըդ հա՛յրե՛նի, ա՛չակերտա՛ց քոց ծանո՛ւցե՛ր ը՞զխորհուրդ քո՛ գալստեանն. օ՛ր̓հնեմք ըզքե՛զ անդա՛դար երգո՛վ:

Փառք Հօր եւ". Այժմ եւ միշտ":

Ո՛ր ամենայնց ես արա՛րիչ և ըստեղծի՛չ կենդա՛նո՛ւթեան. ա՛յսօ՛ր ըզծածկեա՛լ խորհո՛ւրդ Երրորդութեանըդ յա՛յտնեցեր Եկեղե՛ցւոյ սըրբո՛յ քո. օ՛ր̓հնեմք ըզքե՛զ անդա՛դար երգո՛վ:

Փառք ի բարձունս՝ (Տես ի Թիւն. 61:)

ԵՐԳ

Տարցին թագաւորի կուսանք զհետ նորա. և զընկերս նորա տարցին նը՞մա՞:

Ածցին ցնծութեամբ և ուրախութեա՛մբ. և տարցին ի տաճար թագաւո՛րի՞:

- Քարոզ Փառաւորեացուք և Աղօթք Գոհանամք յՄահկունեքէ Շաբաթեանն (Տես ի 63 էն յ66 էջն:)

Մանկունք Գ3

Ա՛հաւո՛ր ես թա՛գաւոր քրովբէ՛ականն ձայնի՛ւ օր̓հնեալ. ի յերկի՞նս ի՛ յերկրի և յա՛մենայն ժամանակի՞: Ա՛հաւո՛ր ես թա՛գաւոր որ նո՛ր̓ոգես զքո՛ զարթաթածս. հաստատո՞ւս ի՛ հաւատս ի գի՛տութիւն ճըշմա՛րտութեա՛ն:

Digitized by Google

Փառք Հօր եւ". *Այժմ եւ միշտ*" :

Լուսաւո՛րեա զսիրտ՛ս Քրիստոս ի մի՛տս անդամ քո՛ պալատեանն. յորժամ ծագէ՛ս ի՛ յերկնից և նո՛րոգես զքո պա՛տկառ՝ծս :

Փառաւ՛ ՚ի սուրբ Հոգւոյն Աղօթք՝ Սուրբ ես սէր. (Տես ի Քիւն. 67 :)

Ա՛զգ սաղմոս Ե՛ն. ողբաձայն սաս :

ԿՅ. Տէրոջն քաղաւորի կուսանք գհետ նորա, և գընկերս նորա առջին նմա :

ՓԽ. Բղխեացէ սիրտ իմ զպատգամս քո բարի, և ասացից զգործս իմ քաղաւորի :

Լեզու իմ գրչէս գրիչ արագագիր դպրի, գեղեցիկ տեսլեամբ քան զամենայն որդիս մարդկան :

Սփռեցան չնորհք ի շրթունս քոց. վասն այսորիկ օրհնեաց զքեզ Աստուած յաւիտեան :

Ած զսուր ընդ ՚ի՛ջ քո հզօր, վայելչութեան և գ՛ոյ քոյ :

Լաւեա առղեա և քաղաւորեա՛ վասն ճշմարտութեան հեզութեան և արդարութեան, և առաջնորդեացէ քեզ աջանչելապէս աջ քո :

Նետք քո սրեալ են հզօր, և ժողովուրդք ի նեղքոյ քոյ անկցին, ի սիրտս թշնամեաց քաղաւորի :

Աթոռ քո Աստուած յաւիտենից յաւիտենից, գաւազան ուղղութեան՝ գաւազան արքայութեան քո :

Digitized by Google

Սիլեցեր զարդարութիւն, և տուեցեր զանօրէնութիւն։

Վասն այսորիկ էօծ զքեզ Աստուած Աստուած քո իւղով ուրախութեան, առաւել քան զընկերս քո։

Զմուռս և ատաչին և կասիա ի զգեստէ քումմէ, ի տաճարաց փղոսկրէից, ուստի ուրախ արարին զքեզ դստերք թագաւորաց ի պատիւ։

Կացցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ, ի հանգերձս ոսկեհուռս զարդարեալ և պաճուճեալ։

Լո՛ւր դուստր և տես՝ խոնարհեցո՛ դունկն քո. մոռա՛ զժողովուրդ քո և զտուն հօր քոյ. զի ցանկացաւ թագաւոր գեղոյ քո։

Սա ինքն է տէր քո՝ երկիրպագեսջ սմա, և դուստրը Ծուրայ երկիրպագեսջ սմա. և պատարագք երեսս սորա պաշտեսցեն մեծամեծք ի ժողովրդոց։

Ամենայն փառք դստեր թագաւորի ի ներքոյ, ի վերջաւորս ոսկեհուռն զարդարեալ և պաճուճեալ։

Տարցին թագաւորի կուսանք զհետ նորա, և զընկերս նորա տարցին նմա։

Ածցին ցնծութեամբ և ուրախութեամբ և տարցին ի տաճար թագաւորի, և փոխանակ հարց քոց եղիցին որդիք քո։

Կացուսցես զնոսա իշխանս ընդ ամենայն երկիր, և յիշեսցի անուն քո ընդ ամենայն ազգս ազգաց։

Վասն այսորիկ ժողովուրդք խոստովան եղիցին առ քեզ, յաւիտեան՝ և յաւիտեանս յաւիտենից։

Digitized by Google

Ալէլուիա՛ 0՛ըթէ

Սրբոյ Աւետարանիս Ցիսուսի Քրիստոսի որ ըստ Մարկոսի։

Գլ՝ 12. հմր 13։

Ս.ա Տէրն մեր Ցիսուս Քրիստոս։

Եւ առաքեն առ նա զոմանս ի Փարիսեցւոց անտի՝ և ի հերովիանոսաց, զի զնա որսասցեն բանիւ. և նոքա եկեալ հարցանէին զնա նենգութեամբ և ասէին։ Վարդապետ, գիտեմք զի ճշմարիտ ես. և ոչինչ փոյթ է քեզ զումեքէ. զի ոչ հայիս յերեսս մարդկան. այլ ճշմարտութեամբ զճանապարհն Աստուծոյ ուսուցանես. արդ՝ ասա մեզ՝ արժան է հարկս տալ կայսեր, թէ ոչ. տացո՞ւք, եթէ ոչ տացուք։ Եւ Ցիսուս գիտաց զկեղծաւորութիւն նոցա՝ ասէ ցնոսա. զի փորձէք զիս կեղծաւորք. բերէ՛ք ինձ դահեկան մի՝ զի տեսից. և նոքա բերին։ Եւ ասէ ցնոսա. ո՞յր է պատկերս այս, կամ գիր. և նոքա ասեն ցնա՝ կայսեր։ Պատասխանի եւ Ցիսուս, և ասէ ցնոսա. երթա՛յք, տո՛ւք զկայսերն կայսեր. և զԱստուծոյն, Աստուծոյ. և զարմացան ընդ նա։ Գան առ նա Սադուկեցիքն, որք ասեն՝ թէ չիք յարութիւն. հարցանէին ցնա և ասէին։ Վարդապետ, Մովսէս գրեաց մեզ. եթէ ուրուք եղբայր մեռանիցի և թողուցու կին. և զորդի ոչ թողուցու, առցէ եղբայր նորա զկին նորա. և յարուսցէ զաւակ եղբօր իւրում։ Արդ՝ եղբարք եօթն էին առ մեզ. առաջինն էառ կին՝ և մեռաւ. և ոչ

Digitized by Google

եթող զաւակ։ Եւ երկրորդն էառ զնոյն, և մեռաւ. և ոչ նա եթող զաւակ. նոյնպէս և երրորդն էառ զնոյն։ Եւ եօթանեքեան իսկ. և ոչ թողին զաւակ. յետ ամենեցուն մեռաւ և կինն։ Արդ՝ ի յարութեանն, յորժամ յառնիցեն, ոյր ի նոցանէ լինիցի կինն՝ զի եօթանեքեան կալան զնա կին։ Պատասխանի ետ Ցիսուս, և ասէ ցնոսա. ոչ վասն այդորիկ իսկ մոլորեալ էք. զի ոչ գիտէք զգիրս՝ և ոչ զզօրութիւնն Աստուծոյ։ Զի յորժամ ի մեռելոց յարիցեն, ոչ ալք կանայս առնեն, և ոչ կանայք արանց լինին. այլ իբրև զհրեշտակս իցեն՝ որք յերկինս են։ Ա յլ վասն յարութեան մեռելոց զի յառնեն, ոչ իցէ ընթերցեալ ձեր ի գիրսն Մովսէսի ի մորենւոջն. որպէս ասաց ցնա Աստուած. ես եմ, ասէ Աստուած Աբրահամու. Աստուած Իսահակայ. և Աստուած Յակոբայ։ Եւ ոչ է Աստուած մեռելոց՝ այլ կենդանեաց. և արդ՝ դուք յոյժ մոլորեալ էք։ Եւ մատուցեալ մի ոմն ի դպրացն՝ ասէր նոցա մինչ վիճէին. իբրև ետես եթէ բարւոք ետ նոցա զպատասխանին, եհարց ցնա և ասէ. որ պատուիրան է առաջին։ Եւ Ցիսուս ասէ ցնա. առաջին քան զամենայն, լուր Իսրայէլ, տէր Աստուած մեր՝ տէր մի է։ Եւ սիրեսցես զտէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ՝ և յամենայն անձնէ քումմէ. և յամենայն մտաց քոց և յամենայն զօրութենէ քումմէ. այս է առաջին պատուիրան։ Եւ երկրորդ նման սմին. սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո. մեծ քան զսոսա այլ պատուի-

Digitized by Google

ըան ոչ գոյ։ Եւ ասէ ցնա դպիրն, բարւոք է Վարդապետ. ճշմարտութեամբ ասացեր՝ թէ մի է Աստուած՝ և ոչ գոյ այլ՝ բաց ի նմանէ։ Եւ սիրելն զնա յամենայն սրտէ՝ և յամենայն զօրութենէ՝ և յամենայն մըտաց. և սիրելն զընկերն իբրև զանձն, առաւել է քան զողջակէզս և զզոհս։ Եւ տեսեալ Յիսուսի թէ իմաստութեամբ ետ զպատասխանին, ասէ ցնա. չես հեռի յարքայութենէ Աստուծոյ. և ոչ ևս ոք իշխէր ինչ հարցանել ցնա։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ, մինչ ուսուցանէր ի տաճարին, զիարդ ասեն դպիրքն, եթէ Քրիստոսն որդի Դաւիթ է։ Եւ ինքն Դաւիթ Հոգւովն Սրբով ասէ. ասաց տէր ցտէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ, մինչև եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց։ Արդ՝ եթէ ինքն իսկ Դաւիթ զնա տէր կոչէ, զիարդ իցէ որդի նորա. և բազում ժողովուրդ լսէր նմա քաղցրութեամբ։ Եւ ասէր ուսուցանելով ի վարդապետութեան իւրում. զգոյշ լերուք ի դպրաց անտի. որք կամին ի հանդերձս երևելիս չրջիլ. ըզնախամտոյնս խնդրել ի հրապարակս։ Եւ զնախաթոռս ի ժողովուրդս. և զգահազլուխս չընթրիս։ Որք ուտեն զտունս այրեաց. պատճառանօք երկարեն զաղօթս. զի աւելի ևս դատաստանս ընկալցին։ Կայր Յիսուս ընդդէմ դանձանակին. տեսանէր թէ զիարդ ժողովուրդն արկանէր պղինձ ի գանձանակն. և բազում մեծատունք արկին բազում ինչ։ Եկն այրի մի, և էարկ երկուս լումայս. որ է նաքարակիտ մի։ Եւ

կոչեալ առ ինքն զաշակերտան, ասէ ցնոսա. ամէն ասեմ ձեզ. զի այրին այն տատապեալ՝ չատ էարկ քան զամենեսեան ի գանձանակն։ Քանզի ամենեքեան յաւելորդաց իւրեանց արկին. այլ նա ի չքաւորութենէ իւրմէ՝ զամենայն ինչ զոր ունէր՝ էարկ զոյիւ չափ զկեանս իւր։

ԵՐԿ

Եակա՞ն բանն որ ընդ հօ՞ր արարչակից և համազօր. յերրորդ աւո՞ւր զՔուրքն զատո՞յց զբոյս և զտունկըս բղխեցոյց. իսկ ի յերրորդ դարուն դարձեա՛լ զՔուրցն հեղեղ ցամաքեցոյց. զՆոյ տապանա՞ն իւր ապրեցո՞յց զկենդանեաց սեռս աճեցոյց. տուք օրհնութի՞ւն անճառ լուսոյն Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւո՞յն։

Ընդ ծառո՞ց երկրի զդալեաց տնկեաց և զտունկս իմանալեաց. զհեղեղ մեղա՞ցըն ցածուցեա՛լ. զդատս արդարոց բազմացուցեալ. յորոց և մե՞ծն ի ծնունդս կանանց միջնորդ չնորհաց և օ՛րինաց. տուք օրհ՚՚։

Թագաւորի՞ն երկնից զինւո՞ր արքայութեանն աւետաւոր. խնդրեա դընե՛լ ելս ի սըրտի առ ի հովտէ՞ս տըրտմականէ. յուխտեալ տեղի՞ն տէրունակա՛ն ի խոստացեալն որդւոց մարդկան. տուք օրհ՚՚։

Ծառանգին հո՞ր ապաստաւոր և յարգանաւ երկրպագող. Կարապե՞տ և Մըկրտիչ այնմ որ մեղաց մերոց քաւիչ. ՚ներ բարեխո՞ս առ նոյն զքաւած ՚ննջել զդիր մեր յանցանաց. տուք օրհ՚՚։

Digitized by Google

ի հօրէ՝ լոյս ծագեցա՛ր մեռեալ բնութեանն կեն-
դանարար. առաքեցե՛ր յառաջընթաց սուրբ զՅովհան-
նէս քարոզ կենաց. սորին հայցմա՛մբն ամենակա՛լ
զպաղատանս մեր ընկալ. տուք օրհ՚՚ :

Լուսաչա՛ւղ յերկինս ելին հոլանիւթեայ սուրբ
հրեշտակին. արժանացո՛ զմեզ նորին նեղ և ան-
ձուկ ճանապարհին. զի հետևո՛ղ գոլով նորին հօր քո
վերին օթեվանին. և երգեցո՛ւք ընդ երջանկացն որպէ-
սոց լուսոյ քեզ երգս վա՛ռա՛ց :

Քարոզ. Խնդրեացուք. կեցո : Աղօթք՝ Քում ամե-
նազօր և հրաշալի գալստեանդ : (Տես ի Յիւն. 75 :)

Եւ ապշակին ի խաչագո՛ւնին :

Կարգաւորութիւն հասարակաց աղօթից եբեկոյի ժամուն։ Որ կատարի ի գիշեր Որդւոյն Աստուծոյ. որ կոչի Խաչին և պատեալ պաստառակալաւ՝ եղաւ ի գերեզմանի։

Օրհնեալ՝ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն։
Հայր մեր որ յերկինս ես"։

Ես առ Աստուած կարդացի, և նա լուաւ ինձ յերեկոյս՝ ի վաղորդեայն՝ և ի հասարակ աւուր։

Սալասէի Աստուծոյ իմոյ, և ակն ունիմ կենարարին. որ փրկէ զծառայս իւր և կեցուցանէ։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեսցուք ընկալ կեցո և ողորմեա։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն։

Սաղմոս ՀԵ։

Խոնարհեցո տէր և այլն՝ (Տես ի Թիւն: 101:)

ՄԱՂԹԱՆՔ

Օրհնեալ տէր՝ որ քննակալդ ես՝ (Տես ի Թիւն. 176:)

Փարոզ և մաղթանք Հասեալքի՝ (Տես ի Թիւն. 107:)

Digitized by Google

Մեսեգլ։

Քաղցրութիւն արտաքոյ ընդ ծառայի քումմէ տէր, քան բանի քումմ։

Քաղցր ես դու տէր, և քաղցրութեամբ քով խրատեա զիս։

Ընդ եղբուածս ի ծննդոց։
ԳԼ՝ 6. հմր 9։

Եւ սա են ծնունդք Նոյի. Նոյ այր արդար կատարեալ էր յազգի անդ իւրում. և հաճոյ եղև Նոյ Աստուծոյ։ Եւ ծնաւ Նոյ երիս որդիս. զՍէմ. զՀամ. զՅաբեթ։ Եւ ապականեցաւ երկիր առաջի Աստուծոյ, և լցաւ երկիր անիրաւութեամբք։ Եւ եհաս Տէր Աստուած զերկիր, և էր ապականեալ. զի ապականեաց ամենայն մարմին զճանապարհ իւր ի վերայ երկրի։ Եւ ասէ Տէր Աստուած ցՆոյ. ժամանակ ամենայն մարդոյ հասեալ է առաջի իմ, զի լցաւ երկիր անիրաւութեամբք ի նոցանէ. և ահա ես ապականեցից զնոսա և զերկիր։ Արա՛ դու քեզ տապան ի չորեք կուսի փայտից. խորշո՛ խորշս գործեացես զտապանն. և նաւթիւ ծեփեացես զնա ներքոյ և արտաքոյ։ Եւ այսպէս արասցես զտապանն. յերեք հարիւր կանգնոյ զերկայնութիւն տապանին. և ի յիսուն կանգնոյ զլայնութիւն. և յերեսուն կանգնոյ զբարձրութիւն։ Քաղելով գործեացես զտապանն. և ի մի կանգամն կատարեացես զնա ի վերուստ. և զդուռն տապանին ի կողմանէ արասցես. ներքնատու-

Digitized by Google

նըս. և մի՛ջնատուն. և վերնատունս գործեացես ի նմա։ Եւ ահա ես ածից զջրհեղեղ ջուոյ ի վերայ երկրի. ապականել զամենայն մարմին. յորում է շունչ կենդանի ի ներքոյ երկնից. և ինչ որ իցէ ի վերայ երկրի՝ սատակեացի։ Եւ եդից զուխտ իմ ընդ քեզ. և մտցես ի տապանն. դու և որդիք քո. և կին քո, և կանայք որդւոց քոց ընդ քեզ։ Եւ յամենայն անասնոց. և յամենայն գազանաց. և յամենայն մողմնոց. երկուս երկուս յամենայնէ մուծցես ի տապանն բուծանել ընդ քեզ. արու և էգ լինիցին։ Յամենայն հաւուց ըստ ազգի. և յամենայն անասնոց ըստ ազգի. և յամենայն սողնոց երկրի ըստ ազգի իւրեանց. երկու երկու յամենայնէ մտանիցեն առ քեզ. պահ կեցցեն։ Եւ դու առնուցուս քեզ յամենայն կերակրոց զոր ուտիցէք. և ժողովեացես դու առ քեզ. և եղիցի քեզ և նոցա կերակուր։ Եւ արար Նոյ զամենայն, զոր պատուիրեաց նմա Տէր Աստուած. նոյնպէս և արար։ Եւ ասէ Աստուած Նոյ. մո՛ւտ դու և ամենայն տունդ քո ի տապանդ. զի զքեզ տեսի արդար առաջի իմ յայսմիկ ազգի։ Եւ յամենայն անասնոց սրբոց մի՛ւծ ընդ քեզ եօթն եօթն արու և էգ. և յամենայն անասնոց որք ոչ են սուրբք, երկուս երկուս. արու և էգ։ Եւ ի թռչնոց երկնից ի սրբոց՝ եօթն եօթն արու և էգ. և ի թռչնոց որք ոչ սուրբք են՝ երկուս երկուս արու և էգ. բուծանել զսերմն ի վերայ ամենայն երկրի։ Եւ այլ ևս եօթն

օր. և ածից ես անձրև ի վերայ երկրի զքաւասուն տիւ և զքառասուն գիշեր. և չնչեցից զամենայն հասակ, զոր արարի՝ յերեսաց երկրի: Եւ արար Նոյ զամենայն, զոր միանգամ պատուիրեաց Տէր Աստուած: Նոյ էր ամաց վեց հարիւրոց. և ջրհեղեղ ջուրցն եղև ի վերայ երկրի: Եւ եմուտ Նոյ և որդիք իւր. և կին Նորա. և կանայք որդւոց Նորա ընդ նմա ի տապանըն, վասն ջուրցն հեղեղի: Եւ յամենայն անասնոց սրբոց. և յանասնոց որք ոչ սուրբք էին. և ի թռչնոց սրբոց. և ի թռչնոց, որք ոչ սուրբք էին. և յամենայն սողնոց՝ որք սողին ի վերայ երկրի: Երկու երկու մտին առ Նոյ ի տապան անդր. արու և էգ. որպէս պատուիրեաց նմա Աստուած: Եւ եղև յետ եօթն աւուր և ջուր ջրհեղեղին եղև ի վերայ երկրի: Ամին վեցհարիւրորդի կենաց Նոյի. յերկրորդում ամսեանն ի քսան և յեօթն ամսոյն. և պատռեցան ամենայն աղբիւրք անդնդոց բազմաց. և սահանք երկնից բացան: Եւ եղև անձրև ի վերայ երկրի զքառասուն տիւ, և զքառասուն գիշեր: Ճաւուր յայնմիկ եմուտ Նոյ. Սեմ. Քամ. Յաբեթ. որդիք Նոյի. և կին Նոյի. երիք կանայք որդւոց Նորա ընդ նմա ի տապան անդր: Նոքա և ամենայն գազանք ըստ ազգի. և ամենայն անասուն ըստ ազգի իւրեանց. և ամենայն սողուն չարժուն ի վերայ երկրի ըստ ազգի իւրեանց. և ամենայն հաւ թռչուն ըստ ազգի իւրում: Մտին առ Նոյ ի տապան անդր երկու երկու յամե-

Digitized by Google

ծայն մարմնոյ, յորում էր չունչ կենդանի: Եւ որք մտանէիննն՝ արու և էգ յամենայն մարմնոյ մտանէին, որպէս պատուիրեաց Աստուած Նոյի: Եւ փակեաց տէր Աստուած արտաքոյ նորա զտապանն. և եղև ջրհեղեղ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր ի վերայ երկրի. և բազմացաւ ջուրն և վերացոյց զտապանն. և բարձրացաւ յերկրէ: Եւ զօրանայր ջուրն և բազմանայր յոյժ ի վերայ երկրի. և չրջէր տապանն ի վերայ ջրոց: Եւ սաստկանայր ջուրն յոյժ յոյժ ի վերայ երկրի. և ծածկէր զամենայն լերինս բարձունս որք էին ի ներքոյ երկնից: Հնգետասան կանգուն բարձրացաւ ջուրն ի վեր. և ծածկեաց զամենայն լերինս: Եւ մեռաւ ամենայն մարմին չարժուն ի վերայ երկրի. թռչնոց, և անասնոց՝ և գազանաց, և ամենայն սողոց զեռուն ի վերայ երկրի, և ամենայն մարդ: Եւ ամենայն որ ունէր չունչ կենդանի յընդընգուն իւր. և ամենայն որ ինչ էր ի վերայ ցամաքի՝ մեռաւ: Եւ չնչեաց զամենայն հատակ որ էր ի վերայ երեսաց երկրի. ի մարդոյ մինչև յանասուն. և ի սողոց մինչև ի թռչունս երկնից. և չնչեցան յերկրէ. և մնաց միայն Նոյ, և որք ընդ նմա էին ի տապանի անդ: Եւ բարձրացաւ ջուրն ի վերայ երկրի աւուրս հարիւր և յիսուն: Եւ յիշեաց Աստուած զՆոյ, և զամենայն գազանս, և զամենայն անասունս. և զամենայն թռչունս. որք էին ընդ նմա ի տապանի անդ. և էած Աստուած հոգի ի վերայ երկրի, և դադարեաց

ջուրն : Եւ խցան աղբիւրք անդնդոց . և առհասք երկնից . և արգելաւ անձրև յերկնից : Եւ զիջանէր տա-կաւ . երթայր ջուրն և թողանայր յերկրէ . և նուազէր ջուրն յետ հարիւր և յիսուն աւուր : Եւ նստաւ տա-պանն յեօթներորդում ամսեանն ի քսան և եօթն ամսոյն ի լերինս Արարատայ : Եւ ջուրն երթայր և նուազէր մինչև ի տասներորդ ամիսն . իսկ յամսեանն մեստասաներորդի , որ օր առաջին էր ամսոյն , երե-ւեցան գլուխք լերանց : Եւ եղև յետ քառասուն ա-ւուր՝ եբաց Նոյ զպատուհան տապանին զոր արար : Եւ արձակեաց զագաւն . և ել և անդրէն ոչ դար-ձաւ մինչև ցցամաքիլ ջրոյն յերկրէ : Եւ արձակեաց զաղաւնին զհետ նորա տեսանել թէ ցածուցեալ իցէ ջուրն յերեսաց երկրէ : Եւ չգտեալ աղաւնւոյն հան-գիստ ոտից իւրոց , դարձաւ անդրէն առ նա ի տա-պան անդր . զի ջուր դեռ ունէր զամենայն երեսս երկրի . և ձգեաց զձեռն և ընկալաւ զնա . և էառ զնա անդրէն առ իւր ի տապան անդր : Եւ զգաբերեաց նա աւուրս եօթն . և դարձեալ արձակեաց զաղաւնին ի տապանէ անտի : Եւ դարձաւ առ նա աղաւնին ընդ երեկս . և ունէր տերև ձիթենւոյ չիւղ ի բերանի իւրում . և գիտաց Նոյ , թէ ցածուցեալ են ջուրքն յերկրէ : Եւ զգաբերեաց աւուրս եօթն ևս . և դար-ձեալ արձակեաց զաղաւնին . և ոչ ևս յաւել դառնալ առ նա : Եւ եղև ի վեցհարիւրորդի և ի միում ամի կենաց Նոյի , յամսեանն առաջնում , որ օր մի էր ամ-

առն, նուագեաց ջուրն յերեսաց երկրի. և երաց Նոյ զձեղուն տապանին զոր արար։ Եւ եառ զի նուազեալ էր ջուրն յերեսաց երկրի։ Իսկ յամսեան երկրորդի, որ օր քսան և եօթն էր ամսոյն՝ ցամաքեցաւ երկիրն։ Եւ խօսեցաւ տէր Աստուած ընդ Նոյի, և ասէ։ Ե՛լ ի տապանէ այսի, դու և կին քո. և որդիք քո. և կանայք որդւոց քոց ընդ քեզ։ Եւ ամենայն գազանք ոլոր են ընդ քեզ. և ամենայն մարմին. ի թռչնոց մինչև ցանասուն. և զամենայն սողուն զեւուն երկրի հան ընդ քեզ. և գեւասցեն ի վերայ երկրի։ Եւ աճեցէք և բազմացարծուք ի վերայ երկրի։ Եւ ել Նոյ, և կին նորա, և կանայք որդւոց նորա ընդ նմա։ Եւ ամենայն գազան, և ամենայն սողուն չարժուն, և ամենայն թռչուն յերկրէ ըստ ազգի իւրեանց, ելին ի տապանէ անտի։ Եւ չինեաց Նոյ սեղան Աստուծոյ. և էառ յամենայն անասնոց սրբոց. և յամենայն թռչնոց սրբոց և եհան ողջակէզ ի վերայ սեղանոյ։ Եւ հոտոտեցաւ տէր Աստուած ի հոտ անուշից. և ասէ տէր Աստուած, ածեալ զմտաւ, ոչ ևս յաւելից անիծանել զերկիր վասն գործոց մարդկան. զի միտք մարդոյ հաստատեալ են ի խնամս չարին ի մանկութենէ իւրմէ. արդ ոչ ևս յաւելից հարկանել զամենայն մարմին կենդանի որպէս արարի։ Այսուհետև զամենայն աւուրս երկրի՝ սերմն և հունձք, ցուրտ և տօթ, ամառն և գարուն, գտիւ և գգիշեր մի դագարեսցեն։ Եւ օրհնեաց Աստուած զՆոյ և

զորդիս Նորա, և ասէ ցՆոսա. աճեցէք՝ և բազմացարծուք՝ և լցէք զերկիր և տիրեցէք դմա: Եւ ահա և երկիւղ ձեր եղիցի ի վերայ ամենայն գազանաց երկրի. և ի վերայ ամենայն թռչնոց երկնից. և ի վերայ ամենայն զեռնոց երկրի. և ի վերայ ամենայն ձկանց ծովու. զորս ընդ ձեռամբ ձերով ետու: Եւ ամենայն զեռուն որ է կենդանի, ձեզ լիցի ի կերակուր. իբրև զբանջար խոտոյ ետու ձեզ զամենայն: Բայց զմիս արեամբ չնչոյ մի՛ ուտիջ՛ք: Քանզի և զձեր արիւն չնչոյ խնդրեցից. ի ձեռաց յամենայն գազանաց խնդրեցից զնա. և ի ձեռաց մարդոյ. ի ձեռաց առն ըզչունչ եղբօր իւրոյ խնդրեցից: Որ հեղու զարիւն մարդոյ՝ փոխանակ արեան Նորա հեղցի արիւն Նորա. զի ի պատկեր Աստուծոյ արարի ես զմարդն: Այլ դուք աճեցէք՝ և բազմացարծուք՝ և լցէք զերկիր. և բազմացարծուք ի վերայ դորա: Եւ խօսեցաւ տէր Աստուած ընդ Նոյի. և ընդ որդիս Նորա որք ընդ նմա էին՝ և ասէ: Եւ ահաւասիկ ես հաստատեմ զուխտ իմ ընդ ձեզ և ընդ զաւակի ձերում յետ ձեր: Եւ ընդ ամենայն չնչոյ կենդանւոյ որք ընդ ձեզ են. ի թռչնոց և յանասնոց և յամենայն գազանաց երկրի որք ընդ ձեզ. և յամենեցունց որք ելին ի տապանէ անտի. և ամենայն անասնոց երկրի: Եւ հաստատեցից զուխտ իմ ընդ ձեզ. և ոչ ևս մեռցի ամենայն մարմին ի ջրհեղեղէ. և ոչ ևս եղիցի ջրհեղեղ ջուրց ապականել զամենայն երկիր: Եւ ասէ տէր Աստուած ցՆոյ և

Digitized by Google

ցորդիս նորա. այս է նշան ուխտին. զոր ես տաց ընդիս և ընդ ձեզ. և ի մէջ ամենայն չնչոյ կենդանւոյ որ է ընդ ձեզ. յազգս յաւիտենից: Զաղեղն իմ եդից յամպս, և եղիցի ի նշանակ յաւիտենական ուխտին ընդիս և ընդ ամենայն երկիր: Եւ եղիցի ի գումարել ինձ զամպս ի վերայ երկրի, երևեսցի աղեղն իմ յամպս: Եւ յիշեցից զուխտ իմ որ ընդիս և ընդ ձեզ. և ի մէջ ամենայն չնչոյ կենդանւոյ յամենայն մարմին. և ոչ ևս եղիցի ջրհեղեղ ի սատակել զամենայն մարմին: Եւ եղիցի աղեղն իմ յամպս. և տեսից յիշել զուխտն յաւիտենական. ի մէջ իմ և ի մէջ ամենայն չնչոյ կենդանւոյ. յամենայն մարմնի որ է ի վերայ երկրի: Եւ ասէ Աստուած ցՆոյ. այս է նշան ուխտին. զոր ուխտեցի ես ընդիս և ընդ ձեզ. և ի մէջ ամենայն մարմնոյ որ է ի վերայ երկրի:

Ընթերցուածս Ցառակաց:
Գլ՝ 9:

Իմաստութիւն չինեաց իւր տուն. և կանգնեաց սիւնս եօթն: Եղեն զղենլիս իւր. և խառնեաց ի խառնարանս զգինի իւր. և պատրաստեաց զսեղան իւր: Եւ առաքեաց զծառայս իւր՝ կոչել բարձր քաղաքութեամբ ի խառնելիս իւր: Եւ ասէ՝ որոք իցէ անզգամ՝ եկեսցէ առիս. և ցպակասամիտսն ասէ: Եկայք՝ կերայք ի հացէ իմմէ՝ և արբէք զգինի իմ. զոր խառնեցի ձեզ: Թողէք զանզգամութիւն, և կեցջիք. խնդրեցէք զիմաստութիւն, զի ապրեսջիք. և ուղղե-

Digitized by Google

ցէք գիտութեամբ զհանճար. և ուղիղ ճանապարհաւ իմացարուք զխրատս: Որ խրատէ զչարս՝ առցէ անձին իւրում անարգանս. և որ յանդիմանէ զամբարիշտսն, առեալ զանձն: Մի յանդիմաներ զչարս՝ զի մի առեսցեն զքեզ. յանդիմանեա զիմաստունն. և սիրեսցէ զքեզ. զանմիտն. և յաւելցի առել զքեզ: Ծուր իմաստնոյն պատճառս՝ և իմաստնագոյն ևս լիցի, ծանիր արդարոյն՝ և յաւելցի ընդունիլ: Սկիզբն իմաստութեանն՝ երկիւղ Տեառն. և խորհուրդ սրբոց հանճար. իմանալ զօրէնս՝ մտաց առատաց է: Այսու օրինակաւ բազում ժամանակս կեցցես. և յաւելցին քեզ ամք կենաց: Որդեակ՝ թէ իմաստուն լինիցիս. անձին քում իցես՝ և ընկերաց. և եթէ անզգամ իցես՝ միայն պիղծացես զչարիս. որ հաստատի ի առութեանն՝ այնպիսին զհոգմս արածէ. և նոյն հալածէ զթռչունս թևաւորս. քանզի եթող զճանապարհս այգւոյ իւրոյ. և ի չաւղաց անդոյ իւրոյ մոլորեալ է. գնայ ընդ անջուր՝ և ընդ անապատ. և ընդ երկիր կարգեալ ի ծաւսաւտ. և ժողովէ ձեռօք իւրովք զանպտղութիւն: Պին անզգամ և յանդուգն կալօտ լիցի հացի. և որ ոչ գիտէ զամօթ: Նստաւ առ դուրս տանն իւրոյ աթոռով յայտնապէս ի հրապարակս: Կոչէ զանցաւորս՝ որք գնան ուղիղ զճանապարհս իւրեանց: Որք իցէ ի ձէնջ առաւել անմտագոյն՝ խոտորեսցի առիս. և պակասամտացդ հրաման տամ, և ասեմ: Ջնաց գաղտնի մտադիւր կերիցիք. և զջուր գաղտնի, ախոր-

ժելով արբջիք։ Եւ ոչ դիտէք եթէ երկրածինք առ նըմա կորնչին. և յատակս դժոխոց հասանին. այլ ի քաց վազեա՝ և մի յամեր ի տեղւոջ նորա. և մի հասատատեր զակն քո ի նա, քանզի այնպէս անցցես ընդ ջուր օտար. և անցանիցես ընդ գետն օտարական. և ի ջրոյ օտարէ ի քաց լինիցիս. և յօտար աղբերէ մի ըմպիցես. զի բազում ժամանակս կեցցես. և յաւելցին քեզ ամք կենաց։ Որդի իմաստուն՝ ուրախ առնէ ըզհայր. որդի անմիտ՝ տրտմութիւն է մօր։ Ոչինչ օգնեսցեն գանձք անօրինաց. այլ արդարութիւն փրկէ ի մահուանէ։ Ո՛չ սովամահ առնէ տէր զանձն արդարոյ. բայց զկեանս ամբարչտաց կործանեսցէ։ Աղքատութիւն զայր խոնարհեցուցանէ. ձեռք ժրաց մեծացուցանեն։ Որ չանայ ստութեամբ. նա արածէ զհոգմս. նոյն իսկ ինքն հետևի հաւուց թռուցելոց։ Որ ժողովէ ներհնձուամ, որդի իմաստուն է. այլ որ ննջէ յամարայնի՝ որդի պատկառանաց։ Որդի խրատեալ իմաստուն եղիցի. և անմիտն ի ծառայութիւն վարեսցի. ապրեցաւ ի խորչակէ որդի իմաստուն. խորչակահար լինի յամարայնի որդի անօրէն։ Օրհնութիւն Տեառն ի գլուխս արդարոց. զբերանս ամբարչտաց ծածկեսցէ աւուգ տարաժամ։

Ընթերցուածս յԵսայեայ Մարգարէէ ։
ԳԼ՝ 40. հմր 9։

Ե՛լ ի վերայ լերինդ բարձու՝ աւետարանիչդ Սիոնի. բարձրացո՛ զօրութեամբ զբարբառ քո՝ աւետարա-

Digitized by Google

նիչըդ Երուսաղէմի. բարձրացուցէք. մի՛ երկնչիք. ասա ցքաղաքսդ Ցուդայ. Ահաւասիկ Աստուած ձեր. ահաւասիկ տէր տէր՝ գայ զօրութեամբ և բազուկն տէրութեամբ իւրով. ահաւասիկ վարձք իւր ընդ իւր. և գործք առաջի նորա: Իբրև հովիւ մի հովուեսցէ ըզխաչինս իւր. և բազկաւ իւրով ժողովեսցէ զգառինս. և ի ծոց իւր կրեսցէ զնոսա. և մխիթար լիցի յղեաց: Ո՞ չափեաց ափով իւրով զջուրս. և զերկինս թզաւ՝ և զերկիր ամենայն քաշաւ. ո՞ կշռեաց պլերինս կշռով. և զդաշտս կշռորդօք: Ո՞ գիտաց զմիտս Տեառն. և ո՞ եղև նմա խորհրդակից՝ եթէ խնդամուտ արասցէ զնա: Կամ ընդ ո՞ւմ խորհեցաւ՝ և ասաց զնա խնդամուտ. կամ ո՞ եցոյց նմա զդատաստան՝ և զճանապարհս իմաստութեան. կամ ո՞ ետ նմա փոխ յառաջագոյն՝ և հատուցանիցէ նմա: Եթէ ամենայն հեթանոսք իբրեւ զկաթիլ մի ի դուլէ են. և իբրև զմէտ մի ի կշռոց համարեցան. և իբրև չնիք ի բերանոյ համարեցին: Եթէ Լիբանան չէ բաւական յայրումն. և ամենայն չորքոտանիք չեն բաւական յողջակէզս: Եւ ամենայն հեթանոսք ոչինչ են. և յոչինչ համարեցան նմա:

Ա՛մէն Ուղիղ եղիցին ասա:

ԴՈՒՐՈՑ

Աղաչեսցուք՝ (Տես ի Թիւն. 215:)

Աղօթք՝ Լուր ձայնիդ և այլն. յՇաբաթականն Համբարձէ. (Տես ի 110 էն ց113 Թիւն:)

Digitized by Google

Համբարձի ԻԶ

Շնո՛րհակ մեզ տէր արքինուքիւն ընդ ի՛մաստո՛ւն կուսանացն. և զհոգւո՛ց մերոց լապտե՛րըս պայծա՛ռացո՛ւ։ Եւ երկընչիմք ի քէ՛ն տէր զարհուրեա՛ք ի պա՛տասխանւոյն, զա՛մէնն ասելով երէկ՛ ո՞չ գի՛տե՛մ ըզձե՛զ։ Ցո՛րժամ գա՛ս փառօք Հօր դատե՛լ ըզտիեզերս ամենայն. չնո՛րհակ մեզ տէր կա՞լ ի յա՛ջմէ քումմէ՛։ Բա՛ցցի մեզ դուռն ողո՛րմութեա՞ն երկնա՛ւո՛ր Փեսային, և մըտցո՛ւք ի յաւա՛գաստ ընդ ի՛մաստո՛ւն կո՞ւսանսն։ Փառք Հօր եւ՝՝։ Ժա՛մանեսցուք ընդ առա՛ջ Փեսա՛յի՞ն, և մըտցո՛ւք ի յա՛ւա՛գաստ նորա. զի՞ մի՛ մնասցուք ա՛րտաքս որպէ՛ս զյիմա՛ր կո՞ւսա՛նսն։ Այժմ եւ միշտ եւ՝՝։ Պա՛յծառասցի՞ն լապտե՛րըք հո՛գւոց մերո՛ց, և՛ բաղմեցուցո՛ւս ըզմեզ ընդ հրա՛եղբեա՛լսն ի կո՛չումն աքքայութեա՛ն ե՞րկնի՛ց։

Քարոզ՝ Վասն խաղաղութեան։ Աղօթք՝ Հայր գըթած. (Տես ի թիւն. 177։)

Ջկնի Հայր զԹածէն, Սաղմոս՝ ԻԴ։ ողբաձայն։ Եւ յաւելն՝ զգեցուսցեն զտան մանկունսն, և տացեն ի ձեռըս նոցին մոմըզէնս վառեալս՝ յօրինակ տան կուսանացն, ողք եկեալ կանգնեսցեն առաջի Աւետարանին։

Ա՛ռ քեզ տէր համբարձի զանձն իմ. Աստուած իմ

ի քեզ յուսացայ՝ մի՛ ամաչեցից, և մի՛ ծիծաղեսցին զիս-նեւ թշնամիք իմ։

Ամենեքեան որք համբերեն քեզ՝ մի՛ ամաչեսցեն, այլ ամաչեսցեն անօրէնք յունայնութեան իւրեանց։

Զճանապարհս քո տէր ցոյց ինձ, և զշաւիղս քո ուս-մ ինձ։

Առաջնորդեա՛ ինձ ի ճշմարտութեան քում, և ուս-մ զիս, զի դու ես Աստուած Փրկիչ իմ. և ես քեզ համ-բերի զօրհանապազ։

Ցիշեա՛ տէր՝ զգթութիւնս քո, և զողորմութիւնս քո՝ որք են յաւիտենից։

Զմեղս մանկութեան իմոյ և զանգիտութեան իմոյ՝ մի՛ յիշեր. այլ յիշեա՛ զիս ըստ ողորմութեան քում վասն քաղցրութեան քոյ, զի քաղցր և ուղիղ ես։

Վասն այսորիկ օրէնսգէտ առնես զմեղաւորս ի ճա-նապարհի, առաջնորդես հեզոց ի դատաստանի. և և ուսուցանես հեզոց զճանապարհս քո։

Ամենայն ճանապարհք Տեառն ողորմութեամբ և ճըշ-մարտութեամբ են այնոցիկ, որք խնդրեն զուխտ և զվկայութիւն նորա։

Վասն անուան քո տէր քաւեա՛ զմեղս իմ զի բա-զում եղեն. ո՞վ է մարդ որ երկնչի ի Տեառնէ, օրէնսդ-գէտ առնէ զնա ի ճանապարհի յոր և հաճեացաւ։

Անձն նորա ի բարութեան հանգիցէ, և զաւակ նո-րա ժառանգեսցէ զերկիր։

Զօրութիւն է տէր երկիւղածաց իւրոց, և զկտակա-

բանս իւր ուսուցանէ նոցա։

Աչք իմ յամենայն ժամ առ տէր են. և նա հանէ յորոգայթէ զոտս իմ։

Նայեա առ իս և ողորմեա ինձ, զի միամօր և աղքատ եմ ես։

Նեղութիւնք սրտի իմոյ բազում եղեն յոյժ, և ի վըշտաց իմոց հան զիս։

Տես զխոնարհութիւն իմ և զվաստակ իմ, և թող ինձ զամենայն մեղս իմ։

Տես զթշնամիսն իմ զի բազում եղեն,ատելութեամբ՝ որք ի նանիր ատեցին զիս։

Պահեա զանձն իմ և փրկեա զիս, և մի յամօթ եղէց զի յուսացայ ի քեզ։

Ամբիծք և ուղիղք կցորդք եղեն ինձ, և ես քեզ համբերի. փրկեա Աստուած զԻսրայէլ յամենայն նեղութեանց նորա։

Ալէլուիա Օրթ։

Սրբոյ Աւետարանիս ցխուսի Քրիստոսի ոք ըստ Մատթէոսի։

Գլ՝ 24։

Տէրն մեր ցխուս Քրիստոս։

Եւ ելեալ արտաքս ցխուս ի տաճարէն գնայր՝ և մատեան աշակերտքն ցուցանել նմա զշինուածս տաճարին։ Եւ նա պատասխանի ետ և ասէ ցնոսա. տեսանէք զայդ ամենայն. ամէն ասեմ ձեզ. ոչ մը-

Digitized by Google

նասցէ այդը քար ի քարի վերայ որ ոչ քակտեսցի։ Եւ մինչդեռ նստէր ի լերինն Ձիթենեաց. մատեան առ նա աշակերտքն առանձինն և ասեն. ասա մեզ երբ լինիցի այդ. և կամ զինչ նշան իցէ գոյոյ գալստեանն, և վախճանի աշխարհիս։ Պատասխանի եւ Ցիսուս և ասէ ցնոսա. զգոյչ լերուք՝ գուցէ ոք զձեզ խաբիցէ։ Զի բազումք գայցեն յանուն իմ, և ասիցեն՝ Թէ ես եմ Ջրիստոսն. և զբազումս մոլորեցուցանիցեն։ Լսելոց էք պատերազմունս՝ և զհամբաւս պատերազմաց. զգոյչ լերուք, մի՛ խռովեսջիք. զի պարտ է լինել այնմ ամենայնի՝ այլ չէ է կատարած։ Ցարիցէ ազգ յազգի վերայ. և թագաւորութիւն ի թագաւորութեան. և եղիցին սովք՝ և սրածութիւնք՝ և սաստանութիւնք ի տեղիս տեղիս։ Սակայն և այն ամենայն սկիզբն է երկանց։ Ցայնժամ մատնեսցեն զձեզ ի նեղութիւն. և սպանանիցեն զձեզ. և եղիջիք ատելեալք յամենայն ազգաց վասն անուան իմոյ։ Եւ յայնժամ գայթակղեսցին բազումք. և զմիմեանս մատնեսցեն. և ատեսցեն զմիմեանս։ Եւ բազում սուտ Մարգարէք յարիցեն. և զբազումս մոլորեցուսցեն։ Եւ վասն բազմանալոյ անօրէնութեանն ցամաքեսցի սէր բազմաց։ Բայց որ համբերեսցէ իսկաւ՝ նա կեցցէ։ Եւ քարոզեսցի Աւետարանս արքայութեան ընդ ամենայն տիեզերս. ի վկայութիւն ամենայն հեթանոսաց. և ապա եկեսցէ կատարած։ Ա՛րդ յորժամ տեսանիցէք զպղծութիւն աւերածոյն, որ ասացեալն է ի Դանն

Դանիէլի Մարգարէի. զի կայցէ ի տեղւոջն սրբոյ Թեան. որ ընթեռնուն ի միտ առցէ: Յայնժամ ոդք ի Հրէաստանի լցեն՝ փախիցեն ի լերինս: Եւ որ ի տանիս կայցէ՝ մի իջցէ առնուլ ինչ ի տանէ իւրմէ: Եւ որ յանդի իցէ՝ մի դարձցի յետս առնուլ զձորձս իւր: Բայց վայ իցէ յղեաց և առնդուաց յաւուրսն յայնոսիկ: Ցաղօթս կացէք՝ զի մի լիցի փախուստն ձեր ձմերանի: Եւ մի ի շաբաթու. զի եղիցի յայնժամ նեղութիւն մեծ. որպիսի ոչ եղև իսկզբանէ արարածոց աշխարհի, մինչև ցայժմ, և ոչ այլ լիցի: Եւ եթէ ոչ կարճէին աւուրքն այնոքիկ՝ ոչ ապրիւր ամենայն մարմին. բայց վասն ընտրելոցն կարճեսցին աւուրքն այնոքիկ: Յայնժամ թէ ոք ասիցէ ձեզ. ահաւասիկ աստ է Քրիստոս, կամ անդ՝ մի հաւատայցէք: Զի յարիցեն սուտ Քրիստոսք և սուտ Մարգարէք. և տայցեն նշանս մեծամեծս և արուեստս. մինչև մոլորեցուցանել՝ թէ հնար ինչ իցէ և զընտրեալսըն: Ահա յառաջագոյն ասացի ձեզ: Ապա եթէ ասիցեն ձեզ. ահաւանիկ յանապատի է՝ մի ելանիցէք. և թէ ահա յչտեմարանս է՝ մի հաւատայցէք: Զի որպէս փայլակն՝ որ ելանէ յարևելից՝ և երևի մինչև յարնմուտս, այնպէս եղիցի գալուստն Որդւոյ Մարդոյ: Զի ուր գէշն իցէ, անդր ժողովեսցին արծուիք: Վաղվաղակի յետ նեղութեան աւուրցն այնոցիկ՝ արեգակն խաւարեսցի. և լուսին ոչ տացէ զլոյս իւր. և աստեղք անկցին յերկնից. և զօրութիւնք երկնից չարժեսցին:

Digitized by Google

Եւ ապա երևեսցի նշան Որդւոյ Մարդոյ յերկինս. և յայնժամ կոծեսցին ամենայն ազգք երկրի. և տեսցեն զՈրդի Մարդոյ եկեալ ի վերայ ամպոց երկնից զօրութեամբ և փառաւք բազմօք: Եւ առաքեսցէ զհրեշտակսն իւր փողով մեծաւ. և ժողովեսցեն զընտրեալս նորա ի չորից հողմոց՝ ի ծագաց երկնից մինչև ի ծագս նոցա: Ի թզենւոյ անտի ուսարուք զառակն. զի յորժամ նորա ոստքն կակղասցի, և տերևն ցցուիցի, գիտէք թէ մերձ է ամառն: Նոյնպէս և դուք յորժամ տեսանիցէք զայս ամենայն՝ գիտասջիք թէ մերձ է ի դուրս: Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ անցցէ ազգս այս՝ մինչև այս ամենայն եղիցի: Երկինք և երկիր անցցեն. և բանք իմ մի՛ անցցեն: Բայց վասն աւուրն այնորիկ և ժամու, ոչ ոք գիտէ՝ ոչ հրեշտակք երկնից՝ և ոչ Որդի՝ բայց միայն Հայր: Այլ որպէս աւուրքն Նոյի. նոյնպէս եղիցի գալուստն Որդւոյ Մարդոյ: Զի որպէս էին յաւուրսն՝ որք յառաջ քան զջրհեղեղն. ուտէին և ըմպէին. կանայս առնէին՝ և արանց լինէին. մինչև յօրն յորում եմուտ Նոյ ի տապանն: Եւ ոչ գիտացին՝ մինչև եկն ջրհեղեղն՝ և եքարձ զամենեսին. այնպէս եղիցի և գալուստն Որդւոյ Մարդոյ: Յայնժամ թէ իցեն երկու յագարակի, մին առցի, և միւսն թողցի: Եւ եթէ երկու աղայցեն ի մի երկանըս. մին առցի, և միւսն թողցի: Արթուն կացէք. զի ոչ գիտէք յորում ժամու տէրն ձեր գայ: Զայն գիտասջիք եթէ գիտէր տանուտէրն. յորում պահու

դող գայ, հակէը, և ոչ տայը ական հատանել զտան իւրոյ։ Վասն այսորիկ և դուք եղերուք պատրաստք՝ զի յորում ժամու ոչ ակն ունիցիք՝ գայ Որդի Մարդոյ։ Իսկ ոմ իցէ հաւատարիմ ծառայ և իմաստուն, զոր կացոյց տէր իւր ի վերայ ծառայից իւրոց՝ տալ նոցա զկերակուր ի ժամու։ Երանի է ծառային այնմիկ՝ զոր եկեալ տէրն գտանիցէ արարեալ այնպէս։ Ամէն ասեմ ձեզ՝ զի ի վերայ ամենայն ընչից իւրոց կացուսցէ զնա։ Ապա եթէ ասիցէ ծառայն չար ի սրտի իւրում. տէր իմ յապաղէ զգալ։ Եւ սկսանիցի հարկանել զծառայակիցս իւր. ուտիցէ և ըմպիցէ ընդ արբեցօղս։ Գայցէ տէր ծառային այնորիկ՝ յաւուր յորում ոչ ակն ունիցի. և ի ժամու յորում ոչ գիտիցէ. և կտրեսցէ զնա ընդ մէջ. և զբաժին նորա ընդ կեղծաւորս դիցէ. անդ եղիցի՝ լալ և կրճել ատամանց։ Յայնժամ նմանեսցի արքայութիւն երկնից տասն կուսանաց. որոց առեալ զլապտերս իւրեանց ելին ընդ առաջ Փեսային և Հարսին։ Հինգն ի նոցանէ յիմարք էին. և հինգն իմաստունք։ Յիմարքն առին զլապտերան. և զձէթ ընդ իւրեանս ոչ բարձին։ Իսկ իմաստունքն առին ձէթ ամանօք ընդ լապտերս իւրեանց։ Եւ ի յապել Փեսային՝ նիրհեցին ամենեքեան՝ և ի քուն մտին։ Եւ ի մէջ գիշերին եղև բարբառ՝ ահա՝ Փեսայ գայ՝ արիք ընդ առաջ նորա։ Յայնժամ յարեան ամենայն կուսանքն՝ և կազմեցին զլապտերս իւրեանց։ Ասեն յիմարքն ցիմաստունսն. տուք մեզ յիւ-

Digitized by Google

ղոյդ ձերմէ. զի ահա չիջանին լապտերքս մեր: Պատասխանի եւուն իմաստունքն, և ասեն. դուցէ, ոչ իցէ մեզ և ձեզ բաւական. այլ երթայք ի վաճառականըս՝ և գնեսջիք ձեզ: Իբրև գնացին նոքա գնել՝ եկն Փեսայն՝ և պատրաստքն մտին ընդ նմա ի հարսանիսն՝ և փակեցաւ դուռն: Ցետոյ գան և այլ կուսանքն՝ և ասեն. տէր տէր՝ բաց մեզ: Նա պատասխանի ետ և ասէ. ամէն ասեմ ձեզ՝ թէ ոչ գիտեմ ըզձեզ: Արթուն կացէք՝ զի ոչ գիտէք զօրն և ոչ ըզժամ: Որպէս այր մի գնացեալ ի տար աշխարհ. կոչեաց զծառայս իւր. և ետ նոցա զինչս իւր: Ումեմըն ետ հինգ քանքար՝ և ումեմն երկուս, և ումեմն մի. իւրաքանչիւր ըստ իւրում կարի՝ և գնաց: Զոգաւ վազվազակի՝ որ էառ զհինգն՝ գործեաց նոքօք. և չահեցաւ այլ ևս հինգ: Նոյնպէս և որ զերկուսն, չահեցաւ այլ ևս երկուս: Եւ որ զմին էառ՝ գնաց, փորեաց զերկիր. և թաղոյց զարծաթ տեառն իւրոյ: Ցետ բազում ժամանակի գայ տէր ծառային այնոցիկ՝ և առնէ համարս ի մէջ նոցա: Եւ մատուցեալ՝ որ ըզհինգ քանքարն էառ՝ մատոյց այլ ևս հինգ քանքար՝ և ասէ. տէր՝ հինգ քանքար ետուր ցիս. արդ՝ աւասիկ հինգ այլ ևս քանքար ի վերայ չահեցայ: Ասէ ցնա տէրն իւր. ազնիւ ծառայ՝ բարի և հաւատարիմ. որովհետև ի սակաւուդ հաւատարիմ ես, ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մուտ յուրախութիւն տեառըն քոյ: Մատուցեալ և որոյ զերկուս քանքարսն

Հաւատացի տեսանել զբարութիւն Տեառն յերկրին կենդանեաց. համբեր Տեառն և քաջալերեայց, զօրացի՛ սիրտ քո՝ և համբեր Տեառն։

Փառք Հօր և Որդւոյ”։ Այժմ և միշտ և յաւի”։

Եւ ևս խաղաղութեան”։ Օրհնութիւն և փառք”։

Երկրորդ դուքայ։ Սաղմոս իե։

Ա՛ռ քեզ տէր կարդացի Աստուած իմ, մի՛ լռեր յինէն. մի՛ երբէք լռիցես յինէն, նմանիցիմ այնոցիկ՝ ոյք իջանեն ի գուբ։

Լո՛ւր տէր ձայնի խնդրուածոց իմոց յաղաչել ինձ առ քեզ, ի համբառնալ ձեռաց իմոց ի տաճար սուրբ քո։

Մի՛ համարիր ընդ ամբարիշտս զանձն իմ. և մի՛ ընդ այնոսիկ ոյք գործեն զանօրէնութիւն՝ կորուսաներ զիս։

Ոյք խօսին զխաղաղութիւն ընդ ընկերս իւրեանց, և չարութիւն է ի սիրտս նոցա։

Տո՛ւր նոցա տէր ըստ գործոց նոցա, և ըստ անօրէնութեան դնացից նոցա հատո՛ նոցա։

Digitized by Google

Ըստ գործոց ձեռաց նոցա հատո՛ նոցա՝ զհատուցումն նոցա նոցին։

Ո՛չ իմացան նոքա զգործս Տեառն, և ո՛չ ի գործս ձեռաց նորա հայեցան. կործանեացես զնոսա, և ա՛լ մի՛ չինեսցին։

Օրհնեալ է տէր՝ զի լուաւ ձայնի աղօթից իմոց. տէր օգնական իմ և պաշտպան իմ։

Ի նա յուսացաւ սիրտ իմ, օգնեցաւ և զուարճացաւ մարմին իմ. և ես կամօք իմովք խոստովան եղէց նմա։

Տէր զօրութիւն ժողովրդեան իւրոյ, ապաւէն փրկութեան օծելոյ իւրոյ։

Փրկեա՛ զժողովուրդս քո. և օրհնեա՛ զժառանգութիւնս քո, հովուեա՛ և բարձրացո՛ զնոսա մինչև յաւիտեան։

Սաղմոս ԻՀ։

Մատուցէ՛ք Տեառն որդիք Աստուծոյ, մատուցէ՛ք Տեառն զորդիս խոյոց։

Մատուցէ՛ք Տեառն զփառս և զպատիւ, մատուցէ՛ք Տեառն զփառս անուան նորա. և երկի՛ղպագէք Տեառն ի սրահ սրբութեան նորա։

Ձայն Տեառն ի վերայ ջուրց, և Աստուած փառաց որոտաց. և տէր ինքն ի վերայ ջուրց բազմաց։

Ձայն Տեառն զօրութեանց, և ձայն Տեառն մեծ վայելչութեանց։

Digitized by Google

Զայն Տեառն փշրէ զմայրս, և մանրէ տէր զմայրսն Լիբանանու։

Մանրեսցէ զնոսա որպէս զմատաղատունկն Լիբանանու, որ սիրելին է որպէս զորդիս միեղջերուի։

Զայն Տեառն հատանէ զբոց ի հրոյ ձայն Տեառն չարժէ զանապատան, և խռովեցուցանէ տէր զանապատըն Կադէս։

Զայն Տեառն հաստատէ զեղջերուս, և յայտնի առնէ զանտառս։

Ի տաճարի նորա ամենեքեան ասասցեն զփառս նորա։

Տէր զջրհեղեղս նստուցանէ և ցածուցանէ. թագաւորեսցէ տէր յաւիտեան։

Տէր զօրութիւն ժողովրդեան իւրոյ տացէ, և օրհնեսցէ զժողովուրդ իւր ի խաղաղութիւն։

Սաղմոս իթ։

Բարձր առնեմ զքեզ տէր՝ զի ընկալար զիս. և ոչ ուրախ արարեր զթշնամին իմ յիս։

Տէր Աստուած իմ՝ կարդացի առ քեզ և բժշկեցեր զիս. տէր հաներ ի դժոխոց զանձն իմ, և փրկեցեր զիս յայնցանէ՝ որք իջանեն ի դուբ։

Սաղմոս ասացէք տեառն սուրբք նորա. և խոստովանեցարուք յիշատակի սրբութեան նորա։

Սրտմտութիւն է ի բարկութեան նորա, և կեանք են ի կամաց նորա։

Ընդ երեկոյս հանգիցեն լալիք, առաւօտու եղիցի

Digitized by Google

ուրախութիւն։

Ես ասացի ի բարեկենդանութեան իմում, թէ ոչ սասանեցայց յաւիտեան։

Տէր ի կամս քո եառուր զեղոյ իմոյ զօրութիւն, դարձուցեր զերեսս քո ինէն՝ և ես եղէ խռովեալ։

Առ քեզ տէր կարդացի, և առ Աստուած իմ աղաղակեցի. զինչ օգուտ է քեզ յարենէ իմմէ, թէ իջանեմ ես յապականութիւն։

Միթէ հող խոստովան առնիցի առ քեզ, կամ պատմեսցէ զճշմարտութիւնս քո։

Լուաւ ինձ տէր և ողորմեցաւ. և տէր եղև ինձ օգնական։

Դարձոյց զսուգ իմ յուրախութիւն, էզգեցեր ինէն զքուրձ, և ինձ զգեցոյց զուրախութիւն։

Որպէս սաղմոս ասացեն քեզ վառք իմ. և այլ մի՛ ևս զղջացայց, տէր Աստուած իմ յաւիտեան խոստովան եղէց քեզ։

Փառք Հօր և Որդւոյ"։ Այժմ և միշտ և յաւի"։

Եւ ևս խաղաղութեան"։ Օրհնութիւն և վառք"։

Երրորդ գուբղայ։ Սաղմոս Լ։

Ի քեզ տէր յուսացայ՝ մի՛ ամաչեցից յաւիտեան, յարդարութեան քում փրկեա՛ և ապրեցո՛ զիս։

Խոնարհեցո՛ առիս զունկն քո, վաղվաղեա՛ կեցուցանել զիս։

Լե՛ր իմ Աստուած պաշտպան և տուն ապաւինի՝

Digitized by Google

ապրեցուցանել զիս, զի հզօրիչ իմ և ապաւէն իմ գու ես։

Վասն անուան քոյ տէր առաջնորդեցեր ինձ, և քնուցեր զիս. և հանցես զիս յորոգայթէ յայսմանէ՝ որ թագուցաւ ինձ։

Դու ես պաշտպան իմ տէր, և ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ։

Փրկեցեր զիս տէր Աստուած ճշմարտութեամբ քով. ատեցեր զայնոսիկ ոյք պահեն զերկիւղ ի սնոտիս։

Եւ ի տէր յուսացայ, ցնծացայց և ուրախ եղէց ի փրկութեան քումմ։

Զի հայեցար ի խոնարհութիւն իմ, և փրկեցեր ի վշտաց զանձն իմ. և ոչ մատնեցեր զիս ի ձեռս նեղչաց իմոց, և կացուցեր յանդորրու զոտս իմ։

Ողորմեա ինձ տէր՝ զի նեղեալ եմ ես. խռովեցաւ ի սրտմտութենէ ակն իմ՝ անձն իմ և փոր իմ։

Պակասեցան ի ցաւոց կեանք իմ, և ամք իմ յոգւոց ելանելոյ։

Աղքատացաւ ի տկարութենէ զօրութիւն իմ, և ոսկերք իմ խռովեցան։

Քան զամենայն թշնամիս իմ եղէ ես նախատ դրացեաց իմոց, յոյժ ահ և երկիւղ ծանօթից իմոց։

Ամենեքեան ոյք տեսանէին զիս, արտաքս փախչէին յինէն։

Մոռացեալ եղէ ես որպէս մեռեալ ի սրտէ, և եղէ ես որպէս զանօթ կորուսեալ։

Digitized by Google

Զի լուայ ես զբամբասանս բազմաց՝ ոչք չուրջ էին զինև, ի ժողովիլ նոցա ի միասին առնուլ զանձն իմ խորհեցան. այլ ես ի քեզ տէր յուսացայ։

Ասացի դու ես Աստուած իմ, և ի ձեռս քո է ժառանգութիւն իմ։

Փրկեա զիս ի ձեռաց թշնամեաց իմոց, և ի հալածչաց իմոց։

Երևեցո՛ զերեսս քո ի ծառայս քո. ապրեցո՛ զիս տէր ըստ ողորմութեան քում. տէր մի՛ յամօթ եղէց՝ զի կարդացի առ քեզ։

Ամաչեսցեն ամբարիշտք և իջցեն ի դժոխս. համր եղիցին շրթունք նենգաւորք՝ ոչք խօսէին զարդարոյ զանիրաւութիւն, յամբարտաւանիլ և յանգոսնել իւրեանց։

Որպէս զի բազում է ողորմութիւն քաղցրութեան քոյ տէր, զոր պահեցեր երկիւղածաց քոց։

Արարեր դու այնոցիկ՝ ոչք յուսացնալ են ի քեզ, առաջի որդւոց մարդկան։

Ամրացուցեր զնոսա ի ծածկոյթ երեսաց քոց, ի խռովութենէ մարդկան։

Ծածկեցեր զնոսա ի խորանի քում, ի հակառակութենէ լեզուաց։

Օրհնեալ է տէր, զի սքանչելիս արար զողորմութիւն իւր ի քաղաք ամուր։

Ես ասացի ի զարմանալ իմում, թէ ընկիեցայ ուրեմն յերեսաց աչաց քոց։

Վասն այսորիկ լուար ձայնի աղօթիցս իմոց, յաղա-

Digitized by Google

ղակել իմում առ քեզ։

Սիրեցէք զտէր ամենայն սուրբք նորա՝ զի ստուգութիւն խնդրէ տէր, և հատուցանէ այնոցիկ՝ որք առաւել առնեն զամբարտաւանութիւն։

Քաջալերեցարուք և զօրասցին սիրտք ձեր, ամենեքեան՝ որք յուսացեալ էք ի տէր։

Սաղմոս ԼԱ։

Երանի ում թողութիւն եղև մեղաց, և ծածկեցան ամենայն յանցանք նորա։

Երանի առն որում ոչ համարի տէր զմեղս նորա, և ոչ գոյ նենգութիւն ի բերան նորա։

Լռեցի ես և մաշեցան ամենայն ոսկերք իմ, առ աղաղակել ինձ առ տէր զօրհանապազ ի տուէ և ի գիշերի։

Ծանրացաւ ձեռն քո ի վերայ իմ, դարձայ ի թըշուառութիւն՝ զի հարան յիս վուշք։

Զմեղս իմ ցուցից քեզ, և զանօրէնութիւնս իմ ոչ ծածկեցից իքէն։

Ասացի թէ պատմեցից ինձէն զմեղս իմ, և դու թողեաս զամենայն ամբարշտութիւնս մեղաց իմոց։

Վասն այսորիկ յաղօթս կացցեն առ քեզ ամենայն սուրբք, ի ժամ ընդունելի։

Բայց միայն ի ջուրցն հեղեղաց բազմաց, որք առ նոսա ինչ ոչ մերձեացին։

Դու ես ապաւէն իմ ի նեղութենէ յայսմանէ, որ չուրջ եղեն զինև։

Digitized by Google

Ցնծութիւն իմ փրկեա զիս յայնցանէ՝ ոյք պաշարեցին զիս։

Իմաստուն արարից զքեզ և խելամուտ ի ճանապարհ յոր և գնասցես, և հաստատեցից ի վերայ քո զաչս իմ։

Մի՛ լինիք որպէս զձիս և զջորիս՝ զի ոչ գոյ ի նոսա իմաստութիւն. ի սանձս և ի դանդանաւանդս ճմլեսցես զկզակս նոցա՝ որք առ քեզ ինչ ոչ մերձեսցին։

Բազում տանջանք են մեղաւորաց, բայց ոյք յուսան ի տէր՝ ողորմութիւն Տեառն չուրջ եղիցի զնոքօք։

Ուրախ եղերուք և ցնծացէ՛ք արդարք ի տէր, պարծանացարուք ամենեքեան՝ ոյք ուղիղ էք սրտիւք։

Փառք Հօր և Որդւոյ՝ և Ա՛յժմ և միշտ և յաւի՛տ և եւ ևս յաղագուխեան՝ Օրհնութիւն և փառք՝

Զօրզորդ գումգոյ՝ Սաղմոս ՂԶ։

Մի՛ նախանձիր ընդ չարս. և մի՛ ընդ այնոսիկ՝ ոյք գործեն զանօրէնութիւն։

Զի որպէս խոտ վաղվաղակի ցամաքեսցին. որպէս զդալարի խոտոյ վաղվաղակի անցցեն։

Ցուսա ի տէր՝ և արա զբարեգործութիւն. բնակեա յերկրի՝ և հովուեսցիս ի մնծութեան նորա։

Փտեա ի տեառնէ, և նա տացէ քեզ զխնդրուածս սրտի քո. յայտնեա առաջի տեառն զճանապարհս քո և յուսա ի նա։

Digitized by Google

Նա արասցէ և հանցէ որպէս զլոյս զարդարութիւնըս քո, և զիրաւունս քո որպէս զօր հասարակ։

Հնազանդ լեր տեառն՝ և ծառայեա նմա, և մի նախանձիր ընդ այնոսիկ՝ որոց առակեալ իցեն ճանապարհք իւրեանց, ընդ մարդոյ՝ որ գործէ զանօրէնութիւն։

Լռեա ի բարկութենէ և հանդիր ի սրտմտութենէ, և մի նախանձիր ընդ չարս։

Զի չարք վաղվաղակի սատակեսցին. բայց որք համբերեն տեառն՝ նոքա ժառանգեսցեն զերկիր։

Փոքր մի և այլ ոչ ևս իցէ ամբարիշտն. խնդրեսցես զտեղի նորա և ոչ գտցես։

Այլ որ հեզքն են՝ նոքա ժառանգեսցեն զերկիր, և վաւիկասցին ի բազում խաղաղութեան իւրեանց։

Սպասէ մեղաւորն արդարոյ, և կրճտէ ի վերայ նորա զատամունս իւր. այլ տէր ծիծաղեսցի զնովաւ։

Քանզի յառաջագոյն տեսանէ, զի հասեալ է օր նորա։

Սուր հանին մեղաւորք և լարեցին զաղեղունս իւրեանց, հարկանել զաղքատն և զտնանկն, սպանանել զայն որ խոնարհն է սրտիւ։

Սուրք նոցա մտցեն ի սիրտս նոցա, և աղեղունք նոցա փշրեսցին։

Լաւ է սակաւիկ ինչ արդարոյ քան զբազում մեծութիւն մեղաւորաց, և բազուկք ամբարշտաց խորտակեսցին։

Digitized by Google

Հաստատէ տէր զարդարս, և ճանաչէ զաւուրս ամբծից, ժառանգութիւն նոցա յաւիտեան եղիցի։

Մի՛ ամաչեսցեն նոքա ի ժամանակս չարութեան. այլ յաւուրս սովու յագեսցին։

Ահա մեղաւորք կորիցեն. այլ թշնամիք տեառն ի փառաւորիլ և բարձրանալ իւրեանց պակասեսցին որպէս ծուխ՝ զի պակասի։

Փոխ առնու մեղաւորն և ոչ հատուցանէ. այլ որ արդարն է՝ ողորմի և տայ։

Որք օրհնեն զտէր՝ ժառանգեսցեն զերկիր, և որք անիծանեն՝ սատակեսցին ի նմանէ։

Ի տեառնէ ուղղին գնացք առն, զճանապարհս նորա նա կամի յոյժ։

Թէպէտ և գայթակղեսցի, նա մի՛ կործանեսցի, զի տէր ձեռնկալու է նորա։

Մանուկ էի ես և ծերացայ, և ոչ տեսի զարդարն արհամարհեալ, և ոչ զաւակ նորա թէ մուրանայ հաց։

Ողորմի և տայ փոխ, զաւակ նորա օրհնեալ եղիցի յաւիտեան։

Խոտորեա ի չարէ և արա զբարի. և բնակեսցիս յաւիտեանս յաւիտենից ի նմա։

Տէր սիրէ զիրաւունս, և ոչ ընդ վայր հարկանէ զսուրբս իւր, այլ յաւիտեան պահէ զնոսա։

Անօրէնք հալածեսցին ի միասին, և զաւակք անբարչտաց սատակեսցին։

Այլ արդարք ժառանգեսցեն զերկիր, և բնակեսցին

յաւիտեանս յաւիտենից ի նմա։

Բերան արդարոյ խորհի զիմաստութիւն, և լեզու նորա խօսեսցի զիրաւունս։

Օրէնք Աստուծոյ իւրոյ են ի սրտի իւրում, և մի գայթակղեսցին գնացք նորա։

Հայլ մեղաւորն ընդ արդար և խնդրէ սպանանել զնա, այլ տէր ոչ թողու զնա ի ձեռս նորա, և ոչ դատապարտէ զնա՝ յորժամ դատէ զնա։

Համբոյր տեառն և պահեայ զճանապարհս նորա, և բարձր արասցէ զքեզ ի ժառանգել զերկիր, և զաւտակումն մեղաւորաց տեսցես։

Ցեսի զամբարիշտն վերացեալ և բարձրացեալ որպէս զմայրսն Լիբանանու։

Անցի և ահա ոչ էր, խնդրեցի՝ և ոչ գտաւ տեղի նորա։

Պահեայ զամբծութիւն, և տես զուղղութիւն. զի գոն մնացուածք յառն խաղաղարարի։

Անօրէնք հալածեսցին ի միասին, և զաւակք ամբարչաց կորիցեն։

Փրկութիւն արդարոց ի տեառնէ է, վերակացու է նոցա ի ժամանակս նեղութեան։

Օգնեսցէ նոցա տէր և փրկեսցէ զնոսա. ապրեցուսցէ ի մեղաւորաց՝ և կեցուսցէ զնոսա զի յուսացան ի նա։

Փառք Հօր և Որդւոյ”։ Այժմ և միշտ և յաւի”։

Եւ ևս խաղաղութեան”։ Օրհնութիւն և փառք”,

Digitized by Google

Հինգ երորդ գուբերայ ։ Սաղմոս Լէ ։

Տէր մի՛ սրամտութեամբ քով յանդիմաներ զիս . և մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս ։

Զի նետք քո հարան յիս , և յիս հաստատեցաւ ձեռըն քո ։

Ո՛չ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ , յերեսաց բարկութեան քոյ ։

Ո՛չ է խաղաղութիւն ոսկերաց իմոց , յերեսաց մեղաց իմոց ։

Անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ , որպէս բեռն ծանր ծանրացան ի վերայ իմ ։

Նեխեցան և փտեցան վէրք իմ , յերեսաց անզգամութեան իմոյ ։

Տառապեցայ և խոնարհ եղէ մինչև յոյժ , զօրհանապազ տրտում գնայի , զի անձն իմ լի եղև չարչարանօք , և ո՛չ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ ։

Չարչարեցայ և խոնարհ եղէ մինչև յոյժ , մռնչէի առ հեծութեան սրտի իմոյ ։

Տէր առաջի քո է ամենայն ցանկութիւն իմ , և հեծութիւն իմ ի քէն ո՛չ ծածկեցաւ ։

Սիրտ իմ խռովեցաւ յիս , և եթող զիս զօրութիւն իմ . լոյս աչաց իմոց , և այս ո՛չ եղև ընդիս ։

Բարեկամք իմ և մերձաւորք իմ առաջի իմ մերձեցան և կացին , և մերձաւորք իմ հեռի եղեն յինէն ։

Բռնադատէին զիս և խնդրէին զանձն իմ՝ ոյք խորհէին չար ի վերայ իմ , խորհեցան զանօրէնութիւն և

Digitized by Google

և զննդութիւն զօրհանապազ խորհեցան։

Այլ ես ոլզէս խուլ զի ոչ լսէ, որպէս համր որ ոչ բանայ զբերան իւր։

Եղէ ես որպէս մարդ որ ոչ լսէ, և ոչ գոն խօսք ի բերան նորա։

Եւ ի քեզ տէր յուսացայ, և դու լուիցես ինձ տէր Աստուած իմ։

Ասացի թէ մի ուրախ եղիցին ինձ թշնամիք իմ. ի սասանիլ յոտից իմոց՝ ի վերայ իմ մեծամեծս խօսեցան։

Եւ ի տանջանս պատրաստ եմ, և ցաւք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Զանօրէնութիւնս իմ պատմեցից, և հոգացայց վասն մեղաց իմոց։

Իսկ արդ՝ թշնամիք իմ կենդանի են, և զօրացեալք են քան զիս, և բազումք էին՝ որք ատէին զիս ի տարապարտուց։

Որք հատուցին ինձ չար փոխանակ ընդ բարւոյ. չարախօսէին զինէն, զի ես երթայի զհետ արդարութեան։

Մի թողուր զիս տէր Աստուած իմ. և մի ի բացեայ առներ յինէն, հայեաց յօգնել ինձ տէր փրկութեան իմոյ։

Սաղմոս ԼՉ։

Ասացի թէ պահեցից զճանապարհս իմ. զի մի մեղայց լեզուաւ իմով։

Digitized by Google

Ի դի պահապան բերանոյ իմոյ՝ ի հակառակիլ մեղաւորին առաջի իմ։

Լուռ եղէ և խոնարհեցայ. լռեցի ի բարութենէ, և ցաւք իմ նորոգեցան յիս։

Ջեռաւ սիրտ իմ ի փորի իմում, և ի խորհուրդս իմ վառեցաւ հուր։

Խօսեցայ լեզուաւ իմով և ասացի. ցոյց ինձ տէր զկատարած իմ և զթիւ աւուրց իմոց՝ քանի՞օն է, զի գիտացից թէ ո՞րչափ ինչ պակասեալ է յինէն։

Ահա չափով եդեր զաւուրս իմ, և կաը զօրութեան իմոյ որպէս ոչինչ է առաջի իմ. սակայն ամենևին ընդունայն է ամենայն մարդ մեղի։

Ապաքէն որպէս ի պատկերի չրջի մարդ, սակայն ի զուր խռովի, գանձէ և ո՛չ գիտէ ումմ ժողովէ։

Իսկ արդ՝ ո՛վ է համբերութիւն իմ՝ թէ ոչ դու տէր. կամ կաը զօրութեան իմոյ՝ թէ ո՛չ ի քէն։

Յամենայն անօրէնութենէ իմմէ փրկեցեր զիս, և նախատինս անզգամաց արարեր զիս։

Լուռ եղէ և ո՛չ բացի զբերան իմ, զի դու արարեր։

Ի բաց արա յինէն զտանջանս իմ, զի ի զօրութենէ ձեռին քո ես պակասեցայ։

Վչտամբութեամբ վանն մեղաց խրատեցեր զմարդ, մաշեցեր որպէս սարդիոստայն զանձն նորա. սակայն ընդունայն է ամենայն մարդ։

Լուր տէր աղօթից իմոց, ունկն դիր խնդրուածոց իմոց, արտասուաց իմոց մի լռեր։

Digitized by Google

Պանդուխտ եմ ես առաջի քո, նժդեհ և անցաւոր որպէս ամենայն հարք իմ։

Թո՛ղ արա ինձ զի հանգիստացց մինչչև երթեալ իցեմ, և այլ ո՛չ ես գտանիցեմ։

Սաղմոս ԼԹ։

Համբերելով համբերի Տեառն, և նայեցաւ առ իս, և լուաւ աղօթից իմոց։

Եհան զիս ի գբոյ տառապանաց, ի կաւոյ և ի տղմոյ։

Հաստատեաց ի վերայ վիմի զոտս իմ, և ուղղեաց զդնացս իմ։

Էարկ ի բերան իմ օրհնութիւն նոր, զօրհնութիւն Տեառն Աստուծոյ մերոյ։

Տեսցեն բազումք և երկիցեն, և յուսասցին ի տէր. երանեալ է այր որոյ անուն տեառն յոյս է նորա։

Ո՛չ հայեցաւ նա ի նանրութիւն, և ո՛չ ի մոլութիւն սուտ։

Բազում արարեր դու՝ տէր Աստուած իմ զաքանչելիս քո. և խորհրդոց քոց՝ ո՛չ ոք է որ նմանիցի քեզ։

Պատմեցի և խօսեցայ՝ և բազումք եղեն քան զթիւըս. ընդ զոհս և ընդ պատարագս ո՛չ հաճեցար, լսանելիս հաստատեցեր ինձ. զողջակէզս և զվասն մեղացըն ո՛չ խնդրեցեր։

Ցայնժամ ասացի Թէ ահաւասիկ գամ ես, ի գլուխս գրոց գրեալ է վասն իմ։

Առնել զկամս քո Աստուած իմ կամեցայ, և զօրէն

ներս քո ի մէջ որովայնի իմոյ։

Աւետարանեցից՝ զարդարութիւնս քո յեկեղեցիս մեծս. ահա զշրթունս իմ ոչ արգելից ի քէն։

Տէր դու գիտացեր՝ զի զարդարութիւնս քո ոչ ծածկեցի ի սրտի իմում, զճշմարտութիւնս քո՝ և զփրկութիւնս քո։

Ասացի և ոչ թագուցի զողորմութիւնս քո, և ըզճշմարտութիւնս քո ի ժողովրդենէ մեծէ։

Այլ դու տէր մի՛ հեռի առներ զգթութիւնս քո յինէն. զի ողորմութիւն քո, և ճշմարտութիւն քո յամենայն ժամ ընկալցի զիս։

Շուրջ եղեն զիս չարք՝ որոց ոչ գոյր թիւ. հասին ինձ անօրէնութիւնք իմ, և ես ոչ կարացի տեսանել։

Բազում եղեն քան զհեր գլխոյ իմոյ, և սիրտ իմ եթող զիս։

Կամեաց տէր փրկել զիս, և տէր յօգնել ինձ նայեաց։

Ամաչեսցեն և յամօթ լիցին՝ որք խնդրէին զանձն իմ բառնալ զսա. դարձցին յետս և ամաչեսցեն՝ որք խնդրէին ինձ չար։

Կրեսցեն զամօթ առժամայն վազվաղակի, որք ասէին ինձ վաչ վաչ։

Յննդասցեն և ուրախ լիցին ի քեզ ամենեքեան, որք խնդրեն զքեզ տէր։

Ասասցեն յամենայն ժամ՝ մեծ է Աստուած, և որք սիրեն զփրկութիւնս քո։

Ես աղքատ և տնանկ եմ Աստուած խորհեա զիս. օգնական և պաշտպան իմ ես, և դու Աստուած իմ

մի յամենայն։

Փառք Հօր և Որդւոյ»։ Այժմ և միշտ և յաւի»։

Եւ ևս խաղաղութեան»։ Օրհնութիւն և փառք»։

Վեցերորդ գուշակ։ Սաղմոս Թ։

Երանի որ խորհի զաղքատն և զտնանկն, յաւուր չարի փրկէ զնա տէր։

Տէր փրկէ զնա և կեցուցանէ, երանելի առնէ զնա ի վերայ երկրի, և ոչ մատնէ զնա ի ձեռս թշնամեաց իւրոց։

Տէր օգնական է նմա ի մահիճս ցաւոց իւրոց, զամենայն անկողինս նորա դարձուցանէ ի հիւանդութենէ նորա։

Ես ասացի տէր ողորմեա ինձ, բժշկեա զանձն իմ, ես մեղայ քեզ։

Թշնամիք իմ ասացին ինձ չար. երբ իցէ ի մեռանի և կորիցէ անուն նորա։

Մտանէր տեսանել զնաներութիւն, խօսէր ի սրտի իւրում, և ժողովէր զանօրէնութիւն յանձն իւր։

Արտաքս ելանէր և զնոյն խօսէր. ընդդէմ ինեն չնչէին ամենայն թշնամիք իմ։

Ի վերայ չար ի վերայ իմ, բան անօրէնութեան եդին ի վերայ իմ։

Միթէ որ ննջիցէ՝ այլ ոչ ևս յարուցի յառնել. քանզի և այրն խաղաղութեան իմոյ՝ յոր և ետու յուսացայ։

Որ ուտէր զհաց իմ, յարձակեաց առնել ինձ խաբէութիւն։

Digitized by Google

Այլ դու տէր ողորմեա ինձ և կանգնեա զիս, և ես հատուցից նոցա։

Ցայսմ ծանեայց թէ հաճեցար ընդիս, զի մի ուրախ եղիցին յիս թշնամիք իմ։

Այլ զիս յամբծութեան իմում ընկալար. և հաստատեցեր զիս առաջի քո յաւիտեան։

Օրհնեալ տէր Աստուած Իսրայէլի յաւիտեանս յաւիտենից. եղիցի եղիցի։

Սաղմոս ԽԱ.։

Որպէս փափագի եղջերու յաղբերս ջուրց, այնպէս փափագի անձն իմ առ քեզ Աստուած։

Ծարաւի է անձն իմ առ քեզ Աստուած հզօր և կենդանի. երբ եկից երևեցայց երեսացդ Աստուծոյ։

Եղեն ինձ արտասուք իմ կերակուր ի տուէ և ի գիշերի, և այն զի ասէին ցիս զօրհնապազ՝ թէ ո՞ւր է Աստուած քո։

Զայս որպէս յիշէի՝ տառապէր յիս անձն իմ. քանզի ալերէի զի մտից ընդ յարկաւ պանչելեաց տանն Աստուծոյ։

Ի ձայն ցնծութեան խոստովանութեան, և ի ձայն բարեկենդանութեան։

Ալեպ՝ ընդէր տրտում ես անձն իմ, կամ ընդէր խռովես զիս. յուսա առ Աստուած, խոստովանեա նմա՝ Փրկիչ երեսաց իմոց Աստուած է։

Անձն իմ յոյժ խռովեցաւ, վասն այսորիկ յիշեցի զքեզ յերկրէն յորդանանաւ, ի հերմոնէ ի լեռնէ փոքուէ։

Digitized by Google

Խոլք խորոց կարդացին առ քեզ, ի ձայն սահանաց քոց։

Ամենայն ղբօսանք քո, և ալիք քո անցին ի վերայ իմ։

Ի տուէ պատուիրեաց տէր ողորմութիւն իւր, ի դիշերի օրհնութիւն նոր. և աղօթք իմ առ Աստուած վասն կենաց իմոց։

Ասացի Աստուծոյ՝ ընդունօղ իմ ես. ընդէր մերժեցեր զիս, ընդէր տրտում գնամ ես ի նեղել թշնամոյ իմոյ։

Ի փշրիլ ոսկերաց իմոց նախատեցին զիս թշնամիք իմ, յասել ցիս օրհնանապազ՝ Թէ ո՞ւր է Աստուած քո։

Արդ՝ ընդէր տրտում ես անձն իմ, կամ ընդէր խըռովես զիս. յուսա առ Աստուած, խոստովանեա նըմա՝ Փրկիչ երեսաց իմոց Աստուած է։

Սաղմոս ԽԲ։

Դատ արա ինձ Աստուած, և իրաւ արա ինձ ի դատաստանի իմում։

Ցազգէ որ ոչ է սուրբ, ի մարդոյ մեղաւորէ ևնդաւորէ փրկեա զիս։

ՙԻու Աստուած հզօրիչ իմ ես՝ ընդէր մոռացար զիս, ընդէր տրտում գնամ ես ի նեղել թշնամոյ իմոյ։

Առաքեա տէր զլոյս քո և զճշմարտութիւն քո, զի առաջնորդեսցեն ինձ և հանցեն զիս ի լեառն սուրբ և ի յարկս քո։

Digitized by Google

Մոխիւ առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ։

Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ Աստուած Աստուած իմ։

Արդ՝ ընդէր տրտում ես անձն իմ, կամ ընդէր խռովիս ինձ. յուսա առ Աստուած, խոստովանեա նմա՝ Փրկիչ երեսաց իմոց Աստուած է։

Փառք Հօր և Որդւոյ"։ Այժմ և միշտ և յաւի"։ Եւ ես խաղաղութեան"։ Օրհնութիւն և փառք"։

Ոգւոյք ցուխանու Մարդարէին։ Գլ՝ Բ. հմր 3։

Ի նեղութեան իմում ես առ տէր կարդացի, և լուաւ Աստուած յանդնդոց դժոխոց աղաղակի իմում։

Լուր տէր ձայնի իմում՝ զի ընկեցեր զիս ի խորս ծովու, և չրջանք գետոց պաշարեցին զիս։

Ամենայն հրճանք քո և ալիք քո անցին ի վերայ իմ, և ասացի Թէ մերժեցայ ուրեմն յերեսաց աչաց քոց։

Արդ՝ երջ Թէ յաւելից հայել ի տաճար սուրբ քո, զի հեղան զինև ջուրք մինչև յանձն իմ, և անդունդք անհնարինք պաշարեցին զիս։

Եմուտ գլուխ իմ ընդ փապարս լերանց, իջի ես ի խորս երկրի, և տեսի զնիգս նոցա, զի էին որպէս ախք յաւիտենից. և ելցեն յապականութենէ կեանք իմ։

Առ քեզ տէր Աստուած իմ՝ ի նուաղիլ անձին ի-

Digitized by Google

մոյ կարդացի, և զքեզ տէր յիշեցի, և մտցեն աղօթք իմ ի տաճար սուրբ քո։

Զի ոչք պահէին զունայնութիւն և զսուտութիւն, յողորմութենէ իւրեանց մերժեցան։

Այլ ես ի ձայն օրհնութեան խոստովան եղէց քեզ, մատուցից պատարագս տեառն, և կատարեցից զուխտ իմ ի փրկութեան։

Փառք Հօր և Որդւոյ"։ Այժմ և միշտ և յաւէ"։

Եւ ի ծունկս անկեալ սկսանին ողբաձայն Շաբաթան Դկ. ՍՏ։

Զա՞րհուրեա՛լ դողա՛ցա՛՞ւ ա՛մե՞նա՛մեղ անձնիմ, յա՛հ՛՞ղ քոց դատա՛տանա՞ց, յաննելելի՛ տա՞նջանա՛՞ն։ Երկիւղիւք։

Զինի՛՝ Եւ ևս խաղաղութեան"։ Օրհնութիւն և վառք"։

Դաբձեալ աղօթք Եռվանու. Մաղդ արկին։

Ի նեղութեան իմում ես առ։

Դաբձեալ Շաբաթան Դկ. ՍՏ։

Քա՞նզի կամա՛ւ մերձե՛ցա՛՞յ ի՛ մե՞ղս մե՛ծամե՛ծս. ա՛յդ կա՛՞յ և՛ մընա՞յ ինձ աննելելի՛ պա՞տուհա՛ան։ Երկիւղիւք։

Զինի՛՝ Եւ ևս խաղաղութեան"։ Օրհնութիւն և վառք"։

Digitized by Google

Դարձեալ ալօթք Յովհաննու Մարգարէին։

Ի նեղութեան իմում ես առ։

Շաբաթան Դկ. ՍՏ։

Ա՞րդ անկնա՛լ աղա՛չե՛մ փը՛րկի՛չ և՛ բա՛րե՛բար. խնա՛յա՛ց յիս ի՛ մեղուցա՞լս, և՞ ողորմա՞ ինձ բա՛զմա՞մեղի՛ս։ Երկիւղ ի՛ղձեաց։

Եւ ապա ասէն։

Տէր ամենակալ Աստուած Աբրահամու Իսահակայ Յակոբայ՝ և զաւակի նոցա ալդպրոց. ամենակալ տէր՝ թող զմեզ իմ։

Ող արարիր զերկինս՝ և զերկիր, և զամենայն զարդ նոցա. ամենա՛՛։

Ող կապեցեր զծով բանիւ հրամանի քո. փակեցեր զխորս, կնքեցեր ահաւոր և փառաւորեալ անուամբ քով սրբով. ամենա՛՛։

Ող ամենայն ինչ սասթի և դողայ յերեսաց ահի զօրութեան քոյ. ամենա՛՛։

Անքաւ է մեծ վայելչութիւն փառաց սրբութեան քոյ. սասթիկ է բարկութիւն սպառնալեաց քոց ի վերայ մեղաւորաց. անչափ և անքննին են ողորմութիւնք աւետեաց քոց. ամենա՛՛։

Ի՛ս տէր բարձրեալ՝ զքեզ. երկայնամիտ, բազումողորմ. և զղջանաս ի վերայ չարեաց մարդկան. ամենա՛՛։

Ի՛ս Աստուած՝ ոչ եղեր ապաչխարութիւն վասն

արդարոցն՝ Աբրահամու Իսահակայ և Յակոբայ, ոչք ոչ մեղան քեզ. ամենա՛ն»։

Այլ եղեր ապաշխարութիւն վասն իմ մեղաւորիս. զի մեղայ աւելի քան զաւազ ծովու, և բազմացան անօրէնութիւնք իմ. ամենա՛ն»։

Զեմ արժանի հայիլ՝ և տեսանել զբարձրութիւնս երկնից՝ ի բազմութենէ անօրէնութեան իմոյ. ամե՛ն»։

Կորացեալ եմ ես ի բռնութենէ կապանաց երկաթից. և ոչ գոյ ինձ հանգիստ. ամենա՛ն»։

Բարկացուցի զսրտմտութիւն, և չար առաջի քո արարի. կանգնեցի պատկեր և բազմացուցի զցասումն. ամենա՛ն»։

Եւ արդ ահ՝ խոնարհեցուցանեմ գծուխն սրտի իմոյ, և հայցեմ ի քաղցրութենէ քումմէ. ամենա՛ն»։

Մեղայ ահ՝ մեղայ, և զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ. ամենա՛ն»։

Աղաչեմ և խնդրեմ ի քէն՝ թող ինձ տէր, թող ինձ, և մի կորուսաներ զիս ընդ անօրէնութեան իմոյ. ամենա՛ն»։

Մի յաւիտեան բարկանար ինձ տէր, և մի յիշեր զչարիսն իմ. և մի պարտաւորեր զիս ընդ իջեալսն ի նեղքոյ երկրի չարեաք. ամենա՛ն»։

Զի դու Աստուած՝ Աստուած ապաշխարողաց ես. և յիս ցոյց զբարեբարութիւնս քո՞, որ անարժան եմ. ամենա՛ն»։

Կեցուացես զիս ըստ բազում ողորմութեան քում. և

ես օրհնեցից զքեզ զամենայն աւուրս կենաց իմոց. ամենա՛ն»։

Զքեզ տէր՝ օրհնեն ամենայն գոյացութիւնք երկնից. և քո են փառք յաւիտեանս. ամէն։

Փառք Հօր և Որդւոյ»։ Այժմ և միշտ և յաւի՛ն»։

Շարական Դկ. ՍՏ։

Ա՛մե՛նա՛յ կալ քա՛ւեա՛՞ ըզմի՛՞զս ի՛մ. զի Ա՛ստըւած ե՛ս ապա՛՛չխա՛՞րոզո՛՞ց։ Երկիւղ էրկնեա։

Ապա դարձեալ ասեն։

Տէր ամենակալ Աստուած»։

Շարական Դկ. ՍՏ։

Ե՛ւ գՀո՛գի՛դ սուրբ մի՛՛ հա՛՛նի՛ր յի՛նէ՛ն. զի Ա՛ստըւած ե՛ս ապա՛՛չխա՛՞րոզո՛՞ց։ Երկիւղ էրկնեա։

Նո՛ գարձեալ ասեն։

Տէր ամենակալ Աստուած»։

Շարական Դկ. ՍՏ։

Ե՛ւ վերկեա՛՛ զիս յա՛՛հա՛՛գի՛՛ն հը՛՛ո՛՛ղն. զի Ա՛ստըւած ե՛ս ապա՛՛չխա՛՞րոզո՛՞ց։ Երկիւղ էրկնեա։

Աղաչեմ և խնդրեմ ի քէն տէր, թող ինձ զմեղս իմ։ Բազումողորմ տէր, ողորմեա ինձ։

Աստուած՝ քաւեա զիս զմեղաւորս ի մեղաց, և կեցո։

Արարիչ իմ և յոյս Աստուած, զթա՛ յիս ի մեղուցեալ ծառայս. և ողորմեա ինձ բազմամեղիս։

Digitized by Google

Ամենօրհնեալ սրբուհի՝ և միշտ կոյս Աստուածածին Մարիամ. բարեխօսեա առ տէր վասն իմ մեղաւորիս։

Ամենայն սուրբք Աստուծոյ՝ բարեխօսեցէք առ Հայր ի յերկինս վասն մեր մեղաւորացս։

Քրիստոս Որդի Աստուծոյ անեղական, ընկալ զաղաչանս մեր. զի ի քեզ են ապաւինեալ անձինք մեր։

Ծաղիկ զօրութեամբ՝ սուրբ և կենդանարար և պատուական խաչիւ քո տէր՝ պահպանեա զմեզ։

Առաքեա տէր զհրեշտակ խաղաղութեան քո. որ եկեալ պահեսցէ զմեզ անխռով ի տուէ և ի դիշերի։

Եւ մարդասիրութեամբ քո յիշեա զմեզ տէր՝ յիշեա զմեզ, յորժամ գաս արքայութեամբ քո, և ողորմեա մեզ։

ԳԱՐՈՂ

Եկեալք ի խոստովանութիւն ապաշխարութեան՝ հաւատով պյոյս Միածնի Որդւոյն Աստուծոյ դիցուք ի սիրտս մեր, խնդրելով ի նմանէ դքաւութիւն և ըզթողութիւն յանցանաց մերոց։ Վասն զի նա ինքն է նախանձնամողն Աստուած յաւիտենական. որ ևկն կամաւ Հօր ի վրկել զաշխարհս. և ասայ՝ զինքն լինել քաւիչ մեղաւորաց, յոյս ապաշխարողաց, չնորհելով զհանդիստ աշխատելոց, ընդունելով զծանրաբեռնեալքս և զտաժանեալքս մեղօք յապաշխարութիւն քաւութեան։ Այլ՝ եկայք ամենեքեան խոնարհեալ անձամբք՝ բեկեալ սրտիւք անկեցուք և լացցուք առաջի Տեառն ա լարչին մերոյ. զի անցուսցէ ի մէնջ զցասումն

Digitized by Google

պատուհասի յանցանաց մերոց բարերարութեամբն իւրով։ Ամենակալ տէր Աստուած մեր. կեցո և ողորմեա։

ԱՂՕԹՔ

Տէր Աստուած փրկութեան մերոյ՝ որ ողորմածդ ես և գթած. երկայնամիտ բազումողորմ, և զղջանաս ի վերայ չարեաց մարդկան. որ ոչ կամիս զմահ մեղաւորին, այլ զդառնալ նորա ի չար ճանապարհէն և կեանս։ Դու տէր՝ առատ ողորմութեամբդ քով մխիթարեա զծառայս քո. և տուր սոցա տեղի ապաշխարութեան։ Հաչտեա մարդասիրութեամբ քով. և այս զօրսա անդամս եկեղեցւոյ քում սրբոյ։ Որպէս ի առողջացեալք հոգւով՝ խոստովանութեամբ և ապաշխարութեամբ մոցեն յեկեղեցի քո սուրբ։ Եւ ընդ ժողովրդեան քում, քեզ հանցեն զօրհնութիւն և զփառս Հօր և Որդւոյ և Հոգւոյդ Սրբոյ. այժմ և միշտ։

Եւ ապա ասէն ողբաձայն Սաղմոս Ե. է լման։

ԿՁ. Ձօղեմ յիս մչտական և սուրբ եղէց, լաւ և քան զձիւն սպիտակ եղէց։

ՓԽ. Ողորմեա ինձ Աստուած՝ ըստ մեծի ողորմութեան քում, (Տես ի Թիւն. 56։)

Ընդ երգս ածս յետոյ Մաքսիմէ է։
Գլ՝ 60. Հմր 20։

Եւ կատարեսցին աւուրք սգոյ քոյ։ Եւ ժողովուրդ քո ամենեին արդար. և յաւիտեան ժառանգեսցեն վերկիր. պահել ընորատունկ գործոց ձեռաց իւ-

Digitized by Google

ըեանց ի փառս։ Սակաւաւորն հազարաւոր եղիցի. և կլուսաբն յազգ մեծ. զի ես տէր ընդ ժամանակս ժամանակս ժողովեցից զնոսա։

Ընթերցուածս յեղեկիէլէ Մարգարէ։
Գլ՝ 36. Հմր 24։

Այսպէս ասէ տէր. և առից զձեզ ի հեթանոսաց. և ժողովեցից զձեզ յամենայն աղգաց. և տարայց զձեզ յերկիրն ձեր։ Եւ ցանեցից ի վերայ ձեր ջուր սուրբ. և սրբեսջիք յամենայն պղծութեանց ձերոց. և յամենայն կռոց ձերոց սրբեցից զձեզ։ Եւ տացս ձեզ զսիրտ նոր. և զոգի նոր նորոգեցից ի ձեզ. և հանիցս զսիրտն քարեղէն ի մարմնոց ձերոց. և տացս ձեզ զսիրտ մարմնեղէն։ Եւ զոգի իմ տացս ձեզ. և արարից, զի յարդարութիւնս իմ գնայցէք, և զբարւոնս իմ պահիցէք. և առնիցէք զնոսա։ Եւ բնակիցիք յերկրին՝ զոր ետու հարցն ձերոց. և եղիցիք ինձ ի ժողովուրդ. և ես եղէց ձեզ յԱստուած։ Եւ զերծուցից զձեզ յամենայն պղծութեանց ձերոց. կոչեցից զցորեանն, և բազմացուցից զնա. և ոչ ածից ի վերայ ձեր սով։ Եւ բազմացուցից զպտուղ ծառոյ. և զարդիւնս անդոց. զի մի՛ ևս ընդունիցիք զնախատինս սովու ի մէջ ազգաց։ Եւ յիշեսջիք զճանապարհս ձեր չարս. և զգնացս ձեր զանբարիս. և տաղտկասջիք յերեսաց անօրէնութեանց ձերոց։

Digitized by Google

Պօղոսի Առաքելոյն յերբայրացս թղթոյն Ե ընդհերքսուածս ։
Գլ, 10. հմր 19

Ունիմք այսուհետեւ ՚ղբարք՝ զհամարձակութիւն ի մուտս սրբութեանցն արեամբն Ցիսուսի ։ Որ նորոգեաց մեզ զճանապարհ նորոգ և կենդանի ի ձեռն վարագուրին՝ այսինքն է, մարմնոյ իւրոյ ։ Եւ քահանայ մեծ ի վերայ տանն Աստուծոյ ։ Մատիցուք ճշմարիտ սրտիւ, լրութեամբ հաւատոյ, լուացեալ ըզսիրտս ի խղճէ չարեաց, և մկրտեալ զմարմինս ի ջուր սրբութեան ։ Պինդ կալցուք զխոստովանութիւն անշարժ՝ յուսոյն. զի հաւատարիմ է՝ որ խոստացաւն ։ Եւ զգուշացարո՛ւք միմեանց յորդորմամբ սիրոյ և գործոց բարեաց ։ Եւ մի՛ թողցուք զժողովս միմեանց, որպէս և սովոր են ոմանք. այլ մխիթարեցուք, և այնչափ ևս առաւել՝ որչափ տեսանիցէք զօրն մերձենալ ։ Զի կամակոր մտօք եթէ յանցանիցեմք յետ ընդունելութեան գիտութեան ճշմարտութեանն՝ այնուհետեւ ոչ ևս պիտոյ է վասն մեղաց պատարագ ։ Այլ ահեղ ակնկալութիւն դատաստանին, և նախանձ հրոյն, որ ուտիցէ զհակառակորդսն ։ Ակհամարհեալ ուրուք զօրէնսն Մովսէսի, առանց իրիք ողորմութեան՝ առ երկուք կամ երիւք վկայիւք մեռանիւր ։ Իսկ արդ՝ որչափ սաստիկ պատժոց արժանի համարիցիք զայն, որ զՈրդին Աստուծոյ առ ոտն եհար. և զարիւն նորոյ ուխտին խառնակ համարեցաւ. որով և սրբեցաւն. և զհոգին չնորհաց թշնամանեաց ։ Այլ

գիտեմք զայն՝ որ ասաց. իմ են վրէժխնդրութիւնք. և ես հատուցից՝ ասէ տէր. և դարձեալ թէ՝ դատէ տէր զժողովուրդ իւր: Ահ մեծ է անկանիլ ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ:

Սաղմոս ՃԱ. ի լմնան ասա:

Ալէլուիա ալէլուիա

Որպէս փափագի եղջերու յաղբերս ջուրց, այնպէս փափագի անձն իմ առ քեզ Աստուած:

(Տես ի Թիւն. 325:)

Ջկնէ՛ Ալէլուիա՞ օրթէ:

Սրբոյ Աւետարանիս Ցխաւսի Քրիստոսի որ ըստ Ղուկասու:

Գլ՝ 7. հմր 36:

ԳՏէրն մեր Ցիսուս Քրիստոս:

Աղաչէր զնա ոմն ի Փարիսեցւոցն՝ զի կերիցէ հաչ ընդ նմա. և մտեալ ի տուն Փարիսեցւոյն՝ բազմեցաւ: Եւ կին մի էր ի քաղաքին մեղաւոր. իբրև գիտաց եթէ բազմեալ է ի տան Փարիսեցւոյն, բերեալ չիւ մի իւղոյ նարդեան ազնուի: Կայր յետոյ առ ոտսն նորա, լայր. և արտասուօքն սկսաւ թանալ զոտս նորա. և հերով գլխոյ իւրոյ չնչէր. և համբուրէր զոտս նորա. և օծանէր իւղովն: Եւ տեսեալ Փարիսեցւոյն՝ որ կոչեացն զնա՝ ասէ ընդ միտս իւր. սա թէ Մարգարէ ոք էր, ասէր գիտէր թէ ով և որպիսի ոք կին մեղաւոր է սա. զի մեղաւոր է: Պատասխանի

Digitized by Google

ետ Յիսուս և ասէ. Սիմօն, ունիմ ինչ ասել քեզ. և նա ասէ՝ ասա վարդապետ. և ասէ. Երկու պարտապանք էին ուրումն փոխատուի. մինն պարտիւր հինգ հարիւր դահեկան. և միւսն յիսուն: Եւ իբրև ոչ դոյր հատուցանել՝ երկոցունց չնորհեաց. արդ՝ ասա, ո՞վ առաւել սիրեսցէ զնա: Ասէ Սիմօն. ինձ այսպէս թուի, թէ որում զբազումն չնորհեաց. և նա ասէ ցնա. ուղիղ դատեցար: Եւ դարձեալ ի կինն կողմն, ասէ ցՍիմօն. տեսանե՞ս զայս կին. մտի ի տուն քո՝ ջուր ոտից իմոց ոչ ետուր. իսկ սա արտասուօք իւրովք եթաց զոտս իմ, և հերով իւրով չնչեաց: Համբոյր մի դու ոչ ետուր ինձ. սա աւասիկ յորմէհետէ մտեալ եմ, ոչ դադարեաց ի համբուրելոյ զոտս իմ: Իւղով զգլուխ իմ ոչ օծեր. սա իւղով անուշիւ էօծ: Վասնորոյ ասեմ քեզ. Թողեալ լիցին սմա մեղք իւր բազումք, զի յոյժ սիրեաց. զի որում չատ թողուցու, չատ սիրէ՝ և որում սակաւ, սակաւ: Եւ ասէ ցնա. Թողեալ լիցին քեզ մեղք քո: Եւ սկսան՝ որք բազմեալն էին ընդ նմա, ասել ընդ միտս իւրեանց. ո՞վ է սա՝ որ զմեղս թողու: Եւ նա ասէ ցկինն. հաւատք քո կեցուցին զքեզ՝ երթ ի խաղաղութիւն:

Եւ Սարկաւագն քարոզեսցէ

Լուիցէ տէր ձայնի աղաչանաց մերոց. ամենակալ տէր Աստուած մեր՝ կեցո՛ և ողորմեա:

Եւ ասա երեք անգամ Տէր ողորմեա

Digitized by Google

Եւ ասյա կարդա զաղօթս զայս Սրբոյն Բարսղի ։

Տէր Աստուած հայր ամենակալ արարիչ երկնի և երկրի որ յակնարկել բարերար կամաց քոց՝ գոյացուցեր զամենայն արարածս՝ զերևելիս, և զաներևոյթս. զերկնայինս, և զերկրայինս. և նախախնամութեամբ քով ստեղծեր զմարդն ի հողոյ. և ըստ պատկերի բարերարութեանդ պատուեալ մեծարեցեր զնա. չնորհելով նմա զանմահութիւն և զանապական կենդանութիւն. և ինքնիշխան կամօք և փառօք զարդարեալ պսակեցեր. պարգևելով նմա զվայելումն ուրախութեան դրախտին փափկութեան գործել զնա և պահել. և հանապազ մշտնջենաւորիլ յանանց և յանճառ պարգևսն. և յառաջանալ օրըստօրէ ի գործս բարիս. և յաւելեր նմա զպատուիրանադրութիւն կենսաբեր հրամանի բարերար կամաց քոց. զի յաւելուածով մեծի պատուիրանին դրութեամբ՝ առաւել յաւելուածով մեծի փառաց և պատուոյ՝ զնա ճոխացուցանէիր. և ի ձեռն բարեյօժար կամացն հնազանդութեան, յիս առաւել ի գերակատար կեանսն զնա վերափոխէիր՝ յիմանալի կայանս բնակութեան վերինն Երուսաղէմի ։ Իսկ նա ի ձեռն օձապատիր չարին խաբէութեան, զդործի կենացն և զպատճառս բարեացն՝ անձնիշխան յօժարութեամբն ի կողմն բանսարկուին դարձուցեալ, և ինքնայօժար կամօքն գործակցեալ խաբէութեան չարին, ի բաց չեղեցաւ ի քումմէ արարչադիր և ի կենսաբեր պատուիրանադրութենէդ. և ի ներքոյ անկեալ չարին հնազանդութեան՝ նախամեծար առնելով

Digitized by Google

զվրիպական բանս պատրօղ թիչնամուոյն քան զքո Աստուածային օրէնսդրութիւնն. կնոջն լսելով խրատու, կորոյս զսիրական վհհ խմաստութիւնն՝ ոտիցն հրնազանդեալ գլխոյն առաջնորդական տէրութեամբն. անհանճարաբար և անխորհրդապէս ի բաց մերկացեալ զբոցաճաճանչ և զլուսեղէն զարդարանն. և հակառակաբար հայթայթանօք ջանայր ծածկել զամօթալիր մերկութիւնն պատառատուն տերևովն անյուսացեալ ի զօրութիւն ամենակալիդ՝ կարծէր թաքչիլ յամենատես դիտութենէ Աստուածութեան քոյ պատճառելով զպատճառս մեղացն, թէ կինս զոր ետուր ինձ, սա եղև պատճառ: Վասնորոյ զանիծից և զցաւոց ժառանգեաց զկեանս, ի ներքոյ անկեալ մահու և ապականութեան. ըստ սնոտուս և Աստուածական քումդ հրամանիդ, ասելով թէ, յորում աւուր ուտիցես ի նմանէ մահու մեռանիցիս. ոլով և թաղաւորեալ տիրեաց ի վերայ մեր իշխանն մահու. և զբնութիւնս մեր զրաւեալ ինքեան հնազանդութեամբ պահակն կորստեան. և զամենեսեան ծառայս իւր արարեալ, վարեաց ի դործս խիստս ծառայութեան դժոխոց: Իսկ դու՝ Հայր բարեդութ՝ յառատ և յանբաւ մարդասիրութենէ քումմէ յաղթեալ, ոչ հանդուրժեցեր տեսանելով զանարատ ձեռացդ քոց ստեղծուած՝ յայնպիսի վտանգաւոր աղէտս տալակուսանաց: Այլ բարեգորովեալ հայրախնամ սիրով քո՝ զթացար յորդիս մարդկան, և յայց եղեր կորուսելոյն. առաքեցեր ի խնդիր զմիածին և զէակից քո՝ զծոցածին և զանբա-

Digitized by Google

ժանեալի բանն Աստուած, որ եկն և էառ զկերպարանս ծառայի զձուլեցեալ բնութեանս մերոյ, ներմարդացեալ ի սուրբ և յանարատ կուսէն Մարիամայ Աստուածածնէն. և յանձն իւր էառ զյանցանս սխալման մեղանացն Ադամայ. և Աստուածախնամ տեսչութեամբն իւրով տնօրինեալ զամենայն կիրս մարդկային յանձին իւրում, բաց ի մեղաց, եղև պըտուղ մարդկութեանս: Հովիւն երկնաւոր եկն խընդրել զոչխարն մոլորեալ ի վերայ լերինն բարձու. և առեալ զնա եդ ի վերայ կենսաբեր ուսոյն իւրոյ, դարձուցանելով ի հայրենի բնակութիւնն, ուստի արտաքսեցաւն արդարութեամբ. և զանիծիցն և զցաւոցն ելոյծ զդատապարտութիւն իւրով անպատժապարտ մահուամբն. և զանկեալն ի ձեռս աւազակացն՝ վերստին ողջացոյց՝ պատելով զվէրս նորա, արկանելով ի վերայ նորա ձէթ և գինի, և աւանդելով ի պանդոկի ամենընկալ կաթուղիկէ սուրբ եկեղեցւոյ քոյ. որ ժողովէ զամենայն ցրուեալս և զկեղտեալս, և միաւորէ յարդէգրութիւն հօրդ երկնաւորի. և հաչտարար և մեղսաքաւիչ իւրով պատարագաւն՝ որ ի վերայ սուրբ խաչին, բոլորապատուղ զինքն քեզ ընծայեաց ընդ մեր, և վասն մերոց պարտեաց զանձն իւր վոխանակելով: Եւ դարձեալ վերստին ստացաւ զմեզ սուրբ արեամբն իւրով. և ազատեաց ի ծառայութենէ բանսարկուին՝ պատառելով զմուրհակ դատապարտութեան յանցանաց մերոց. որ կայր մեզ հակառակ, եբարձ պայն ի միջոյ. և բևեռեաց զնա

ընդ խաչափայտին. մերկեաց զիշխանութիւնս և զպատուհասիւնս մեքենաւոր զօրութեան նորա. յայտ յանդիման խայտառակեալ նշաւակեաց զնոսա յանձին իւրում՝ զօրութեամբ Աստուածութեան իւրոյ: Եւ իչխանական պետութեամբն իջեալ ի ստորին սահմանս դժոխոց՝ աղաւտելով զզօրութիւն բռնութեան՝ կարծեալ իչխանին աչխարհի, որ բաւձրացեալ և լեռնացեալ ամբարտաւանութեամբ ունէր գրաւեալ ընդ ինքեամբ զբռնութիւն մարդկութեանս. որով ժամանեալ եհաս թագաւորն ի բարձանց՝ հզօրն ի պատերազմի, և եղ ի բարձունս հալածատուչ. և կապեաց զհակառակն, աւերելով զամուրս նորա. և յափըշտակեաց զգանձս նորա. և դարձեալ եմոյծ զարքունական պատկերն ի դրախտն, ուստի եհան. զհօթենեկին չնորհն տալով՝ զոր կորոյն եօթենեակ յանցանօք: Քանզի չինեաց իմաստութիւնն զհօրն տուն՝ զիսրանն Խաւթի, զանկեալն և զկործանեալն՝ վերըստին նորոգեաց և կանգնեաց. վասն լինելոյ նորա ծաղիկ յարմատոյն Յեսսեայ. և հանգեաւ ի վերայ նորա Հոգին Սուրբ՝ որ ի մեզ խորհրդածի. հոգի իմաստութեան և հանճարոյ. հոգի գիտութեան և Աստուածպաշտութեան. և լցեալ եղև հոգւով երկիւղիւ և սրբութեամբ: Վասն զի՝ ուր երկիւղ տեառն է, անդ պատուիրանաց պահպանութիւն. և ուր պատուիրանաց պահպանութիւն, անդ և ոչ մի յանցանք. քանզի պյանցանս մեր էառ և զցաւս մեր եբարձ. և

զքեզ միայն ծանոյց մեզ հաւատեաւ Աստուած կեն-
դանեաց և մեռելոց. առնելով խաղաղութիւն ար-
եամբ խաչին իւրոյ յերկինս և յերկրի. և հաճեցոյց
զկամս քաղցրութեան սիրոյ քոյ առ արարածս. քան-
զի բարձաւ միջնորմն, և լուծաւ կրճիմն, որ կայր
խափան և արգել մերոյ փրկութեան. և տեղի տուեալ
սրովբէիցն չրջապատեալ բոցեղէն սրոյն որ պահէր
զճանապարհս ծառոյն կենաց. վասն զի ընդ մեզ ի-
գաւ ճանապարհն և ճշմարտութիւնն և կեանքն Քրիս-
տոս Յիսուս, որ առաջնորդեաց մեզ ընդ երկնաչու
ճանապարհն՝ փրկաւէտ կենացն. և անցոյց գերիվե-
րոյ իշխանութեանց, և պետութեանց. և խրախոյս
տուեալ հաւատացելոց՝ ասէ, քաջալերեցարո՛ւք՝ ես
յաղթեցի աշխարհի. և ետու ձեզ իշխանութիւն կո-
խել զօձս և զկարիճս և զամենայն զօրութիւնս թըշ-
նամւոյն: Առարս և ասել մեզ համարձակապէս թէ,
ո՛ւր է մահ՝ յաղթութիւն քո. ո՛ւր է դժոխք՝ խայթոցն
քո. քանզի եղաք փրկեալք և ազատեալք արեամբ
Միածնի որդւոյ քոյ Յիսուսի Քրիստոսի տեառն մե-
րոյ. ընդ որում քեզ Հօր և Հոգւոյդ Սրբոյ վայել է
փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և'':

Խաղաղութիւն ամենեցուն
Աստուծոյ երկրպագեսցուք

Եւ ա՛րդ տէր Աստուած մեր բարեբար և բազմա-
գութ որ այսպիսի անճառ փառաց և անպատում բա-
րեաց հաղորդ, զազգս մարդկան արարեր. որով մե-

Digitized by Google

ծարեցիր զմեզ ի ձեռն Միածնի քոյ տնօրէնութեան՝ որ եկեալ կատարեաց զամենայն գրեալսն օրինաց և մարգարէիցդ. և քաղցրութեամբ վարդապետութեամբն իւրով ժողովեաց զցրուեալ ազգս մարդկան. և միաւորեալ միացոյց զամենեսեան միաբան սիրով՝ ի մի հաւատս և ի մի յոյս կոչման քոյ արարչական խնամոց զթութեանցդ. և հորդեաց ճանապարհ փրկութեան ամենայն տիեզերաց, պարզևելով զառհաւատչեայ կենդանութեան Հոգւոյն Սրբոյ, նորածնելոց ժողովրդոց՝ մանկանց առագաստի, կալմելով զդեզ և զսպեղանիս ապաշխարութեան՝ իւրով առաւ մարդասիրութեամբն ասելով թէ, ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեզաւորս յապաշխարութիւն. և դարձեալ թէ, եկայք առ իս ամենայն աշխատեալք՝ և որք ունիք բեռինս ծանունս մեղաց, և ես հանգուցից զձեզ. և յորդորական Աստուածախօս ձայնիւն՝ յորդորեալ քաջալերեաց զամենեսեան ի հնազանդութիւն Աստուածահաճոյ լծոյն ծառայութեան՝ ասելով, առէք զլուծ իմ ի ձեզ, և ուսարուք յինէն, զի հեզ եմ և խոնարհ սրտիւ. և գտջիք հանգիստ անձանց ձերոց. զի լուծ իմ քաղցր է, և բեռն իմ թեթեւ: Եւ արդ՝ մեք ծառայք քո և ժողովուրդք և խաչն արօտի քոյ, գինք արեան Միածնի Որդւոյ քոյ, ժողովեալքս ի դաւիթ սուրբ եկեղեցւոյ. խոնարհեալ աղաչեմք զքազմագութ և վառաւատ մարդասիրութիւնդ քո. և հայցեմք ի քաղցրութենէդ քումմէ՝ զքաւութիւն և զթողութիւն մեղաց

Digitized by Google

մերոց: Խոնարհեցո՛ տէր զունկն քո և լո՛ր աղաչանաց ծառայից քոց. և զթութեամբ և ողորմութեամբ քո թո՛ղ մեզ զյանցանս մեր՝ զկամայ և զակամայ. և արա՛ զմեզ որդիս լուսոյ, և որդիս տունչեան զորս գրեցեր ի գիր որդեգրութեան ժառանգութեան սրբոցն ի լոյս. և չարին պատրանօք՝ որսացեալ եղաք կամօք մերովք՝ ի մեղսասէր և ի կամակոր նորա կամսն. որոչելով ի հայրականամ սիրոյ արարչական գթոյ քոյ. տարագիր առնելով զանձինս մեր յորդեգրութենէ ժառանգութեան հօրդ երկնաւորի. և ո՛չ պահեցաք զզուշութեամբ զստացուածս և զդանձս հայրենատուր մեծութեան քոյ, զոր սուրբ աւազանաւն ստացաք. զմաքրութիւն, և զանմեղութիւն, և զարդարութիւն հոգւոր մեծաչահ փարթամութեանն. այլ՝ անառակ վարուք մերով զծախեցաք զհոգւոր մեծութիւնն, մինչև ժամանեալ հհաս մեզ յետին աղքատութիւն և սովամահ չքաւորութիւն. նուաղեցան անձինք մեր, և յոյս ակնկալութեան մերոյ չիք այլ ոք բաց ի քէն տէր. զի դու ես Աստուած մեր, և զանուն քո անուանեմք զօրհանապազ: Հայր երկնաւոր՝ զթա՛ ի դարձումն ծառայից քոց, և ընկալ ըզղջմամբ խոստովանութեան մերոյ, որպէս զանառակ որդւոյն ընկալար զդարձումն, և վերստին զարդարեցեր զնա արփիազարդ և լուսեղէն զգեստիւն՝ առաջին պատմուճանին ծածկութիւ՝ զոր ինքեան կամակոր և անառակ վարուքն մերկացաւ: Վասնորոյ և

Digitized by Google

մեք՝ նորին յօժարութեամբ՝ ղղջացեալ սրտիւ և բեկեալ անձամբք դառնամք առ քո գթութիւնդ սաեղով, հայր՝ մեղաք յերկինս և առաջի քո. ոչ ևս եմք արժանի կոչիլ որդի սուրբ անուանդ քոյ. արա զմեզ իբրև զմի ի վարձկանաց քոց. հայեաց տէր ողորմութեամբ և քաղցրութեամբ կամաք քովք, և հայրական գթով և սիրով բարերարութեան քո՝ ել ընդ առաջ մեր, և զգեցո մեզ զառաջին պատմուճանին լուսափայլ վերարկուն, զոր զգեստաւորեալ զարդարեցաք աւազանին պայծառութեամբն: Մերկեաւ ի մէնջ տէր՝ զհնացեալ պատմուճան չարին ծածկութիւն՝ զոր ծուլութեամբ և անառակ վարուք մերովք զգեցաք, և օտարացաք ի հայրական խնամոց քոց: Տուր մեզ տէր Աստուած մեր զքո զուրախական և զմարդասիրական համբոյրդ, տալով զկնիք սրբութեան ի յոգիս մեր. և զմատանին արդարութեան տալաւորեա յաջոյ ձեռին մերում՝ միշտ ունելով զնչան և զդրոշմն ուխտին սրբութեան՝ զոր ուխտեցաք մինչնորդութեամբ արեան որդւոյ քոյ սիրելւոյ. արդ՝ մեզ զբաժակն ուրախարար՝ զոր խաւնեցեր ի խառնարան սրբութեան Աստուածընկալ սեղանոյ քառաթև խաչին. յորում զհներ զվհնումն ճշմարիտ պատարագին եզինն պարարակի. և հրաւիրեցեր ի պատրաստեալ ճաշ հարսանեաց Միածնի որդւոյ քոյ սիրելւոյ՝ զպակասամիտսըն ի հանճարոյ Աստուածային երկիւղին և պատուիրանին զգուշութեան. և անզգամացն պատուիրեցեր՝

թողուլ զանզգամութեան ճանապարհն։ Եւ արդ՝ տուր մեզ զհացն անմահութեան մարմնոյ Միածնի քոյ, որով կեցցուք. և արբո զմեզ գինեաւ անուշութեան սուրբ բաժակին, զի արբեալ միշտ ուրախասցուք յանսպառ ուրախութիւնդ. և վայելեսցուք զանկապուտ ճոխութիւնդ՝ յերջանիկ օթևանդ Հօրըդ երկնաւորի. զոր պատրաստեցեր ի սկզբանէ աշխարհի սրբոց քոց. և ընդ նոսին զոհանալով փառաւորեսցուք զքեզ ընդ Որդւոյ և ընդ Սրբոյ Հոգւոյդ, այժմ և միշտ և յաւի՛՛։

Սաղմոս ՃԺԷ. Թիւ ասա։

ԿՅ. Բացէք ինձ զդրունս արդարութեան, զի մտից ընդ այն՝ և խոստովան եղէց տեառն։

ՓԽ. Խոստովան եղերուք տեառն, զի բարի է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

(Տես ի Թիւն. 177։)

Եւ ժեռալ յեկեղեցին սկսանիկին Շաբաթան՝ Դ։

Ձողորմութեա՛ն քո զդրուռըն (Տես ի Թիւն. 184։)

Եւ է յաւարտիկ, Սաղմոս՝ ղԹ։

Աղաղակեցէք առ տէր ամենայն երկիր, ծառայեցէ՛ք տեառն ուրախութեամբ։

Մտէ՛ք առաջի նորա ցնծութեամբ, ծաներ՛ուք զի նա է տէր Աստուած մեր։

Նա արար զմեզ և ո՛չ մեք էաք, մեք ժողովուրդք և խաչն արօտի նորա։

Digitized by Google

Մտ՛ք ընդ դլուխս նորա խոստովանութեամբ, և օրհնութեամբ ի յարկս նորա։

Խոստովան եղերուք տեառն, և օրհնեցէ՛ք զանուն նորա։

Քաղցր է տէր, յաւիտեան է ողորմութիւն նորա. յազգէ մինչև յազգ է ճշմարտութիւն նորա։

ՔԱՐՈՋ

Սուրբ եկեղեցեաւս աղաչեսցուք զտէր՝ զի սուաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց. և կեցուսցէ չնորհիւ ողորմութեան իւրոյ։ Ամենակալ տէր Աստուած մեր՝ կեցո և ողորմեա։

ԱՂՕԹՔ

Ի մէջ տաճարիս, և առաջի Աստուածընկալ և պայծառացեալ սուրբ նշանացս, և սուրբ սեղանոյս՝ խոնարհեալ երկիւղիւ երկիրպագանեմք. զսուրբ և ըզհրաշալի և զյաղթող զգալուստդ քո փառաւորեմք. և քեզ մատուցանեմք զօրհնութիւն և զփառս ընդ Հօր և ընդ Սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ և՛՛։

Եւ ապա ընթերնուցու Եպիսկոպոսն կամ աւագ երէցն զաղօթս օրհնութեան ի վերայ ապաշխարողաց։

Աղօթք և Օրհնութիւն Սրբոյն Յովհաննու Ոսկեբերանին. զոր ասացեալ է վասն Քահանայից և ժողովրդեան։

Օրհնեալ է ամենասուրբ Երրորդութիւնն ի բարձունս՝ Հայր և Որդի և Հոգին Սուրբ. մեծ գոհութիւն

երից անձնաւորութեանց և միոյ Աստուածութեանն անեղանելոյ՝ անփոփոխելոյ՝ անսահմանելոյ, ամենակալողի՝ ամենատեսողի՝ ամենապարգեւողի՝ ամենակեցուցանողի, անմահի՝ անբաւի՝ անճառի, պատիւ և երկրպագութիւն և մշտնջենաւոր փառաբանութիւն յերկնաւորաց, և յերկրաւորաց. ի հրեղինաց, և ի հողեղինաց. ի սերովբէից և ի քերովբէից. ի հրեշտակաց և ի հրեշտակապետաց. էակ երրորդութեանն և մի Աստուածութեանն. որ էն յէութեան յիսկութեան համագոյական Աստուածութեանն՝ հարթ և հաւասար ի խորութիւն՝ ի բարձրութիւն՝ ի լայնութիւն և յերկայնութիւն: Որ իւրով կանխագէտ զօրութեամբն՝ արար զերկինս և զերկիր՝ և զբիւրաւոր զօրս հրեշտակաց. ձգեաց զերկինս առանց հիման, խորանարդ զմբեթաձև հաստատութեամբն. և արկ ի վերայ նորա զրադմութիւն ջուրցն. գնան հրեղէնքն ընդ ջուրսն, և ոչ չիջանին. զի նմա ամենայն ինչ կարելի է. սահմանեաց զծով աւազով. բռնոյց յերկրէ զծառս և զծաղիկս՝ հանդերձ ամենայն սերմանեօք. զարդարեաց զերկինս աստեղօք. ճառագայթեաց ի նմա զարեգակն և զլուսին. պսակեաց չորիւք եղանակօք զքոյոր չրջանակս տարւոյն. եղ զնոսա ի հաւատակ անհայտելի և ի սէր անքակտելի. արար և ազգի ազգի զեռունս ի ծովս. բազում գազանս և անասունս և սողունս և թռչունս թևաւորս ի վերայ երկրի: Ապա՝ յետ ամենեցուն արար զմարդն ձեռօք

իւրովք՝ ըստ պատկերի իւրում. և փչեաց ի նա չունչ կենդանի, և եղև մարդն ի հոգի կենդանի. և զամենայն ինչ հնազանդ արար՝ ի նեղքոյ ոտից նորա, և կացոյց միջասահման՝ կենաց և մահու. և ետ նմա պատուէր՝ չճաչակել ի պտղոյ ծառոյն գիտութեան. և ի պահիլ պատուիրանին՝ խոստացաւ նմա զկերնայարկ վերինն Երուսաղէմի: Իսկ բանսարկուն գործի իւրոյ չալուեցեան դտեալ զօձն, և նովաւ խօսեցաւ ընդ կնոջն՝ ի պատճառ աստուածանալոյ և պատրեաց զնա և ետ ուտել ի ծառոյն գիտութեան. և եթող սմօթալից և մերկ ի լուսեղէն փառացն: Իսկ բարերարին քաղցրաձայնեալ ասէ, ո՞ւր ես Ա՛դամ. և գալստեամբս նորա ի դրախտն, նկարեցաւ գալուստըն Միածին բանին իւրոյ յաչխարհս. և ձայն ոտից նորա՝ դրոշմեաց զՅովհաննէս Մկրտիչն. իսկ Ադամայ անզղջութեամբ դիմեալ ի մահ, զանպարտականըն Աստուած՝ պատճառ իւրոյ կորստեանն համարեալ՝ ասէր թէ, կինս զոր ետուր ցիս, սա յանցոյց զիս. իսկ դատաւորն արդարութեան անէծ զնոսա՝ և զվնասակարս նոցա. և եհան զնոսա արտաքոյ դրախտին. սակայն ոչ ժուժկալեալ ողորմութեամբն՝ ընկալաւ զպատարագն Աբէլի. անմահացոյց ի զաւակէ նոցա զԵնովք. պահեաց զՆոյ ի տապանին՝ բազմահոյլ կենդանեաց. և զամբարչտեալն Կայէն իւրովք ծննդովքն՝ սահանաբաց անձրևօք ջնջեաց: Օրհնելով զտասներորդն զԱբրահամ՝ խոստանալով նմա ելս մամբ, եթէ բազմացուցից զզաւակն քո՝ որպէս զա-

Digitized by Google

տեղս երկնից. բաղում նշանօք և արուեստիւք խօսեցաւ առ հարսն մեր՝ որք ալարիին ազգի ազգի նըշանս. և առաքեաց զհրեշտակս վերակացուս: Իսկ իբրև եկն լրումն ժամանակի, խօսեցաւ ընդ մեզ որդւովն՝ որ եկն և մարմնացաւ ի սրբոյ կուսէն՝ և եմուտ ընդ օրինօք, զի զորս ընդ օրինօքն իցեն՝ ազատեսցէ. կատարեաց զօրէնս, ելից զտառս մարգարէիցն: Արար նշանս և արուեստս. լուսաւորեաց զկոյրս. առողջացոյց զանդամալոյծս. հալածեաց զդեւս: Ապա՝ ի կատարումն նշանացն՝ չնորհեաց զքայարութիւն Ղազարու՝ չորեքօրեայ կոչմամբ ի թաղմանէ. նստաւ ի վերայ յաւանակի իշոյ, որ է խորհուրդ կոչման հրէից՝ և հեթանոսաց. վասն որոյ և մանկտին երգէին՝ ովսաննայ օրհնութիւն որդւոյ Դաւթի: Իսկ ի սերկևեան աւուրս՝ գայ կամաւորութեամբ ի չարչարանս. յանձն առնու մատնիլ յանօրէնս աչակերտէն: Ցերեկոյ հասեալ ժամու աւուրն, երկոտասանիցն զխոնարհութիւն ուսուցանելով, զՑուդային յառաջ լուանայր զոտս. որ աչխատեցաւ մինչև ցգաւթի քահանայապետին. որ և ի միտս իւր ասէր՝ թէ բիւր անգամ մեծարեա զիս, ոչ եմ մոռանալոց զերեսուն արծաթիսն: Արդ՝ ի յայսմ ահաւոր և աքանչելագործ տօնիս՝ եղև ուրախութիւն հրեշտակաց և մարդկան: Այսօր՝ բարձաւ ցանկ անիծիցն Ադամայ: Այսօր՝ ապատեցաք ի ծառայութենէ սատանայի: Այսօր՝ արարիչն արարածոց ի յերկրի երևեցաւ: Այսօր՝ Աստուածն սէրօքէից՝ ծառայի կերևնու զկեր-

Digitized by Google

պարանա։ Այսօր՝ անտեան քերօրէից՝ խոնարհի և լուանայ զոտս աշակերտացն։ Այսօր՝ արկօղն զոյս որպէս զօթոց՝ զգենու զղեննջակ։ Այսօր՝ աթոռակիցըն Հօր՝ ընդ հողեղէնս բազմի։ Այսօր՝ վաւաւակիցն Սուրբ Հոգւոյն՝ յանձն առնու մատնել ի դատաստան մահու։ Այսօր՝ կենադործողն ամենեցուն՝ ընդ մահուամբ սահմանի։ Այսօր՝ վէմն աւանից ձեռին հատեալ՝ լեռնացեալ ելից զտիեզերս։ Այսօր՝ բաշխէ զմարմին և զարիւնն՝ և յայտնէ զանօրէնն աշակերտին պիտորհուրդն։ Այսօր՝ կապեալ լինի արձակիչն կապելոց՝ զոր երկինք ոչ բաւէին տանիլ։ Այսօր՝ օրհնէ զառաքեալսն ի դպրութիւն քահանայութեան։ Այսօր՝ դատնի դրամն կորուսեալ՝ այսինքն թագաւորական պատկերն։ Այսօր՝ եղև ուրախութիւն հրեշտակաց՝ վասն գիւտի մոլորեալ ոչխարին։ Այսօր՝ ճշմարտապէս հաղորդեցաք՝ մարմնոյ և արեան տեառըն։ Այսօր՝ օրհնեցան քահանայապետք՝ հանդերձ ամենայն քահանայիւք։ Այսօր՝ լուսազարդեցան թագաւորք՝ հանդերձ ամենայն զօրութեամբն իւրեանց և իշխանութեամբ՝ ընդ Դաւթի և ընդ դասագլուխս նոցա։ Այսօր՝ օրհնեցան ծերք և տղայք՝ երիտասարդք և կուսանք, ի ձեռն կապողին և արձակողին։ Այսօր՝ դրախտն բանի՛ մարդկութեանն՝ և ամենայն արարածք ցնծան յանմահական կեանս։ Այսօր՝ ի հին տրտմութեանց փոխեցաք՝ և ամենեքեան նորոգեցաք ի Քրիստոս։ Այսօր՝ հա իշխանութիւն կոխել

զօձս և զկարիճս՝ և զամենայն զօրութիւնս թշնամւոյն։ Այսօր՝ ի ձեռն աւազանին լուսազարդեալք՝ մաքրեցան հաւատացեալք յաղտոյ մեղաց։ Ընդ՝ եկեսցէ մխիթարութիւնն Երուսաղէմի ի վերայ ձեր՝ որ ասէ, մխիթարեցէ՛ք մխիթարեցէ՛ք զժողովուրդ իմ ասէ Աստուած. քահանայքդ խօսեցարու՛ք ի սիրտ Երուսաղէմի. մխիթարեցէ՛ք զազգն, զի լի եղև տառապանօք. թողեալ լիցին նմա մեղք իւր։ Դարձեալ՝ եթէ, ըզճանապարհս սրտի նորա տեսի և բժշկեցի. և ետու նմա մխիթարութիւն. և փոխանակ մոխրոյն՝ օծումն ուրախութեան։ Ընդ՝ բարեգութն Աստուած ուրախացուսցէ զձեզ զամենեսեան. և երկնաւոր պարգեւացն արժանի արասցէ։ Օրհնեսցէ տէր Աստուած զՀայրապետս՝ ընդ սրբոյն Գրիգորի՝ և ընդ այլ սրբոց հայրապետացն մասնակիցս արասցէ։ Օրհնեսցէ տէր Աստուած զքահանայսդ՝ ընդ քահանային Մելքիսեդեկի. և զարդարեսցէ՝ ընդ տեսլեանն Մովսէսի՝ ի զարդ անկողոպտելի, ըստ պատմուճանին Ահարոնի. և հոգիազարդեսցէ ըստ առաքելոցն խորանակցութեան. և արասցէ մշակս առանց ամօթոյ. զի յերկիւղ հօտապետին՝ ընդունիցիք զանթառամ փառաց պսակն։ Օրհնեսցէ տէր Աստուած զկրօնաւորսդ՝ ընդ սրբոյն Եղիայի և ընդ սրբոյն Անտոնի, և ժառանգակիցս և մասնակիցս արասցէ նոցա։ Օրհնեսցէ տէր Աստուած զձերսդ՝ որպէս զձերսն Իսրայէլեան բանակին, և որպէս զձերսունին Սիմէօն՝ որ

Digitized by Google

զԱստուածոլորին ի գիրկս իւր ընկալաւ՝ և հայցէր աբձակիչ ի խաղաղութիւն։ Օրհնեացէ տէր Աստուած զերիտասարդս՝ որպէս զերանելին Յովսէփ, որ հաճոյ եղև Աստուծոյ՝ և օրհնեցաւ ի նմանէ։ Օրհնեսցէ տէր Աստուած զկանայս՝ որպէս զկանայս իւղաբերս, որք եկին ի գերեզման փրկչին՝ և լցան աւետեաւք սուրբ յարութեան տեառն։ Օրհնեսցէ տէր Աստուած ըզտղայս ձեր՝ որպէս զտղայս Եբրայեցւոց, որք առին աստս արմաւենեաց՝ և ելին ընդ առաջ Տերա, աղաղակէին և ասէին՝ ովսաննայ օրհնեալ որ գաս յանուն տեառն։ Օրհնեսցէ տէր Աստուած զամենեսեան՝ ըզժողովուրդս սուրբ եկեղեցւոյս մերոյ՝ տա հասարակ զարդ, և զկանայսդ. զծերսդ, և զտղայսդ. զերիտասարդսդ, և զկուսանսդ. և վրկեսցէ զձեզ յամենայն չարեաց. և ամրացուսցէ ընդ հովանեաւ աջոյն իւրոյ՝ և երկնից ալքայութեանն արժանիս արասցէ. և զանմատչելի լոյս երես իւր երևեցուսցէ ձեզ։ Օրհնեսցէ տէր Աստուած զտունս զայս և զբնակութիւնս՝ և զհիմունս եկեղեցւոյս, ըստ այնմ որ ասէ, այսօր եղև փրկութիւն տանս այսորիկ՝ ըստ աւետեացն Աբրահամու՝ հանդերձ ազգաւ և ժառանգակցօք իւրովք։ Օրհնեսցէ տէր Աստուած զսպասաւոր տանս այսորիկ՝ զկուսարարս, զդռնաբացս, և անթառամ պսակացն արժանիս արասցէ։ Օրհնեսցէ տէր Աստուած զվերբակացու տանս՝ զմչակս. զհինս, զերեսփինս. և զհօտս սորա։ Օրհնեսցէ տէր Աստուած զանդաստանս մեր՝ և բուսուսցէ զամենայն բոյս չահեկանութեան.

Digitized by Google

ի քաց արասցէ զամենայն վնաս զբիծ, զերայրեաց և զդալուկն, զժանտ, զկարկուտ, զմարախ, զջրհեղեակ, զսաստն եղեմնածին. և զամենայն ցաւս և զվտանգսն՝ ի մարդոյ և յանասնոյ. և հալածեսցէ զէգեօնն ամենայն զօրօք իւրովք յանդունդս. և զերեչտակ խաղաղութեան առաքեսցէ: Օրհնեսցէ տէր Աստուած զժամակոչ քաղաքիս մերոյ՝ զի որպէս ձայն հրեչտակապետի յաղթող է առ ի զարթուցանել զնըն-ջեցեալս ի մահահանգիստ քնոյ, նոյնպէս և ձայն սո-րա՝ յաղթող է առ ի հալածել զէգեօնն ամենայն զօրօք իւրովք: Օրհնեսցէ տէր Աստուած զբնակու-թիւն քաղաքիս մերոյ. և հալածեսցէ զամենայն չար զօրութիւն՝ բռնացեալ թշնամւոյն: Օրհնեսցէ տէր Աստուած զմիաբան ժողովուրդս, և թեթևացուսցէ զբեռինս մեղաց ձերոց: Օրհնեսցէ տէր Աստուած զխ-ա ոռնանօղս և զապաշխարօղս, և թողցէ զյան-ցանս ձեր՝ որպէս զպտուկին և զմաքսաւորին. և ար-ժանի արասցէ զձեզ լուացման սուրբ առաքելոցն ի վերնատանն: Եւ վտանգակ սրբապահութեան ձե-րոյ, զերկնայինն պարգևեսցէ ձեզ կերակուր: Եւ վտանգակ ժուժկալութեան ծարաւակրութեան ձերոյ, յանմահական աղբերէն տացէ ձեզ ըմպել զջուր: Եւ վտանգակ դիշերային աքնութեան ձերոյ, ընդ հրեշ-տակս դասեսցէ զձեզ: Եւ վտանգակ լուսացու-թեան ձերոյ, անթառամ պսակօք զարդարեսցէ զըզ-ձեզ: Եւ վտանգակ ողորմութեան ձերոյ՝ որ առ աղքատս, յայլակողմեան դասն բազմեցուսցէ: Արդ՝

Digitized by Google

ամ Աստուածաէր ժողովուրդք՝ և հաւատացեալք Քրիստոսի, զահնցէք զպատուիրանս տեառն՝ և պիտասեանս նորա. և մի դադարիք ի ձանձրանալ՝ առնել ողորմութիւն. մինչդեռ ժամանակս ի ձեռս է, գործեցէք զբարիս. զի զվոխարէնն՝ ի փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ՝ զյաւիտենական կեանն առնուցուք: Արդ՝ հաւատացողն բարեաց՝ ամենեցուն, տացէ եկեղեցեացս չինութիւն. քահանայիցս ուղղութիւն. թագաւորաց և իշխանաց վայելչութիւն՝ ծերոց միխթարութիւն. կրօնաւորաց ժուժկալութիւն. երիտասարդաց ողջախոհութիւն. մեղաց լուծումն. հիւանդաց բժշկութիւն. դիւաց խորտակումն. ախտաժետաց առողջութիւն. և փրկութիւն հոգւոց և մարմնոց: Եւ արդ՝ լսելով զայս, ի բաց ընկեցէք յանձանց ձերոց զչարութիւն և զամենայն խարդախութիւն. թողէք իւրաքանչիւր եղբօր իւրում զյանցանս, և զամենայն խէթ՝ զոր ունիք ընդ միմեանս, և զամենայն չարութիւն. դիրձք բարիք բոլորովիմբ ի կատարումն. սիրեցէք զմէկ յամենայն սրտէ, և զկամս նորա կատարեցէք. ընդ ամենայն մարդոյ զիատաղութիւն ունիցիք. հնազ լիցիք՝ և խոնարհ, ունկն դնելով ձայնին որ ասէ՝ ես յո բնակեցայց, եթէ ոչ ի հեզս, և ի խոնարհս, և որք դողան ի բանից իմոց. խնդրեցէք զիատաղութիւն. և երթիցիք զհետ արդարութեան. յուսոյ ակնկալիք՝ յաւիտեանս յաւիտենից: Եւ տէր Աստուած ալարիչն ամենայնի՝

Digitized by Google

հաստատեսցէ զձեզ. և տացէ առատապոյս բարիս՝ աստ, և ի հանդերձելումն. և արժանի արասցէ ըզձեզ դասիլ յաջակողմեանն. և ննջեցելոց՝ ծանօթիցն և անծանօթիցն, գերկնից արքայութիւնն պատրաստեսցէ. որ է օրհնեալ և փառաւորեալ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Զկնի՝ Քալոզ՝ Խնդրեսցուք: Եւ առաւօտ երեսուն տէր ողորմեա: Աղօթք՝ Գումա ամենազօր:

(Տես ի Քիւն. 75:)

Եւ գիշեն զտուրբ Խաչն և զԱբեւտարանն առաջի քահանին և համբուրեսցեն, և տացեն զչորեքգրքամեանն՝ զոր կարգեաց Մովսէս Վաւտապետին: Եւ օրհնեսցէ քահանայն զապաշխարսդն, և արձակեսցէ:

Digitized by Google

Իսկ ի վերնատունդ ժամուն ժողովեսցին յերկեղեցին, ծածկեսցեն զեղջանն, և ասասցեն զմնացեալ Ողորմեայսն։

Եւ ապա սկսանիցին Խոնարհեցո և Ապրեցո։
(Տես ի Թիւն. 101։)

ՄԱՂԹԱՆՔ

Օրհնեալ տէր՝ որ բնակեալդ ես՝ (Տես ի Թիւն. 176։)

Քարոզ և մաղթանք Հասեալ քի՝ (Տես ի Թիւն. 107։)

Մեսնդէ։

Լուացից սրբութեամբ զձեռս իմ. և չուրջ եղէց զսեղանով քո տէր։

Տէր սիրեցի զվայելչութիւն տան քո, և զտեղի յարկի փառաց քոց։

Ընդ երգուածս ի ծննդոց։
Գլ՝ 22. հմր 1։

Եւ եղև յետ բանիցս այսոցիկ. փորձեաց Աստուած զԱբրահամ՝ և ասէ ցնա. Ա՛բրահամ. Աբրահամ. և նա ասէ աւասիկ եմ։ Եւ ասէ ցնա. ա՛ռ դու զորդիդ քո զսիրելի. զոր սիրեցեր զԻսահակ. և գնա դու յերկիր բարձր և հանցես զդա անդ յողջակէզ ի վերայ միոյ լերանցն՝ յորոց ասացից քեզ։ Եւ յարեաւ Աբրահամ ընդ առաւօտն, համեստեաց զէշ իւր. և էառ ընդ իւր երկուս ծառայս. և զԻսահակ զորդի

իւր. և պատառեաց վայր յողջակէզ՝ յարեաւ և գընաց. և եկն ի տեղին. զոր ասաց նմա Աստուած։ Եւ յաւուրն երրորդի համբարձ Աբրահամ զաչս իւր՝ և տես զտեղին ի հեռաստանէ։ Եւ ասէ Աբրահամ ցպատանիս իւր. նստարո՛ւք դուք այդր հանդերձ էշոյդ. և ես և պատանեակս երթիցուք մինչև ցանդր, և երկիրպագցուք. և դարձցուք առ ձեզ։ Եւ էառ Աբրահամ զվայր ողջակիզին. և եդ ի վերայ Իսահակայ որդւոյ իւրոյ. և էառ ի ձեռն զհուրն և զսուր. և գնացին երկոքեան ի միասին։ Եւ ասէ Իսահակ ցԱբրահամ ցհայր իւր. հա՛յր. և նա ասէ. զի՞ է որդեակ. և նա ասէ՝ ահա հուր՝ և ահա վայր. ո՞ւր է ոչխար յողջակէզ։ Եւ նա ասէ. Աստուած տեսցէ իւր ոչխար յողջակէզ որդեակ. գնացին երկոքեան ի միասին։ Եւ եկին ի տեղին. զոր ասաց նմա Աստուած. անդ շինեաց սեղան Աբրահամ. և եդ ի վերայ զփայտն. և կապեաց զԻսահակ զորդի իւր. և եդ զնա ի սեղանն ի վերայ վայտին։ Եւ ձգեաց Աբրահամ զձեռն առնուլ զսուրն և զնուլ զորդի իւր։ Եւ կոչեաց զնա հրեշտակ տեառն յերկնից և ասէ. Ա՛բրահամ. Աբրահամ. և նա ասէ ցնա. աւասիկ եմ։ Եւ ասէ. մի՛ մխեր զձեռն քո ի պատանեակդ. և մի՛ ինչ առներ դմա. զի այժմ գիտացի թէ երկիւղած ես դու յԱստուծոյ. և ո՛չ խնայեցեր յորդիդ քո սիրելի վասն իմ։ Համբարձ Աբրահամ զաչս իւր և տես. և ահա խոյ մի կախեալ կայր ըղ-

Digitized by Google

ծառոյն սաբեկայ զեղջերաց. և գնաց Աբրահամ և էառ զկոյն. և եհան գնա յողջակէզ փոխանակ Իսահակայ որդւոյ իւրոյ: Եւ կոչեաց Աբրահամ զանուն տեղւոյն այնորիկ տէր եառնո. զի ասիցեն ցայսօր. ի լերինն յայնմիկ տէր երևեցաւ: Եւ կոչեաց հրեշտակ տեառն զԱբրահամ երկիցս անգամ յերկնից՝ և ասէ: Ցանձն իմ երդուայ՝ ասէ տէր. փոխանակ զի արարեր դու զբանդ զայդ. և ոչ խնայեցեր յորդիդ քո սիրելի վասն իմ. այո օրհնելով օրհնեցից զքեզ՝ և բազմացուցանելով բազմացուցից զզաւակ քո իբրև զաստեղս երկնից բազմութեամբ. և իբրև զաւազ առափն ծովու. և ժառանգեսցէ զաւակ քո զքաղաքս հակառակորդաց իւրոց: Եւ օրհնեսցին ի զաւակի քում ամենայն ազգք երկրի. փոխանակ զի լուար ձայնի իմոյ:

Ընդ Երգոյս ծնեալ Մարգարէ:
Գլ՝ 61. հմր՝ 1:

Հոգի տեառն ի վերայ իմ. վասնորոյ և էօծ իակ զիս. աւետարանել աղքատաց առաքեաց զիս. բժշկել զբեկեալս սրտիւք. քարոզել գերեաց զթողութիւն՝ և կուրաց տեսանել: Կոչելամ տեառն ընդունելի. և օր հատուցման Աստուծոյ մերոյ. մխիթարել զամենայն ազաւորս: Տալ ազաւորաց սիօնի փառս. փոխանակ մոխրոյն օծումն ուրախութեան. և ազաւորացն հանդերձ փառաց՝ փոխանակ ոգւոյն վրհատութեան. և կոչեսցին նոքա ազդք արդարու-

Digitized by Google

թեան՝ տունկ տեառն ի վառս։ Եւ չինեսցեն զաւերական յաւիտենից. և զյառաջագոյն աւերեալսն կանգնեսցեն. և նորոգեսցեն զքաղաքս աւերեալս յազգաց մինչև յազգս։ Եւ եկեսցեն օտարածինք հովիւք խաչանց քոց. և այլազգիք մշակալք և այգեդործք քո։ Բայց դուք քահանայք տեառն կոչիջիք. և պաշտօնեայք Աստուծոյ մերոյ անուանիջիք. զղօրութիւնս ազգաց կերիջիք. և մեծութեամբ նոցա բազանչելի լինիջիք։ Փոխանակ ամօթոյն ձերոյ կրկին ուրախութիւն. և փոխանակ անարգանաց ձերոց ցնծութիւն. և ապա զերկիրն յերկրորդում ժառանգեսցեն. և ուրախութիւն յաւիտենից ի վերայ գլխոց նոցա։

Ընթերցուածս ի գործոց Առաքելոց։
Գլ՝ 1. Հմր՝ 15։

Եւ յաւուրսն յայնոսիկ յարուցեալ Պետրոս ի մէջ եղբարցն ասէ՝ և էր անդ բազմութիւն անուանց հարիւր և քսանից։ Ա՛րք եղբարք՝ պարտ է կատարիլ գրոյն, զոր յառաջագոյն ասաց Հոգին Սուրբ ի բերանոյ Դաւթի՝ վասն Յուդայի. որ եղև առաջնորդ ունելոցն Յիսուսի։ Զի ի թիւս մեր էր՝ ընդ մեզ. և հասեալ էր նմա վիճակ պաշտամանս այսորիկ։ Սա ստացաւ դեռ ի վարձուց անիրաւութեան. և ուռուցեալ հերձաւ ընդ մէջ՝ և հեղաւ ամենայն փոր նորա։ Եւ յայտնի եղև ամենեցուն՝ որք բնակեալ են յԵրուսաղէմ. մինչև կոչել գեղջն այնմիկ բարբառով

իւրեանց Ակեղդամայ. այսինքն՝ գետոյ արեան: Զի գրեալ է ի գիրս սաղմոսաց. եղիցի բնակութիւն նոցա աւերակ. և մի՛ ոք իցէ՝ որ բնակիցի ի նմա. և զկարգ նորա առցէ այլ: Արդ՝ պարտ է յարանցս յայսցանէ՝ եկեղեցս ընդ մեզ յամենայն ժամանակի՝ յորում եմուտ և ել առ մեզ տէր Ցիսուս: Սկսեալ ի մկրտութենէն Յովհաննու մինչև յօրն՝ յորում վերացաւ ի մէնջ. վկայ յարութեան նորա ընդ մեզ լինել միում ի սոցանէ: Եւ կացուցին երկուս. զՅօսէփ՝ որում Բարսաբայն կոչէին. որ անուանեցաւն Ցուստոս. և զՄատաթիա: Եւ կայեալ յաղօթս՝ ասեն. դու տէր՝ սրտագէտ ամենայնի, յայտնեա զմի ոք՝ զոր ընտրեցեր ի սոցանէ յերկոցունց: Առնուլ զվիճակ պաշտամանս այսորիկ՝ և զառաքելութեան, յորմէ անկաւ Ցուդաս՝ գնալ ի տեղի իւր: Եւ ետուն վիճակս նոցա. և ել վիճակն Մատաթիայ. և համարեցաւ ընդ մեռասան առաքեալսն:

Եւ ապա սաղմոս՝ ծդ, ըստ ողոգի ձայնիւ:

ԿՅ. Կակուղ էին բանք նոցա քան զձէթ. և ինքեանք որպէս սլաք:

ՓԽ. Ո՛ւննկն դիր Աստուած աղօթից իմոց. և մի անտես առներ զխնդրուածս իմ:

Նայեա առ իս և լո՛ւր ինձ. զի տրտմեցայ ես ի ձանձրանալ իմում և խռովեցայ:

Ի ձայնէ թշնամւոյն և ի նեղել մեղաւորին՝ խոտո-

Digitized by Google

ըեցան յիս անիրաւութեամբ, բարկութեամբ ոխս պահէին ինձ։

Սիրտ իմ խռովեցաւ յիս, և երկիւղ մահու անկաւ ի վերայ իմ։

Ահ և դողումն եկն ի վերայ իմ, և ծածկեաց զիս խաւար։

Ասացի՝ տայր ոք ինձ զթիս որպէս զաղաւնւոյ. զի թռչէի վերանայի, և հեռացեալ դադարէի յանապատի։

Ակն ունէի Աստուծոյ որ փրկէր զիս ի կարճմտութենէ զայրանալոյ, և ի մրրկեալ նեղսրտութենէ։

Ընկլո՛ տէր և բաժանեա՛ զլեզուս նոցա, զի տեսի զանօրէնութիւն և դհակառակութիւն ի քաղաքի։

Ի տուէ և ի գիշերի չուրջ եղեն զպարսպոզ նորա անօրէնութիւնք. չարիք և մեղք են ի մէջ նոցա. և ոչ պակասեաց ի հրապարակաց նոցա վաշխ և նենդութիւն։

Զի թէ թշնամւոյն նախատեալ էր՝ համբերէի արդեօք, կամ ատելւոյն մեծաբանեալ էր ի վերայ իմ՝ թագչէի արդեօք ի նմանէ։

Իսկ դու մարդ հաւասար իմ, առաջնորդ իմ և ծանօթ իմ։

Ապաքէն ի նոյն քաջրտացուցեր ինձ և քեզ կերակուր, զի գնայաք միաբանութեամբ ի տան Աստուծոյ։

Եկեսցէ մահ ի վերայ նոցա, և կենդանւոյն իջցեն ի դժոխս. զի չարութիւն է ի բնակութեան նոցա և ի մէջ նոցա։

Digitized by Google

Ես առ Աստուած կարդացի, և նա լուաւ ինձ յերկոցս՝ ի վաղորդայն ի հասարակ աւուր։

Պատմեցի և ասացի և լուիցէ ձայնի իմում. փրկեսցէ խաղաղութեամբ զանձն իմ ի մերձաւորաց իմոց, զի կարիօք հասին ի վերայ իմ։

Լուիցէ Աստուած և խոնարհ արասցէ զնոսա, որ յառաջնի է քան զյաւիտեանս։

Զի ոչ գոյր նոցա փոխանակ, և ոչ երկեան յԱստուծոյ։

Ձգեաց զձեռն իւր ի հատուցանել նոցա, և նոքա պղծեցին զօրէնս նորա։

Բաժանեցան ի սրտմտութենէ երեսաց նորա. և եհաս ի սիրտս նոցա։

Կակուղ էին բանք նոցա քան զձէթ, և ինքեան օրպէս սլաք։

Ընկեա ի տէր զհոգս քո և նա կերակրէ զքեզ, և ոչ տայ յաւիտեան սասանութիւն արդարոյ։

Դու Աստուած իջուսցես զնոսա ի գուբ ապականութեան, արք արիւնահեղք և նենգաւորք մի հասարակեսցեն զաւուրս իւրեանց. այլ ես ի քեզ տէր յուսացայ։

Ալէլուիա՛ օրթէ։

Սրբոյ Աւետարանիս Ցհսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մարկոսի։

Գլ՝ 14. հմր՝ 1։

Digitized by Google

Վասն ընդրևաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ էր գաւիկ և բաղարջակեր, յետ երկուց աւուրց. խնդրէին քահանայապետքն, և դպիրք՝ եթէ ղիա՞րդ զնա նենգութեամբ կալեալ սպանանիցեն։ Բայց ասէին, թէ մի՛ ի տօնի աստ. զի մի՛ խռովութիւն լինիցի ի ժողովրդեանն։ Եւ մինչ էր ի Բեթանիա ի տան Սիմօնի բորոտի բազմեալ, եկն կին մի, որ ունէր չիշ իւղոյ նարդեան ազնուի մեծագնոյ. և բեկեալ զչիշն՝ եհեղ ի վերայ գլխոյ նորա։ Եւ ասչակերտքն զչարէին և ասէին. ընդէ՞ր եղև կորուստ իւղոյդ այդորիկ։ Մարթ էր՝ զայդ իւղ վաճառել աւելի քան զերկք հարիւր դահեկանի, և տալ աղքատաց. և զայրանային նմա յոյժ։ Եւ Յիսուս ասէ ցնոսա. թո՛ղ տուք դմա. զի՞ աչխատ առնէք. զի գործ մի բարի գործեաց դա յիս։ Զամենայն ժամ ղաղքատս ընդ ձեզ ունիք. և յորժամ կամիք՝ կարօղ էք առնել նոցա բարիս. այլ զիս ո՛չ յամենայն ժամ ընդ ձեզ ունիք։ Դա զոր ունէր, արար. յառաջադոյն խնկեաց զմարմին իմ ի նչան պատանաց։ Ամէն ասեմ ձեզ. ուր և քարոզեսցի աւետարանս այս ընդ ամենայն աչխարհ, և զոր արար դա՝ խօսեսցի յիչատակի դորա։ Եւ Յուդա Իսկարիօտացի՝ մի յերկոտասանից անտի, գնաց առ քահանայապետսն՝ զի մատնեսցէ զնա նոցա։ Նոքա իբրև լուան՝ խնդացին. և խոստացան տալ նմա արծաթ. և խնդրէր թէ զի՞արդ պարապով մատնեսցէ զնա։ Եւ յառաջնում

աւուր բաղարջակերացն՝ յորում զպասհքն զենուին, ասեն ցնա աշակերտքն. ուր կամիս՝ երթիցուք՝ պատրաստեսցուք՝ զի կերիցես զզատիկն: Եւ առաքէ երկուս յաշակերտաց անտի՝ և ասա ցնոսա. երթայք ի քաղաք. և իբրև մտանիցէք ի քաղաքն՝ պատահեսցի ձեզ այր մի, որ սափոր ջրոյ յուսն ունիցի. երթայք զհետ նորա: Եւ յոր տուն մտանիցէ, ասասջիք ցտանուտէրն. Վարդապետն ասէ՝ ուր են իջևանքն իմ, ուր աշակերտաքս ուտիցեմ զզատիկն: Եւ նա ցուցցէ ձեզ վերնատուն մի մեծ զարդարեալ. անդ պատրաստեսջիք մեզ: Եւ գնացին պատրաստել աչակերտքն նորա. եկին ի քաղաքն՝ և գտին որպէս ասացն նոցա. և պատրաստեցին զզատիկն: Եւ իբրև երեկոյ եղև՝ գայ երկոտասանիւքն հանդերձ: Եւ իբրև բազմեցան, և դեռ ուտէին, ասէ Յիսուս. ամէն ասեմ ձեզ՝ զի մի ոմն ի ձէնջ մատնելոց է զիս. որ ուտէ իսկ ընդիս: Եւ նոքա սկսան տրտմիլ՝ և ասել մի ըստ միոջէ՝ միթէ ե՞ս իցեմ. և միւսն՝ միթէ ե՞ս իցեմ: Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա. մի յերկոտասանից այսի, որ միսեաց ընդիս ի սկուտառակդ: Այլ Որդի Մարդոյ երթայ՝ որպէս գրեալ է վասն նորա. բայց վայ իցէ մարդոյն այնմիկ՝ որով ձեռն Որդի Մարդոյ մատնեսցի. լաւ էր նմա՝ թէ չէր իսկ ծնեալ մարդն այն: Եւ մինչդեռ ուտէին, առեալ Յիսուսի հաց. օրհնեաց՝ և երեկ՝ ետ նոցա և ասէ. առէք՝ այդ է մարմին իմ: Եւ առեալ բաժակ՝ գոհացաւ, ետ նոցա. և արբին ի նմանէ ամենեքեան:

Digitized by Google

Եւ ասէ ցՆոսա. այս է արիւն իմ Նորոյ ուխտի. որ փոխանակ բազմաց հեղանի: Ամէն ասեմ ձեզ. Թէ ոչ ևս յաւելից ըմպել ի բերոյ որթոյ՝ մինչև ցօրն ցայն՝ յորժամ արբից զնա Նոր՝ յարքայութեան Աստուծոյ: Եւ գոհացեալ՝ ելին ի լեառն Ձիթենեաց:

Եւ մինչ ընթերնուն զսա. երկն Պատարագիչն ի սեղանն, և զգեստաւորեսցի, և քաղեսցէ զխորհուրդն մինչև ի հատատաքն:

ԳԱՐՈՋ

Աղաչեսցուք՝ (Տես ի Թիւն. 215:)

Աղօթք՝ Լուր Ձայնիդ. Սուրբ Աստուած որ երկիր և այլն. ցշաբաթանն Համբարձի. Տես ի 110 էն ց113 Թիւն:

Համբարձի Ա.Կ

Ա՛յսօ՞ր կանգնեցա՞ւ ա՛ւազան (Տես ի Թիւն. 298:)

Գարոզ՝ Վասն խաղաղութեան: Աղօթք՝ Հայր գթած. (Տես ի Թիւն. 177:)

Ջհնէ Սազմոս՝ երբ:

Կց. Պատրաստ արարեր առաջի իմ զսեղան՝ ակն յանդիման նեղչաց իմոց:

Փխ. Տէր հովուեսցէ զիս, և ինձ ինչ ոչ պակասեսցի:

Երգեն զսկիզբն զգեստաւորելոյ և երկեսցեն առաջի սեղանոյն. և ընթերցին զերկուքն:

Digitized by Google

Պօղոսի Առաքելոյն ի Կորնթացւոց Առաջին Թղթոյն ի Ընթերցուածս։
ԳԼ՝ 11. Հմր՝ 23։

Զի ես ընկալայ ի տեառնէ՝ զոր և ձեզն աւանդեցի. եթէ տէր Յիսուս ի գիշերին յորում մատնիւր. էառ զհաց՝ գոհացաւ՝ եբեկ՝ և ասէ։ Առէք՝ և կերայք՝ այս է մարմին իմ, որ ի ձեր բաչխի. զայս արարէք առ իմոյ յիշատակի։ Նոյնպէս և զբաժակն յետ ընթրեացն էառ և ասէ. այս բաժակ՝ նոր ուխտ է իմով արեամբ. զայս արարէք քանիցս անգամ եթէ ըմպիցէք՝ առ իմոյ յիշատակի։ Քանիցս անգամ եթէ ուտիցէք զհացս զայս՝ և զբաժակս ըմպիցէք՝ զմահ տեառն պատմեցէք, մինչև եկեսցէ նա։ Այսուհետև՝ որ ուտիցէ զհացս, կամ ըմպիցէ զբաժակս տեառն անարժանութեամբ, պարտական եղիցի մարմնոյ և արեան տեառն։ Փորձեսցէ մարդ զանձն իւր. և ապա ի հացէ անտի կերիցէ. և ի բաժակէն արբցէ։ Զի որ ուտէ և ըմպէ անարժանութեամբ՝ դատաստան անձին իւրում ուտէ և ըմպէ. զի ոչ խտրէ զմարմինն տեառն։ Վասն այնորիկ իսկ են ի ձեզ բազում հիւանդք և ախտաժէտք. և շատք ևս այնք են, որք և ննջեցեալք իսկ իցեն։ Զի եթէ զանձինս քննէաք՝ ապա ոչ դատապարտէաք։ Եւ եթէ դատիմք՝ ի տեառնէ խրատիմք. զի մի ընդ աշխարհի դատապարտիցու ք։

Ալէլուիա ալէլուիա

Պատրաստ ապարել առաջի իմ զսեղան՝ ակն յան-

դիման նեղչաց իմոց։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

ԳԼ՝ 26. հմր՝ 17։

Վասն Ընթերցաց Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ յառաջնում աւուր բաղարջակերացն մատեան աշակերտքն առ Յիսուս՝ և ասեն. ուր կամիս՝ զի պատրաստեսցուք քեզ ուտել զզատիկն։ Եւ նա ասէ ցնոսա. երթայք ի քաղաքն՝ առ այս անուն. և ասացէք ցնա. Վարդապետն ասէ՝ ժամանակ իմ մերձեալ է. առ քեզ առնեմ զզատիկս աշակերտօքս հանդերձ։ Եւ արարին աշակերտքն որպէս հրամայեաց նոցա Յիսուս. և պատրաստեցին զզատիկն։ Եւ իրբև երեկոյ եղև՝ կայր բազմեալ ընդ երկոտասան աշակերտսն։ Եւ մինչդեռ ուտէին նոքա՝ ասէ. ամէն ասեմ ձեզ. զի մի ոմն ի ձէնջ մատնելոց է զիս։ Եւ տրտմեցան յոյժ. սկսան ասել ցնա իւրաքանչիւր ոք ի նոցանէ՝ մի թէ ես իցեմ տէր։ Նա պատասխանի ետ և ասէ. որ միսեաց ընդիս զձեռն իւր ի սկաւառակդ՝ նա մատնելոց է զիս։ Որդի Մարդոյ երթայ որպէս և գրեալ է վասն նորա. բայց վայ մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռն Որդի Մարդոյ մատնեսցի. լաւ էր նմա թէ չէր ծնեալ մարդն այն։ Պատասխանի ետ Յուդաս՝ որ մատնելոցն էր զնա՝ և ասէ. մի թէ ես իցեմ Վարդապետ. ասէ ցնա՝ դու ասացեր։ Եւ մինչդեռ ուտէին նոքա, էառ Յիսուս հաց. օրհնեաց՝

Digitized by Google

և եբեկ. և ետ աչակերտացն՝ և ասէ. առէ՛ք՝ կերայք այս է մարմին իմ։ Եւ առեալ բաժակ գոհացաւ՝ ետ նոցա՝ և ասէ. արբէ՛ք ի դմանէ ամենեքին։ Զի այդ արիւն իմ նորոյ ուխտի. որ ի վերայ բազմաց հեղանի ի թողութիւն մեղաց։ Բայց ասեմ ձեզ. ոչ ևս արբից յայսմհետէ ի բերոյ որթոյ՝ մինչև ցօրն ցայն՝ յորժամ արբից զդա ընդ ձեզ նոր յարքայութիւնն Հօր իմոյ։ Եւ օրհնեցին, և ելին ի լեառն Ձիթենեաց։

Զայս Աւետարանս ի սեղանն ընթերցուածոյ սարկաւագն։

Ապա քայլեն գնեղանն, և առայեն գՀաւատոյն։

Սրբոյ Յովհաննու Ոսկեբերանի։

Իսկ յորժամ պատարագիչն հասանիցէ յայն տեղին յորում ասէ՝ Եւ տուր մեզ համարձակաձայն, ելցէ աւագ երէցն ի լեռնին՝ ունելով ի ձեռին գխաչն և գԱւետարանն, և կարկառեսցէ, գեհուցանելով ժողովրդեան զգան սրբոյն Բարսղի ի լուր ամենեցուն։ Նախ ահագուժիչ բանիւ, և ապա յորդորական ճանապարհաւ ասելով։

Լուարուք ինձ որդեակք իմ. և ես զերկիւղ տեառնէն ուսուցանեմ ձեզ աննախանձաբար, իբրև սիրելի և հարազատ որդւոց. քանզի հարկ ի վերայ կայ, և վայ է ինձ՝ եթէ ոչ աւետարանեցից ձեզ հանապազօր. զի կարացից ծանուցանել ձեզ, եթէ զինչ են կամքն Աստուծոյ, բարին՝ և հաճոյն, և կատարեալն։ Զի մարգարէն Եզեկիէլ հանապազօր զարհուրեցուցանէ զիս յասելն իւրում բանիւ Աստուծոյ ի վերայ քահանայից այսպէս։ Որդի մարդոյ՝ դէտ կացուցի զք

քեզ ի վերայ ժողովրդեանդ այդորիկ. եթէ տեսանէցես զսուրն եկեալ, և ոչ ազդ առնիցես վողով. և նոքա ոչ զգուշանայցեն. և եկեալ սուրն և գտանիցէ զոք անպատրաստ. նա յանօրէնութեան իւրում մեռցի. և զարիւն նորա ի ձեռաց քոց խնդրեցից: Արդ՝ սուրն, զեհենին սպառնալիքն են. և վողն, պատուիրանն Աստուծոյ. զոր զեկուցանեմ ձեզ ահաւասիկ ևլրացաք իմ. ես մարդ եմ իբրև զձեզ, և առաւել ևս մեղօք զառածեալ. բայց զի կարծեցայ ձեզ տեսուչ և խրատօղ, արտասուօք և բազում հառաչանօք սրբոյ իմոյ՝ սիրով առաջի առնեմ ձեզ զհաճոյն Աստուծոյ: Ո՛չ եթէ նոյնաձայն ինչ՝ մտացածին բանիւք առնել զձեզ վտարանդիս, քանզի ստուգապէս՝ և ես համարս տալոց եմ վասն ձեր առաջի Աստուծոյ. վասընորոյ և զվաղնջուցն դրոշմեալ կանոնս ի սրբոց հարցն, դիւրալուր բանիւք ձեզ զեկուցանեմ. բայց զայս նախ դիտասջիք, զի ոչ հրեչտակաց հաւատացաւ քահանայութեան պատիւն, զի անմեղք են. այլ մարդկանց. զի որպէս մեք մեղանչեմք, և յուսամք թողութեան ի Քրիստոսէ. նոյնպէս և ձեզ տացուք յոյս թողութեան և ապաչխարութեան: Եւ արդ առաչեմ զձեզ զամենեսեան երկայնմտութեամբ լսել ինձ: Ահա բանին երկինք ի վերուստ՝ և Քրիստոս իջեալ բազմի ի վերայ սրբոյ սեղանոյս. և ամենայն զօրք երկնից՝ յերկիր ծառալին աներևութապէս՝ ի ըսպաս Որդւոյն Աստուծոյ, և չուրջ զսեղանւոյն բոլորին. և Սուրբ Հոգին առատապէս բաշխէ զշնորհս

Digitized by Google

բարեաց, մերձեցելոցն սրբութեամբ։ Եւ արդ՝ դուք Հոգւոյ Սրբոյ ընտրեալք՝ բազում զղուշութեամբ և երկիւղիւ՝ դիք ի սիրտս ձեր, մի՛ զանսանելիդ և եթ նկատել հաց և գինի. այլ զմեծ խորհուրդն որ ծածկեալ է ի մարմնաւոր աչաց տեառնէնէ. ոլ միայն հոգւոյ աչօք տեսանի, որք սրբութեամբ խնդրեն գնա. զոյ կերակրի հոգին, և ուրախանայ ի ցնծութիւնս Աստուածային. քանզի կարօղ է Աստուած ի միս հում և յարիւն դարձուցանել. որպէս եղև միւսում ի սրբոցն։ Այլ վասնզի զգալիքս ոչ կարեն տանիլ զմիս հում և զարիւն, վասն այնորիկ հացիւ և գինւով տպաւորեաց Աստուած. այլ մի՛ իբրև ի հաց հայիք, և մի՛ իբրև զգինի նկատէք. քանզի սա է՝ ճշմարիտ Մարմին և Արիւն Քրիստոսի. մի՛ տովորական ընդելութեամբ ոք հարևալ արհամարհանօք մերձեսցի ի դոյզն ինչ. զի հուր կիզօղ է այրիչ և սպառիչ մեղաւորաց. ուստի պարտ է նախ սրբել ի մեղաց ի ձեռն ապաշխարութեան. զի մի՛ յոլովութեամբ մեղացն կլիպիսիք ի հուրըն. զի սպառին ողիք այնոցիկ, ոլք ոչ նախ մեկնին ի մեղաց. այլ բնեռևալ կան ի նոսա։ Եւ մի՛ դարձեալ անյուսարար ոք հեռանայցէ, և զերկիւղ սնոտի ի մէջ բերիցէ. զի ոչ է այն երկիւղ՝ այլ Աստուծոյ արհամարանք. զի սա է դուռն երկնից արքայութեան, և նոյն ինքն արքայութիւն, որ է Քրիստոս Որդի Աստուծոյ և Աստուած մեր. և մերձեսցէ լոցն սրբութեամբ՝ զորդէգրութիւն անկինկ գրէ երկնաւորի Հօրն։ Այլ ի միա առնուլ արժանի է, զի

Digitized by Google

ամենայն որդի հարազատ, զնմանութիւն կերպարանաց հօրն բերէ յինքեան. և դու յորժամ ասես՝ Հայր մեր որ յերկինս, և զխնդրուածս մատուցանես, արժան է զնմանութիւն Նորին ի քեզ բերել. վի լեալ լինիցի. ապա եթէ զնմանութիւն ոչ ունիցիս երկնաւոր Հօրն կատարելոյ և բարեփարի, ոչ լսէ նա քեզ. և ոչ խոնարհի յաղաչանս քո. այլ լսէ քեզ հայրն չարեաց, զորոյ կերպն գործոյն ունիս, որ ի սանդարամետան է: Արդ՝ լեալ զայս, ի բաց վարատեցէք յանձանց ձերոց զչարութիւն, և զամենայն խարդախութիւն. թողէք ի սրտէ իւրաքանչիւր ոք զյանցանս եղբօր ձերոյ, և զամենայն խէթ զոր ունիք առ միմեանս. զի և ձեզ զթասէ զորմութիւն յերկնաւոր Հօրէն, արժանի լինիջիք զենմանս այսորիկ: Ի բաց մերժեցէք ի ձէնջ ամենեքեան զանհաւատութիւն, և զխիղճ բծաւորութեան և զթերահաւատութիւն, իւրիք ի սոյնպիսեացն: Սրբեցէք ի ձէնջ զնախանձ, զնենդութիւն, զչարութիւն, զկեղծաւորութիւն, զնպարտութիւն, զամբարտաւանութիւն, զամբարհաւաճութիւն, զմարդահաճութիւն, զհակառակութիւն, զոխս, զվաչխս, զտոկոսս, և զամենայն չարեաց արմատ՝ զարծաթասիրութիւնն, և զագահութիւն. և ըզկանացի փաթեթեանս, և զկախարդասար դեղատուութիւնս. և զամենայն բան չար, և զթշնամութիւն. և զցաւս ցանկութեան. մանաւանդ՝ զոգեղն և զսխեղծ հայհոյիչ բանն ի բերանոյ ձերմէ, որով զմիմեանս նախատէք. և զանօրէնն կռապաշտութիւն, և զան-

կարգ և զանառակ մոլորութիւնն. զորս ի յիչումն առնէն՝ ապականէ և զարչեցուցանէ զմիտս, նախ՝ զիւրըն, և ապա՝ զլսողացն. քանզի յաւուրն դատաստանի՝ որդնալից լինին զարչելի բերանքն այնոցիկ՝ որք ոչ մնկնին ի նոցանէ. զի ասաց տէր, որ ասէ ցեղբայրն իւր մորս, պարտաւոր լիցի գեհենան հրոյն. արդ՝ պարտ է արմատախիլ առնել զնա ի մէնջ. մի ոք չուն, մի ոք պոռնիկ, մի արուագէտ. մի գող, մի յափչտակող, մի գէհ, մի որովայնամոլ, մի արբեցօղ. մի չարակամ, մի չարայոյզ, մի սպանօղ, մի խռովարար, մի անողորմ, մի բանսարկու, մի պիղծ, մի թշնամանօղ. մի երդմնահար, մի ուխտագրուժ. մի անօրէն, մի անիրաւ. մի բամբասօղ, և մի այլովք մեղօք. զի են մեղք որ մահու չափ են. զորս ոչ իսկ արժանի համարիմ յիչել ի տեղւոջս: Եւ ի վերայ այսր ամենայնի, մի ոք հերձուածօղ, պայս ասելով պատուիրեմ, ամենևին զհին մարդն ի բաց ընկեցէք ամենայն չար գործովքն իւրովք: Այլ զդաստացեալք զդեցարուք ամենեքեան վարս պարկեչս, սուրբս, բարեխոհս. հեզս, քաղցունս, անոխակալս, խաղաղարարս. ողորմածս ի վերայ հիւանդաց և վչտացելոց. զթածս ի վերայ տնանկաց, աղքատաց, և կարօտելոց. զարդարեալ ամենայն առաքինութեամբ. սիրով, հաւատով, յուսով. ունել զսէր կատարեալ առ Աստուած և առ մարդիկ. քանզի լըրումն ամենայն առաքինութեան սէր է. ի սուրբ սըր-

Digitized by Google

ան և յանկեղծաւոր հաւատոց։ Պատուեցէ՛ք զհարս և զմարս ձեր. սիրեցէ՛ք զկանայս ձեր իբրև զանձինս ձեր. և դուք կանայք հնազանդ լիրուք արանց ձերոց իբրև տեառն. միաբան երկերուք յԱստուծոյ, պատուեցէ՛ք զօր միաչաբաթին։ Ե՛րիտասարդք և կուսանք՝ զսրբութիւն սիրեցէ՛ք. զի ընդունելով զսրբութիւնս զայս լուսաւորեսջիք որպէս լուսափայլ հայելի, յորժամ նչոյլք արեգականն ճառագայթիւն ի նա. և ահեղեալք սովաւ յառաքինութիւնս, կեցջիք. և ոչ դատապարտեսջիք ըստ առաքելոյն բանի. զի արդարև են մահառաժամք և յոլով աչխատութիւնք անբմբերելի ցաւոց. ուրկութիւնք, և այլն առնեայն, յանդիման հաղորդութիւնեն լինի։ Մի՛ կեղծաւորեալ ոք ի՝ ներքս մտցէ. կարծելով յարտաքս կացելոցն՝ եթէ ի հաղորդելոցն իցէ. վասն զի երկմիտն, ոչինչ ունի յԱստուծոյ. վասն զի Աստուած ոչ փորձի. մի՛ ըղմարդկային ամօթս պատկառիք. զի ոչ ինչ է այս իսկ ամօթ. այլ այն է մեծ ամօթ, որ ի տիեզերական հրապարակին է. զոր այժմ յինէն թագուցանես, և ոչ խոստովանիս, և ոչ ապաչխարես. անդ՝ առաջի մեծի դատաւորին հրապարակեալ բացայայտի. որ ոչ ևս կարես թագուցանել զգործս քո. քանզի հոգիդ քո՝ ինքնին լինի քեզ դատախազ։ Արդ՝ ահա ասացի ձեզ զամենայն աննախանձաբար. յայսմհետէ ես անպատրաստ եմ. արիւն ձեր ի գլուխս ձեր. քաւեալ եմ ես յարենէ ձերմէ. զի յիմ վերայ՝ այս և եթէ կայցէ։ Բայց զի-

Digitized by Google

տեմ եա՝ զի են ոմանք ի ձէնջ, որ արհամարհեն զաւացելովքս. վասնորոյ վկայութիւն դնեմ ձեզ զբանս զայս՝ զոր խօսեցայ ընդ ձեզ այսօր ի վերայ բեմիս. յաւուրն դատաստանի առաջի բեմին Քրիստոսի՝ յանդիման կացուցանեմ ձեզ վկայութեամբ սուրբ Աւետարանիս. ապա՝ յայնժամ ոչ ևս կարէ արհամարհել արհամարհօղն. այլ կշտամբեալ պատուհասակոծ լինի, և առաքի ի հուրն անշէջ: Այժմ բանիս աւարտումն արարից. զի զամենայն ինչ որ վասն խորհրդոյս էր, ասացաք սակաւուք ըստ պատշաճի իրին: Արդ՝ որք արժանաւորապէս հաղորդին՝ զարդարեալք գործովք քովք, ընդ Պետրոսի և ընդ այլոց սրբոց առաքելոցն պատուեալ պսակին ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ. և որք ապաշամբութեամբ հաղորդին, կրկին ի խաչ հանեն զՈրդին Աստուծոյ. և որք լրբենի երեսօք և անարժանութեամբ հաղորդին, մասն և բաժին դժուդայի մատնչի և զխաչահանուացն ընկալնուն. զօգուտն ձեր՝ դուք գիտէք: Այլ Հոգին Սուրբ՝ որ սրբոցն է բնակարան. և աղբիւր է ամենայն բարեաց. մաքրեսցէ զհոգիս և զմարմինս ձեր, և զհաղորդութիւն փրկական խորհրդոյս, ի թողութիւն մեղաց ապահասցէ ձեզ: Որում ընդ Հօր և ընդ Որդւոյ Միածնի Յիսուսի Քրիստոսի տեառն մերոյ վառք յաւիտեանս. ամէն:

Եւ յաւարտէն սկսանէցին Հայր մեր՝ բարձր ձայնիւ:

Digitized by Google

Իսկ յորժամ Քրիստոս պատասխանէն վճռեցէ, ա-
սացեն դպիրքն յոգւոցական ձայնիւ զոտաղս պայս։

Եկա՛ք մա՛րդի՛կք ա՞մե՞նա՛ն. մա՛տի՛ք առ
ա՛ե՛ր սրբո՛ւթեամբ. ճա՛չա՛կեցե՛ք և՝ տե՛սէ՛ք.
զի՛ քա՛ղցր է՛ տե՛ր բա՛րո՛ւթեա՛ն։ Հա՛ցս ա՛յս
մա՛րմի՛ն Քրիստոսի՛. բա՛ժա՛կ ա՛րեա՛ն նո՛ր ո՛ւխ-
տի. ծա՛ծկեա՛լ խո՛րհո՛ւրդս ա՛յս յա՛յտնեա՛։
Աստուա՛ծ ի՝ ն՛ա՛մա՛ ե՛ր՛ս՛ի՛։ Ո՛ր՛ք ա՛ն՛ա՛մ՛ա՛ք՛ո՛՛ւ՛ր
է՛ք հո՛գւով. ի՝ բա՛ց կացէ՛ք դո՛ղա՛լով. զի՛ հո՛ր
կի՛ զի՛ չ է բացո՛՛ւ՛լ. զհո՛գի՛ն ա՛՛նա՛՛ր բժա՛՛ն մա՛՛ր բա-
նո՛՛ւ՛լ։ Ո՛ր՛ք ա՛ղո՛ւ թի՛՛ւ՛ք է՛՛ք ճգնեա՛՛ւ՛լ. տա՛՛ճա՛՛ր
հո՛գւով է՛՛ք մաքրեա՛՛ւ՛լ. յա՛՛ռա՛՛ւ՛չ մտա՛՛ւ՛ք ճա՛՛չա՛՛-
կեա՛՛ւ՛լ. զմարմի՛՛ն զարի՛՛ւ՛ն տեառն ո՛՛ւխտեա՛՛ւ՛լ։
Սա՛՛ է՛՛ Ո՛՛ր՛՛ւ՛դի՛՛ն Ա՛՛ստո՛՛ւ՛ծո՛՛ւ՛յ. ո՛՛ր՛՛ ը՛՛ն՛դ ա՛՛յ՛մ՛՛ի՛՛ Հօ՛՛ր
նստի՛՛. և ա՛՛ստ ա՛՛ի՛՛չտ պա՛՛տա՛՛ր՛՛ա՛՛ի՛՛ գի՛՛ւ՛ն՛՛. բա՛՛ռ՛՛ն՛՛ա՛՛յ
զմի՛՛ղս ա՛՛՛չխա՛՛ր՛՛հի՛՛։ Ա՛՛ստ՛՛ուա՛՛ծա՛՛ծ՛՛ին սրբո՛՛ւ՛հի՛՛.
ե՛՛ր՛՛կն՛՛ի՛՛ց դչխո՛՛յ պա՛՛ր՛՛ն՛՛ծա՛՛ղ՛՛ի՛՛. մի՛՛ զ՛՛ն՛՛ո՛՛ւ՛ր դ՛՛ր ո՛՛ւխտա՛՛-
ո՛՛ւ՛ր՛՛ն՛՛ ց՛՛ի՛՛ս՛՛ո՛՛ւ՛ա՛՛ի՛՛ ա՛՛՛։ ի՛՛ ժա՛՛մ ս՛՛ո՛՛յ՛ր՛՛ը պա՛՛ տա՛՛ր՛՛ա՛՛ի՛՛։
Ե՛՛ր՛՛ե՛՛ս՛՛ ե՛՛դե՛՛ա՛՛ւ՛լ ի՛՛ հո՛՛ղ՛՛ի՛՛. հա՛՛յ՛ց՛՛ե՛՛ք ի՛՛ք՛՛ե՛՛ն թա-
գո՛՛ւ՛հի՛՛. մա՛՛ տո՛՛ զա՛՛ղ՛՛ե՛՛ս ս՛՛ն՛՛ի՛՛ ը՛՛ս՛՛ն՛՛ի՛՛ ա՛՛՛։ Ո՛՛ր՛՛դ՛՛ւ՛ո՛՛յ՛դ
ք՛՛ո՛՛ տե՛՛ա՛՛ռ՛՛ն՛՛ ց՛՛ի՛՛ս՛՛ո՛՛ւ՛ա՛՛ի՛՛։ Գ՛՛ա՛՛ւ՛ր՛՛ն՛՛ է՛՛ մ՛՛ի՛՛ զ հո՛՛ղ՛՛ա՛՛ւ՛ո՛՛ր՛՛.
և՝կա՛՛յ՛ք մա՛՛ր՛՛դ՛՛ի՛՛կ՛՛ք ք՛՛ա՛՛ւ՛ն՛՛ա՛՛ւ՛ո՛՛ւ՛ր՛՛. ո՛՛ղ՛՛ջո՛՛յ՛ն կո՛՛ւ՛ա՛՛ի՛՛ն
ճա՛՛հա՛՛ւ ո՛՛՛։ ե՛՛ր՛՛կ՛՛ե՛՛ա՛՛ց հրե՛՛շ՛՛տ՛՛ա՛՛կ՛՛ն ե՛՛ր՛՛կ՛՛ն՛՛ա՛՛ւ՛ո՛՛ւ՛ր։

Եւ ապա հաղորդեացին արժանաւորքն, և աւձակեւացին։

Իսկ յերեկոյին ժ. ժամուն՝ ժողովեսցին ի գաւիթ եկեղեցւոյն և կատարեսցեն զկարգ ոտնալուային՝ զաքաբեանն սրբոյն Եփրեմի, և զԹարգմանեաւն մեծին Գրիգորի վկայասէրի Հայոց Հայրապետի։ Բայց յառաջագոյն պատրաստ ունելով զսպաս խորհրդական լուացման. և դիցեն զՍրբոՒԹիւնն ի վերայ բազմոցին. և եկեսցեն յառհանն զգեստաւորեալք, և սկսանիցեն ողբաձայն սաղմոս՝ ծ։

կՅ. Յողեա յիս մչտական և սուրբ եղէց, լուա և քան զձիւն սպիտակ եղէց։

փԽ. Ողորմեա ինձ Աստուած՝ ըստ մեծի ողորմութեան քումն։ (Տես ի Ցիւն. 56։)

Ջկնէք շաբաւան՝ Ան։

Ա՛յսօ՞ր կանգնեցա՞ւ (Տես ի Ցիւն. 298։)

Եւ յառաջիկն՝ սաղմոսազն քարոզեսցէ։

Եւ ևս դոհութիւն և երկրպագութիւն մատուսցուք տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ է ճառագայթ փառաց և ծագումն էութեան՝ անակզբնական բնութեանն Հօր։ Որ նոյն ինքն այսօր՝ անբաժանելի գոլով յէական լուսոյն, խոնարհեցոյց զինքըն յաղքատ բնութիւնս մեր. առեալ զկերպարանս ծառայի, կատարեաց զտնօրինական փրկագործութիւնըն. լուաց զոտս աշակերտացն յօրինակ մեզ։ Ազաչեսցուք և խնդրեսցուք ի նմանէ. զի և այժմ խոնարհեսցի մարդասիրութեամբ իւրով՝ ի ժողովարանս

մեր. և լուացմամբ երևելի ջրոյս այսմիկ, չնորհօք սրբեսցէ զանելոյթ հոգիս մեր ի մեղաց մերոց. ամենակալ տէր Աստուած մեր կեցուսցէ և ողորմեսցի։

Եւ ապա ծ. Տէր ողորմեա, Թ֊ե։ Եւ ի վճարիչն՝ կարդասցէ Եպիսկոպոսն կամ քահանայն զաղօթս զայս։

Փառաւորեմք զքեզ տէր մեր և փրկիչ Յիսուս Քրիստոս՝ Միածին Որդի և բան Հօր. տէր և արարիչ հրեշտակաց և մարդկան, Աստուած հուր կիզեչոյ. որ և հրեղէն զօրութիւնքն զարհուրեալ սարսափին նայիլ ի պատիւ փառաց Աստուածութեանդ քոյ. ուստի և սերովբէքն թևաւքօղեալ ծածկեն զդէմս իւրեանց, անդադար փառաբանութիւն մատուցանելով առաջի աթոռոյ տէրութեանդ քոյ։ Դու տէր՝ և այժըմ ի լրման ժամանակի փրկութեանս մերոյ, հաճեցար լինիլ մարդ՝ ի սուրբ և յանարատ կուսէն Մարիամայ. և ընդ ամենայն կիրս մարդկութեան անցանելով՝ բաց ի մեղաց, բարձեր զպատիան Ադամայ՝ յԱստուածագործ մարմինդ քո, զոր ի մերմէ բնութենէս ընկալար. և զամենայն կատարեցեր ըստ օրինացն՝ փրկելով զմեզ յանիծից օրինացն. եկիր ի վերնատունն՝ կատարելով զայն ևս զմովսիսադիր ըստուերօրէնադրութիւնն. և որ սպասաւորեալդ պաշտիս յաննիւթական հրեղինացն. ըստ որում և կրկնի քեզ ամենայն ծունր երկնաւորաց, և երկրաւորաց, և սանդարամետականաց։ Այսօր՝ տնօրինական մարդասիրութեամբ խոնարհեցար ի ծունկս քոց սրբոց առա-

Digitized by Google

քելոցն, լուացեր զոտս հողեղէնս՝ զբարւոք և զդեղեցիկ կարգս աւանդելով մեզ։ Եւ արդ՝ տէր բարեբար և բազումողորմ. որպէս և յայնժամ ազդ արարեալ դաստիարակեցեր մեզ՝ կերալարանակից լինել փրկագործ խոնարհութեան քումդ, չնորհեա և այժմ մեղաւոր ծառայիցս քոց՝ ողք յերեսս անկեալ աղաչեմք զգուլթ մարդասէր չնորհաց քոց, փոքր ջրովս զքաւութիւն մեղաց. որպէս զի օրինակաւ այսուիկ յորս լուանայք զոտս միմեանց, և տկար անձամբք մերովք զկենարար աւանդութիւնս քո կատարեմք, հեղցես ի մեզ զամենառատ և զամենազօր չնորհս քո, և մաքրեցես զմեզ յամենայն աղտեղութեանց և ի չաղախմանց մեղաց մերոց։ Հեռացո՛ ի մէնջ զամենայն հալածութիւն և զամբարտաւանութիւն, զոր էած բանսարկուն ի վերայ տկար բնութեանս մերում՝ պատրանօքն իւրովք։ Արժանաւորեա՛ զմեզ՝ մտաց աչօք լուսաւոր ճառագայթիւք նայիլ ի կենսարեր ի-ջումն չնորհաց քոց։ Զդեցո՛ մեզ տէր՝ զճշմարիտ խոնարհութիւն և զհնազանդութիւն և զքաղցրութիւն և զսէր քո՝ որ է լրումն օրինաց քոց՝ զոր կատարեցեր և ուսուցեր մաքրափայլեալ աչակերտաց քոց. որպէս զի և մեք կատարելով զյիշատակ փրկաւէտ չարչարանաց քոց, ընդ դասս սրբոց առաքելոցն՝ արժանի լիցուք տօնել զլուսափայլ յարութիւնդ քո. և ընդ նոսին խոստովանելով զքեզ Քրիստոս Աստուած մեր, փառաւորել ընդ Հօր և Սուրբ Հոգւոյն. այժմ և միշտ՝՝։

Digitized by Google

Խաղաղութիւն ամենեցուն
Աստուծոյ երկրպագեցուք

Դարձեալ երկիրպագանեմք, և փառաւորեմք զքեզ Քրիստոս Աստուած մեր՝ որ եսդ էակից Հօր և համագոյակից Սուրբ Հոգւոյն. որ միշտ փառաւորեալ օրհնեա անդադար՝ սրբասաց ձայնիւ՝ ի հոգեղէն և ի հրեղէն զուարթնոցն, անպատմելի և հրաշազարդ գեղապարուրեամբ: Համեցար և ի հողեղինացս ընդունիլ զօրհնաբանութիւն. որք ի քոյոց սրբոց առաքելոցն ընկալեալք զաւանդութիւն, և ըստ կարի մերում զվերինայնոցն բերկրով զնմանութիւն, պար առեալ կամք առաջի տէրութեանդ քոյ, հանդերձ ղգալի անուշահոտութեամբ: Ընկալ տէր և զիւնկս զայս ի մէնջ մեղաւորաց՝ զոր մատուցանեմք քեզ ի ժամուս յայսմիկ, որ է յիշատակ խոնարհութեան քոյ՝ զոր վասն մեր կատարեցեր. և լցո զմեզ յանուշահոտութեանց մարմնատիպ Աստուածութեան քոյ՝ զոր վասն մեր զգեցար. և ի ձեռն լուացմանս այսորիկ նիւթականի. լուա և մաքրեա զաննիւթ հոգիս մեր ի թունից մահաբեր վիշապին. և արժանաւորեա զմեզ՝ մաքուր տաճար և օթևան լինել սրբոյ Երրորդութեանդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւի՛ն:

Եւ ապա առեալ ջուր՝ արկցէ ի կոնքն խաչանմանն՝ ասելով ձայնիւ սաղմոս՝ ըը:

ԿՅ. Ձայն տեառն ի վերայ ջուրց, և Աստուած փառաց որոտաց. և տէր ինքն ի վերայ ջուրց բազմաց:

Digitized by Google

փխ. Ա ատուցէք տեառն որդիք Աստուծոյ, ատուցէք տեառն զորդիս խոյոց. (Տես ի Թիւն. 309:)

ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՑ ՅԻՒԼԻՍ Գ.
Գլ՝ 30. Հմր՝ 17.

Յոսեցաւ տէր ընդ Մովսէսի՝ և ասէ: Արի ա-ւասան պղնձի. և զխարիսխ նորա պղնձի. առ ի լուանալոյ ի նմա. և դիցես զնա ընդ խորանն վկայութեան՝ և ընդ սեղանն. և արկցես ի նա ջուր: Եւ լուասցեն Ահարօն և որդիք նորա ի նմանէ զձեռս և զոտս իւրեանց: Ցորժամ մտանիցեն ի խորանն վկայութեան՝ լուասցեն ջրով՝ և մի մեռանիցին. կամ յորժամ մերձենայցեն ի սեղանն պաշտել՝ և հանել զողջակէզսն տեառն, լուասցեն զձեռս և զոտս իւրեանց: Զի մի մեռանիցին՝ և եղիցի նոցա օրէնս յաւիտենական. նմա և ազգաց նորա յետ նորա:

ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՑ ՅԵԼՔՈՐԴ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ
Գլ՝ 7. Հմր՝ 38.

Եւ արար Փիլեմ տաճն պուտնարդս պղնձիս. և ունէր պուտնարդ մի քառասուն սափոր. ի չորից կանգնոց պուտնարդ մի չափով. և պուտնարդ մի ի վերայ միոյ մեքենովքիայ՝ տասնեցունց մեքենովքիացն: Եւ եդ զմեքենովքիան հինգն յուսոյ տաճն յաջմէ. և զհինգն յուսոյ տաճն ի ձախմէ. և ծովն յուսոյ տաճն ընդ աջմէ ընդ արևելս ի հարաւոյ կողմանէ: Եւ արար Փիլեմ զաճանն՝ և զվերուցիչսն. և տաչտսն. և կատարեաց Փիլեմ առնել զամենայն գործն. զոր ա-

Digitized by Google

լար սլքայի Սաղոմոնի ի տանն տեառն։

Ընթերցուածս յերկրորդ Մնայորդաց։
Գլ՝ 4. Հմր՝ 2։

Եւ արար Սաղոմոն զծովն հալածոց ի տասն կանգնոյ ղչափն բոլորակ չուրջանակի. և ի հինգ կանգնոյ զբարձրութիւն. և չուրջանակի յերեսուն կանգնոյ։ Եւ նմանութիւն եզանց ի ներքոյ նորա. որք չուրջ կային ի տասն կանգնոյ չուրջ պատեալք զնովաւ. և ձուլեցին զզուարակսն, ըստ ձուլածոյն իւրեանց։ Որպէս արարին զնոսա երկոտասան զուարակս. երեքքն հայէին ի հիւսիս. և երեքն հայէին յարեւմուտս. և երեքն հայէին ի հարաւ. և երեքն հայէին յարեւելս. և ծովն ի վերայ նոցա. և յետոյքն իւրեանց ի ներքոյ։ Եւ թանձրութիւն ծովուն թզաւ. և չուրթըն նորա իբրև զչուրթն բաժակի քանդակեալ բոյս շուշանի. և տանէր երիս հազարս չափ։ Եւ կատարեաց զնա. և արար աւազանս տասն. և եդ զհինգն յաջմէ. և զհինգն ի ձախմէ. լուանալ ի նոսա զգործ ողջակիզացն. և ողողել ի նոսա. և ծովն առ ի լուանալ ի նմա քահանայիցն զինքեանս։

Ընթերցուածս Եսայեայ Մարգարէի։
Գլ՝ 44. Հմր՝ 2։

Մի երկնչիր ծառայ իմ Յակոբ՝ և սիրեցեալդ իմ Իսրայէլ՝ զոր ընտրեցի։ Զի ես տաց զջուր ի ծարաւս՝ որոց գնան յանջրդուպղ. եդից զոգի իմ ի վերայ զաւակի քոյ՝ և զօրհնութիւնս իմ ի վերայ որդւոց քոց։

Digitized by Google

Եւ զուարճացին իբրև զխոտ ջրարբի. և իբրև զուռ ի մէջ ջուրց գնացից։ Մին ասիցէ՝ Աստուծոյ եմ ես. և միւսն խրախոյս բարձցէ յանուն Աստուծոյ Յակոբայ. և միւսն նա գիր հանցէ ձեռամբ իւրով՝ Թէ Աստուծոյ եմ ես. և յանուն Իսրայէլի խրախոյս բարձցէ։ Այսպէս ասէ Աստուած Թագաւորն Իսրայէլի. որ փրկեացն զնա Աստուած զօրութեանց։

Պօղոսի Առաքելոյն ի Կորնթացւոց Առաջին Թղթոյն ի Ընթերցուածս։

Գլ՝ 10. հմր՝ 1։

Ո՛չ կամիմ, եղբարք. զի տգէտք իցէք եղբարք. զի հարքըն մեր ամենեքին ընդ ամպովն էին. և ամենեքին ընդ ծովն անցին։ Եւ ամենեքին ի Մովսէս մկրտեցան յամպըն և ի ծովն։ Եւ ամենեքին զնոյն հոգեւոր կերակուրն կերին։ Եւ ամենեքին զնոյն հոգեւոր ըմպելին արբին. զի ըմպէին ի հոգեւոր վիմէն՝ որ եր Քրիստոս. և վէմն էր Ինքն Քրիստոս։

Յովհաննու Առաքելոյն ի Կաթուղիկէից Առաջին Թղթոյն ի Ընթերցուածս։

Գլ՝ 4. հմր՝ 7։

Սիրելիք՝ սիրեսցուք զմիմեանս. զի սէր յԱստուծոյ է. և ամենայն որ սիրէ՝ յԱստուծոյ է ծնեալ՝ և ճանաչէ զԱստուած։ Եւ որ ոչն սիրէ՝ ոչ ճանաչէ զԱստուած, զի Աստուած սէր է։ Եւ զի յայսմ երևեցաւ սէրն Աստուծոյ ի մեզ՝ զի զՈրդին իւր Միածին առաքեաց յաշխարհ, զի եղիցուք նովաւ կենդանիք։ Յայսմ է սէրն. ոչ զի մեք սիրեցաք զԱստուած՝

Digitized by Google

այլ զի նա սիրեաց զմեզ. և առաքեաց զՈրդին իւր ի քաւութիւն մեղաց մերոց: Սիրելիք՝ եթէ Աստուած այնպէս սիրեաց զմեզ. ապա և մեք պարտիմք զմիմեանս սիրել: ԶԱստուած ուրուք երբէք չի՛ք տեսեալ. եթէ սիրեսցուք զմիմեանս՝ Աստուած ի մեզ բնակի, և սէր նորա ի մեզ կատարեալ է: Այսուիկ գիտեմք, եթէ մեք ի նմա բնակեալ եմք՝ և նա ի մեզ՝ զի ի հոգւոյն իւրմէ ետ մեզ: Եւ մեք տեսաք՝ և վկայեմք, զի Հայր առաքեաց զՈրդին իւր փրկիչ աշխարհի: Որ ոք խոստովանեսցի եթէ Ցիսուս է Որդի Աստուծոյ, Աստուած ի նմա բնակի, և նա յԱստուած: Եւ մեք հաւատացաք՝ և ծանեաք զսէրն Աստուծոյ, զոր ունի առ մեզ. Աստուած սէր է. և որ կայ ի սէրն՝ բնակեալ է յԱստուած. և Աստուած ի նմա բնակի: Ցայսմիկ կատարեալ է սէր նորա ի մեզ. զի զհամարձակութիւն ունիցիմք յաւուրն դատաստանի. զի որպէս նոյն է՝ նոյնպէս և մեք եմք յաշխարհի յայսմիկ: Երկիւղ ո՛չ գոյ ի սէր, այլ սէրըն կատարեալ՝ ի բաց մերժէ զերկիւղ. զի երկիւղ ընդ տանջանաց է. իսկ որ երկնչի, չէ՛ կատարեալ ի սէրն: Մեք սիրեսցուք զԱստուած՝ վասն զի նախ նա սիրեաց զմեզ: Եթէ ոք ասիցէ եթէ սիրեմ զԱստուած, և զեղբայր իւր ատիցէ՝ սուտ է. որ ո՛չ սիրէ զեղբայր իւր՝ զոր տեսանէ. զԱստուած, զոր ոչն ետես՝ զիա՞րդ կարիցէ սիրել: Եւ զայս պատուէր ունիմք առ ի նմանէ. զի որ սիրէ զԱստուած, սիրէ նա և զեղբայր իւր:

Digitized by Google

Թղթոց Երանելւոյն Յովհաննու Վարդապետին՝ որ մակ անուն Պլուզ ասի, արարեալ բան վասն Սիրոյ։

Աստուած սէր է. ասէ որդին որոտման՝ սիրելի աշակերտն Քրիստոսի Յովհաննէս. և որ կայ ի սէրն, յԱստուած բնակի՝ և Աստուած ի նմա։ Եւ արդ ևղբարք՝ լուարուք և ի մէտ առէք զճառ սիրոյ։ Զի ամենայն որ սիրէ զԱստուած՝ սիրէ նա և զեղբայր իւր։ Զի սէրն Աստուծոյ՝ սիրով հղբօրն երևի։ Զի թէ զեղբայրն զոր տեսանէ՝ ոչ սիրէ. զԱստուած որ ոչն տեսանէ՝ զիա՞րդ կարիցէ սիրել։ Այսուհիկ ճանաչեմք՝ եթէ սիրեմք զԱստուած, յորժամ սիրեմք զեղբայրն մեր ըստ հոգւոյն սիրոյ՝ և ոչ ըստ մարմնոյ. զի այլ է սէր հոգւոյն՝ և այլ մարմնոյն. զոր յառաջ գնացեալ՝ ասացուք յիւրում տեղւոջն։ Բայց արդ՝ ամենայն որ սիրէ, ճանաչի յԱստուծոյ. և ինքըն ճանաչէ զԱստուած. և ամենայն, որ ոչ սիրէ զեղբայր իւր ցաւակցաբար, օտար է Աստուծոյ. և զչնորհս Աստուածային՝ ոչ կարէ ընդունել։ Ամենայն՝ որ սիրէ զեղբայր իւր ի սուրբ սրտէ, բնակարան լինի Աստուծոյ. և Աստուած ի նա բնակի։ Զի ինքն տէրն սիրեաց զմեզ. և առաքեաց զհոգին ճշմարտութեան բնակիլ ի մեզ։ Զի իմանալի հոգիս մեր՝ ընդ անիմանալի Հոգւոյն Աստուծոյ՝ սիրով կապակցի։ Եւ որպէս նա սիրեաց զմեզ, նոյնպէս և ի մէնջ կամի զսէր առ միմեանս։ Տե՛ս թէ՝ որչափ համաձակութիւն ունի սէրն առ Աստուած. որպէս թէ՝ նման Աստուծոյ առնէ զմարդն. զի Աստուած

սիրովն իւրով՝ նման մարդկան եղև։ Եւ եցոյց թէ՝ մարդիկ իւրեանց սիրոյն՝ նման Աստուծոյ լինելոց են։ Զի Աստուած այնչափ սիրեաց զաչխարհս՝ մինչ զՈրդին իւր Միածին՝ առաքեաց ի փրկութիւն աչխարհի։ Եւ թէ մեք սիրեսցուք զմիմեանս՝ որպէս և Աստուած սիրեաց զմեզ, ոչինչ է չար՝ որ խափանէ զսէրն մեր. ամենայն որ սիրէ, յայտնի է առաջի մարդկան. և համարձակ առաջի Աստուծոյ։ Զի զերկիւղ ի մեղաց մահու ոչ ունի. այլ սիրովն Աստուծոյ զինեալ կայ՝ և անահ յամենայն երկիւղական վտանգից։ Ուր սէր է, անդ երկիւղ ոչ է. որպէս Յովհաննէս ասէ՝ երկիւղ ոչ գոյ ի սէրն. այլ սէր կատարեալ՝ ի բաց մերժէ զերկիւղ. զի երկիւղն ընդ տանջանաց է. և սէր ի համարձակութիւն. և զի երկիւղն հալածի ի սիրոյն. և ուր սէր ոչ է, անդ է երկիւղ դատաստանին. և ահ կորստեան՝ յաւուր մեծի ահեղ ատենին։ Իսկ սէրն աներկիւղ առնէ զմարդն յամենայն տանջանաց. սէր զայն ասեմ, որ ամենեցին հեռի է յերկբայութենէ. զի երկբայութիւն և սէր ի միասին ոչ բնակին։ Եւ գիտելի է, զի սէրն ոչ միայն ի կեանսն յաւիտենականս պտղաբերէ զսլտուղ խաղաղութեան իւրոյ, այլև յաչխարհիս այսմիկ զամենայն թշնամութիւնն ի բաց հալածէ. զնախանձ, և զաանելութիւն. զոխակալութիւն, և զչարութիւն. զչարախօսութիւն, և զհայհոյութիւն. զտրտունջ, և զբամբասանս. զխպարտութիւն, և զամբարհաւաճութիւն։ Եւ մանաւանդ՝ զմայրն ամենայն չարեաց

Digitized by Google

զարծանելութիւն և զոգահութիւն։ Արդ՝ որ սէր ունի՝ յայս ամենայն չարեացս ի բաց հեռանայ. և յերկնային անքոյթ՝ խաղաղական հանգիստն ժամանէ՝ յամենեսին բարին. զինչ խաղաղական քան զսէրն՝ յազատ լինիլ յամենայն խռովութենէ, և զԱստուածային հաճոյան կատարել։ Սէրն՝ քանալի է արքայութեան երկնից. և հանապարհ կենացն յաւիտենից։ Սէրն՝ զմարդիկ որդիս Աստուծոյ առնէ, և երկնից ալքայութեանն ժառանգորդս։ Սէրն՝ զսրբականացու բնութիւնս անսրբական գործէ՝ և զմահկանացուս յանմահութիւն զերազոխէ։ Սէրն՝ զերկրայինսն զերկնայինս առնէ. և զհողեղէնն հրեղէն կազմէ։ Եւ արդ՝ ով կարէ սրատմել զանչափ մեծութիւն սիրոյն, զի անճառ և անսրատում է. ըստ որում և աննղ բնութիւն Աստուածութեանն անքննելի է, այսպէս և բնութիւն սիրոյն։ Եւ որպէս Աստուած անրաւ է, բայց յամենեսեան մերձ է. և բնակիսլ է ի հեզս և ի խոնարհս, և յայնոսիկ՝ որք դողան ի բանից նորա. այնպէս և սէրն՝ յամենեսեսն մերձ է. որ կամին զնա՝ և ինքն եկեալ բնակեսցէ ի խնդրօղս իւր. քանզի սէրըն՝ սիրէ զսիրելիս իւր, և ատէ զատելիս իւր։ Որք խնդրեն զնա, մերձ է ի նոսա Աստուածապէս. զի Աստուած սէր է՝ և կամեցօղ սիրոյ, ի սուրբ սրտէ՝ և յանկեղծասլ հաւատոցն։

Ալէլուիա ալէլուիա

Պատրաստ արարեր առաջի իմ զսեղան՝ ակն յան-

դիման նեղչաց իմոց : Օձեր իւղով զգլուխ իմ, բա-
ժակ քո որպէս անասպակ արբեցոյց զիս :

Սրբոյ Աւետարանիս Ցիսուսի Քրիստոսի՝ որ ըստ
Յովհաննու :

Գլ՝ 13. հմր՝ 1 :

Տէրն մեր Ցիսուս Քրիստոս :

Յառաջագոյն քան զտօնն զատկի, գիտաց Ցիսուս,
թէ հասեալ է ժամ նորա՝ զի փոխեսցի յաշխարհէ
սատի առ Հայր. սիրեաց զիւրսն, որք յաշխարհի սատ
են. խոպատ սիրեաց զնոսա : Եւ ի լինել ընթրեացն,
սատանայի իակ արկեալ էր ի սիրտ, զի մատնեսցէ
զնա Յուդա Սիմոնի Իսկարիօտացւոյ : Գիտաց Ցի-
սուս՝ զի զամենայն ինչ ետ Հայր ի ձեռս նորա. և
թէ յԱստուծոյ ել՝ և առ Աստուած երթայ : Յառնէ
յընթրեացն անտի, և դնէ զհանդերձսն. և առեալ ըզ-
դեննջակ մի՝ ափածաւ : Եւ ապա առեալ զջուր՝ էարկ
ի կոնք. և սկսաւ լուանալ զոտս աշակերտացն. և սրբ-
բէր զեննջակաւն՝ զոր ափածեալ էր : Գայ առ Սիմօն
Պետրոս. և նա ասէ ցնա, տէր, դո՞ւ զիմ զոտս լը-
ուանաս : Պատասխանի ետ նմա Ցիսուս և ասէ. զոր
ինչ ես գործեմ, դու այժմ ոչ գիտես. բայց յապայ
գիտասջիր : Ասէ ցնա Պետրոս. ոչ լուացես զոտս իմ
յաւիտեան. պատասխանի ետ նմա Ցիսուս. եթէ ոչ
լուացից զքեզ՝ ոչ ունիս ընդիս մասն : Ասէ ցնա
Սիմօն Պետրոս. տէր, մի միայն զոտս իմ, այլ և ըզ-
ձեռս՝ և զգլուխ : Ասէ ցնա Ցիսուս. լուացեալոյն չէ

Digitized by Google

ինչ պիտոյ՝ բայց զի զոտան լուանայցէ. քանզի ամենևին սուրբ է. և դուք սուրբ էք, այլ ոչ ամենեքեան։ Զի գիտէր զայն՝ որ մատնելոցն էր զնա. վասն այնորիկ ասաց՝ եթէ ոչ ամենեքեան սուրբ էք։

Զկնի՝ Փարզ երաժշտաւ։

Աստուա՞ծ մե՞ծ և աքա՛նչելա՛գո՛րծ զօրո՛ւթի՛ւն, ա՛նե՛զա՛նելի՝ բընո՛ւթի՛ւն. ո՛ր ո՛ղո՛րմութեա՞՛մբ հաճե՛ցա՛ր ա՛ռնո՛ւլ զա՛րա՛րա՛ծս ամե՛նայն յոչը՛նչէ՞՛. ա՞ղա՞չե՛մք։

Լո՛ւր տէ՛ր և ողո՛րմեա՛։

Զգեցե՞՛ր յարկս ե՛րկնից ո՛րպէս խո՛րան ի վերայ ջո՛ւրց. մածուցեա՛լ հա՛ստատութեամբ ի բնակութիւն անպա՛րագրելի Աստուածութեանդ քո՛յ. և զամենա՞՛յն հրաշակերտս ի գովեստ անուանդ քո՛ւմ արքո՛յ. ա՞ղաչե՛մք։

Արարե՞՛ր քեզ սրբասաց ըզսերօբէան և ըզքերօբէ՛ն. ըզհոգեղէն և ըզհրեղէն աննիւթական բնութի՛ւնան՝. ընդ նոսի՞՛ն ի հողեղինացս հաճեցար ընդունիլ փառաբանիչս. և երկրպագուս ամենազօր տէրութեանդդ քո՛յ. ա՞ղաչե՛մք։

Եղեր մա՞՛րդ ճշմարիտ՝ անճառելի ծագումն և ճառագայթ անհասանելի անիմանալի Հո՛ր. և ե՛կի՞՛ր ի վրկո՛ւթիւն մեզ մարդասէ՛ր. ա՛ւա՛չեմք։

Digitized by Google

Եղեր լռե՛ւմն օրինաց և մաղդալիէից. եկի՛ր կամաւ ի վերնատունըն խորհրդո՛յ. լուացի՛ր զոտս աչակերտաց քոց անճառելի խոնարհութեա՛մբ. ա՛ղաչեմք։

Ընկալ տէ՛ր և այժմ զլուացումնս դայս՝ զո՛ր առանդեցեր մեզ ի յօրինակ խոնարհութեա՛ն. բարեխօսութեա՛՛մբ սրբուհւոյ մօր քո՛յ և միշտ կուսին Մարիա՛մու Աստուածածնի՛. ա՛ղաչեմք։

Աղաչանո՛՛ք ե՛րջանիկ և նախընթա՛ց կաթո՛ղիկոսի քոյ Մկրտչին Յովհաննու հդնաւո՛րակա՛՛ն հանդի՛սի՛. հեղմամբ ա՛րեա՛ն սրբո՛յն Սահա՛ննո՛սի նախա՛ռարկաւագին քո՛յ և առաջին վկային. մաղթանո՛՛ք ընտրելոց քոց առաքելոց և աւետեայն մաքրելոց անձա՛նց և մաքո՛՛րոսաց պսակաւո՛՛րելոցըն ի քէ՛՛ն. խը՛՛նդրե՛՛մք։

Ե՛՛ւ ես առա՛՛ւե՛՛լ զյորդո՛՛րսե՛՛մն”։

Զանձի՛՛նը՛՛ս մե՛՛ր”։ Ո՛՛ղո՛՛րմեա՛՛՛

Տէրն որ մարմնացաւ. ընդ մեր մատնեցաւ. և վաճառեցաւ: Նոր խորհուրդ բացաւ. որ ի ծուխկան անկաւ. զենջակ ըսփածաւ: Եւ լուաց կարգաւ. զոտս նոցա կոնքաւ. մեզ օրինակաւ: Վայր աստիճանաւ. զմարդիկ վերբարձաւ. յերկինս ընկալաւ: Որ հպարտացաւ. նոյն կործանեցաւ. ա՛յլ ոչ կանգնեցաւ: Տէր քոյին չնորհաւ. լուա զմեզ բազկաւ. արբո՛յ բա՛ժակաւ: Ահա ազատեա՛ զմեզ ի մեղաց. քաւիչ յանցանաց. ա՛ղաչե՛մք:

Սիրտ իմ սասանի՛. սարսափ զիս ունի՛. վասըն ցուղայի: Որ տէրն ամենի՛. նմա առաջի՛. ի ծուխկըս անկանի: Նա ոչ ամայէ՛. և ոչ զարհուրի՛. սիրօղն արծաթի՛: Նոր սեղան դնի՛. և հաց բաղարջի՛. ւանաւակ գինի՛: Փրկիչն բազմի՛. դասուքն հրջանկի. ի յերեկոյի՛: Չհացն ի տիպ մարմնի՛. օրհնեալ ճաչակի՛. և տայ ամենի՛: Զի հացըն բարի՛. զործոց նըմանի՛. բազմաց կալելի՛: Զգինին արիւնի՛. նոր նըշան ուխտի՛. և տայ ամենի՛: Գինին տիպ կուսի՛. կերպ մարտիրոսի՛. որ ի մահ ճըգնի՛: Տէր իմ արժանի՛. արա զմեզ հացի. քո սուրբ սեղանի՛: Ահա ազատեա՛ զմեզ ի մեղաց. քաւիչ յանցանաց. ա՛ղաչե՛մք:

Տաղ ի Առաքել Վարդապետէ:

Ա՞ստո՛ւածն ա՛մենի՛. Մի՛ածի՛ն Ո՛րդի՛. կա՛մաւ Հո՛ր Հոգւո՛յն, ճչմա՛րտի՛. յերկի՛ր խո՛-

նարհի՞։ Սի՞րո՞վ անքնի՞ն. լոյս անմա՞տչե՛լինի՞, ղե՞նջա՞կ ը՞սխա՛ծեա՛լ, ղի ծա՛ծկե՞՛ր. գմե՞ր կու-թի՞՛ն նախնի՞ն։ Ցե՞՛րն հրե՞ղինա՞ց. հրանի-թի՞ց զո՛րա՛ց. խո՞՛նարհա՞՛լ ի՛ ծո՞՛ւնկս, լըւանա՞՛յ. զո՞տս հո՞՛ղ ղինա՞՛ց։ Նի՞՛լծակա՞՛ն ջրո՞՛վ. տա՞՛ր-բակա՞՛ն նի՛լծո՞՛վ. մե՞՛զ նո՛ր պա՞՛տուիրա՞՛ն, ա-ւա՛նդեա՞՛լ. գմե՞՛ղը՛ս մա՞՛քրե՛լո՞՛վ։ Ա՞՛ստ՛ծ Պե՞՛տրո՛սի՞՛ն. հա՛ւատո՛յ վի՛մի՞՛ն. ե՞՛կ զի՞՛ լը՞՛ւա-ցի՞՛ց, զո՞՛տս քո՞՛. յը՞՛նթա՛յի՞՛ց չա՛րի՞՛ն։ Ծա՞՛-ռայն զա՞՛րհո՛ւրէ՞՛ր. ւա՞՛ յ՛ բա՛ց վա՛խչէ՞՛ր. տե՞՛սկա-լի՞՛ ա՛հի՞՛ւ, հի՛ա՞՛ցմամբ. ա՞՛ռ նա՛ բարբառէ՞՛ր։ Ա՞՛րդ տէ՛րդ ե՞՛րկնա՛յին. ա՞՛րքայդ հա՞՛մայնի՞՛ն. զի՞՛ա՛րդ լո՞՛ւանա՞՛ս, ը՞զդա՛րչա՛պա՞՛յ բա. հո՞՛ղո՛յս տառ՛ընայի՞՛ն։ Ցե՞՛ր ցի՛տուս խո՛սէ՞՛ր. Պե՞՛տրոսի՞՛ ձայնէ՞՛ր. դո՛ւ ա՛յժմ ո՞՛չ գիտե՞՛ս, զայս խորհո՞՛ւրդ. ի՞՛մո՞՛յ թէ՞՛ վասն է՞՛ր։ Ո՞՛վ հի՞՛անալի՞՛. խո՞՛ր-հո՛ւրդ ե՞՛րկի. ո՞՛ր ո՛՛չ տե՞՛սա՛նեն, սերո՛բէ՞՛ք-ն. ի՞՛ ծունկս ա՞՛ նկա՛նի՞՛։ Ի՞՛նչ սեալ մի՞՛աբա՞՛ն. գո՞՛ւնդն սը՞՛ըսազա՞՛ն. սի՛րա՛բա՛ր կա՛մա՛ց, արաբ-չի՞՛ն. յո՛յժ հնազա՞՛նդեցո՞՛ն։ Ր՞՛ա՞՛ւնն ե՞՛րկ-նայի՞՛ն. ը՞՛ա՞՛ւնի՞՛ց սե՛ռի՞՛ն. կա՛ըդաւ լուանա՞՛յը, գաչակե՞՛տսն. ի՞՛ յախտի՞՛ց չա՛րի՞՛ն։ Նո՞՛յն և գՅո՛ւդա՛յի՞՛ն. գի՞՛ ւրո՛յ մա՞՛նը՛չի՞՛ն. զո՞՛տը՛ն լը-

Digitized by Google

ւացեա՞լ, ծածկա՛գէ՛ տ՛ն. ը՞նդ ամե՞նայնի՛ն, ի՞նչ բեա՛լն ի չարէ՞ն. պա՞տրեալն յա՞ր ծածքէ՞ն. ո՞չ պա՛տկա՞ռեցաւ, յա՛հաւո՞յ. սուրբ վարդա՞պետ՞ն: Նո՞յն զ՛գործան ա՞ւարտեա՞լ. տէ՞րն ո՛ր մա՞ր ըղացեա՞լ. սը՞ր բաղան դա՛տո՞ւն, սիրա՛բա՞՛ք. դա՞՛ր ձեա՛լ քարո՛զեա՞լ: Դո՞՛ւք զիս տէ՞ր կո՞չէ՞ք. և բարո՞ւն ձայնէ՞ք. ե՞ս պատուէրքա՞ն, ա՞ւանդե՞՛մ. սի՞րո՞վ լսեցէ՞ք: Հը՞ սկե՛ցէ՞ք սիրա՛վ. և՞ խոնարհ հո՛գւո՛վ. ա՞յն է աչա՛կե՞ր տո՛ղ, իմ բանին. ո՞ր զայս ո՞ւնե՛լո՛վ: Ե՞ւ դարձեա՞լ յա՛յտնեա՞ց. նո՞ր խորհո՛ւրդ կենա՞ց. հա՞ց բա՛ղարջ ա՛ւեա՞լ, և բա՛ժ՛՛կ. դարձեա՞լ ճա՞շակեա՞ց: Ա՞՛սաց տ՛ւրբ գնդի՛ն. զայն առնե՞լ նոցի՛ն. մի՛նչ ի միւսանգա՞մ, գալստեա՛՛ն. ի՞ւր յօրը և վերջի՛ն: Ցը՞՛նծա՛ցո՛ւք հոգւով. զնո՞յն ճաշակե՛լով. վա՞՛ռք հօ՛րն տացո՛ւք. և հոգւո՞յն. Միածնի՞՛ մա՞՛ր բմնո՛վ:

Եւ ի վճարիլն, սկսանիցին զաղօթս զայս ի վերայ Իւղոյն և Ջրոյն ընծեռնուլ:

Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ Աստուած աքանչելագործ՝ հզօր և փառաւորեալ. անհասանելի, անիմանալի. վերացեալ, բարձրացեալ քան զամենայն փառս. որ նստիս ի քրովբէական կառս. և մի՛ ի սրբոյ Երրորդութեանդ դասանիս ի վերնական սրբա-

Digitized by Google

սաց սերովբէիցն. վասնորոյ և զերեքսրբեան փառատրութիւնն Հօր և սուրբ Հոգւոյն՝ հրեղէն բերանօք իւրեանց՝ ոսկալի ձայնիւ՝ սարսափելով առաջի փառաց աթոռոյ Աստուածութեանդ քոյ մատուցանեն քեզ, լի՛ ասելով ամենայն երկիր փառաւք քո։ Դու տէր՝ յաղթեալ ի մարդասիրութենէդ քումմէ՝ ոչ կարացեր անտես առնել զարարածս քո՝ զ ի հողոյ ստեղծեալքս. այլ հաճեցար և ի մերմէ բնութենէ փառաւորիլ, խառնելով զհողեղէնն և ստորև կացեալ բնութիւնս մեր՝ ընդ վերնական հողեղէնն և հրեղէն անխիթական բնութիւնն. եկիր յաչխարհս կամաւ Հօր և Սուրբ Հոգւոյն. առեր զկերպարանս ծառայի ի սուրբ և յանարատ կուսէն Մարիամայ. և ճշմարիտ բանդ Հօր՝ մարմին եղեալ՝ անեղծ և անապական՝ նոր և անճառելի խառնմամբ. և կատարելով զամենայն ատուերական օրէնսն, եղեր լրումն օրինաց և մարգարէից. ճշմարիտ օրէնսդիրդ Աստուած իմ Ցիսուս Քրիստոս։ Եւ ի լրումն ամենայնի՝ եկիր ի վերնատունն խորհրդոյ. կատարեցեր և զայն նա՝ Մովսիսադիր, ատուերական, գառնագէնն, նորոյ վրկագործութեանս խորհուրդ՝ որ նախ յԵգիպտոսն նկարեցաւ. և դու տէր նոյն ինքն քահանայապետ սուրբ՝ կատարիչ խորհրդոյ, և գառն Աստուծոյ՝ որ մշտնջենաւոր բառնաս զմեղս աշխարհի, միանգամ պատարագաւ հատեր զմարմինդ քո սիրով. բաշխելով քոյոց ընտրեալ աշակերտացն. և հրամայեցեր նոցա զկամաւոր

չարչարանս քո՝ որ վառն մեր. և զմահդ պատմել մինչև ի միւսանգամ քո յերկրորդ և ի փառաւոր գալուստն։ Բայց նախ քան զայսոսիկ, անճառելի խոնարհութեամբ ի բաց եդեալ զհանդերձս, զգեցար զենջակ, որ զգեցեալ ես զլոյս որպէս զօթոց. և տընօրինական ներմարդութեամբ՝ խոնարհեալ ի ծունկս աշակերտացն՝ առ ի լուանալ զոտս հողեղէնս. որում կրկնին քեզ ծունր երկնաւորաց և երկրաւորաց և ստորգետեայնոց. և զկատարեալ խոնարհութիւնդ յայտնապէս ուսուցեր նոցա ասելով, թէ օրինակ մի ետու ձեզ. զի որպէս ես ձեզ արարի, և դուք միմեանց առնիջիք։ Եւ արդ տէր բարեբար՝ մնք ծառայքս և խաչն արօտի քո՝ ժողովեալքս ի դաւիթ եկեղեցւոյ քո ըստ Աստուածային օրէնսդրութեանդ. զոր աւանդեցեր մեզ ի ձեռն սուրբ առաքելոց քոց, աղաչելք զքեզ, առաքեա զէակիցդ քո և զփառակից ծնողիդ քո՝ զՀոգիդ Սուրբ՝ ի յարբունական աթոռոյդ, որ եկեալ հանգիցէ ի ժողովարանս մեր. և արբեսցէ զջուրս զայս՝ ի թեւթևութիւն մեղաց մերոց, և յընթացս ամենայն բարեաց ճանապարհաց. զի սովաւ զօրացուցեալ զդալչապարս մեր՝ անխափան ընթացցուք, խաչազդեստեալք ի յաւիտենական ճանապարհս պատուիրանաց քոց. և արժանի լիցուք հասանել ի մասն ժառանգութեան սրբոցն ի լոյս. և գոհանալով փառաւորեսցուք զամենասուրբ երրորդութիւնդ, այժմ և միշտ և յաւի՛՛։

Խաղաղութիւն ամենեցուն
Աստուծոյ երկրպագեսցուք

Դարձեալ երկիրպագանեմք, և աղաչեմք զամենադութ ողորմութիւնդ քո. քաւեա զախտ և զանօրէնութիւն ոգւոց մերոց՝ ի ձեռն ջրոյս այսորիկ, որպէս յաւուրսն Նոյի, զանօրէնութիւն ամենայն երկրի. և որպէս զբորոտութիւնն Նեեմանայ Ասորւոյ՝ ի ձեռն Յորդանանու. և որպէս զզանազան ախտսն՝ ի ձեռն յուզման ջուրցն Սելովմայ. և որպէս զմեղս ամենայն աշխարհի՝ ի ձեռն սուրբ աւազանին վերստին ծննդեանն: Եւ որպէս յայնժամ հաստատեալ զնճմարիտ մարդեղութիւնդ քո՝ անօրինադար խոնարհեցար, և լուացեր զոտս երանելի առաքելոցն քոց, զօրացուցանելով զդարչապարս նոցա՝ յընթացս աւետարանի քոյ ընդ ամենայն տիեզերս. այլ և կոխել զզօրութիւնըս թշնամւոյն՝ աներկիւղ համարձակութեամբ. այսպէս և ի մեզ հրաշագործեա մարդասէր տէր՝ ի ձեռն աներևոյթ գալստեան քո ի ժողովարանս մեր. որպէս զի և մեք զօրացեալք ի չնորհաց քոց, անխափան ընթացցուք ի շաւիղս պատուիրանաց քոց. որով և փրկութեան արժանացուք հասանիլ ընդ ամենայն սուրբս քո. և գոհանալով փառաւորեսցուք զՀայրն և զՈրդի և զՍուրբ Հոգիդ. այժմ և միշտ և յաւի՛ն:

Եւ ապա զԱղօթս ի վերայ Խաղոյն մեկուսի:

Քրիստոս Աստուած մեր՝ որ վասն բազում ողորմութեան քո՝ ընկալար զօծումն իւղոյ ի պոռնիկ կը-

Digitized by Google

նոջէն, և զյիչատակ նորա աւանդեցեր ընդ ամենայն տիեզերս՝ ի ձեռն սուրբ աւետարանի քո քարոզութեան։ Ուստի և զնոյն իւղ օրհնութեան՝ ի տուչութենէ Հոգւոյն Սրբոյ՝ ընկալեալ առաքելոցն սրբոց, աւանդեցին ամենայն հաւատացելոց. որպէս զի քահանայական խորհրդածութեամբ պաշտիցի ի մէջ եկեղեցւոյ քոյ սրբոյ։ Արդ՝ մեք ըստ օրինակի իւղոյն այնորիկ, օրհնեմք զիւղս զայս ի յօծումն ոտից քոյոց հաւատացելոց. և խնդրեմք ի մարդասիրութենէ քումմէ, առաքեա ի մեզ զնոյն Հոգի չնորհաց քոց՝ որ եկեալ բնակեսցի ի մեզ, և բժշկեսցէ զվէրս հոգւոց մերոց։ Որպէս զի միշտ և յամենայն ժամ գոհանալով զամենառատ դթութենէ քումմէ, կատարեսցուք զյիչատակ Աստուածային խոնարհութեան քոյ. և փառաւորեսցուք զգօրութիւն աքանչելի տնօրէնութեանց քոց. ըստ որում փառաւորեալ ես յամենայն արարածոց՝ տէր մեր և վրկիչ Յիսուս Քրիստոս՝ ընդ Հօր և ընդ Սուրբ Հոգւոյն, այժմ և միշտ և յաւի՛՛։

Եւ յաւարտին, Տեառնագրեսցեն խաչիւ և Աւետարանաւ զԻւղն, և զՅուբն ասելով։

Օրհնեսցի և սրբեսցի իւղս և ջուրս՝ այս նչանաւ սուրբ խաչիս՝ և սուրբ Աւետարանիս, և աւուրս չնորհիւ, ծանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

Ամէն. ալէլուիա ալէլուիա ալէլուիա։

(Երէց՝ Էրէնէ։)

Digitized by Google

Փարոզ՝ Սուրբ խաչիւս : Աղօթք՝ Պահպանեա :
(Տես ի Թիւն. 147 :)

Եւ ապա զգեցուսցեն զեպիսկոպոսն կամ վի է պատուաւոր քահանայից . որ առեալ զվենջակ , նստցի ի ծուռն կըս և լուասցէ զոտս ամենեցուն է մեծաց մինչև ցփոքուն նըս , և այլքն պար առեալ յայսկոյս և յայնկոյս՝ երգեսցեն քաղցր ձայնիւ , զվերագոչն երկնից՝ (տես ի Թիւն . 289 :) և զԱյսօր Անձառն՝ (տես ի մեծ Ուրբաթի աւուրն :) Իսկ լուացեալքն հաժըուրեսցեն զԱեւտարանն և զսուրբ խաչն և զջ քահանային : Եւ վինի լուացմանն , օրհնեւ :

Սրբոյ Աւետարանիս ցիսուսի Քրիստոսի՝ որ ըստ ցօհաննու :

Գլ՝ 13 . համ՝ 12 :

Տէրն մեր ցիսուս Քրիստոս :

Եւ յորժամ լուաց զոտս նոցա , էառ զհանդերձան իւր՝ և դարձեալ բազմեցաւ , և ասէ ցնոսա . գիտէք զինչ արարիդ ձեզ : Դուք կոչէք զիս վարդապետ և տէր . և բարւոք ասէք . քանզի եմ իսկ : Իսկ արդ եթէ ես լուացի զոտս ձեր , տէրս և վարդապետս , և դուք պարտիք զմիմեանց զոտս լուանալ : Զի օրինակ մի ետու ձեզ , զի որպէս ես ձեզ արարի , և դուք առնիջիք :

Զէնի ֆարոզ . Խնդրեսցուք . Կեցո Տէր՝ յաղեաւ :
Աղօթք . Թագաւոր խաղաղու . (Տես ի Թիւն . 114 :)

Եւ արձակէն ի խաղաղութիւն :

Digitized by Google

Ա. Ի Ա Գ

Ո Խ Ր Բ Ա Թ

Ի գիշերին հոկտ՚ն է և հպարտ՚ն ամենայն գրե՚լոյ։

Կանոնագլուխ ԴԶ։

Օրհնեա անձն իմ զտէր. (Տես ի Քիւն. 24։)

Հետեւակ Շարական ԴԶ։

Ա՚յսօր ի կատարո՚ւմն Աստուածայի՚ն ընթրեա՚ց նոր ուխտի՚ հըշմարտութեա՚ն քո ի՚ վերնատուն ը՚ն խորհըրդոյ տարա՚ժամեա՚լ ծո՚ւղա՚ն ի հօտէ՚ն վո՚ր քու. ո՚ւստի՚ և՚ դո՚ւ գա՚ռն Աս՚տո՚ւծոյ դիմեալ կամա՚ւ ի մահ խաչին առ ի՚ բա՚ռնա՚լ ըզմե՚ղս ա՚շխա՚րհի. վա՚ն ո՚րո՚ի խնայեա՚ ի մեզ Քրիստո՚ս կա՚մա՚ւո՚ր քո՚ չա՚ըչա՚րա՚նո՚ք. Ա՚յսօր որ ի հրեղէ՚ն զօրաց ե՚րկնի՚ց մի՚չտ վտառաբանեա՚լ երկրըպագի՚ս բանդ, ա՚ղօթէ՚ի՚ր առ Հայր մարմնո՚վ, ընկալեա՚լ ընդ Հո՚ր ը՚վքո՚ վա՚ն իմ զպա՚շտա՚նս. ո՚ւստի՚ կա՚մա՚ւ կա՚ցո՚ւ զե՚րկիւղ ի հրեչտակաց

զօրա՛ճայիր զօրացուցի՛չդ երկնա՞ւո՛րաց և՛ երկրա՛ւո՛րաց. վա՛ան ո՛րո՛ց»։ Ա՛յսօր յառա՛ջ նըշանակեալ հրամանը՛նքո՛ կատարի՛ւը յաչակերտա՛ց դասն. քա՛նզի զհովի՛ւըդ քաջ հա՛րեա՛լ ցըրուե՞ցա՛ւ հո՛տն ը՛ստ մարգա՛րէ՛ին. ո՛ր և՛ կա՛պե՛ցա՛ր ա՛՞նկա՛պե՛լիդ ի յԱննայէ՛ և ի Կայիափայ դա՛տապարտեալ. ի ծառայէ ա՛պտակեցար և նախա՛տանաց թո՛ւք կե՞րպա՛րա՛նը՛դ Հօր ը՛նկա՛լար. վ՛աան ո՛րո՛ց»։ Ա՛յսօր զվէ՛մըն հաւատոյ չա՛րժեա՛լ փորձողի՛ն խաբէո՛ւթեա՛ն մարտ, ա՛ռ ի՛ քէ՛ն թողա՛ցուցեալ ըզմա՛րդկայինս տըկա՞րու՛թի՛ւնս յանդիմա՞նե՛լով, և՛ ա՛ռ յո՛յս դա՛րձի՛ մե՛ղա՛ւո՛րաց. որ դառնապէ՛ս արտա՛սուելո՛վն ընկալա՛ւ ի քէն երիւ՛ք հարցմամբ սիրոյն զերի՛ց ուրա՞ցո՛ւթեա՛նդ ը՛զբըժը՛շկո՛ւթիւն. ընդ նը՛մի՞ն բըժըշկեա՛ ըզմեզ Քրիստո՞ս և չնորհեա՛ մեզ արտա՛սո՛՛ւա ա՛պա՛շխա՛րո՛ւթեա՛ն։

Ա՛յսօր զոր յերկնայի՛ն լուսեղինացն ա՛հիւ պատուեա՞լ բա՛նդ Ա՛ստո՛ւած, նը՛սեմացեա՞լ դա՛ք ե՞քրա՛յե՛ցուցն զի՞մանա՛լի՛ լո՛յսդ ի գի՛շերին չահիւ՛ք և ա՛սաերօք ե՛կեալ ը՞մբը՛ռնե՛լ զա՛նըմբը՛ռնե՛լիդ. վաան ո՛րո՛ց երկը՛րպագեմք անճա՛ռելի՛՛ քո՞ խո՞նա՛րո՛ւթեա՛նդ։ Այսօր զոր սերովբէ՛քըն ծածկէին ըզդէմս յա՛հէ փառա՛ց Ա՛ստուա՛ծո՛ւթեա-

Digitized by Google

ներդ. ի՛սկ կորստեա՞ն ո՞րդի՛ն ցո՞ւդաս ի հա՛մբո՛յր մերձեալ նե՛նգո՞ւթեա՞մբ նըշանակ և՞ առի՞ք մա՛հու ա՞նմա՞հիդ. վաղն ո՛րո՞ւ՛ր՝՝։ Այսօր ընդ գևբազո՛յն տնօրէնութիւնը՛դ քո Որդի՞ Ա՛ստո՛ւծոյ հո՛յլք անմարմնո՞ցը՞ն հրա՞բո՛ւն սեր՛ուիցն պա՞կո՛ւցեա՛լ զա՞րմա՛նա՞յին, տեսանելո՛վ զանտեսա՛նելիդ մատնեա՛լ կամա՞ւ ի՛ ձե՞ռըս մեղա՛ւո՞րաց. վա՛ղն ո՛րո՞ւ՛ր՝՝։ Այսօր բարեկա՛մք և մերձա՛ւորըք քո հե՛ռի եղե՞ն ի՞ քէ՛ն Քրի՞ստոս. օ՞տարացա՞ն և ե՞ղբա՛յրը՛ք քո, և՞ ցուլըք գէ՛ղք պա՛շա՛րե՛ցին ողք ի գըպրա՛ց և ի փարիսե՛ցւոց, և չուրջ եղե՛ւն չունըք բազումք զինուո՛ւղք Պիղա՞տո՛սի և՛ Հերո՛վդէ՞ի. վա՛ղն ո՛րո՞ւ՛ր՝՝.

Ձկնի՝ քարոզ. Եւ ևս խաղաղութեան՝՝։ Օրհնութիւն և փառք Հօր՝՝։

Եւ ապա լուցցեն երկոտասան մոմեղէնս ի վերայ Սեղանոյն յայսկոյս և յայնկոյս. և մոմեղէն մի մեծ ի մէջի։ Եւ ասացեն երկու քահանայք՝ գ. վոխ սաղմոս։

Ա՛ւաջինն վոխ. Սաղմոս ը։

Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք. և ժողովուրդք խորհեցան ի սնոտիս։

Յանդիման եղեն թագաւորք երկրի, և իշխանք ժողովեցան ի միասին՝ վասն տեառն և վասն օծելոյ նորա։

Digitized by Google

Խղեսցո՛ւք զկապանս նոցա, և ընկեսցուք ի մէնջ զլուծ նոցա։

Բնակեալն յերկինս ծիծաղեսցի զնոքաք, և տէր արհամարհեսցէ զնոսա։

Ցայնժամ խօսեսցի ընդ նոսա բարկութեամբ իւրով, և սլտմտութեամբ իւրով խռովեցուսցէ զնոսա։

Ես կացի թագաւոր ի նմանէ, ի վերայ լերին Սիօնի սրբոյ նորա՝ ի պատմել զհրամանս տեառն։

Տէր ասաց ցիս՝ որդի իմ ես դու, և ես այսօր ծընայ զքեզ։

Խնդրեա՛ յինէն և տաց քեզ զհեթանոսս ի ժառանգութիւն, և իշխանութիւն քեզ ընդ ամենայն ծագս երկրի։

Հովուեսցես զնոսա գաւազանաւ երկաթեա. և որպէս զանօթ բրտի փշրեսցես զնոսա։

Արդ թագաւորք՝ զայս ի միտ առէք. և խրատեցարո՛ւք ամենեքեան, որք դատէք զերկիր։

Ծառայեցէ՛ք տեառն երկիւղիւ, և ցնծացէ՛ք առաջի նորա դողութեամբ։

Ընկալարո՛ւք զխրատ նորա՝ զի մի բարկասցի տէր. և կորնչիցիք ի ճանապարհացն արդարութեան։

Ի ժամանակի՝ յորժամ բորբոքեսցի բարկութիւն նորա։

Երանի ամենեցուն՝ որք յուսացեալ են ի տէր։

Սաղմոս գ։

Տէր զի բազում եղեն նեղիչք իմ, և բազումք յարեան ի վերայ իմ։

Digitized by Google

Բազումք ասէին զանձնէ իմմէ, թէ չի՛ք փրկութիւն սորա առ Աստուած իւր։

Այլ դու տէր՝ օգնական իմ ես, փառք իմ և բարձրացուցիչ գլխոյ իմոյ։

Ձայնիւ իմով ես առ տէր կարդացի, և լուաւ ինձ ի լեռնէ սրբոյ իւրմէ։

Ես ննջեցի և ի քուն եղէ, զարթեայ և տէր ընդունելի իմ է։

Ո՛չ երկեայց ես ի բիւրաւոր զօրաց նոցա. ոյք չուրջանակի պատեալ պաշարեալ պահէին զիս։

Արի՛ տէր՝ և փրկեա զիս Աստուած իմ. զի դու հարեր զամենեսեան, ոյք էին ընդ իս թշնամութեամբ ի տարապարտուց. և զատամունս մեղաւորաց փշրեացես։

Տեառնդ է փրկութիւն. ի վերայ ժողովրդեան քոյ օրհնութիւն քո։

Սաղմոս դ։

Ի կարդալ իմում լուար ինձ Աստուած ըստ արդարութեան, ի նեղութենէ ինձ անդորր արարեր. ողորմեա ինձ և լո՛ւր աղօթից իմոց։

Որդի՛ք մարդկան՝ մինչև յո՞րդ էք խստասիրտք. ընդէ՞ր սիրէք զնանրութիւն, և խնդրէք զստութիւն։

Ծաներ՛ուք զի սքանչելիս արար տէր սրբոյ իւրում. և տէր լուիցէ ինձ ի կարդալ իմում առ նա։

Բարկանայք՝ և մի՛ մեղանչէք. զոր ինչ ասէք ի սիրտս ձեր, յանկողինս ձեր զղջացարո՛ւք։

Մատուցէ՛ք պատարագս արդարութեան, և յուսա-

Digitized by Google

ցարմունք ի տէր։

Բազումք ասէին՝ թէ ո՛ ցուցցէ մեզ զբարութիւն առաւն. նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց, և ետուր ուրախութիւն սրտից մերոց։

Ի պտղոյ ցորենոյ՝ գինոյ՝ և ձիթոյ իւրեանց լցուցեր զնոսա։

Խաղաղութեամբ յայս և ի սոյն ննջեացուք և զարթիցուք. զի դու տէր միայն առանձին յուսով քո բնակեցուցեր զմեզ։

Եւ այլքն եղանակեսցեն ձայնիւ։

Ի՛նչ անք ժո՛ղո՛վեցան ի՛ միա՞սի՛ն. վա՛ն տեառըն և վա՛ն օ՛ծե՛լոյ նորա՛։

(Երկոյս անգամ կրկնեսցեն. քայլ պչեպինն քարոյզ. ի վեր պեղինն եաս։)

Ջկնի՝ երգ Տեառն Ներսիսի՝ ասացեալ յաղագս մեծի ուրբաթու։

Ա՞յսօր անճա՛ռ լուսո՛յն ծա՛գո՛ւմն ի վերկո՛ւթեա՛ն մեր կա՛տարո՛ւմն. խո՛նարհի ի՝ վե՛րնատո՛ւննն ի՝ ստուե՛րակա՛ն տօ՛նից լըրո՛ւմն. նա՛խ քան զընթ-ըի՞սըն խորհո՛ւրդո՛յ սփածաւ զե՛նվա՛կ արկօղն լուսո՛յ. և՛ ջուր առեալ ծա՛ռա՛յաբա՛ր զո՛տը՛ս լուսնայր զա՛չա՛կերտա՛ցն։

Բա՞նին Հ՞ր վառա՛ց լո՛ւսո՛յ Պե՛տրո՛ս մերձիլ յո՛տս ո՛չ նեղէ՛ր. այնըմ ձեռաց ո՛րո՛յ են գո՛րծք ե՛րկնի՛ց երկինք և ե՛րկրաւո՛ւք. ո՛րով կուրա՛ց աչք՛ք

քա՛ցա՛ն խուլք և համո՛ղք արձա՛կեցա՛ն. որ վե՛րածնաց զի՛նքն ի՛ ծովին սա՛տեա՛ց ալեացն և լո՛ռեցի՛ն։

Գը՞լխոյն ընտրեա՛լ հօտին փո՛քո՛ւ սա՛տէ՛ր գխո՛րհո՛ւրդն ոչ գիտելո՛յ. որով դառնայր և՛ հնա՛զանդէ՛ր զո՛տս և՛ զգլուխս մա՛քրել մաղթէ՛ր. գը՛լխոյս ասէ՞ չէ ի՛նչ ալի՛տո՛յ լուացումըն ջրո՛յ զի լուա՛ցեալ է՛. ոտիցըդ ալէտք են մա՛քրուլթեա՛ն յո՛ղի՛լ ի գլուխըս սը՛րբուլթեա՛մբ։

Ո՞ա՛ուց իւրո՛ց աչա՛կե՛լտա՛ց զոր նա՛խ բա՛նիւ վարդապետեա՛ց. այսօր գործո՛վ ըզծա՛յրագո՛յնն ե՛ցո՛յց յինքեան դիսո՛նարհուլթի՛ւն. սպա՛սաւորեա՛լ հողի՛ղի՛նա՛ց այն ո՛ր ա՛նտեսն է հրեղինա՛ց. տարեալ պաչաօն ի՛ւր ծա՛ռա՛յիցն ա՛յն ո՛ր պաչտին ի սրո՛վքէ՛ց։

Ե՞թէ տէ՛րս ասէ՝ է՛ի՛ց և վարդա՛պե՛տըս բոլո՛ր՝ զաշակերտացդ և՝ զծա՛ռայի՛ց զո՛տը՛ս լուացի՛ հնոյ աղտի՛ց. մի՛մնանց և դո՛ւք համա՛ընո՛ւլթեա՛մբ ցուցէ՛ք ը՛զնո՛յն խոնարհուլթի՛ւն. բարձրացելոյն ի՛ կո՛ւծանո՛ւմն և՛ ա՛նկելոյ բնուլթեա՛նդ կանգնո՛ւմն։

Ջո՞ր մաքրեցե՛ր յաւա՛զա՛նին մա՛քուր ձե՛ռօք զոտըս նոցին. և ուսուցեր խո՛նա՛րհուլթեա՛մբ յա՛գթո՛ղ լինել՝ չա՛ր հրպարտին. և՛ գիմ լուա՞ զտիղմըն մե՛ղաց աղա՛չանո՛ք սըրբոյ դընդին. և ըզգընացս ո՛ւղղեա՛ զոտին խոնարհո՛ւլթեամբ ե՛լի՛ւք յերկի՛նս։

Ապա՛ յաւապնջեցու դասէն. Ո՛րթիւ։

Սրբոյ աւետարանիս՝ Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Գլ՝ 13. հմր՝ 16։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Ամէն ամէն ասեմ ձեզ. ոչ է ծառայ մեծ քան զտէր իւր. և ոչ առաքեալ մեծ քան զայն՝ որ առաքեացն զնա։ Եթէ զայս դիտէք, երանելի ևս էք՝ եթէ առնիցէք զայս։ Ո՛չ վասն ձեր ամենեցուն ասեմ. զի ես գիտեմ, զորս ընտրեցի. այլ զի լցցի դիրն, թէ որ ուտէր ընդիս հաց՝ արար ինձ խաբէութիւն։ Յայսմհետէ իսկ ասեմ ձեզ մինչչև եղեալ, զի յորժամ լինիցի՝ հաւատասջիք՝ թէ ես եմ։ Ամէն ամէն ասեմ ձեզ. որ ընդունի, զոր ոք ես առաքեցից՝ զիս ընդունի. և որ զիս ընդունի, ընդունի զայն, որ առաքեացն զիս։ Զայս իբրև ասաց Յիսուս, խռովեցաւ յոգի իւր՝ վկայեաց և ասէ. ամէն ամէն ասեմ ձեզ. զի մի ոմն ի ձէնջ մատնելոց է զիս։ Հայէին ընդ միմեանս աշակերտքն տարակուսեալք, թէ զումմէ ասիցէ։ Եւ էր մի ոմն յաշակերտացն բազմեալ առ Յիսուսիւ՝ զոր սիրէրն Յիսուս։ Ակնարկէ նմա Սիմոն Պետրոս՝ հարցանել՝ ով իցէ, վասնորոյ ասէն։ Եւ նա անկեալ զլանջսն Յիսուսի, ասէ ցնա. տէր, ով է. պատասխանի ետ Յիսուս և ասէ։ Այն է՝ որում ես թացից զպատառն, և տացց. և թացեալ զպատառն տայ Յուդայի Խկարիովտացւոյ։ Եւ յետ պատառոյն՝ ապա եմուտ ի նա

Digitized by Google

աստանայ. և ասէ ցնա Յիսուս, արդ զոր ինչ առնելոց ես՝ արա վազվազակի: Եւ զայս ոչինչ իմացաւ ի բազմականաց անտի, թէ առ ինչ ասաց ցնա: Զի ոմանք համարէին, թէ՝ զի զարկղն ունէր Յուդա, ասաց նմա Յիսուս, գնեա զինչ՝ որ պիտոյ է մեզ ի տօնիս. և կամ թէ աղքատաց ինչ տացէ: Իսկ նորա առեալ զպատառն՝ ել արտաքս վազվազակի, և էր գիշեր: Եւ իբրև ել, ասէ Յիսուս. այժմ փառաւորեցաւ որդի մարդոյ. և Աստուած փառաւորեցաւ ի նմա: Զի եթէ Աստուած փառաւորեցաւ ի նմա, և Աստուած փառաւորեսցէ զնա յանձն իւր. և վազվազակի փառաւորեսցէ զնա: Որդեակք իմ՝ փոքր ինչ ժամանակ ընդ ձեզ եմ. խնդրիցէք զիս. և որպէս ասացի ցՀրէայսն, թէ ուր եան երթամ, դուք ոչ կարէք գալ. և արդ ձեզ ասեմ: Պատուիրան նոր տամ ձեզ. զի սիրիցէք զմիմեանս, որպէս սիրեցի ես զձեզ. զի և դուք սիրեսջիք զմիմեանս: Ցայսմ գիտասցեն ամենեքեան, եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս: Ասէ ցնա Սիմօն Պետրոս. տէր՝ յո՞վ երթաս. պատասխանի ետ Յիսուս. ուր եսն երթամ, դու ոչ կարես այժմ գալ զկնի իմ, բայց ապա եկեսցես զկնի իմ: Ասէ ցնա Պետրոս. տէր, ընդէ՞ր ոչ կարիցեմ գալ այժմ զկնի քո. արդէն զանձն իմ իսկ եդից ի վերայ քո: Պատասխանի ետ Յիսուս. զանձն քո դիցես ի վերայ իմ. ամէն ամէն ասեմ քեզ. չև իցէ հաւու խօսեալ, մինչ դու երիցս

ուրասցիս զիս: Մի՛ խռովեսցին սիրտք ձեր. այլ հաւատացէ՛ք յԱստուած, և յիս հաւատացէ՛ք. ի տան Հօր իմոյ օթեվանք բազում են. եթէ ոչ՝ ասացեալ էր իմ ձեզ. թէ երթամ, և պատրաստեմ ձեզ տեղի: Եւ եթէ երթամ, և պատրաստեմ ձեզ տեղի, դարձեալ գամ, և առնում զձեզ առիս. զի ուր եմն իցեմ, և դուք ընդիս իցէք: Եւ ուր երթամն գիտիցէք. և զճանապարհն գիտիցէք: Ասէ Թովմաս, տէ՛ր՝ ոչ գիտեմք, յո՞վ երթաս. և զիա՞րդ զճանապարհն կարասցուք գիտել: Ասէ ցնա Յիսուս. ես եմ ճանապարհ, և ճշմարտութիւն, և կեանք. ոչ՛ք գայ առ Հայր՝ եթէ ոչ ինէն: Եթէ զիս գիտէիք՝ ապա և զՀայրն իմ գիտէիք. և այսուհետև գիտասջիք զնա: Ասէ ցնա Փիլիպպոս. տէ՛ր, ցո՛յց մեզ զՀայր՝ և չատ է մեզ: Ասէ ցնա Յիսուս. այսչափ ժամանակս ընդ ձեզ եմ, և ո՞չ ծանեար զիս Փիլիպպէ. որ տեսն զիս, տեսս զՀայրն. և դու զիա՞րդ ասես՝ եթէ ցո՛յց մեզ զՀայր: Ո՞չ հաւատաս, եթէ ես ի Հայր, և Հայր յիս է. զբանս, զորս ես խօսիմ ընդ ձեզ, ո՛չ եթէ յանձնէ ինչ խօսիմ. այլ Հայրն, որ յիս բնակեալ է՝ նա գործէ զգործսն: Հաւատա՛յք ինձ, եթէ ես ի Հայր, և Հայր յիս է: Ապա թէ ո՛չ՝ գոնէ վասն գործոցն հաւատացէ՛ք ինձ. ամէն ամէն ասեմ ձեզ. թէ որ հաւատայն յիս, զգործսն՝ զորս ես գործեմ, և նա գործեսցէ. և մեծամեծս ևս քան զնոսին գործեսցէ. զի ես առ Հայր երթամ: Եւ զորինչ

խնդրիցէ ք յանուն իմ, արարից զայն. զի փառաւորեսցի Հայր՝ յՈրդի։ Եթէ սիրէ ք զիս՝ զպատուիրանս իմ պահեսջիք։ Եւ ես աղաչեցից զՀայր. և այլ մխիթարիչ տացէ ձեզ. զի ընդ ձեզ բնակեսցի ի յաւիտեան։ Զհոգին ճշմարտութեան. զոր աշխարհս ոչ կարէ ընդունիլ. զի ոչ տեսանէ զնա. և ոչ ճանաչէ զնա. բայց դուք ճանաչէ ք զնա. զի առ ձեզ բնակեսցի՝ և ընդ ձեզ եղիցի։ Ո՛չ թողից զձեզ որբս. գամ առ ձեզ։ Փոքր միւս ևս, և աշխարհս ոչ ևս տեսանէ զիս. բայց դուք տեսանիցէ ք զիս. զի ես կենդանի եմ. և դուք կենդանի լինելոց է ք։ Յայնմ աւուր գիտասջիք դուք՝ զի ես ի Հօր իմում, և դուք յիս, և ես ի ձեզ։ Որ՞ունի զպատուիրանս իմ, և պահէ զնոսա, նա է՝ որ սիրէ զիս. և որ սիրէն զիս, սիրեսցի ի Հօրէ իմմէ. և ես սիրեցից զնա. և երևեցուցից նմա զիս։ Ասէ ցնա Յուդա ոչ Իսկարիովտացին. տէր, զի՛ եղև՝ զի մեզ յայտնելոց ես զքեզ՝ և ոչ աշխարհի։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա. Եթէ ոք սիրէ զիս՝ զբանն իմ պահեսցէ. և Հայր իմ սիրեսցէ զնա. և առ նա եկեսցուք՝ և օթեւանս առ նմա արասցուք։ Եւ որ ոչն սիրէ զիս՝ զբանն իմ ոչ պահէ. և բանն իմ, զոր լսէ՝ ոչ է իմ, այլ Հօրըն, որ առաքեացն զիս։ Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ մինչ առ ձեզս եմ։ Իսկ մխիթարիչն Հոգին Սուրբ՝ զոր առաքեսցէ Հայր յանուն իմ, նա ուսուսցէ ձեզ զամենայն. և յիշեցուսցէ զամենայն, զոր ինչ ասացի

ձեզ։ Ձխաղաղութիւն թողում ձեզ. զխաղաղութիւն
զիմ տամ ձեզ. ոչ որպէս աշխարհս տայ՝ տամ ես
ձեզ. մի՛ խռովեսցին սիրտք ձեր. և մի՛ զանգիտես-
ցեն։ Լուայք, զի ասացի ես ձեզ՝ թէ երթամ, և
գամ առ ձեզ. եթէ սիրէիք զիս՝ ապա ուրախ լեալ
էր ձեր՝ թէ ես առ Հայր երթամ. զի Հայր իմ մեծ
է քան զիս։ Եւ այժմ ասացի ձեզ մինչչև եղեալ.
զի յորժամ լինիցի՝ հաւատասջիք։ Ո՛չ ես այլ չատ
խօսեցայց ընդ ձեզ. գայ իշխան աշխարհիս այսորիկ՝
և յիս ինչ ոչ գտանէ։ Այլ զի ծանիցէ աշխարհ, ե-
թէ սիրեմ զՀայր. և որպէս պատուիրեաց ինձ Հայր՝
այնպէս առնեմ. օն արի՛ք, գընասցու՛ք աստի։ Ես
եմ որթն ճշմարիտ. և Հայր իմ մշակ է. ամենայն
ուռ՝ որ յիս է, և ոչ բերէ զպտուղ՝ կտրէ զնա. և
ամենայն որ բերէ զպտուղ, սրբէ զնա, զի առաւել
նա պտղաբեր լինի։ Դուք արդէն իսկ սուրբ էք
վասն բանին՝ զոր խօսեցայ ընդ ձեզ։ Կացէ՛ք յիս՝
և ես ի ձեզ. որպէս ուռն ոչ կարէ զպտուղ բերել
յանձնէ իւրմէ, եթէ ոչ իցէ հաստատեալ յորթն.
նոյնպէս և դուք՝ եթէ ոչ յիս հաստատեալ իցէք։
Ես եմ որթ՝ և դուք ուռ. որ հաստատեալ է յիս՝ և
ես ի նա, նա բերէ զպտուղ յոյժ. զի առանց իմ ո-
չինչ կարէք առնել։ Եթէ ոք ոչ է հաստատեալ
յիս, եղ նա արտաքս իբրև զուռն՝ և ցամաքեցաւ. և
ժողովեն զնա՝ և ի հուր արկանեն՝ և այրի։ Եթէ
կայցէք յիս, և բանք իմ ի ձեզ կայցեն՝ զոր ինչ կա-

Digitized by Google

միջիք, խնդրեսջիք՝ և լինիցի ձեզ։ Ցայսմիկ փառաւորեցաւ Հայր իմ, զի պտուղ յոյժ բերիցէք. և եղիջիք իմ աշակերտք։ Որպէս սիրեաց զիս Հայր, և ես սիրեցի զձեզ. հաստատեսջիք կացէք ի սէր իմ։ Եթէ պահիցէք զպատուիրանս իմ, կացջիք ի սէր իմ. որպէս և ես զպատուիրանս հօր իմոյ պահեցի, և կամ ի սէր նորա։ Զայս խօսեցայ ընդ ձեզ. զի ուրախութիւնն իմ ի ձեզ լիցէ. և ձեր ուրախութիւնն լցեալ եղիցի։ Այս է պատուէր իմ, զի սիրեսջիք զմիմեանս, որպէս և ես զձեզ սիրեցի։ Մեծ ես քան զայս սէր ոչ՛ք ունի եթէ զանձն իւր դիցէ ի վերայ բարեկամաց իւրոց։ Դուք բարեկամք էք իմ. եթէ առնիցէք՝ զոր ես պատուիրեմ ձեզ։ Ո՛չ ես կոչեմ զձեզ ծառայս, զի ծառայն ո՛չ գիտէ զինչ գործէ տէրըն նորա. այլ զձեզ կոչեցի բարեկամս, զի զամենայն, զոր լուայ ի Հօրէ իմմէ՝ ծանուցի ձեզ։ Ո՛չ եթէ դուք ընտրեցիք զիս. այլ ես ընտրեցի զձեզ, և եդի զձեզ. զի դուք երթայցէք՝ և պտղաբերք լինիցիք. և պտուղն ձեր կայցէ. և զորինչ խնդրիցէք ի Հօրէ իմմէ յանուն իմ, տացէ ձեզ։ Զայս պատուիրեմ, զի սիրեսջիք զմիմեանս։ Եթէ աշխարհ ըզձեզ ատեայ. գիտասջիք զի նախ զիս ատեաց։ Եթէ յաշխարհէ աստի էիք՝ աշխարհ զիւրն սիրէր արդեաք. բայց զի չէք յաշխարհէ, այլ ես ընտրեցի ըզձեզ յաշխարհէ, վասն այնորիկ ատեայ զձեզ աշխարհ։ Ծիշեցէք զբանն՝ զոր ասացի ձեզ. եթէ ո՛չ է ծառայ

Digitized by Google

մեծ քան զտէր իւր. եթէ զիս հալածեցին. ապա և զձեզ հալածեսցեն. եթէ զբանն իմ պահեցին, ապա և զձերն պահեսցեն: Այլ զնոյնս արասցեն ընդ ձեզ վասն անուան իմոյ. զի ոչ գիտեն զայն՝ որ առաքեացն զիս: Իմ եթէ չէր եկեալ և խօսեցեալ ընդ նոսա, մեղ ինչ ոչ գոյր նոցա. բայց արդ չիք պատճառ վասն մեղացց իւրեանց: Որ զիսատեայ՝ և զՀայրն իմ ատեայ: Եթէ զգործսն չէր գործեալ ի նոսա՝ զոր ոչ այլոք գործեաց, մեղ ինչ ոչ գոյր նոցա. բայց արդ տեսին, և ատեցին. և զիս և զՀայր իմ: Այլ զի լցցի բանն, որ յօրէնս նոցա գրեալ է. թէ ատեցին զիս առանապատուց: Բայց յորժամ եկեսցէ Միխիթարիչն՝ զոր ես առաքեցից ձեզ ի Հօրէ՝ զՀոգին ճշմարտութեան որ ի Հօրէ ելանէ, նա վկայեսցէ վասն իմ: Եւ դուք վկայէք՝ զի ի սկզբանէ ընդդիս էք: Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի մի գայթակղեսջիք: Ի ժողովրդոց իւրեանց հանիցեն զձեզ. այլ եկեսցէ ժամանակ՝ զի ամենայն որ սպանանիցէ զձեզ՝ համարիցի պաշտօն մատուցանել Աստուծոյ: Եւ զայն արասցեն ընդ ձեզ. քանզի ոչ ծանեան զՀայր՝ և ոչ զիս: Այլ և զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի յորժամ եկեսցէ ժամանակ՝ յիշեցէք թէ ես ասացի ձեզ: Զայս ի սկզբանէ ոչ ասացի ձեզ. քանզի ընդ ձեզ էի. բայց արդ երթամ ես առ առաքիչն իմ. և ոչ ոք ի ձէնջ հարցանիցէ ցիս. թէ յո՞վ երթաս: Այլ զի զայս խօսեցայ ընդ ձեզ. տրտմութիւն եղիցէ սիր-

Digitized by Google

տըս ձեր : Ամէն ես զճշմարիտն ասեմ ձեզ . լաւ է ձեզ եթէ ես երթամ . զի եթէ ես ոչ երթայց՝ մխիթարիչըն ոչ եկեսցէ առ ձեզ . ապա եթէ երթամ , առաքեցից զնա առ ձեզ : Եւ նա եկեալ յանդիմանեսցէ զաշխարհ՝ վասն մեղաց՝ և վասն արդարութեան՝ և վասն դատաստանի : Վասն մեղաց՝ զի ոչ հաւատան յիս : Վասն արդարութեան՝ զի առ Հայր իմ երթամ . և ոչ ևս տեսանէք զիս : Վասն դատաստանի՝ զի իշխան աշխարհիս այսորիկ դատապարտեալ է : Եւս բազում ինչ ունիմ ասել ձեզ՝ այլ ոչ կարէք հանդարտիլ այժմիկ : Ցորժամ եկեսցէ նա Հոգին ճշմարտութեան՝ առաջնորդեսցէ ձեզ ամենայն ճշմարտութեամբ. զի ոչ եթէ յանձնէ ինչ խօսիցի . այլ զոր լսիցէ՝ խօսիցի . և զգալոցն պատմեսցէ ձեզ : Նա զիս փառաւորեսցէ , զի յիմմէ առնուցու և պատմեսցէ ձեզ : Ամենայն ինչ զոր ունի Հայր՝ իմ է . վասն այնորիկ ասացի ձեզ . թէ յիմմէ առնուցու և պատմեսցէ ձեզ : Փոքր մի , և ոչ ևս տեսանէք զիս , և ապա սակաւիկ մի , և տեսանիցէք զիս . և զի ես երթամ առ Հայր : Ասէին ոմանք յաշակերտաց անտի ցմիմեանս . զինչ է այս՝ զոր ասէ ցմեզ . թէ փոքր մի , և ոչ տեսանէք զիս . և դարձեալ սակաւիկ մի , և տեսանիցէք զիս . և թէ ես առ Հայր երթամ : Եւ ասէին , զինչ է այն փոքր միւս ևս . չգիտեմք զինչ խօսի : Գիտաց Յիսուս եթէ կամէին ցնա հարցանել . և ասէ ցնոսա . վասն այդորիկ խնդրէք ընդ միմեանս՝ զի ասացի թէ փոքր մի , և ոչ տեսանէք

Digitized by Google

զիս, և դարձեալ սակաւիկ միւս ևս, և տեսանիցէք զիս։ Ամէն ամէն ասեմ ձեզ. զի լացջիք, և ողբասջիք դուք՝ և աշխարհ խնդասցէ. դուք տրտմեսջիք՝ այլ տրտմութիւնն ձեր յուրախութիւն եղիցի։ Կին յորժամ ծնանիցի՝ տրտմութիւն է նմա, զի հասեալ է ժամ նորա. այլ յորժամ ծնցի զմանուկն, ոչ ևս յիշէ զնեղութիւնն վասն խնդութեանն. զի ծնաւ մարդ յաշխարհ։ Եւ դուք այժմ տրտմութիւն ունիք. այլ դարձեալ տեսից զձեզ՝ և ուրախ լիցին սիրտք ձեր, և զուրախութիւնն ձեր՝ ոչ ոք հանիցէ ի ձէնջ։ Եւ յայնմ աւուր զիս ինչ ոչ հարցանիցէք. ամէն ամէն ասեմ ձեզ՝ զի զոր ինչ խնդրիցէք ի Հօրէ իմմէ յանուն իմ, տացէ ձեզ։ Մինչև ցայժմ ոչինչ խնդրեցիք յանուն իմ. խնդրեցէ՛ք, և առնուցուք. զի ուրախութիւնն ձեր լցեալ իցէ։ Զայս առակօք խօսեցայ ընդ ձեզ. եկեսցէ ժամանակ՝ յորժամ ոչ ևս առակօք խօսեցայց ընդ ձեզ. այլ յայտնապէս զՀօրէ պատմեցից ձեզ։ Ցայնմ աւուր խընդրեսջիք յանուն իմ. և ոչ ասեմ ձեզ՝ եթէ ես աղաչեցից զՀայրն վասն ձեր։ Զի ինքն իսկ Հայր սիրէ զձեզ՝ զի դուք զիս սիրեցիք. և հաւատացիք, թէ ես յԱստուծոյ ելի։ Ելի ի Հօրէ՝ և եկի յաշխարհ. դարձեալ թողում զաշխարհ, և երթամ առ Հայր։ Ասեն ցնա աշակերտքն՝ ահա արդ յայտնութեամբ խօսիս, և առակ և ոչ մի ինչ ասես։ Այժմ գիտեմք՝ եթէ գիտես զամենայն. և ոչինչ պիտոյ է եթէ ոք հարցանիցէ զքեզ. յայսմիկ հաւատամք՝ եթէ յԱստու-

Digitized by Google

ծոյ ելեր : Պատասխանի ետ նոցա Յիսուս և ասէ . ա՛յժմ հաւատա՛ք : Ահա եկեսցէ ժամ , և եկեալ իսկ է . զի ցրուեսջիք իւրաքանչիւր տեղիս . և զիս միայն թողուցուք . և չեմ միայն , զի Հայր ընդիս է : Զայս խօսեցայ ընդ ձեզ . զի ընդիս զխաղաղութիւն ունիցիք . յաշխարհի աստ վնեղութիւն ունիցիք . այլ քաջալերացարո՛ւք . զի ես յաղթեցի աշխարհի : Զայս իբրև խօսեցաւ Յիսուս , համբարձ զաչս իւր յերկինս և ասէ . Հայր՝ հասեալ է ժամ , փառաւորեա զորդի քո . զի և Որդի քո փառաւորեսցէ զքեզ : Որպէս ետուր նմա իշխանութիւն ամենայն մարմնոյ . զի ամենայնի , զոր ետուր նմա , տացէ զկեանն յաւիտենական : Այս են յաւիտենական կեանք . զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած . և զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս : Ես զքեզ փառաւորեցի յերկրի . զգործն կատարեցի , զորս ետուր ցիս՝ զի արարից : Եւ այժմ փառաւորեա զիս Հայր , առ ի քէն փառօքն՝ զոր ունէի յառաջ քան զլինիլ աշխարհի առ ի քէն : Յայտնեցի զանուն քո մարդկան , զորս ետուր ինձ յաշխարհէ . քո էին , և ինձ ետուր զնոսա . և զբանն քո պահեցին : Արդ գիտացին , եթէ զամենայն ինչ՝ զոր ետուր ինձ , առ ի քէն են : Զի զբանն՝ զոր ետուր ինձ՝ ետու նոցա . և նոքա ընկալան , և ծանեան ճշմարտութեամբ՝ թէ առ ի քէն ելի . և հաւատացին եթէ դու առաքեցեր զիս : Արդ՝ ես վասն նոցա աղաչեմ , և ոչ վասն աշխարհի աղաչեմ . այլ վասն նոցա՝ զորս ետուրն ինձ՝ զի քո են ;

Digitized by Google

Եւ որ ինչ իմ է՝ ամենայն քո է. և որ ինչ քո է՝ այն իմ է. և փառաւորեալ եմ ի նոսա: Եւ ես ոչ ևս եմ յաշխարհի՝ և նոքա յաշխարհի են. և ես առ քեզ գամ. Հայր սուրբ, պահեա զնոսա յանուն քո, որով ետուր ինձ. զի եղիցին մի, որպէս և մեք մի ևմք: Մինչ էի յաշխարհի ընդ նոսա, ես պահէի զնոսա յանուն քո՝ որով ետուր ինձ՝ և պահեցի. և ոչ ոք ի նոցանէ կորեաւ՝ բայց որդին կորստեան. զի գրէն լցցի: Բայց արդ առ քեզ գամ. և զայս խօսիմ յաշխարհի. զի ունիցին զուրախութիւն իմ լիով յանձինս իւրեանց: Ես ետու նոցա զբանն քո. և աշխարհ ատեաց զնոսա. զի չեն յաշխարհէ, որպէս և ես չեմ յաշխարհէ: Ո՛չ գայս աղաչեմ, զի բարձցես զնոսա յաշխարհէ. այլ զի պահեսցես զնոսա ի չարէ: Ոչ յաշխարհէ աստի չեն, որպէս և ես չեմ յաշխարհէ: Սուրբ արա զնոսա ճշմարտութեամբ քով. զի քո բանն ճշմարտութիւն է: Որպէս զիս առաքեցեր յաշխարհ. և ես առաքեցի զնոսա յաշխարհ: Եւ ի վերայ նոցա ես սուրբ առնեմ զանձն իմ. զի եղիցին և նոքա սրբեալք ճշմարտութեամբ: Այլ ոչ վասն նոցա միայն աղաչեմ, այլ և վասն ամենայն հաւատացելոց բանիւն նոցա յիս: Զի ամենեքին մի իցեն. որպէս դու Հայր յիս՝ և ես ի քեզ. զի և նոքա ի մեզ իցեն. զի և աշխարհ հաւատասցէ եթէ դու առաքեցեր զիս: Եւ ես զփառսն, զորս ետուր ինձ, ետու նոցա. զի իցեն մի, որպէս և մեք մի ևմք: Ես ի նոսա՝ և դու յիս. զի եղիցին կատարեալք ի մի. և

Digitized by Google

պիտասցէ աչխարհ, եթէ դու առաքեցեր զիս. և սիրեցի զնոսա՝ որպէս դու զիս սիրեցեր: Հայր՝ զորս եառուրն ինձ, կամիմ, զի ուր եսն եմ, և նոքա իցեն ընդիս. զի տեսանիցեն զփառսն իմ. զորս եառուրն ցիս. զի սիրեցեր զիս յառաջ քան զլինելն աչխարհի: Հայր արդար, և աչխարհ զքեզ ոչ ծանեաւ. այլ ես զքեզ ծանեայ՝ և նոքա ծանեան՝ եթէ դու առաքեցեր զիս: Եւ ծանուցի զանուն քո. և ծանուցից. զի սէրն, զոր սիրեցեր զիս՝ ի նոսա իցէ՝ և ես ի նոսա: Զայս իբրև ասաց Ցիսուս, ել աչակերտաքն հանդերձ յայնկոյս ձորոյն կեդրօնի. ուր էր պարտէզ, յոր եմուտ ինքն և աչակերտքն իւր:

Աղօթք հանդերձ ծունր դնելով զտէր աղաչեացուք:

Տէր ողորմեա: (Երէց անգամ կրկնեա:)

Եւ ևս խաղաղութեան": Օրհնութիւն և փառք":

Եւ է վճարել ամեն մի Աւետարանի՝ շէնուացին զերեկոյս ժամերգնս, զվեն յայգմ և զվեն յահեկին՝ յերկոտասան մամերգնացն, ի յետնոցն սկսեալ մինչև ցառաջինն:

Երկրորդ ձոխ. Սալմոս իս:

Երանի որ խորհի": Որպէս փափադի եղջերու": Դաւո արա ինձ Աստուած": (Տես ի Թիւն. 324:)

Կցորդ՝ Ձայնիւ:

Բան անօրէնութեան եդին ի վրաս իմ. տէր տէր մի թո՛ղուր զիս:

Ի՞նչ զօրէ՞նսըն Մովսէսի զոր խօսեցա՛ւ ի Սի-

Digitized by Google

նայի՝. եկեր ըզգառն ծ՛ի՛նակին և ը՛զբաղարջն ը՛նդ եղեգին. ը՛զհինն ի նո՛ր ըրս փոխե՛լո՛վ զըստուերն ի լո՛յս ճշմարտելո՛վ. փոխան գառինն ինքը՛ն դո՛ւ գա՛ռն Աստուծոյ նուի՛րելո՛վ։

Ը՞նդ բաղարջի՞ն հաց անխո՛վ մո՛ր ետ ըզմարմինն իւր զե՛րկնաւո՛ր. ըզկուսածինն անսե՛ր ըմնաւո՛ր զանապականն և զհոգեւո՛ր. ը՛նդ ոչխարի՞ն արեանն ո՛ւխտին ետ մեզ զարիւնն իւր ո՛ւխտ կրկին. և ե՛ղեգան գա՛ռնա՛դունին փո՛խան ըզլա՛րա Աստուածայի՞ն։

Թա՞ գաւո՞րն արա՛րա՛ծո՛ց զհացըն կենա՛ց ետ քաղցելո՛ց. և ըզբաժակն ո՛ւրա՛խարա՛ր որք յԱ՛դամայ տը՛րմեցելո՛ց. ա՛յս նոր ուխտ է՞ իմո՛յ ա՛րեա՛ն փոխան հը՛նո՛յ ուխտին արեա՛նց. զոր յիշատակ իմ ա՛ռնիցէ՛ք մինչև՛ եկից ե՛ս մի՛ւսանգա՛մ։

Ծո՞ղովեա՛լքս ի քէն հա՛յցե՛մք ընդ ժողո՛վեա՛լ մեռուսանին. որ զկենարա՛րըդ քո՛ մարմին բաշխեա՛լ եռուր ը՛նդ բաժա՛կին. չնո՛րհեա և մե՛զ տէր ընդ նո՛սին հաղորդ լինե՛լ քում սեղանին. կենաց հացիդ յո՛ր վա՛վաշիմք և ը՛մպելոյդ ո՛ւմ ծա՛րաւի՞մք։

Ի՞ յընտրելո՛ց աշա՛կե՛րտա՛ցն Յուդաս մեկնեա՛լ ի սուրբ դառանցն. ղբարձող մեղա՛ց զգա՛ռն Աստուծո՛յ մատնե՛լր ի մահ ը՛նդ արծաթո՛յ. ի՛ յընթրի՞սըն հոգե՛ւո՛ր մերձի ժը՛ղի՛րհն և նենգաւո՛րն. ուտելով ընդ վա՛րդապետը՛ն յա՛ճախ զխա՛րբէութի՛ւն։

Լո՛յսըն խօսէ՛ր առե՛րսո՛ւի խաւարե՛լո՛յն վասըն դարձի. մի՛ ոմն ի ձէնջ ա՛սէ՛ եղբա՛րք զիս մատնե-

Digitized by Google

լոց է առ ի մա՛հ. Պե՛տրոս լուանա՞լ զայն զո՛րհո՛ւրէր և ա՛կնարկէ՛ր առ Յովհաննէ՛ս. հարցանել թէ ո՛վ իցէ՝ դաւա՛ճանող վա՛րդա՛պետի՞ն:

ՀԱՅԵՐԷՆ՝ ՈՐԲԹԻՒ:

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Ղուկասու:

ԳԼ՝ 22. հմր՝ 1

Վասն Հնձրևաց Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Ա՛ներձեցաւ ժօն բաղարջակերացն՝ որ կոչիւր պասքա: Եւ խնդրէին քահանայապետքն և դպիրք՝ թէ որպէս սպանանիցեն զնա. բայց երկնչէին ի ժողովրդենէ անտի: Ապա եմուտ սատանայ ի Յուդայ ի կոչեցեալն Իսկարիօտացի, որ էր ի թուոյ երկոտասանից: Ոզաւ՝ եդ բանս ընդ քահանայապետս և ընդ դպիրս՝ և ընդ իշխանս ժողովրդեանն. զի մատնեսցէ զնա նոցա: Եւ խնդացին, և խոստացան տալ նմա զարծաթ: Եւ յանձն էառ. և խնդրէր պարապ՝ մատնել զնա նոցա մեկուսի յամբոխէ անտի: Եկն օր բաղարջակերացն, յորում օրէն էր զենուլ զպասեքն: Եւ առաքեաց զՊետրոս, և զՅոհաննէս՝ և ասէ. երթա՛յք, պատրաստեցէ՛ք մեզ զպասեքն՝ զի կերիցուք: Եւ նոքա ասեն, ո՞ւր կամիս՝ զի պատրաստեսցուք: Եւ ասէ ցնոսա. ահա իբրև մտանիցէք ի քաղաքն, պատահեսցի ձեզ այր մի բարձեալ սափոր ջրոյ. երթիջիք զետ նորա ի տունն, յոր մտանիցէ: Եւ ասացէք ցտանուտէրն տանն, վարդապետն ասէ քեզ,

Digitized by Google

ուր են վանքն իմ, յորում զպատուքն ուսիցեմ աչա-
կերտօքս հանդերձ: Եւ նա ցուցցէ ձեզ վերնատուն
մի մեծ զարդարեալ. և անդ պատրաստեսջիք: Եւ
գնացեալ գտին, որպէս և ասաց նոցա. և պատրաս-
տեցին զպատուքն: Եւ իբրև ժամ եղև, բազմեցաւ,
և երկոտասան առաքեալքն ընդ նմա: Եւ ասէ ցը-
նոսա. ցանկանալով ցանկացայ զայս պատուք ուտել
ընդ ձեզ՝ մինչչև չարչարեալ իցեմ: Բայց ասեմ ձեզ,
թէ ոչևս կերիցեմ ի սմանէ՝ մինչև լցցի յարքայութեան
Աստուծոյ: Եւ ընկալեալ բաժակ՝ գոհացաւ, և ա-
սէ. առէք զայդ՝ և բաժանեցէք ի ձեզ: Ասեմ ձեզ
թէ յայսմհետէ ոչ արբից ի բերոյ որթոյ՝ մինչև եկեա-
ցէ արքայութիւն Աստուծոյ: Եւ առեալ հաց՝ գո-
հացաւ. եբեկ՝ և ետ նոցա՝ և ասէ. այս է մարմին
իմ, որ վասն բազմաց տուեալ. զայս արասջիք առ
իմոյ յիշատակի: Նոյնպէս և զբաժակն յետ ընթրեա-
ցըն էառ՝ և ասէ. այս բաժակ է նոր ուխտ իմով ա-
րեամբ վասն բազմաց հեղլոյ: Բայց ահասիկ ձեռն
մատնչի իմոյ ընդիս ի սեղանս: Եւ որդի մարդոյ,
ըստ սահմանելոյն երթայ. բայց վայ մարդոյն այն-
միկ, յոյր ձեռն մատնիցի: Եւ նոքա սկսան խնդ-
րել ընդ միմեանս, թէ ով է ի նոցանէ՝ որ զայն գոր-
ծելոց իցէ: Եւ եղև հակառակութիւն ի մէջ նոցա,
թէ ով ի նոցանէ համարիցի մեծ: Եւ նա ասէ ցը-
նոսա. թագաւորք ազգաց՝ տիրեն նոցա. և որք իշ-
խեննն նոցա՝ բարերարք կոչին: Այլ դուք ոչ այն-
պէս. այլ որ մեծն է ի ձեզ՝ եղիցի իբրև զկրտսերն.

Digitized by Google

և առաջնորդն իբրև զսպասաւորն։ Որ է մեծ. բազմեալն եթէ սպասաւորն. ոչ ապաքէն բազմեալն. բայց ես եմ ի միջի ձերում իբրև սպասաւոր։ Եւ դուք էք՝ որք ցանդ կայիք ընդ իս ի փորձութիւնս իմ։ Եւ ես ուխտեմ ձեզ՝ որպէս և Հայր իմ ուխտեաց ինձ զարքայութիւն։ Չի ուտիցէք և ըմպիցէք ի սեղանն իմ յարքայութեան իմում. և նստիցիք յերկոտասան աթոռ՝ դատել զերկոտասան ազգն Իսրայէլի։ Եւ ասէ տէր. Սիմոն, Սիմոն. ահա սատանայ խնդրեաց զձեզ խաղբաղել իբրև զցորեան։ Այլ ես աղաչեցի վասն քո՝ զի մի պակասեսցին հաւատք քո. և դու երբեմն դարձեալ, և հաստատեսցես զեղբարս քո։ Եւ նա ասէ ցնա. տէր, ընդ քեզ պատրաստ եմ և ի բանտ և ի մահ երթալ։ Եւ նա ասէ ցնա. ասեմ քեզ Պետրէ. չիցէ այսօր հաւուս խօսեալ՝ մինչ երիցս ուրասցիս զիս չդիտել։ Եւ ասէ ցնոսա. յորժամ առաքեցի զձեզ առանց քսակի՝ և մախաղի՝ և կօշկաց՝ միթէ կարօտացայք իմիք։ Եւ նոքա ասեն, և ոչ իմիք. ապա ասէ. այլ այժմ որ ունի զքսակ՝ բարձցէ, նոյնպէս և մախաղ. և որ ոչն ունի՝ վաճառեսցէ զձորձս իւր՝ և գնեսցէ իւր սուսեր։ Բայց ասեմ ձեզ. զի այս ևս որ գրեալ է՝ պարտ է զի կատարեսցի յիս, թէ ընդ անօրէնս համարեցաւ. զի որ վասն իմ ինչ է՝ վճարեալ է։ Եւ նոքա ասեն. տէր՝ ահաւասիկ են աստ երկու սուրք. և նա ասէ ցնոսա. բաւականք են։ Եւ ելեալ գնաց ըստ սո-

Digitized by Google

վուրթեանն ի լեառն Զիթենեաց. գնացին ետ նո-
ա և աշակերտքն: Իբրև եհաս ի տեղին, ասէ ցնո-
ա. յաղօթս կացէք չմտանել ի փորձուրթիւն: Եւ
ինքն մեկնեցաւ ի նոցանէ իբրև քարընկէց մի. եղ
ծունր, կայր յաղօթս: Եւ ասէր՝ Հայր եթէ կամիս
անցո զբաժակս զայս յինէն. բայց ոչ որպէս իմ կամք՝
այլ քոյդ լիցի: Եւ երևեցաւ նմա հրեշտակ յերկնից,
և զօրացուցանէր զնա. և էր ի տագնապի. և մատ-
դիւրուրթեամբ ևս կայր յաղօթս: Եւ հոսէին ի նմա-
նէ քրտունք իբրև զկայլակս արեան, ոլոռն, ոլոռն,
հնդեալ յերկիր: Եւ յարուցեալ յաղօթիցն՝ եկն ա-
աշակերտսն՝ և եգիտ զնոսա ի քուն ի տրտմուրթենէն:
Եւ ասէ ցնոսա. զի՞ ննջէք. արիք, կացէք յաղօթս՝
զի մի՛ մտանիցէք ի փորձուրթիւն: Եւ մինչդեռ խո-
սէր, ահաւասիկ ամբոխ. և որ կոչիւրն Յուդա՝ մի
յերկոտասանիցն, առաջնորդէր նոցա. իբրև մերձե-
ցաւ առ Յիսուս՝ համբուրեաց զնա. քանզի զայն նը-
շան տուեալ էր նոցա. թէ ընդ որում ես համբուրե-
ցից, նա է՝ զնա ունիցիք: Ասէ ցնա Յիսուս. Յու-
դա, համբուրելո՞վ մատնես զորդի մարդոյ: Իբրև
տեսին, որք զնովաւն էին՝ որ ինչ եղև, ասեն ցնա.
տէր, հարցուք զնոսա սրով: Եւ էհար մի ոմն ի
նոցանէ զքահանայապետին ծառայ. և ի բաց եհան
զաջոյ ունկն նորա: Պատասխանի ետ Յիսուս և ա-
սէ. թոյլ տուք մինչև ցայդ վայր. և մատուցեալ յու-
կընն՝ բժշկեաց զնա: Եւ ասէ ցնկնալսն ի վերայ նո-

Digitized by Google

զա ցքահանայապետսն՝ և ցիչխանսն տաճարին՝ և ցծերս. իբրև ի վերայ աւաղակի եկիք սուսերօք և բրօք։ Հանապազ ընդ ձեզ էի ի տաճարին, և ոչ ձեռն գեցիք ձեռս յիս. այլ այս է ձեր ժամ, և իշխանութիւն խաւարի։ Եւ կալեալ զնա՝ ածին, և մուծին ի տուն քահանայապետին. և Պետրոս երթայր զկնի նորա հեռագոյն։ Իբրև լուցին զկրակ ի մէջ դաւթին, և նստան չուրջ, նստաւ և Պետրոս ի մէջ նոցա։ Եւ տես զնա աղախին ոմն զի նստէր առ լոյսն. հայեցաւ ընդ նա և ասէ. և սա ընդ նոսա էր՝ որք ընդ նմա էին։ Իսկ Պետրոս ուրացաւ և ասէ. ոչ գիտեմ զնա կին դու։ Եւ յետ սակաւ միոյ այլ ոմն տեսս զնա և ասէ. և դու ի նոցանէ ես. և Պետրոս ասէ՝ այր դու չէմ ի նոցանէ։ Եւ իբրև ժամ մի էանց ի վերայ, այլ ոմն վիճէր և ասէր. ստոյգ և սա ընդ նմա էր. քանզի Գալիլեացի է։ Ասէ Պետրոս. այր դու, չգիտեմ զինչ խօսիդ. և առ ժամայն մինչդեռ զայն ասէր՝ խօսեցաւ հաւ։ Դարձաւ տէր, և հայեցաւ ի Պետրոս. և յիշեաց Պետրոս զբանն տեառնըն, զոր ասաց ցնա՝ մինչչև հաւու խօսեալ իցէ, երիցս ուրասցիս չգիտել զիս։ Եւ ելեալ արտաքս՝ լացաց դառնապէս։ Եւ արքն, որք պահէին զնա, այպն առնէին զնովաւ. և հարկանէին։ Ծածկէին զերեսս նորա և առնջէին. և հարցանէին ցնա և ասէին. մարգարէացո՝ ո՞վ է՝ որ եհարն զքեզ։ Եւ այլ բազում ինչ հայհոյութեամբ խօսէին ի նա։

Աղօթք հանդերձ ծունր դնելով զտէր աղաչեացուք։ Տէր ողորմեա։ (Կրկին կրկնեալ)

եւ ևս խաղաղութեան"։ Օրհնութիւն և վառք"։

Երրորդ փոխ. Սաղմոս ծը։

Փրկեա զիս ի թշնամեաց իմոց Աստուած, յայնցանէ ոչք յարուցեալ են ի վերայ իմ՝ ապրեցո զիս։

Փրկեա զիս յայնցանէ՝ ոչք գործեն զանօրէնութիւն, յարանց արիւնահեղաց ապրեցո զիս։

Ոլոգալ զանձն իմ կամեցան, և հասին ի վերայ իմ հզօրք։

Ո՛չ մեղք իմ և ո՛չ յանցանք, առանց մեղաց ընթացայ և ուղիղ եղէ։

Զարթիր ընդ առաջ իմ և տես, դու տէր զօրութեանց Աստուած Իսրայէլի։

Նայեաց և այց արա ամենայն հեթանոսաց, մի ողորմիր ամենեցուն՝ ոչք գործեն զանօրէնութիւն։

Դարձցին ընդ երեկոյս, սովեսցին որպէս շունք և շրջեսցին զքաղաքաւ։

Նոքա դոլանջեսցեն բերանօք իւրեանց, և սուր է ի շրթունս նոցա։

Իսկ արդ ո՛վ լուաւ զայս, զի դու տէր ծիծաղեացիս զնոքօք, և արհամարհեացես զամենայն հեթանոսս։

Զզօրութիւն իմ առ քեզ պահեցից, զի Աստուած օգնական իմ է։

Digitized by Google

Աստուած իմ՝ ողորմութիւն նորա կանխեսցէ առ
իս, և Աստուած իմ ցուցցէ ինձ ի թշնամիս իմ։

Մի սպանաներ զնոսա, զի մի մոռասցին զժողո-
վուրդս քո։

Ցլուեա՛ զնոսա զօրութեամբ քով և ընկճեա՛ զնոսա.
զի դու ես պաշտպան իմ տէր։

Մեղք բերանոյ նոցա և բանք շրթանց նոցա, բռն-
կրկցին նոքա յամբարտաւանութեան իւրեանց։

Ցանէցո՛ և ի ստութիւնս մատնեսցին, ի կատարա-
ծի բարկութեան սպառեսցին, և մի՛ գոցին։

Գիտասցեն զի Աստուած տիրէ Ցակոբայ, և ամե-
նայն ծագաց երկրի։

Դարձցին ընդ երեկոյս, սովեսցին որպէս շունք և
շրջեսցին զքաղաքաւ։

Նոքա սփռեսցին յուտել, ապա թէ ոչ յագեսցին
տրտնջեսցեն։

Ես օրհնեցից զօրհնութիւնս տեառն. և ցնծացայց
առաւօտուց յողորմութեան քումմ։

Զի եղեր իմ պաշտպան և տուն ապաւինի, յաւուր
նեղութեան իմոյ օգնական իմ։

Քեզ սաղմոս ասացից Աստուած ապաւէն իմ, Աստ-
ուած ողորմութեան իմոյ։

Սաղմոս ԽԹ։

Աստուած մերժեցեր և աւերեցեր զմեզ, բարկա-
ցար և գթացեր ի մեզ։

Շարժեցեր զերկիր և խռովեցուցեր զսա. բժշկեա՛

զհարուածս սորա զի սաստանեցաւ։

Յուցեր ժողովրդեան քում խստութիւն, և հատուր ըմպել մեզ գինի յիմարութեան։

Նաւուր երկիւղածաց քոց նշան, զի ապրեսցին յերեսաց աղեղան։

Որպէս փրկեցան սիրելիք քո, կեցո՛ աջով քով և լուր մեզ։

Աստուած խօսեցաւ ի սրբութենէ իւրմէ. ցնծացայց, բարձր եղէց՝ բաժանեցից զՍիւքէմ, և զհովիտսըն յարկաց չափեցից։

Իմ է Գաղայադ և իմ է Մանասէ, Եփրեմ հզօրիչ գլխոյ իմոյ։

Յուդա թագաւոր իմ, Մովաբ աւազան յուսոյ իմոյ։

Ցիդովմէ ուղղեցից զգենացս իմ, և ինձ այլազգիք հնազանդ եղեն։

Ո՞ տարցէ զիս ի քաղաք ամուր, կամ ո՞վ առաջնորդեսցէ ինձ մինչև ցՆդոմ։

Ոչ՝ դու Աստուած որ մերժեցեր զմեզ, և ո՛չ ելեր Աստուած ընդ զօրս մեր։

Տո՛ւր մեզ օգնութիւն ի նեղութեան, զի ընդունայն է փրկութիւն մարդոյ։

Աստուծով արասցուք զօրութիւն, և նա արհամարհեսցէ զայնոսիկ ոյք նեղեն զմեզ։

Սաղմոս կ։

Լուր Աստուած աղօթից իմոց, և նայեա՛ տէր յա-

Digitized by Google

ղօթս իմ։

Ի ծագաց երկրի կարդացի առ քեզ, մինչ ի վաստակիլ սրտի իմոյ։

Ի վիմէ բարձր արարեր զիս, առաջնորդեցեր ինձ, և իմ եղեր յոյս և աշտարակ հզօր եղեր ինձ յերեսաց թշնամւոյն։

Բնակեցայց ես ի յարկս քո յաւիտեան, և ծածկեցայց ընդ հովանեաւ թևոց քոց։

Դու Աստուած լուար աղօթից իմոյ. ետուր ժառանգութիւն՝ ոյք երկնչին յանուանէ քումմէ։

Աւուրս յաւուրս յաւելեր թագաւորի ամաց նորա, աւուրս ազգաց մինչև յազգս։

Կայ և մնայ յաւիտեան առաջի Աստուծոյ ողորմութիւն, և ճշմարտութիւն ոյք խնդրեն ի նմանէ։

Այսպէս սաղմոս ասացից անուան քումմ յաւիտեանս յաւիտենից, և տաց քեզ զաղօթս իմ օր ըստ օրէ։

Կյորդ՝ Հայնիւ։

Փրկեա՛ զի՛ս ի թշնամեաց իմո՛ց Ա՛ստը՛ւա՛ծ. և ի հարձակչաց իմո՛ց ա՛պրե՛ցո՛ զիս։

Ով նա՞մով սիրո՛ն յիւր սիրե՛լեա՛ն ըզտը՛րտմո՛ւթիւնըն վա՛րատեա՛ց. թացեալ պատառ տա՛յ Ծ՛ուդայի նըշա՛ւա՛կեա՛լ զդողըն մատնիչ. զո՛ր առեա՛լ և մերկա՛ցա՛ւ յԱստուա՛ծայի՛ն հոգւոյն չնորհա՛ց. մատնեցաւ նա՛խա՛չարին ը՛նդ մա՛տնութեան վա՛ղդա՛պետի՛ն։

Ծա՞յրագո՞յն լուսո՛յն զը՛րկեա՛լ խաւարա՛սէ՛րն ար-
տաքս ելեա՛լ. տէրըն յայտնէր լոյս ե՛ղելո՛ց ըզգա՛յ-
թակղիլն ի՛ գիշերի. Պե՛տրոս խօսէ՛ր խրա՛խո՛ւսե՛լի
և կըչտա՛մբի՛ւր հաւախօսի. զիւրն յա՛չխարհէ զվո՛-
խի՛ն ասէ՛ր և ը՛զգալուստ Հո՛գւո՛յն պատմէ՛ր։

Կե՞ղրոնա՞ն յայնկո՛յս ձո՛րո՛յ ի վերնատո՛ւնն ել
խորհըրդոյ. եմո՛ւտ գալաւէ՛զ ընդ պարտիզի եմո՛յծ
զԱդամ յա՛դին դրախտին. մո՛ւծցես և զմի՛զ տէր
ը՛նդ նը՛ւին ուստի հա՛նե՛ր նախ պա՛ռաջինն. զի
ժառանգել ը՛զհա՛յրենին ա՛ւրժա՛նացուք մեք վե՛-
րըստի՞ն։

Հո՞գայր ըզկըրի՛ւրն տը՛րտմա՛բա՛ր երիւքն ե՛կեալ
առանձնատա՛ր. վրկել զայնիա՛ւհս հո՛գի՛ս յօժա՛ր
բայց է՛ ընո՛ւթիւն մա՛րմնոյս տկա՛ր. ո՛չ ոմն ու-
ժե՛ղ և զօ՛րա՛ւոր և ոմն ա՛նկօր վըտանգաւո՛ր. այլ
մի և նոյն զո՛լ մի՛ աւո՛ր կը՛րե՛ր ըզկիրան կա՛մաւո՛ր։

Ձա՞յնիւ մաղթե՛ր աղօ՛թի՛կա՛ն վասն իմ ա՛ւ-
Հա՛յր իւր էակա՛ն. ծո՛ւնըր դընէր խո՛նա՛րհական
ո՛րո՛ւմ կըրկնի ծունր ամենայն. ե՛թէ վերկի՛ւ մարդ-
կա՛ն հնա՛ր է՝ առանց մահո՛ւ իմ որ գրեալ է. բա՛-
ժակ մահուս յինէ՛ն անցցէ ո՛չ ի՛մ կամաւ ա՛յլ քո՛յդ
տեսցէ՛։

Ը՞ղեալ յերկի՛ւղ վըրտանց հոսման՛ն ոլոռնաձև՛
կայլակ վիժման. ի զօրանալ հրե՛չտա՛կ մերձեա՛լ զօ-
րի՛նական գի՛րըն լըցեալ. զի՛ կատարեա՛լ էա՛ւ
ըզնո՛ւթի՛ւն Աստուածըն բա՛ն ըզմարդկութեան.

Digitized by Google

պարտ էր զերկիւղ և՝ զտը՛րտմութի՛ւն յիւրո՛ւմքն կրել տնօրէ՛նութի՛ւն։

ՋՀՆԷ՝ Ո՞ՐԹԻՒ։

Սրբոյ աւետարանիս Ցիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մարկոսի։

Գլ՝ 14. հմր՝ 27.

Վասն Մատնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ ասէ ցնոսա Յիսուս. ամենեքեան գայթակղեցոց էք ինէն յայսմ գիշերի. զի գրեալ է, թէ հարից զհովիւն, և ոչխարքն ցրուեսցին։ Այլ յետ յարուցեանն իմոյ յառաջագոյն երթայց քան զձեզ ի Գալիլեայ։ Պատասխանի ետ Պետրոս և ասէ ցնա. Թէպէտ և ամենեքին գայթակղեսցին, այլ ես ոչ։ Եւ ասէ ցնա Յիսուս. ամէն ասեմ քեզ. Թէ դու իսկ յայսմ գիշերի մինչչև հաւուս խօսեալ իցէ՝ երիցս ուրասցիս զիս։ Իսկ Պետրոս առաւել ևս պնդէր և ասէր. եթէ մեռանիլ ևս հասանիցի ընդ քեզ, զքեզ ոչ ուրասցայց. նոյնպէս և ամենեքեան ասէին։ Գան ի գեօղն՝ որում անուն էր Գեթսեմանի. և ասէ ցաշակերտան. Նստարո՛ւք աստ՝ մինչ ես յաղօթս կացից։ Եւ առնու ընդ իւր զՊետրոս՝ և զՅակոբոս՝ և զՅովհաննէս. և սկսաւ տրտմիլ և հոգալ։ Յայնժամ ասէ ցնոսա. տրտում է անձն իմ մինչև ի մահ. մնացէ՛ք աստ՝ և արթո՛ւն կացէ՛ք։ Եւ մատուցեալ սակաւիկ մի յառաջ, անկաւ ի վերայ երեսաց իւրոց յերկիր. և կայր յաղօթս. զի եթէ հնար ինչ է՝

անցցէ ի նմանէ ժամն։ Եւ ասէ. աբբա Հայր. ա-
մենայն ինչ քեզ հնարաւոր է. անցո զբաժակս զայս
յինէն. բայց ոչ որպէս ես կամիմ՝ այլ որպէս դու
կամիս։ Եւ գայ՝ գտանէ զնոսա՝ զի ննջէին. և ասէ
ցՊետրոս. Սիմոն ննջե՞ս. ոչ կարացեր ժամ մի ար-
թուն կալ։ Արթո՛ւն կացէք՝ և յաղօթս կացէք. զի
մի՛ մտջիք ի փորձութիւն. ոգիս յօժար է՝ բայց մար-
մինս տկար։ Եւ դարձեալ չոգաւ՝ եկաց յաղօթս. և
զնոյն բան ասաց։ Դարձաւ միւսանգամ անդրէն. և
եգիտ զնոսա ի քուն. քանզի էին աչք նոցա ծանրա-
ցեալք. և ոչ գիտէին զինչ պատասխանի տայցեն նը-
մա։ Գայ երրորդ անգամ, և ասէ ցնոսա. ննջեցէ՛ք
այսուհետև, և հանգերո՛ւք. զի հասեալ է վախճան.
եկն ժամ. և ահա ոդիի մատնի ի ձեռս մե-
ղաւորաց։ Օ՛ն արի՛ք գնասցո՛ւք. զի ահաւասիկ
մերձեցաւ՝ որ մատնելոց է զիս։ Եւ մինչդեռ նա
զայն խօսէր՝ գայ Յուդա Իսկարիովտացի՝ մի յԻրկուտա-
սանից անտի. և ընդ նմա ամբոխ սուսերօք և բրօք.
ի քահանայապետից՝ և ի դպրաց՝ և ի ծերոց։ Տը-
ւեալ էր նշան մատնչի՝ և ասէր. ընդ որում ես համ-
բուրեցից՝ նա է. կալջիք զնա՝ և տարջիք զգուշու-
թեամբ։ Եւ մատուցեալ վազվազակի՝ ասէ ցնա.
ռաբբի, ռաբբի. և համբուրեաց զնա։ Եւ նոքա
արկին ի նա ձեռս՝ և կալան զնա։ Եւ մի ոմն յայն-
ցանէ՝ որք զնովաւն կային՝ ձգեաց զսուր. և հար
զծառայ քահանայապետին. և ի լաց եհան զունկն
նորա։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. իբ-

Digitized by Google

րև ի վերայ աւազակի եղիք սուսերօք և բրօք ունել
կիս։ Հանապազ առ ձեզ էի՝ և ուսուցանէի ի տա-
ճարին. և ոչ կալայք զիս. այլ զի ցցին գիրք մար-
գարէիցն։ Ցայնժամ թողին զնա աշակերտքն ամե-
նեքին՝ և փախեան։ Եւ ոմն երիտասարդ զհետ եր-
թայր նորա՝ արկեալ զիւրև զկտաւ մի ի մերկուց.
ունէին զնա երիտասարդքն։ Եւ նորա թողեալ զզ-
կտաւն՝ փախեաւ մերկ ի նոցանէ։ Եւ տարան զզ-
Ցիսուս առ քահանայապետն Կայիափայ. և գային
ընդ նմա ամենայն քահանայքն՝ և դպիրք և ծերք։
Եւ Պետրոս երթայր զհետ նորա մինչև ի ներքս իսկ
ի գաւիթ քահանայապետին. և նստէր ընդ սպասա-
ւորան և ջեռնոյր առ լուսովն։ Իսկ քահանայապետ-
քըն՝ և ամենայն ատեանն խնդրէին հակառակ Ցի-
սուսի վկայութիւն ինչ. զի սպանանիցեն զնա՝ և
ոչ գտանէին։ Զի բազումք սուտ վկայութիւն վկա-
յէին զնմանէ. և նման միմեանց ոչ էին վկայութիւն-
քըն։ Այլք յարուցեալ վկայէին սուտ զնմանէ, և ա-
սէին։ Թէ մեք լուաք ի դմանէ զի ասէր. ես քակե-
ցից զտաճարդ զայդ ձեռագործ. և զերիս աւուրս չի-
նեցից զայլ՝ առանց ձեռագործի։ Սակայն և այն-
պէս չէր նման վկայութիւն նոցա։ Ապա յարուցեալ
քահանայապետն ի մէջ՝ հարցանէր զՑիսուս, և ասէր.
ոչինչ տաս պատասխանի. զինչ դոքա զքէն վկայեն։
Եւ Ցիսուս լուռ և եթ կայր, և չտայր ինչ պատաս-
խանի. դարձեալ քահանայապետն հարցանէր ցնա
կրկին անգամ և ասէր. դո՞ւ ես Քրիստոս Որդի Ա-

Digitized by Google

տուծոյ օբննելոյն։ Պատասխանի եաւ Ցիսուս և ասէ ցնա. դու ասացեր՝ թէ ես եմ. բայց տեսանիցէք զորդի մարդոյ նստեալ ընդ աջմէ զօրութեան Աստուծոյ. և եկեալ ընդ ամպս երկնից։ Եւ քահանայապետն պատառեաց վաղվաղակի զպատմուճան իւր և ասէ. զինչ ևս պիտոյ են մեզ վկայք։ Ահա լուայք ամենեքեան զհայհոյութիւնն ի բերանոյ դորա. զինչդ թուի ձեզ. և ամենեքեան դատապարտեցին զնա՝ թէ մահապարտ է։ Եւ ոմանք սկսան թքանել ընդ երեսս նորա. ձորձս զդլխով արկանել՝ կըռփել և ասել. մարգարէաց մեզ Քրիստոս. ո՞վ է այն՝ որ եհարն զքեզ. և սպասաւորքն ապտակս հանէին նմա։ Եւ Պետրոս մինչդեռ էր ի խոնարհ ի գաւթին, գայ աղախին մի քահանայապետին։ Եւ տեսանէ զնա՝ զի ջեռնոյր. հայեցաւ ընդ նա և ասէ. և դու ընդ Յիսուսի Նազովրեցւոյ էիր։ Նա ուրացաւ և ասէ. ոչ ճանաչեմ և ոչ գիտեմ զինչ դուդ ասես. և իբրև ել յարտաքին գաւթին, և հաւ խօսեցաւ։ Դարձեալ եւտես զնա աղախինն. և սկսաւ ասել ցայնոսիկ՝ որք չուրջն կային, թէ և սա ի նոցանէ է։ Եւ նա դարձեալ ուրացաւ. և յետ սակաւ միոյ՝ դարձեալ որք չուրջն կային, ասեն ցՊետրոս. արդարև դու ի նոցանէ ես. քանզի Գալիլեացի ես՝ և խօսքդ իսկ քո նման են։ Եւ սկսաւ նզովել՝ երդնուլ և ասել թէ ոչ գիտեմ զորմէ դուդ ասէք։ Եւ նոյն ժամայն կըկին հաւ խօսեցաւ. և յիշեաց Պետրոս զբանն՝ զոր ասաց ցնա Ցիսուս, թէ չև իցէ հաւու երկիցս խօսեալ. զի դու երիցս ուրասցիս զիս. և սկսաւ լալ։

Digitized by Google

Աղօթք հանդերձ ծունր դնելով զտէր աղաչեսցուք։
Տէր ողորմեա։ (Երկիւ կրկնեա)
Եւ ևս խաղաղութեան"։ Օրհնութիւն և վասք"։

Ձորրորդ փոխ. Սազմոս հը։

Աստուած, մտին ցնծանոյք ի ժառանգութիւն քո. պղծեցին զտաճար սուրբ քո։
Արարին զԵրուսաղէմ որպէս զհիւղս մրգապահաց. արկին զդիակունս ծառայից քոց գեչ թռչնոց երկնից, և զմարմինս սրբոց քոց գազանաց երկրի։
Հեղին զարիւն նոցա որպէս ջուր չուրջ զԵրուսաղէմաւ, և ոչ ոք էր որ թաղէր զնոսա։
Եղաք մեք նախատինք դրացեաց մերոց. ծաղր և այպն կատականաց այնոցիկ՝ որք չուրջ էին զմեզ։
Մինչև յերբ տէր բարկանասս դու իսպառ, բորբոքեսցի որպէս հուր նախանձ քո։
Հեղ զբարկութիւն քո ի վերայ ազգաց՝ որք զքեզ ոչ ճանաչեցին, ի վերայ թագաւորաց՝ որք զանուն քո ոչ կարդային. զի կերին զՅակոբ և զտեղի նորա աւերեցին։
Մի յիշեր զմեղս մեր զառաջինս, վաղվաղ եկեսցէ առ մեզ ողորմութիւն քո տէր զի աղքատացաք յոյժ։
Օգնեա մեզ Աստուած փրկիչ մեր, վասն փառաց յանուան քոյ։
Տէր փրկեա զմեզ և քաւեա զմեղս մեր վասն անուան քոյ։
Մի երբէք ասասցեն ի հեթանոսս, Թէ ուր է Աստ,

Digitized by Google

ուած նոցա։

Այլ յայտնի լինչ լիցի ի վերայ հեթանոսաց առաջի այսց մերոց, առ ի խնդրել զվրէժ արեան ծառայից քոց որ և հեղաւ։

Մոցէ առաջի քո հեծութիւն կապելոց. ըստ մեծութեան բազկի քո չահեա դու զորդիս սպանելոց։

Հատո դրացեաց մերոց եօթնապատիկ ի ծոց նոցա, զնախատինս իւրեանց զոր նախատեցին զքեզ տէր։

Մեք ժողովուրդք և խաչն արօտի քոյ խոստովան եղիցուք առ քեզ յաւիտեան, ազգէ յազգ պատմեցուք զօրհնութիւնս քո։

Սաղմոս ՀԹ։

Որ հովուեսդ Իսրայէլի նայեաց, որ առաջնորդես որպէս խաչին Յովսեփու։

Որ նստիս ի քրովբէս յայտնեաց առաջի Եփրեմի Բենիամինի և Մանասէի։

Զարթի զզօրութիւնս քո, և ւկ ի կեցուցանել զմեզ։

Աստուած զօրութեանց դարձի զմեզ, երևեցո զերեսս քո ի մեզ և կեցցուք։

Տէր Աստուած զօրութեանց մինչև յ՞երբ բարկանաս յաղօթս ծառայից քոց։

Զամբեցեր մեզ հաց արտասուաց, և արբուցեր մեզ արտասուս չափով։

Արարեր զմեզ նախատինս դրացեաց մերոց, այլն կատականաց թշնամեաց մերոց։

Digitized by Google

Աստուած զօրութեանց դարձո՛ զմեզ, երևեցո՛ զերեսս քո ի մեզ և կեցցուք։

Այդի յԵգիպտոսէ փոխեցեր. հաներ զհեթանոսս և զնոսա տնկեցեր, և առաջնորդեցեր նմա։

Հաստատեցեր զարմատս նորա և ելից զերկիր. ծածկեաց լերինս հովանի նորա, և բարունակ նորա զմայրս Աստուծոյ։

Ձղեաց զորթ իւր մինչև ի ծով, մինչև ի գետս են շառաւիղք նորա։

Ընդէ՞ր քակեցեր զցանկ նորա, և կթեն զնա անցաւորք ճանապարհի։

Ապականեաց զնա խոզ անտառի, և երկվայրի արածեցաւ ի նմա։

Աստուած զօրութեանց դարձ հայեաց յերկնից և տես, այց արա այգւոյս· այսմիկ և դարմանն տար սըմա՝ զոր տնկեաց աջ քո։

Ի վերայ որդւոյ մարդոյ զոր զօրացուցեր զնա ի քեզ, այրեցեալ ի հուր և աւերեալ, ի սաստէ քումմէ կորիցէ։

Եղիցի ձեռն քո ի վերայ առն, աջ քո ի վերայ որդւոյ մարդոյ զոր զօրացուցեր զնա ի քեզ։

Ո՛չ ևս ի բացեայ եղիցուք մեք ի քէն. կեցուսցես դու զմեզ, և զանուն քո տէր կալդասցուք։

Աստուած զօրութեանց դարձո՛ զմեզ, երևեցո՛ զերեսս քո ի մեզ և կեցցուք։

Սաղմոս Ճ։

Ցնծացէ՛ք առ Աստուած՝ օգնական է մեր, աղա-

Digitized by Google

պահեցէք առ Աստուած Յակոբայ։

Առէք սաղմոս և տուք օրհնութիւն, սաղմոս ասացէք նմա ի ձայն քաղցրութեան։

Փող հարէք ի գլուխ ամսոց, յաւուր նչանաւորի տաբեկանաց մերոց։

Հրաման է այս Իսրայէլի, և իրաւունք են Աստուծոյ Յակոբայ։

Վկայութիւն Յովսեփու զոր եդ ընդ նմա. որպէս ելանէր նա յերկրէն Եգիպտացւոց, լեզու զոր ոչ գիտէր լուաւ։

Ի բաց արար ի բեռանց զթիկունս նորա, և զձեռս նորա յորթ և ի թիւ ծառայիլոյ։

Ի նեղութեան կարդացեր առ իս և փրկեցի զքեզ, լուայ քեզ ի գաղտնութենէ մրրկին, և փորձեցի զքեզ ի վերայ ջուրցն հակառակութեան։

Լուր ժողովուրդ իմ և վկայեմ քեզ, և Իսրայէլ թէ լսիցես ինձ։

Մի՛ ևս եղիցին քեզ Աստուածք առ ժամայնք. և մի՛ երկիրպագանիցես դու Աստուծոյ օտարի։

Ես եմ տէր Աստուած քո որ հանի զքեզ յերկրէն Եգիպտացւոց, բաց զբե՛լ ան քո և լցիչ զդա։

Ժողովուրդ իմ ոչ լուաւ ձայնի իմում, և Իսրայէլ չիս ինչ ոչ նայեցաւ։

Բարձի թողի զնոսա երթալ զհետ կամաց սրտից իւրեանց, գի գնացին նոքա ըստ կամս անձանց իւրեանց։

Զի թէ ժողովրդեան իմոյ լուեալ էր ինձ, կամ Իս-

Digitized by Google

թայէլի զհանապարհս իմ գնացեալ էր։

Ոլոչս զոչինչ խոնարհ արարեալ էր իմ զքէչնամիս նորա, և ի վերայ նեղչաց նորա արկեալ էր զձեռն իմ։

Թչնամիք տեառն ստեցին նմա, և եղիցին ժամանակք նոցա յաշխարհի։

Վերակրեաց զնոսա ի պարարտութենէ ցորենոյ, և ի վիմէ մեղր յագեցոյց նոցա։

Կցորդ՝ Ձայնել։

Ընդ ի ձե՛ռանէ քումմէ՝ մե՛րժե՛ցա՛ն. մե՞ք ժո՛ղո՛վուրդք և խա՛՛չն ա՛րօ՛տի՞ քո՛յ։

Ձա՞ռագա՛յթ փառա՛ց է՛ին որ ըստ բնութեա՛նըս մարդկային. տագնապեցա՛ր ի՛ գիչերին աղօթեցե՛ր ա՛ռ Հայր յերկինս. ծա՛գեա ի մե՛զ զլոյսդ ե՛րկնա՛յին և փարա՛տեա՛ զերկիւղ չարին. մատունք հոգւոց մե՛ր և՛ մարմին յե՛րկի՛ւղ քո սուրբ բե՛ւեռեսցի՛ն։

Մե՞ր ձեռալ ցուղա՛ս որ մա՛տնե՛լո՛ց հանդերձ դա՛ռո՛ւն փարիսեցւո՛ց. անկան նըմա՛ն սառ՛րա՛նկելո՛ցն որք յաւիտեան չե՛ն կանգնելո՛ց. ցո՛ւդաս նենգա՛ւ համբո՛ւրե՛լո՛վ առի՛ր մա՛հո՛ւ նըշան տալո՛վ. վոխան սիրոյ զնա՝ մա՛տնելո՛վ չա՛ր ը՛նդ բարւոյ վրճա՛բելո՛վ։

Ցա՞յնժամ առ գո՛ւթ սիրո՛յն Պե՛տրո՛ս ըզծա՛ռա՛յին անուն Մաղքոս. եհատ սուսերըզ գա՛կա՛նջն աջո՛յ ո՛ր ա՛չ լուաւ տեառըն իւրո՛յ. ի՛սկ տէրըն մե՛ր ա-

Digitized by Google

քա՞զ՝ալէ՞ս յունկըն մերձեա՛լ բըժըշկապէ՞ս. առողջացո՛յց Աստուա՛ծապէ՞ս զո՛ր ո՛չ տեսին կուրա՛ցն հանդէ՞ս։

Նո՞ր հօտի՞ն վոգո՛ւ ցը՛րուեա՛լ քանզի գհո՛վի՛ւըն քաջ հարեա՛լ. Պետրոս միայն ը՛գհո՛ւտ երթեա՛լ ի յա՛ղջկանէ վի՛մին չարժեա՛լ. նը՛չանակեա՞լ հաւը՛ն խօ՛սէ՛ր առ ի Պե՛տրոս տէրն ակնարկէ՛ր. զբանըն յիշէ՛ր, դա՛ռն ա՛րտասուէ՛ր ի՝ գլո՛ւմանէն զաթեա՛լ կանդնէ՛ր։

Շնո՞րհեալ վիմի՞ն եկե՛ղե՛ցւոյ զո՛ր պահեցե՛ր ի հոսելո՛յ. և՝ կա՛նգնեցեր ի՝ գլո՛ւխլո՛յ վա՛սը՛ն սըրտիւն ա՛րտասուելո՛յ. կա՛նգնեա և զի՞ա տէր ընդ նը՛մին ի գլո՛ւմա՛նէ սայթա՛քուլին. տալով աչացս յո՛րդ ա՛րտասո՛ւս և՝ ջո՛ւր նըման ծո՛վո՛ւ գըլխո՛յս։

Ո՞վ կամա՛ւ զանկա՛պե՛լին կապեալ ը՛զձե՛ռս ալձակողին. ի յապարանսըն տա՛նէին Կայի՛ա՛փայ և ա՛ննային. ծա՛ռայն զերե՞ան այն ա՛պտա՛կէ՛ր յո՛ւմէ սրուվըէ՛ն թեւաքօղէ՛ր. թո՛ւք արձակեա՛լ ալի՛ղծ բե՛ւրանո՛վն յայն ո՛ր կուրին լո՛յս ծա՛գեաց թքո՛ւն։

Ջ՛ԿՆԷ՝ Ո՛ՐԹԻՒ։

Սրբոյ աւետարանիս ցխուաի Ֆրիատոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Գլ՝ 26. հմր՝ 31։

Տէրն մեր ցխուա Ֆրիատոս։

Յայնժամ ասէ ցնոսա. ամենեքին դուք գայթակ-

Digitized by Google

ղևլոց էք յինէն յայսմ գիշերի. զի գրեալ է՝ Թէ հարբից զհովիւն՝ և ցրուեսցին ոչխարք հօտին: Եւ յետ յառնելոյն իմոյ՝ յառաջեցից քան զձեզ ի Գալիլեա: Պատասխանի ետ Պետրոս և ասէ ցնա. Թէպէտ և ամենեքեան դայթակղեսցին ի քէն. սակայն ես ոչ դայթակղեցայց: Ասէ ցնա Յիսուս՝ ամէն ասեմ քեզ՝ զի յայսմ գիշերի մինչև հաւուս խօսեալ իցէ՝ երիցս ուրասցիս զիս: Ասէ ցնա Պետրոս. Թէ և մեռանիլ հասանիցի ընդ քեզ. զքեզ ոչ ուրասցայց. նոյնպէս և ամենայն աշակերտքն ասէին: Ցայնժամ գայ Յիսուս ընդ նոսա ի գիւղ մի՝ որում անուն էր Գեթսեմանի. և ասէ ցնոսա. Նստարուք այդր. մինչև երթայց կացից յաղօթս: Եւ առեալ ընդ իւր զՊետրոս՝ և զերկուս որդիսն Զեբեդեայ՝ սկսաւ տրտմիլ և հոգալ: Ցայնժամ ասէ ցնոսա. տրտում է ոգի իմ մինչև ի մահ. կացէք աստ՝ և հսկեցէք ընդ իս: Եւ մատուցեալ յառաջ սակաւիկ մի՝ անկաւ ի վերայ երեսաց իւրոց. եկաց յաղօթս և ասէ. Հայր իմ. եթէ հնար է՝ անցցէ բաժակս այս յինէն. բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու: Գայ առ աշակերտսն՝ և գտանէ զնոսա ի քուն. և ասէ ցՊետրոս. այդպէս ոչ կարացիք մի ժամ արթուն կալ ընդիս: Արթուն կացէք. և աղօթս արարէք, զի մի անկանիցիք ի փորձութիւն. ոգիս յօժար է՝ բայց մարմինս տկար: Դարձեալ երկրորդ անգամ չոգաւ՝ եկաց յաղօթս Յիսուս՝ և ասէ. Հայր իմ. եթէ հնար իցէ անցանել յի-

Digitized by Google

նէն բաժակիս այսմիկ. ասա թէ ոչ՝ արբից զայս. եղիցին կամք քո: Եւ եկեալ միւսանգամ եդիտ ըզնոսա ի քուն. զի էին աչք իւրեանց ծանրացեալք: Եթող զնոսա՝ և գնաց. եկաց յաղօթս երրորդ անգամ. և դարձեալ զնոյն բան ասաց: Ցայնժամ գայ առ աշակերտան՝ և ասէ ցնոսա. ննջեցէք այսուհետև՝ և հանգերուք. զի ահա հասեալ է ժամ. և որդի մարդոյ մատնի ի ձեռս մեղաւորաց: Արի՛ք երթիցուք աստի. զի ահաւասիկ եհաս՝ որ մատնելոց է զիս: Եւ մինչդեռ նա զայն խօսէր՝ ահա Յուդաս մի յերկոտասանից եկն. և ընդ նմա ամբոխ բազում սրօք՝ և բրօք, ի քահանայապետէն և ի ծերոց ժողովրդեանն: Եւ որ մատնելոցն էր զնա՝ ետ նոցա նշան և ասէ. ընդ որում ես համբուրեցից՝ նա է, զնա ունիցիք: Եւ վաղվաղակի մատուցեալ առ Յիսուս՝ ասէ. ո՛ղջ եր վարդապետ. և համբուրեաց ընդ նմա: Եւ Յիսուս ասէ ցնա. ը՛նկեր, վասն որո՞յ եկիր. յայնժամ մատուցեալ արկին ձեռս ի Յիսուս. և կալան զնա: Եւ ահա մի ումն յայնցանէ՝ որք էին ընդ Յիսուսի, ձգեաց զձեռն, և եհան զսուր իւր՝ և եհար զծառայ քահանայապետին՝ և ի բաց եհան զունկն նորա: Ցայնժամ ասէ ցնա Յիսուս. դարձո՛ զսուր քո ի տեղի իւր. զի ամենեքեան՝ որք զսուր առնուցուն՝ սրով անկանիցին: Թէ համարիցիս՝ թէ ո՛չ կարեմ աղաչել զՀայր իմ. և հասուցանիցէ ինձ այսր՝ աւելի քան զերկոտասան դունդս հրեշտակաց:

Digitized by Google

Այլ զիաւրդ ընանիցին զիրք՝ թէ այսպէս պարտ է լինիլ։ Ցայնժամ ասաց Ցիսուս ցամբոխն. իբրև ի վերայ աւազակի ելիք սուսերօք՝ և բրօք ունել զիս. հանապազ առ ձեզ ի տաճարին նստէի և ուսուցանէի. և ոչ կալայք զիս։ Այլ այս ամենայն եղև՝ զի լցցին գիրք մարգարէիցն. յայնժամ աշակերտքն ամենեքին թողին զնա և փախեան։

Աղօթք հանդերձ ծունր դնելով զտէր աղաչեսցուք։

Ցէր ողորմեա։ (Երիցս կրկնեա։)

Եւ ևս խաղաղութեան"։ Օրհնութիւն և փառք"։

Հինգերորդ փոխ. Սաղմոս ՀԸ։

Ա՛ստուած օրհնութեան իմոյ մի՛ լռեր, զի բերան մեղաւորի բերան նենգաւորի բացաւ ի վերայ իմ։

Խօսեցան զինէն լեզուաւ նենգաւորաւ, և բանիւատելութեան պաշարեցին զիս։

Մարտեան ընդ իս ի տարապարտուց, փոխանակ սիրոյ իմոյ մատնէին զիս, այլ ես յաղօթս կայի։

Հատուցին ինձ չար փոխանակ ընդ բարւոյ, ատելութիւն փոխանակ սիրոյ իմոյ։

Կացո՛ ի վերայ նորա մեղաւոր, սատանայ կացցէ ընդ աջմէ նորա։

Ի դատաստանի իւրում ելցէ դատապարտեալ, և աղօթք նորա ի մեղս դարձցին։

Եղիցին աւուրք նորա նուազ, և պաշտելութիւն նորա զայն այլ տալցէ։

Digitized by Google

Եղիցին որդիք նորա որք և կին նորա այրի. սահեսցին փովոխեսցին, որդիք նորա մուրացք եղիցին, և ելցեն ի բնակութենէ իւրեանց։

Քննեսցէ փոխատու զամենայն ինչս նորա, և յափշտակեսցեն օտարք զվաստակս նորա։

Մի՛ գոցի օգնական նմա, և մի՛ ոք ողորմեսցի ի վերայ որբոց նորա։

Եղիցին որդիք նորա ի սատակումն, և յաջորդէ ջնջեսցի անուն նորա։

Յիշեսցին մեղք հօր նորա առաջի տեառն, և մեղք մօր նորա մի՛ ջնջեսցին, և եղիցին առաջի տեառն յամենայն ժամ։

Սատակեսցի յերկրէ յիշատակ նորա. փոխանակ պի ոչ յիշեաց առնել ողորմութիւն։

Հալածեաց զայր աղքատ և զտնանկ, սպանանել զայն որ խոնարհ է սրտիւ։

Սիրեաց պանէծս և ելցէ նմա. ոչ կամեցաւ զօրհնութիւն, հեռի եղիցի ի նմանէ։

Զգեցաւ զանէծս որպէս հանդերձ, մտցէ որպէս ջուր ի փոր նորա, և որպէս ձէթ ընդ ոսկերս նորա։

Եղիցի նմա որպէս հանդերձ պի ագանի, որպէս գօտի որ ածի հանապազ ընդ մէջ։

Այս գործ է այնոցիկ՝ ոյք չարաչաճս կային զինէն առ տէր, և ոյք խօսէին չար զանձնէ իմմէ։

Այլ դու տէր տէր՝ արա ընդիս ըստ անուան քումմ,

Digitized by Google

զի քաղցր է ողորմութիւն քո, և փրկեա զիս զի աղքատ և տնանկ եմ ես։

Սիրտ իմ խռովեցաւ ի փորի իմում, և ես որպէս ստուեր ի խուսափիլ իմում պակասեցայ, և թօթափեցայ որպէս մարախ։

Ծունկք իմ տկարացան ի պահոց, և մարմին իմ այլագունեցաւ յիւղոյ։

Եղէ ես նախատինս նոցա, տեսին զիս և չարժեցին զգլուխս իւրեանց։

Օգնեա ինձ տէր Աստուած իմ, և փրկեա զիս ըստ ողորմութեան քումմ։

Ծանիցեն զի ձեռն քո այս է, և դու տէր արարեր զայս։

Նզովեսցեն և դու օրհնեսցես. որք յարուցեալ են ի վերայ իմ զամօթ կրեսցեն. այլ ծառայ քո ուրախ եղիցի ի քեզ։

Զգեցցին զամօթ որք չարախօս կային զանձնէ իմմէ, և արկցեն սպէս կրկնոց զամօթ իւրեանց զիւրեամբք։

Այլ ես խոստովան եղէց առ տէր յոյժ բերանով իմով, և ի մէջ բազմաց օրհնեցից զքեզ։

Զի եկաց նա ընդ աջմէ տնանկին, ի փրկել զիս յայնցանէ՝ որք հալածեն զանձն իմ։

Սաղմոս ՃԺ։

Ասաց տէր ցտէր իմ նիստ ընդ աջմէ իմմէ, մինչև եղիցեմ զթշնամիս քո պատուանդան ոտից քոց։

Digitized by Google

Գաւազան զօրութեան առաքեսցէ քեզ տէր ի Սիօնէ, և տիրեսցես դու ի մէջ թշնամեաց քոց։

Ընդ քեզ է սկիզբն աւուր զօրութեան. ի վայելչութիւն սրբոց քոց յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ։

Երդուաւ տէր և ոչ ևս զղջասցի, թէ դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի, և տէր ընդ աջմէ քումմէ։

Խորտակեսցէ յաւուր բարկութեան զթագաւորս. դատէ զհեթանոսս և բազում առնէ զնաւրուածս, և խորտակեսցէ զգլուխս բազմաց յերկրի։

Ջուղխս ի ճանապարհի արբուսցէ. վասն այսորիկ և բարձր արասցէ զգլուխս։

Սաղմոս ՃԺ։

Յոստոյման եղէց քեզ տէր բոլորով սրտիւ խմով, ի խորհուրդս ուղղոց ի ժողովուրդս մեծ են գործք տեառն, և քննեալ են յամենայնի կամք նորա։

Խոստովանութիւն և վայելչութիւն են գործք նորա. արդարութիւն նորա մնայ յաւիտեանս յաւիտենից։

Ցիշատակ արար զքանչելեացս իւրոց ողորմած զթած է տէր, կերակուր տայ երկիւղածաց իւրոց։

Ցիշեաց յաւիտենից զուխտ իւր, զզօրութիւն գործոց իւրոց պատուիրեաց ժողովրդեան իւրում։

Տալ նոցա զժառանգութիւն հեթանոսաց, և գործք ձեռաց նորա արդարութիւն և իրաւունք են։

Digitized by Google

Հաւատարիմ են յամենայնի պատուիրանք նորա, հաստատեալ են յաւիտեանս յաւիտենից, արարեալ են ճշմարտութեամբ և ուղղութեամբ։

Փրկութիւն առաքեաց տէր ժողովրդեան իւրում. պատուիրեաց յաւիտենից զուխտ իւր, սուրբ և անեղ է անուն նորա։

Սկիզբն զգօնութեան երկիւղ տեառն, իմաստութիւն բարի ամենեցուն ոյք առնեն զնա, և օրհնութիւն նորա մնայ յաւիտեանս յաւիտենից։

Կցորդ՝ ձայնիւ։

Յօսե՛ցա՛ն ղինէն լեզուաւ նենգա՛ւո՞րա՛ւ. և բանիւ ա՛տելութեա՛՞ն զիս պաչարե՛ցի՛ն։

Զա՞ր կապանա՛ց մարդկան լո՛ւծիչ որ կապե՛ցար ընդ կապելո՛ւն. զիս արձակեա յինքնա՛կապէ՛ս մե՛ղաց կապից դը՛ժոխայո՛ւն. ո՛ր ընդ մեղո՛ք պարտաւո՛րին կացեր անմե՛ղդ ի յատենի. յորժամ վաւոք դաս հա՛յրենի մի՛ դա՛տեսցես զիս ը՛նդ նոսի՛՞ն։

Պա՞տկառանո՛՞ք հինն Ադա՛մայ որ ձաղե՛ցար վասըն նորա՝. ջընջեա զամօթ մե՛ղա՛ց լըրբին որով վերեաս իմ ծածկե՛ցին. որ ներեցե՛՞ր չար ծառա՛յին ածել ձեռո՛՞ք քեզ ապտակին. հար ուժգնակի զդէ՛մըս չարին որպէ՛ս և զիս եհա՛՞ր ուժգի՛՞ն։

Զա՞հըն լուսո՛՞յ յառա՛՞ւօ՛տին ի յուրբա՛թուն հընոյ զատկին. կայր առաջի զա՛տա՛ւորին ծառայն նը՛ոտէ՛ր ի յատենին. ի՛ հարցանե՛՞լ Պիղա՛տոսի տէրն ոչ ա՛նէ՛՞ր պատասխանի. զի կանխասաց զկրը՛՞ն

Digitized by Google

լըցցի ի՝զէ՛ ես մարդ որ ոչ խօսի՞։

Ի՞մ[ակա՞ն դաւք զինուորա՛ցն արկին հա՛նդե՛րձ նախատանա՛ց. այնմ որոյ զգեստն է՝ լոյս փառաց իբրև՝ զո՛թոց զինքեա՛մբ արկա՛ծ. ի՛ ծունը իջեա՞լ կատա՛կէ՛ին զգլուխն եղե՛գա՛մբ հարկանէին. պըտակ ի փշոց բոլորե՛ին ը՛զփուշ մեղացըն բա՛րձոլի՞ն։

Ս[ակալի՞ն քերովբէ՛ից բառնայր ինքեա՛մբ ը՛զփա՛յտ խաչին. մինչ ի տեղի Գողգոթային յորում ե՛դեալ մա՛րդն առաջին. ե՛տուն ըմպե՞լ գինի զմո՛ռաեա՛լ և կերա՛կուր լեղեաւ խառնեալ. որով զպըտղոյն դա՛ռը՛ն ճաշա՛կ փոխեա՛ց մեզ քաղցր և ա՛խորժա՞կ։

Վ[ընակա՞նքըն զա՛րհո՛ւրեա՛լ տեսին ը՛զտէ՛րըն մերկացեա՛լ. և զհանդերձն բա՛ժանեա՛լ պա՛տմո՛ւճանին վի՛ճակ արկեա՛լ. ը՛զձեռսն և զո՞տսն ծ՛ակէ՛ցին ըստ յայտնա՛պէ՛ս Դաւթեան ձա՛յնին. ընդ փա՛յտ խաչին բև՛է՛ռեցին զմա՛տո՛ւնսն որ գրեաց ի տա՛խտակի՞ն։

Ջ[ինի՛ Ո՞ր[թիւ։

Սրբոյ աւետարանիս Յ[իսուսի Ք[րիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Գ[լ՝ 26. հմ[՝ 57։

Վասն Զաքէոսեանց Տէառն Մերոյ Յ[իսուսի Ք[րիստոսի։

Եակ նոցա կալեալ զՅ[իսուս տՀին առ Կայիափայ քահանայապետ՝ ուր դպիրք և ծերք ժողովեալ էին։ Եւ Պետրոս ետ նորա երբայր բացագոյն մինչև ի

սրտի քահանայապետին. և մտեալ ի ներքս նստէր ընդ սպասաւորսն տեսանել զվատաբածն: Իսկ քահանայապետն՝ և ամենայն ատեանն խնդրէին սուտ վկայութիւն զՅիսուսէ. զի սպանցեն զնա: Եւ ոչ գտանէին ի բազմաց սուտ վկայիցն մատուցելոց. յետոյ մատուցեալ երկու սուտ վկայք: Ասէին թէ, սա ասէր՝ կարող եմ քակել զտաճարն Աստուծոյ. և զերիս աւուրս չինել: Եւ յարուցեալ քահանայապետըն ասէ ցնա. չտաս ինչ պատասխանի. զինչ դոքա ամբաստանեն զքէն: Եւ Յիսուս՝ լուռ կայր. պատասխանի ետ քահանայապետն և ասէ ցնա. երդըմնեցուցանեմ զքեզ յԱստուած կենդանի. զի ասասցես մեզ՝ թէ դո՛ւ ես Քրիստոս Որդի Աստուծոյ: Ասէ ցնա Յիսուս. դու ասացեր. բայց ասեմ ձեզ. յայսմհետէ տեսանիցէք զորդի մարդոյ նստեալ ընդ աջմէ զօրութեանն՝ և եկեալ ընդ ամպս երկնից: Ցայնժամ քահանայապետն պատառեաց զհանդերձս իւր, և ասէ. հայհոյեաց. զի՞ ևս պիտոյ են մեզ վկայք. ահա արդ լուայք զհայհոյութիւն նորա: Զինչ հաճոյ է ձեզ. նոքա պատասխանի ետուն և ասեն. մահապարտ է: Ցայնժամ թքին ընդ երեսս նորա. և կրծփեցին զնա. և ոմանք ապտակեցին, և ասեն: Մարգարէացա մեզ Քրիստոսդ՝ ո՛վ է՝ որ հարն զքեզ: Իսկ Պետրոս նստէր արտաքոյ ի դաւթին. մատեաւ առ նա աղախին մի, և ասէ. և դու ընդ Յիսուսի Գալիլեացւոյ էիր: Նա ուրացաւ առաջի ամենեցուն և ասէ՝ թէ ոչ գիտեմ զինչ խօսիդ: Եւ իբրև եկ նա

արտաքս քան զդուռն. եւտես զնա այլ կին մի. և ասէ ցայնոսիկ՝ որք անդն կային. և սա ընդ Յիսուսի Նազովրեցւոյ էր: Եւ դարձեալ ուրացաւ երդմամբ. թէ ոչ գիտեմ զայրն: Եւ յետ սակաւ միոյ մատուցեալ որք կային անդ՝ ասեն Պետրոս՝ արդարև և դու ի նոցանէ ես. քանզի և խօսք քո յայտ առնեն զքեզ: Ցայնժամ սկսաւ նզովել և երդնուլ. թէ ոչ գիտեմ զայրն. և իսկոյն հաւ խօսեցաւ: Եւ յիշեաց Պետրոս զբանն Յիսուսի՝ զոր ասաց՝ թէ մինչչեւ հաւու խօսեալ իցէ՝ երիցս ուրասցիս զիս. և ելեալ արտաքս՝ եւաց դառնապէս:

Աղօթք հանդերձ ծունր դնելով զտէր աղաչնացուք:
Տէր ողորմեա: (Երկիր հրճնեա:)
Եւ ևս խաղաղութեան": Օրհնութիւն և փառք":
Վերջերորդ փոխ. Սաղմոս ՃԺԷ:

Յոստովան եղելոցք տեառն, զի բարի է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա: (Տես ի Քիւն. 177:)
Կրկին՝ Ձայնիւ:

Յո՛ստովա՛ն եղե՛ր ո՛ւք տեա՛ր՛ն զի բա՛րի՛՛ է՛, զի յաւի՛տեա՛ն է՝ ո՛ղորմո՛ւթիւն նորա՛:

Տա՛ր ածեա՛լ ձեւք ը՛նդ ձե՛ռա՛ց ոք ընդ ոտի՛ց ընթանալեա՛ց. վայ՛ր ընդ վայրի դա՛ր՛ն սլրաղո՛յ կեանք ը՛նդ մահու փո՛խարկելո՛վ. ի՛ մէջ երկո՛ւց անօ՛րինա՛ց կա՛յր մնրկա՛ցեա՛լ տուո՛ղն օրինա՛ց. զոր ոչ տեսին ա՛զգը՛ն կուրա՛ց բա՛ց ի՛ միոյն յաւա՛զակա՛՛ց:

Digitized by Google

Ո՞պէ՞ս արե՛գա՛կանն գիտուն արա՛ր գիշերա-
նման. զը՛ստուե՛րըն քօղ արկ մե՛րկութեա՛ն զի մի՛
տեսցէ ա՛կն անա՛ծին. ի՛ մէջօրեա՛յն նըսեմա՛ցա՛ւ
յորժամ Ա՛դա՛մ մեղօք մեռա՛ւ. ի յիննելորդն ի՛
լո՛յս դարձաւ յո՛րժա՛մ մահուա՛մբ մա՛հըն լուծա՛ւ։

Յո՞ղէր արտո՛սըր ցա՛ւա՛դին մա՛յր տեառն ո՛ւ
կո՛յր մերձ առ խաչին. յորժամ լըսէր ը՛ղձա՛բաւին
քարբառե՛լոյ ի՛ւր Միածնին. եառուն քայա՞խ խառ-
նեա՛լ լե՛ղի այնմ որ բը՛ղխեա՛ց դեռ յա՛դենի. և ի
վիմէն վը՛տա՛կ բարի ա՛րբո՛յց տոհմին դա՛ռնացողի՛։

Ինչո՞ծեալ յերբո՞ւրդ ժամո՛ւ օ՛ձին գմիտըս նախնւո՛յ
մօրն Եւայի. ի վեցն անկեալ մա՛րդն ա՛ռա՛ջին հա-
ւա՛նական բա՛նիւ նորին. ի՛ սոյն ժամո՞ւ տէրն ի
խա՛չին զի քաւե՛սցէ՛ զմեղըս նոցին. և յորժամ ե՛լ
Ա՛դա՛մըն հին ե՛ւ զա՛ւազակն ի մէ՛ջ դրախտի՛ն։

Փա՞րելի՛ բարբա՛ռ ընդ իմ է՛լի է՛լի առ Հայր
գոչէ՛ր. զհոգին կամաւ Հօ՛ր ա՛ւանդէ՛ր գհո՛գի՛ա
մարդկան նո՛յն ընծայէ՛ր. ե՛րկիր հիմա՞մբ սասանե՛-
ցա՛ւ և վարագո՛յրն ընդ մէջ հերձա՛ւ. վէմք ի յին-
քեանց պա՛տա՛ռեցան և՝ գե՛րեզմանք մա՛հո՛ւ բա-
ցա՛ւ։

Ք՞ա՞րոզի՛ ի աքանչե՛լեա՛ց Աստուած մա՛րմնո՛վ
վասն իմ խաչեա՛լ. մերով բնութեամբը՛ն մե՛ռանի
Աստուած ա՛նմահ խո՛տովանի. կը՛րկնալըտա՞կ
կո՛ղին ա՛ղբե՛ւրք եկեղե՛ցի՛ իւր հաստատի. ջրովըն
մաքրի զա՛րի՛ւնն ըմպէ՛ զո՛ղի՛ ընդ Հօր փառա՛ւո-
րէ՛։

Digitized by Google

ՋԿԵՔ՝ Ո՞ՐՔԻՒ

(Զայս Աւետարանս ի ըՆՅՆ ընկերանուագսն։)

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յօհաննու։

Գլ՝ 18. համ՝ 2։

Վասն Մատնուելեան Տէրունի մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Գիտէր և Յուդա, որ զնա մատներոյ էր՝ զտեղին։ զի բազում անգամ ժողովեալ էր անդր Յիսուս աշակերտօքն հանդերձ։ Եւ Յուդայի առեալ ընդ իւր զգունդն, և ի քահանայապետէն և ի փարիսեցւոցն սպասաւորս, գայ անդր ջահիւք՝ և լապտերօք՝ և զէնուք։ Իսկ Յիսուս իբրև եհաս զայն ամենայն եկեալ ի վերայ նորա, ել և ասէ ցնոսա։ զո՞ խնդրէք։ Պատասխանի եհան նմա, զՅիսուս Նազովրեցի. ասէ ցնոսա Յիսուս, ես եմ. կայր ընդ նոսա և Յուդա՝ որ մատնէրն զնա։ Իբրև ասաց՝ թէ ես եմ, յետս յետս չոգան՝ և զարկան զգետնի։ Դարձեալ եհարց զնոսա. զո՞ խնդրէք. նոքա ասեն, զՅիսուս Նազովրեցի։ Պատասխանի ետ նոցա Յիսուս. ասացի ձեզ թէ ես եմ. արդ՝ եթէ զիս խնդրէք՝ թո՛ղլ տուք զդոցա երթալ։ Զի լցցի բանն՝ զոր ասաց. թէ զոլ՝ եւուր ցիս՝ ո՛չ կորուսից ի նոցանէ՝ և ո՛չ զոք։ Իսկ Սիմոն Պետրոս քանզի ունէր զսուր, ձգեաց զնա. և եհար զքահանայապետին ծառայ՝ և ի բաց էառ զունկըն նորա զաջոյ. և էր անուն ծառային Մաղքոս։

Digitized by Google

Ասէ Յիսուս Պետրոսի. ձրկ զսուրդ անգրէն ի պատեհանս իւր. զբաժակն, զոր ետ ինձ Հայր՝ ոչ ըմպիցեմ զնա: Իսկ գունդն, և հազարապետն, և ապասաւորքն Հրէից կալան զՅիսուս՝ և կապեցին: Եւ առաջին զնա նախ առ Աննա՝ որ էր աներ Կայիափայի, որ քահանայապետն էր տարւոյն այնորիկ: Այս այն Կայիափայ էր՝ որ խրատն ետ Հրէից, եթէ լաւ է ազգն միոյմ մեռանիլ ի վերայ ժողովրդեանն: Եւ գերթացին զհետ նորա Սիմօն Պետրոս՝ և միւս աշակերտն. և աշակերտն այն՝ քանզի ծանօթ էր քահանայապետին՝ եմուտ ընդ Յիսուսի ի գաւիթ քահանայապետին: Եւ Պետրոս կայր առ գրանն արտաքոյ. ել միւս աշակերտն՝ որ էր ծանօթ քահանայապետին՝ և ասաց դրընեալանն՝ և եմոյծ ի ներքս զՊետրոս: Ասէ աղջիկն՝ որ դռնապանն էր, Պետրոս. մի թէ և դու յաշակերտաց առնն այնորիկ իցես. և նա ասէ՝ ոչ եմ: Կային անդ ծառայքն և սպասաւորք խարոյկ արկեալ՝ քանզի ցուրտ էր՝ և ջեռնուին. կայր ընդ նոսա և Պետրոս՝ և ջեռնոյր: Եւ քահանայապետն հարց զՅիսուս՝ վասն աշակերտացն՝ և վասն վարդապետութեան նորա: Պատասխանի ետ նմա Յիսուս. ես յայտնապէս խօսեցայ յաշխարհի. ես յամենայն ժամ ուսուցի ի ժողովրդեանն, և ի տաճարի անդ՝ ուր ամենայն Հրէայքն ժողովեալ էին. և ի ծածուկ ինչ ոչ խօսեցայ: Զի՞ հարցանես զիս. հարց զայնոսիկ՝ որք լուան, եթէ զինչ ասացի ցնոսա. ահաւանիկ նոքա գիտեն զինչ ասացի ես: Իբրև նա

Digitized by Google

զայս ասաց, մի ոմն ի սպասաւորացն՝ որ անդ կայր, էած ապտակ Յիսուսի՝ և ասէ. այդպէս պատասխանի տաս քահանայապետիդ: Եւ Յիսուս ասէ ցնա. եթէ չար ինչ խօսեցայ՝ վկայեա վասն չարին. իսկ եթէ բարի, ընդէր հարկանես զիս: Եւ առաքեաց զնա Աննա կապեալ առ Կայիափայ քահանայապետ: Եւ Սիմոն Պետրոս կայր անդ՝ և ջեռնոյր. ասեն ցնա. մի՛թէ և դու յաշակերտաց անտի նորա իցես. նա ուրացաւ և ասէ՝ թէ չեմ: Եւ ասէ մի ոմն ի ծառայից քահանայապետին՝ ազգական այնորիկ, զորոյ զունկն եհատ Պետրոս. ոչ ես իսկ տեսի զքեզ ի պարտիզի անդ ընդ նմա: Դարձեալ ուրացաւ Պետրոս. և վաղվաղակի հաւ խօսեցաւ:

Եւ ասա մաղթանք՝ Հոգւոյն”: Քարոզ՝ վասն հանգուցեալ”: Աղօթք՝ Քրիստոս Որդի Աստուա”:

(Տես ի թիւն. 36:)

Կանոնագլուխ ԴՋ: Ողբաձայն:

Ինչանք հալածեցին զիս ի նանիր. ա՛լէ՛լո՛՛ւ-իա՛. և ի բանից քոց երկեաւ սիրտ իմ. ա՛լէ՛լո՛՛ւ-իա՛:

Ցնծացայ ես ի բանս քո, որպէս այն՝ որ գտանէ աւար բազում:

Ջմեղս ատեցի և անարգեցի, և զօրէնս քո սիրեցի:

Եօթն անգամ յաւուր օրհնեցից զքեզ, վասն իրաւանց և արդարութեան քո:

Խաղաղութիւն բազում է այնոցիկ, ոյք սիրեն զո-

Digitized by Google

ըէնս քո, և ոչ գոյ ի նոսա գայթակղութիւն։

Սպասեայի փրկութեան քումդ տէր, և զպատուիրանս քո սիրեցի։

Պահեաց անձն իմ զվկայութիւնս քո, և սիրեաց զնոսա յոյժ։

Պահեցից զպատուիրանս՝ և զվկայութիւնս քո. զի ամենայն ճանապարհք իմ առաջի քո են։

Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո տէր. ըստ բանի քումդ իմաստուն արա զիս։

Մտցեն աղօթք իմ առաջի քո տէր. և բանիւ քո փրկեա զիս։

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս քո, յորժամ ուսուցանես ինձ զարդարութիւնս քո։

Խօսեսցի լեզու իմ զբանս քո. զի ամենայն պատուիրանք քո արդարութեամբ են։

Եղիցի ձեռն քո ի կեցուցանել զիս. զի զպատուիրանս քո ընտրեցի։

Ցանկացայ փրկութեան քումդ տէր. և օրէնք քո խօսք իմ էին։

Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ. և իրաւունք քո օգնեսցեն ինձ։

Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ. խնդրեա զծառայս քո, զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ։

Փառք Հօր և՝ Աւժմ և միշտ՝ ա՛լէ՛. ա՛լէ՛։

Ձկնէ Քարոզ

Եւ ես խաղաղութեան՝։ Օրհնութիւն և փառք՝։

Օրհնութիւն Քո

Ա՛րծաթախնդրութեա՞մբն մոլեա՛լ ցո՞ւղա՛, զիւր զգա՛ծ զգալարդա՛պետն ընդ երեսո՛ւն արծաթո՛յ հր՛րէ՛ցըն մատնէ՛ր։ Ը՞նդ ո՛րում ես համբաւեա՛ց ջից ասէ՝ ը՛ստա՞ կալարուա՛ք. ո՛վ համբո՛յր նո՛ւիրութեան, նը՛չա՞ն և՞ ա՛ռիւծ մահա՛ն։ Մե՛րիացա՛ւ յինքե՛նէ զԱստուածա՛յի՞ն Սուրբ Հոգին. և ըզգեցա՛ւ ըզսատա՛նայ, որպէ՛ս հանդի՞ւծ ա՛րկաւ զիւրեա՛ն։

Ի՛ դիշերին յո՛րում մատնէ՛ր փրկիչըն մեր ի մա՞հ խա՛չի՞, ել ի լեա՛ռըն Ձիթենեաց, ա՛ղօթելո՛վ զայս ասէ՛ր. Հա՛յր անցո՞ յինէ՛ն զբաժա՛կս։

Ո՛ր ներատես ի քրովբէա Ա՛տուա՞ծ բա՛նդ. ա՛յսօ՛ր վասըն մե՛ր խոնարհութեամբ ներա՛ծ ի՞ լեքինը՛ն Ձիթենեաց. օ՛րհնեմք զքա՞զ անդա՛դար երգո՛վ։ Ո՛ր համագոյդ ես խո՛րհրդոցըդ հա՛յրե՞նի, ա՛չակերտա՛ց քոց ծանո՛ւցի՞ր ը՞զխորհուրդ քո՛ գալըստեանն. օ՛րհնեմք՝՝։ Ո՛ր ամենայնից ես արա՛րիչ և ըստեղծի՛չ կենդա՛նո՞ւթեան. ա՛յսօ՛ր ըզծածկեա՛լ խորհո՛ւրդ երկրորդութեանըդ յա՛յտնեցեր եկեղե՛ցւոյ սըրբո՛յ քո. օ՛րհնեմք՝՝։

Ը՛զքեզ օրհնեմք սբ բա՛շխոդ ես բարո՛ւթեա՞նց,

Digitized by Google

և հայցե՛մք որպէս յ՛ մա՞ղտասիրէ, ը՛նդ մօ՛ր քո ընտրե՛լոցն զիմա՛նալո՞ւ աչխա՞րհն։ Զի՛ դու ես ասէր յոմն հա՛յցէ՞ր մա՛յրըն հաւատո՛վ հանդերձ որդւո՛վք սը՞ղբեցեղովք ը՞նդ աջմէ քո զփառս և՛ յահեկէ. ընդ ո՛րս և մե՛ք ա՛ղաչեմք զի դա՛սեսցե՞ս ընդ ստո՛ւերըքս քո՞։ Ա՛յլ դու բաթձրեալ փը՛րկիչ որ վառն մե՛ր խառնարհեցա՞ր, արժանի՛ արա ը՛զմեզ ըմպել զբաժա՛կ պատուի՛րանի կե՛նաց քոց տէր. որով կացցո՛ւք յաջմէ՛ քումմէ ի հա՛ղեղբձեա՞լ քո՛ւմ գաւրաւեա՞ն։

Հոգ. Ա՛ստուածվեղի հողմոյ նը՛մանն, ահեղագո՛չ աստուիկ հընչմամբ, ե՛բեւեցա՛ր ի վե՞րնա՛տանն, հոգի՛դ գաւուն ե՛րկոտասան. ո՛րք առ ի քէն մըկըրտե՛ցան, որպէս զոսկի՛ հրով մաքրեցան. մա՛քրեա՛ ի մէ՛նջ ըզմէ՞դ մե՛ղաց, և ը՛զդեցո՞ ը՛զլոյս փառա՞ց։ Է՛ակիր քրիստոս Աստուածաբար, գաւեղ զաչխա՛րհս ի՛չխանաբար, ը՞նդ արդա՛րութիա՛ն և ը՞նդ մե՛ղաց, և ընդ չարին դա՛տաստանաց. բա՛ցեր ըզգանձդ անհիւթա՛կան, պա՛րգեւս ետո՛ւր որդւոց մարդկան. մա՛քրեա՛՝՝։ Սէ՛րն ի սկզբ զսէրդ առա՛քեաց, յինքըն զանգա՛ման իւր քեւ յօդեաց. զեկեղեցի՛ իւր զո՞ր չի՛նեաց, եօ՛թըն սեամբ քո՛ հաստատեաց. ա՛նեաես ի՛ նմա եղ զառա՛քեալն, եօթնեա՛կ չնորհ-

Digitized by Google

հո՛ք քո զարդարեաց. մա՞քրեա՛'':

Թա՛գաւոր անմա՞հ արարի՛չ յաւիտենի՛ց, մարդասիրութեամբըդ քո՞ խընայեա յա՛նձինըս մեր. ստեղծի՛չ կենդա՛նեաց և հա՛նգուցի՞չ նընչեցելո՛ց: Ի՛ խաչին բեւեռե՛ցար զմահու լուծե՛ր զիչխանութիւն. յա՛ւիտենից ըղնընչե՛ցեալսըն վերածե՛ր յա՛նմահ ի կեանս. ստե՛ղծի՛չ'': Ա՛րժանաւորաց քոց աղօթիւք յիչեա ըզմե՛ք ըզնընչե՛ցեալսն, յորժամ գայցե՛ս անձա՞ռ փառօք հատուցանել մա՛րդկան ըստ գործս. և՛ մեր նընչեցելոցն չնորհեա՛ դասի՞լ ը՛նդ սուրբսը քո՛:

Ըզքե՛զ կոյս և մա՛յր և բնակա՛րան Աստուա՛ծային ներմարդո՛ւթեանն, գոհա՛բանեմք և վերօ՛րհնեմք զեղեալ փը՛րկող կենդա՛նութեան ազգի մարդկա՛ն. վասն որո՛յ ըղքեզ Աստա՛ծածին և կո՛յս՝ բա՛րեբանեմք ըզմա՛յր և զաղախին վրկչի՛ն մե՛ր որո՛յ: Ծընո՛ւնդըն Հօր և հին ա՛ւուրց անժա՛մանակն յաւիտենի՛ց. ժամանակա՛ւ յորովայնի՛ քումմ բնա՛կեցաւ և ի՛ Հօրէ ո՛չ մեկնեցաւ. վասն որոյ'': Ծնեա՛լն ի քէն ի խաչ ե՛լեալ, ե՛ւ ի յաթոռ փառա՛ց ընդ Հօ՛ր. անարգեա՛լ ի մարդկանէ, փառա՛տրութեա՛մբ էութեա՛մբ երկը՛րպագեալ. վասն որոյ'': Ըզքե՛զ ոչ միա՛յն որդիք մարդկա՛ն, այլեւ վե՛րի՛ն զօրութիւնք.

Digitized by Google

դա՛պ անմարմնոց հոգեղինա՞ց հրեղինա՞ց զո՛ւարթ-նոց և հրե՛չտակաց, զո՞ հաբանե՛ն և վերօրհնե՛ն և փա՛ռաւորեն ըզմայր և զաղա՛խին փըրկչի՛ն մե՞-ր ո՞յ։

Ա՛պաւինեցաք ի խա՛չ քո՞ արարի՛չ յաւիտենի՛ց, որ եառո՛ւր մեզ պահա՛պան յա՛ղթօղ ընդդէ՛մ թըշ-նամւոյն. ա՛ղաչե՛մք սովաւ վը՛րկի՞չ պահպանեա՞ զանձինըս մե՞ր։ Բա՛յձրեա՛լ թագա՛ւոր ո՛ր վասըն մե՛ր ելեր ի խա՛չ, և՛ բարձեր սովաւ զյա՛ճանս նախաստե՛ղծի՛ն Ա՛դամայ. ա՛ղա՛՛։ Գլո՛ւխ սո՛ւրբ հաւատոյ և փա՛յտ կենա՛ց մարդկան յայտնեա՛լ. զո՛ր տեսեա՛լ այսոյն պը՛ղծոյ կոլծանեցաւ ա՛նկանգնելի. ա՛ղա՛՛։ Դո՛ղացա՛ւ թըշնա՛մի՛ն ընդ յայտնի՛լ սըր-բոյ խաչին, և՛ ի յահ՛ փառաց նո՛ր կոլծանեցաւ յա՛նդունդս երկրի. ա՛ղա՛՛։ Ե՛րկինըք ցընծա՛յի՛ն և երկի՛ր ուրախանայր, քա՛նզի փըրկի՛չ ցուցաւ սո՛ւրբ խաչն և լո՛ւսատու տի՛եզերաց. ա՛ղա՛՛։

Փառք Հո՛ր եւ Որդո՛ւ եւ Հոգւո՛յն Սրբո՛յ.

Ի՛սկ անօրէնն աչակե՛րտին թողեալ ըզգո՛ւեղծ սիրոյ նորա՛, և փութա՛յր ա՞ռ քահա՛նայսն. ասէր ի՛նձ զի՞նչ կամի՛ք տալ, զի մա՛տնեցի՛ց ըզվա՛րդա-պե՛տն։

Digitized by Google

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ժո՛ղովեա՛լ Հըրէ՛իցըն կըշռեցի՛ն արծաթ բազում. առեալ տալա՛ն առ Գիդաւոս, ասեն ի՛ խա՛չ հա՛ն ի խաչ, զի հա՛յհոյի՛չ է՛ օրինա՛ց:

ՄԱՂԹԱՆՔ

Փառք հրաշափառ չարչարանաց" : (Տես ի Քիւն. 42:)

Փարոզ՝ վասն պատանելոյ" : Աղօթք՝ Գոհանալոյ գքէն" : (Տես ի Քիւն. 191:)

Ալէլուիա. ալէլուիա. ալէ՛լուիա:

Զարթեա՛ւ աղեղն քո, զենաս կապարճից քոց արբեցուցեր. զգեաս ցրուեցեր. զերկիր դողացուցեր ի սաստկութենէ անձրեւի, որք անցանեն ընդ սա: Անդո՛ւնդք աղաղակեցին մեծապէս. լոյս փայլմանն արեգական արգելաւ. և ծագումն լուսնին դադա՛րեցա՛ւ:

Ալէ. Մատնեցա՛յ և ոչ ելանէի. աչք իմ տկարացան յաղքատութենէ: Աղաղակեցի՛ առ տէր զօրհանապազ. և համբարձի առ քեզ ը՛զձեռս իմ:

Փա՛ռք և երբ". Ա՛յժմ և միշտ և":

Ալէլուիա. ալէ՛լուիա. ալէլո՛ւիա՛՞:

Մաղթանք՝ Գոհութեամբ և ճշմարիտ" :
(Տես ի Քիւն. 192:)

կարգաւորութիւն հասարակաց աղօթից առաւօտու ժամուն։ Որ կատարի ի դէմն Որդւոյն Աստուծոյ. որ ե- բեւեցաւ իւղաբերչին։

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն։
Հայր մեր որ յերկինս ես"։

Լցաք առաւօտու ողորմութեամբ քով. ցնծացաք և ուրախ եղաք զամենայն աւուրս կենաց մերոց։
Ուրախ եղաք՝ փոխանակ։ (Տես ի Ցիւն. 46։)

ՀԱՐՑ ԳԶ

Իջեր յե՛րկնի՛ց անըսկի՛զբն որդի. ի հողեղէ՛ն ի բնութենէ՛ մարդկա՛ն զչա՛րչարանըս յա՛նձն առեր. օ՛րհնե՛մք ըզքեզ ո՞ր էի՞ր յառաջ քա՛ն զա՞ մեհնայն յա՛ւիտեա՞ն։ Որ ասացե՛ր բանի՛ւ լինե՛լ ամե՛նայն երկրի, ի յերկրի՛ յատենի՛ կացեալ տեսանէ՛ն արա- րածք. օ՛րհ"։ Ցորմէ դո՛ղա՞ն զըւարճո՛ւնք երկ- նից, այսօր եկիր կամա՛ւ ի խա՛չ զե՛ղարդեամբըն խո՛ցեցար. օ՛րհ"։

Գ. Ըզտէր օ՛րհնեցէ՛ք բարձր ա՛րարէ՛ք յաւիտեա՞ն։
Փառք Հօ՛ր եւ Որդւոյ եւ Հոգւո՞յն Սրբոյ։

Եւ զինա՛ւորըն զե՛ղարդեամբը՛ն յարձակեա՞լ, խո՛ցեա՞ց զկող կե՛նարարին. բարձր"։

Այժմ եւ մի՞շտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ուստի աղբիւր կենդանա՛րար բըղխեա՞լ, լե՛ա՞ց

Digitized by Google

գտեւ՛զերս ի մե՛ղաց. բարձը՛»։

ԿԱՐՈՂ

Եկեալքս ամենեքեան ի սուրբ»։ (Տես ի Թիւն 52։)

ՄԵԾԱՑՈՒՍԱՅՔ ԳՂ

Լո՛յս լուսո՛յ մայր, և կենարա՛ր բանին բնա՛կա՛րա՞ն. քեզ երանի՛ցեն ա՛զգ և ազի՛նք ամենա՛յն։ Սահղծո՛ղի՛ն մայր, և հր՛նուէեան կե՛րպի նորո՛գո՞ղի՞ն. քեզ»։

Փառք Հօր եւ». Այժմ եւ միշտ»։

Լո՛յս ծագե՛ցաւ ի քէն, նըստե՛լոցս ի խաւա՛րի. քեզ»։

Քարոզ՝ Սուրբ զԱստուա»։ Աղօթք՝ Ընկալ տէր»։ (Տես ի Թիւն. 55։)

ՈՂՈՐՄԱ ԳՂ

Եկեա՛լ ի փըրկութի՞ւն ա՛զգի՛ մարդկան, ի ծառա՛յէ՛ յա՛նձն առնու մատնիլ ի՛ դատաստան. համբե՛րելո՛վ վասն ը՛զմե՛զ կե՛ցուցանե՛լ։ Մատնեա՛լ Պիղատո՛սի՞ որպէս մա՛հապարտ, ի յԱննայէ՛ և ի Կայի՛ափայ դատա՛պարտեալ. համբե՛»։

Փառք Հօր եւ». Այժմ եւ միշտ»։

Կացեա՛լ ի յատենի՞ ե՛րկրո՛ղդ Ադամ վա՛ն առաջի՛նն Ա՛դամայ սա՛ բառացը՛ն թողութեան. համբե՛»։

Digitized by Google

ՓԱՐՈՋ

Երկրպագեմք՝՝։ (Տես ի Թիւն. 58։)

Տէր յերկինից դէ

Ո՛վ ըզքա՛նչելի՝՝ և տեսի՛լ ահաւոյ, զարարի՛չն երկնի և երկրի՝ այսօ՛՛ր տեսա՛ք ի խաչի՝։ Տե՛սեա՛լ ըզտէ՛րն ի խաչին խաւարեցա՛և արեգակն. և վարագո՛յր տաճարի՛՛ն ցեղո՛՛յր վերուստ մի՛նչ ի վա՛յր։

Փառք Հօր եւ՝՝. Այժմ եւ միշտ՝՝։

Ա՛նա՛րգաբա՛ր խաչեցաւ տէ՛րն ի մե՛՛ջ ի յա՛նօրինաց. զի լըսցի՛ դի՛՛րն որ ասէ՛՛, Թէ ը՞նդ ա՛նօրէնս համա՛՛րե՛ցա՛և։

Իսկ յորժամ է Տէր յերկինից շարականն Հասանէցի, Թագուսցեն զմի մեծ ճեացեալ մոմեղէնն, մինչև վճարեսցի փառք ի բարձունսն, և ապա Հանցեն։

Փառք ի բարձունս՝ (Տես ի Թիւն. 61։)

ԵՐԳ

Մատնեցայ և ոչ ելանէի. աչք իմ տկարացան յաղքատութե՛՛նէ՛՛։

Աղաղակեցի առ տէր զօրհանապա՛՛զ. և համբարձի առ քեզ դձե՛՛ռս իմ։

Փաթոզ՝ Փառաւորեսցուք. Աղօթք՝ Օրհանապազ. Սուրբ Աստուած՝ որ Մատնեցար. և այլն. յՄանկունեաք Շարականն (Տես ի 63 էն յ66 էջն։)

Digitized by Google

Մանկունք ԹՋ

Ո՛ր թագաւորդ ես թագա՛ւորաց Քրի՛ստոս, ի ծառայի՛դ դատապարտեալ համբերելո՛վ վասըն մեր. ե՛րկա՞յնամի՞տ ես՝ ըզ քե՞զ փա՛ռք։ Ո՛ր պատուական խաչի՛ւըդ քո Քրի՛ստոս և սուրբ արեա՛ն քո հեղմամբ կեցուցանել ըզմե՛զ կամեցար. ե՛րկա՞յ”։

Փառք Հօր եւ”. Այժմ եւ միշտ”։

Ո՛ր մարդասի՛րութէ՞ն վասն ամենեցո՛ւն ամենայնի՛ համբերեցեր, և՛ ի մահու զմա՛հ կոխեցեր. ե՛րկա՞յ”։

Գարոզ՝ վասն խաղաղութեան։ Աղօ՛ք՝ Սուրբ ես տէր. (Տես ի Քիւն. 67։)

Եւ ապա՛ւեն տոդոզէ. Տաղիս Ձը։

ԿՁ. Փոխանակ սիրոյ իմոյ մատնէին զիս, այլ ես յաղօթս կայի։

ՓԽ. Աստուած օրհնութեան իմոյ մի՛ լռեր, զի բերան մեղաւորի”։ (Տես ի Քիւն. 441։)

Ձկնի՝ Ալէլուիա օ՛րթ։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յօհաննու։

Գլ՝ 18. հմր 28։

Վասն Զարչարանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ ածեն զՅիսուս ի վանացն Կայիափայ յատարանըն դատաւորին. և էր այգուց. և նոքա ոչ մտին

յապաշրանան պի մի պզծեսցին, այլ պի ուտիցեն զպաս-
խիկն։ Եւ առ նոսա Պիղատոս ասէր ցաքս՝ և ասէ.
պինչ չարախօսութիւն մատուցանէք զայնմա-
նէ։ Պատասխանի ետուն և ասեն ցնա. եթէ չէր
չարագործ այրն այն, ապա ոչ մատնէաք զնա քեզ։
Ասէ ցնոսա Պիղատոս. առէք զնա դուք. և ըստ
ձերոց օրինացն դատեցէք. ասեն ցնա Հրէայքն. մեզ
ոչ է արժան սպանանել զոք։ Զի լցցի բանն Յիսու-
սի, զոր ասաց. նշանակեալ՝ թէ որով մահու մեռա-
նելոց լիցէ։ Եւ մուտ միւսանգամ յապարանսն Պիղա-
տոս. կոչեաց զՅիսուս՝ և ասէ ցնա. դու ես Թագա-
ւորն Հրէից։ Պատասխանի ետ Յիսուս. ի քէն ա-
ռեր զայդ՝ եթէ այլք ասացին քեզ զինէն։ Պատաս-
խանի ետ Պիղատոս. միթէ և ես Հրէայ լինեմ. ազգն
քո և քահանայապետք մատնեցին զքեզ ինձ. զինչ
գործ գործեալ ես քո։ Պատասխանի ետ Յիսուս. իմ
արքայութիւն չէ յայսմ աշխարհի. եթէ յաշխարհի
աստի էր արքայութիւնն իմ, զապատառողքն իմ մար-
տընչէին արդեօք՝ պի մի մատնեցայց Հրէից. բայց
արդ Թագաւորութիւնն իմ չէ աստի։ Ասէ ցնա Պի-
զատոս. ապա թէ այդպէս իցէ, Թագաւոր ոմն ես
դու. պատասխանի ետ Յիսուս. դու ասես՝ թէ Թա-
գաւոր իցեմ. բայց ես յայդ իսկ ծնեալ եմ. և ի դոյն
իսկ եկեալ եմ յաշխարհ, զի վկայեցից ճշմարտութեա-
նըն. ամենայն որ ի ճշմարտութենէն է՝ լսէ բարբա-
ռոյ իմոյ։ Ասէ ցնա Պիղատոս. զինչ է ճշմարտու-
թիւն. զայս ըստրև ասաց, դարձեալ ել առ Հրէայսն՝

Digitized by Google

և ասէ ցնոսա. ես՝ և ոչ մի ինչ պատճառս դտանեմ ի նմա: Այլ է ձեր սովորութիւն, զի մի ոք արձակեցից ձեզ ի զատկիս. արդ՝ կամիք զի արձակեցից ձեզ զԹագաւորն Հրէից: Աղաղակեցին ամենեքեան՝ և ասացին. մի՛ զդա, այլ զԲարաբբայ. և էր Բարաբբայն այն աւազակ: Յայնժամ էառ Պիղատոս զՅիսուս՝ և գան եհար: Եւ զինուորացն արարեալ զպսակ ի փշոց՝ եդին ի գլուխ նորա. և զգեցուցին նմա զհանդերձ ծիրանի: Եւ գային առ նա, և ասէին. ողջ եր արքայ Հրէից. և հանէին նմա ապտակս: Եւ դարձեալ Պիղատոս արտաքս՝ և ասէ ցնոսա. ահա ածեմ զնա արտաքս առ ձեզ. զի գիտասջիք թէ ես վնաս ինչ ի նմա ոչ գտանեմ: Եւ Յիսուս արտաքս. և ունէր զպսակ ի փշոց և զհանդերձ ծիրանի. և ասէ ցնոսա. ահա այրդ ցձեզ: Իբրև տեսին զնա քահանայապետքն և սպասաւորք, զաղաղակ բարձին՝ և ասեն. ի խա՛չ հան. ի խա՛չ հան զդա. ասէ ցնոսա Պիղատոս. առէ՛ք դուք ի ձեզ. և ձեզէն հանէք ի խաչ. զի ես ի դմա վնաս ինչ ոչ գտանեմ: Պատասխանի ետուն նմա Հրէայքն. մեք օրէնս ունիմք. և ըստ օրինացս մերոց պարտի մեռանիլ. զի զանձն իւր Որդի Աստուծոյ արար: Իբրև լուաւ ըզբանս զայս Պիղատոս, առաւել ևս երկեաւ: Եմուտ դարձեալ անդրէն յապարանսն, և ասէ ցՅիսուս. ուստի՞ ես դու. և Յիսուս ոչ ետ նմա պատասխանի: Ասէ ցնա Պիղատոս. ընդէ՞ս ոչ խօսիս. ոչ գիտես եթէ իշխանութիւն ունիմ հանել զքեզ ի խաչ. և էն-

Digitized by Google

Յոանուէիւն առնիմ արձակել զքեզ։ Պատասխանի եւ Յիսուս. ոչ առնէիր դու իշխանութիւն ի վերայ իմ, և ոչ մի. եթէ ոչ էր տուեալ քեզ ի վերուստ. վասն այսորիկ որ մատնեացն զիս քեզ, նորա մեծ մեղք են։ Եւ յայնմանէ Պիղատոս խնդրէր արձակել զնա. և Հրէայքն աղաղակէին, և ասէին. եթէ զդա արձակես՝ չես բարեկամ կայսեր. ամենայն ոք որ թագաւոր կոչէ զանձն լրէ, հակառակ է կայսեր։ Իսկ Պիղատոս լսելն զբանս զայս, էած զՅիսուս արտաքս. և նստաւ ի վերայ բեմին, ի տեղւոջն որ կոչիւր քարայատակ. և Եբրայեցերէն Կաբպաթա. էր ուրբաթն զատկի։ Եւ էր ժամ երրորդ. և ասէ ցՀրէայսն. ահա թագաւոր ձեր ցձեզ։ Եւ նոքա աղաղակէին, բարձ ի մէնջ. բարձ ի մէնջ՝ և հան զդա ի խաչ. ասէ ցնոսա Պիղատոս. ես զթագաւորդ ձեր ի խա՞չ հանիցեմ. պատասխանի եղեն քահանայապետքն. չիք մեր թագաւոր բաց ի Կայսերէ։ Ցայնժամ ետ զնա ի ձեռս նոցա, զի ի խաչ ելանիցէ։

ԵՐԳ

Զըհանդուրժեա՞լ բնութեամբ բարւո՞յն ունե՛լ միայն զանճառ բարին. այլ ստեղծեալ զմա՞րդ յիւր պա՛տկերի՞ն ի վեցերորդն առաւօտի՛ն. և ի յերրո՞րդ ժամ զկողածի՞նն ի յօգնո՛ւթիւն եւ հողածնին. զորս ի դրախտի՞ն եդ վայելե՞լ բայց ի սըտղոյն մահու ա՞ըդե՞լ։

Պատանեա՞լ առ պա՛տուղի՞ն յետ յանցա՛նացն

Digitized by Google

Ապա՛մէն հին. զկինն պատճա՛ռ եդեա՛լ խաբմա՞նն և կլինը՛ն զօձն դա՛ւաճան. որով երկի՞ւս այս ա՛նիծա՞ւ փուչ և ատ՛տասկ ի սմա՛ բուսաւ. վըճիռ մահո՛ւ մարդո՛յն տըւա՞ւ դառնալ ի հող ուսո՛ւ ստեղծա՞ւ։

Ջնջել փութա՞յր հայրըն վառա՞ց ըզգիր պարտեաց մեր յանցանաց. որով ղեկցա՛ւ որդին գը՛թա՞ծ ի վեց դարուն գմարմին մեղաց. Հօր հաճութեա՛մբ ի մահ խաչին եկն կամաւ ի յո՛ւրբաթին. գառն զենո՛ւ ի հին զատկի՞ն փոխան գառանցն օրի՛նա՛կի՞ն։

Ուահիւ լուա՞յ պատուի՞րանի՞ն արդարութեան ճանապարհին. բարձրանալով քո ի խաչին բարձրացուցիր զմեզ ի յերկինս. քո անպատո՛ւմ խոնարհութեա՞մբդ և կամաւոր խաչելութեամբդ. հաչտեաց ընդ մե՛զ տէր զթութեա՛մբ և թող զմեղս ողորմո՛ւթեա՛մբ։

Սոսկալի՛ զ սերովբէից և ահաւորըդ քրովբէից. խոնարհեցա՛ր ի չարչարա՞նս չարչարելի բնութեամբ մարդկան. ի խաչի՛ն զմեղս սպանե՞ր և զդատակնիք մահու լուծեր. հաչտեա՛ ։

Վհհագո՞յն բնութեանց էի՞ց և արարիչըդ բոլորից. յորժամ ծագե՛ս զխաչիդ նշա՛ն ի գալստեան քո միւսանգամ. զերկրպագո՛ւս այժմ հաւատո՞վ լուսաւորեա նորին լուսով. զի համաձայն խաչազգեցիցն զքեզ օրհնեմք յաւիտե՛ նի՛ց։

Վարդ. Խնդրեսցուք. Կեցո։ Աղօթք՝ Քում սմենաղօր և հրաշալի մատնութեանդ։ (Տես ի Թիւն. 75։)

Digitized by Google

Եւ ապա եդեալ գՍուրբ խաչն և գԱւետարանն ի վերայ գլխոցն՝ և քահանայքն պաք առնել. Նախկոպոնն կամ Աւագ քահանայն ննջեցելոցդ. և այլքն սկսան Նեղլեն Շաքախանն՝ ՐԿ։

Ով Աչի քո Քրիստո՞ս երկի՛նքդ գա՞նեմք. և ըղսուրբ զմատնո՛ւթիւնըդ քո մեծա՛ցո՞ւցա՞նեմք. և՛ զսուրբ չարչարա՛նսդ քո վա՛ռա՞ւո՞րեմք. եւ կա՛յք հաւատացեալք ե՛րկրպագեցո՛ւք Քրիստոսի Աստուծո՛յ մերոյ. վա՛սըն զի եր՛կն ի ձե՛ռըն խաչին ի՛ւրոյ չնո՛րհեա՞ց պարգեւս ա՞շխարհի՞։ Սուրբ Աստուած. սուրբ և հզօր. սուրբ և անմահ՝ որ մատնեցար վասն մեր ողորմեա մեզ։

(այսպէս երիցս հրէշտեղ. և ապա)

Ակ. Փա՛ռք սո՞ւրբ խա՞չի դ ա՛լէ՛լո՛ւիա. սո՞ւրբ մա՞տնուԹեա՞նդ ա՛լէ՛լո՛ւիա. չա՛րչա՞րա՞նա՞ցդ ա՛լէ՛լո՞՛ւիա՞՞։ Նը՛չանեցա՞՛ւ առ մեզ լոյս երեւացաք քոց և եռաւր ուրախութիւն սրտի՛ց մերո՞ց։ Ի պաղո՛ց ցուրենոյ՝ դինւոյ և ձիթոյ խրթանց լցուցեր ը՞ղնոտա։ Փա՛ռք սուրբ խաչիդ և այլն նոյնպէս։ Փա՛՞ռք և երկրպագութիւն Հօր և Որդւոյ և սրբո՛յ Հո՞գւոյն. ա՛՞յժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենի՛ց ամէն։ Փառք սուրբ խաչիդ և այլն նոյնպէս։

ՐԿ. Ով Աչըն կի՛նարա՞ր որ ե՛զե՞ մե՞՛զ փըրկո՛ւԹիւն. սո՞վո՞ւ ա՛մե՛նի՛քեսո՞ն ը՛զքի՛զ բա՞՞ըե՞՞բա՞նե՞մք։ Որ ի Հօ՛րէ՞ լո՞ւսո՞յ լոյս ճա՛ւատայ-

Digitized by Google

թեա՞լ է՝ յի՞րկրէ, և գա՛ւազա՞ն զօ՛րութեա՞ն հաւատա՛ցեր ցս. ասա՛՝ ո՞վ՝՝։ Որ լուսա՛փա՛յլ ծա՛ղմամբ հրաշա՛փառապէ՞ս մե՞զ ցո՛ւցաւ ի յա՛գնութիւն ընդդէ՛մ թը՛չնամո՛ւին. ասա՛՝ ո՞վ՝՝։

Փառք Հօր եւ՝՝. Այժմ եւ միշտ՝՝։

Որ յատենի կացեր անպա՛տուհաս կողին պատրանօք, և արբուցեր մեզ ի կո՛ղահոս աղբերէդ. նորոգեա՛ և զիս զապա՛կանեալըս մե՞զ՛օ՛ք։

Զկնի Քարոզ՝ Սուրբ խաչիս։ Աղօթք՝ Պահպանեա (Տես ի Քիւն. 147։)

Եւ ապա ընթերնուցչն գկաւակն մեծ Ութբանա՝ որ յաղագս խաչելութեանն Քրիստոսի։

Եւ ապրչէլն ի խաղաղութի՛ն։

Այսօր է ցերեկին՝ ծուռնը կրկնելոյ հրաման ոչ դոյ, մինչև ցերեկոյի ժամն։

Եւ ի ցերեկեան երեք ժամուն՝ եկեալ ասացեն ղերիս ողորմեայսն հանդերձ մեծ քարոզիւքն և աղօթիւք։ Զկնի՝ Հոգւոցն հանգուցելոց։

Digitized by Google

Իսկ ի վեցերորդ ժամուն ժողովեցան ի դուռն եկեղեցւոյն, և կատարեցան պահքն Աստուածայնոյն։ Սկսանիցին ընծայեալքն զուգի փոխ Սաղմոսին և զվերջաւորն ընծայեցուածս զրոց, և զչորս գլուխ Աւետարանին։

Առաջին ընծայեցուածն՝ աշակերտի դասուն է։

Առաջին սաղմոս ԼԴ։

ԿՅ. Յարեան ի վերայ իմ վկայք չարաց. և զոր ինչ ոչ գիտէի՝ հարցանէին ցիս։

ՓԽ. Դատեա տէր զայնոսիկ՝ որք դատեն զիս. մարտիր ընդ այնոսիկ՝ որք մարտնչին ընդ իս։

Ա՛ռ զվէն և զասպար քո, և արի յօգնել ինձ. հան զսուր քո ընդդէմ հալածչաց իմոց, արգել զնոսա. և ասա զու ցանձն իմ՝ թէ փրկութիւն քո ես եմ։

Ամաչեսցեն և յամօթ լիցին որք խնդրէին զանձն իմ. դարձցին յետս և ամաչեսցեն, որք խորհէին ինձ չար։

Եղիցին նոքա որպէս փոշի առաջի հողմոյ. և հրեշտակ տեառն նեղեսցէ զնոսա։

Եղիցին ճանապարհք նոցա ի խաւար և ի գայթակղութիւն. և հրեշտակ Աստուծոյ հալածեսցէ զնոսա։

Ի նանիր թաղուցին ինձ որոգայթ յապականութեան իւրեանց, և ի նանիր նախատեցին զանձն իմ։

Հասցէ ի վերայ նոցա որոգայթ՝ զոր ոչ գիտացին. և որան զոր թաղուցին՝ առցէ զոտս նոցա, և յոր-

Digitized by Google

գայթ ի նոյն անկցին։

Այլ անձն իմ ցնծասցէ ի տէր, ուրախ եղիցի ի փրկութեան նորա. և ամենայն ոսկերք իմ ասասցեն, տէր՝ ո՞ նման է քեզ։

Զի փրկեաց զաղքատն ի ձեռաց հզօրի, զաղքատն և զտնանկն յայնցանէ՝ որք յափշտակեն զնա։

Յարեան ի վերայ իմ վկայք չարաց. և զոր ինչ ոչ գիտէի՝ հարցանէին ցիս։

Հատուցին ինձ չար փոխանակ ընդ բարւոյ. անժառանգիլ զանձն իմ խորհեցան յորդւոց ի մարդկանէ։

Ես ի նեղել նոցա քուրձ զգենուի, խոնարհ առնէի պահօք զանձն իմ, և աղօթք իմ ի ծոց իմ դարձցին։

Որպէս զեղբայր և զընկեր՝ այսպէս հաճոյ լինէի, որպէս զսգաւոր և զտրտում այնպէս խոնարհ առնէի։

Ի վերայ իմ ուրախ եղեն և ժողովեցան, ժողովեցան չիս տանջանք և ես ոչ ծանեայ. ցրուեցան, և ոչ զղջացան։

Փորձեցին զիս և արհամարհեցին, արհամարհանօք կրճտեցին ի վերայ իմ զատամունս իւրեանց, տէր երբ տեսցես։

Ի բաց արա զանձն իմ ի խորամանկութենէ նոցա, և յառիւծուց զմիամօլութիւն իմ։

Խոստովան եղէց քեզ տէր յեկեղեցիս մեծ, և ի ժողովս բազմաց օրհնեցից զքեզ։

Digitized by Google

Մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք իմ՝ ոյք առէին զիս ի տարտալարտուց. ակնարկի առնէին յիս աչօք իւրեանց։

Ընդիս զխաղաղութիւն խօսէին, և ինքեանք բարկութեամբ զննդութիւն խորհէին։

Բացին ի վերայ իմ զբերան իւրեանց, և ասացին՝ այո՛ այո՛ տեսին աչք մեր։

Տեսեր տէր և մի՛ լռեր, տէր՝ մի՛ ի բացեայ առներ ինէն։

Զարթիր և հայեաց տէր յիրաւունս իմ, Աստուած իմ և տէր իմ ի դատաստանս իմ. և իրաւ արա ինձ ըստ արդարութեան քում տէր Աստուած իմ։

Մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք իմ, և մի՛ ասասցեն ի սիրտս իւրեանց՝ թէ վայ վայ անձանց մերոց զի ընկլուզաք զնա։

Ամաչեսցեն և յամօթ լիցին՝ ոյք խնդան ընդ չար իմ. զգեցցին զամօթ և զանարգանս՝ ոյք մեծաբանեն ի վերայ իմ։

Ցնծասցեն և ուրախ լիցին ի քեզ ամենեքեան, ոյք կամին ընդ արդարութիւն իմ։

Ասասցեն յամենայն ժամ, մեծ է Աստուած. և ոյք կամին զխաղաղութիւն ծառայի քո։

Լեզու իմ խօսեսցի զարդարութիւնս քո, զօրհնանալոյ զգովութիւնս քո։

Ընթերցուածս ի Զաքարեայ Մարգարէէ։
Գլ՝ 11. հմր՝ 11։

Եւ ծանիցեն Փանանայիքն զխաչին սահեստի

Digitized by Google

իմոյ. զի բան տեառն է: Եւ ասացի ցնոսա, թէ բարւոք թուի յաչս ձեր. տուք զվարձս իմ. ապա թէ ոչ՝ զրկեցէք: Եւ կշռեցին զվարձս իմ երեսուն արծաթի: Եւ ասէ ցիս տէր՝ արկ դու զայդ ի բուխս. և քննեայ թէ փորձ իցէ՛ որպէս ես գտայ փորձ վասն նոցա. և առի զերեսուն արծաթին. և արկի ի տուն տեառն ի բուխս: Եւ ընկեցի զգառապանն հրկիզող զլինգակն. ցրել զուխտ իմ ի մէջ Յուդայ և ի մէջ Իսրայէլի:

Պողոսէ Առաքելոյն ի Գալատացւոց Թզմոյն ՀՀ ընթերցուածս:
Գլ՝ 6. Հմր՝ 14:

Այլ ինձ քաւ լիցի պարծիլ՝ բայց միայն ի խաչն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որով ինձ աշխարհ ի խաչ ելեալ է՝ և ես աշխարհի: Զի ի Քրիստոս Յիսուս, ոչ թլփատութիւն ինչ է՝ և ոչ անթլփատութիւն, այլ նոր արարած: Եւ որք միանգամ այսմ կանոնի միաբան լինին, խաղաղութիւն ի վերայ նոցա, և ողորմութիւն՝ և ի վերայ Իսրայէլին Աստուծոյ: Այսուհետև աշխատս որ զիս մի՛ արասցէ. զի ես ըզչարչարանսն Քրիստոսի ի մարմնի իմում կրեմ: Շնորհ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ ընդ հոգւոյդ ձերում եղբարք. ամէն:

Աղօթք հանդերձ սաղմոսելով զտէր ողորմեա: Տէր ողորմեա: (Երից երէկաց:)
Եւ ևս խաղաղութեան": Օրհնութիւն և վասն":

Երկրորդ սաղմոս Լէ ։

ԿՅ. **Ես ի տանջանս պատրաստ եմ. և ցաւք իմ առաջի իմ են յամենայն ժամ։**

ՓԽ. **Տէր մի սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս. և մի բարկութեամբ։** (*Տես ի Թիւն. 319 :*)

Ընծայեցաւ յԵսայեայ Մարգարէէ ։
Գլ՝ 3. հմր՝ 9 ։

Վասնորոյ խոնարհեցան փառք նոցա. և ամօթ եղեսայ նոցա ծածկեաց զնոսա. և զմեղս իւրեանց իրրև զՍոդոմացւոցն պատմեցին՝ և չայտ արարին. վայ անձանց նոցա. զի խորհեցան զխորհուրդ չար աւանձինն։ Եւ ասեն՝ կապեսցուք զարդարն՝ զի դժալիի եղև մեզ. այսուհետև զարդիւնս գործոց իւրեանց կերիցեն։ Վայ անօրինին. չարիք ըստ գործոց ձեռաց իւրոց անցցեն ընդ նա։ Ժողովուրդ իմ. հարկահանք ձեր ճռաքաղ առնեն զձեզ. և պահանջողք տիրեն ձեզ. ժողովուրդ իմ, որք ելանեն ձեզ՝ խաբեն զձեզ. և զչաւիղս ոտից ձերոց խռովեցուցանեն։ Այլ արդ հասցէ տէր ի դատաստան. և կացուսցէ յատենի զժողովուրդ իւր։ Ինքնին տէր ի դատ եկեսցէ, ընդ ծերս ժողովրդեանն իւրոյ՝ և ընդ իշխանս նոցա. դուք զի հրկէզ արարիք զայգի իմ. և յափշտակութիւն տնանկին է ի տունս ձեր։ Դուք զի զրկէք զժողովուրդ իմ. և զերեսս տնանկաց լի առնէք ամօթով՝ ասէ տէր՝ տէր զօրութեանց։

Digitized by Google

Պօղոսի Առաքելոյն ի Փիլիպպեցւոց Թղթոյն ի ընթերցուածս։
Գլ՝ 2. հմր՝ 5։

Զայն խորհեսցի իւրաքանչիւր ոք ի ձէնջ, որ և ի Քրիստոս Յիսուս։ Որ ի կերպարանս Աստուծոյ էր, ոչինչ յափշտակութիւն համարեցաւ զլինիլն հաւասար Աստուծոյ։ Այլ զանձն ունայնացոյց՝ զկերպարանս ծառայի առեալ, ի նմանութիւն մարդկան եղեալ՝ և կերպարանօք գտեալ իբրև մարդ։ Խոնարհեցոյց զանձն, լեալ հնազանդ մահու չափ՝ և մահու խաչի։ Վասնորոյ և Աստուած զնա առաւել բարձրացոյց. և չնորհեաց նմա անուն՝ որ ի վեր է քան զամենայն անուն։ Զի յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի, երկնաւորաց՝ և երկրաւորաց՝ և սանդարամետականաց։ Եւ ամենայն լեզու խոստովան լիցի, թէ տէր Յիսուս Քրիստոս է ի փառս Աստուծոյ Հօր։

Աղօթք հանդերձ սաղմոսելով՝ զտէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։ (Կրկին կրկնեա։)

Եւ ևս խաղաղութեան"։ Օրհնութիւն և փառք"։

Երբորդ սաղմոս Խ։

ԿՅ. Սուանէր տեսանել զնանրութիւն, Խօսէր ի սրտի իւրում. և ժողովէր զանօրէնութիւն յանձն իւր։

ՓԽ. Երանի որ խորհի զաղքատն և զտնանկն, յաւուր չարի փրկէ զնա տէր։ (Տես ի Թիւն. 324։)

Digitized by Google

Ընթերցուածս յԵսայեայ Մարգարէէ։
Գլ՝ 50. Հմր՝ 4։

Տէր տէր տայ լինձ լեզու խրատու. զի գիտացից խօսիլ ի ժամու զբանն. սլատրաստեաց զիս ընդ առաւօտս. յաւել լինձ ունկն ի լսել։ Եւ խրատ տեառնըն բանայ զականջս իմ. և ես ոչ խստանամ. և ոչ ընդդէմ դառնամ։ Զթիկունս իմ ետու ի հարուածս. զծնօտս իմ յապտակս. և զերեսս իմ ոչ դարձուցի յամօթոյ ընդ երեսս թքանելոյ։ Եւ տէր տէր եղև իմ օգնական. վասն այսորիկ ոչ ամաչեցի. այլ արարի զդէմս իմ իբրև զվէմ հաստատուն. և գիտացի՝ թէ ոչ ամաչեցից։ Չի մերձ է՝ որ արդարացուցանէն զիս. ո՞վ է՝ որ ոսոխն իմ, եկեսցէ՝ կացցէ ի մէջ. և ո՞վ է՝ որ դատէն զիս՝ մերձեսցի առ իս։ Չի ահաւասիկ տէր տէր օգնական է լինձ. ո՞վ է՝ որ չարչարիցէն զիս։

Պօղոսի Առաքելոյն ի Հռոմայեցւոց Թղթոյն ե ընթերցուածս։
Գլ՝ 5. Հմր՝ 6։

Չի մինչդեռ տկարքն էաք՝ Քրիստոս վասն մեր ի ժամանակի ի վերայ ամբարչտաց մեռաւ։ Չի վասնն արդարոյ հազիւ ոք մեռանիցի. այլ վասն բարւոյ թերևս համարձակիցի ոք մեռանիլ։ Ցայտնեաց Աստուած զսէրն իւր ի մեզ. զի մինչդեռ տկարքն էաք։ Քրիստոս վասն մեր մեռաւ. որչափ ևս առաւել յարդարանալս մերում այժմիկ արեամբն նորա

Digitized by Google

ապրիցուք նովաւ ի բարկութենէ անտի: Զի եթէ մինչ թշնամիքն էաք՝ հաշտեցաք ընդ Աստուծոյ մահուամբ Որդւոյ նորա. որչափ ևս առաւել ի հաշտիլս մերում ապրիցուք կենօք նորա: Եւ ոչ այսչափ միայն. այլև պարծիմք ևս յԱստուած ի Տեառն մերոյ Յիսուսէ Քրիստոսէ. որով և զհաշտութիւնն իսկ ընկալաք:

Աղօթք հանդերձ սաղմոսելով՝ զտէր աղաչեսցուք: Տէր ողորմեա: (Էլէյս էլէյնէա:)
Եւ ևս խաղաղութեան": Օրհնութիւն և փառք":

Զօրօրդ. սաղմոս ԻԱ:

ԿՅ. Բաժանեցին զհանդերձս իմ ի մէջ իւրեանց, և ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկանէին:

ՓԽ. Աստուած Աստուած իմ՝ նայեաց առ իս, ընդէ՞ր թողեր զիս. հեռի եղեր ի փրկութենէ իմմէ վասն բանից յանցանաց իմոց:

Աստուած իմ ի տուէ կարդացի առ քեզ, և ինձ ոչ լուար. ի գիշերի՝ և ինձ ոչ անսացեր:

Դու ի սուրբս բնակեալ ես, և գովեալդ Իսրայէլի:

Ի քեզ յուսացան հարքն մեր, յուսացան ի քեզ՝ և փրկեցեր զնոսա:

Առ քեզ աղաղակեցին և կեցին, ի քեզ յուսացան և ոչ ամաչեցին:

Այլ ես որդն եմ, և ոչ եմ մարդ. նախատինք մարդկան՝ և արհամարհանք ժողովրդոց:

Digitized by Google

Ա մենեքեան որք տեսանէին զիս՝ սրհասարհէին զինև, խօսէին չրթամբք՝ և չարժէին զգլուխս իւրեանց։

Ծուսացաւ ի տէր՝ և փրկեսցէ զնա. կեցուսցէ զնա՝ զի կամի զնա։

Դու ես՝ որ հաներ զիս յարգանդէ. յոյս իմ ի ըստեանց մօր իմոյ։

Ի քեզ անկայ ես յարգանդէ, յորովայնէ մօր իմոյ դու ես Աստուած իմ։

Մի՛ ի բացեայ առնիր յինէն՝ զի նեղութիւնք մերձեալ են, և ոչ ոք է՝ որ օգնէ ինձ։

Շուրջ եղեն զինև զուարակք բազումք, և ցուլք դէրք պաչարեցին զիս։

Բացին ի վերայ իմ զբերանս իւրեանց, որպէս առիւծ զի մռնչէ և յափշտակէ։

Ես որպէս զջուր հեղայ՝ և ցրուեցան ամենայն ոսկերք իմ. և եղև սիրտ իմ որպէս մոմ հալեալ ի մէջ որովայնի իմոյ։

Զորացաւ որպէս խեցի զօրութիւն իմ, լեզու իմ ի քիմս իմ կցեցաւ, և ի հող մահու իջուցին զիս։

Շուրջ եղեն զինև չունք բազումք, և ժողովք չարաց պաչարեցին զիս։

Ծակեցին զձեռս իմ և զոտս իմ, և թուեցին զամենայն ոսկերս իմ. նոքա հայեցան և տեսին զիս։

Բաժանեցին զհանդերձս իմ ի մէջ իւրեանց, և ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկանէին։

Դու տէր մի՛ հեռի առներ զօգնութիւն քո յինէն.

Digitized by Google

և տէր յօդնել ինձ նայեաց։

Փրկեա՛ ի սրոյ զանձն իմ, և ի ձեռաց չանց զմիա-մօրութիւն իմ։

Փրկեա զիս ի բերանոյ առիւծու, յականջս միեղջերուի զխոնարհութիւն իմ։

Պատմեցից զանուն քո եղբարց իմոց, և ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից զքեզ։

Երկիւղածք տեառն օրհնեցէ՛ք զտէր, և ամենայն զաւակն Յակոբեան փառաւորեցարուք զնա։

Երկիցէ ի տեառնէ ամենայն զաւակն Իսրայէլի, զի ո՛չ արհամարհեաց՝ և ո՛չ անարգեաց տէր զաղօթս աղքատի, և ո՛չ դարձոյց զերեսս իւր յինէն. այլ ի կարդալ իմում առ նա՝ լուաւ ինձ։

Ի քէն է գովութիւն իմ տէր, յեկեղեցիս մեծս օրհնեցից զքեզ։

Զուխտս իմ կատարեցից առաջի ամենայն երկիւղածաց նորա։

Կերիցեն տնանկք և յագեսցին. օրհնեսցեն զտէր՝ ոյք խնդրեն զնա։

Կեցցեն սիրտք նոցա յաւիտեանս յաւիտենից. յիշեսցեն, և դարձցին առ տէր ամենայն ծագք երկրի։

Երկիրպագցեն նմա ամենայն տոհմք ազանց. զի տեառն է արքայութիւն, և նա տիրէ ի վերայ ամենայն հեթանոսաց։

Կերիցեն և երկիրպագին նմա ամենայն պարարտք երկրի. առաջի նորա անկցին ամենեքեան՝ ոլք իջանեն ի հող։

Digitized by Google

Անձն իմ նովաւ կեայ. և զաւակ իմ ծառայեսցէ նմա։

Պատմեսցի տեառն ազգ որ գալոցն է, պատմեսցեն գարդարութիւն նորա ժողովրդեան՝ որ ծնանելոցն է զոր արար տէր։

Ընթերցուածս յԱմվայ Մարգարէէ։
Գլ՝ 8. հմր՝ 9։

Եւ եղիցի յաւուր յայնմիկ ասէ տէր տէր՝ մտցէ արեգակն ի միջօրէի. և խաւարեսցի յերկիր լոյս ի տուէ։ Եւ դարձուցից ի սուգ զտօնս ձեր. և զամենայն երգս ձեր յողբս. և ածից ի վերայ ամենայն հասակաց զքուրձ. և ի վերայ ամենայն գլխոց գկլընտութիւն. և արարից նմա իբրև սուգ սիրելւոյ. և որոց ընդ նմայն իցեն՝ իբրև օր ցասւոց։ Ահա աւուրք գան ասէ տէր տէր. և առաքեցից զսով յերկիր. ոչ սով հացի. և ոչ ծարաւ ջրոյ. այլ սով լսելոյ զբանն տեառն։ Եւ խառնակեսցին ջուրք ի ծովէ մինչև ի ծով՝ և ի հիւսիսոյ մինչև յարևելս. ընթացցին խնդրել զբանն տեառն. և մի՛ գտցեն։

Պօղոսի Առաքելոյն ի Կորնթացւոց Առաջին Թղթոյն է ընթերցուածս։
Գլ՝ 1. հմր՝ 18։

Զի ճառ խաչին, կորուսելոցն յիմարութիւն է. այլ փրկելոցս մեզ զօրութիւն Աստուծոյ։ Զի գրեալ է. կորուսից զիմաստութիւն իմաստնոյ. և զխորհուրդս խորհրդականաց արհամարհեցից։ Ո՛ւր իմաս-

Digitized by Google

տուն. ուր դպիր. ուր քննիչ աչխարհիս այսորիկ. ոչ ապաքէն յիմարեցոյց Աստուած զիմաստութիւն աչխարհիս այսորիկ: Քանզի իմաստութեամբն Աստուծոյ ոչ ծանեաւ աչխարհ իմաստութեամբն զԱստուած. հաճեցաւ Աստուած յիմարութեամբ քարոզութեանն՝ ապրեցուցանել զհաւատացեալս: Իսկ որովհետեւ Հրէայք զնշան հայցեն. և հեթանոսք զիմաստութիւն խնդրեն: Մեք քարոզեսցուք զխաչելեալն Քրիստոս. Հրէից գայթակղութիւն. և հեթանոսաց յիմարութիւն: Բայց նոցին իսկ կոչեցելոցն Հրէից և հեթանոսաց՝ զՔրիստոս, Աստուծոյ զօրութիւն՝ և Աստուծոյ իմաստութիւն: Զի յիմարն Աստուծոյ իմաստնագոյն է քան զմարդիկ. և տկարն Աստուծոյ զօրագոյն է քան զմարդիկ: Թէպէտ և զձեր իսկ կոչումն տեսէք եղբարք. զի ոչ բազում իմաստունք ըստ մարմնոյ. և ոչ բազումք հզօրք. և ոչ բազումք ազնուականք: Այլ զյիմարս աչխարհիս ընտրեաց Աստուած, զի յամօթ արասցէ զիմաստունս. և զտկարս աչխարհիս ընտրեաց Աստուած, զի յամօթ արասցէ զհզօրս: Եւ զանտոհմս աչխարհիս և զարհամարհեալս ընտրեաց Աստուած՝ և զոչինչսն. զի զէսն իմն խափանեսցէ: Որպէս զի մի պարծեսցի ամենայն մարմին առաջի Նորա: Զի ի նմանէ դուք էք ի Քրիստոս Ցիսուս. որ եղև մեզ իմաստութիւն յԱստուծոյ. արդարութիւն, և վերկութիւն, և սրբութիւն: Զի որպէս գրեալ է. որ պարծին, ի տէր պարծեսցի:

Digitized by Google

Աղօթք հանդերձ սաղմոսելով՝ զտէր աղաչեսցուք։
Տէր ողորմեա։ (Կրկին կրկնեա։)
Եւ ևս խաղաղութեան”։ Օրհնութիւն և վառք”։

Հինգերորդ սաղմոս, Լ։

Կ3. Ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ։
Փխ. Ի քեզ տէր յուսացայ”։ (Տես ի Թիւն. 311։)

Ընթերցուածս յԵսայեայ Մարգարէէ։
Գլ՝ 52. Հմր՝ 13։

Ահաւադիկ ի միտ առցէ մանուկ իմ. վերասցի՝ և բարձրասցի՝ և վառաւորեսցի յոյժ։ Զոր օրինակ զարմացին բազումք ի վերայ քոյ. այնպէս անչքեսցի տեսիլ քո ի մարդկանէ. և վառք քո յորդւոց մարդկանէ։ Այնպէս զարմասցին ազգք բազումք ի վերայ քո. և կալցեսցեն թագաւորք զբերանս իւրեանց. զի որոց ոչ պատմեցաւ վասն նորա՝ տեսցեն. և որոց ոչ լցէ լուեալ, ի միտ առցեն։ Տէր, ո հաւատաց լրոյ մերում. և բազուկ տեառն ումի յայտնեցաւ։ Պատմեցաք առաջի նորա իբրև զմանուկ՝ իբրև զարմատ ի ծարաւուտ երկրէ. ոչ գոյր նորա տեսիլ՝ և ոչ վառք. տեսաք մեք զնա՝ և ոչ գոյր նորա տեսիլ՝ և ոչ դեղեցկութիւն։ Այլ տեսիլ նորա անարգ՝ նուաղեալ քան զամենայն որդւոց մարդկան. այր մի ի հարուածս՝ և դիտէ համբերել ցաւոց. զի դարձուցեալ զերեսս անարգեցաւ՝ և յոչինչ համարեցաւ։ Նա ըզմեզս մեր բառնայ՝ և վասն մեր չարչարի. և մեք հա-

Digitized by Google

մարեցաք զնա ի ցաւս՝ և ի հարուածս՝ և ի չարչարանս իբրև յԱստուծոյ։ Բայց նա վիրաւորեցաւ վասըն մեղաց մերոց. և պատժեցաւ վասն մերոց անօրէնութեանց. խրատ խաղաղութեան մերոյ ի նմա. և նորա վիրօքն բժշկեցաք։ Ամենեքին իբրև ոչխարք մոլորեալք՝ այր ի ճանապարհի իւրում մոլորեցաւ. և տէր մատնեաց զնա առ մեղս մեր։ Եւ նա առ վշտին ոչ բանայ զբերան իւր. իբրև զոչխար ի սպանդ վարեցաւ. և իբրև որոջ առաջի կտրչի անմռունչ կայ. այնպէս ոչ բանայ զբերան իւր։ Առ խոնարհութեան նորա դատաստան նորա բարձաւ. և զազգատոհմ նորա ո պատմեսցէ. զի բառնին յերկրէ կեանք նորա. յանօրէնութեանց ժողովրդեան իմոյ ի մահ վարեցաւ։ Եւ տաց զչարս փոխանակ գերեզմանի նորա. և զմեծամեծս փոխանակ մահու նորա. զի անօրէնութիւն ինչ ոչ գործեաց. և ոչ գտաւ նենգութիւն ի բերան նորա։ Եւ տէր կամի սրբել զնա ի վիրաց անտի. եթէ տացէք զվասն մեղաց, անձինք ձեր տեսցեն զզաւակ երկայնակեաց. և կամի տէր ի ձեռն նորա բառնալ ի ցաւոց անձին նորա։ Ցուցանել նմա լոյս՝ և ստեղծուլ իմաստութեամբ. արդարացուցանել զարդարն՝ որ մտադիւրն ծառայեաց բազմաց. և զմեղս նոցա նա վերացուսցէ։ Վասն այսորիկ նա ժառանգեսցէ զբազումս. և զաւար հզօրաց բաշխեսցէ. փոխանակ զի ի մահ մատնեցաւ անձն նորա. և ընդ անօրէնս համարեցաւ. և նա զմեղս բազմաց վերացոյց՝ և վասն անօրէնութեանց

նոցա մատնեցաւ։

Պօղոսի Առաքելոյն յնդրայեցւոց Թղթոյն Ե
ընթերցուածոյ։
ԳԼ՝ 2 Հմբ՝ 11։

Զի որ սրբէն, և որք սրբին, ի միոջէ էին ամենեքին. վասնորոյ ոչ ամօթ համարի եղբարս անուանել զնոսա և ասել։ Պատմեցից զանուն քո եղբարց իմոց. ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից զքեզ։ Եւ դարձեալ՝ Թէ ես եղէց յուսացեալ ի նա. և դարձեալ. ահաւասիկ ես և մանկունք իմ, զոր ետ ինձ Աստուած։ Արդ՝ որովհետև մանկունք հաղորդեցան արեան և մարմնոյ. և ինքն իսկ մերձաւորութեամբ կցորդ եղև նոցունց. զի մահուն իւրով խափանեսցէ զայն, որ զիշխանութիւն մահուն ունէր՝ այսինքն է, զսատանայ։ Եւ ապրեցուսցէ զայնոսիկ, որք մահուն երկիւղիւ հանապազ կէին վտարանդեալք ի ծառայութիւն։ Քանզի ոչ երբէք զհրեշտակաց բուռն հարկանէ. այլ զզաւակէն Աբրահամու բուռն հարկանէ։ Ուստի պարտ իսկ էր նմա ամենայնիւ եղբարց նմանիլ. զի ողորմած լինիցի, և հաւատարիմ քահանայապետ յԱստուածակոյս կողմանէ անտի, առ ի քաւելոյ զմեղս ժողովրդեանն։ Զի որով ինքն չարչարեցաւ զփորձ առեալ, կարօղ է և փորձանաւորաց օգնական լինել։

Եւ ապա սկսանիցին երգ։

Ո՞րդո՞ղ տիե՛զե՛րա՛ց որ գգեցուցե՛ր մեզ լոյս

Digitized by Google

փառա՛ց. արկար ըզքեւ ի զի՛նուորա՛ց քոյոմիդ կա՛րմիր նա՛խատանա՛ց. մե՛րկեա յինչ՞ն ըզքո՛ւրձ մե՛ղաց ըզտըրտմա՛գի՛նն արեամբ Ներկա՛ծ. և զգեցո զո՛ւրա՛խալին ըզպա՛տմուճանն իմ զա՛ռաջի՛ն։

Ե՞րկնաւո՛ր թագա՛ւո՛րիդ ի ծուռը իչեա՛լ խաղ առնէին. ծածկեալ ըզգլուխը՛դ կը՛ուվէին և ե՛զե՛ռամբ հարկանէին. և՛ զիմ անկեա՞լ մինչ ի գե՛տին ի հնազա՛նդե՛լ կամա՛ց չարին. մի՛ թողուցուս խա՛ղա՛լ սովին ա՛յլ կա՛նգնեացես զիս վե՛րըստի՞ն։

Բա՞մեալ բոլո՛րըդ քո մա՛րմին յետ վըճըռո՛յ դատա՛ւորին. սաստիկ էառ զհա՛րուածդ գա՛նին վասը՛ն գանից նա՛խատեղծին. զի՛ս որ յոտի՞ց մինչև՝ ցգլո՛ւխ ցաւօ՛ք նե՛ղիմ անհրնա՛րին. առողջացո դարձեա՛լ կը՛րկին որպէ՛ս չնորհօք յա՛ւազանի՛ն։

Սը՞րբափա՛յլ պըճնեա՛լ զա՛րդո՛ւն զոր զգեցո՛ւցե՛ր Ահարոնի. փոխան պըսակ ի փշո՛ց եդին մըշա՛կք այգւոյն Խորայելի. ը՛զփուշ մեղա՞ց հանցե՛ս յի՛նէն զոր յիս ե՛հար իմ թըշնամին. և ողջացո զխա՛յթուա՛ծ վէրին զի սա՛ք մեղացըն ջը՛նջեսցի՛ն։

Օ՜րհ։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Գլ՝ 27. հմր՝ 1։

Վասն Զաքէոսի և Թաչէուն Թեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Երբև այգ եղև՝ խորհուրդ արարին ամենայն քա-

Digitized by Google

հանսյալեաք և ծեղք ժողովրդեանն վասն Քիսուսի սպանանել զնա։ Կապեցին զնա. և առին զնացին. և ետուն ի ձեռս Պոնտացւոյ Պիղատոսի դատաւորի։ Ցայնժամ տեսեալ Ցուդայի որ մատնեացն զնա՝ թէ պարտաւորեցաւ՝ դղջացաւ. և դարձոյց զարծաթին առ քահանայապետսն և ծերս ժողովրդեանն։ Եւ ասէ՝ մեղայ, զի մատնեցի զարիւն արդար. և նոքա ասեն. մեզ չէ փոյթ. դու գիտես։ Եւ ընկէց զարծաթին ի տաճարն՝ և գնաց. և չոգաւ խեղդեցաւ։ Իսկ քահանայապետիցն առեալ զարծաթին՝ ասեն. ոչ է արժան ընդունիլ զայդ ի կորբանն՝ քանզի գինք արեան են։ Խորհուրդ առեալ՝ գնեցին այնու զագարակն բրտի ի գերեզման օտարաց։ Վասն այնորիկ կոչեցաւ ագարակն այն, ագարակ արեան՝ մինչև ցայսօր։ Ցայնժամ լցաւ՝ որ ասացաւ ի ձեռն Երեմիայի մարգարէին՝ առին զերեսուն արծաթին զգինս վաճառելոյն. զոր առին յորդւոցն Իսրայէլի։ Եւ ետուն զնա յագարակն բրտի. որպէս հրամայեաց ինձ տէր։ Եւ Քիսուս եկաց առաջի դատաւորին. եհարց զնա դատաւորն՝ և ասէ. դո՞ւ ես թագաւորն Հրէից. և Քիսուս ասէ. դու ասես։ Եւ ի չարախօսիլն նորա ի քահանայապետիցն և ի ծերոց, ոչինչ ետ պատասխանի։ Ցայնժամ ասէ զնա Պիղատոս. ոչ լսես՝ որչափ դոքա հակառակ քո վկայեն։ Եւ ոչ ետ նմա պատասխանի՝ և ոչ բան մի, մինչև զարմանալ դատաւորին յոյժ։ Բայց ըստ սովոր էր դատաւո-

Digitized by Google

ըըն արձակել ժողովրդեանն կապեալ մի՝ զոր կամէին : Ունէին յայնժամ կապեալ մի նշանաւոր՝ որում անուն էր Յեսու Բարաբբայ : Իբրև ժողովեցան՝ ասէ ցնոսա Պիղատոս . զո՞ կամիք յերկուց աստի՝ զի արձակեցից ձեզ . զՅեսու Բարաբբայ , եթէ զՅիսուս զանուանեալն Քրիստոս : Գիտէր՝ թէ առ նախանձու մատնեցին զնա : Եւ մինչդեռ նստէր յատենին , առաքեաց առ նա կինն իւր՝ և ասէ . չըկայ ինչ քո և արդարոյն այնորիկ . զի բազում անցք անցին ընդիս այսօր յանուրջս վասն նորա : Իսկ քահանայապետքն և ծերք՝ հաւանեցուցին զժողովուրդըն՝ զի խնդրեսցեն զԲարաբբայն և զՅիսուս կորուսցեն : Պատասխանի եւս դատաւորն՝ և ասէ ցնոսա . զո՞ կամիք . զի արձակեցից ձեզ յերկուց այսի . և նոքա ասեն՝ զԲարաբբայ : Ասէ ցնոսա Պիղատոս . իսկ զի՞ արարից զՅիսուս զանուանեալն Քրիստոս : Ասեն ամենեքեան , խաչեսցի . և նա ասէ՝ զինչ չար արար . և նոքա առաւել ևս աղաղակէին և ասէին . խաչեսցի : Եւ տեսեալ Պիղատոսի՝ թէ ոչինչ օգնէ . այլ առաւել խռովութիւն լինի . առեալ ջուր՝ լուաց զձեռըս առաջի ժողովրդեանն՝ և ասէ . քաւեալ եմ ես յարենէ արդարոյդ այդորիկ . դուք գիտասջիք : Պատասխանի եւս ամենայն ժողովուրդն՝ և ասէ . արիւն դորա ի վերայ մեր և ի վերայ որդւոց մերոց : Յայնժամ արձակեաց նոցա զԲարաբբայն . և զՅիսուս զան հարեալ՝ եւս ի ձեռս՝ զի խաչեսցի : Յայնժամ զին-

Digitized by Google

ուղղ դատաւորին առին զՅիսուս յապարանս. և ժողովեցին ի վերայ նորա զամենայն զգունդն։ Մերկացուցին զնա. և արկին զնովաւ քղամիդ կարմիր։ Եւ բոլորեալ պսակ ի փշոց՝ եդին ի գլուխ նորա. և եղէգն յաջոյ ձեռին նորա. ի ծունր իջեալ առաջի նորա՝ կատակէին և ասէին. ո՛ղջ ե՛ր թագաւոր Հրէից։ Եւ թքեալ ի նա՝ առնուին զեղէգն՝ և ծեծէին զգլուխ նորա։ Եւ յորժամ ձաղեցին զնա՝ մերկացուցին ի նմանէ զքղամիդն. և ապուցին նմա զիւր հանդերձն. և տարան զնա ի խաչ հանել։ Եւ ելեալ արտաքս՝ գտին զայր մի Կիւրենացի՝ անուն Սիմոն. զնա կալան պահակ՝ զի՝ բարձցէ զխաչն նորա։ Եւ եկեալ ի տեղին անուանեալ Գողգոթայ՝ որ է տեղի կառափելոյ։ Ետուն նմա գինի ընդ լեղի խառնեալ. և իբրև ճաշակեաց՝ ոչ կամէր ըմպել։ Եւ հանեալ զնա ի խաչ՝ բաժանեցին զհանդերձս նորա վիճակաւ. զի լցցի բանն՝ որ ասացաւ ի մարգարէէն. բաժանեցին զհանդերձս իմ յիւրեանս՝ և ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկանէին։ Եւ նըստեալ պահէին զնա։ Եւ եդին ի վերայ գլխոյ նորա՝ գրեալ զվնասն նորա. թէ այս է Յիսուս թագաւորն Հրէից։ Յայնժամ հանին ընդ նմա ի խաչ երկուս աւազակս. մի յաջմէ նորա՝ և մի յահեկէ։ Եւ ոք անցանէին՝ հայհոյէին զնա. չարժէին զգլուխս իւրեանց։ Եւ ասէին. վա՛հ՝ որ քակէիր զտաճարն և զերիս աւուրս չինէիր զնա՝ ապրեցո՛ զքեզ. եթէ

Digitized by Google

Որդի ես Աստուծոյ՝ էջ ի խաչէդ։ Նոյնպէս և քահանայապետքն ձաղէին հանդերձ դպրօքն և ծերօք՝ և ասէին։ Զայլս ապրեցոյց՝ զինքն ոչ կարէ ապրեցուցանել. եթէ թագաւոր է Իսրայէլի՝ իջցէ այժմ ի խաչէդ՝ և հաւատասցուք դմա։ Եթէ յուսացաւ յԱստուած, փրկեսցէ այժմ զդա՝ եթէ կամի զդա. քանզի ասաց, եթէ Աստուծոյ Որդի եմ։ Ջնոյն և աւազակքն՝ որք խաչեալ էին ընդ նմա՝ նախատէին զնա։ Եւ ի վեց ժամէ աւուրն խաւար եղև ի վերայ ամենայն երկրի մինչև ցինն ժամն։ Եւ զինն ժամեան գոչեաց Ցիսուս ի ձայն մեծ՝ և ասէ. էլի էլի՝ լամասաբաքթանի. այսինքն է. Աստուած իմ, Աստուած իմ. ընդէր թողեր զիս։ Ոմանք յայնցանէ որք անդն կային, իբրև լուան՝ ասէին. զԵղիա կաղեայ։ Եւ վաղվաղակի ընթացաւ մի ոմն ի նոցանէ՝ էառ սպունգ լի քացախով՝ և հարեալ յեղեգան՝ ետ ըմպել նմա։ Եւ կէսքն ասէին. թո՛ղ՝ տեսցուք եթէ գա՞յ Եղիա փրկել զդա։ Եւ Ցիսուս դարձեալ աղաղակեաց ի ձայն մեծ՝ և արձակեաց զոգին։ Եւ ահա վարագոյր տաճարին ցեղաւ յերկուս՝ ի վերուստ մինչև ի վայր. երկիր չարժեցաւ. և վէմք պատառեցան։ Եւ գերեզմանք բացան. և բազում մարմինք ննջեցելոց սրբոց յարեան։ Եւ ելեալք ի գերեզմանացն՝ յետ յարութեանն նորա, մտին ի քաղաքն սուրբ. և երևեցան բազմաց։ Իսկ հարիւրապետն՝ և որք ընդ նմա պահէին զՑիսուս՝ իբրև տեսին զչարժումն և զեղեակ-

սըն՝ երկեան յոյժ՝ և ասեն. արդարև Աստուածոյ Որդի էր սա։ Էին անդ կանայք բազումք. կային ի հեռաստանէ՝ և հայէին. որք եկին զկնի Ցիսուսի ի Գալիլէէ պաշտել զնա։ Ցորս էր Մարիամ Մագդաղենացի՝ և Մարիամ Յակոբայ՝ և Ցովսեայ մայր. և մայր որդւոցն Զեբեդեայ։

Աղօթք հանդերձ սաղմոսելով՝ զտէր աղաչեցուք։ Տէր ողորմեա։ (Երէյս կրէնէա։)

Եւ ևս խաղաղութեան՝՝։ Օրհնութիւն և փառք՝՝։

Վերջերոյդ սաղմոս, ՃԸ։

ԿՅ. Ետուն ի կերակուր ինձ լեղի, և ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ։

ՓԽ. Ակեցի զիս Աստուած՝ զի հասին ջուրք յանձն իմ, ընկլայ ես ի խորս անդնդոց, ուր ոչ գոյ ինձ հանգիստ։

Եկի ես ի խորս ծովու, և չրջանք ընկղմեցին զիս։

Վաստակեցայ ես առ աղաղակել, և կերկերեցաւ կոկորդ իմ։

Նուաղեցան աչք իմ, առ յուսալ ինձ առ տէր Աստուած իմ։

Բազումք եղեն քան զհեր գլխոյ իմոյ, ոյք ատէին զիս ի տարապարտուց։

Զօրացան յիս թշնամիք իմ և ատելիք իմ ի նանիր։ ինչ զոր ոչ յափշտակեալ էի՝ տուժէի նոցա։

Digitized by Google

Աստուած դու ծանեաւր զանզգամութիւն իմ, և յանցանք իմ ի քէն ոչ ծածկեցան։

Մի ամաչեսցեն վասն իմ՝ ոյք համբերեն քեզ տէր տէր զօրութեանց. մի պատկառեսցին վասն իմ, ոյք խնդրեն զքեզ Աստուած Իսրայէլի։

Վասն քո համբերի նախատանաց, և ծածկեաց ամօթ զերեսս իմ։

Օտար եղէ ես յեղբարց իմոց, և հիւր որդւոց մօր իմոյ։

Նախանձ տան քո եկեր զիս. և նախատինք նախատչաց քոց անկան ի վերայ իմ։

Խոնարհեցուցի պահօք զանձն իմ, և եղեն ինձ այս նախատինք. արարի զհանդերձս իմ քուրձ, և եղէ յառակ նոցա։

Զինէն խորհէին՝ ոյք նստէին առ դրունս. զիս այլըն առնէին՝ ոյք ըմպէին զգինի։

Ես յաղօթս կայի առ քեզ տէր, ի ժամանակ ընդունելի։

Աստուած ի բազում ողորմութեան քում լուր ինձ, ի ճշմարտութիւն փրկութեան քո։

Ապրեցո զիս ի կաւոյ զի մի ընկղմեայց. ապրեցայց ես յատելեաց իմոց, և ի խորոց ջուրց բազմաց։

Մի ընկղեն զիս սլաստոյտք ջուրց, և մի ընկղմեսցեն զիս անդունդք խորոց. և ջրհոր մի կափուսցէ զբերան իւր ի վերայ իմ։

Digitized by Google

Լ՛ուր ինձ տէր՝ զի քաղցր է ողորմութիւն քո, ըստ բազում գթութեան քումդ հայեա յիս, և մի՛ դարձուցաներ զերեսս քո ի ծառայէ քումմէ. զի նեղեալ եմ ես՝ վաղվաղակի լ՛ուր ինձ։

Հայեա յանձն իմ և փրկեա զիս, և վասն թշնամեաց իմոց ապրեցո՛ զիս։

Զի դու գիտես զնախատինս իմ, զամօթ իմ և զպատկառանս իմ։

Առաջի քո են ամենայն նեղիչք անձին իմոյ. նախատանաց համբեր սիրտ իմ և թշուառութեան։

Ակն ունէի թէ ոք տրտմեսցի ընդ իս, և ո՛չ ոք էր. և մխիթարիչ ինձ ոք ո՛չ գտաւ։

Եւտուն ի կերակուր ինձ լեղի, և ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ։

Եղիցին սեղանք նոցա առաջի նոցա յորոգայթ, ի հատուցումն և ի գայթակղութիւն։

Խաւարեսցին աչք նոցա՝ զի մի՛ տեսցեն, և զթիկունս նոցա հանապազ կորացո՛։

Արկցես ի վերայ նոցա զբարկութիւն քո, և սրտմտութիւն բարկութեան քոյ հասցէ ի վերայ նոցա։

Եղիցին բնակութիւնք նոցա աւերակ, և ի յարկս նոցա մի՛ ոք իցէ որ բնակիցէ։

Զի զոր դու հարեր՝ հալածեցին, և ի վէրս ցաւոց իմոց յաւելին։

Դի՛ր զմեղս ի վերայ մեղաց նոցա, զի մի՛ մտցեն յարդարութիւն քո։

Digitized by Google

Ջնջեսցին նոքա ի դպրութենէ քումմէ կենաց, և ընդ արդարս քո մի՛ գրեսցին։

Աղքատ և ցաւած եմ ես, փրկութիւն քո Աստուած ընկալցի զիս։

Օրհնեցից զանուն Աստուծոյ իմոյ օրհնութեամբ, և բարձր արարից զնա գովութեամբ։

Հաճոյ եղիցի Աստուծոյ քան զորթ մատաղ, որ բերէ զեղջիւրս և զկճղակս։

Տեսցեն աղքատք և ուրախ եղիցին, խնդրեցէ՛ք զԱստուած և կեցցեն անձինք ձեր։

Զի լուաւ տէր տնանկաց, և զկապեալս իւր ոչ արհամարհեաց։

Օրհնեսցեն զնա երկինք և երկիր, ծով և ամենայն որ զեռայ ի նոսա։

Աստուած փրկէ զսիօն, և չինեսցին քաղաքք Հրէաստանի. չինեսցեն բնակեսցեն և ժառանգեսցեն ի նմա։

Զաւակ ծառայից քոց հաստատեսցի անդ, և ոյք սիրեն զանուն քո՝ բնակեսցեն ի նմա։

(Այս գլխոս ի աւետարանն ասաց երկայն պատմութիւն է։)

Ընթերցուածս յԵսայեայ Մարգարէէ։
Գլ՝ 63. Հմր՝ 1։

Ասէ այս ոմն է՝ որ դիմեալ գայ յԵդովմայ. կարմրութիւն հոտոց իւրոց ի Բոսորայ. գեղեցիկ պատմուճանաւ և բուռն զօրութեամբ. ես խօսիմ զարդա-

Digitized by Google

րութիւն՝ և իրաւունս փրկութեան։ Վասն էր կարմիր են ձորձք քո. և հանդերձք քո իբրև հնձանահարի լիոյ հնձանի կոխելոյ։ Հնձան հարի միայն՝ և ի հեթանոսաց ոչոք էր ընդիս. կոխեցի զնոսա սրտմտութեամբ՝ և ճմլեցի զնոսա բարկութեամբ՝ և իջուցի յերկիր. և զամենայն հանդերձս իմ թաթաւեցի։ Զի հասեալ էր ի վերայ նոցա օր հատուցման. և ամ փրկութեան եկեալ հասեալ։ Հայեցայ՝ և ոչոք էր՝ որ օգնէր. զմտաւ ածի՝ և ոչոք էր՝ որ ի թիկունս հասանէր. փրկեաց զնոսա բազուկ իմ. և սրտմտութիւն իմ միայն զղէմ կալաւ։ Կոխեցի զնոսա բարկութեամբ իմով՝ և զենի զնոսա սրտմտութեամբ իմով. և իջուցի զնոսա յերկիր։

Պօղոսի Առաքելոյն յԵբրայեցւոց Թղթոյն ԺԸ ընթերցուածս։
Գլ՝ 9. հմր՝ 11։

Այլ Քրիստոս եկեալ քահանայապետ՝ հանդերձեալոցն բարեաց՝ մեծաւն և կատարելովն՝ և անձեռագործ խորանաւ՝ այսինքն է՝ որ ոչ յայսց արարածոց։ Եւ ոչ արեամբ նոխազաց և զուարակաց. այլ իւրով արեամբն եմուտ մի անգամ ի սրբութիւնսն յաւիտենական գտեալ զփրկութիւն։ Զի եթէ արիւն ցլուցն և նոխազաց՝ և մոխիր երինջոյն ցանեալ՝ զպղծեալսն սրբէր առ ի մարմնոյ սրբութենէ։ Ո՞րչափ ևս առաւել արիւնն Քրիստոսի, որ ի ձեռն հոգւոյն յաւիտենականի մատոյց զանձն անարատ պատարագ Աս-

Digitized by Google

տուծոյ, սրբեսցէ զխիղճ մտաց ձերոց ի մեռելոտի գործոց անտի՝ պաշտել զԱստուած կենդանի։ Եւ վասն այնորիկ նորոյ ուխտիս է միջնորդ. զի յորժամ մահ լինիցի՝ ի վերկութիւն վասն առաջնոյ ուխտին յանցանաց, զաւետիս առցեն հրաւիրեալքն ի ժառանգութիւն յաւիտենից։ Քանզի ուր կտակ է՝ հարկ է զմահ ի մէջ բերել վկտակագրին։ Զի կտակ յետ մահուն հաստատուն է. ապա թէ ոչ՝ վիճդ իցէ հաստատուն, մինչ կտակագիրն կենդանի է։ Ուստի և ոչ առաջինն առանց արեան նորոգիւր։ Քանզի իբրև պատմեցան ամենայն պատուիրանք օրինացն ի Մովսիսէ ժողովրդեանն՝ առեալ զարիւն ցլուցն և նոխազացն, ջրով և բրդով, կարմրով՝ և զոպայիւ, զկատակարանսքն իսկ և զամենայն ժողովրդեամբն սրսկեաց։ Եւ ասէ. այս է արիւն կտակին, զոր պատուիրեաց ձեզ Աստուած։ Եւ զխորանսն և զամենայն կահիս սպասուն, նոյնպէս սրսկեաց զարիւնն։ Եւ ըստ ամենայն ինչ արեամբ սրբիւր ըստ օրինացն. և առանց հեղման արեան չլինէր թողութիւն։ Ապա հարկ էր օրինաւորացն այնպիսեացքն սրբիլ. և բուն իսկ երկնաւորացն՝ առաւել ևս պատարագօք քան զնոսսն։ Զի ոչ եթէ ի ձեռագործ սրբութիւնսն եմուտ Քրիստոս՝ յօրինակս ճշմարտութեանն. այլ ի բուն իսկ յերկինս, յանդիման լինիլ երեսացն Աստուծոյ վասն մեր։ Ո՛չ զի բազում անգամ մատուցանիցէ զանձն պատարագ՝ որպէս քահանայապետն,

Digitized by Google

որ մտանէր ի սրբութիւն սրբութեանցն, ամի ամի արեամբն օտարաւ։ Ապա թէ ոչ՝ պարտ էր նմա բազում անգամ չարչարիլ ի սկզբանէ աշխարհի. բայց արդ աւասիկ միանգամ ի կատարած յաւիտեանց յանարգութիւն մեղաց իւրով պատարագաւն յայտնեցաւ։ Եւ զոր օրինակ կայ մնայ մալուկան միանգամ մեռանիլ՝ և յետ այնորիկ դատաստան։ Նոյնպէս և Քրիստոս՝ միանգամ մատուցեալ պատարագ առ ի բառնալոյ զմեղս բազմաց. իսկ յերկրորդումն առանց մեղաց յայտնեսցի այնոցիկ՝ ողք ակն ունիցին նմա հաւատովք ի փրկութիւն։

ԵՐԳ

Ե՞տուն ըմպէ՛լ քեզ ը՝գլե՛ղին և ըզքա՝յա՛կն ի ծարաւին. արբե՛ր կամաւ զի քա՛ղցրասցին ճաչա՛կք պըտղոյն դա՛ռնագունին. ը՛զդառնութի՛ւն թիւնաւո՛րին զոր ի մա՛սո՛ւնս հոգւոյս արկին. հերքեա՛ ի բաց հանդե՛րձ սովին և քա՛ղցրա՛սցի սէր քո՛ ի սի՛րն։

Ստե՞ղնեալ ծառո՛յ մահա՛բե՛րին այնմ որ բո՛ւսա՛ւ ի մէջ դրախտին. փոխա՛ն բարձեր ը՝զփա՛յտ խաչին ի Գողգո՛թա հա՛ներ տե՛ղին. զի՛մ առ ի մե՛ղս անկեա՛լ զոդի և ծանրադո՛յն բարձող բեռին. բարձ ի յուսո՛յդ ը՝ատ ո՛չխարին հան ի՛ յերկինս յուխտեա՛լ տեղի՛ն։

Ի՞ յուրբաթո՛ւ ժամ ե՝րրո՛րդին բեւեռե՛ցա՛ր տէր ի խաչին. լուծեր վկապանս նա՝խա՛ստեղծին և կա՝-

Digitized by Google

պե՛ցեր ը՛զԹըչնամին. զի՛ս ամբացո՞ ընդ հո՛վա՛նեա՛ւ կենդանա՛րսը քո նըշանին. և ի ծագելն յա՛րեւե՛լից լո՛ւսո՛ւորեա լուսո՛վ նորի՞ն։

Է՞րանեա՞լ աւա՛զա՛կին բացեր ը՛զդո՛ւռն ա՛դին դրա՛խտին. ըստ հաւատոյ սը՛րտի՛ նորին կատարեցեր ըզխընդրելին. տո՛ւր և ի՞նձ տէր ը՛նդ նը՛մին լըսել ը՛զնո՛յն պատասխանին. այսօր ընդ իս էցե՛ս յա՛դին ի հա՛յրենիս քո ա՛ւաջին։

ՕՐԲԷ։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մարկոսի։

Գլ՝ 15. հմր՝ 1։

Վասն Զաքէոսեանց և ԽաչեցուԹեան Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ վաղվաղակի ընդ առաւօտն, խորհուրդ արարեալ քահանայապետիցն հանդերձ ծերօքն և դպրօք և ամենայն ատեանն. կապեցին զՅիսուս՝ և տարան մատնեցին Պիղատոսի։ Եհարց զնա Պիղատոս և ա՛սէ. դո՞ւ ես Թագաւորն Հրէից. նա պատասխանի եւս նմա և ասէ՝ դու ասես։ Եւ չարախօսէին զնմանէ յոյժ քահանայապետքն. և նա ոչինչ տայր պատասխանի։ Իսկ Պիղատոս դարձեալ հարցանէր զնա. ոչինչ տաս պատասխանի. տես՝ քանի՛ ամբաստանեն զքէն։ Եւ Յիսուս այնուհետեւ ոչինչ եւս պատասխանի. մինչ զարմանալ յոյժ Պիղատոսի։ Բայց ըստ

Digitized by Google

աօնի արձակէր նոցա զմի ոք կապեալ. զոր ինքեանք խնդրէին: Եւ էր՝ որում անուն էր Բարաբբաս՝ կապեալ ընդ խռովիչսն, որոց ընդ խռովիչն՝ զայր մի սպանեալ էր: Ի ձայն բարձր սկսաւ աղաղակել ամբոխն և խնդրել՝ որպէս սովոր էր. զի արձակեսցէ նոցա զԲարաբբայն: Պատասխանի ետ Պիղատոս և ասէ ցնոսա. կամիք, զի արձակեցից ձեզ զարքայն Հրէից: Քանզի գիտէր թէ առ նախանձու մատնեցին զնա քահանայապետքն: Որք և զամբոխն հաւանեցուցին զի արձակեսցէ նոցա զԲարաբբայն: Դարձեալ պատասխանի ետ Պիղատոս և ասէ ցնոսա. իսկ զինչ կամիք թէ արարից զարքայն Հրէից: Եւ նոքա դարձեալ աղաղակէին յուզեալք ի քահանայապետացն, ի խաչ հան զդա: Ասէ ցնոսա Պիղատոս. զինչ ինչ չար արարեալ իցէ դորա. և նոքա առաւել ևս աղաղակէին և ասէին. ի խաչ հան զդա: Իսկ Պիղատոս իբրև զմիտս կամեցաւ հաճել ամբոխին, արձակեաց նոցա զԲարաբբայն. և զՅիսուս գան հարեալ ետ ի ձեռս, զի ի խաչ ելանիցէ: Եւ զինուորքն տարան զնա ի ներքս ի դատիճն՝ ուր հրաւարակն էր. և կոչեն միանդամայն զամենայն զդունդն: Եւ զգեցուցանեն նմա քղամիդ կարմիր, և ծիրանիս. և եդին ի գլուխ նորա պսակ արարեալ ի փշոց. և բռկսան ողջոյն տալ նմա և ասել. ողջ ես արքայդ Հրէից: Եւ ծնծէին զգլուխն եղեգամբ. և թքանէին ընդ երեսս. և ի ծունր իջեալ երկիրպագանէին նմա: Եւ իբրև կատակէին զնա, մերկացուցին զքղամիդն և զգ-

ծիլանիա. և զգեցուցին նմա զիւր հանդերձն. և առ-
ծին արտաքս. զի ի խաչ հանիցեն զնա: Եւ ունէին
պահակ զՍիմոն Կիւրենացի՝ որ ընդ այն անցանէր,
եկեալ յագարակէ. զհայրն Ալէքսանդրի և Ռուփայ.
զի բարձցէ զխաչափայտն նորա: Եւ ածեն զնա ի
Գողգոթա՝ տեղի մի. որ թարգմանի՝ տեղի կառա-
փնոյ: Եւ տային նմա գինի զմռսեալ. և նա ոչ
ետուր. և հանին զնա ի խաչ: Եւ բաժանեցին
զհանդերձս նորա. արկեալ վիճակս ի վերայ՝ թէ
ո՞ զինչ առնուցու: Էր ժամ երրորդ՝ և հանին
զնա ի խաչ: Եւ էր գիր վնասու նորա գրեալ
թէ թագաւոր է Հրէից: Եւ ընդ նմա հանին ի
խաչ երկուս աւազակս. մի ընդ աջմէ նորա՝ և մի
ընդ ահեկէ: Եւ լցաւ գիրն որ ասէ, թէ ընդ անօ-
րէնս համարեցաւ: Եւ որք անցանէին, հայհոյէին
զնա, չարժեալ զգլուխս իւրեանց՝ և ասէին. վաՀ՝ որ
քակէիր զտաճարն՝ և զերիս աւուրս շինէիր, ապրե-
ցո՛ զանձն քո՝ և էջ ի խաչէդ: Նոյնպէս և քահանա-
յապետից այլն արարեալ ընդ միմեանս հանդերձ
դպրօքն՝ ասէին. զայլս ապրեցոյց՝ զանձն ոչ կարէ
ապրեցուցանել: Քրիստոսդ արքայդ Իսրայէլի. իջցէ
այժմ ի խաչէ այսի. զի տեսցուք և հաւատասցուք
մեզ. և որք ընդ նմա ի խաչն ելեալ էին՝ նախատէ-
ին զնա: Եւ իբրև վեց ժամ եղև՝ խաւար կալաւ
զամենայն երկիր մինչև ցիննն ժամ: Եւ յիններորդ
ժամուն աղաղակեաց Յիսուս ի ձայն մեծ և ասէ.
Էլի՝ Էլի՝ լամասաբաքթանի. որ թարգմանի. Աստ-

Digitized by Google

ուած իմ, Աստուած իմ, ընդէր թողեր զիս։ Եւ ոմանք ի նոցանէ՝ որք չուրջն կային զնովաւ՝ իբրեւ լուան, ասէին թէ զԵղիա կարդայ։ Եւ ընթացեալ միոմն՝ եւից սպունգ մի քացախով. և հարեալ յեղեգան՝ տայր ըմպել նմա. և ասէ՝ Թո՛յլ տուր՝ տեսցուք, գա՞յ Եղիա իջուցանել զդա։ Եւ Յիսուս արձակեաց ձայն մեծ՝ և եհան զոգի։ Եւ վարագոյր տաճարին պատառեցաւ յերկուս, ի վերուստ մինչև ի խոնարհ։ Եւ տեսեալ հարիւրապետին՝ որ կայր առ՝ եթէ ազաղակեաց և եհան զոգի, ասէ. արդարև այրս այս՝ Որդի Աստուծոյ էր։ Էին և կանայք՝ որք հայէին ի հեռաստանէ. յորս էր Մարիամ Մագդաղենացի. և Մարիամ Յակոբոս փոքրկան. և Յովսեայ մայրն. և Սաղովմէ։ Որք յորժամ էրն ի Գալիլեա, զհետ չքոյէին նորա, և պաշտէին զնա. և այլք բազումք կանայք՝ որք ընդ նմա իսկ էկեալ էին յԵրուսաղէմ։

Աղօթք հանդերձ աղաղոսելով՝ զտէր աղաչեացուք։ Տէր ողորմեա։ (Էրէյս էլէյսէ։)
Եւ ևս խաղաղութեան”։ Օրհնութիւն և փառք”։

Եօթնեբօրդ սաղմոս, ՃԱ.

կՁ. Եղէ ես որպէս բոյս յաւերակի, ոչնեցայ և եղէ ես որպէս ճնճղուկ միայն ի տանիս։

փԽ. Տէր լուր աղօթից իմոց՝ աղաղակ իմ առ քեզ եկեսցէ, և մի դարձուցաներ զերեսս քո յինէն։

Ցաւուր նեղութեան իմոյ խոնարհեցո՛ առ իս զունե-

Digitized by Google

կըն քո. յորում աւուր կարդամ առ քեզ՝ վաղվաղակի լուր ինձ։

Սպառեցան որպէս ծուխ աւուրք իմ, և ոսկերք իմ որպէս խոխ չորացան։

Հարայ ես որպէս խոտ և ցամաքեցաւ սիրտ իմ, մոռացայ ուտել զհաց իմ ի ձայնէ հեծութեան իմոյ։

Կցեցաւ ոսկր իմ ի մարմին իմ. նմանեցայ ես հաւալասան անապատի։

Եղէ ես որպէս բու յաւերակի, տքնեցայ և եղէ ես որպէս ճնճղուկ միայն ի տանիս։

Նախատեցին զիս թշնամիք իմ զօրհանապազ, և գովիչք իմ ինև երդնուին։

Զմոխիր որպէս զհաց կերի, և զըմպելին իմ արտասուօք խառնեցի։

Ցերեսաց բարկութեան սրտմտութեան քո, զի դու բարձրացուցեր և խոնարհեցուցեր զիս։

Աւուրք իմ որպէս հովանի անցին, և ես որպէս խոտ ցամաքեցայ։

Դու տէր յաւիտեան կաս, և յիշատակ քո ազգէ մինչև յազգ։

Դու յարուցեալ գթասցիս ի վերայ սիոնի, ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ։

Հաճեցան ծառայք քո ընդ քարինս նորա, և ի հողս նորա գթասցին։

Երկիցեն հեթանոսք յանուանէ քումմէ. և ամենայն թագաւորք երկրի ի փառաց քոց։

Digitized by Google

Շինէ տէր զսիօն, և երևեսցի փառք իւրովք ի նմա։

Հայեցաւ նա յաղօթս խոնարհաց, և ոչ արհամարհեաց զխնդրուածս նոցա։

Գրեսցի այս յազդ յայլ, ժողովուրդ զոր ստացեալ է օրհնեսցէ զտէր։

Հայեցաւ նա ի բարձանց ի սրբութենէ իւրմէ. տէր յերկնից յերկիր հայեցաւ։

Լսել զհեծութիւն կապելոց, և արձակել զորդիս մահապարտաց։

Պատմել ի սիօն զանուն տեառն, և զօրհնութիւնս նորա յերուսաղէմ։

Ժողովիլ ժողովրդոց ի միասին, և թագաւորաց ծառայել տեառն։

Պատասխանի ետ նմա ի ճանապարհի զօրութեան իւրոյ. զնուազութիւն աւուրց իմոց սաա ինձ, և մի՛ հաներ զիս ի կէս աւուրց իմոց. զի ազգէ յազգ են ամք քո։

Իակզբանէ տէր զհիմունս երկրի հաստատեցեր, և գործք ձեռաց քոց երկինք են։

Նոքա անցանեն, և դու կաս և մնաս յաւիտեան։

Ամենեքեան որպէս զձորձս մաշեսցին. և որպէս զվերարկուս փոխեսցես զնոսա և փոխեսցին։

Բայց դու նոյն ինքն ես և ամք քո ոչ անցանեն. որդիք ծառայից քոց բնակեսցին ի նմա, և զաւակի նոցա յաւիտեան յաջողեսցի։

Digitized by Google

Ընթերցուածս յԵրեմիայ Մարգարէէ՝
Գլ՝ 11. հմր՝ 18.

Տէր ծանո՛ւ ինձ, և ծանեայց. յայնժամ տեսի ըզգործս նոցա: Ես իբրև զգառն անմեղ վարեալ ի սպանդ. ոչ գիտացի՝ թէ զինէն խորհեցան խորհուրդս, և ասեն. եկայք, արկցուք փայտ ի հաց նորա՝ և չնչեսցուք զնա յերկրէն կենդանեաց. և անուն նորա մի՛ ևս յիշեսցի: Տէր զօրութեանց՝ որ ընտրես զիրաւունս՝ և քննես զերիկամունս և զսիրտ, տեսից առ ի քէն զվրէժխնդրութիւն առ ի նոսա: զի քեզ յայտնեցի զերիկամունս իմ: Վասն այնորիկ այսպէս ասէ տէր՝ ի վերայ արանցն Անաթովթայ՝ որք խնդրեն զանձն քո. և ասեն մի՛ մարգարէանար վասն մեր. ապա թէ ոչ՝ մեռանիս ի ձեռաց մերոց: վասն այդորիկ այսպէս ասէ տէր զօրութեանց. ահաւադիկ. ես այց արարից ի վերայ նոցա. երիտասարդք նոցա սրով մեռցին. և ուստերք՝ և դստերք նոցա սովու վախճանեսցին: Եւ մնացորդք ոչ եղիցին նոցա՝ զի ածից չարիս ի վերայ բնակչացն Անաթովթայ՝ յամի այցելութեան նոցա: Արդար ես տէր՝ և մատուցից առաջի քո զաղերս. բայց խօսեցայց զիրաւունս. զի՛ է, զի ճանապարհք ամբարշտաց յաջողեալք են. և երջանկացան ամենեքեան՝ որք արհամարհեն զարհամարհանս: Տնկեցեր զնոսա՝ և արմատացան. ծնան որդիս՝ և արարին զպտուղ. մերձ ես դու տէր ի բերանս նոցա. և հեռի յերիկամանց նո-

Digitized by Google

ցա։ Եւ դու տէր գիտես զիս. տեսեր զիս՝ և փորձեցեր զսիրտ իմ առաջի քո. ժողովեա զնոսա իբրև զոչխարս ի սպանումն. և նուիրեա զնոսա յօր սպանման նոցա։ Մինչև յիւրք զաուգ ունիցի երկիր. և խառա ամենայն վայրի ցամաքեսցի. ի չարեաց բնակչաց երկրին սպականեցան անասունք՝ և թռչուն. զի ասացին թէ ոչ տեսցէ Աստուած զհանապարհս մեր։ Ոտք քո ընթանան՝ և լքուսցեն զքեզ. զլիարդ կապմիցես երիվարօք. իսկ արդ յերկիրդ խաղաղութեան յուսացեալ իցես. զի գործեսցես ի վերանալ Յորդանան գետոյ։ Քանզի և եղբարքն քո՝ և տուն հօր քոյ. և նոքա դաւեցին քեզ. և նոքին աղաղակեցին զկնի քո. կուտեցան ի վերայ քո. մի հաւատար նոցա. զի խօսեսցին զքէն չարութիւն։ Լքի զտուն իմ. թողի զժառանգութիւն իմ. ետու զսիրելին անձին իմոյ ի ձեռս թշնամեաց իւրոց։ Եղև ժառանգութիւն իմ ինձ իբրև առիւծ յանապատի. ետ ի վերայ իմ զբարբառ իւր. վասն այնորիկ ատեցի զնա։

Պօղոսի Առաքելոյն յերբայեցւոց Թղթոյն ԺԱ ընդհերձուածս։

Գլ՝ 10. Հմր՝ 19։

Ունիմք այսուհետեւ եղբարք՝՝։ (Տես ի Քրէն. 336։)

ԵՐԳ

Բա՞ըբառելո՞վ զէ՛լի Է՛լին հիմունք երկրի՛ տատանէին. և վարագոյր հին օ՛րինին վե՛ր՛ւսաս ի վայր պատառէին. ա՛րդ ընդ վիմա՞ցն որ չա՛րժէ՛ին չար-

Digitized by Google

ժեա՝ զա՛նչարժ սիրտս ի բա՛րին. ընդ պատառել վա՛րա՛գուրին զի՛մ պա՛տառեա ըզգի՛ր պարտի՛ն։

Ա՞րեգակա՛ն լոյս քո՛ղ ա՛րկեա՛լ խաւարա՛նա՛յր միջօրէին. և գերեզմանըք բա՛նային մա՛րմի՛նք սըրբո՛ցըն յառնէ՛ին. ը՛նդ խաւարե՛լ լուսաւո՛րա՛ցն մաքրեա յինէ՛ն զգործ խաւարին. ընդ մեռելոցն ոըք յա՛ռնէ՛ին կա՛նգնեա՛ զմեղօք մեռեա՛լ հոգի՛ս։

Ո՞ը սիրո՛յ պատուիրա՛նին գործով ը՛ցո՛ղ եղեր բանին. աղօթելով ա՛ռ հա՛յր յերկինս Թո՛ղո՛ւլ ըզմեղս ո՛ր ի խաչին. ի՛նձ որ հոգւո՛վս հաւա՛տացեա՛լ երկրըպա՛գե՛մ քեզ միածին. Թող ըղլուծումըն հրա՛մա՛նին մի՛ յի՛չեսցին մե՛ղքն ա՛ռաջի՛ն։

Սա՞բաեյի՛ն սանդա՛րա՛մե՛տք ի յաւանդե՛լ առ հայր զհո՛գիդ. որ ի գժոխս իջի՛ր ներքին ի բա՛նտ մահու և խաւարին. կա՛պեալ զիչխա՛նըն մա՛հա՛ծին հաներ զհոգի՛ան որ ի բա՛նտին. և զիա հանցես տէր ը՛նդ նոսին բա՛նտէ՛ մեղաց ա՛ղյա՛մըղի՛ն։

Օ՛րԹ։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Ղուկասու։

ԳԼ՝ 22. հմր՝ 66։

Վասն Զաքէոսանց և ԽաչէողջԹեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ իբրև այգ եղև, ժողովեցաւ ծերակոյտ ժողո-

Digitized by Google

վըրդեանն, քահանայապետքն, և դպիրք. և հանին, ածին զնա յատեանն իւրեանց. և ասեն, թէ դու ես Քրիստոսն, ասա մեզ: Ասէ ցնոսա. եթէ ասացից ձեզ՝ սակայն ոչ հաւատայք: Եւ եթէ հարցից ինչ զձեզ՝ չտայք ինձ պատասխանի, կամ արձակիցէք: Բայց յայսմհետէ նստցի որդի մարդոյ ընդ աջմէ զօրութեանն Աստուծոյ: Եւ ասեն ամենեքեան. ուրեմն դու ես Որդին Աստուծոյ. և նա ասէ ցնոսա. դուք ասէք թէ ես եմ: Եւ նոքա ասեն, զինչ ևս պիտոյ է մեզ վկայութիւն. զի մեղէն իսկ լուաք ի բերանոյ դորա: Եւ յարուցեալ ամենայն բազմութիւնն նոցա, ածին զնա առ Պիղատոս: Եւ սկսան չարախօս լինել զնմանէ և ասել. գտաք զսա, զի թիւրէր զազգս մեր. և արգելոյր ի տալոյ հարկս կայսեր. և ասէր զանձնէ՝ եթէ Քրիստոսն իցէ թագաւոր: Իսկ Պիղատոս եհարց զնա և ասէ. դու ես թագաւորն Հրէից. նա պատասխանի ետ նմա և ասէ. դու ասացեր: Ասէ Պիղատոս ցքահանայապետսն, և ցժողովուրդսն. չգտանեմ ինչ վնաս յառնս յայսմիկ: Եւ նոքա պնդէին և ասէին, եթէ խռովէ զժողովուրդս. ուսուցանէ ընդ ամենայն Հրէաստան, սկսեալ ի Գալիլէէ մինչև ցայսր: Իսկ Պիղատոս իբրև լուաւ զԳալիլէէ, եհարց եթէ Գալիլեացի իցէ այրն: Եւ իբրև գիտաց եթէ յիշխանութենէ Հերովդէի է, ետ տանել զնա առ Հերովդէս. քանզի և նա յԵրուսաղէմ էր յաւուրսն յայնոսիկ: Եւ Հերովդէս իբրև առնս զՅիսուս,

Digitized by Google

ուրախ եղև յոյժ. զի ցանկայր ի բազում ժամանակաց տեսանել զնա. քանզի լսէր բազում անգամ զնմանէ. և ակն ունէր նշան ինչ լեալ՝ տեսանել ի նմանէ: Հարցանէր զնա բանիւք բազմօք. և նա ոչինչ ետ նմա պատասխանի: Կային քահանայապետքն և դպիրքն՝ և պնդագոյնս չարախօսէին զնմանէ: Արհամարհեաց զնա և Հերովդէս հանդերձ իւրօք զօրականօքն. և այպն արարեալ՝ էարկ զնովաւ հանդերձս ըսպիտակս. և ետ տանիլ անդրէն առ Պիղատոս: Եւ եղեն բարեկամք Պիղատոսի և Հերովդէսի յաւուրն յայնմիկ. քանզի յառաջ թշնամիք էին միմեանց: Կոչեաց Պիղատոս զքահանայապետսն, և զիշխանս, և զժողովուրդն: Եւ ասէ ցնոսա. ածիք, մատուցիք ինձ զայրըս զայս իբրև զխոտորեցուցիչ ժողովրդեանն. և ահաւասիկ առաջի ձեր դատեցի, և վնաս ինչ ոչ դտի յառնս յայսմիկ՝ զորոյ դուք չարախօսէք զդմանէ: Այլ և ոչ Հերովդէս, քանզի ետու տանիլ զդա առ նա. և արդ ոչինչ մահու արժանի է գործեալ դորա: Խրատեցից զդա, և արձակեցից: Չի հարկ էր մի մի ըստ տօնի արձակել նոցա: Եւ նոքա աղաղակէին ամենայն բազմութեամբն և ասէին. քարկ զդա՝ և արձակեա մեզ զԲարաբբա: Որ էր վասն խռովութեան իրիք եղելոյ ի քաղաքին և սպանութեան մտեալ ի բանտ: Դարձեալ Պիղատոս սկսաւ խօսիլ. քանզի կամէր արձակել զՅիսուս: Եւ նոքա անդրէն աղաղակէին և ասէին. ի խաչ հան զդա: Եւ նա երիցս

ասէ ցնոսա. զինչ չար արար սա. ոչինչ վնաս մեհու գտի ի սմա. խրատեցից զսա, և արձակեցից։ Եւ նոքա ատիպէին մեծաձայն՝ և խնդրէին զնա ի խաչ հանել. և զօրանային բարբառք նոցա և քահանայապետին։ Եւ Պիղատոս հաւանեցաւ առնել ըզհայցուածս նոցա։ Արձակեաց նոցա զԲարաբբայն. զոր վասն խռովութեան և սպանութեան արկեալ էր ի բանտ՝ զոր և խնդրէինն իսկ. և զՅիսուս մատնեաց կամաց նոցա։ Իբրև առին, գնացին զնա՝ ըմբռնեցին զոմն Սիմօն Կիւրենացի՝ որ գայր յանդէ. եդին ի վերայ նորա զխաչն բերել զկնի Յիսուսի։ Եւ երթայր զհետ նորա բազմութիւն ժողովրդեանն, և կանանց. որք կոծէին, և աշխարէին զնա։ Դարձաւ Յիսուս և ասէ ցնոսա. դստերք Երուսաղէմի՝ մի լայք ի վերայ իմ, այլ լացէք ի վերայ անձանց և ի վերայ որդւոց ձերոց։ Զի եկեսցեն աւուրք, յորս ասիցեն. Թէ երանի ամլոց՝ և որովայնից՝ որք ոչ ծնան. և ըստեանց, որք ոչ դիեցուցին։ Ցայնժամ սկսանիցին ասել լերանց՝ թէ անկերուք ի վերայ մեր. և բլրոց՝ թէ ծածկեցէք զմեզ։ Զի եթէ ընդ փայտ դալար զայս առնեն, ընդ չորն զինչ լինիցի։ Ածին և այլ երկուս չարագործս, սպանանել ընդ նմա։ Իբրև չոգան ի տեղին կոչեցեալ գագաթն. անդ հանին զնա ի խաչ. և զչարագործսն զոմն ընդ աջմէ՝ և զոմն ընդ ձախմէ խաչեցին։ Եւ Յիսուս ասէ. Հա՛յր, թո՛ղ դոցա. զի ոչ գիտեն՝ զինչ գործեն. և ի բաժանել

Digitized by Google

զհանդերձս նորա՝ արկին վիճակս։ Եւ կայր ժողովուրդն հայեցեալ. անգոսնէին զնա և իշխանքն հանդերձ նոքօք՝ և ասէին. զայլս ապրեցոյց, ապրեցուցէ և զանձն եթէ դա է Քրիստոս, Որդի Աստուծոյ ընտրեալն։ Այսպն առնէին զնա և զինուորքն. եկեալ առաջի մատուցանէին նմա քացախ։ Եւ ասէին. եթէ դու ես թագաւորն Հրէից՝ փրկեա զանձն քո։ Եւ էր գիր գրեալ ի վերայ նորա. Յունարէն, և Դաղմատերէն, և Եբրայեցերէն գրով, եթէ սա է արքայն Հրէից։ Իսկ մի ոմն ի կախելոց չարագործացըն հայհոյէր զնա, և ասէր. ոչ դու ես Քրիստոս. փրկեա զանձն քո, և զմեզ։ Պատասխանի ետ ընկերն սաստելով նմա, և ասէ. չերկնչիս դու յԱստուծոյ՝ զի ի նմին պատժի կաս։ Եւ մեք յիրաւի, զի արժանի՝ որոց գործեցաքն՝ առնումք զհատուցումն. և սա ապիրատ ինչ ոչ գործեաց։ Եւ ասէ ցՅիսուս. յիշեա զիս տէր՝ յորժամ գայցես արքայութեամբ քով։ Եւ ասէ ցնա Յիսուս. ամէն ասեմ քեզ. այսօր ընդ իս իցես ի դրախտին։ Եւ էր իբրև վեցերորդ ժամ. և խաւար եղև ի վերայ ամենայն երկրի մինչև ցիննեերորդ ժամ. խաւարեցաւ արեգակն։ Եւ հերձաւ վարագոյր տաճարին ընդ մէջ։ Եւ կարդաց Յիսուս ի ձայն մեծ՝ և ասէ. Հայր՝ ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ. զայս իբրև ասաց՝ եհան զհոգի։ Եւ տեսեալ հարիւրապետին՝ որինչ եղեն՝ փառաւոր արար զԱստուած՝ և ասէ. արդարև այրս այս արդար էր։

Digitized by Google

եւ ամենայն ժողովուրդն, որք եկեալ էին, և տեսանէին զտեսլիլն զայն՝ և զգործ, բազխէին զկուրծս՝ և դառնային։ Կային և ամենայն ծանօթքն նորա ի հեռաստանէ. և կանայք, որք եկեալ էին զհետ նորա ի Գալիլեէ՝ տեսանէին զայն։

Աղօթք հանդերձ սաղմոսելով՝ զտէր աղաչեսցուք։
Տէր ողորմեա։ (Կրկին կրկնէ։)
Եւ ևս խաղաղութեան"։ Օրհնութիւն և վասն"։

Ուխտերորդ սաղմոս, ձեռն։

Կ8. Անձն իմ որպէս երկիր ծարաւի է առ քեզ. վաղվաղակի լուր ինձ տէր՝ զի նուազեցաւ յինէն հոգի իմ։

Փխ. Տէր լուր աղօթից իմոց, ունկն դիր խնդրուածոց իմոց ճշմարտութեամբ քով։ (Տես ի Քիւն. 6։)

Ընթերցուածս ի Ջաքարիայ Մարգարէէ։
Գլ՝ 14. հմր՝ 5։

Եւ եկեսցէ, հասցէ տէր Աստուած իմ, և ամենայն սուրբք ընդ նմա։ Եւ եղիցի յաւուր յայնմիկ՝ ոչ եղիցի լոյս. և ցուրտ՝ և պարզ։ Եղիցի օր մի. և օրն այն յայտնի տեառն. ոչ տիւ իցէ՝ և ոչ գիշեր. և ընդ երեկս եղիցի լոյս։ Յաւուր յայնմիկ բղխեսցեն ջուր կենդանի յՈրուսաղէմ. կէս նորա ի ծովն առաջին. և կէս նորա ի ծովն որ յետոյ. զամառն և ըզգարուն նոյնպէս եղիցի։ Եւ եղիցի տէր թագաւոր ի վերայ ամենայն երկրի. յաւուր յայնմիկ եղիցի տէր

Digitized by Google

մի՝ անուն նորա մի։ Պատել զամենայն երկիր զանապատն՝ ի Փաբայ մինչև յԻեմաոն՝ ընդ կողմն հարաւոյ Երուսաղէմի. և Հուամ ի տեղւոջ իւրում կացցէ. ի դրանէն Բենիամինի մինչև ի տեղի դրանն առաջնոյ. մինչև ի դուռն անկեանցն. և մինչև ցաշտաղական Անամայէլի՝ մինչև ի հնձանս թագաւորին։ Եւ բնակեսցին ի նմա. և նզովք ոչ ևս լիցին. և բնակեսցի Երուսաղէմ յուսով։

Պօղոսի Առաքելոյն ի Տիմոթէոսի Առաջին Թղթոյն Ի
ընթերցուածս։
ԿԼ՝ 6. Հմր՝ 13։

Պատուիրեմ քեզ առաջի Աստուծոյ, որ կենդանի առնէ զամենայն. և Յիսուսի Քրիստոսի, որ վկայեաց առաջի Պոնտացւոյ Պիղատոսի զբարւոք դաւանութիւնըն։ Պահել քեզ զպատուիրանն անբիծ՝ անարատ, մինչև ի յայտնութիւն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Զոր յիւր ժամանակս ցուցցէ, երանելին՝ և միայն հզօր. թագաւոր թագաւորաց. և տէր տերանց։ Որ միայն ունի զանմահութիւն բնակեալ ի լոյս անմատոյց. զոր ոչ‘ք ետես ի մարդկանէ՝ և ոչ տեսանել կարօղ է. որում պատիւ, և զօրութիւն յաւիտեանս. ամէն։

ԵՐԳ

Ա՞ղբերա՞ցն անա՛պա՛կան որ յի՛տ մա՛հուն անմահարա՛ր. բըղխեալ ի քէն վը՛տա՛կ կըրկին ի նո՛բա՛գո՛ւմըն կողածնին. բա՛ց ըզբերա՞ն իմ յա՛բո՛ւ-

Digitized by Google

ցո՛ւմըն քո ա՛րեա՛ն կենարարին. լուա դարձեալ յաւա՛զանին թէ ո՛չ չնորհաք այլ ա՛րտասուո՛ք։

Ցա՞նմահի՞դ մեռա՛նե՛լո՛յ զմեռեա՛լ հո՛գիս կենդանացո՛. թաղմամբ ի նո՛ր գե՛րե՛զմանի զթաղեա՛լս ի՛ մեղըս վերածեա՛. ի՛ գբի ներքնո՞ւմն իջա՛նե՛լո՛վ ի գբոյն մե՛ղա՛ց վերաբերեա՛. ի ստուե՛ր մա՛հու քո՛ բնա՛կելով լուսաւորեա՛ և պի՛ս հոգւո՛վ։

Սի՞րտ իմ առ քե՛զ աղա՛ղա՛կէ՛ բան որ ընդ հո՛գր ի սկզբանէ. որ կամաւոր վա՛ղո՛ն մարդկան կրե՛ցե՛ր մարմնով զա՛յս տմե՛նայն. ի՛նձ լըսելի՞ արա՛ ր՛զձայն յարքայութեա՛նըդ քո կոչման. ընդ ժողովոցն ա՛նդ ա՛նդրանկա՛ցն օրհնե՛լ ըզքեզ միշտ յա՛ւիտեա՛ն։

Օ՞րթ։

Սրբոյ Աւետարանիս Ցիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Ցօհաննու.

Գլ՝ 19. հմր՝ 17։

Վասն Խաչելութեան Տեառն մերոյ Ցիսուսի Քրիստոսի։

Եւ նորա առեալ տանէին զնա. և բարձեալ էր ինքնին զխաչափայտն. և ելանէր ի տեղին՝ որ անուանեալ էր գագաթն. և կոչիւր Եբրայեցերէն Գողգոթա։ Ուր և ի խաչ իսկ հանին զնա. և ընդ նմա երկուս ևս այլս աստի և անտի, և ի մէջի զՑիսուս։ Գրեաց և տախտակ մի Պիղատոս, և եդ ի վերայ խաչին. և էր գրեալ Ցիսուս Նազովրեցի, թագաւոր Հրէից։ Զայն տախտակ ընթերցան բազումք ի Հրէ-

Digitized by Google

ից. զի մօտ էր ի քաղաք անդր տեղին՝ ուր խաչեցաւն Յիսուս. և էր գրեալ Եբրայեցերէն, Դաղմատերէն. և Յունարէն: Առեն ցՊիղատոս քահանայապետքն Հրէից. մի՛ գրեր Թագաւոր Հրէից. այլ թէ նա ասաց՝ Թագաւոր եմ Հրէից: Պատասխանի ետ Պիղատոս. զոր ինչ գրեցի՝ գրեցի: Իսկ զինուորքն իբրև հանին ի խաչ զՅիսուս, առին զհանդերձս նորա. և արարին չորս մասունս. իւրաքանչիւր զինուորի մասն. իսկ զպատմուճանն՝ քանզի էր առանց կարանի, ի վերուստ փորանկեալ ամենևին: Առեն ցմիմեանս. մի՛ պատառեսցուք զայդ. այլ արկցուք վիճակս ի վերայ դորա՝ ումի և ելցէ. զի լցցի գիրն՝ որ ասէ. բաժանեցին զհանդերձս իմ յիւրեանս, և ի վերայ պատմուճանի իմոյ զվիճակ արկին. զինուորքն զայս ինչ գործեցին: Եւ կային առ խաչին Յիսուսի մայր նորա. և քոյր մօր նորա Մարիամ Կղէոպայ. և Մարիամ Մագդաղենացի: Յիսուս իբրև ետես զմայրն, և զաշակերտն, զոր սիրէր, զի կայր մօտ. ասէ ցմայրն, կին դու, ահա որդի քո: Ապա ասէ ցաշակերտն. ահա մայր քո. և յայնմ ժամանակէ առ աշակերտն զնա առ իւր: Ետ այսորիկ գիտաց Յիսուս, եթէ ահա ամենայն ինչ կատարեալ է. զի կատարեսցի գիրն, ասէ. ծարաւի եմ: Եւ անդ կայր աման ինչ լի քացախով. և նոցա սպունգ լցեալ քացախով ընդ լեղւոյ՝ չուրջ եդեալ զմշտկաւ դոպայի՝ մատուցին ի բերան նորա: Իբրև էառ Յիսուս զքացախն հանդերձ լեղւովն՝ ասէ. ամենայն ինչ կա-

Digitized by Google

տարեալ է. և խոնարհեցուցեալ զգլուխն՝ աւանդեաց պոգին: Իսկ Հրէայքն քանզի ուրբաթ էր, զի մի անդէն ի խաչին ագանիցին մարմինքն մինչև ցշաբաթըն. զի էր օր մեծ շաբաթուն այնորիկ. աղաչեցին զՊիղատոս, զի խորտակեսցեն զբարձս նոցա, և բարձցին: Եկին զինուորքն, և զառաջնոյն խորտակեցին զբարձս. նոյնպէս և զմիւսոյն՝ որ ընդ նմա ի խաչն եղեալ էր: Բայց իբրև եկին առ Յիսուս, և տեսին զի այն ինչ մեռեալ էր՝ ոչ խորտակեցին զբարձս նորա: Այլ միոմն ի զինուորացն տիգաւ խոցեաց զկողս նորա. և վաղվաղակի ել արիւն և ջուր: Եւ որ եահան, վկայեաց. և ճշմարիտ է վկայութիւն նորա. և նա գիտէ եթէ ճշմարիտ ասէ. զի և դուք հաւատասջիք: Ա՛յս եղև՝ զի լցցի գիրն, եթէ ոսկր նորա մի՛ վշրեսցի: Եւ դարձեալ միւս դիր ասէ, եթէ հայեսցին ի նա՝ յոր խոցեցինն:

Եւ ապա Շարաւկան՝ ԲԿ:

Խաչի քո Քրիստոս": (Տես ի Թիւն. 467:)

Բայց առ՝ զսուրբ չարչարանսդ քո մեծացուցանեմք, և զսուրբ խաչելութիւնդ քո փառաւորեմք. և այլն քան կարգին: Նոյնպէս, Փառք սուրբ հարչդ, ալէ. չարչարանացդ, ալէ. խաչելութեանդ, ալէ. և այլն որպէս անդ եղաւ: Ապա Շարաւկան՝ ԲԿ, Խաչն վեհարար":

Փառք Հօր եւ". Այժմ եւ միշտ":

Զխաւարեալ ոչ միայն ի վերայ բո՞ւսաբեր արմա-

Digitized by Google

տոյն, այլ քրովբէական կառոքն ըստ՝ բիջեալ ի դըժոխս, կենագործեաց հըզօրեղա՞պէ՞ս զերամս ա՛ըդա՛յո՞ց։

Չկնի Քարոզ՝ Սուրբ խաչիւս։ Աղօթք՝ Պահպանեա։
(Տես ի Թիւն. 147։)

Եւ համբուրեսցեն զսուրբ խաչն և զԱւետարանն և արձակեսցին։

Իսկ է տաննեըորդ ժամուն ժողովեալ յեկեղեցին՝ կատարեցան զկարգ Թաղման Քրիստոսի Աստուծոյ։

Բայց նախ՝ Խոնարհեցո և Ապրեցո։ Լոյս զուարթ։ Քարոզ և Մաղթանք Հասեալքի։ (Տես ի 101 էն ց 107. Թիւն։)

Մեսրդ։

Ետուն ի կերակուր ինձ լեղի. և ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ։

Եղիցին սեղանք նոցա առաջի նոցա յորոգայթ, ի հատուցումն և ի գայթակղութիւն։

Ընթերցուածս յերեմիայ Մարգարէէ։
Գլ՝ 11. հմր՝ 18։

Տէր ծանո՛ ինձ, և ծանեայց"։ (Տես ի Թիւն. 502։)

Ընթերցուածս յեսայիայ Մարգարէէ։
Գլ՝ 52. հմր՝ 13։

Ահաւադիկ ի մի՛ս առցէ"։ (Տես ի Թիւն. 481։)

Սաղմոս. իա։

կց. Բաժանեցին զհանդերձս"։ (Տես ի Թիւն. 476։)

Ուղիղ եղիցին աղաչանք մեր. որպէս խունկ առաջի քո տէր. համբարձումն ձեռաց մերոց. պատարագ երեկոյի։

Քարոզ՝ Աղաչեսցուք"։ (Տես ի Թիւն. 215։)

Digitized by Google

Աղօթք՝ Լուր Հայնից և այլն. ցՇարականն Համբարձի. (Տես ի 110 էն ց113 Թիւն:) Սուրբ Աստուած՝ որ քահչեցար: Բայց ի ծուռնկս անկեալ քահանայքն և ժողովուրդքն. իսկ պիտառւորեալն մի՛ ասիցեն:

Համբարձի, Դպ. Ստեղի:

Եկա՞յք հա՞՝ւա՛յ տա՞ցեալք ե՛րկրըպագե՛ացո՛ւք սո՞ւրբ ե՛ըրո՞ւդո՞ւթեանն. լո՞՛յսն որ ը՛նդհո ը է՛յ յե՞ո՞ւթեան՝ ի քա՞հանայի՛՞ց դա՞տա՛պարտեա՛լ ե՞կեա՞լ ի՛ խա՞չ ե՛լա՞նել անը՛մա՞՛հ թա՛ղա՞ւո՛ւրն: Ջո՞ը երկի՛՞նք ո՞չ բա՛ւէ՛՞ն տա՞՛նել, ըզփա՞՛յտ պատուհա՛սի՞՛ ո՛՞ւսո՞վ բա՞՛ղձեալ և ե՛կեա՛՞լ ի տեղի՛ կառա՞՛ւղ՛մա՞՛ն ի՛՝ խա՞չ ե՛լա՞՛նել անը՛՞՛՝՝: Հի՞ացեա՛՞լ պե՞տո՞ւթեա՛՞նց ե՛՞ըկնից ը՛նդ թագո՛՞ւմըն տեառն ի՛՝ նո՞՛ր գե՛՞ւթ՞զմա՞՛՞նի. քանը՛՞դի՛՞՛՝ որ ա՛՞նմա՞՛՞հն է՛՞ յե՞ո՞ւթեան վա՛՞ն ա՞՛ըարածո՞՛՞ց փըրկուե՛թեա՞՛՞ն ը՛դմա՞՛՞՛՞՛

իմ ինձ ի քէն են։

Սրբոց քոց՝ որք են յերկրի քում. աքանչելի արարեր զամենայն կամս իմ ի նոսա։

Յաճախեսցին հիւանդութիւնք նոցա. յետ այսորիկ ապա վազվազեսցին։

Ո՛չ ժողովեցայց ի ժողովս նոցա յարեանց, և ո՛չ յիշեցից զանուանս նոցա ի շրթունս իմ։

Տէր բաժին ժառանգութեան իմոյ՝ և բաժակի իմոյ դու ես, որ այսրէն դարձուցանես զժառանգութիւն իմ յիս։

Վիճակք ելին ինձ ընդ ընտիրս, և ժառանգութիւն իմ հաճոյ եղև ինձ։

Օրհնեցից զտէր՝ որ իմաստուն արար զիս, մինչ ի գիշերի ևս խրատեցին զիս երիկամունք իմ։

Յառաջագոյն տեսանէի զտէր առաջի իմ յամենայն ժամ, զի է ընդ աջմէ իմմէ զի մի սասանեցայց։

Վասն այսորիկ ուրախ եղև սիրտ իմ, և ցնծացաւ լեզու իմ, ևս և մարմին իմ բնակեսցի յուսով։

Զի ո՛չ թողցես զանձն իմ ի դժոխս, և ո՛չ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն։

Ծուցեր ինձ զճանապարհս քո կենաց, լցուցեր զիս ուրախութեամբ երեսաց քոց ի քաղցրութենէ վայելչութեան աջոյ քո մինչ խափառ։

Ընթերցուածս յԱռակաց։
Գլ՝ 2. Հմր՝ 1։

Որհեցան յանձինս իւրեանց զանուղղայս. և ա-

Digitized by Google

սեն. սակաւ և ցաւագին են կեանք մեր. և ոչ գոյ բժշկութիւն ի վախճանի մարդոյ. և ոչ երևեցաւ՝ որ դարձաւ ի դժոխոց: Զի յանկարծակի իմն եղեալ. և յետ այսորիկ լինիցիմք իբրև զչեղեալս. զի իբրև գծուխ է չունչ յունդունս մեր. և իբրև զկայծակն՝ բանն ի չարժման սրտի մերոյ: Ցորոյ ի շիջանիլն՝ մոխիր լինի մարմինն. և ոգին ափուի իբրև զօդ թոյլ: Եւ անուն մեր մոռացեալ ժամանակաւ. և ոչինչ յիշատակեսցէ զգործս մեր. և անցցեն կեանք մեր իբրև դհետս ամպոյ. և իբրև զչամանդաղ ցրուեսցին հալածեալք ի ճառագայթից արեգական. և ի տապոյ նորա ծանրացեալք: Զի անցք ստուերի են կեանք մեր. և չիք խափան վախճանի մարդոյ. զի կնքեցաւ՝ և ոչ՝ է՝ որ դարձուցանէ: Ադրէ՝ եկայք՝ և վայելեսցուք ի բարութիւնս՝ որք կան. և վարեսցուք արագածովք՝ զբաղեալք իբրև ի մանկութեան: Պէսպէս գինեօք՝ և անոյշ իւղօք լնանիցուք. մի՛ անցցէ առ մեօք ծաղիկ գարնանոյ: Բոլորիւք վարդից պսակիցուք՝ մինչչև թառամեալ իցեն: Մի՛ք ամենեին անմասն լիցի ի մեծէ ուրախութենէս մերմէ. յամենայն տեղիս թողցուք նշանակ ուրախութեան. զի այն է բաժին մեր. և սոյն վիճակ: Եւ բռնադատեսցուք զաղքատն անիրաւութեամբ. մի՛ խնայեսցուք յայրին. մի՛ խորշեսցուք ի բազմաժամանակեայ ալեաց ծերոյն: Եւ օրինադրութիւն, բռնութիւնս մեր եղիցի. զի տկարութիւն անպիտան յանդիմանի: Դարանակալ

քիցուք արդարոյն. զի դժպհի եղև մեզ. և հակառակ կայ գործոց մերոց. և նախատինս դնէ մեզ զյանցանըս օրինացն. և բամբասէ զմեզ մեղօք մանկութեան մերոյ: Խոստանայ ունել զգիտութիւն Աստուծոյ. և Որդի Աստուծոյ զանձն իւր անուանէ: Եւ եղև յանդիմանութիւն մտաց մերոց: Ծանր է մեզ և տեսանել զնա. զի աննման են այլոց կեանք նորա՝ և այլազգի չափիզք նորա: Ի դարչութիւն համարեցաք նմա. և խորշի ի ճանապարհաց մերոց՝ որպէս ի պղծութենից. երանէ զվախճան արդարոց. և հպարտացեալ կոչէ հայր զԱստուած: Տեսցուք թէ ճշմարիտք իցեն բանք նորա. և փորձեսցուք զվախճան նորա: Եթէ իցէ արդարև Որդի Աստուծոյ՝ պաշտպանեսցէ նմա. և փրկեսցէ զնա Աստուած ի ձեռաց հակառակորդաց: Թշնամանօք՝ և դանիւք խոչտանկեսցուք զնա. զի զչափ առցուք հեզութեան նորա. և խելամուտ լիցուք անոխակալութեան նորա: Մահու խայտառակութեան դատեսցուք զնա. եթէ լինիցի այցելութիւն նմա ի բանից իւրոց: Զայս խորհեցան՝ և խաբեցան. զի կուրացոյց զնոսա չարութիւն իւրեանց: Եւ ոչ ծանեան զխորհուրդս Աստուծոյ. և ոչ վարձուց ակնկալեան սրբութեան. ոչ ընտրեցին զպատիւ ոգւոց անարատից:

Ընթերցուածս ի Ջաքարեայ Մարգարէէ:
Գլ՝ 12. հմր՝ 8:

Եւ եղիցի յաւուր յայնմիկ պաշտպանեսցէ տէր ա-

Digitized by Google

մենայն բնակչաց Երուսաղէմի. և եղիցի՝ որ տկարն իցէ ի նոսա յաւուր յայնմիկ՝ իբրև զԴաւիթ. և տունն Դաւթի իբրև զաստուածոյ՝ իբրև զհրեշտակ տեառն առաջի նոցա: Եւ եղիցի յաւուր յայնմիկ՝ խնդրեցից բառնալ զամենայն ազգս եկեալս ի վերայ Երուսաղէմ: Եւ հեղից ի վերայ տան Դաւթի՝ և ի վերայ բնակչաց Երուսաղէմի զհոգի չնորհաց և գթութեան. հայեսցին առ իս վոխանակ կաքաւելոյն. և կոծեսցին ի վերայ նորա կոծ իբրև ի վերայ սիրելւոյ. և աշխարհեսցեն աշխար իբրև ի վերայ անդրանկան: Յաւուր յայնմիկ ոստկասցի կոծ յԵրուսաղէմ, իբրև զկոծ Նաւեննեաց կոտորելոց ի դաշտի: Եւ կոծեսցի երկիր ըստ ազգս ազգաց առանձինն: Ազգ տանն Դաւթի առանձինն. և կանայք նոցա առանձինն. ազգ տանն Ղևեայ առանձին՝ և կանայք նոցա առանձինն. ազգ տանն Շմաւոնի առանձին. և կանայք նոցա առանձինն: Ամենայն ազգք մնացեալք առանձին. և կանայք նոցա առանձինն:

Պետրոսի Աւաքելոյն ի Կաթուղիկէից Առաջին Թղթոյն
ի ընթերցուածս:
Գլ՝ 3. հմր՝ 17:

Զի լաւ է բարեգործաց եթէ կամիցին ըստ Աստուծոյ կամացն չարչարիլ՝ քան չարագործացն: Զի և Քրիստոս միանգամ վասն մեղաց ի վերայ ձեր մեռաւ. արդարն ի վերայ անարդարոց. զի զձեզ մերձեցուսցէ առ Աստուած. թէպէտ և մեռաւ մարմնով.

Digitized by Google

այլ կենդանի է հոգւով։ Որով և ոգւոցն՝ որք էին ի բանտին, երթեալ քարոզեաց։ Երբեմն ապստամբեալոցն. յորժամ ներէր Նոցա Աստուծոյ երկայնմտութիւնն։

Ալէլուիա ալէլուիա

Ընդ երեկոյս հանգիցեն լալիք. առաւօտու եղիցի ուրախութիւն։

Ալէլուիա օրթ։

Սրբոյ Աւետարանիս Ցիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Գլ՝ 27. հմր՝ 57։

Վասն Թաղման Տեառն Մերոյ Ցիսուսի Քրիստոսի։

Եւ իբրև երեկոյ եղև՝ եկն այր մի մեծատուն յԱրիմաթեայ՝ որում անուն էր Յովսէփ. որ աշակերտեցաւ իսկ Ցիսուսի։ Սա մատուցեալ առ Պիղատոս՝ խնդրեաց զմարմինն Ցիսուսի, յայնժամ Պիղատոս հրամայեաց տալ զմարմինն։ Եւ առեալ զմարմինն Յովսէփ՝ պատեաց սուրբ կտաւոք։ Եւ եդ ի նոր գերեզմանի՝ զոր փորեաց ի վիմի. և թաւալեցուցեալ կափարիչ դրան գերեզմանին վէմ մի մեծ՝ և գնաց։ Անդ էր Մարիամ Մագդաղենացի՝ և միւս Մարիամն, նստէին հանդէպ գերեզմանին։

Եւ ապա Սուրբ Աստուած՝ որ թաղեցար "ա՛ զՓառաւոբեալն և ս՛ ասա՛։ Զկնի Շարական քջ։ Պարզևատուն ամենեցուն։ Իւր սաղմոսն։ Նախատօճակ առնելով. զի Թաղումն Տեառն է։ (Տես յաւուրս Աւագ Շաբաթուն։)

Digitized by Google

Քարոզ. Խնդրեսցուք. Կեցո. Աղօթք՝ Քում ամենազօր և հրաչալի թաղմանդ: (Տես ի Թիւն. 75:)

Եւ դիցեն զՍուրբ Խաչն ի վերայ Սեղանոյն՝ պատեալ սպիտակ դատտառակաւ ի խորհուրդ պատանացն Քրիստոսի: Եւ ապա պաք առեալ սկսանիցեն Շարական ՌԿ:

Խաչի քո Քրիստոս": (Տես ի Թիւն. 467:)

Բայց աստ՝ զսուրբ խաչելութիւնդ քո մեծացուցանեմք. և զսուրբ թաղումնդ քո փառաւորեմք: Նոյնպէս Փառք սուրբ խաչիդ, ալէ. խաչելութեանդ, ալէ. սրբոյ թաղմանդ ալէ. և այլն: Շարական՝ ՌԿ, Խաչն կենարար:

Փառք Հօր եւ". Այժմ եւ միշտ":

Աղաղակէր Աստուածային բարբառովըն տէր ցիսուս ի խաչին. և ընդդէմ աստեղաց կընքէր հրացեալ Աստուածային սուրբ ձեռօքն. և բարկութեամբ զարթո՞ւցեա՞լ ի վերայ խաւարասէր իշխանի՞ն:

Ձկնի Քարոզ՝ Սուրբ Խաչիւս: Աղօթք՝ Պահպանիչ: (Տես ի Թիւն. 147:)

Եւ այլն ի հոգեշնչութեան:

Digitized by Google

Ա Ի Ա Գ

Շ Ա Բ Ա Թ

Ի գիշերին վաւերեցին լոյս յաւագ կոչումնն Տիրոջն։ Կանոնագլուխ՝ ղէ. Սկբենկէ". (Տէս ի Ղեւտ. 25)։

Հանդամառեան Շաբաթան. Դկ։

Հա՛յր ա՞նբասկիզբըն բա՛րեխնամ մարդա՛սէր. որ ստեղծի՛ղ ե՛ս հոգւո՞ց և մարմնոց. յիշեա՛ զնըմկե՛. ցեալսըն մե՞ր և հանգո ը՛նդ սո՞ւրբըս քո՛։ Ո՛րդի՞դ մի՞ածի՛ն ո՛ր դթածդ ես ա՛ռ ա՞մենեսեան. և խաչի՛ւ և ա՛րեամբ գնեցե՛ր ըզքո՞ ժողովուրդս. յիշեա՛ զգինս ա՛րեան քո տէր, և հանգո՞"։ Հոգի՞դ ճը՞շմարի՛տ որ աղբիւրդ ես ա՛նը՞սպառելի, և լը՛ցուցի՛չ ամենա՞յն բարութեանց. յիշեա՛՞"։

Թը՛նդրե՞մք ի քէ՛ն թագաւոր փառա՛ց փառաւո՛րեա՞լդ ի գուարթնոց. ըզնընկեցեա՛լսըն մեր ընկա՛լ մարդա՛սէր տէ՞ր, և հանգո ը՛նդ սո՞ւրբըս քո՛։

Digitized by Google

ցո՞ւժամ գա՞ս փառաք հօ՛ր դատել զերկի՛ր արդա-
րութեա՞ն արե՛գակն. ըզնըն՞»: Ի՞ նըստի՞լ քո
յա՞տենի՞ դատաւո՛ր ահեղ Քրիստոս փըրկի՞չ մեր և
յոյս. ըզնըն՞»:

Ո՞ր արարիչդ հս արարա՛ծո՞ց հանգուցեալդ ի
հրե՛ղէ՞ն կառս. յի՛չեա՞ զհո՛գիս ընընջեցելո՛ց մե՞-
ր՞ց, և հանգո ը՛նդ սո՞ւրբըս քո՞: Ո՞ր երկայնա-
միտդ հս առ ամենե՛սեա՞՞ն և ներո՛ղ յանցա՛նաց
մերոց. յի՛չ»:

Ա՞՞ստուա՛ծածին մա՞յր և՛ կոյս ծա՛գող արեգա՛-
կանն արդարութեա՞ն, ո՛ր լուսաւո՛րեացն ըզմե՛զ.
հոգևոր ե՛րդո՞վ զքեզ բարե՛բանե՞մք, և փառաւո՛-
րեմք ըզմիա՛ծի՛ն քո՞ զորդի՞ն: Ե՞՞լոյծ զօրէ՛նըս
քըննութեա՛ն մա՛րդկան հրաշափա՞ռ քո ծը՛նունդ,
և զէութի՛ւն բնութեանն ամբո՛ղջ պահեա՞լ, և կու-
սո՛ւթեանըդ քո ոչ խախտե՞ցան կընիք. հոգե»:
Զքե՞՞զ մորե՛նի ա՞նկէզ, լեառը՛ն վիմածի՛ն դուռըն
փակեալ և ա՛ղբիւր կընքեա՞լ. նա՞՞ խաւե՛սացըն գու-
շակեալ մայր ե՛ւ կոյս. հոգե»:

Իա՛չի քո Քրիստոս ե՛րկրպագե՛ն արարածք ա-
մենայն որ ի՛ փըրկութի՞ւն մե՛զ կանգնեցաւ. սա՞՞
եղիցի մեզ պահապա՛ն յաղթող, ապրեցուցանե՛լ ըզ-

Digitized by Google

մեզ ի պատրա՛նա՛ց թը՛չնամո՛ղն։ Ի՛ ամա բա՛րձրացար բարձո՛ղդ անիծից որ փառաւորեա՛լդ ե՞ս ընդ հո՛ր. ժողովե՞՛լ ըզհետացեա՛լսըն կենսաբե՛ր փա՛րիւն. ապրե՛՛»։

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւո՛յն Սրբոյ.

Սուլաւ լուսաւորեցա՛ն արարա՛ծք ամենայն. ամա՞՛՛ ապաստին ալդևլեա՛լքն ի մեղսասէ՛ր բա՛նտին. որ ազատեա՛ց ըզմեզ ի պատրա՛՛»։

Այժմ եւ մի՞շտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ո՛ր միւսանգամ գալո՛ց ես հայրենի փա՛ռո՛՛ք նորոգե՛լ զնախաստեղծին ծընուն. յի՛չեա՞՛ դո՛ղիս ընընջեցեալո՛ց մե՛րո՛ց, և հանգո ը՛նդ սո՞ւրբըս քո՞։

Սաղմոս Աւետարանին

Դ Կ

Ալէ՛՞՛լուիա Ալէ՛՞՛լուիա։

Տէր լուր աղօթից իմոց. ունկնդիր խնդրուածոց իմոց ձշմարտութե՛ամբ քով։

Լուր ինձ արդարութե՛ամբ քով, և մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայի քում. զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի։

Հալածեաց թշնամին զանձն իմ. խոնարհ արար յերկիր վկեանս իմ. և նստոյց զիս ի խաւարի որպէս մեռեալ յաւիտենից։

Digitized by Google

Զանձրացաւ յիս հոգի իմ. և սիրտ իմ խռովեցաւ յիս։

Ցիշեցի զաւուրսն զառաջինս. խորհեցայ յամենայն գործս քո. յարալածս ձեռաց քոց խորհեցայ, և համբարձի առ քեզ զձեռս իմ։

Անձն իմ որպէս երկիր ծարաւի է առ քեզ. վաղվաղակի լուր ինձ տէր, զի նուաղեցաւ յինէն հոգի իմ։

Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն. նմանիցիմ այնոցիկ, ոյք իջանեն ի գուբ։

Լսելի արա ինձ առաւօտու զողորմութիւնս քո. զի ես ի քեզ տէր յուսացայ։

Ցոյց ինձ ճանապարհ՝ յոր և գնացից. զի առ քեզ տէր համբարձի զանձն իմ։

Փրկեա զիս ի թշնամեաց իմոց տէր. զի զքեզ ապաւէն ինձ արարի։

Ուսո ինձ առնել զկամս քո. զի դու ես Աստուած իմ։

Հոգի քո բարի՝ առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ։

Վասն անուան քո տէր՝ կեցուսցես զիս, արդարութեամբ քով հանցես ի նեղութենէ զանձն իմ։

Ողորմութեամբ քով սատակեա զթշնամիս իմ. և կորո զամենայն նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ։

Ալէլուիա օՀրէն։

Digitized by Google

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Գլ՝ 13. հմր՝ 86։

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Յայնժամ թողեալ Յիսուսի զժողովուրդսն՝ եկն ի տուն. մատեան առ նա աշակերտքն նորա՝ և ասեն. մեկնեա մեզ զառակ որոմանցն ագարակի։ Նա պատասխանի ետ՝ և ասէ ցնոսա. որ սերմանէ զսերմն բարի՝ է որդի մարդոյ։ Եւ ագարակն աշխարհս է, սերմն բարի նոքա են՝ որ որդիքն արքայութեան են. իսկ որոմն որդիք չարին են։ Եւ թշնամին որ վարեաց զայն՝ սատանայ է. և հունձքն կատարած աշխարհիս է. և հնձողքն հրեշտակք են։ Որպէս ժողովի որոմնն՝ և ի հուր այրի, այնպէս եղիցի ի կատարածի աշխարհիս։ Առաքեսցէ որդի մարդոյ զհրեշտակս իւր, և ժողովեսցեն յարքայութենէ նորա զամենայն գայթակղութիւնս, և զայնոսիկ որք գործեն զանօրէնութիւն։ Եւ արկցեն զնոսա ի հնոց հրոյ. անդ եղիցի լալ՝ և կրճել ատամանց։ Յայնժամ արդարքն ծագեսցեն իբրև զարեգակն յարքայութեան երկնից, որ ունիցի ականջս լսելոյ լուիցէ։ Դարձեալ՝ նման է արքայութիւն երկնից գանձի ծածկելոյ յագարակի, զոր գտեալ մարդոյ՝ թագոյց. և ի խնդութենէ անտի երթայ վաճառէ զամենայն ինչ զոր ունի, և գնէ զագարակն զայն։ Դարձեալ՝ նման է արքայութիւն երկնից առն վաճառականի՝ որ խնդրի-

Digitized by Google

ցէ մարգարիտս գեղեցիկս: Եւ գտեալ մի պատուական մարգարիտ՝ երթեալ վաճառեաց զամենայն զոր ինչ ունէր՝ և գնեաց զայն մարգարիտ: Դարձեալ նման է արքայութիւն երկնից ուռկանի արկելոյ ի ծով՝ և յամենայն ազգաց ժողովելոյ: Զոր՝ իբրև լցաւ, հանեալ ի ցամաք՝ և նստեալ ժողովեցին զբարի բարին յամանս, և զխոտանն ի բաց ընկեցին: Այնպէս եղիցի ի կատարածի աշխարհիս. ելցեն հրեշտակք՝ և մեկնեսցեն զչարս ի միջոյ արդարոց, և արկցեն զնոսա ի հնոց հրոյն. անդ եղիցի լալ և կրճել ատամանց: Ասէ ցնոսա Յիսուս. իմացարո՞ւք զայս ամենայն, ասեն ցնա. այո՛ տէր: Եւ նա ասէ ցնոսա. վասն այսորիկ ամենայն դպիր աշակերտեալ արքայութեան երկնից՝ նման է առն տանուտեառն, որ հանէ ի գանձէ իւրմէ զնոր և զհին:

Երգ պետական Ներսիսի առաջեալ վասն առ ի Քրիստոս

ՀԱՅԼԵՑԼԵՑ

ԲԿ ԴԿ

Ա՞ստուած ասե՞ղ անժա՛մա՛նա՛կ հայր ա՛նըսկիզբն և անքանա՛կ. Որդւոյ պատճա՛ռ ծննդեա՛մբ անճա՛ռ Հոգւոյն բը՛ղխմամբ անբննաբա՛ր. ա՛դաչե՛մք ըզքեզ գը՛թած երկայնա՛միտ և ողորմա՛ծ. ո՛ղորմեա քո՝ ստե՛ղծուածո՛յս յուսո՛վ ի քեզ նընջե՛ցելոյս:

Բա՞նդ՝որ ի ծո՛ց Հօր միա՛ծին և կե՛րպա՛րան ըս-

Digitized by Google

հըզրկնա՛տըպին. որով ե՛րկինըք գո՛յացան աչխարհ յըրիւ հա՛ստա՛տեցան. հա՛յցեմք ի քէն տէր և՝ փը՛րկիչ ամենո՛ղորմ և կե՛ցուցիչ. ո՛ղոր՛՛:

Գե՞րագո՛յն չնորհա՛ց բա՛չխո՛ղ երկնաւո՛րաց և երկրայնո՛ց. կեանք և կենա՛ց ապ՛ւո՛ղ Հոգի Հօր և Ո՛րդւոյ ա՛րարչա՛կից. խը՛նդրեմք ի քէն աղբիւր բա՛րեաց՝ց արբո՛ւցա՛նողըդ ծարաւեա՛ց. ո՛ղոր՛՛:

Դա՞ւանի՞մք ընդ սրո՛վբէ՛իդ զկենդա՛նա՛րարըդ համայնից. երկքսըրբեան մի տէ՛րութի՛ւն զՀայր և զՈ՛րդի և Սուրբ զՀոգիդ. յո՛ր հանդուգնեալըս մըկըրտեա՛լ և հաւա՛տով խոստովանեա՛լ. ո՛ղոր՛՛:

Ե՞րբակի՞ թիւ կա՛տա՛րեա՛լ յե՛րի՛ս անձինըս բաժանեա՛լ. երրորդութեամբ միա՛ւո՛րեա՛լ մի՛ով բնութեա՛մբ հա՛ւասարեա՛լ. յո՛րմէ կապեալք և ա՛ղբա՛կիմք և վե՛րը՛սեին անլոյծ կապիմք. ո՛ղոր՛՛:

Չէ՞ակի՞ ցըդ Հօ՛ր զՈ՛րդի փառա՛ւո՛րեմք անլըռելի. որ իջեր յա՛րգա՛նդ կուսին զա՛դա՛մայինն առեր մարմին. ա՛ղաչանօք Ա՛ստուածա՛ծնին անապա՛կա՛ն քում ծընողի՛ն. ո՛ղոր՛՛:

Է՞րեւեցա՛ր մարմնո՛վ յե՛րկրի որ ի Հօ՛րէ՛ անմեկնելի. ընդ հողեղէնը՛ս բնա՛կեցա՛ր ի հրեղինա՛ց երկըրպագեա՛լդ. պա՛ղատանօք երկնաւո՛րա՛ց փառա՛բանի՛չ քոց հրեշտակա՛ց. ո՛ղոր՛՛:

Ը՞նտ օրինա՛ցըն Մովսե՛սի ընծայե՛ցար ի տաճարին. զի ըզբնութի՛ւնըս մա՛րդկային ընծայի՛սցես Հօր ի յե՛րկինս. խը՛նդրուածովք սուրբ ծե՛ր՛նւոյն քեւ ի կա՛պից արձակելո՛ւն. ո՛ղոր՛՛:

Digitized by Google

Թա՞գաւոր ըլդ հրե՛ղի՛նաց որ ընդ մա՛րդկան հոգեղինա՛ց. չըլլեցար տնօ՛րի՛նաբար կրեցե՛ր ը՛զկիրըս մարդկաբա՛ր. ո՛ր վասըն մեր զայս ա՛մենայն ի յանձն առեր խոնարհութեա՛մբ. ո՛ղոր՛ ։

ԵՐԳ

Յա՞նմահի՛ դ մեռա՛նե՛լո՛յ զմեռեա՛լ հո՛գիս կենդանացո՛. թաղմամբ ի նո՛ր գե՛րե՛զմանի զթաղեա՛լս ի՛ մեղըս վերածեա՛. ի՛ գիւ ներքնումն իջա՛նե՛լո՛վ ի գերոյն մե՛ղա՛ց վերաբերեա՛. ի սառուե՛ր մա՛հու քո՛ բնա՛կելով լուսաւորեա՛ և զի՛ս հոգւո՛վ. ողորմած տէր ։

ՄԱՂԹԱՆՔ

Հոգւոցն հանգուցելոց ։ Եւ ևս խաղաղ ։
Քրիստոս Որդի ։ (Տես ի Ծիւն. 36 :)

Իսկ յառաջ քան զՕրհնութիւնն՝ զմահու Պատճառն յառեալն ասա՛ ։ (Տես ի Թիւն. 16) ։

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս ամէն ։
Հայր մեր որ յերկինս ես ։

ՄԱՂԹԱՆՔ

Տէր Յիսուս Քրիստոս. քո սուրբ և անապական Թաղման չնորհիւ ։ (Տես ի Ծիւն. 37 :)

ՔԱՐՈՋ

Եւ ևս խաղաղութեան ։ Օրհնութիւն և փառք ։

Digitized by Google

Օրհնութիւն ԲՁ։

Պա՛րգեւատո՛ւն ամենեցո՛ւն ա՞յսօր խընդի՛ պարգեւս ի Պի՛ղատո՛սէ. և արկա՛ղն ըզդո՞յս ո՛րպէս զօթո՛ց հաւա՛նի պատի՞լ ի՛ Ցովսեփա՛յ։ Կե՛նդանատո՛ւն ամենեցո՛ւն ա՞յսօր դընի՛ ի նոր գերեզմա՛նի. և՛ գա՛նձն անմա՞հութեան կընքի՛ մա՛տանեա՞ւ քա՛հանայի՛ցն։ Ա՛րարածո՛ց փըրկութիւն Քրիստո՛ս ա՞յսօր եղա՛ւ ի նորա՛փոր վի՛մի. զոր օ՛րհնե՛ն զօրք ե՛րկնի՞ց երգո՛վ, պա՛հապանի՞ ի՛ զինուորա՛ցն։

Կե՛նդանի՞ն յաւիտեանից Քրիստո՛ս ա՞յսօր խընդրի՛ որպէս մեռեալ ի Պի՛ղատո՛սէ. և մերկութեա՛ն ծածկոյթն Ա՛դա՞մայ, յանձն ա՛ռնու պատի՞լ ի՛ Ցովսեփա՛յ։ Ա՛նմահութեա՞նց տըւող Քրիստո՛ս ա՞յսօր ի հո՛ղ մահու խա՛նարհե՛ցաւ. և բնակեա՛լն ի լո՞յս ա՛նմա՞տոյց թաղե՛ցաւ մարմնո՞վ ի սի՛րտ երկրի՛։ Ա՛րեգա՛կն արդարութեան Քրիստո՛ս ա՞յսօր եղա՛ւ ի գբի սառե՛րակա՛նի. և վառա՛ցըն Հո՞ր ճա՛ռագա՛յթ ծածկե՛ցաւ վիմո՞վ ի՛ մէջ երկրի՛։

Կո՛ւսածի՞ն մարմնո՛վ Քրիստո՛ս ա՞յսօր դընի՛ ի կոյս գե՛րեզմանի. և լուծի՛չն երկա՞նց դը՛ժո՞խո՛ց մատա՛նեաւ կընքի՞ քա՛հանայի՛ցն։

Ո՛ր թագաւորդ ես թագա՛ւորաց Քրի՛ստոս, ի ծառայէ՛ դատապարտեալ համբերելո՛վ վասըն մեր։

Digitized by Google

ե՛րկա՞յնամի՞տ տէ՛՛՛ր քե՞զ վա՛ռ։ Ո՛ր պատուա-
կան խաչի՛ւրդ քո Ջրխատո՛ւ և սուրբ արեա՛նդ քո
հեղմամբ կեցուցանել ըզմե՛զ կամեցար. ե՛րկա՛յ՛՛։
Ո՛ր մարդասի՛րասլէ՞ս վասն ամենեցո՛ւն ամենայնի՛
համբերեցեր, և՛ ի մահու ըզմա՛հ կոխեցեր. ե՛րկա՞յ՛՛։

Ա՛ծաբթսիբուբեա՞մբն մոլեա՛լ ցո՞՛ւդա՛, զիւր
ըզմո՛ծ ըզվարդա՛պետն ընդ երեսո՛ւն արծաթո՛յ հր՛-
բէի՛ցըն մատնէ՞ր։ Ը՞նդ ո՛րում ես համբուրե՛ցից
ասէ՝ ը՛զնա՞ կալարուք. ո՛վ համբո՛յր նե՛նգուբեան,
նը՛շա՛ն և՞ ա՛ռիթ մահո՛ւ։ Մե՛րկացա՛ւ յինքե՛նէ
զԱատուածա՛յի՞ն Սուրբ Հոգին. և ըզդեցա՛ւ ըզսա-
տա՛նայ, որպէ՛ս հանդե՞րձ ա՛րկաւ զիւրեա՛ւ։

Ո՛ր նըստիս ի քրովբէս Ա՛ստը՞ւած բա՛նդ. ա՛յ-
սօ՞ր վասըն մե՛ր խոնարհութեամբ նը՛ստա՞ր ի՞ լե-
բինը՛ն ձիթենեաց. օ՛րհնեմք ըզքե՞զ անդա՛դար եր-
գո՛վ։ Ո՛ր համագոյդ ես խո՛րհրդոցըդ հա՛յբե՞նի,
ա՛չակերտա՛ց քոց ծանո՛ւցե՞ր ը՞զխորհուրդ քո՛ գա-
լըստեանն. օ՛րհ՛՛։ Ո՛ր ամենայց ես արա՛րիչ և ըս-
տեղծի՛չ կենդա՛նո՞ւթեան. ա՛յսօ՞ր ըզծածկեա՛լ խոր-
հո՛ւրդ երրորդութեանըդ յա՛յտնեցեր եկեղե՛ցւոյ սըր-
բո՞յ քո. օրհ՛՛։

Հոգ. Ն՛ո՛յն և նըման Հօր և Ո՛րդւոյ, Հոգի՛դ անե՛ղ
և համագոյ, բը՛ղխումըն Հօ՛ր անքը՞ննա՛բար, առաջ

Digitized by Google

յիրդւոյ ա՛նճառաբար. ի վե՛րնատունն այսօր ի՛ջեր, զհոգիդ չնորհա՛ց քոց ալբուցեր. ա՛ֆրօ և մե՛զ ո-ղո՞րմութեամբ ի բա՛ժակէդ իմա՞ստութեա՞ն: Է՛ից ստեղծող արարա՛ծոց որ չըրջէի՛ր ի վերայ ջրոց, նո՛յն և ի ջո՛ւրսն աւա՞զանին ի չնո՛րհել մեզ քո՛ւմ էակցին, գը՛գուես սի՛րով աղաւնակերպ, զմարդիկ ծնանե՛ս Աստուածակերպ. ա՛ֆրօ": Ի՛բուն վեր-նոցն իմանա՛լեաց, և ը՛ստորին այսր ըզգալեաց, ո՛ր մարգարէ՛ս տաս ի՞ հո՛վուաց, և ա՛ռաքեալս ի՛ ձըկո-նորսաց, ա՛ւետաւոր ըզմաքսա՛ւորս, քարո՛զ բանի քո՛ւմ զհալածողս. ա՛ֆրօ":

Ի ձայն փողո՞յ գալըստեան քո տէ՛ր, ամենա՛յն հո՞գի՛ք զարթիցեն կա՛յ ի դատաստանի՛ քում Քրիս-տո՛ս Աստը՛ւա՞ծ մե՛ր: Յո՛րժամ հընչէ՛ բարբառն ահա՛զին, և հա՛րկանի փո՛ղ յա՞յո՛ւթեան մերոյ. և՛ մե՛ք գոչելով ասեմըք փա՛ռըք գա՞լո՛ստեան քո տէ՛ր: Յո՛րժամ առնե՛ս հատուցո՛ւմըն տէր, և սուրբըք քո՛ պա՞րծե՛ացին ի քեզ. և մե՛զ չնորհեացե՛ս փըրկի՛չ կա՞լ ի յա՛յմէ՞ քումմէ՛:

Զքեզ Հա՛յր յառաջ քան զյա՛ւիտեանս բարերա՛-նեն դա՛պ անմա՛րմնո՞ց հրե՛շտակաց, ձայնիւ եր-գո՛վ գոչեն և՛ս ա՛ղաղակեն, Աստուա՛ծ աստո՛ւծոց

Digitized by Google

և տէր տե՛րանց փըրկի՛չ գո՞լո՛վ։ Ա՛ռաքեցեր զքո՞ միածինըդ մարմնա՛նալ ի սո՛ւրբ կուսէն, և անա՛բա՛ւ ծընա՛նիլ յորո՛վայնէ՛ անապա՛կան, բա՛ռնալով ը՛զմե՛ր նեղութի՛ւնս. Աստուա՛ծ"։ Շնո՛րհք բարի՛ յԵրուսա՛ղէմ երէ՛ւեցաւ հեթանո՛սաց. զի արարի՛չն յաւիտենի՛ց տըղայ ե՛ղեալ յորդէգրո՛ւթիւն կենա՛ց կոչէ. Ա՛ստուա՛ծ"։

Գլո՛ւխ սո՛ւրբ հաւատոյ և փա՛յտ կենա՛ց մարդկան յայտնեա՛լ, զո՛ր տեսեա՛լ այսոյն պըղծոյ կործանեցաւ ա՛նկանգնելի. ա՛ղաչե՛մք սուրբ փը՛րկի՛չ պահպանեա՛ զանձինըս մե՛ր։ Դո՛ղացա՛ թըշնամի՛ն ընդ յայտնի՛լ սրբոյ խաչին, և՛ ի յահե՛ փառաց ձո՛րա կործանեցաւ յա՛նդունդս երկրի. ա՛ղա"։ Ե՛րկինըք ցընծա՛յի՛ն և երկի՛րս ուրախանայր, քա՛նզի փըրկի՛չ ցուցաւ սո՛ւրբ խաչն և լո՛ւսաւորու տի՛եզերաց. ա՛ղա"։

Փառք Հօ՛ր եւ Որդո՛յ եւ Հոգւոյն Սրբո՛յ.

Ա՛րքունն բնութե՛ամբ արարի՛չն ամենեցո՛ւն ա՛յսօ՛ր ընընջէ՛ւ ի մէջ մա՛հացե՛լոց. օր պա՛հէ՛ն զի՛ա-բայէ՛լ անքո՛ւն պա՛հպանի՞ ի՛ զինուորա՛ցն։

Այժմ եւ մի՛շտ եւ յաւիտենա՛նս յաւիտենի՛ց ամէն։

Ցը՛նծութի՛ւն արա՛րածոց Քրիստո՛ս ա՛յսօ՛ր ար-

տասուկ՝ որպէս մեռեա՛լ ի տըրտմա՛զգե՛ցիցն. և բուրումն անմա՛հութեան խընկի՛ր ի՛զգաստի՛ցն ի՛ւղա՛քե՛րըի՛ց։

ՄԱՂԹԱՆՔ

Փառք հրաշափառ և անապական թագաւոր»։
(Տես ի Քիւն. 42։)

Քարոզ՝ վասն ի վերուստ։ Աղօթք՝ Տէր տուն ջեան։
(Տես ի Քիւն. 224։)

Ալէլուիա. ալէլուիա. ալէ՛լուիա։

Եղի՛ն վիա ի դրի ներքնումն. ի խաւարի և ի ստուերը՛ս մահու։ Ցի՛ս հաստատեցաւ սրտմտութիւն քո. զամենայն զբօսանս քո ածեր ի վե՛րայ իւ՛մ։

Ալէ. Եղէ՛ ես որպէս մարդ առանց օգնականի. և ի մեռեա՛լս ազատ։ Որպէ՛ս զվիրաւորս ոլք նըն-ջեն ի գերեզմանի՛։

Փա՛ռք և եր». Ա՛յժմ և միշտ և»։
Ալէլուիա. ալէ՛լուիա. ալէլո՛ւիա՛՛։

Մաղթանք՝ Սաղմոսիւք և օրհնութեամբ և»։
(Տես ի Քիւն. 226)։

կարգաւորութիւն հասարակաց աղօթից առաւօտուայ ժամուն : Որ կատարի ի դէմս Որդւոյն Աստուծոյ , որ եւ բեւեռեցաւ խաչաբեղիցն :

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս , ամէն :
Հայր մեր որ յերկինս ես ” :

Լցաք առաւօտու ողորմութեամբ քով . ցնծացաք և ուրախ եղաք զամենայն աւուրս կենաց մերոց :
Ուրախ եղաք վասնանակ ” : (Տես ի Թիւն . 46) :

ՀԱՒՐՑ ԳՋ :

Զքե՛զ օ՛րհնե՛մըք Թա՛գաւոր յա՛իտենից . ա՛ն-մահ Ա՛ստըւա՛ծ հա՛յցըն մերո՛ց : Զո՛ր ո՛չ բնու-թի՛ւնք ա՛րարածո՛ց զԱստը՛ւա՛ծ տանիւը , մա՛հ-ուա՛՛մբ սահմանեա՛լ դընի՛ ի նոր գե՛րեզմանի . նո՛՛ր գիս ընդունելով մա՛՛ծրդ . գովե՛մք զքեզ տէ՛ր հա՛ր ” : Ո՛ր անփա՛կ գրով հաստա՛տեալ քար-տէզ , կը՛նքի՛՛ մատանեա՛ւ անկորո՛ւստ պահելով ը՛զմե՛՛ղ հաւատո՛վ երբո՛ղութեա՛՛ծնդ գովեմ՛ք ըզքեզ ” :
Գ . Ը՛զտէր օ՛րհնե՛՛ցէ՛՛ք և՛՛ բա՛րձր արարէ՛՛՛-՛՛ք զնա՛ յաւիտեա՛՛ն :

Փառք Հօ՛՛ր եւ Որդո՛՛յ եւ Հոգւոյն Սրբոյ :
Օ՛՛րհնե՛՛՛ցէ՛՛՛ք . զՔրիստո՛՛ս Թագաւորն յիմանա-

Digitized by Google

լի՛ զօրացն ահի՛ւ պատուհաս. և՝ բա՛ր՝՝ ։

Այժմ եւ մի՛շտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

Օ՛րհնե՛ք՝՝՝սցէ՛. Զանյաղթելի՛ զթագաւո՛րն ոչ պահի լի՛ զինուորաց գա՛նձն անմա՛հութեան. և՝ բարձր՝՝ ։

ՔԱՐՈԶ

Եկեալքս ամենեքեան ի տուրբ. (Տես ի Ծիւն. 52) ։

Մեծացուսցէ Դ ։

Ա՛ստուածա՝՝ծին երկնայի՛ն ։ (Տես ի Ծիւն. 266) ։

Քարոզ՝ Տուրբ զԱստուա ։ Աղօթք՝ Ընկալ տէր ։ (Տես ի Ծիւն. 55) ։

Ողորմեա Դ ։

Ո՛ր բաշխո՛ղ ես բարութեա՛նց և՛ պարգեւատո՛ւ արարա՛ծո՛ց քոց. այսօր հաճեցա՛ր խը՛նդրիլ ի պարգեւի՛ մասի՛ն ի Պիղա՛տոսէ. զի և մե՛զ չնո՛ր հեսցես զպարգե՛ւս ողորմութեա՛ն քո՛ ։ Ո՛ր զանճա՛ռ ըզոյս վառաց իբրե՛ւ զօծոց ըզքի՛ւ արկար. այսօր անճա՛ռ խոնա՛րհութեա՛մբ պատեցա՛ր ի՛ ցո՛վսեվա՛յ ի գերեզմանի՛ տըքնեալ. զի ըզհնութի՛ւն մեղաց մերոց նորո՛գեսցես ի կեա՛նս անմա՛հ ։

Փառք՝ Հօր եւ՝՝. Այժմ եւ միշտ՝՝ ։

Ո՛ր յեւթեա՛նդ ես ընդ Հո՛ր ա՛նպարագրե՛լի՛

քանդ, այսօր մատանեա՛ւ քահանա՛յիցըն պարագրի՛ր ի՛ յա՛նձն առե՛ր ա՛նկողոպտե՛լի՝ դանձ. զի ըզմե՛զ վը՛րկեսցես ի յա՛նցանաց մե՛ղաց մե՞ր-ց։

ԳԱՐՈՁ

Երկրպագեմք՝ (Տես ի Թիւն. 58)։

ՏԷՐ ՅԵՐԿՆԿԵ ԳՁ

Յովսէ՞ծ՛ի ճչմա՛րիտ և արդար հայցէ՛ր ի Պիղա՛տոսէ զհաւարա՛կա՛ց ըզպարգե՛ւատուն. ո՛ր տըւա՞ւ մե՞զ գա՞նձ անկողո՛պտելի՛։ Պատեաճ՛ել սուրբ կը՛տաւոմք զմարմի՛նըն տէրո՛ւնական զարկո՛ւն ըզյոյս ո՛րպէս զօթոց. որ ըզգեցո՞յց մե՞զ ըզգե՛ստ անկողո՛պտելի՛։

Փառք Հօր եւ՝. Այժմ եւ միշտ՝։

Եդա՞՛ւ ի նորափո՛ր ի վիմի և մատանեաւ կը՛նքեցաւ. որ զնախասատե՛ղծըն կենդանա՛ցոյց, և՞ ըզմա՛րդկա՞ն կապա՛ն նըս մահո՛ւ ե՞լոյծ։

Փա՛ռք ի քարձո՛ւնս՝ (Տես ի Թիւն. 61)։

ԵՐԳ

Եդին զիս ի գբի՝ նեղքնո՛ւմն. ի խաւարի և ի ըստո՛ւերս մահո՛ւ։

Ցիս հաստատեցաւ սրտմտութի՛ւն քո, զամենայն ղբօսանս քո ածեր ի վերա՞յ ի՞մ։

Digitized by Google

Քարոզ Փառաւորեսցուք և Աղօթք Գոհանալոյ յՄանկունեաքն Հալածականն (Տես ի 63 էն յ66 էջն)։ Իսկ Սուրբ Աստուած՝ որ Յաղեցար ասա՝։

Մանկունք Դկ. Սահղէ։

Յովսէ՛փ քե՞զ հա՛ւատա՞ցեալ Պիղա՛տոսի՞ ա՛ղե՞բսէր, չնորհե՞լ զտէրո՛ւնեա՞նդ մարմի՞ն։ Զա՞նապակա՞ն զԱ՛ստուա՞ծացեալ մարմինդ պատեա՛լ սուրբ կըտա՞ւովք, և՛ ե՞դ ի գե՛րեզմանի՞։

Փառք Հօր եւ՚՚. Այժմ եւ միշտ՚՚։

Ո՞ր արալի՞չդ ե՛ս ա՞րա՛րա՞ծոց հանգուցեա՛լդ ի՞ քե՛րո՞վբէս, վի՛մո՞վ կընքե՛ցա՞ր յերկրի՞։

Քարոզ՝ Վասն խաղաղութեան։ Աղօթք՝ Սուրբ ես տէր։ (Տես ի Թիւն. 67)։

Ապա սաղմոս Չէ, ըստ ողոգի։

ԿՁ. Եդիր զիս ի դրի նեղքնումն, ի խաւարի և ի ստուերս մահու։

Փխ. Տէր Աստուած փրկութեան իմոյ, ի տուէ կարդացի և գիշերի առաջի քո։

Մտցեն աղօթք իմ առաջի քո տէր, խոնարհեացի ունկն քո ի խնդրուածս իմ։

Զի լցաւ չարչարանօք անձն իմ, և կեանք իմ ի դժոխս մերձեցան, և համարեցայ ես ընդ այնոսիկ որք իջանեն ի գուբ։

Digitized by Google

Եղէ ես որպէս մարդ առանց օդնականի, և ի մեռեալս ազատ։

Որպէս վիրաւորս, որք ննջեն ի գերեզմանս։

Զորս դու ոչ յիշեցեր, նոքա ի ձեռանէ քումմէ մերժեցան։

Եդին զիս ի գբի ներքնումն, ի խաւարի և ի ըստուերս մահու։

Ցիս հաստատեցաւ սրտմտութիւն քո, զամենայն ղօսանս քո ածեր ի վերայ իմ։

Հեռի արարեր յինէն զծանօթս իմ, և եդին զիս նչաւակ իւրեանց։

Մատնեցայ և ոչ ելանէի, աչք իմ տկարացան յաղքատութենէ։

Աղաղակեցի առ տէր զօրհանատազ, և համբարձի առ քեզ զձեռս իմ։

Միթէ մեռելոց առնիցես զսքանչելիս քո, կամ բժիշկք յարուցեալ՝ խոստովան առնիցին առ քեզ։

Միթէ պատմեսցէ ոք երբէք ի գերեզմանի զողորմութիւնս քո, կամ զճշմարտութիւնս քո ի կորստեան։

Միթէ ճանաչիցին ի խաւարի սքանչելիք քո, կամ արդարութիւն քո յերկիր մոռացեալ։

Ես առ քեզ տէր աղաղակեցի, առաւօտու աղօթք իմ ժամանեսցեն առ քեզ։

Ընդէր տէր մերժես զանձն իմ, կամ դարձուցանես զերեսս քո յինէն։

Ծնանիմ և վաստակաւոր եմ ես ի մանկութենէ իմ-

Digitized by Google

մէ. ի բարձրութենէ խոնարհեցայ և ափչեցայ։

Ցիս հաստատեցաւ բարկութիւն քո, արհաւիրք քո խռովեցուցին զիս։

Շրջեցան զինև որպէս ջուր, զօր ամենայն պաչաբեցին զիս ի միասին։

Հեռի արարեր յինէն զբարեկամս իմ և զծանօթս իմ, վասն թշուառութեան իմոյ։

Ալէլուիա օ՛րհ։

Սրբոյ Աւետարանիս Ցիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Գլ՝ 27. հմր՝ 62։

Վասն կնքելոյն գերեզմանի Տեառն մերոյ Ցիսուսի Քրիստոսի։

Եւ ի վաղիւ անդր՝ որ է յետ ուրբաթուն. ժողովեցան քահանայապետքն և փարիսեցիք առ Պիղատոս։ Եւ ասեն, տէր, յիշեցաք զի մոլորեցուցիչն այն ասէր, մինչ կենդանին էր. թէ յետ երից աւուրց յառնեմ։ Արդ՝ հրամայեա զգուշանալ գերեզմանին մինչև ցերիս աւուրս. գուցէ եկեալ աշակերտքն գիշերի՝ գողանայցեն զնա՝ և ասիցեն ժողովրդեանն՝ թէ յարեաւ ի մեռելոց. և լինիցի յետինն մոլորութիւնն չար քան զառաջինն։ Ասէ ցնոսա Պիղատոս. ունիք զզօրականս. երթայք զգուշացարուք՝ որպէս և գիտէք։ Եւ նոքա երթեալ զգուշացան գերեզմանին, և կնքեցին զվէմն հանդերձ զօրականօքն։

Digitized by Google

Սրգ՝ Տէրն յետ ստեղծմա՜ն" : (Տես ի Թիւն. 73):

Քարոզ. Խնդրեացուք. Կեցո : Աղօթք՝ Քումմ ամենազօր և հրաչալի թաղմանդ : (Տես ի Թիւն. 75):

Եւ ապա Շարական. Բկ :

Խաչի քո Քրիստոս" : (Տես ի Թիւն. 467): (Ըստ երեկոյի կանոնին՝) զսուրբ խաչելութիւնդ քո մեծացուցանեմք. և զսուրբ թաղումնդ քո փառաւորեմք : Սոյնպէս՝ Փառք սուրբ խաչիդ, ալէ. խաչելութեանդ, ալէ. սրբոյ թաղմանդ, ալէ. և այլն : Շարական՝ Բկ, խաչն կենարար :

Փառք Հօր եւ". Այժմ եւ միշտ" :

Եդար տէ՜ր ի նո՜րափոր ի վիմի, և մատանեաւ կնքեցա՜ր գանձը՜դ կենաց ա՜շխա՜րհի՜՜ :

Չկնի Քարոզ՝ Սուրբ խաչիւս : Աղօթք՝ Պահպանիչ : (Տես ի Թիւն. 147):

Եւ համբուրեսցեն զսուրբ խաչն և զԱւետարանն, և աբեակեն ի խաղաղութիւն :

Digitized by Google

Եւ յերեկոյն Հրաձալուեցն սրբոյ Զատկի ընծերոցդ ժամուն՝ ժողովեսցին ի սուրբ եկեղեցին, ծածկեալ ուներով զեղջանն. և լուացցին զերիս կանթեղս, և ասասցեն զերիս ողորմեայն: Իսկ Խոնարհեցո և Ալերեցո ոչ գոյ: Սաղմոս՝ Ճժբ, Ձայնիւ, յաջակողմեան դասէն:

կՁ. Եղիցի անուն տեառն օրհնեալ, յայսմ հետէ մինչև յաւիտեան:

փԽ. Օրհնեցէք մանկունք զտէր. և օրհնեցէք զանուն տեառն: (Տես ի Թիւն. 66):

Զկնի Շարականն ԳԶ:

Այսօր Աստուածութի՛ւնըն զուարճանա՞յ նո՛ր հաստատե՛լով զերկիր. պա՛րըք սո՛ւրբք փառաբանե՛ն զրւարթնոց. և մե՛ք ձայնիւ օրհնո՞ւթեամբ զարդա՛րեսցո՛ւք սո՛ւրբ զտօ՞նս: Այսօր և մե՛ք ցընծա՛մք տօնի՛ւս ընդհանո՛ւր հընչմամբ. մեծապէ՛ս փայլմա՛մբ երեւեցաւ յա՛յհարհի. առ Աստուած զո՛հութիւնք ընթա՞նա՛ն. պատմե՛ն անդադա՛ր ըզբան կե՛նդանի՞: Խընդա՛ և զուարճացիր ե՛կե՛ղեցի կո՞յս սուրբ և հա՛րսն երկնաւոր փե՛սային, ահա՛ տեսանե՛մք զօծնա՞ն ըզՔրի՞ստոս, զոր՛վ առ քեզ լո՞յսըն հեթա՛նոսա՞ց:

Եւ ևս խաղաղութեան՝՝: Օրհնութիւն և փառք՝՝:

Digitized by Google

Դարձեալ սաղմոս ՀԺԷ։

ԿՅ. Այսօր է զոր արար տէր, եկայք ցնծասցուք և ուրախ եղիցուք ի սմա։

ՓԽ. Խոստովան եղերուք տեառն զի բարի է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Ասասցէ տունն իսրայէլի, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Ասասցէ տունն Ահարոնի, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Ասասցեն երկիւղածք տեառն, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Ի նեղութեան իմում ես առ տէր կարդացի, և լուաւ ինձ յանդորր։

Տէր է իմ օգնական և ես ոչ երկեայց, զի՞ արասցէ ինձ մարդ։

Տէր է իմ օգնական, և ես տեսից ի թշնամիս իմ։

Բարի է յուսալ ի տէր քան յուսալ ի մարդիկ, բարի է յուսալ ի տէր քան յուսալ յիշխանս։

Ամենայն ազինք չրջեցան զինև, և անուամբ տեառընն յաղթեցի նոցա։

Շրջկեալ չրջեցան զինև, և պաշարեցին զիս ի միամին, և անուամբ տեառն վանեցի զնոսա։

Շուրջ եղեն զինև որպէս մեղուք, վառեցան բորբոքեցան որպէս փուշք ի հուր, և անուամբ տեառն մերժեցի զնոսա։

Ի մերժելն դրդուեցայ և եղէ մերձ ի գլորիլ, և տէր ընկալաւ զիս։

Digitized by Google

Ջօրութիւն իմ և օգնութիւն իմ տէր, և եղև ինձ ի փրկութիւն։

Ձայն ցնծութեան փրկութեան՝ ի յարկս արդարոց։

Աջ տեառն արար զօրութիւն, աջ տեառն բարձր արար զիս, և աջ տեառն արար զօրութիւն։

Ո՛չ մեռայց, այլ կեցից և պատմեցից զգործս տեառն։

Խրատելով խրատեաց զիս տէր, և ի մահ ոչ մատնեաց։

Բացէ՛ք ինձ զդրունս արդարութեան, զի մտից ընդ այն, և խոստովան եղէց տեառն։

Այս դուռն տեառն է, և արդարք մտանեն ընդ նա։

Խոստովան եղէց քեզ տէր, զի լուար ինձ, և եղեր ինձ ի փրկութիւն։

Վէմն զոր անարգեցին շինողքն, նա եղև գլուխ անկեան։

Ի տեառնէ եղև այս, և է սքանչելի առաջի աչաց մերոց։

Այսօր է զոր արար տէր, նկա՛յք ցընծասցուք և ուրախ եղիցուք ի նմա։

Ո՛ տէր փրկեա՛, ո՛ տէր առաջնորդեա՛. օրհնեալ որ գայոց ես յանուն տեառն, և օրհնեցաք ձեզ ի տանէ տեառն։

Տէր Աստուած մեր երևեցաւ մեզ, արարէ՛ք տօնս ուրախութեան կանխաւ, մինչև յանկիւնս սեղանոյ։

Աստուած իմ ես դու՝ և խոստովան եղէց քեզ,

Digitized by Google

Աստուած իմ ես դու՝ և բարձր արարից զքեզ։

Խոստովան եղէց քեզ տէր՝ զի լուար ինձ, և եղեր ինձ ի փրկութիւն։

Խոստովան եղերուք տեառն, զի բարի է զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Ընթերցուածս ի Ծննդոց։
Գլ՝ 1։ Հմր՝ 1։

Խակղբանէ արար Աստուած"։ (Տես ի Թիւն. 206)։

Աղօթք հանդերձ ծնրադրութեամբ զտէր աղաչեցուք։ Տէր ողորմեա։ (Երէց կ՚ընծայէ)։

Եւ ես խաղաղութեան"։ Օրհնութիւն և վառք"։

Ընթերցուածս ի Ծննդոց։
Գլ՝ 22. Հմր՝ 1։

Եւ եղև յետ բանիցս"։ (Տես ի Թիւն. 357։)

Աղօթք հանդերձ. ասյլն։

Ընթերցուածս յԵլից։
Գլ՝ 12. Հմր՝ 1։

Եւ խօսեցաւ տէր ընդ Մովսէսի և ընդ Ահարոնի յերկիրն Եգիպտացւոց, և ասէ։ Ամիս այս եղիցի ձեզ սկիզբն ամաց. առաջին եղիցի ձեզ յամիսս տարւոյ։ Խօսեցաւ ընդ ամենայն ժողովրդեան որդւոցն Իսրայէլի՝ և ասասցես. ի տասներորդում ամսեանս այսորիկ առցեն իւրեանց իւրաքանչիւր ոչխար ըստ տունս ազգացն. ոչխար ըստ երդ։ Եւ եթէ սակաւ լցէ ի տանն, որպէս թէ չլցէ բաւական լինել ոչխա-

Digitized by Google

քին, առցէ ընդ իւր զդրացի իւր և զընկեր իւր ըստ մարդաթուի. իւրաքանչիւր ըստ բաւականի իւրում համարեսցի յոչխարն: Ոչխար կատարեալ՝ արու՝ տարեւոր՝ անարատ լիցի ձեզ. յօդեաց և յայծեաց առնուցուք: Եւ եղիցի ձեզ պահեալ մինչև ի չորս և ի տասն աւուր ամսոյս այսորիկ. և զենցեն զնա ամենայն բազմութիւն ժողովրդեանն որդւոցն Իսրայէլի ընդ երեկս: Եւ առցեն յարենէ անաի. և դիցեն ի վերայ երկուց սեմոցն և բարաւորի տանցն. յորս ուտիցեն զնա ի նոսա: Եւ կերիցեն զմիան ի դիշերիս յայսմիկ խորովեալ հրով. բաղարջ ընդ եղեգի կերիցեն: Եւ ոչ ուտիցէք ի նոցանէ հում. և ոչ պախ եփեալ ջրով՝ այլ խորովեալ հրով, զգլուխն ոտիւքն հանդերձ և զփորոտին նորա: Եւ ոչ թողուցուք ի նմանէ յայդ. մնացորդ մի բնկանիցէք ի նմանէ. և որ ինչ մնայցէ ի նմանէ յայդ, հրով այրեսջիք: Եւ այսպէս ուտիցէք, գօտիք ձեր ընդ մէջ. և կօշիկք ձեր յոտս. և ցուպք ձեր ի ձեռին. վուխմանակի ուտիցէք. զի զատիկ տեառն է: Եւ անցից ընդ ամենայն երկիրդ Եգիպտացւոց ի դիշերի յայսմիկ. և հարից զամենայն անդրանիկ յերկրիդ Եգիպտացւոց ի մարդոյ մինչև յանասուն. և յամենայն դիան Եգիպտացւոց արարից վրէժխնդրութիւն. զի ես եմ տէր: Եւ եղիցի ձեզ արիւնդ նշանակեալ ի վերայ տանց. յորս իցէք դուք անդ. և տեսից զարիւնդ. և ապրեցուցից զձեզ. և ոչ լինիցին ի ձեզ հարուածք ի սատակել, յորժամ հարկանիցեմ յերկրիդ Եգիպտացւոց: Եւ ե-

Digitized by Google

ղիցի ձեզ արիւնդ այդ ի յիշատակ. և տօնիցէք զդա տօն տեառն յազգս ձեր. օրէն յաւիտենական տօնիցէք զդա: Զեօթն օր բաղարջ ուտիցէք. յառաջնմէ իսկ օրէ անտի անհնա առնիջիք զխմոր ի տանց ձերոց. ամենայն որ ուտիցէ խմորեալ՝ սատակեսցի անձնէն այն յիսրայէլէ: Յառաջնմէ օրէ անտի մինչև ցօրն եօթներորդ նուիրեալ եղիցի ձեզ սուրբ. գամենայն գործ սպասու մի գործիցէք ի նմա, բայց միայն որ գործիցի ամենայն անձին, այն միայն գործեսցի ձեզ: Եւ պահեսջիք զպատուիրանս զայս, զի յաւուր յայսմիկ հանից զզօրութիւն ձեր յերկրէս Եգիպտացւոց. և առնիցէք զօրս զայս յազգս ձեր օրէն յաւիտենական: Ի սկսանիլ չորեքտասաներորդի աւուր ամսոյն առաջնոյ՝ յերեկորեայ բաղարջ ուտիցէք, մինչև ցքսան և մի օր ամսոյն ցերեկոյ: Զեօթն օր մի գտցի խմոր ի տունս ձեր, ամենայն որ ուտիցէ խմորեալ՝ սատակեսցի անձն այն ի ժողովրդենէ Իսրայէլի, յեկաց և բնակաց երկրին: Խմորեալ մի ուտիցէք. յամենայն բնակութեան ձերում ուտիցէք բաղարջ: Եւ կոչեաց Մովսէս զամենայն ծերակոյտ որդւոցն Իսրայէլի, և ասէ ցնոսա. ելթայք առէք ձեզ ոչխար ըստ ազգաց ձերոց, և զենջիք ի զատիկ: Եւ առնուցուք մշտիկ զոպայի թաթխեալ յարեան. որ առ դրօքն իցէ. և սրսկեսջիք զբարաւորաւն և զերկդրամբք սեմօքն յարենէ անտի որ առ դրօքն. բայց դուք մի ելանիցէք իւրաքանչիւր ըստ դուռն տան իւրոյ մինչև ցառաւօտ: Եւ անցցէ տէր հար-

Digitized by Google

*ի*անել զնգիպատացիսդ. և տեսանիցէ զարիւնն որ ի վերայ բարաւորին և ի վերայ երկուց սեմոց՝ և զանց առնիցէ տէր զդրօքն, և ոչ տայցէ Թոյլ սատակչին մտանել ի տունս ձեր, և հարկանել: Եւ պահեսջիր զբանս զայս՝ օրէն քեզ և որդւոց քոց մինչև ցյաւիտեան:

Աղօթք հանդերձ ևայլն:

Ընթերցուածս ի Ցօհաննու Մարգարէէ:
Գլ՝ 1. Հմր՝ 1:

Եւ եղև բան տեառն առ Ցօհան որդի Ամաթեայ՝ և ասէ: Արի՛, և գնա՛ ի Նինուէ քաղաք մեծ. և քարոզեսջիր անդ. զի ել աղաղակ չարութեան նորա առիս: Եւ յարեաւ Ցօհան փախչիլ ի Թարսիս յերեսաց տեառն. էջ ի Ցոպպէ՝ և եդիտ նաւ՝ որ երթայր ի Թարսիս. ետ գինս՝ և եմուտ ի նա՝ նաւել ընդ նոսա ի Թարշիշ յերեսաց տեառն: Եւ տէր յարոյց զգողմ մի ծովուն. և նաւն ի վտանգի կայր ի խորտակիլ: Եւ երկեան նաւավարքն յերկիւղ մեծ. և աղաղակէին առ իւրաքանչիւր աստուածս իւրեանց. և ընկեցին զկարասին ի ծով անդր՝ զի թեթեւացուսցեն յինքեանց. և Ցօհան իջեալ ի խորչ մի նաւին՝ ննջէր, և խորդայր: Մատեաւ առ նա նաւապետն՝ և ասէ. զինչ է այդ՝ զի խորդաս. արի՛, կարդա զտէր Աստուած քո. թերևս ապրեցուսցէ զմեզ Աստուածդ՝ և մի կորիցուք: Եւ ասեն իւրաքանչիւր ցընկեր իւր. եկայք, արկցուք վիճակս՝ և տեսցուք. վասն ո՞յր են

Digitized by Google

չարիքս այս ի վերայ մեր. արկին վիճակս՝ և եւ վիճակն Յովնանու։ Եւ ասեն ցնա. պատմեա մեզ. վասըն ո՞ր են չարիքս այս մեծ. ուստի՞ գաս՝ կամ յո՞ երկրէ. յորմէ՞ աշխարհէ ես՝ կամ յորմէ՞ ժողովրդենէ։ Ասէ ցնոսա. Ծառայ տեառն եմ ես՝ և զտէր Աստուած երկնից պաշտեմ. որ արար զծով և զցամաք։ Եւ երկեան արքն յերկիւղ մեծ. և ասեն ցնա. ինչ գործեցեր զայդ. զի գիտացին եթէ յերեսաց տեառն փախուցեալ էր. քանզի պատմեաց նոցա։ Եւ ասեն ցնա. ինչ արասցուք քեզ՝ և դադարեսցէ ծովս ի մէնջ. զի ծովն աւաւել ևս խռովիւր՝ և յարուցանէր զմրրիկ ի վերայ նոցա։ Եւ ասէ ցնոսա Յովնան. առէ՛ք՝ ընկեցէ՛ք զիս ի ծովդ՝ և դադարեսցէ ի ձէնջ ծովդ. գիտեմ ես եթէ վասն իմ է մրրիկս այս մեծ ի վերայ ձեր։ Եւ չանային արքն դարձուցանել զնաւն ի ցամաք՝ և ոչ կարէին. զի ծովն ևս քան զևս խռովիւր. և սաստկանայր ի վերայ նոցա։ Աղաղակեցին առ տէր՝ և ասեն. քա՛ւ լիցի տէր. մի՛ կորիցուք վասն անձին առնս այսորիկ. և մի՛ ածեր ի վերայ մեր արիւն արդար. զի զոր տէր որպէս կամեցար՝ և արարեր։ Եւ առին զՅովնան՝ և ընկեցին ի ծովն. և դադարեաց ծովն ի խռովութենէ իւրմէ։ Եւ երկեան արքն յերկիւղ մեծ ի տեառնէ. զնին զոհս տեառն՝ և ուխտեցին ուխտս։ Եւ հրամայեաց տէր կիտին մեծի կլանել զՅովնան. և էր Յովնան ի փոր կիտին զերիս տիւս և զերիս գիշերս։ Եւ եկաց

Digitized by Google

Յովնան յաղօթս առ տէր Աստուած՝ ի փորոյ կիտին։ Եւ ասէ՝ ի Նեղութեան իմում աղաղակեցի առ տէր Աստուած իմ. և լուաւ ինձ յորովայնէ դժոխոց աղաղակի իմում. լուր տէր ձայնի իմում։ Եւ ընկեցեր զիս ի խորս սրտից ծովու. և գետք պաշարեցին զիս. ամենայն զբօսանք քո՝ և ալիք քո անցին ի վերայ իմ։ Եւ ասացի՝ թէ մերժեցայ յաչաց քոց. արդ՝ իցէ թէ յաւելից հայիլ ի տաճար սուրբ քո։ Հեղան զինև ջուրք մինչև յոգիս՝ անդունդք անհնարինք պաշարեցին զիս. եմուտ գլուխ իմ ընդ փապարս լերանց. իջի յերկիր՝ որոյ նիզք իւր ահք յաւիտենից. ելցեն յաւակատենէնէ կեանք իմ։ Առ քեզ տէր Աստուած ի նուաղիլ հոգւոյ իմոյ կարդացի. գտէր յիշեցի. և եկեսցեն աղօթք իմ ի տաճար սուրբ քո։ Որք պահեն զունայնութիւն՝ և զսուտութիւն՝ զողորմութիւն իւրեանց թողին։ Այլ ես ի ձայն օրհնութեան՝ և խոստովանութեան մատուցից քեզ պատարագ՝ զոր ուխտեցի, և հատուցից փրկութեան տեառն։ Եւ հրամայեցաւ ի տեառնէ վիշապ ձկանն՝ և եթուք ըզնա ի ցամաք։ Եւ եղև բան տեառն առ Յովնան երկրորդ անգամ, և ասէ։ Արի՛, և գնա՛ ի Նինուէ քաղաք մեծ. և քարոզեսջիր ի նմա ըստ առաջնոյ քարոզութեանն. զոր խօսեցայ առ քեզ։ Յարեաւ Յովնան՝ և գնաց ի Նինուէ. որպէս խօսեցաւ ընդ նմա տէր. և Նինուէ էր քաղաք մեծ Աստուծոյ, իբրև գնաց երից աւուրց ճանապարհ։ Եւ սկսաւ Յովնան

Digitized by Google

մտանել ի քաղաքն իբրև աւուր միոյ ճանապարհի. քարոզեաց՝ և ասէ. այլ ևս երկք աւուրք՝ և Նինուէ կործանեսցի: Եւ հաւատացին արքն Նինուէացիք յԱստուած՝ և քարոզեցին պահս՝ և զուրձ զգեցան ի մեծամեծաց մինչև ցիոքունս իւրեանց: Եհաս բանն առ թագաւորն Նինուէացւոց. յարեաւ յաթոռոյ իւրմէ՝ և մերկացաւ զպատմուճան իւր. զգեցաւ զուրձ՝ և նստաւ ի վերայ մոխրոյ: Եւ քարոզեցաւ՝ և պատմեցաւ ի Նինուէ ի թագաւորէն և ի մեծամեծաց իւրոց. Թէ մարդ՝ և անասուն՝ խաչն՝ և արջառ. մի՛ ինչ ճաշակեսցեն՝ և մի՛ ճարակեսցեն. և մի՛ ջուր արբցեն: Եւ զգեցան զուրձ մարդ՝ և անասուն. և աղաղակեցին առ Աստուած սրտի մտօք. և դարձան իւրաքանչիւր ի ճանապարհաց իւրեանց չարաց. և յանեռաւութենէ՝ որ ի ձեռս իւրեանց: Եւ ասեն՝ ո՞ գիտէ՝ ապաշաւեսցէ Աստուած՝ և դարձցի ի բարկութենէ սրտմտութեան իւրոյ, և մի՛ կորիցուք: Եւ էտես Աստուած զգործս նոցա. զի դարձան իւրաքանչիւր ի ճանապարհաց իւրեանց չարաց. և զղջացաւ Աստուած ի վերայ չարեացն՝ զոր խօսեցաւ առնել նոցա՝ և ոչ արար: Եւ տրտմեցաւ Յովնան տրտմութիւն մեծ՝ և խռովեցաւ: Եւ եկաց յաղօթս առ տէր Աստուած՝ և ասէ. ով տէր՝ ո՞չ այս այն են բանք իմ. մինչ էի անդէն յերկրին իմում. վասն այնորիկ ահապարեցի փախչիլ ի Թարշիշ. զի գիտէի՝ Թէ ողորմած ես դու՝ և գթած. երկայնամիտ՝ և բազում

ողորմ. և ղղջանաս ի վերայ չարեաց։ Եւ արդ՝ տէր տէր՝ ած ղողի իմ յինէն. զի լաւ է ինձ մեռանիլ՝ քանթէ իցեմ կենդանի։ Եւ ասէ տէր ցՅովնան՝ թէ արդարև յոյժ տրտմեալ իցես։ Եւ ել Յովնան ի քաղաքէ անտի՝ և նստաւ յանդիման քաղաքին. և արար իւր հովանի՝ և նստաւ ընդ հովանեաւն. մինչև տեսանիցէ, թէ ընչ լինիցի ի քաղաքին։ Եւ հրամայեաց Աստուած դդմենւոյն. և ել ի վերայ գլխոյն Յովնանու՝ լինել հովանի՞ի վերայ գլխոյ նորա. զովացուցանել զնա ի տառապանաց իւրոց. և ուրախ եղև Յովնան ի վերայ դդմենւոյն յուրախութիւն մեծ։ Եւ հրամայեաց Աստուած որդանն առաւօտու ի վաղիւ անդր. եհար զդդմենին՝ և ցամաքեցաւ։ Եւ եղև ի ծագել արեւուն. հրամայեաց Աստուած հողմոյ խորշակի տապալխառնի. և անկաւ արև զդլխոյն Յովնանու. և կայր ի տարակուսի՝ և քաղէին ոգիք նորա. և ասէր՝ լաւ էր ինձ մեռանիլ քան զայս կեանս իմ։ Եւ ասէ տէր Աստուած ցՅովնան. Թէ արդարև յոյժ տրտմեալ իցես ի վերայ դդմենւոյն. և ասէ՝ յոյժ տրտմեալ եմ մինչև ցմահ։ Եւ ասէ տէր՝ դու խնայեցեր ի դդմենին՝ յոր չվաստր ինձ աշխատ. և ոչ անուցեր զնա. ի գիշերի եղ՝ և ի միւս գիշերի կորեաւ։ Ես ոչ խնայեցից ի Նինուէ քաղաք մեծ. յորում բնակեալք են աւելի քան զերկուտասան բիւր մարդիկք. որք ոչ ծանևան զալ և զահեակ իւրեանց. և անասուն բազում։

Digitized by Google

Աղօթք հանդերձ ևայլն։

Ընդ Երկուածս յիլիզ։
Գլ՝ 14. հմր՝ 24։

Եւ եղև յառաւօտու պահուն հայեցաւ տէր ի բանակն Եգիպտացւոց սեամբ հրոյն և ամպոյ. և խռովեաց զբանակն Եգիպտացւոց։ Եւ կապեաց զանիւրս կառաց նոցա. և վարէր զնոսա բռնութեամբ. ասեն Եգիպտացիքն, փախիցուք յերեսաց Իսրայէլի. զի տէր պատերազմի վասն նոցա ընդ Եգիպտացիսն։ Եւ ասէ տէր ցՄովսէս՝ ձգեա զձեռն քո ի վերայ ծովուդ և կալկատեսցի անդրէն ջուրդ. և ծածկեսցէ զԵգիպտացիսդ. զկառս դոցա՝ և զհեծեալս իւրեանց։ Եւ ձգեաց Մովսէս զձեռն իւր ի վերայ ծովուն. և դարձաւ ջուրն ընդ առաւօտն ի տեղի իւր. և Եգիպտացիքն փախեան յերեսաց ջրոցն. և թօթափեաց տէր զԵգիպտացիսն ի մէջ ծովուն։ Եւ դարձուցեալ զջուրսն՝ ծածկեաց զկառս՝ և զհեծեալս՝ և զամենայն զօրութիւն Փարաւօնի, որք մտեալ էին զհետ նոցա ի ծով անդր. և ոչ մնացին ի նոցանէ, և ոչ մի։ Եւ որդիքն Իսրայէլի գնացին ընդ ցամաք ի մէջ ծովուն. և ջուրն պարիսպ էր ընդ աջմէ նոցա, և ընդ ահեկէ իւրեանց։ Եւ ապրեցոյց տէր զԻսրայէլ յաւուր յայնմիկ ի ձեռաց Եգիպտացւոցն։ Եւ ետես Իսրայէլ զԵգիպտացիսն մեռեալս առափն ծովուն. և ետես Իսրայէլ զձեռն մեծ՝ զոր արար տէր ընդ Եգիպտացիսն, և երկեաւ ժողովուրդն ի տեառնէ. և հաւա-

Digitized by Google

տացին յԱստուած՝ և ի Մովսէս ծառայ նորա։ Յայնժամ ելդեաց Մովսէս՝ և որդիքն Իորայելի զօրհնութիւնս զայս Աստուծոյ, և ասեն. օրհնեսցուք զտէր, զի փառաւք է փառաւորեալ. զերիվարս և զհեծեալս նոցա ընկէց ի ծով։ Օգնական և ընդունօղ իմ տէր, և եղև ինձ ի փրկութիւն. սա է իմ Աստուած և փառաւո՛ր արարից զսա. Աստուած հօր իմոյ՝ և բարձր արարից զսա։ Տէր խորտակէ զպատերազմունս՝ տէր անուն նորա։ Զկառս Փարաւոնի՝ զզօրութիւնս նորա ընկէց ի ծով. զընտիրս հեծելոց՝ և զպատառազէնս, ընկղմեաց ի ծով կարմիր։ Խոլք ծածկեցին զգնոսա. ընկղան յանդունդս իբրև զվէմ։ Ա՛ղ քո տէր փառաւորեալ է զօրութեամբ, աղ քո տէր խորտակեաց զթշնամիս։ Եւ բազմութեամբ փառաց քոց մանրեցեր զհակառակորդս, առաքեցեր զբարկութիւն քո՝ և եկեր զնոսա իբրև զեղէգն։ Եւ հողմով սըրտմտութեան քոյ բաժանեցան ջուրք. պաղեցան իբրև պարիսպ ջուրք. պաղեցան ալիք ի մէջ ծովու։ Ասաց թշնամին, հալածեցից՝ և հասից. բաժանեցից զաւար, լցուցից ի նոցանէ զանձն իմ. սատակեցից սրով իմով. տիրեսցէ նոցա ձեռն իմ։ Առաքեցեր զհողմն քո. և ծածկեաց զնոսա ծով. ընկղմեցան իբրև զկապար ի ջուրս սաստիկս։ Ո՞վ իցէ նման քեզ յԱստուածս տէր. և կամ ո՞վ նմանիցի քեզ փառաւորեալդ ի սուրբս. սքանչելի փառօք՝ որ առնես զնչանս։ Ձգեցեր զաջ քո՝ և եկուլ զնոսա երկիր։ Առաջնոր-

Digitized by Google

դեցեր արդարութեամբ ժողովրդեան քում այսմ, զոր փրկեցեր. մխիթարեցեր զօրութեամբ քով ի բանակեղ սրբութեան քոյ: Լուան ազգք՝ և բարկացան, և երկունք կալան զբնակիչս Քանանացւոց: Ցայնժամ տագնապեցան դատաւորք Եդոմայ, և իշխանք Մովաբացւոց. կալաւ զնոսա դողումն, հալեցան ամենայն բնակիչք Քանանացւոց: Անկցի ի վերայ նոցա ահ և երկիւղ. մեծութեամբ բազկի քոյ քարացին. մինչև անցցէ ժողովուրդ քո տէր. մինչև անցցէ ժողովուրդ քո այս՝ զոր ստացար: Տարեալ տնկեացես զնոսա ի լեառն ժառանգութեան քոյ. ի պատրաստութիւն բնակութեան քոյ. զոր արարեր տէր սրբութիւն. տէր զոր պատրաստեցին ձեռք քո: Տէր թագաւորէ յաւիտեան՝ և յաւիտեան և աս: Զի մտին երիվարք Փարաւոնի կառօք և հեծելօք նորա ի ծով. և էած ի վերայ նոցա տէր զջուրս ծովուն. և որդիքն Իսրայէլի գնացին ընդ ցամաք ի մէջ ծովուն: Եւ էառ Մարիամ մարգարէ քոյր Ահարոնի զթմբուկն ի ձեռն իւր. և ելին ամենայն կանայք զհետ նորա թմբկօք, և պարուք: Եւ յառաջէր Մարիամ, և ասէր. օրհնեսցո՛ւք տէր՝ զի փառօք է փառաւորեալ. զերիվարս և զհեծեալս ընկէց ի ծով:

Եւ ապա լուցցին ջահս և կանթեղս, և ասցեն մոմեղէնս ի ձեռս ամենեցուն. և եկեալ վիաբան յառեանն՝ սկսանիցին Շարական Կ՚։

Լուսաւորեա՛ երուսաղէ՛մ զի հասեալ է՛ լո՛յս

Digitized by Google

քո. զարդա՛րեա զամուրը Ծ՚ս քո. և՛ վա՚ՏՏ՚ուք սեա՛ռն ի՛ վերայ քո ծա՛պեսցի՛: Օրհներդո՛ւթեա՛մբ սա՛ղմոսիւք քեզ վա՛յելէ՞ Ատուա՛ծ օրհնուեմի՛ւն ի սիո Ծ՚վնէ. և՛ քաՏ՚զ մատո՛ւսցին աղօ՚թք յՏ՚րուսաղէ՛մ: Գովեա Ելուսա՛ղէ՛մ ըզտէր, և օրհնեա՛ զԱստըւա՚Ծ քո. նոՏ՚ր ժողո՛վուրդ ըզչսո՚յ դուստրըդ սի՛օ՚ն՚վնի՛՞:

Աղօթք հանդերձ ևայլն:

Ընթերցուածս յնեայեայ Մարգարէի:
Գէ՝ 60. հմր՝ 1:

Լուսաւորեա՛՝ լուսաւորեա՛ց Երուսաղէմ. զի հասեալ է լոյս քո. և փառք տեառն ի վերայ քո ծագեսցին: Զի ահա խաւար ծածկեաց զերկիր՝ և մառախուղ զհեթանոսս. բայց ի քեզ տէր յայտնեսցի. և փառք նորա ի քեզ երևեսցին: Եւ գնասցեն թագաւորք ի լոյս քո. և հեթանոսք ի ծագել լուսոյ քոյ: Համբարձ չուրջ զքեզ զաչս քո. և տես ժողովեալ առ քեզ զամենայն մանկունս քո. զի եկիցեն՝ հասին ի հեռաստանէ որդիք քո. և դստերք քո ի վերայ ուսոց նոցա բարձեալք երիցին: Ապա ժամ տեսցես՝ և խնդասցես. երկիցես՝ և զարհուրեսցիս ի սրտի քում. զի փոխեսցի ի քեզ մեծութիւն ծովու. և ազգաց՝ և ժողովրդոց: Եկեսցեն ի քեզ երամակք ուղտուց. և ծածկեսցեն զքեզ ուղտերամակքն Մադիամու՝ և Գեփայ. ամենեքեան ի Սաբայէ եկեսցեն, բերել ոսկի և կնդրուկ՝ և ականս պատուականս. ի վիրաւորեանն

Digitized by Google

տեառն առցեն զաւետիս։ Եւ ամենայն խաչինքն Կեդարու ժողովեսցին առ քեզ. և խոյք Նաբէօթայ ածցին. և մատուսցին ընդունելի պատարագք ի վերայ սեղանոյ իմոյ. և տուն աղօթից իմոց փառաւորեսցի։ Ո՞վ են սոքա՝ որք իբրև զամպս թռուցեալք են. և իբրև զաղաւնիս ձագախառն երամովին գան առիս։ Ինձ ակն ունին կղզիք՝ և նաւք Թարշշի յառաջադոյն ածել զորդիս քո ի հեռաստանէ. զարծաթ և զոսկի ընդ իւրեանս. վասն անուան տեառն սըրբոյն. և վասն սրբոյն Իսրայէլի փառաւորելոյ։ Եւ չինեսցեն որդիք այլազգեաց պալարիսպս քո. և թագաւորք նոցա ընծայեսցին քեզ. զի վասն բարկութեան իմոյ հարի զքեզ. և վասն ողորմութեան իմոյ սիրեցի զքեզ։ Եւ բացցին դրունք քո հանապազորդ ի տուէ և ի գիշերի. և մի փակեսցին. կրել ի քեզ զզօրութիւն ազգաց. և զթագաւորս իւրեանց ածցեն առ քեզ։ Զի ազգք և թագաւորք՝ որք քեզ ոչ ծառայեսցեն, կորիցեն. և ազգն աւերելով աւերեսցին։ Եւ վաճք Լիբանանու առ քեզ եկեսցեն. սարդիւն և սօսիւ. նոճիւն և մայրիւ՝ առ հասարակ փառաւոր առնել զտեղի սրբութեան իմոյ. և զտեղի ոտից իմոց փառաւորեցից։

Աղօթք հանդերձ նայն։

Ընթերցուածս ի Յօբայ։
Գլ՝ 38. Հմր՝ 1։

Ո՞վ է դա՝ որ թագուցանէ չինչն զխորհուրդ.

Digitized by Google

ժողովեալ զրանս ի սրտի. և համարի յինէն թագուցանել։ Պնտեա իբրև զայր զմէջ քո. հարցից զքեզ՝ և տուր ինձ պատասխանի։ Որ էիր՝ մինչ ես հիմունս արկանէի երկրի. պատմեա ինձ. եթէ խելամուտ իցես հանճարոյ։ Ով եդ զչափ դորա, թէ գիտիցես. կամ ով էարկ ի վերայ դորա գլար։ Ցորոյր վերայ հաստատեցան աղիք դորա. ով է՝ որ էարկ զվէմն անկեան ի դմա։ Ցորժամ եղեն աստեղք ծագք՝ ամենայն հրեշտակք աստեղայ օրհնեցին զիա մեծաձայն. և ամենայն հրեշտակք իմ գովեցին։ Փակեցի զծով դրամբք. յորժամ ծընաւ յորովայնէ մօր իւրոյ ելանել։ Եդի նմա զմէգ ի հանդերձ. և զմառախուղ նմա ի խանձարուրս։ Եդի նմա սահման՝ եղեալ վականս, և դրունս։ Ասացի՝ ցայդ վայր եկեսցես՝ և այլ մի՛ անցանիցես. այլ այդրէն ի քեզ խորտակեսցին ալիք քո։ Եթէ առ քո՛ւ կարգեցի զլոյսն առաւօտուն. արուսեակն ետես զկարգ իւր։ Հասանել ի վերայ թևոց երկրի. թօթափել զամպարիշտս ի նմանէ։ Կամ թէ քո՞ առեալ զհողն կաւ՝ ստեղծեր կենդանի՝ և խօսուն եղեր զնա յերկրի։ Եւ մերժեցի՞ր զլոյսն յամպարշտաց. զբազուկս ամբարտաւանից խորտակեցի՛ր։ Հասեալ իցես յակն ծովու. և ընդ հետս անդնդոց չրջեցար։ Բանայցեն քեզ ահիւ դրունք մահու. բարապանաց դժոխոց տեսեալ զքեզ սարսեսցին։ Խելամուտ իցես լայնութեան առ ի ներքոյ երկնից. պատմեա՝ որչափ իցէ։

Զինչ երկիր իցէ՝ յորում լոյսն ագանիցի՝ կամ զինչ տեղի խաւարի : Տանիցիս զիս ի սահմանս նոցա . եթէ խելամուտ իցես չաւղաց նոցա : Թերևս գիտիցես՝ և ընդ այն ժամանակս ծնեալ իցես . և թիւ աւուրց քոց բազումք իցեն : Երթեալ իցես ի չտեմարանս ձեան . և զգանձս կարկտի տեսեալ իցես : Համբարեալ կայցէ քեզ ի ժամանակս թշնամեաց՝ յօր մարտի՝ և պատերազմի : Ուստի ելանիցէ եղեամն . կամ սիւռիցի հարաւ ի ներքոյ երկնից : Ո՞ պատրաստեաց զհոսանս սաստիկ անձրևոյ՝ և զճանապարհս ամպրոպաց տեղեալ յերկիր : Ուր ոչ գոյ մարդ՝ յանապատ յանմարդի : Յագեցուցանել զանկոխն , և զանչէն և բղխեցուցանել զբոյս դալարւոյ : Ո՞ է հայր անձրևի . և ո՛վ է՝ որ ծնաւ զշաղս ցօղոյ : Ցո՛յր արգանտէ ելանէ սառն՝ և զեղեամն ո՛ ծնաւ յերկինս :

Աղօթք հանդերձ նայն :

Ընթերցուածս ի Յեսուայ որդւոյ Նաւեայ :
Գլ՝ 1 . հմր՝ 1 :

Եւ եղև յետ վախճանելոյն Մովսիսի ծառայի տեառն . խօսեցաւ տէր ընդ Յեսուայ որդւոյ Նաւեայ պաշտօնկի Մովսէսի՝ և ասէ : Մովսէս ծառայ իմ վախճանեցաւ . արդ յարուցեալ անցցես ընդ այդ Յորդանան՝ դու և ամենայն ժողովուրդ քո՝ երկիրն զոր ես տաց որդւոցն Իսրայէլի : Ցամենայն տեղիս յոր հասանիցեն դնայք ոտից ձերոց՝ ձեզ տաց զնա՝ որպէս խօսեցայ ընդ Մովսիսի : Զանապատան . և ըզ-

Digitized by Google

Իբրանաներն. մինչև ցգետն մեծ՝ ցգետն Եփրատ. զամենայն երկիրն Քետացւոց մինչև ցծովն վերջին ի մտից արեւու՝ ձեզ լիցին սահմանքն: Եւ ոչ՛ք կացցէ ընդդէմ ձեր զամենայն աւուրս կենաց քոց. և որպէս էի ընդ Մովսէսի՝ նոյնպէս եղէց և ընդ քեզ. և ոչ թողից զքեզ՝ և ոչ անտես արարից զքեզ: Զօրացիր, և քաջ լեր. զի դու բաժանեսցես ժողովրդեանդ այդմիկ զերկիրն՝ զոր երդուայ հարցն քոց տալ դոցա: Արդ զօրացիր՝ և քաջ լեր յոյժ. պահել և առնել ըստ ամենայն օրինացն որպէս պատուիրեաց քեզ Մովսէս ծառայ իմ. և մի՛ խոտորիցիս ի նոցանէ յայլ կամ յահեակ. զի խելամուտ լիցիս ամենայնի զինչ և գործեսցես: Եւ մի՛ մերժիցես զգիր օրինացդս այսոցիկ ի բերանոյ քումմէ. և խոկասցես ի դա ի տուէ և ի գիշերի՝ զի իմասցիս առնել զամենայն գրեալսդ ի դմա. և ապա յաջողեսցիս և ուղղեսցես զճանապարհս քո. և ապա խելամուտ լինիցիս: Ահա պատուիրեմ քեզ. զօրացիր՝ և քաջ լեր՝ մի՛ զանգիտիցես. և մի՛ երկնչիցիս՝ զի ընդ քեզ է տէր Աստուած քո յամենայն տեղիս ուր և երթայցես:

Աղօթք հանդերձ նայլն:

Ընթերցուածս ի Ծննդոց Թագաւորութեանց:
Գլ՝ 2. հմր՝ 1:

Եւ եղև ի վերացուցանել տեառն զնդիա չարժմամբ յերկինս. և գնացին Եղիա և Եղիսէէ ի Գաղգաղայ: Եւ ասէ Եղիա ցԵղիսէէ. Նիստ դու աստ.

Digitized by Google

զի տէր առաքեաց զիս ի Բեթէլ. և առէ Եղիսէէ. կենդանի է տէր. և կենդանի է անձն քո՝ թէ թողից զքեզ. և եկին ի Բեթէլ: Եւ ելին որդիք մարգարէիցն՝ որք ի Բեթէլ՝ առ Եղիսէէ. և ասեն ցնա. եթէ գիտիցես. զի այսօր առնու տէր զտէրդ ի գլխոյ քումմէ. և ասէ. գիտեմ և ես. լռեա լերուք: Եւ ասէ Եղիա ցնդիսէէ. նիստ դու աստ. զի տէր առաքեաց զիս յՅորդանան. և ասէ. կենդանի է տէր. և կենդանի է անձն քո՝ եթէ թողից զքեզ. և եկին յՅերիքով: Եւ մատեան որդիք մարգարէիցն որք յՅերիքով՝ առ Եղիսէէ. և ասեն ցնա. եթէ գիտիցես՝ զի այսօր առնու տէր զտէրդ ի գլխոյ քումմէ. և ասէ. գիտեմ և ես. լռեա լերուք: Եւ ասէ ցնա Եղիա. նիստ դու աստ. զի տէր առաքեաց զիս ի Յորդանան. և ասէ Եղիսէէ. կենդանի է տէր. և կենդանի է անձն քո՝ թէ թողից զքեզ. և գնացին երկոքեան: Եւ յիսուն այր յորդւոցն մարգարէից. և կացին ի հանդիպակաղ ի բացանայ. և երկոքին կացին յեզերն Յորդանանու: Եւ էառ Եղիա զմաչկեակն իւր. և ծալեաց. և եհար զՅուրն. և բաժանեցաւ Յուրն յայս կոյս և յայնկոյս. և անցին երկոքեան ընդ ցամաք: Եւ եղև ընդ անցանելն նոցա. ասէ Եղիա. Ե՛ղիսէէ, խնդրեա զինչ արարից քեզ մինչչև վերացեալ եմ ի քէն. և ասէ Եղիսէէ. եղիցի կրկին ոգի քո ի վերայ իմ: Եւ ասէ Եղիա. դժուարինս խնդրեցեր. բայց թէ տեսցես զիս յամբառնալ իմում ի քէն. եղիցի այնպէս. ապա թէ ոչ՝ մի՛ եղիցի: Եւ եղև մինչդեռ

Digitized by Google

գնային նոքա . երթային , և խօսէին . և ահա կառք հրեղէնք և երիվարք հրեղէնք , անջրպետեցին ի մէջ երկոցունց . և վերացաւ Եղիա չալժմամբ յերկինս : Եւ Եղիսէէ հայէր . և աղաղակէր . հա՜յր . հա՜յր . կառքդ Իսրայէլի և հեծեալք նորա . և այլ ոչ ևս եհաս զնա . և բուռն եհար զհանդերձից իւրոց , և պատառեաց յերկուս ծուէնս : Եւ էառ Եղիսէէ զմաչկեակն Եղիայի զոր ընկէց ի վերայ նորա . և դարձաւ Եղիսէէ . և եկաց առ եզերն Յորդանանու : Եւ էառ զմաչկեակն Եղիայի . զոր ընկէց ի վերայ նորա . և եհար զջուրն՝ և ասէ . ո՞ւր ես տէր Աստուած Եղիայի ափիվով . և եհար զջուրսն . և բաժանեցան յայսկոյս յայնկոյս . և էանց Եղիսէէ : Իբրև տեսին որդիք մարգարէիցն , որք յԵրիքով ի հանդիպոյն՝ և ասեն , հանդեաւ ոգին Եղիայի ի վերայ Եղիսէէ . և եկին ընդառաջ նորա՝ և երկիրպագին նմա ի վերայ երկրի : Եւ ասեն ցնա . ահաւասիկ են ընդ ծառայս քո որդիք զօրութեան ալք յիսուն . երթիցեն՝ և խնդրեսցեն զտէրն քո . գուցէ էառ զնա հոգին տեառն . և ընկէց զնա առ Յորդանանու՝ կամ ի վերայ միոյ ուրուք լերանց . և կամ ի վերայ միոյ ուրուք բլրոց . և ասէ Եղիսէէ . մի՛ առաքէք : Եւ բռնադատեցին զնա՝ մինչև ամաչէր . և ասէ՝ առաքեցէ՛ք . և առաքեցին յիսուն արս . և խնդրեցին զերիս աւուրս՝ և ոչ գտին զնա : Եւ դարձան առ նա . և նա նստէր յԵրիքով . և ասէ ցնոսա Եղիսէէ . ո՞չ ասացի ձեզ՝ թէ մի՛ երթայք : Եւ ասեն ալք քաղաքին ցԵղիսէէ . ա-

Digitized by Google

հաւասիկ բնակութիւն քաղաքիս բարի է, որպէս և տէրդ իսկ տեսանէ. և ջուրքս չար. և երկիրս անզաւակ: Եւ ասէ Եղիսէէ. առէք առ իս կուժ մի նոր. և դիք այդր. և բերին առ նա: Եւ ել Եղիսէէ յաղանս ջրոցն՝ և էարկ անդ աղ. և ասէ՝ այսպէս ասէ տէր. բժշկեմ զջուրս զայսոսիկ. և մի՛ ևս լինիցի այդ ի մահ և յանզաւակութիւն: Եւ բժշկեցան ջուրքն մինչև ցայսօր ըստ բանին Եղիսէէի. զոր խօսեցաւ:

Աղօթք հանդերձ ևայլն:

Ընդ երցուածս յերեմիայ Մարգարէէ:
Գլ՝ 31. հմր՝ 31:

Ահաւասիկ աւուրք գան ասէ տէր. և ուխտեցից տանդ Իսրայէլի՝ և տանդ Յուդայ ուխտ նոր: Ո՛չ ըստ ուխտին զոր ուխտեցի ընդ հարս նոցա՝ յաւուր յորում առի զձեռանէ նոցա՝ հանել զնոսա յերկրէն Եգիպտացւոց. զի նոքա ոչ կացին յուխտին իմում, և ես անփոյթ արարի զնոցանէ՝ ասէ տէր: Այլ այս է ուխտ՝ զոր ուխտեցից տանդ Իսրայէլի յետ աւուրցըն այնոցիկ՝ ասէ տէր. տացու զօրէնս իմ ի միտս նոցա՝ և ի սիրտս նոցա գրեցից զնոսա. և եղէց նոցա յԱստուած. և նոքա եղիցին ինձ ի ժողովուրդ: Եւ մի՛ ևս ուսուցանիցեն իւրաքանչիւր զընկեր իւր. իւրաքանչիւր զեղբայր իւր ասել՝ թէ ծանիր զտէր. զի ամենեքեան ծանիցեն զիս ի փոքրկանց նոցա մինչև ի մեծամեծս՝ ասէ տէր. զի քաւիչ եղէց անիրաւութեանց նոցա. և զմեղս նոցա ոչ ևս յիշեցից:

Digitized by Google

Աղօթք հանդերձ ևայլն։

Ընթերցուածս յեզեկիէլ Մարգարէէ։
Գլ՝ 37. Հմր՝ 1։

Եւ եղև ի վերայ իմ ձեռն տեառն. և եհան զիս ոգւով տեառն. և եդ զիս ի մէջ դաշտին. և այն լի էր ոսկերօք մարդկան։ Եւ չրջեցոյց զիս չուրջ զոսկերօքն. և ահա բազում յոյժ էին ի վերայ երեսաց դաշտին. և ցամաքեալք յոյժ։ Եւ ասէ ցիս՝ որդի մարդոյ՝ իցէ թէ կենդանի լինիցին ոսկերք այդոքիկ. և ասեմ, տէր տէր՝ դու գիտես զայդ։ Եւ ասէ ցիս. որդի մարդոյ մարգարեա՛ց ի վերայ ոսկերացդ այդոցիկ՝ և ասասցես ցդոսա. ոսկերք ցամաքեալք՝ լուարո՛ւք զպատգամս տեառն։ Այսպէս ասէ՝ տէր տէր ցոսկերսդ ցայդոսիկ. ահաւասիկ ես ածեմ ի վերայ ձեր չունչ կենդանի։ Եւ տացի ի ձեզ մարմինս. և ածից ի վերայ ձեր մարմինս. և ձգեցից ի վերայ ձեր մորթ. և տացի զոգի իմ ի ձեզ. և լինիցիք կենդանիք. և ծանիջիք, եթէ ես եմ տէր։ Եւ մարգարէացայ որպէս և հրաման ետ ինձ. և եղև բարբառ ի մարգարէանալն իմում. և ահա չարժումն. և մերձեցաւ ոսկերր առ ոսկր. առ իւրաքանչիւր յօդս։ Եւ տեսի՝ և ահա ջիլք՝ և մարմինք պատէին. և ձգիւր ի վերայ նոցա մորթ. և չունչ ոչ գոյր ի նոսա։ Եւ ասէ ցիս, մարգարէացի որդի մարդոյ՝ մարգարէացի ի վերայ չընչոյն. և ասասցես ցչունչն. այսպէս ասէ տէր տէր. ևկ չունչ ի չորից հողմոց. և փչեա՛ց ի մեռեալս յայ-

Digitized by Google

սոսիկ՝ և կեցցեն։ Եւ մարգարէացայ՝ որպէս և հրամանն ետ ինձ տէր. և եմուտ ի նոսա չունչ. և եղեն կենդանիք. և կանգնեցան՝ կացին ի վերայ ոտից իւրեանց, ժողովք բազումք յոյժ յոյժ։ Եւ խօսեցաւ ընդիս տէր. և ասէ. որդի մարդոյ. ոսկերքդ այդոքիկ ամենայն տունդ Իսրայէլի են. և դոքա ասեն. չորացան ոսկերք մեր՝ հատաւ յոյս մեր՝ և մեռաք։ Վասն այդորիկ մարգարէացիր՝ և ասասցես ցդոսա. այսպէս ասէ տէր տէր. ահաւադիկ ես բացից զգերեզմանս ձեր. և հանից զձեզ ի գերեզմանաց ձերոց ժողովուրդ իմ. և տարայց զձեզ յերկիրն Իսրայէլի։ Եւ ծանիջիք՝ թէ ես եմ տէր. ի բանալ ինձ զգերեզմանս ձեր՝ և հանել զձեզ ի գերեզմանաց ձերոց ժողովուրդ իմ։ Եւ տացի զոգի իմ ի ձեզ. և լինիջիք կենդանիք. և եդից զձեզ յերկրին ձերում. և ծանիջիք թէ ես եմ տէր. խօսեցայ՝ և արարից. ասէ տէր տէր։

Աղօթք հանդերձ նայլն։

Եւ ապա ելցէ մինն ի բեմն. և ի վերայ բեմին ընթերցցի զգիրքս։

ԼՆԹԵՐՑՈՒԱԾՈՑ Ի ԴԱՆԻԷԼԻ ՄԱՐԳԱՐԷԻ։
ԳԼ՝ 3. ՀՅՐ՝ 1։

Յամին ութուտասաներորդի Նաբուգոդոնոսորայ արքայի. արար պատկեր ոսկի. բարձրութիւն նորա վաթսուն կանգուն. և լայնութիւն նորա կանգուն վեց. և կանգնեաց զնա ի դաշտին Դվերայ յաշխաք-

Digitized by Google

հին Բաբիլացւոց։ Եւ արձակեաց ժողովել զզօրավարսըս՝ և զզօրագլուխս՝ և զկուսակալս՝ զպետս՝ և զբռնաւորս՝ և զդործակալս՝ և զամենայն իշխանս աշխարհաց գալ ի նաւակատիս պատկերին՝ զոր կանդնեաց արքայն Նաբուգոդոնոսոր։ Եւ ժողովեցան կուսակալք՝ զօրավարք՝ և զօրագլուխք՝ պետք՝ և բռնաւորք. մեծամեծք՝ և գործակալք՝ և ամենայն իշխանք աշխարհաց. գալ ի նաւակատիս պատկերին՝ զոր կանգնեաց արքայն Նաբուգոդոնոսոր. և կային առաջի պատկերին՝ զոր կանգնեաց արքայն Նաբուգոդոնոսոր։ Եւ քարոզ կարդայր զօրուխեամբ՝ և ասէր՝ ձեզ ասի ազգք՝ և ազինք՝ և լեզուք։ Յորժամ լսիցէք զձայն փողոյ՝ սրնգի՝ խմբգի՝ և քնարի՝ տաւղի և երգոց միաբանութեան՝ և ամենայն ազգաց արուեստականաց. անկանիջիք՝ և երկիրպագանիջիք պատկերին՝ զոր կանգնեաց Նաբուգոդոնոսոր արքայ։ Եւ որ ոչ անկեալ երկիրպագանիցէ՝ ի նմին ժամու ընկեսցի ի հնոց հրոյն բորբոքելոյ։ Եւ եղև իբրև լուան ազգքն զձայն փողոյն՝ սրնգին՝ տաւղի՝ և նուագարանաց. և ամենայն ազգաց արուեստականաց, անկանէին ամենայն ազգք և ազինք՝ և լեզուք, և երկիրպագանէին պատկերին ոսկւոյ. զոր կանգնեաց արքայն Նաբուգոդոնոսոր։ Յայնժամ մատեան արք Քաղդէացիք՝ և եղեն չարախօսք զՀրէից, առ Նաբուգոդոնոսոր։ Եւ ասեն. արքայ՝ յաւիտեան կաց։ Դու հրամայեաց ամենայն մարդոյ՝ որ լսիցէ զձայն փո-

Digitized by Google

դոյ՝ և սրնգի՝ և քնարի՝ և տաւղի՝ և նուագարանաց. և ամենայն ազգաց արուեստականաց: Եւ որ ոչ երկիրպագանիցէ պատկերին ոսկւոյ՝ անկցի ի հնոց հրոյն բորբոքելոյ: Արդ՝ են աստ արք Հրէայք. զորըս կացուցեր ի վերայ գործոց աշխարհիս Բաբիլացւոց. Սեդրաք. Միսաք. և Աբեդնագով. որք ոչ հնազանդեցան հրամանի քումմ արքայ. և զդիս քո ոչ պաշտեն. և պատկերիդ ոսկւոյ՝ զոր կանգնեցեր՝ երկիր ոչ պագանեն: Յայնժամ Նաբուգոդոնոսոր սրտմտութեամբ և բարկութեամբ հրամայեաց ածել զՍեդրաք՝ զՄիսաք՝ և զԱբեդնագով. և ածին առաջի թագաւորին: Պատասխանի ետ Նաբուգոդոնոսոր՝ և ասէ ցնոսա. Թէ արդարև Սեդրաք՝ Միսաք՝ և Աբեդնագով. զդիս իմ ոչ պաշտէք՝ և պատկերին ոսկւոյ՝ զոր կանգնեցի, երկիր ոչ պագանիցէք: Բայց եթէ պատրաստք լինիցիք. դի յորժամ լսիցէք զձայն փողոյ սրնգի՝ և թմբկի. և քնարի. և զդիրաբանութիւն ամենայն ազգաց արուեստականաց. անկանիցիք՝ և երկիրպագանիցէք պատկերին՝ զոր արարի ապա թէ ոչ պագանիցէք երկիր, ի նմին ժամու անկցիք ի հնոց հրոյն բորբոքելոյ. և ո՞վ է Աստուած՝ որ փրկեսցէ զձեզ ի ձեռաց իմոց: Պատասխանի ետուն՝ Սեդրաք՝ Միսաք՝ և Աբեդնագով. և ասեն ցարքայ Նաբուգոդոնոսոր. ոչ ինչ է պիտոյ վասն բանիդ այդորիկ տալ քեզ պատասխանի: Զի է մեր Աստուած յերկինս՝ զոր մեք պաշտեմք. կարօղ է փրկել զմեզ

ի հնոցէ հրոյդ բորբոքելոյ. և ի ձեռաց քոց, արքայ՝ ապրեցուցանել զմեզ: Ապա թէ ոչ՝ այս ինչ յայտնի լիցի քեզ արքայ. զդիս քո մեք ոչ պաշտեմք. և պատկերիդ ոսկւոյ՝ զոր կանգնեցեր՝ երկիր ոչ պագանեմք: Ցայնժամ Նաբուգոդոնոսոր լի եղև սրտմտութեամբ. և գոյն երեսաց նորա չրջեցաւ՝ ի վերայ Սեդրապաքայ՝ Միսաքայ՝ և Աբեդնագովի. և ասէ՝ ջեռուցէք զհնոցն եօթնապատիկ՝ զի մինչև ի վախճան այրեցին: Եւ արք հինդ զօրաւորք զօրութեամբ՝ կապեցին զՍեդրապ՝ զՄիսաք՝ և զԱբեդնագով՝ արկանել ի հնոց հրոյն բորբոքելոյ: Ցայնժամ արքն այնոքիկ կապեցան սլաւոմուճանօք՝ և վարտիզք. արտախուրակօք՝ և պանկապանօք իւրեանց. և ընկեցան ի մէջ հնոցի հրոյն բորբոքելոյ: Զի հրաման թագաւորին սաստկանայր. և հնոցն բորբոքիւր եօթնապատիկ առաւել յոյժ: Եւ երեքին նոքա՝ Սեդրաք՝ Միսաք՝ և Աբեդնագով, անկան ի մէջ հնոցին կապեալք: Եւ գնային ի մէջ հրոյն. օրհնէին՝ և գովէին զտէր Աստուած: Ցարեաւ Ազարիա. և եկաց յաղօթս այսպէս. եբաց զբերան իւր ի մէջ հրոյն՝ և ասէ: Օրհնեալ ես տէր Աստուած հարցն մերոց. գովեալ՝ և փառաւորեալ է անուն քո յաւիտեան՝: Զի արդար ես յամենայնի՝ զոր ածեր ի վերայ մեր՝ և ամենայն գործք քո ճշմարիտ են. և ուղիղ են ճանապարհք քո՝ և ամենայն դատաստան քո ճշմարտութիւն: Եւ իրաւունս ճշմարտութեան արարեր՝ ըստ ամենայնի՝ զոր արարեր մեզ.

Digitized by Google

և քաղաքի սրբոյ հարցն մերոց Երուսաղէմի. զի ճըշմարտութեամբ՝ և յիրաւի ածեր զայս ամենայն վասն մեղաց մերոց: Զի մեղաք՝ և անօրինեցաք ապստամբ լինել ի քէն. և առաւել մեղաք յամենայնի: Եւ պատուիրանաց քոց ոչ անաացաք. ոչ պահեցաք՝ և ոչ արարաք՝ որպէս պատուիրեցեր մեզ՝ զի բարի լինիցի մեզ: Եւ զամենայն՝ զոր ածեր ի վերայ մեր, և զամենայն՝ զոր արարեր մեզ՝ արդար դատաստանաւ արարեր: Եւ մատնեցեր զմեզ ի ձեռս թշնամեաց մերոց. անօրինաց՝ խստաց՝ ապստամբողաց. և թագաւորի՝ անիրաւի՝ և չարի քան զամենայն երկիր: Եւ արդ՝ ոչ գոյ մեզ բանալ զբերանս՝ զի ամօթ՝ և նախատինք եղեաք ծառայից քոց և պաշտօնէից: Այլ մի՛ մատներ զմեզ խայտառ վասն անուան քոյ. և մի՛ ցրեր զուխտ քո: Եւ մի՛ ի բացէ առներ զողորմութիւնս քո ի մէնջ. վասն Աբրահամու սիրելւոյ քոյ՝ և վասն Իսահակայ ծառայի քոյ՝ և վասն Իսրայէլի սրբոյ քո: Որոց խօսեցար բազմացուցանել զզաւակ նոցա իբրև զաստեղս երկնից. և իբրև զաւազ առ ափն ծովու: Եւ արդ տէր, նուազեցաք քան զամենայն ազգս. և եմք տառապեալք յամենայն երկրի. այսօր վասն մեղաց մերոց: Եւ ոչ գոյ ի ժամանակի յայսմիկ իշխան՝ մարգարէ՝ և առաջնորդ. ոչ ողջակէզք՝ և ոչ զոհք՝ և ոչ պատարագք՝ և ոչ խունկք. և ոչ տեղի տալոյ երախայրիս առաջի քո: Եւ գտանել զողորմութիւն ի քէն. այլ անձամբք բեկեալք՝ և հոգ-

Digitized by Google

ւով տառապանաց ընդունելի լիցուք: Իբրև զոզջակէզս խոյոց՝ և զուարակաց՝ և իբրև զիւրաքանչիւր գառանց պարարտից. այնպէս եղիցի պատարագս մեր այսօր առաջի քո. լինիլ կատարեալ զկնի քո. զի չիք ամօթ յուսացելոց ի քեզ: Եւ արդ՝ գամք զհետ քո ամենայն սրտիւք մերովք. և երկնչիմք ի քէն. և խնդրեմք զերեսս քո: Մի՛ յամօթ առներ զմեզ. այլ արա ընդ մեզ ըստ հեզութեան քում. և ըստ բազում ողորմութեան քում: Եւ փրկեա զմեզ վասն սքանչելեացդ քոց. և տուր փառս անուան քում տէր: Եւ յամօթ լիցին ամենեքեան՝ ոյք ցուցանեն չարիս ծառայից քոց. և ամաչեսցեն յամենայն բրուտութենէ իւրեանց. և զօրութիւն նոցա խորտակեսցի: Եւ ծանիցեն՝ զի դու ես տէր Աստուած միայն. և փառաւորեալ ի վերայ ամենայն տիեզերաց: Եւ ոչ դադարէին՝ ոլոր արկին զնոսա սպասաւորք թագաւորին՝ ի գհնոցն լորլոքելոյ, նաւթիւ և ձիւթով. և վշտի՝ և որթով: Եւ ելանէր՝ դիզանայր բոցն ի վերոյ քան զհնոցն ի քառասուն և չինն կանգուն: Եւ չրջէր՝ պատէր չուրջ զհնոցսեն. և այրէր՝ զորս գտանէր ի Քաղդէացւոց անտի: Եւ հրեշտակ Աստուծոյ էջ՝ եկաց ընդ Ազարիանան ի հնոցի անդ. և թօթափեաց զբոց հրոյն ի հնոցէ անտի: Եւ արար ի մէջ հնոցին իբրև զհով՝ որ ցօղագին չնչիցէ. և ոչ մերձեներայր ամենևին հուրն ի նոսա. ոչ տրտմեցուցանէր՝ և ոչ նեղէր զնոսա: Յայնժամ երիքեանն իբրև

ի միոջէ բերանոյ. օրհնէին՝ և գովէին՝ և փառաւոր առնէին զԱստուած՝ և ասէին: Օրհնեա՛լ ես տէր Աստուած հարցն մերոց. գովեալ՝ և առաւել բարձրացեալ յաւիտեան: Եւ օրհնեալ է անուն սուրբ փառաց քոյ. գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան: Օրհնեալ ես ի տաճարի փառաց սրբութեան քոյ. գովեալ՝ և առաւել բարձրացեալ յաւիտեան. Օրհնեալ ես՝ որ հայիս յանդունդս. և նստիս ի քերովբէս. գովեալ՝ և առաւել բարձրացեալ յաւիտեան: Օրհնեալ ես ի վերայ աթոռոյ արքայութեան քոյ. գովեալ՝ և առաւել բարձրացեալ յաւիտեան: Օրհնեալ ես ի վերայ հաստատութեան երկնից. գովեալ՝ և առաւել բարձրացեալ յաւիտեան:

Եւ յորժամ եկեսցէ յայն ժամն յորում ասէ՝
Օրհնեցէք ամենայն գործք տեառն. զտէր օրհ՛՛:
Սկսանիցին դպիրքն երգել քաղցր ձայնիւ.
Օ՛րհնեցէ՛ք գովեցէ՛ք և բա՛րձր արարէ՛ք զնա յաւիտեա՛ն:

Օրհնեցէ՛ք ամենայն գործք տեառն զտէր. օրհնեցէ՛ք՝ և բարձր արարէ՛ք զնա յաւիտեան: Օրհնեցէ՛ք երկինք զտէր. օրհնեցէ՛ք՝ և բարձր՛՛: Օրհնեցէ՛ք հրեշտակք տեառն զտէր. օրհնեցէ՛ք՝ և բարձր՛՛: Օրհնեցէ՛ք ջուրք ամենայն, ի վերոյ քան զերկինս զտէր. օրհնեցէ՛ք՝ և բարձր՛՛: Օրհնեցէ՛ք ամենայն զօրութիւնք տեառն զտէր. օրհնեցէ՛ք՝ և բարձր՛՛: Օրհնեցէ՛ք արեգակն և լուսին զտէր. օրհնեցէ՛ք՝ և բար-

Digitized by Google

ձըր ”։ Օրհնեցէք ամենայն աստեղք երկնից զտէր. օրհնեցէք՝ և բարձր ”։ Օրհնեցէք ամենայն անձրեւք և ցօղք զտէր. օրհնեցէք՝ և բարձր ”։ Օրհնեցէք ամենայն հողմք զտէր. օրհնեցէք՝ և բարձր ”։ Օրհնեցէք հուր և տապ զտէր. օրհնեցէք՝ և բարձր ”։ Օրհնեցէք ցուրտ և տօթ զտէր. օրհնեցէք՝ և բարձր ”։ Օրհնեցէք եղեամն և ձիւնաբեր զտէր. օրհնեցէք՝ և բարձր ”։ Օրհնեցէք սառն և պարզ զտէր. օրհնեցէք՝ և բարձր ”։ Օրհնեցէք պաղ և ձիւն զտէր. օրհնեցէք՝ և բարձր ”։ Օրհնեցէք տիւք և գիշերք զտէր. օրհնեցէք՝ և բարձր ”։ Օրհնեցէք լոյս և խաւար զտէր. օրհնեցէք՝ և բարձր ”։ Օրհնեցէք ամպք և փայլատակունք զտէր. օրհնեցէք՝ և բարձր ”։ Օրհնեսցէ երկիր զտէր. օրհնեսցէ՝ և բարձր արասցէ ”։ Օրհնեցէք լերինք և բարձունք զտէր. օրհնեցէք՝ և բարձր ”։ Օրհնեցէք ամենայն բոյսք երկրի զտէր. օրհնեցէք՝ և բարձր ”։ Օրհնեցէք աղբիւրք զտէր. օրհնեցէք՝ և բարձր ”։ Օրհնեցէք ծովք և դետք զտէր. օրհնեցէք՝ և բարձր ”։ Օրհնեցէք կէտք և ամենայն կայտառք՝ որք ի ջուրս զտէր. օրհնեցէք՝ և բարձր ”։ Օրհնեցէք թռչունք երկնից զտէր. օրհնեցէք՝ և բարձր ”։ Օրհնեցէք ամենայն գազանք՝ և անասունք զտէր. օրհնեցէք՝ և բարձր ”։ Օրհնեցէք որդիք մարդկան զտէր. օրհնեցէք՝ և բարձր ”։ Օրհնեսցէ Իսրայէլ զտէր. օրհնեսցէ և բարձր արասցէ ”։ Օրհնեցէք քահանայք զտէր. օրհնեցէք՝ և բարձր ”։

Digitized by Google

Օրհնեցէ՛ք ծառայք տեառն զտէր. օրհնեցէ՛ք և բարձրը՛՛: Օրհնեցէ՛ք հոգիք և չունչք արդարոց զտէր. օրհնեցէ՛ք՝ և բարձր՛՛: Օրհնեցէ՛ք սուրբք և խոնարհք սրտիւք զտէր. օրհնեցէ՛ք՝ և բարձր՛՛: Օրհնեցէ՛ք Անանիա՝ Ազարիա՝ և Միսայէլ զտէր. օրհնեցէ՛ք՝ և բարձր արարէ՛ք զնա յաւիտեան: Զի փրկեաց զմեզ ի դժոխոց՝ և ի ձեռաց մահու ազատեցոյց զմեզ. և փրկեաց զմեզ ի հնոցէն. և ի միջոյ բորբոքեալ բոցոյս. և ի միջոյ հրոյն փրկեաց զմեզ: Գոհացարո՛ւք զտեառնէ՝ զի քաղցր է՝ զի յաւիտեան է ողորմութիւն նորա: Օրհնեցէ՛ք ամենայն պաշտօնեայք տեառն զԱստուածն աստուածոց. օրհնեցէ՛ք՝ և գոհացարո՛ւք՝ զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

Ապա՝ բացցէն զերեզմանն. և սարկաւագն քարոզեսցէ բարձր ձայնիւ, Օրհնեա տէր, և ժամաբաժն՝ Օրհնեալ Թագաւորութիւնն Հօր և Որդւոյ՛՛:

Ձայնս ժամամուտ:

Փրկիտոս յարեաւ ի մեռելոց. մահուամբ զմահ կոխեաց. և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգեւեաց. նմա փառք յաւիտեանս ամէն:

Փոխ

Գովեա երուսաղէմ զտէր:
Եւ օրհնեա զԱստուած քո սիոն:

Ձայնս շաբաթին ԱՁ:

Յարեաւ Քրիստոս ի մեռե՛՛լոց. ալէ՛լուիա՛:

Digitized by Google

Եկայք ժողովուձուրդք, երգեցէ՛ք տեառն. ալէ՛լո՛ւ-իա՛: Յարուցեալո՛յն ի մեռելոց ալէ՛լո՛ւիա. որ զաշխարհս լուսաւո՛ր ետաց. ալէ՛լո՛ւիա՛:

Ջկնէ՛ սարկաւագն Հայնեւսցէ, Պաւօխումէ. և ըստ կանէքցէն ասել վաւագ. Սուրբ Աստուածն՝ որ յարեաւ ի մեռելոց:

Ճաշու Ընթերցուածք:

Սաղմոս կցորդ:

Փեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի սիօն, և քեզ տացին աղօթք յերուսաղէմ:

Պօղոսի Առաքելոյն ի Կորնթացւոց Առաջին Թղթոյն ի ընթերցուածս:

Գլ՝ 15. Հմր՝ 1:

Ցուցանեմ ձեզ ևղբարք զաւետարանն իմ, զոր աւետարանեցի ձեզ. զոր և ընկալարուք. յոր և հաստատեալքդ էք: Որով ապրեցայքն. որով բանիւ աւետարանեցի ձեզ՝ թէ ունիցիք. բայց եթէ ի զուր ինչ հաւատացիք: Զի ես ձեզ զայն նախ աւանդեցի՝ զոր և եսն ընկալայ. թէ և Քրիստոս մեռաւ վասն մեղաց մերոց, ըստ գրոց: Եւ զի թաղեցաւ. թէ և յարեաւ յաւուր երրորդի ըստ գրոց: Եւ թէ երևեցաւ Կեփայի. և ապա մեծասանիցն: Ապա երևեցաւ աւելի ևս քան զհինգհարիւր եղբարց միանգամայն. յորոց բազումք կան մինչև ցայժմ, և ոմանք ննջեցին: Եւ ապա երևեցաւ Յակոբայ. ապա առաքելոցն ամենեցուն: Հուսկ յետոյ քան զամենեսին

իբրև անալրպի միոջ՝ երևեցաւ և ինձ։ Զի ես իսկ եմ տրուպն առաքելոց. որ չեմ իսկ արժանի թէ կոչեցայց առաքեալ. զի հալածեցի զեկեղեցին Աստուծոյ։ Այլ չնորհօքն Աստուծոյ եմ, զինչ և իցեմ. և չնորհք նորա՝ որք յիս՝ ընդունայն ինչ ոչ եղեն. այլ առաւել քան զնոսա ամենեսեան վաստակեցայ. և ոչ եթէ ես՝ այլ չնորհն Աստուծոյ՝ որ ընդիս։ Արդ՝ եթէ ես՝ և եթէ նոքա՝ այսպէս քարոզեցաք. և դուք այսպէս հաւատացիք։

Ալէլուիա ալէլուիա։

Ցարեաւ Աստուած և ցրուեցան ամենայն թշնամիք նորա. փախեան ատելիք նորա յերեսաց նորա։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Գլ՝ 28. հմր՝ 1։

Վասն ՅարուԹեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ յերեկոյի չաբաթուն յորում լուսանայր միաչաբաթին. եկն Մարիամ Մագդաղենացի, և միւս Մարիամն տեսանել զգերեզմանն։ Եւ ահա չարժումն մեծ եղև. զի հրեշտակ տեառն իջեալ յերկնից՝ մատուցեալ ի բաց Թաւալեցոյց զվէմն ի դրանց անտի. և նստէր ի վերայ նորա։ Եւ էր տեսիլ նորա իբրև զփայլակն. և հանդերձ նորա սպիտակ իբրև զձիւն։ Եւ յահէ անտի նորա խռովեցան պահապանքն. և եղեն իբրև զմեռեալս։ Պատասխանի ետ հրեշտակն և ասէ ցկանայսն. մի՛ երկնչիք դուք. զիտեմ զի զՅի-

Digitized by Google

առա զխաչելեալն խնդրէք : Չէ աստ՝ քանզի յա-
րեաւ, որպէս ասացն. եկայք և տեսէք զտեղին՝ ուր
կայր : Եւ վաղվաղակի երթայք ասացէք աշակերտա-
ցըն նորա թէ յարեաւ՝ և ահա յառաջանայ քան զձեզ
ի Գալիլեայ. անդ տեսանիցէք զնա. ահա ասացի
ձեզ : Եւ ելեալ վաղվաղակի ի գերեզմանէ անտի
ահիւ և խնդութեամբ բազմաւ՝ ընթանային պատմել
աշակերտացն : Եւ ահա յայտահեցաւ նոցա Յիսուս
և ասէ՝ ողջ էք. և նոքա մատուցեալ կալան զոտս նո-
րա՝ և երկիրպագին նմա : Ցայնժամ ասէ ցնոսա Յի-
